Եկեղեցու Նախագահների ուսմունքները

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՋՈԶԵՖ ՖԻԼԴԻՆԳ ՍՄԻԹ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Գրքեր *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքից

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (առարկայական համարը 36481)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Բրիգամ Յանգ (35554)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոն Թեյլոր (35969)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները.Վիլֆորդ Վուդրուֆ (36315)
Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Լորենզո Սնոու (36787)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (35744)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հեբեր Ջ. Գրանթ (35970)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ (36786)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Դեյվիդ Օ. Մակքեյ (36492)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (36907)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հարոլդ Բ. Լի (35892)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ (36500)

Այս գրքերի օրինակները ձեռք բերելու համար խնդրվում է դիմել ձեր տեղական բաշխիչ կենտրոն կամ այցելել store.lds.org: Գրքերը մատչելի են նաև էլեկտրոնային ֆորմատով LDS.org կայքում:

Շնորհակալ կլինենք այս ձեռնարկի վերաբերյալ ձեր դիտողությունների և առաջարկների համար: Խնդրում ենք ուղարկեք ձեր դիտողությունները հետևյալ հասցեով. Curriculum Development, 50 East North Temple Street, Salt Lake City, UT 84150–0024 USA:

Էլ. փոստ. cur–development@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Ապա ներկայացրեք ձեր դիտողություններն ու առաջարկները ձեռնարկի ուժեղ կողմերի և հնարավոր բարելավումների ենթակա մասերի վերաբերյալ:

© 2013 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 8/03
Թարգմանության հաստատումը. 8/03
*Teachings of Presidents of the Church: Joseph Fielding Smith*ի թարգմանությունը
Armenian
36907 201

Բովանդակություն

Բովանդակություն III
Նախաբան VII
Պատմական ամփոփագիր XII
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքն ու ծառայությունը 1
1 Մեր Երկնային Հայրը 41
2 Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը 55
3 Փրկության ծրագիրը 67
4 Զորացնել և պահպանել ընտանիքը 83
5 Հավատք և ապաշխարություն 95
6 Հաղորդության կարևորությունը 109
7 Ջոզեֆ Սմիթ և Հայրում Սմիթ՝ Քրիստոսի վկաներ 119
8 Եկեղեցին և Աստծո արքայությունը 133
9 Մորմոնի Գրքի վկաները 145
10 Ճշմարտության մեր որոնումները 159
11 Պատվել Ջոզեֆ Սմիթի կողմից վերականգված Քահանայության բանալիները 173
12 Քահանյության երդումն ու ուխտը 185
13 Մկրտություն 197
14 Սուրբ Հոգու պարգևը 207
15 Հավերժական ամուսնություն 219
16 Երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ . . . 233
17 Կնքող զորությունը և տաճարային օրհնությունները . . . 247
18 Ապրել Աստծո բերանից դուրս եկած ամեն մի խոսքով 263
19 Աշխարհում, բայց ոչ աշխարհից 275
20 Մեր և մտահոգություն մեր Հոր բոլոր զավակների հանդեպ 289
21 Ավետարանը աշխարհին քարոզելը 301
22 Աղոթք՝ պատվիրան և օրհնություն 317
23 Անձնական պարտավորություն 329
24 Վերջին Օրերի Սուրբ Կանանց աշխատանքը. «Անձնազոհ նվիրում այս փառահեղ գործին» 341

25 Հիսուս Քրիստոսի ծնունդը. «Մեծ ուրախության բարի ավետիք» 355
26 Նախապատրաստվել մեր Տիրոջ Գալստին. 365
Տեսանյութերի ցանկ 379
Ցուցիչ 381

nsen at 9:42 am, Oct 04, 2013

Joseph Fielding Smith

Նախաբան

Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատել են *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքը օգնելու ձեզ ավելի մոտենալ ձեր Երկնային Հորը և խորացնելու ձեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի վերաբերյալ: Քանի որ Եկեղեցին այս շարքին հատորներ է ավելացնում, դուք պետք է ստեղծեք ավետարանական հղումների հավաքածու ձեր տան համար: Այս շարքի հատորները նախատեսված են օգտագործվելու անձնական ուսումնասիրության և կիրակնօրյա հրահանգավորման համար: Դրանք կարող են նաև օգնել ձեզ պատրաստել այլ դասեր կամ զրույցներ և հարցերի պատասխաններ Եկեղեցու վարդապետության վերաբերյալ:

Այս գիրքը նկարագրում է Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները, որը ծառայել է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նախագահ 1970թ. հունվարի 23-ից մինչև 1972թ. հուլիսի 2-ը:

Անհատական ուսումնասիրություն

Երբ ուսումնասիրեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները, աղոթքով որոնեք Սուրբ Հոգու ոգեշնչումը: Յուրաքանչյուր գլխի վերջում զետեղված հարցերը կօգնեն ձեզ հասկանալ Նախագահ Սմիթի ուսմունքները և կիրառել դրանք ձեր կյանքում: Երբ դուք ուսումնասիրեք այս ուսմունքները, դուք գուցե կամենաք մտածել ուղիների մասին, թե ինչպես կիսվեք դրանցով ընտանիքի անդամների և ընկերների հետ: Սա կզորացնի ձեր հասկացողությունը ձեր կարդացածի վերաբերյալ:

Ուսուցանել այս գրքից

Այս գիրքը նախատեսված է տանը և եկեղեցում օգտագործելու համար։ Քահանայապետերի խմբերում, երեցների քվորումներում և Սփոփող Միություններում, երկու Կիրակնօրյա դասերին ամեն ամիս պետք է կանոնավորապես ուսուցանվեն այս գրքի գլուխներից։ Քանի որ գիրքը պարունակում է ավելի շատ գլուխներ, քան կարելի է տեղավորվել 12 ամիսների մեջ, ծխի և ցցի առաջնորդները կարող են որոշել, թե որ գլուխներն են լավագույնս բավարարում անդամների կարիքները, ում նրանք ծառայում են։

Հետևյալ ուղեգծերը կարող են օգնել ձեզ ուսուցանել այս գրքից։

Պատրաստվեք ուսուցանել

Որոնեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, երբ պատրաստվեք ուսուցանելու։ Աղոթքով ուսումնասիրեք հանձնարարված գլուխը վստահություն ձեռք բերելու Նախագահ Սմիթի ուսմունքների ձեր հասկացողության վերաբերյալ։ Դուք ավելի մեծ անկեղծությամբ և զորությամբ կուսուցանեք, երբ նրա խոսքերը ձեզ վրա անհատապես ազդեն (տես ՎԿՈՒ 11.21)։

Եթե դուք ուսուցանում եք Մելքիսեդեկյան Քահանայության կամ Սփոփող Միության դաս, դուք չպետք է այս գիրքը մի կողմ դնեք կամ պատրաստեք դաս ուրիշ նյութերից։ Աղոթքով ընտրեք գլխից այն ուսմունքները, որոնք զգում եք, որ կլինեն ամենաօգտակարը՝ ուսուցանելու համար։ Որոշ գլուխներ պարունակում են ավելի շատ նյութեր, քան դուք կկարողանաք քննարկել դասաժամի ընթացքում։

Խրախուսեք մասնակիցներին ուսումնասիրել գլուխը նախքան դասը և բերել իրենց գրքերը իրենց հետ։ Երբ նրանք անեն դա, նրանք ավելի լավ պատրաստված կլինեն մասնակցելու քննարկումներին և կխրատեն միմյանց։

Ուսուցանելու նախապատրաստվելիս հատուկ ուշադրություն դարձրեք յուրաքանչյուր գլխի վերջում «Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ» բաժնին։ Այս վերնագրի տակ դուք կգտնեք հարցեր, առնչվող սուրբ գրություններ և ուսուցման

ուղեցույցներ: Հարցերը և առնչվող սուրբ գրությունները հատուկ ձևով կապված են գլխի հետ, որտեղ դրանք զետեղված են: Ուղեցույցները կարող են առաջնորդել ձեզ բոլոր ձեր ջանքերում օգնելու մյուսներին ուրախություն գտնել սովորելիս և ավետարանով ապրելիս:

Ներկայացրեք գլուխը

Երբ ներկայացնեք գլուխը և դասի ընթացքում աշխատեք հաստատել մի մթնոլորտ, որի ընթացքում Հոգին կարող է հուզել նրանց սրտերն ու մտքերը, ում դուք ուսուցանում եք: Դասը սկսելու համար, օգնեք նրանց, ում դուք ուսուցանում եք կենտրոնանալ գլխի ուսմունքների վրա: Մտածեք հետևյալ գաղափարների մասին.

- Կարդալ և քննարկել գլխի սկզբում գտնվող «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը:
- Քննարկել գլխից մի նկար կամ սուրբ գրության որևէ հատված:
- Միասին երգեք առնչվող որևէ օրհներգ:
- Համառոտակի կիսվեք թեմայի վերաբերյալ անձնական փորձառությամբ:

Քննարկում ծավալեք «Նախաբան Սմիթի Ուսմունքների» մասին

Երբ ուսուցանեք այս գրքից հրավիրեք մյուսներին կիսվել իրենց մտքերով, հարցեր տվեք և միմյանց ուսուցանեք: Երբ նրանք ակտիվորեն մասնակցում են, նրանք ավելի պատրաստված կլինեն սովորելու և ստանալու անձնական հայտնություն: Թույլ տվեք լավ քննարկումները ծավալվեն, քան ավելի շուտ հասցնել բոլոր ուսմունքներն ընդգրկել դասի ընթացքում: Քննարկում խրախուսելու համար օգտագործեք յուրաքանչյուր գլխի վերջում զետեղված հարցերը: Դուք կարող եք նաև մշակել ձեր սեփական հարցերը, հատկապես նրանց համար, ում դուք ուսուցանում եք:

Հետևյալ տարբերակները կարող են ձեզ տալ լրացուցիչ գաղափարներ.

- Խնդրեք մասնակիցներին կիսվել այն ամենով, ինչ նրանք սովորել են այդ գլխի իրենց անհատական ուսումնասիրությունից: Կարող է օգտակար լինել կապվել մի քանի մասնակիցների հետ շաբաթվա ընթացքում և խնդրել, որ նրանք պատրաստված զան կիսվելու այն ամենով, ինչ իրենք սովորել են:
- Հանձնարարեք մասնակիցներին կարդալ գրքի վերջում ընտրված հարցերը (կամ անհատապես կամ փոքր խմբերով): Խնդրեք նրանց այդ գլխում որոնել այդ հարցերին առնչվող ուսմունքները: Ապա հրավիրեք նրանց կիսվել իրենց մտքերով և ներըմբռնումներով մնացած խմբի հետ:
- Գլխից միասին կարդացեք Նախագահ Սմիթի դրույթների մի ընտրանի: Խնդրեք մասնակիցներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց սեփական փորձառություններից, որոնք ցույց կտան այն, ինչ Նախագահ Սմիթն էր ուսուցանել:
- Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին և մտքում կարդալ այն: Հանձնարարեք նրանց երկու կամ երեք հոգուց բաղկացած խմբերով հավաքվել, ովքեր ընտրել են նույն բաժինը, և քննարկել այն, ինչ սովորել են:

Խրախուսեք, որ կիսվեն և կիրառեն

Նախագահ Սմիթի ուսմունքները առավելագույնս իմաստալից կլինեն այն մասնակիցների համար, ովքեր կիսվում են դրանցով և կիրառում իրենց կյանքում

- Հարցրեք մասնակիցներին, թե ինչպես նրանք կարող են կիրառել Նախագահ Սմիթի ուսմունքները իրենց պարտականություններում տանը և եկեղեցում: Օրինակ, դուք կարող եք օգնել նրանց խորհել և քննարկել, թե ինչպես կարող են կիրառել նրա ուսմունքները որպես ամուսիններ, կանայք, ծնողներ, որդիներ, դուստրեր, տնային ուսուցիչներ կամ այցելող ուսուցիչներ:
- Խրախուսեք մասնակիցներին կիսվել Նախագահ Սմիթի ուսմունքներով ընտանիքի անդամների և ընկերների հետ:

- Կոչ արեք մասնակիցներին կիրառել այն, ինչ նրանք սովորել են, և կիսվել իրենց փորձառություններով հաջորդ դասի սկզբում:

Եզրափակեք քննարկումը

Համառոտ ամփոփեք դասը կամ խնդրեք մեկ կամ երկու մասնակիցների անել դա: Վկայեք այն ուսմունքների մասին, որոնք քննարկել եք: Դուք կարող եք հրավիրել ուրիշների ևս՝ կիսվել իրենց վկայություններով:

Տեղեկություն այս գրքում վկայակոչված աղբյուրների վերաբերյալ

Ուսմունքներն այս գրքում ուղղակի մեջբերումներ են Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի քարոզներից, հոդվածներից, գրքերից, նամակներից և ամսագրերից: Հրատարակված աղբյուրներից մեջբերումները պահպանել են կետադրությունը, ուղղագրությունը, մեծատառերը և սկզբնական աղբյուրների պարբերությունները, եթե խմբագրական կամ տպագրական փոփոխություններ չեն արվել, որոնք անհրաժեշտ են եղել ընթերցելիությունը բարելավելու համար: Այս պատճառով, դուք գուցե նկատեք փոքրիկ անհետևողականություն տեքստում: Օրինակ *ավետարան* բառը որոշ մեջբերումներում փոքրատառով, իսկ մյուսներում՝ մեծատառով:

Նախագահ Սմիթը հաճախ օգտագործել է նաև արտահայտություններ, ինչպես օրինակ՝ *մարդիկ, մարդ,* կամ *մարդկություն* վերաբերելով բոլոր մարդկանց, ինչպես *արական*, այնպես էլ *իգական* սեռի մարդկանց: Նա հաճախ օգտագործել է արական դերանուններ (անգլերեն տեքստում), ակնարկելով ինչպես արական, այնպես էլ իգական սեռին: Սա սովորական էր լեզվում այդ դարաշրջանում: Չնայած լեզվական այս սովորույթների և ներկայիս օգտագործման միջև առկա տարբերություններին, Նախագահ Սմիթի ուսմունքները վերաբերում են ինչպես կանանց այնպես էլ տղամարդկանց:

Պատմական ամփոփագիր

Հետևյալ ժամանակագրությունն ապահովում է համառոտ պատմական հիմք Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի ուսմունքների համար, որոնք ներկայացված են այս գրքում։

Հուլիս 19, 1876	Ծնվել է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, Ջուլինա Լամբսոն Սմիթի և Ջոզեֆ Ֆ. Սմիթի ընտանիքում։
Հուլիսի 19, 1884	Մկրտվել է և հաստատվել իր հոր կողմից։ Ստանում է իր առաջին Մորմոնի Գրքի անձնական օրինակը։
Ապրիլի 6,	Այցելում է Սոլթ Լեյքի Տաճարի նվիրագործմանը։
1896	Ստանում է Մելքիսեդեկյան Քահանայություն և տաճարային օժտում։
Ապրիլի 26, 1898	Ամուսնանում է Լյուի Էմիլի Շուրթլիֆի հետ Սոլթ Լեյքի Տաճարում։
Մայիսից 1899թ. մինչև հուլիս 1901թ.	Ծառայում է որպես նշանակված լիաժամկետ միսիոներ Անգլիայում։
1901թ. մինչև 1910թ.	Ծառայում է շատ Եկեղեցական կոչումներում, ներառյալ որպես քահանայության քվորումի նախագահ, Երիտասարդ Տղամարդկանց Փոխադարձ բարելավման Միությունում գերագույն վարչության անդամ, բարձրագույն խորհրդական, և Եկեղեցու գերագույն հանձնաժողովի անդամ՝ նշանակված պատրաստելու նյութեր Եկեղեցու պաշտպանության համար։

Հոկտեմբերի, 1901	Սկսում է աշխատել Եկեղեցու Պատմաբանի գրասենյակում:
1902	Հրատարակում է ընտանեկան պատմության գրքույկ, որը վերնագրված է *Սամյել Սմիթ Թոփսֆիլդից, Մասաչուսեթս, Սմիթների ընտանիքի մասին որոշ պատմություն:* Սա նրա առաջին հրատարակություններից է, ներառյալ 25 գրքեր և բազմաթիվ հոդվածներ Եկեղեցու ամսագրերի և պարբերականների համար:
Ապրիլ 8, 1906	Հաստատվել է գերագույն համաժողովում որպես Եկեղեցու Պատմաբանի Օգնական, մի պաշտոն, որը նա զբաղեցնում էր մինչև 1921թ. մարտը:
Մարտի 30, 1908	Լյուի Շուրթլիֆ Սմիթը մահանում է՝ տանելով ծանր հիվանդություն, որը կապված էր նրա երրորդ հղիության հետ:
Նոյեմբերի 2, 1908	Ամուսնանում է Էթել Ջորջինա Ռեյնոլդսի հետ
Ապրիլի 7, 1910	Առաքյալ է կարգվում իր հոր կողմից:
Հոկտեմբեր 1918	Արձանագրում է մի հայտնություն մահացածների փրկագնման մասին, ինչպես թելադրվում է իր հոր կողմից, որն այդ ժամանակ Եկեղեցու Նախագահն էր: Այս հայտնությունը այժմ գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 138 բաժնում:
Հունվար 6, 1919	Նշանակվեց որպես խորհրդական Սոլթ Լեյքի Տաճարի նախագահությունում, պաշտոն, որը նա զբաղեցրեց մինչև 1935թ.

Մարտի 17, 1921	Կոչվում է որպես Եկեղեցու Պատմաբան, պաշտոն, որը նա կատարում է մինչև 1970 թվականը:
1934	Կոչվեց Յուտայի Ծագումնաբանական ընկերության նախագահ, պաշտոն, որը նա զբաղեցնում է մինչև 1961 թվականը:
Օգոստոսի 26, 1937 թ.	Էթել Ռեյնոլդս Սմիթը մահացավ չորս տարի շարունակ տառապելով հիվանդությունից:
Ապրիլի 12, 1938	Ամուսնանում է Ջեսսի Էլլա Էվանսի հետ Սոլթ Լեյքի Տաճարում:
Մայիսից մինչև նոյեմբեր 1939	Իրականացնում է հատուկ առաջադրանք Եվրոպայում Ջեսսիի հետ՝ այցելելով Անգլիա, Շոտլանդիա, Հոլանդիա, Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա, Շվեդիա, Նորվեգիա, Դանիա, Չեխոսլովակիա, Ավստրիա և Գերմանիա: Ղեկավարում է բոլոր ամերիկացի միսիոներների փոխադրումը Եվրոպայից Երկրորդ Համաշխարհային Պատերազմի սկսվելուց հետո:
Հունիսի 8, 1945	Կանչվեց ծառայելու որպես նախագահ Սոլթ Լեյքի Տաճարում, պաշտոն, որը զբաղեցրեց մինչև 1949թ.
Հոկտեմբերի 6, 1950	Ի սպաս է դրվում որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ
Ապրիլի 9, 1951	Հաստատվում է Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ
Հուլիսից մինչև օգոստոս 1955	Հատուկ առաջադրանք է իրականացնում Ասիայում, Ջեսսիի հետ: Նվիրագործում է Գուամը, Կորեա, Օկինավան և Ֆիլիպինները ավետարանը քարոզելու համար:

Սեպտեմբեր 1958	Այցելում է Լոնդոնի Անգլիայի Տաճարի նվիրագործմանը:
Հոկտեմբեր 1960 մինչև հունվար 1961	Ջեսսիի ուղեկցությամբ այցելություններ Եկեղեցու ղեկավարներին և միսիոներներին Կենտրոնական և Հարավային Ամերիկայում:
Մայիս 1963	Պաշտոնավարում է Օուքլենդ Կալիֆոռնիա Տաճարի անկյունաքարի տեղադրումը:
Սեպտեմբեր 1963	Նվիրագործում է Ռահվիրաների հուշահամալիրը Կանզաս Սիթիում, Միսսուրի և Լիբերթիի պատմական վայրը Լիբերթիում, Միսսուրի:
Հոկտեմբերի 29, 1965	Կանչվում է ծառայելու որպես Առաջին Նախագահության Խորհրդական Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի ղեկավարության ներքո:
Հունվարի 18, 1970	Դառնում է ավագ Առաքյալը և Եկեղեցու նախագահող առաջնորդը Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի մահվան ժամանակ:
Հունվարի 23, 1970	Ի սպաս է դրվում որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ:
Ապրիլի 6, 1970	Հաստատվում է որպես Եկեղեցու Նախագահ գերագույն համաժողովի ընթացքում:
Օգոստոսի 3, 1971	Ջեսսի Էվանս Սմիթը մահանում է:
Օգոստոս 27–29, 1971	Նախագահում է Եկեղեցու առաջին տարածքային համաժողովում, որը տեղի է ունենում Մանչեստրում, Անգլիա:
Հունվար 18, 1972	Ասում է նվիրագործման Աղոթքը Օգդենի Յուտայի Տաճարի համար:

Փետրվարի 9, 1972	Նախագահում է Յուտայի Պրովոյի Տաճարի նվիրագործման ժամանակ։ Գրելով նվիրագործման աղոթքը հանձնարարում է Նախագահ Հարոլդ Բ. Լիին ասել աղոթքը։
Հուլիսի 2, 1972	Մահանում է Սոլթ Լեյքում, Յուտա, իր 96 տարին լրանալուց 17 օր առաջ։

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքն ու ծառայությունը

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը «օգտագործել է երեք մեծ բառեր, որոնք ես երբեք չեմ կարող մոռանալ», հիշում է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: Այդ բառերն էին «ճշմարիտ և հավատարիմ»: Նախագահ Հինքլին ասել է. «Իր հասարակական ելույթներում, իր անձնական զրույցներում, իր աղոթքներում առ Տերը, նա աղերսում էր, որ մենք ճշմարիտ և հավատարիմ լինենք»:[1] Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվել է նմանատիպ մի հիշողությամբ. «Նույնիսկ իր ծեր հասակում նա միշտ աղոթում էր, «Թող որ մենք ճշմարիտ և հավատարիմ լինենք մինչև վերջ»:[2]

«Ճշմարիտ և հավատարիմ»: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի համար սա ավելին էր, քան հաճախակի կրկնվող մի արտահայտություն: Դա բոլոր մարդկանց համար նրա հույսի սրտառուչ մի արտահայտություն էր: Դա նաև իր կյանքի մի նկարագրություն էր, իր մանկությունից սկսած մինչև որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ նրա ծառայությունը:

«Խոստումի երեխա»

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը «ծնվել է որպես խոստումի երեխա», ասել է Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին Տասներկու Առաքյալների Քվորումից: Երեց Մակքոնկին, որը Նախագահ Սմիթի փեսան էր, բացատրել է, որ Ջուլինա Լամբսոն Սմիթը «երեք դուստր ուներ, բայց ոչ մի որդի, և այսպիսով, նա գնաց Տիրոջ առջև և հին օրերի Աննայի նման «ուխտ արավ» [Ա Թագավորաց Ա.11]: Նա խոստացավ, որ եթե Տերն իրեն որդի տար «նա նրան Տիրոջը կնվիրեր իր կյանքի բոլոր օրերումը»:[3] 1876թ. հուլիսի 19-ին Ջուլինան և իր ամուսինը՝ Ջոզեֆ Ֆ. Սմիթը նորածին որդի ունեցան իրենց ընտանիքում: Նրանք անվանեցին նրան Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ կրտսեր՝ իր հոր պատվին:

Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ծնողները՝ Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը և Զուլինա Լամբսոն Սմիթը

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ծնվեց, միանալով մի ընտանիքի, որը հարուստ էր հավատքով, ծառայությամբ և ղեկավարությամբ: Նրա պապը՝ Հայրում Սմիթը, Մարգարե Ջոզեֆ Սմիթի եղբայրն էր և ավետարանի վերականգման քաջարի մի վկա: Տերը նշանակեց Հայրումին «լինել մարգարե և տեսանող և հայտնող [Իր] Եկեղեցու համար», ասելով, որ Հայրումի անունը պատվով կհիշվի սերնդե սերունդ հավիտյանս հավիտենից» (ՎևՈՒ 124.94, 96) Իր եղբայր Ջոզեֆի հետ կնքեց իր վկայությունը իր արյամբ, նահատակվելով ամբոխի կողմից 1844թ. հունիսի 27-ին (տես ՎևՈՒ 135):

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հայրը՝ Ջոզեֆ Ֆ. Սմիթը, իր ուսերին մեծ պատասխանատվություններ է կրել սկսած երեխա ժամանակից: Լինելով Հայրումի և Մերի Ֆիլդինգ Սմիթի առաջնեկը՝ նա հինգ տարեկան էր, երբ նրա հայրը նահատակվեց և ինը տարեկան էր, երբ օգնեց իր այրիացած մորը վարել սայլակառքը Իլլինոյսիի Նավուից մինչև Սոլթ Լեյքի հովիտ: Նա հետագայում ծառայեց որպես միսիոներ և որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ: Նա Խորհրդական էր Առաջին Նախագահությունում, երբ նրա որդին՝ Ջոզեֆը ծնվեց: 1901թ. հոկտեմբերի 17 ից մինչև 1918 թվականի նոյեմբերը նա ծառայել է որպես Եկեղեցու Նախագահ:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի մայրը՝ Ջուլինա Լամբսոն Սմիթը, Սոլթ Լեյքի հովտի վաղ ռահվիրաների ընտանիքներից մեկի անդամ էր: Ինը տարեկանից նա մեծացել էր Ջորջ Ա. Սմիթի՝ իր քեռու, որն այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, և քեռակնոջ՝ Բեթշեբա Վ. Սմիթի տանը: (Երեց Սմիթը հետագայում ծառայեց որպես Առաջին Խորհրդական Առաջին Նախագահությունում Նախագահ Բրիգամ Յանգի ղեկավարությամբ, իսկ Քույր Սմիթը հետագայում ծառայեց որպես Սփոփող Միության գերագույն նախագահ): Չափահաս տարիքում Ջուլինան նվիրված կին և մայր էր և Սփոփող Միության նվիրված անդամ: Նա հայտնի էր իր կարեկցանքի և հմտության համար որպես մանկաբարձուհի, «մոտ 1000 երեխա լույս աշխարհ բերելով» և հոգ տանելով նրանց մայրերի համար:[4] 1910թ. հոկտեմբերից մինչև 1921թ. ապրիլը նա ծառայեց որպես Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական:

Երիտասարդ տարիքում աշխատելն ու խաղալը

Ջոզեֆը սովորեց աշխատել վաղ տարիքից: Նրա ընտանիքն ազարակ ուներ Թեյլորսվիլում՝ Յուտա, մոտ 10 մղոն (16 կիլոմետր) հեռու իրենց տնից, որտեղ նա և իր եղբայրներն օգնում էին ջրել, խոտը հավաքել և խնամել կենդանիներին: Տանը ընտանիքը խնամում էր մեծ բանջարանոցը, մի քանի մրգատու ծառեր, խաղողի երեք երկար շարքեր, հավերի, երեք կովի և մի քանի ձիերի: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը բազմակնության օրենքով էր ապրում, այնպես որ ընտանիքը շատ բերան ուներ կերակրվելու և շատ ձեռքեր էին հարկավոր աշխատանքում օգնելու համար: Քանի որ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ամենամեծ որդիներից մեկն էր այդ մեծ ընտանիքում, նրան տրվել էին պարտականություններ, որոնք, սովորաբար, տրվում էին չափահասներին: Բացի այդ պարտականություններից նա միշտ հետևում էր իր դպրոցի դասերին:

Տնից և ընտանեկան ազարակից դուրս Ջոզեֆի հիմնական աշխատանքը իր մոր հետ էր: Նա հաճախ էր ձի վարում սայլով, որ օգնի նրան կատարել իր պարտականությունները որպես մանկաբարձուհի: Իր պատանեկան տարիների վերջում նա աշխատանք գտավ Սիոնի Կոոպերատիվ Առևտրական Կազմակերպությունում (ՍԿԱԿ), որտեղ նա անցկացրեց երկար և ֆիզիկական լարվածություն պահանջող օրեր: Հետագայում նա հիշում էր. «Ես աշխատում էի բեռնատար ձիու նման ողջ օրը և ուժասպառ էի լինում, երբ գիշերն էր գալիս, մեջքիս վրա կրելով ալյուրի և շաքարի պարկեր ու ապխտած ազդրամիս և խոզապուխտ: Ես կշռում էի 150 ֆունտ [68 կգ.], բայց մեծ բան չէի համարում 200 ֆունտ [91կգ.] կշռով պարկեր բարձրացնելը և ուսերիս դնելը»:[5]

Իր ծանր աշխատանքային պարտականությունները հավասարակշռելու համար Ջոզեֆը ժամանակ էր գտնում խաղալու համար: Նա և նրա քույրերն ու եղբայրները սիրում էին գիշերային խաղեր խաղալ տան շուրջը, թաքնվելով խաղողի վազերի մեջ, «հատկապես երբ խաղողը հասնում էր»:[6] Նա նաև սիրում էր բեյսբոլ խաղալ: Յուրաքանչյուր ծուխ ուներ բեյսբոլի կազմակերպված թիմ և նա սիրում էր ընկերական այդ մրցույթները:

Երիտասարդ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը երբեմն վաղ էր թողնում բեյսբոլի խաղերը, որպեսզի կարդար Մորմոնի Գիրքը իրենց ընտանիքի խոտանոցում:

Ավետարանի ուսումնասիրություն և հոգևոր աճ

Չնայած երիտասարդ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի համար բեյսբոլը կարևոր էր, նա, երբեմն, վաղ էր թողնում խաղերը, հեռանում՝ մղվելով մի հետաքրքրությունից, որը նույնիսկ ավելի կարևոր էր իր համար: Այդպիսի դեպքերում նա առանձնանում էր «խոտանոցում կամ ծառի ստվերում՝ վերադառնալով Մորմոնի Գրքի իր ընթերցանությանը»:[7] «Իմ ամենավաղ հիշողություններից, – հետագայում ասել է նա, – այն ժամանակից սկսած, երբ առաջին անգամ կարողացա կարդալ, ես ավելի շատ հաճույք եմ զգացել և ավելի մեծ բավականություն եմ ստացել սուրբ գրություններն ուսումնասիրելուց և Տեր Հիսուս Քրիստոսի և Ջոզեֆ Սմիթ Մարգարեի այն աշխատանքի մասին կարդալուց, որն իրականացվել է մարդկանց փրկության համար, քան որևէ այլ բանից ողջ աշխարհում»:[8] Նա սկսեց հաստատել ավետարանի

անձնական ուսումնասիրության մի ձև, երբ ստացավ Մորմոնի Գրքի իր առաջին օրինակը ութ տարեկանում: Նա եռանդուն կարդում էր Եկեղեցու օրինակելի աշխատություններն ու հրատարակությունները: Նա կրում էր գրպանի չափսերի Նոր Կտակարանի մի հրատարակություն, որպեսզի կարողանար կարդալ ճաշի ընդմիջումների ժամանակ և դեպի ՍԿԱԿ իր աշխատանքի գնալու և վերադառնալու ճանապարհով քայլելիս: Հաստատուն և հետևողականորեն նա ավելացրեց վերականգված ավետարանի հանդեպ իր վկայության ուժը:

Բայց Ջոզեֆի հոգևոր աճը սահմանափակված չէր անհատական լուռ ուսումնասիրությամբ: Նա հավատարմորեն հաճախում էր Եկեղեցու ժողովներին ու դասերին և ստանում քահանայության արարողություններն ու օրհնությունները: Նրան հատկապես ձգում էր տաճարը: Սոլթ Լեյքի տաճարը 23 տարի շինարարության մեջ էր, երբ նա ծնվեց: «Իր պատանեկության տարիներին նա մեծ հետաքրքրությամբ հետևում էր այդ վեհաշուք շենքի շինարարության ամենօրյա առաջընթացին: Նա տեսել էր քարհանքից երկաթուղային վագոններով վերջին գրանիտե վիթխարի քարերի բերումը. . . Նա տեսել էր փառահեղ ծայրաձողերի վերջնական տեսքի գալը. . . [Նա ասել է.] «Մի ժամանակ մտածում էի, թե արդյոք այդքան երկար կապրեմ տաճարն ավարտված տեսնելու համար»:[9]

1893թ. ապրիլի 6-ին Ջոզեֆը մասնակցեց Սոլթ Լեյքի Տաճարի առաջին նվիրագործման նիստին: Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը՝ Եկեղեցու չորրորդ Նախագահը նախագահում էր նիստում և ասաց նվիրագործման աղոթքը: Ամբիոնում Նախագահ Վուդրուֆի ձախ կողմում նստած էր նրա Երկրորդ Խորհրդականը՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը:

Երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը 19 տարեկան էր, նա ստացավ հայրապետական օրհնություն: Այս օրհնությունը, որն ասվեց նրա հորեղբոր՝ Ջոն Սմիթի կողմից, որն այդ ժամանակ ծառայում էր որպես Եկեղեցու Հայրապետ, ավելացրեց Ջոզեֆի հոգևոր ուժը: Ջոզեֆին ասվեց.

«Քո արտոնությունն է ապրել մինչև խոր ծերության տարիքը և Տիրոջ կամքն է, որ դու պետք է դառնաս հզոր մարդ Իսրայելում: . . .

Քո պարտականությունն է խորհրդի նստել քո եղբայրների հետ և նախագահել մարդկանց մեջ: Քո պարտականությունն է նաև շատ ճանապարհորդել տանը և արտասահմանում, ցամաքով և ջրով, տքնելով ծառայության մեջ: Եվ ես ասում եմ քեզ, բարձրացրու գլուխդ, բարձրացրու ձայնդ առանց վախի կամ նախապատվության, ինչպես որ կթելադրի Տիրոջ Հոգին և Տիրոջ օրհնությունները կհանգչեն քո վրա: Նրա Հոգին կուղղորդի քո միտքը և կտա քեզ խոսք և զգացում, որ դու պետք է խորտակես ամբարիշտի իմաստությունը և ոչնչացնես անարդարի խորհուրդները»:[10]

Այդ տարվա վերջում, իր ծննդյան 20–րդ տարեդարձից հետո, նա ստացավ նոր հնարավորություններ ծառայության և հոգևոր աճի համար: Նա կարգվեց Մելքիսեդեկյան Քահանայության երեցի պաշտոնում և ստացավ տաճարային օժտում: Իր կյանքի վերջում, երբ նա ծառայում էր Եկեղեցու Նախագահ, նա հայտարարեց. «Որքան երախտապարտ եմ ես, որ կրում եմ սուրբ քահանայությունը: Բոլոր իմ օրերում ես ձգտել եմ մեծարել իմ կոչումը այդ քահանայությունում և հուսով եմ համբերել մինչև վերջ այս կյանքում և վայելել հավատարիմ սրբերի ընկերակցությունը եկող կյանքում:[11]

Սիրատածում և ամուսնություն

Երբ երիտասարդ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն օգնում էր պահել իր ընտանիքը, ուսումնասիրում էր ավետարանը և պատրաստվում էր քահանայության օրհնությունների համար, նրա ջանքերն աննկատ չէին անցնում մի երիտասարդ կնոջ կողմից, որի անունը Լյուի Շուրթլիֆ էր: Լյուին, որի ծնողներն ապրում էին Օգդենում, Յուտա էր եկել ապրելու Սմիթների ընտանիքի հետ, որպեսզի հաճախեր Յուտայի համալսարանը, որն այդ ժամանակ գտնվում էր Սմիթների տան դիմաց:

Սկզբում Ջոզեֆի և Լյուիի հարաբերությունները սովորական ընկերությունից այն կողմ չէին անցնում, բայց, աստիճանաբար, խորացան՝ անցնելով սիրատածման: Քանի որ զույգը քիչ փող ուներ, նրանց սիրատածումը սահմանափակվում էր, առավելապես, միասին կարդալով ընտանեկան հյուրասենյակում, միմյանց հետ զրուցելով, միասին զբոսնելով և Եկեղեցու հավաքույթներին

մասնակցելով: Ջոզեֆը նաև սիրում էր լսել Լյուիին դաշնամուր նվագելիս: Ժամանակ առ ժամանակ նրանք գնում էին ներկայացում դիտելու տեղական թատրոնում: Համալսարանում Լյուիի սովորելու երկրորդ տարվա վերջում նրանց սիրատածումը ծաղկեց՝ վերածվելով սիրո, այն աստիճան, որ Ջոզեֆը հեծանիվը վարում էր 100 մղոն (160 կիլոմետր) տարածություն, ցեխոտ ճանապարհներով՝ տեսնելու նրան Օգդենում մեկ կամ երկու անգամ՝ համալսարանի դասերի ընդմումներին:[12]

Ի վերջո, Լյուին և Ջոզեֆը խոսեցին ամուսնության մասին: Սակայն մի հարց կար, որը մտատանջում էր նրանց՝ արդյոք Ջոզեֆին կկանչեն միսիայի ծառայության : Բանն այն է, որ այդ ժամանակներում միսիայում ծառայելու ցանկություն ունեցող աղջիկներն ու տղաները չէին մոտենում իրենց եպիսկոպոսին այդպիսի կանչի համար երաշխավորվելու: Միսիայի կանչվելու ընթացակարգը լիովին արվում էր Եկեղեցու Նախագահի գրասենյակի կողմից: Երիտասարդ տղամարդը երբեք չգիտեր, երբ նա կարող էր գտնել միսիայի իր կանչը փոստարկղում:

Լյուին ավարտեց համալսարանը 1897թ. գարնանը և վերադարձավ Օգդեն իր ծնողների մոտ: Մեկ տարի անց, ակնհայտորեն ոչ մի միսիոներական կանչ չստանալուց հետո, զույգը որոշեց իրականացնել ամուսնական ծրագրերը: Ինչպես Ջոզեֆն է հետագայում ասել. «Ես համոզեցի նրան փոխել իր բնակության վայրը, և 1898թ. ապրիլի 26-ին, մենք գնացինք Սոլթ Լեյքի Տաճար և ամուսնացանք ժամանակի և ողջ հավերժության համար՝ իմ հոր՝ Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից»:[13] Երբ Ջոզեֆն ու Լյուին սկսեցին իրենց միասնական կյանքը, նրանք ապրում էին մի փոքրիկ բնակարանում Սմիթների ընտանիքի տանը:

Ընդունելով միսիոներական կանչը

Եկեղեցու վաղ օրերին ամուսնացած տղամարդիկ հաճախ կանչվում էին ծառայելու լիաժամկետ միսիաներ, այսպիսով՝ Ջոզեֆն ու Լյուին չզարմացան, երբ 1899թ. մարտի 17-ին մի միսիոներական կանչ, որը ստորագրվել էր Նախագահ Լորենզո Մնոուի կողմից տեղ հասավ փոստով: Բայց Ջոզեֆը ինչ-որ տեղ զարմացած էր իրեն հանձնարարված ասպարեզի պատճառով: Նախքան կանչը ստանալը, նա զրույց էր ունեցել Նախագահ

Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը որպես լիաժամկետ միսիոներ

Ֆրանկլին Դ. Ռիչարդսի հետ, որը Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր՝ միսիոներական կանչ ստանալու հնարավորության մասին: Հետագայում Ջոզեֆը հիշել է. «[Նա] հարցրեց ինձ թե ուր կկամենայի գնալ: Ես ասացի, որ որոշակի ընտրություն չունեի, միայն գնայի այնտեղ, ուր կուղարկվեի: Բայց նա ասաց.«Դու պետք է որ ունենաս ինչ-որ վայր, ուր դու կնախընտրեիր գնալ»: Ես ասացի. «Դեհ, կնախընտրեի գնալ Գերմանիա»: Այսպիսով՝ նրանք ինձ ուղարկեցին Անգլիա»:[14]

Լյուին որոշեց ապրել իր ծնողների հետ, մինչ Ջոզեֆը հեռվում էր գտնվում: Նա զգում էր, որ սա կօգներ նրան դիմանալ իր ամուսնուց առանձնացած լինելու միայնակությանը: Եվ նա աշխատելու էր իր հոր խանութում, փող աշխատելով՝ հոգալու Ջոզեֆի միսիայի ծախսերը:[15]

1899թ. մայիսի 12-ին միսիա մեկնելուց մեկ օր առաջ, Երեց Սմիթը և այլ միսիոներներ հրահանգներ ստացան Նախագահ

Ջոզեֆ Ֆ. Սմիթից և Տասներկու Առաքյալների Քվորումի Երեցներ Ջորջ Թիսդեյլից և Հեբեր Ջ. Գրանթից: Այսքան էր նրանց ուսուցման տևողությունը նախքան որպես լիաժամկետ միսիոներներ մեկնելը: Այդ ժողովին յուրաքանչյուր միսիոներ ստացավ պաշտոնական միսիոներական վկայական: Երեց Սմիթի վկայականում ասվում էր.

«Սույն վկայականը տրվում է առ այն, որ կրողը՝ Երեց Ջոզեֆ Ֆ. Սմիթ կրտսերը լիարժեք հավատարմության և անդամակցության մեջ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում և նշված Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորների կողմից նշանակվել է միսիա ծառայելու Մեծ Բրիտանիայում՝ Ավետարանը քարոզելու և իր պաշտոնին վերաբերող ավետարանի Արարողությունները սպասավորելու համար:

Եվ մենք կոչ ենք անում բոլոր մարդկանց ուշադրություն դարձնել նրա Ուսուցումներին և Խորհուրդներին որպես Աստծո մարդու, որն ուղարկվել է՝ բացելու նրանց համար Կյանքի և Փրկության դուռը և օգնելու նրան իր ճանապարհորդություններում, այն բոլոր բաներում, որոնց կարիքը նա կունենա:

Եվ մենք աղոթում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, օրհնել Երեց Սմիթին և բոլորին, ովքեր կընդունեն նրան և կնպաստեն նրա բարօրությանը Երկնքի և երկրի օրհնություններով, ժամանակի և ողջ հավերժության համար, Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն:

Ստորագրված է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, մայիսի 12-ին, 1899թ. նշված Եկեղեցու անունից: Լորենզո Սնոու, Ջորջ Ք. Քենոն, Ջոզ Ֆ. Սմիթ՝ Առաջին Նախագահություն:[16]

Հաջորդ օրը ընտանիքը հավաքվեց տանը մնաս բարով մաղթելու Ջոզեֆին և ավագ եղբայրներից մեկին, որը նույնպես կանչվել էր ծառայելու Անգլիայում: Սակայն ընտանիքի մի անդամ բացակայում էր հավաքույթից: Ջոզեֆի փոքր քույրը՝ Էմիլին թաքնվել էր, ամաչելով մի բանի համար, որը նա արել էր մի քանի տարի առաջ: Երբ Ջոզեֆն ու Լյուին սիրատածում էին, Ջոզեֆը, երբեմն, ուղարկում էր Էմիլիին և մյուս փոքր երեխաներին վաղ քնելու, որպեսզի կարողանար միայնակ մնալ իր սրտի սիրեցյալի հետ: Բարկանալով այս ակնհայտ անարդարությունից, Էմիլին հաճախ էր աղոթում, որ Տերն իր եղբորը հեռու ուղարկեր միսիայի: Այժմ,

երբ նա իսկապես մեկնում էր, նա հանցավոր էր զգում այն դերի համար, որ գուցե խաղացել էր նրա մեկնումի համար:[17]

Ջոզեֆը և Լյուին գիտեին, որ Անգլիայում ծառայելու կանչը եկել էր Տիրոջից: Ջոզեֆը ձգտում էր կատարել իր պարտականությունը և Լյուին գոհ էր, որ իր ամուսինը ծառայելու էր միսիա, բայց նրանք երկուսն էլ մաքառում էին բաժանման գաղափարի հետ: Երբ եկավ ժամանակը Երեց Սմիթի համար մեկնելու երկաթուղային կայարան «Լյուին փորձեց քաջ լինել, փորձեց թույլ չտալ Ջոզեֆին տեսնել իր արտասվելը: Բայց դժվար էր թաքցնել կարմրած աչքերը: Իսկ Ջոզեֆն արդեն այնպես էր կարոտում տանը, որ միայն մեկնելու մասին մտքից նա չէր ուզում խոսել որևէ մեկի հետ. . . Ջոզեֆի կոկորդում կարծես գունդ էր դեմ առել, երբ նա կանգ առավ հին տան դիմացի դռանը Հյուսիսային Առաջին փողոցի վրա և համբուրեց իր սիրելիներից յուրաքանչյուրին մնաս բարով ասելով մայրիկին, հայրիկին, եղբայրներին և քույրերին, հորաքույրներին և բոլորից վերջում Լյուիին: «Ցտեսություն Լյուի, թանկագինս: Աստված օրհնի քեզ և պահի քեզ ապահով ինձ համար»:[18]

Ցանելով Ավետարանի սերմերը Անգլիայում

Այն պահից ի վեր, ինչ գնացքը անհարմար և ծխախոտի ծխով լցված հեռու սլացավ տնից, Երեց Սմիթը նվիրաբերեց իրեն իր միսիային: Նրա օրագրի վերնագրերը և նամակները, որ նա ուղարկում էր և ստանում բացահայտում են այն դժվարությունները, որոնց նա էր դիմակայում որպես միսիոներ և հավատքն ու նվիրումը, որոնցով նա հաղթահարում էր դրանք:

Անգլիայում միսիոներական աշխատանքի այդ առաջին օրվա վերջում նա գրեց իր օրագրում. «Սա իմ կարճ կյանքում շատ կարևոր օր էր: Մեկ ամիս չկա, որ ես եկել եմ տնից մեր Տիրոջ ավետարանը քարոզելու նպատակով. . . Այսօր ես դուրս էի եկել և դռներ էի ծեծում և բաժանեցի 25 բրոշյուր [գրքույկ]: Սա առաջին անգամն էր, որ այս տիպի աշխատանք էի կատարում և դա ինձ համար այնքան էլ հեշտ չստացվեց. . . Ես այսօր առաջին անգամ բերեցի իմ վկայությունն աշխարհին, բայց կկարողանամ ավելի լավ անել դա: Տիրոջ օգնությամբ ես կկատարեմ Նրա կամքը ինչպես որ կանչվել եմ անելու»:[19]

Երբ նրա հայրը մի քանի դոլար ուղարկեց իր կարիքների համար, նա պատասխանեց. «Ես շատ զգույշ կլինեմ այն միջոցների հետ, որոնք դու ուղարկում ես ինձ: Ես չեմ ծախսում որևէ բանի համար մինչև չեմ ունենում հիմնավոր պատճառ դրա համար»: Նա նաև պատմեց իր հորը ավետարանը սովորելու և ուսուցանելու իր վճռականության մասին. «Ես այստեղ եմ ավետարանը քարոզելու համար և հուսով եմ, որ կկարողանամ դա լավ անել. . . Իմ ցանկությունն է բարելավել իմ միտքը և տաղանդները մինչ այստեղ եմ, որպեսզի ես կարողանամ միշտ օգտակար լինել կյանքում ինչ-որ բանի համար: Ես ուզում եմ ճիշտ լինել բոլոր բաներում և ոչինչ չի տալիս ինձ ավելի մեծ բավականություն, քան ավետարանի մասին ինչ-որ բան սովորելը: Իմ ցանկությունն է ծանոթանալ դրա հետ և ձեռք բերել իմաստություն»:[20]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը գրել է հետևյալ հորդորանքի խոսքերը Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթին ուղղված մի նամակում. «Ես հավանում եմ քո ոգին, ես հավատում եմ քո հավատարմությանը և ես հավանություն և բավականություն եմ զգում քեզանից: Ես ուզում եմ, որ դու իմաստություն զարգացնես և կշռադատված դատողություն և համբերություն, ինչպես նաև Սուրբ Հոգին և Աստծո սերը»:[21] Լյուիի հայրը՝ Լյուիս Շուրթլիֆը նույնպես վստահություն էր արտահայտել Երեց Սմիթի հանդեպ. «Ես միշտ զգացել եմ, որ դու իրականացնելու ես մի փառահեղ միսիա և ձեռք ես բերելու մի փորձառություն, որը կհամապատասխանի քեզ վեհացած վիճակում, որը դու կանխորոշված ես զբաղեցնել ապագայում»: [22]

Լյուիին ուղղված նամակներում Ջոզեֆը միշտ արտահայտում էր իր սերը նրա հանդեպ: Նա հաճախ չորացած ծաղիկներ էր ուղարկում իր «ջերմ և քնքշալի նամակներում»:[23] Նա նաև գրում էր այն մարտահրավերների մասին, որ դիմակայում էր. «Շատերը կան այս ազգության մեջ, ովքեր գիտեն, որ ավետարանը, որ մենք ուսուցանում ենք, ճշմարիտ է, բայց նրանք չունեն բարոյական քաջություն դուրս գալու աշխարհից և ընդունելու այն»:[24]

Լյուին նամակներ էր ուղարկում առնվազն շաբաթը մեկ: «Հիշիր, մի անգամ գրեց նա, ես այստեղ եմ սիրելու և աղոթելու քո համար, և որ ես երբեք չեմ մոռանում քեզ մեկ իսկ վայրկյան. . . Օրհված լինես դու իմ թանկագին ամուսին, սա է միշտ իմ աղոթքը»[25] Լյուին հստակ էր իր ամուսնու հանդեպ նվիրվածության հարցում և նա հավասարապես հստակ էր Տիրոջ

և Նրա աշխատանքի հանդեպ իր նվիրվածության առթիվ: Նա հետևողականորեն հիշեցնում էր Ջոզեֆին թույլ չտալ, որ տան կարոտը թուլացնի իր ծառայելու վճռականությունը:

Երեց Սմիթը կարիք ուներ այսպիսի քաջալերանքի, քանի որ նա հազվադեպ էր գտնում որևէ մեկին, որն ընդուներ վերականգված ավետարանի ուղերձը: Տարիներ հետո նա «պատմեց իր որդի Ջոզեֆին, որ պայմաններն այնքան վատ էին և մարդիկ այնքան հետաքրքրված չէին, որ նա հասավ մտքի մի վիճակի, երբ մտածեց, որ էլ չէր կարող շարունակել: Մի գիշեր նա անքուն պառկած էր մտածելով, որ պետք է աշխատեր տուն գնալու ելք գտնել»:[26] Բայց ոգեշնչվելով սիրելիների կողմից և զորացվելով նրանց աղոթքներով և իր իսկ ծառայելու ցանկությամբ, նա հաղթահարեց այդ մտքերը: Նա գիտեր, որ Տերն էր կանչել իրեն և գիտեր, որ պետք է ջանասիրաբար աշխատեր այն մարդկանց բարու համար, ում ծառայում էր և իր ընտանիքի բարու համար: «Ես ավելի լավ է այստեղ հավերժ մնամ, քան տուն գամ առանց պատվավոր արձակման նամակի. . . Ես աղոթում եմ, որ կարողանամ ունենալ ավետարանի ոգին և սեր իմ մերձավորների հանդեպ, որ կարողանամ մնալ այստեղ մինչև պատվավոր ձևով արձակվեմ: Եթե չլինեին այդքան շատ աղոթքներ, որոնք ինձ համար էին հղվում տանը և նաև իմ սեփականը, ես չէի կարող հաջողություն ունենալ»:[27]

Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը պատվավոր ձևով վերջացրեց իր միսիան 1901թ. հունիսի 20-ին: Իր երկու տարվա ջանասեր ծառայության ընթացքում «նա դարձի չբերեց ոչ մեկին, հնարավորություն չունեցավ կատարելու մեկ իսկ մկրտություն, չնայած նա հաստատեց մի նորադարձի»:[28] Այնուամենայնիվ, նա և իր ընկերակիցները ցանել էին ավետարանի սերմերը, օգնելով շատ մարդկանց գտնել ավելի մեծ խաղաղություն և հասկացողություն, և նա աճել էր անձնապես որպես ավետարանի ուսանող և ուսուցիչ և որպես քահանայության առաջնորդ:

Նոր տուն և նոր պարտականություններ

Ջոզեֆը Սոլթ Լեյք Սիթի ժամանեց 1901թ. հուլիսի 9-ին: Մի քանի օր Օգդենում Լյուիի ընտանիքի հետ անցկացնելուց հետո Ջոզեֆը և Լյուին վերադարձան իրենց տուն Սմիթների մոտ և

Լյուի Շուրթլիֆ Սմիթ

վերսկսեցն իրենց համատեղ կյանքը: Նրանց ամուսնությանը բնորոշ էր հավատքը, ջանասիրությունը և ծառայությունը, քանի որ նրանք աշխատում էին տուն և ընտանիք հաստատել և ծառայել Եկեղեցում:

Ջոզեֆի տուն վերադառնալուց հետո շուտով նա սկսեց աշխատանք որոնել, որպեսզի պահի իր ընտանիքը: Ընտանիքի անդամի օգնությամբ նա ապահովվեց մի ժամանակավոր աշխատանքով՝ որպես Սոլթ Լեյքի գավառի գրասենյակային ծառայող: Մոտ հինգ շաբաթ անց, նա ընդունեց մի պաշտոն Եկեղեցու Պատմաբանի գրասենյակում: Երբ նա ավելի շատ բան սովորեց Եկեղեցու պատմության մասին, նա նաև ավելի լավ ծանոթացավ մարդկանց հետ, ովքեր ձգտում էին վարկաբեկել Եկեղեցին և նրա առաջնորդներին: Նա անխոնջաբար աշխատեց տեղեկություններ ապահովելու համար՝ ի պաշտպանություն հավատքի: Սա ծառայության սկիզբն էր, որն օրհնելու էր Եկեղեցին գալիք տարիների ընթացքում:

1902թ. գարնանը Լյուին հղի էր: Նա և Ջոզեֆը երախտապարտ էին իրենց փոքրիկ բնակարանի համար, բայց նրանք անհամբեր սպասում էին իրենց սեփական տուն կառուցելուն: Ջոզեֆի ապահով աշխատանքը թույլ տվեց նրանց սկսել պլաններ կազմել:

Նրանք վարձեցին մի շինարարական ֆիրմա և պայմանավորվեցին, որ Ջոզեֆն ինքն աներ աշխատանքների մեծ մասը՝ ծախսերը կրճատելու նպատակով: Նրանց առաջին երեխան աղջիկ էր, Ջոզեֆին անունով՝ ծնված 1902թ. սեպտեմբերին, և նրանք տեղափոխվեցին իրենց նոր տունը մոտ տաս ամիս հետո: 1906թ. Լյուին դժվար հղիություն տանելուց հետո, նրանք ողջունեցին ևս մեկ դստեր իրենց տանը և նրան անվանեցին Ջուլինա:

Ջոզեֆը միշտ պատրաստակամ էր մասնակցել Տիրոջ փրկության աշխատանքին և նա ստացավ շատ հնարավորություններ այդ անելու համար: 1902թ. նա կանչվեց ծառայելու որպես յոթանասունի քսանչորս քվորումներից մեկի նախագահ, ներառյալ պարտականությունները որպես քվորումի ուսուցիչ (Այդ ժամանակ Եկեղեցին ուներ յոթանասունի ավելի քան 100 քվորում: Այդ քվորումների անդամները Բարձրագույն Իշխանավորներ չէին): Ջոզեֆը նաև կանչվեց ծառայելու Երիտասարդ Տղամարդկանց Փոխադարձ Բարելավման Միության գերագույն վարչությունում և որպես Սոլթ Լեյքի Ցցի բարձրագույն խորհրդի անդամ: Նա կարգվեց որպես քահանայապետ իր եղբայր Հայրումի կողմից, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր: 1906թ ապրիլյան գերագույն համաժողովում նա հաստատվեց որպես Եկեղեցու Պատմաբանի օգնական և հաջորդ հունվարին նա նշանակվեց հատուկ հանձնաժողովում, որի նպատակն էր «պատրաստել տեղկատվական բազա եկեղեցու պաշտպանության համար այն վիրավորանքների դեմ, որոնք հասցվում էին նրա թշնամիների կողմից»:[29]

Երբ Ջոզեֆի հայրը ծառայում էր որպես Եկեղեցու Նախագահ, Ջոզեֆը հաճախ էր օգնում նրան նամակագրության գործում և այլ վարչական պարտականություններում, և նա, երբեմն, ուղեկցում էր իր հորը Եկեղեցու առաջադրանքներում: Մի անգամ նա նույնիսկ ճանապարհորդեց Նախագահ Սմիթի փոխարեն: Նա գրել է. «Ես գնացի Բրիգամ քաղաքը՝ [Յուտա] հորս խնդրանքով, նվիրագործելու Երկրորդ Ծխի ժողովատունը Բրիգամ քաղաքում: Նրանք շատ էին ցանկանում, որ *հայրս* ասեր նվիրագործման աղոթքը, բայց նա տառապում էր խիստ մրսածությունից և ինձ ուղարկեց իր փոխարեն»: Երբ ցցի նախագահը և եպիսկոպոսը դիմավորեցին Ջոզեֆին երկաթուղային կայանում, նրանք այնքան էլ երջանիկ չէին տեսնելով նրան:[30]

Ինչպես պատմում են՝ ցցի նախագահն ասել է. «Ես ուզում էի բղավել։ Մենք սպասում էինք Եկեղեցու Նախագահին և նրա փոխարեն ստանում ենք մի տղայի»։ Համաձայն այդ պատմության ևս մեկ տարբերակի՝ Ջոզեֆն, ի պատասխան, սրամտորեն պատասխանել է. «Ես էլ էի ուզում բղավել»։[31]

Չնայած Ջոզեֆի պարտականությունների շատությունը նրան հեռու էին պահում տնից, նա և Լյուիին ժամանակ էին գտնում նաև միասին ծառայելու և վայելելու միմյանց ընկերակցությունը։ Իր օրագրի 1907թ. նոյեմբերի 1–ի արձանագրությունում նա գրել է. «Լյուի հետ անցկացրեցի օրվա մեծ մասը Սոլթ Լեյքի Տաճարում, մեր կյանքի ամենաերջանիկ օրերից մեկը և ամենաօգտակարը մեզ համար»։[32]

Փորձություններ և օրհնություններ

Ջոզեֆը իր Եկեղեցու պարտականություններից շատերը մի կողմ դրեց 1908թ. մարտին, զգալով անհրաժեշտություն մնալ Լյուիի հետ տանը, այնքան շատ որքան հնարավոր էր։ Լյուին տառապում էր սուր, չդադարող հիվանդությունից, որը կապված էր նրա երրորդ հղիության վաղ շրջանի հետ։ Չնայած աղոթքներին, քահանայության օրհնություններին, իր ամուսնու հոգատար խնամքին և բժիշկների հատուկ ուշադրությանը, նա շարունակում էր վատանալ։ Նա մահացավ մարտի 30-ին։

Իր վշտի մեջ Ջոզեֆը գրեց. «Այս ամսվա ընթացքում, որն ինձ համար եղել է անընդհատ նեղսրտության և անհանգստության ժամանակ, ես անցա ամենախորը և ամենացավալի փորձությունների և փորձառությունների միջով։ Եվ այդ բոլորի ընթացքում ես ապավինել եմ Տիրոջը ուժի և սփոփանքի համար։ Ամենատանջալի ցավեր քաշելով, երեք կամ չորս շաբաթ և հիվանդությունից հետո, որը տևեց մոտ երկու ամիս իմ սիրելի կինը ազատվեց իր տառապանքից։ . . . և հեռացավ ինձանից ու մեր թանկագին երեխաներից դեպի ավելի լավ աշխարհ, որտեղ մենք համբերությամբ ու թախիծով սպասում ենք ամենափառահեղ հանդիպման»։ Ջոզեֆը պատմել է, որ իր կինը «մահացավ ամուր հավատքով և ավետարանի բոլոր սկզբունքներին հավատարիմ»։[33]

Էթել Ռեյնոլդս Սմիթ

Ջոզեֆը շուտով գերծանրաբեռնված զգաց երկու փոքրիկ աղջիկներին առանց մոր տանը մեծացնելու խնդրից: Նրա ծնողները հրավիրեցին երիտասարդ ընտանիքին ապրել իրենց հետ: Նույնիսկ այս օգնությամբ այրին հասկացավ, որ իր փոքրիկ երեխաները սիրող մոր խնամքի կարիքն ունեին:

Ինչպես նա անում էր բոլոր կարևոր հարցերի դեպքում, Ջոզեֆը այս հարցը դարձրեց ջերմեռանդ աղոթքի թեմա: Էթել Ջորջինա Ռեյնոլդսը՝ Եկեղեցու Պատմության գրասենյակի մի գործավար, դարձավ նրա աղոթքների պատասխանը: Ջոզեֆը հրավիրեց նրան միանալ իրեն և իր դուստրերին, երբ նրանք գնալու էին զբոսայգի 1908թ. հուլիսի 6-ին: Զբոսանքը հաջող էր քանի որ բոլորը չորսով բավականություն ստացան միմյանց ընկերակցությունից: Տաս օր անց Ջոզեֆը և Էթելը վայելեցին մի ժամադրություն առանց երեխաների և դրանից հետո շուտով նրանք նշանադրվեցին ամուսնանալու համար:

Էթելը և Ջոզեֆը կնքվեցին Սոլթ Լեյքի Տաճարում 1908 թ. նոյեմբերի 2-ին: Տարիներ հետո Էթելին գրած մի նամակում Ջոզեֆը գրել էր. «Դու չգիտես թե որքան հաճախ եմ շնորհակալություն հայտնել Տիրոջը, որ ես սխալ չարեցի, երբ զուգընկերոջ

կարիք ունեի: Դու ուղարկվեցիր ինձ համար»: [34] Բացի Ջոզեֆի համար սիրող զուգընկեր լինելուց, Էթելը շուտով երկրորդ մայր դարձավՋոզեֆինի և Ջուլինայի համար:

Ծառայությունը որպես Տասներկուսի Քվորումի անդամ

Անմիջապես 1910 թ. ապրիլյան գերագույն համաժողովից առաջ Նախագահ Ջոն Ռ. Ուայնդերը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, մահացավ: Երեց Ջոն Հենրի Սմիթը, որը ծառայում էր Տասներկուսի Քվորումում, կանչվեց ծառայելու Առաջին Նախագահությունում, թողնելով թափուր տեղ Տասներկուսի Քվորումում: Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը հանդիպեցին Սոլթ Լեյքի Տաճարում քննարկելու, թե տղամարդկանցից ով էր որակավորված՝ այդ տեղը զբաղեցնելու համար: Մոտ մեկ ժամ միասին քննարկելուց հետո, նրանք չկարողացան հասնել միաբանության այդ հարցում: Վերջում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հեռացավ մի սենյակ միայնակ և ծնկի իջավ աղոթքով առաջնորդության համար: Երբ նա վերադարձավ, նա տատանվելով հարցրեց 13 մյուս եղբայրներին, թե արդյոք կկամենային քննարկել իր որդի Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ կրտսերի թեկնածությունն այդ պաշտոնի համար: Նա դժկամությամբ էր առաջարկում, ասաց նա, որովհետև նրա որդին՝ Հայրումը արդեն խորհրդի անդամ էր և իր որդի Դեյվիդը Խորհրդական էր Նախագահող Եպիսկոպոսությունում: Նա երկյուղում էր, որ Եկեղեցու անդամները դժգոհ կլինեն, երբ իր որդիներից ևս մեկը նշանակվեր որպես բարձրագույն իշխանավոր: Այնուամենայնիվ, նա ոգեշնչված էր զգում առաջարկելու Ջոզեֆի անունը քննարկման համար: Մյուս տղամարդիկ կարծես անմիջապես ընդունեցին առաջարկությունը և աջակցեցին Նախագահ Սմիթին:

«Հավանաբար, Նախագահ Սմիթը վստահել էր Ջոզեֆի ընտրության գաղտնիքը նրա [Ջոզեֆի] մորը նախքան համաժողովում հայտարարելը: Ջոզեֆի քույրը՝ Էդիթ Ս. Պատրիկն ասում է. «Հիշում եմ, թե մայրս ինչպես պատմեց մեզ, որ 1910 թվականին հայրիկը տուն եկավ տաճարային խորհրդակցությունից և շատ անհանգստացած էր թվում: Երբ նրան հարցրեցին թե ինչն էր իրեն անհանգստացնում, նա ասաց, որ Ջոզեֆն ընտրվել է որպես Տասներկուսից մեկը: Նա ասաց, որ եղբայրները միաձայն ընտրել են նրան և ասաց, որ իրեն որպես նախագահ խստորեն

Տասներկու Առաքյալների Քվորում 1921թ.: Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը կանգնած ձախ կողմից հեռվում:

կքննադատեն, իր որդուն Առաքյալ դարձնելու համար: Մայրն ասաց, որ նա ոչ մի բոպե չպետք է անհանգստանա, թե ինչ կասեն մարդիկ: Նա գիտեր, որ Տերն է ընտրել նրան և ասաց, որ նա պատվով կկատարի իր կոչումը»:

«. . . Այդ ժամանակ սովորույթ կար նախորոք *չտեղեկացնել* ընտրված մարդուն, այլ որ նա լսեր իր անունը համաժողովում հաստատման քվեի համար կարդացվելիս: Այսպիսով, երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը համաժողովի գնաց 1910թ. ապրիլի 6-ին, նա ոչ մի գաղափար չուներ իր ընտրվելու մասին»: Երբ նա մտավ Թաբերնաքլ, մի ուղեկցորդ հարցրեց նրան. «Դե՛, Ջոզեֆ, ո՞վ է լինելու նոր առաքյալը»: Նա պատասխանեց. «Ես չգիտեմ: Բայց ոչ դու ես լինելու, ոչ էլ ես»:

Անմիջապես Տասներկուսի Քվորումի նոր անդամի անունը կարդալուց առաջ Ջոզեֆը զգաց մի հուշում Հոգուց, որ այդ անունը կարող էր հենց իրենը լիներ: Այնուամենայնիվ, նա հետագայում ասաց, որ երբ իր անունը հայտարարվեց «Ես այնքան ցնցված էի և պապանձված, որ հազիվ կարողացա խոսել»:

Այդ օրն ավելի ուշ նա գնաց տուն կիսվելու նորությամբ Էթելի հետ, որը չէր կարողացել գնալ ժողովին: Նա սկսեց՝ ասելով. «Կարծում եմ մենք պետք է վաճառենք կովը: Ես այլևս ժամանակ չեմ ունենա հոգ տանելու դրան»:[35]

Տասներկու Առաքյալների Քվորումում 60 տարի ծառայելու ընթացքում Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը տեսավ շատ փոփոխություններ աշխարհում: Օրինակ, երբ նա կանչվեց առաքյալ, շատ մարդիկ դեռ օգտագործում էին ձիեր և կառքեր որպես իրենց փոխադրամիջոցի հիմնական ձև: Քվորումում իր ծառայության վերջում նա հաճախ էր ճանապարհորդում ինքնաթիռներով:

Երեց Սմիթը պատասխանատու և վստահելի շատ պաշտոններ է զբաղեցրել, երբ ծառայում էր Տասներկուսի Քվորումում: Որպես Առաքյալ իր ծառայության առաջին ութ ամիսների ընթացքում նա ոչ պաշտոնապես քարտուղար ծառայեց իր հոր համար: Նա ծառայեց այդ տեղում մինչև նրա հայրը հեռացավ կյանքից 1918թ. նոյեմբերին: Այդ դերում Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ծառայեց որպես դպիր, երբ հայրը թելադրում էր իրեն մահացածների փրկագնման տեսիլքը, որն այժմ գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 138-ում:

Երեց Սմիթը ծառայեց որպես Եկեղեցու Պատմաբանի Օգնական, որպես Եկեղեցու Պատմաբան մոտ 50 տարի, որպես Սոլթ Լեյքի Տաճարի նախագահության խորհրդական, որպես Սոլթ Լեյքի Տաճարի նախագահ, որպես Յուտայի Ծագումնաբանական և Պատմական ընկերության նախագահ, որպես *Յուտայի Ծագումնաբանական և Պատմական Ամսագրի* առաջին խմբագիր և գործերի կառավարիչ և որպես Եկեղեցու Կրթության Խորհրդի գործադիր հանձնաժողովի նախագահ: Նա նաև ծառայեց որպես Եկեղեցու Հրապարակումների հանձնաժողովի նախագահ, մի հանձնարարություն, որը նրանից պահանջում էր կարդալ ձեռագրերի հազարավոր էջեր, նախքան դրանք պատրաստվում էին որպես դասագրքերի դասեր և Եկեղեցու այլ հրապարակումներ:

Նա ի սպաս դրվեց որպես Տասներկուսի Քվորումի Գործող Նախագահ 1950թ. հոկտեմբերին և ծառայեց այդ պաշտոնում մինչև 1951թ. ապրիլը, երբ նա ի սպաս դրվեց որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ: Նա ծառայեց այդ պաշտոնում 1951թ. ապրիլից մինչև 1970թ. հունվարը, երբ դարձավ Եկեղեցու նախագահ: 1965–1970թթ. նա նաև ծառայեց որպես Առաջին Նախագահության Խորհրդական, միևնույն ժամանակ շարունակելով իր պարտականությունները որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ:

Խիստ նախազգուշացումների և մեղմ ներողամտության ծառայություն

Գերագույն համաժողովի իր առաջին ելույթում Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը խոսեց ուղղակիորեն բոլոր նրանց համար, ովքեր «կբարձրացնեն իրենց ձայնը իշխանավորների գործողությունների դեմ, ովքեր նախագահում են Եկեղեցու վրա»: Նա հրապարակեց այս խիստ հայտարարությունը. «Ես ուզում եմ նախազգուշացման ձայն բարձրացնել բոլոր նրանց համար, ովքեր անդամակցում են Եկեղեցուն և ասում եմ նրանց, որ նրանք ավելի լավ է ապաշխարեն և դառնան դեպի Տերը, որպեսզի Նրա դատաստանները չգան նրանց վրա, որ չկորցնեն հավատքը և հավատքից չշրջվեն»:[36]

Իր ծառայության ողջ ընթացքում նա շարունակում էր նախազգուշացման ձայն բարձրացնել: Նա մի անգամ ասել է. «Ես համարում եմ, որ դա իմ առաքելությունն է եղել, այդպես տպավորված լինելով, կարծում եմ, Տիրոջ Հոգուց, իմ ուղևորությունների ժամանակ Սիոնի Ցցերում, ասելու մարդկանց, որ *այժմ* է ապաշխարության օրը. . . Ես զգում եմ, որ իմ առաքելությունն է ապաշխարություն աղաղակել և կոչ անել մարդկանց ծառայելու Տիրոջը»:[37]

Այս ոչ անիմաստ շիտակ մոտեցումը ուսուցանմանը չափավորվում էր մեղմությամբ և բարությամբ: Երեց Բոյդ Ք. Փաքերը մի անգամ վկայեց այդ մասին մի ժողովում, երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը Եկեղեցու Միսիոներական Հանձնաժողովի նախագահն էր: «Մի զեկուցում ներկայացվեց վթարի վերաբերյալ, որին ներգրավված էին եղել երկու միսիոներ երեցներ Եկեղեցուն պատկանող ավտոմեքենայում: Մի բանջարեղենի բեռնատարի մեծահասակ վարորդ խփել էր կանգառի նշանին իր մեքենայով: Միսիոներական մեքենային հարվածել էր կողքից և ամբողջովին ջարդուխուրդ արել: Բեռնատարի վարորդին բռնել էր ոստիկանությունը: Նա ապահովագրություն չուներ: Բարեբախտաբար, ոչ մի միսիոներ լրջորեն չէր վնասվել:

Նախագահ Սմիթը լուռ նստեց, մինչ հանձնաժողովի անդամները քննարկում էին այդ հարցը: Որոշ քննարկումից հետո,

նրանք հրահանգեցին Միսիոներական Բաժանմունքի կառավարող տնօրենին փաստաբան վարձել և գործը դատարան ուղարկել:

Միայն այդ ժամանակ Նախագահ Սմիթին հարցրեցին, թե արդյոք նա համաձայն էր գործերի այդ ընթացքին: Հանդարտորեն նա ասաց. «Այո, մենք կարող ենք դա անել: Եվ եթե մենք մեր ողջ ուժով ճնշում գործադրենք, մենք կարող ենք նույնիսկ խլել բեռնատարը խեղճ մարդուց, այդ ժամանակ ինչպե՞ս կարող է նա ապրուստ վաստակել»:

«Մենք միմյանց նայեցինք մի քիչ ամաչելով», ասաց Երեց Փաքերը: «Ապա թույլ տվեցինք, որ Եկեղեցին գնի մեկ ուրիշ մեքենա, շարունակի իր աշխատանքը և հանգիստ թողնի այդ հարցը»:[38]

«Բարի, սիրող ամուսին և հայր»

Երբ Երեց Սմիթը կանչվեց որպես առաքյալ, նա երեք երեխա ուներ՝ Ջոզեֆինը և Ջուլինան ու Էթելի առաջնեկը՝ Էմիլին: Յոթ ամիս անց ընտանիքը դիմավորեց ևս մեկ դստեր: Էթելն ու Ջոզեֆը անվանեցին նրան Նոեմի: Ծննդաբերության ժամանակ բարդությունների պատճառով Նոեմին պայքարում էր իր կյանքի համար և ընտանիքը վախենում էր, որ նա երկար չապրեր: Բայց ինչպես նրա հայրը հետագայում ասաց. «նա փրկվեց աղոթքի զորության և քահանայության սպասավորման միջոցով, երբ թվում էր, թե շունչը չէր կարողանում մտնել նրա մարմինը»:[39] Էթելը հետագայում ունեցավ ևս յոթ երեխա՝ Լոիսը, Ամելիան, Ջոզեֆը, Լյուիսը, Ռեյնոլդսը, Դուգլասը և Միլթոնը:

Նախագահ Սմիթի հանձնարարությունները որպես Առաքյալ հաճախ նրան տնից հեռու էին տանում երկար ժամանակով: Բայց երբ նա տանն էր, նա կենտրոնացնում էր իր ուշադրությունը իր ընտանիքի վրա: Նրա կինը՝ Էթելը նկարագրել է նրան որպես «բարի, սիրող ամուսին և հայր, որի մեծագույն ձգտումը կյանքում իր ընտանիքին երջանկացնելն է, այդ անելիս իր ջանքերում ամբողջապես մոռանալով իրեն»:[40]

Երեխաները Սմիթների ընտանիքում ծիծաղում էին՝ որոշ մարդկանց կողմից իրենց հոր մասին որպես կոպիտ, խիստ մարդու ունեցած տպավորության պատճառով: «Մի անգամ. . . , երեխաներին ճիշտ ղեկավարելու կարևորության

վերաբերյալ բավականին ազդեցիկ մի քարոզից հետո, մի վրդովված կին մոտեցավ նրա երկու փոքրիկ դուստրերին և կարեկցանք հայտնեց նրանց հանդեպ [և ասաց], «Համոզված եմ ձեր հայրիկը ծեծում է ձեզ, չէ՞»: Ի պատասխան այդ մեղադրանքի՝ աղջիկներն ուղղակի քրքջացին: Նրանք շատ ավելի լավ գիտեին իրենց հայրիկին, քան այդ կինը՝ նա երբեք նրանց ցավ չէր պատճառել: Երբ նա տուն էր գալիս իր երկարատև ճամփորդությունից «երջանիկ ժամանակ էր սկսվում նրանց համար այն պահից, երբ նրանք դիմավորում էին նրան երկաթուղային կայարանում, մինչև կրկին տխուր մնաս բարով էին մաղթում մի քանի օր հետո»: Նրանք խաղեր էին խաղում, կարկանդակներ և պաղպաղակ պատրաստում, գնում զբոսախնջույքի, գնացք նստում և այցելում մոտակա ձորերն ու լճերը: Նրանք հաճույքով լսում էին պատմություններ նրա եկեղեցական հանձնարարությունների մասին ողջ աշխարհում:[41] Նրանք նաև աշխատում էին միասին, զբաղվելով տան ամենօրյա գործերով:[42]

Նախագահ Սմիթի որդիները սպորտով էին զբաղվում և նա մասնակցում էր նրանց խաղերին, երբ որ կարողանում էր:[43] Նա նաև սիրում էր խաղալ նրանց հետ սպորտային խաղեր, հատկապես ձեռքի գնդակ: Նա զվարճանում էր նրանց հետ, բայց նաև մրցակցում: Նրա որդիները՝ Ռեյնոլդսը և Լյուիսը հիշում էին դեպքեր, երբ նրանք երկուսով միանում էին իրենց հոր դեմ: Նա թույլ էր տալիս նրանց ընտրել որ ձեռքը կարող էր օգտագործել խաղի ժամանակ: Նույնիսկ մեկ ձեռքը ետևում պահած, նա միշտ «հեշտությամբ հաղթում էր նրանց երկուսին էլ»:[44]

Տխրություն և հույս

Երեց Սմիթի տնից հեռու հանձնարարությունները դժվար էին Էթելի և երեխաների համար և բաժանման շաբաթները նրա համար նույնպես ցավատանջ էին: 1924թ. ապրիլի 18-ին նա ճանապարհորդում էր գնացքով՝ նախագահելու ցցի համաժողովում: Էթելը յոթ ամսեկան հղիություն ուներ այդ ժամանակ, անելով իր լավագույնը հոգ տանելու երեխաներին տանը: Նրան ուղղված մի նամակում նա ասել է. «Ես մտածում եմ քո մասին և կցանկանայի անընդհատ լինել քեզ հետ հաջորդ մի քանի

շաբաթների ընթացքում՝ օգնելու քեզ հոգ տանելու»:[45] Մտածելով տան մասին, նա եզրափակեց նամակը իր գրած մի բանաստեղծությունով: Այդ բանաստեղծության բառերից մի քանիսը այժմ հայտնվում են Եկեղեցու շատ օրհներգերի գրքերում «Միթե՞ ճամփորդությունը երկար է թվում» անվան տակ:

Միթե՞ ճամփորդությունը երկար է թվում,
Արահետը քարքարոտ ու զահավեժ,
Ուղին միթե՞ մացառներով ու փշերով է պատված
Միթե՞ սուր քարերը կտրում են ոտքերդ
Երբ տքնում ես բարձրանալ
Օրվա տապին դեպի բարձունքները ելնելիս:

Սիրտդ թուլանո՞ւմ է և տխո՞ւր ես
Արդյոք հոգնա՞ծ է հոգիդ,
Երբ տքնում ես հոգսի քո բեռան տակ
Միթե՞ բեռը թվում է ծանր
Որը դու ստիպված ես այժմ բարձրացնել:
Միթե՞ չկա մեկը որ բեռդ կիսի

Թող սիրտդ չթուլանա
Արդ, ճամփորդությունը սկսվել է,
Կա Մեկը, որ դեռ ձեռքով կանչում է,
Ուրեմն վեր նայիր ուրախ
Եվ բռնիր նրա ձեռքից,
Նա կառաջնորդի քեզ նոր բարձունքներ

Մի երկիր սուրբ և մաքուր,
Որտեղ բոլոր վշտերը վերջանում են,
Եվ ձեր կյանքն ազատ կլինի ամեն մեղքից,
Որտեղ արցունքներ չեն լինի,
Որտեղ չկան ցավեր:
Բռնիր նրա ձեռքը և ներս մտիր նրա հետ:[46]

Սկսած 1933թ. Սմիթների տան երջանկությունը երբեմն ընդհատվում էր ծանր «հոգսի բեռից» ինչպես Երեց Սմիթն էր արտահայտել իր բանաստեղծությունում ինը տարի առաջ: Էթելը սկսեց տառապել «մի սոսկալի հիվանդությամբ, որը նա չէր կարողանում հասկանալ: Երբեմն նա ընկնում էր խորը ընկճվածության մեջ և ուրիշ ժամանակ նրա միտքը սլանում էր անվերահսկելիորեն՝ ստիպելով նրա հոգեմաշ մարմնին անել

ավելի ու ավելի շատ բան: Նրա ընտանիքի քնքույշ սերն ու օգնությունը, աղոթքներն ու օրհնությունները, նույնիսկ հիվանդանոցային խնամքը կարծես չէին օգնում»:[47] Չորս տարի տանջվելուց հետո նա մահացավ՝ 1937թ. օգոստոսի 26-ին: Գրելով նրա մահվան մասին նրա զրկված ամուսինը գրել է. «Ավելի լավ կին կամ ավելի հավատարիմ կողակից և մայր չէր գտնվի»:[48] Իր վշտի խորքում նա զգում էր սփոփող մի գիտելիք, որ նա և Էթել Ռեյնոլդս Սմիթը կապված էին միմյանց հետ հավերժությունների համար սրբազան կնքման ուխտի միջոցով:

Նոր ընկերությունը տանում է դեպի ամուսնություն

Երբ Էթելը մահացավ, հինգ երեխա դեռ ապրում էին Սմիթի տանը: Նրանցից երկուսը շուտով պետք է հեռանային՝ Ամելիան նշանված էր ամուսնանալու համար, իսկ Լյուիսը պատրաստվում էր ծառայել լիաժամկետ միսիա: Մնալու էին 16 տարեկան Ռեյնոլդսը, 13 տարեկան Դուգլասը և 10 տարեկան Միլթոնը: Այս անմայր որդիների համար մտահոգվելով Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը խորհրդածում էր կրկին ամուսնանալու գաղափարի մասին:

Այս միտքը իր գլխում Երեց Սմիթը շուտով կենտրոնացրեց իր ուշադրությունը Ջեսսի Էլլա Էվանսի, Մորմոնական Թաբերնաքլի հանրահայտ մեներգչուհու վրա: Ջեսսին Էթելի մահվան արարողության ժամանակ մեներգ էր կատարել և Երեց Սմիթը նրան երկտող էր ուղարկել իր շնորհակալությունը նրան արտահայտելու համար: Այդ երկտողը հետագայում առիթ դարձավ հեռախոսային զրույցների: Երեց Սմիթն ու Ջեսսին միմյանց չէին ճանաչել մինչև այս զրույցները, բայց նրանք արագ լավ ընկերներ դարձան:

Երեց Սմիթը օրեր էր անցկացնում մտածելով և աղոթելով՝ իր հետ ամուսնանալու Ջեսսիին առաջարկ անելու հնարավորության մասին: Ի վերջո նա նամակ գրեց նրան, որում ակնարկեց, որ կկամենար ավելի անձնական ընկերություն ունենալ նրա հետ: Չորս օր հետո, նա քաջություն հավաքեց հանձնելու նամակը անձնապես: Նա տարավ այն քաղաք՝ գավառային գրասենյակ, որտեղ նա աշխատում էր որպես գավառային գրասենյակի գրագիր: Հետագայում նա գրեց հետևյալը իր օրագրում. «Գնացի *Գավառային Գրագրի* գրասենյակը. . . *Հարցազրույց ունեցա*

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը և Ջեսսի Էվանս Սմիթը դաշնամուրի մոտ:

գրագրի հետ, շատ կարևոր, և նրան թողեցի նամակը, որը ես էի գրել»:[49] Հետևյալ շաբաթը, որի ընթացքում նա ճանապարհորդեց գնացքով ցցի համաժողովի ժողովներին, Երեց Սմիթը տուն վերադարձավ և մեկ անգամ ևս այցելեց Ջեսսիին:

Իրեն բնորոշ ուղղամիտ ձևով Երեց Սմիթը գրեց իր օրագրում. «Հանդիպեցի Միս Ջեսսի Էվանսի հետ և ունեցա [մի] *կարևոր* հարցազրույց նրա հետ»: Միմյանց հանդեպ փոխադարձ հիացմունքի զգացումներով նրանք պայմանավորվեցին, որ նա հանդիպի Ջեսսիի մոր հետ, իսկ Ջեսսին հանդիպի նրա երեխաների հետ: Մեկ ամսից քիչ անց 1937թ. նոյեմբերի 21-ին նա ընդունեց նշանադրության մատանին: Երկուսով կնքվեցին Սոլթ Լեյքի Տաճարում 1938թ. ապրիլի 12-ին Նախագահ Հեբեր Ջ. Գրանթի՝ Եկեղեցու յոթերորդ Նախագահի կողմից:[50]

Երեց Ֆրենսիս Մ. Գիբբոնսը, որը ծառայում էր որպես քարտուղար Առաջին Նախագահությունում, երբ Նախագահ Սմիթը Եկեղեցու Նախագահն էր, նկարագրել է Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի և Ջեսսի Էվանս Սմիթի միջև փոխհարաբերությունները. «Չնայած նրանց հասակների միջև քսանվեց տարվա տարբերությանը և խառնվածքի, ծագման և կրթության տարբերություններին, Ջոզեֆ Ֆիլդինգը և Ջեսսի Էվանս Սմիթը զարմանալիորեն

համատեղելի էին: Ջեսսին անսանձ հաղորդակցվող էր, զվարթությամբ և լավ հումորով լի, որը սիրում էր հասարակության ուշադրության կենտրոնում լինել, իսկ մյուս կողմից Ջոզեֆը՝ հանգիստ, մեկուսացող, ինքնամփոփ էր, արժանապատիվ և առանձնացված, որն ինչ-որ չափով միշտ թվում էր անհարմար էր զգում հասարակական միջավայրում, և որը երբեք չէր ձգտում ուշադրություն գրավել: Այն ինչ կամրջում էր լայն վիհը այս երկու հանդունգն անձնավորությունների միջև, դա անկեղծ սերն էր և հարգանքը, որը նրանք ունեին միմյանց հանդեպ»:[51] Այս սերն ու հարգանքը տարածվում էր Ջեսսիի մոր՝ Ջենեթ Բուչանան Էվանսի վրա, ում հետ Ջեսսին ապրում էր մինչև ամուսնանալը: Քույր Էվանսը միացավ իր դստերը ապրելու Սմիթի տանը և օգնում էր հոգ տանել երեխաներին:

Խառնաշփոթ աշխարհին ծառայելը

Նոր քույր Սմիթը, որին Երեց Սմիթի երեխաներն ու թոռները դիմում էին որպես մորաքույր Ջեսսի, հաճախ էր ուղեկցում իր ամուսնուն, երբ նա ճամփորդում էր ցցի համաժողովների: Տեղի առաջնորդները հաճախ հրավիրում էին նրան երգել ժողովներում և, երբեմն, նա համոզում էր իր ամուսնուն զուգերգ կատարել իր հետ: 1939թ. Նախագահ Հեբեր Ջ. Գրանթը հանձնարարեց Երեց և Քույր Սմիթներին ուղևորություն կատարել Եվրոպայում գտնվող բոլոր Եկեղեցու միսիաները:

Չնայած Բ Համաշխարհային Պատերազմը դեռ չէր պայթել, երբ Սրբերը ժամանեցին Եվրոպա, լարվածությունը ազգերի միջև մեծանում էր: Օգոստոսի 24-ին, երբ Սմիթները Գերմանիայում էին, Առաջին Նախագահությունը հրահանգեց Երեց Սմիթին հոգ տանել, որպեսզի Գերմանիայում գտնվող բոլոր միսիոներները տեղափոխվեն չեզոք երկրներ: Նա կոորդինացրեց այս աշխատանքը Կոպենհագենից, Դանիա: Միսիոներների այս տեղափոխությունների ընթացքում Ուոլաս Տորոնտոն՝ միսիայի նախագահը Չեխոսլովակիայում, անհրաժեշտ համարեց ուղարկել իր կնոջը՝ Մարթային և իրենց երեխաներին Կոպենհագեն՝ ապահովության համար: Նա մնաց ապահովելու չորս միսիոներների ապահով էվակուացումը, ովքեր արգելափակման մեջ էին մնացել: Օրերն անցնում էին առանց նրանցից որևէ լուրի: Մարթան հետագայում հիշել է.

«Օրը վերջապես եկավ, երբ բոլոր գնացքները, լաստանավերը և նավերը իրենց վերջին ուղևորություններն էին կատարում Գերմանիայից և մենք աղոթում էինք, որ Ուոլլին [Նախագահ Տորոնտոն] և նրա խնամքի տակ գտնվող չորս երիտասարդ անձինք լինեին այդ վերջին լաստանավի վրա, երբ այն շարժվում էր դեպի իր հայրենի նավահանգիստը: Տեսնելով, որ ես շատ անհանգստացած էի և ոչպե առ ոչպե ավելի էի տխրում, Նախագահ Սմիթը մոտեցավ ինձ, իր պահապան ձեռքով գրկելով ուսերս, ասաց. «Քույր Տորոնտո, այս պատերազմը չի սկսի մինչև եղբայր Տորոնտոն և նրա միսիոներները չժամանեն այս երկիր՝ Դանիա»: Երբ օրը սկսեց երեկոյին մոտենալ մի հեռախոսազանգ եկավ. . . Դա Ուոլլին էր: Նրանք հինգով դուրս էին եկել Չեխոսլովակիայից Բրիտանական դիվանագիտական միսիայի հետ հատուկ գնացքով, որն ուղարկվել էր նրանց համար, նստել էին վերջին լաստանավը Գերմանիայից և այժմ նրանք [Դանիայի] ծովածոցում էին՝ սպասելով փոխադրամիջոցի Կոպենհագեն գալու համար: Հանգստությունը և երջանկությունը, որ զգացվում էր միսիայի տանը և 350 միսիոներների մեջ, նման էր մութ ամպի բարձրանալուն և արևափայլի բացվելուն»:[52]

Երեց Սմիթը երախտապարտ էր Դանիայի ժողովրդին, ովքեր թույլ տվեցին այդքան շատ միսիոներներ էվակուացվեին իրենց երկիր: Պատերազմը սկսվելու ժամանակ նա մարգարեացավ, որ իրենց առատաձեռնության համար, Դանիայի ժողովուրդը չի տառապի ուտելիքի պակասությունից պատերազմի ընթացքում: Տարիներ անց «Դանիայի ժողովուրդը պատերազմին թերևս ավելի լավ դիմացավ, քան Եվրոպայի ազգերից որևէ մեկը: Դանիացի Սրբերը նույնիսկ բարօրության ծրագրի փաթեթներ ուղարկեցին Հոլանդիայի և Նորվեգիայի տառապյալ Վերջին Օրերի Սրբերին: Անդամակցությունը հաստատունորեն աճել էր և տասանորդի անդորագրերը Դանիական Միսիայում կրկնակի անգամից ավելի էին շատացել. . . Դանիացի Սրբերը համարում էին իրենց պայմանները Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կողմից ասված մարգարեության ճշգրիտ իրականացում:[53]

Երբ պատերազմը սկսվեց, Երեց Սմիթը կազմակերպեց Եվրոպայում ծառայող 697 ամերիկացի միսիոներների էվակուացումը: Քանի որ որոշ միսիոներներ ծառայել էին որպես շրջանի և

ճյուղի առաջնորդներ, Երեց Սմիթը փոխանցեց ղեկավարության այդ պարտականությունները տեղի անդամներին: Այդ պարտականությունները կատարելուց հետո, Երեց Սմիթը նավարկեց դեպի Միացյալ Նահանգներ Ջեսսիի հետ: Նրանք գնացք նստեցին Նյու Յորքից և տուն ժամանեցին մեկնումից յոթ ամիս անց:

Չնայած Երեց Սմիթը երջանիկ էր, որ Ամերիկացի միսիոներները կարողացան ապահով վերադառնալ իրենց տները, նա արտահայտեց մտահոգություն անմեղ մարդկանց համար, ովքեր ընկել էին պատերազմի ողբերգության մեջ իրենց հայրենիքներում: Նա գրել է. «Սիրտս ցավում է ամեն անգամ, երբ ժողով էինք անում և վերջում սեղմում մարդկանց ձեռքերը: Նրանք բոլորը ջերմորեն էին ողջունում և նրանց [ընկերությունը] ինձ համար ավելի մեծ նշանակություն ուներ, քան նրանք հավանաբար գիտակցում էին: Նրանցից ոմանք արցունք էին թափում և ասում, որ սպասվում էին աղետալի դժբախտություններ և գուցե այլևս երբեք չտեսնվենք այս կյանքում: Ես կարեկցում եմ նրանց այժմ, և աղոթում ամեն օր, որ Տերը նրանց պահպանի այս սարսափելի ժամանակաընթացքում:[54]

Երեց Սմիթի որդին՝ Լյուիսը, որն Անգլիայում էր, երբ Բ Համաշխարհային Պատերազմը սկսվեց, միսիոներների վերջին խմբի մեջ էր, որոնք վերադարձան տուն:[55] Մոտ երկու և կես տարի անց Լյուիսը կրկին կտրեց անցավ Ատլանտյան Օվկիանոսը, այս անգամ ծառայելու ռազմական ուժերում: «Այս վիճակը մեզ բոլորիս տխրություն պատճառեց», գրել է Երեց Սմիթը: «Ամոթալի է, որ մաքուրները և արդարները ստիպված են համաշխարհային չափերի հակամարտությունների մեջ մտնել՝ մարդկանց ամբարշտության պատճառով»:[56]

1945թ. հունվարի 2-ին Երեց Սմիթը ստացավ հեռագիր, որը տեղեկացնում էր նրան, որ նրա որդին սպանվել է իր երկրին ծառայելու ընթացքում: Նա գրել է. «Այս լուրը մեզ պատճառեց ամենաուժեղ ցնցումը, քանի որ մենք մեծ հույսեր էինք փայփայում, որ նա շուտով վերադառնալու էր Միացյալ Նահանգներ: Մենք հույս էինք տածում, որ նա կպահպանվեր, ինչպես մի քանի անգամ արդեն խուսափել էր վտանգից: Մեզ համար դժվար էր պատկերացնել, որ այդպիսի բան կարող էր պատահել. . . Որքան էլ ուժեղ է հարվածը, մենք ունենք խաղաղություն՝ գիտենալով, որ նա մաքուր էր և զերծ այն չարիքներից, որոնք

գերակշռում են աշխարհում և առկա են բանակում: Նա հավատարիմ էր իր հավատքին և արժանի է փառահեղ հարության, երբ մենք կրկին կվերամիավորվենք:[57]

Վստահելի ուսուցիչ և առաջնորդ

Որպես Տասներկուսի Քվորումի անդամ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հաճախ կանգնում էր Վերջին Օրերի Սրբերի առջև վկայելու Հիսուս Քրիստոսի մասին, ուսուցանելու վերականգված ավետարանը և կանչելու մարդկանց ապաշխարության: Նա հաղորդել է ավելի քան 125 քարոզ գերագույն համաժողովներում, մասնակցել է հազարավոր ցցի համաժողովների և խոսել այնպիսի իրադարձությունների ժամանակ, ինչպիսիք են ծագումնաբանական համաժողովներ և ռադիո հեռարձակումներ: Նա նաև ուսուցանել է գրավոր խոսքի միջոցով: Շատ տարիներ նա գրել է Եկեղեցու *Improvement Era* ամսագրի համար հոդվածներ՝ պատասխանելով հարցերին, որոնք տրվում էին ընթերցողի կողմից: Նա գրել է նաև այլ հոդվածներ Եկեղեցու ամսագրերի համար և *Deseret News* ամսագրի Եկեղեցու բաժնին: Որպես Առաքյալ՝ իր 1910–ից մինչև 1972թ., նրա գրածները տպվեցին 25 գրքերով, ներառյալ *Եկեղեցու Պատմության հիմնադրությունները, Փրկության Վարդապետությունները, Եկեղեցու Պատմությունը և Ժամանակակից Հայտնությունը* և *Պատասխաններ Ավետարանական Հարցերին:*

Լսելով նրա քարոզները և կարդալով նրա գրածները, Եկեղեցու անդամները սկսեցին վստահել Նախագահ Սմիթին որպես ավետարանի գիտակի: Դեռ ավելին, նրանք սովորեցին վստահել և հետևել Տիրոջը: Ինչպես Նախագահ Ն. Էլդոն Թաններն է ասել, Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն «ազդեց հարյուր հազարավոր մարդկանց կյանքի վրա, երբ նա ապրեց և ուսուցանեց խոսքով և գրիչով ավետարանի յուրաքանչյուր սկզբունք: Նա չթողեց որևէ կասկած որևէ մեկի մտքում, որ ինքը գիտեր, որ Աստված կենդանի Աստված է, և որ մենք նրա հոգեղեն զավակներն ենք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Միածին Որդին է մարմնում, որ Նա տվեց Իր կյանքը մեզ համար, որպեսի մենք վայելենք անմահություն, և որ ընդունելով և ապրելով ավետարանով, մենք կվայելենք հավերժական կյանք»[58]

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին նկատել է.

«Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքին ու գործերին բնորոշ էին երեք բան.

1. Նրա սերն ու բացարձակ, անխախտ հավատարմությունը Տիրոջը, որով նա ձգտում էր ցույց տալ այդ սերը՝ պահելով Նրա պատվիրանները և անելով միշտ այն բաները, որոնք կգոհացնեին Տիրոջը։

2. Նրա նվիրվածությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթին ու հավիտենական ճշմարտություններին, որոնք վերականգվել էին նրա միջոցով, նաև իր պապին՝ Հայրապետ Հայրում Սմիթին. . . [որը] որպես մարտիրոս նահատակվեց, ինչպեսև իր հորը՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին, որի անունը հավերժ ամրագրված էսելեստիալ քաղաքում, որպես մեկը, ով քաջաբար տոկաց հանուն նրա գործի, ումարյունը հեղվեց, որպեսզի մենք ապրենք։

3. Ավետարանի նրա անձնական գիտակությունը և հոգևոր ներըմբռնումը, որպես արդարության քարոզիչ՝ նրա անձնական անխոնջ ջանասիրությունը և սովածներին կերակրելու, մերկերին հագցնելու, այրիներին ու որբերին այցելելու և սկզբունքով ու օրինակով անբիծ կրոն դրսևորելու նրա սեփական ուղին»։[59]

Նախագահ Սմիթի եղբայրները Տասներկուսի Քվորումում տեսնում էին նրան որպես իմաստուն, կարեկցող առաջնորդ։ Ի հիշատակ նրա ծննդյան 80–ամյակին Տասներկուսի Քվորումի մյուս անդամները նրան նվիրված մի հարգանքի տուրք մատուցեցին։ Հարգանքի այդ տուրքում նրանք ասել են.

«Մենք, ովքեր աշխատում ենք Տասներկուսի Խորհրդում նրա ղեկավարությամբ, հնարավորություն ունենք տեսնելու նրա բնավորության իսկական ազնվականությունը։ Ամեն օր մենք անընդհատ տեսնում ենք իր ընկերակից ծառայողների հանձնարարությունները և մեր ջանքերը մինչև վերջ կոորդինացնելու հասկացողության և խելամիտ մտածողության փաստեր, որպեսզի Տիրոջ աշխատանքն առաջ ընթանա։ Մենք միայն ցանկանում ենք, որ ողջ Եկեղեցին զգա նրա հոգու քնքշությունը և նրա մեծ մտահոգությունը թշվառների և դժբախտության մեջ գտնվողների հանդեպ։ Նա սիրում է բոլոր սրբերին և երբեք չի դադարում աղոթել մեղավորների համար։

Մեծ խորաթափանցությամբ, նա թվում է ունի ընդամենը երկու չափորոշիչներ վերջնական որոշումների հանգելու համար։

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը և նրա Խորհրդականները Առաջին Նախագահությունում՝ Նախագահ Հարոլդ Բ.Լին (կենտրոնում) և Նախագահ Ն. Էլդոն Թանները (աջից)

Որո՞նք են Առաջին Նախագահության ցանկությունները։ Ո՞րն է Աստծո թագավորության համար լավագույնը»։[60]

Եկեղեցու Նախագահ

Մի շաբաթ առավոտյան 1970թ. հունվարի 18-ին, Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի մահկանացու կյանքը հասավ իր վախճանին։ Եկեղեցու ղեկավարության պատասխանատվությունն այժմ Տասներկու Առաքյալների Քվորումի վրա էր դրված, 93–ամյա Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը որպես նրանց Նախագահ։

1970թ. հունվարի 23-ին Տասներկուսի Քվորումը հանդիպեց և պաշտոնապես հաստատեց Նախագահ Սմիթին իր կոչումում որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ։ Նախագահ Սմիթը ընտրեց Հարոլդ Բ. Լիին որպես Առաջին Խորհրդական և Ն. Էլդոն Թաններին որպես Երկրորդ Խորհրդական Ապա բոլոր երեք մարդիկ ի սպաս դրվեցին կատարելու իրենց նոր պարտականությունները։

Երեց Էզրա Թաֆթ Բենսոնը, որը ներկա էր այդ ժողովին, վերհիշում է. «Մենք միաբանության հրաշալի ոգի ունեինք մեր ժողովում և սիրո մեծ ապացույց, երբ եղբայրները գրկեցին միմյանց, նոր ղեկավարության ընտրվելուց և ի սպաս դրվելուց հետո»:[61]

Երեց Բոյդ Ք. Փաքերը կիսվել է իր անձնական վկայությամբ Նախագահ Սմիթի կոչման վերաբերյալ.

«Ես գրասենյակից դուրս էի գալիս ուրբաթ կեսօրին՝ մտածելով շաբաթավերջի համաժողովի հանձնարարության մասին: Ես սպասում էի, որ վերելակը ներքև իջներ հինգերորդ հարկից:

Երբ վերելակի դռները անձայն բացվեցին այնտեղ կանգնած էր Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը: Մի պահ զարմացա նրան տեսնելով, քանի որ նրա գրասենյակը ներքևի հարկում էր:

Երբ ես տեսա նրան դռան մուտքով շրջանակված, ինձ մի հզոր վկայություն տրվեց՝ ահա կանգնած է Աստծո մարգարեն: Հոգու այդ քաղցր ձայնը, որը լույսին է ազգակից, որը ինչ-որ բանով կապված է մաքուր բանականության հետ, հաստատեց ինձ, որ նա Աստծո մարգարեն է»:[62]

Նախագահ Սմիթի ղեկավարության ներքո Եկեղեցին շարունակեց աճել: Օրինակ՝ ստեղծվեցին 81 ցցեր, ներառյալ առաջին ցցերը Ասիայում և Աֆրիկայում, և Եկեղեցու անդամակցությունն անցավ 3 միլիոնից: Երկու տաճարներ նվիրագործվեցին՝ Օգդենում՝ Յուտա և Պրովոյում՝ Յուտա:

Նույնիսկ երբ Եկեղեցին աճում էր ողջ աշխարհում, Նախագահ Սմիթը շեշտում էր անհատապես տների և ընտանիքների կարևորությունը: Նա հիշեցնում էր Վերջին Օրերի Սրբերին, որ «Եկեղեցու կազմակերպությունը իսկապես գոյություն ունի օգնելու ընտանիքին և դրա անդամներին՝ հասնելու վեհացման»[63] Նա ուսուցանում էր. «Ընտանիքը ամենակարևոր կազմակերպությունն է ժամանակի թե հավերժության համար. . . Դա Տիրոջ կամքն է զորացնել և պահպանել ընտանեկան միավորը»:[64] Ջանալով ամրացնել ընտանիքներն ու անհատներին՝ Եկեղեցին ավելի մեծ շեշտ դրեց ընտանեկան երեկոների վրա, մի ծրագիր, որը խրախուսվել է 1909 թվականից սկսած, երբ Նախագահ Սմիթի հայրը Եկեղեցու Նախագահն էր: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ղեկավարության ներքո երկուշաբթին

պաշտոնապես նշանակվեց ընտանեկան երեկոյի համար: Այդ երեկո եկեղեցական ոչ մի ժողովներ չպետք է կազմակերպվեին և տեղի Եկեղեցու շենքերը փակ էին:

Չնայած իր ծեր հասակին, Նախագահ Սմիթը իր կոչմանը մոտենում էր մանկական համեստությամբ և երիտասարդական ավյունով: Որպես Եկեղեցու մարգարե, տեսանող և հայտնող նրա ծառայության երկու տարի և հինգ ամիսների ընթացքում, աշխարհով մեկ Վերջին Օրերի Սրբերը ոգեշնչված էին նրա ուղերձներով:

Նա հայտարարել է, որ «մենք Աստծո՝ մեր Երկնային Հոր հոգեղեն զավակներն ենք»[65] և որ «մենք պետք է հավատանք Քրիստոսին և կյանքում ընդօրինակենք Նրան»:[66] Նա վկայել է, որ Ջոզեֆ Սմիթը «տեսավ և փաստորեն կանգնեց Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ներկայությամբ»[67] և դարձավ «Քրիստոսի մասին գիտության հայտնողն ու աշխարհի փրկությունը այս օրերի և սերնդի համար»:[68]

Նա խրախուսում էր Սրբերին «թողնել աշխարհիկ ուղիներից շատերը»[69], բայց սիրել բոլոր մարդկանց աշխարհում՝ «տեսնել բարին մարդկանց մեջ, չնայած մենք փորձում ենք օգնել նրանց հաղթահարել մեկ կամ երկու վատ սովորույթ»:[70] Նա հիշեցնում էր նրանց, որ ուղիներից մեկը ցույց տալու, որ այս «սիրո և եղբայրության ոգին» ավետարանով կիսվելն է «բոլոր մարդկանց ամենուրեք հրավիրելը ուշադրություն դարձնել հավերժական կյանքի խոսքերին, որոնք հայտնի են դարձվել այս օրերի ընթացքում»:[71]

Նա օգնության էր հասնում Եկեղեցու երիտասարդներին, հանդիպելով երիտասարդ Վերջին Օրերի Սրբերի մեծ խմբերի հետ և նրանց խրախուսելով «կանգնել ամուր հավատքում չնայած ամեն ընդդիմության»:[72]

Նա հաճախ էր խոսում քահանայություն կրողների հետ, նրանց հիշեցնելով, որ իրենք «կանչվել են ներկայացնելու Տիրոջը և կրելու նրա իշխանությունը» և հորդորելով նրանց «հիշել, թե ովքեր են [իրենք] և գործել համապատասխանաբար»:[73]

Նա հորդորում էր բոլոր Վերջին Օրերի Սրբերին ստանալ տաճարային օրհնություններ, լինել հավատարիմ տաճարային ուխտերին, և վերադառնալ տաճար ստանալու սրբազան արարողություններ իրենց նախնիների համար: Յուտայի Օգդենի

Տաճարի նվիրագործումից առաջ նա ասել է. «Թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ երբ մենք նվիրագործում ենք Տիրոջ տունը, այն ինչ մենք իրականում անում ենք, մեզ ենք նվիրաբերում Տիրոջ ծառայությանը, մի ուխտով, որ մենք կօգտագործենք տունը մի ձևով, որ Նա է նախատեսել, որ օգտագործվի»:[74]

«Պահեք պատվիրանները», հորդորել է նա: «Քայլեք լույսով: Համբերեք մինչև վերջ: Հավատարիմ եղեք յուրաքանչյուր ուխտին և պարտականությանը և Տերը կօրհնի ձեզ ձեր լավագույն երազանքներից վեր»:[75]

Մեջբերելով Նախագահ Բրիգամ Յանգին, Նախագահ Հարոլդ Բ. Լին նկարագրել է Նախագահ Սմիթի ազդեցությունը և ղեկավարությունը. «Նախագահ Յանգն ասել է հետևյալը.. «Եթե մենք ապրում ենք մեր սուրբ կրոնով և թույլ տալիս, որ Հոգին իշխի, այն չի դառնում ձանձրալի կամ բթացած, այլ երբ մարմինը մոտենում է կազմալուծվելուն, Հոգին ավելի ուժեղ է ազդում այդ հարատև նյութի վրա վարագույրի ետևից, քաշելով կյանքի այդ հավերժական աղբյուրից բանականության փայլուն գոհարներ, որը պարուրում է դյուրաբեկ և ծերացող մեր տաղավարը անմահական իմաստության լուսապսակով»:

Սրան մենք ականատես ենք եղել կրկին և կրկին, երբ մենք զբաղված էինք քննարկելով շատ լուրջ հարցեր՝ որոշումներ, որոնք պետք է կայացվեն միայն Եկեղեցու Նախագահի կողմից: Այդ ժամանակ էր, որ մենք տեսնում էինք այդ փայլուն իմաստությունը լույս տալիս, երբ նա [Նախագահ Սմիթը] շարադրում էր անկասկածորեն իր սեփական ներկա հասկացողությունից վեր բաներ, որոնք նա վեր էր հանում իր հոգու խորքերից»:[76]

«Կանչված Տիրոջ կողմից. . . ուրիշ և ավելի մեծ գործերի»

1971թ. օգոստոսի 3-ին Ջեսսի Էվանս Սմիթը հեռացավ կյանքից, թողնելով Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթին այրիացած երրորդ անգամ: Արդյունքում Նախագահ Սմիթը գնաց ապրելու իր դստեր՝ Ամելիա Մակքոնկիի և նրա ամուսնու՝ Բրյուսի հետ: Նրա մյուս երեխաները կանոնավորապես հերթով այցելում էին նրան և տանում նրան ավտոմեքենայով շրջագայությունների: Նա շարունակում էր գնալ իր գրասենյակը շաբաթվա յուրաքանչյուր օրը, հաճախում ժողովների և ճանապարհորդում Եկեղեցու գործերով:

1972թ. հունիսի 30-ի օրվա վերջին մոտ Նախագահ Սմիթը թողեց իր գրասենյակը Եկեղեցու Վարչության շենքի առաջին հարկում: Իր քարտուղարի՝ Դ. Արթուր Հեյքոքի հետ միասին նա գնաց դեպի Եկեղեցու Պատմության գրասենյակը, որտեղ նա նախկինում աշխատել էր մինչև Եկեղեցու Նախագահ դառնալը: Նա կամենում էր ողջունել բոլոր նրանց, ովքեր ծառայում էին այնտեղ: Նրանց հետ ձեռք սեղմելուց հետո, նա գնաց շենքի առաջին հարկը սեղմելու հեռախոսավարների և մյուսների ձեռքը, ովքեր աշխատում էին այդ տարածքում՝ ցույց տալու իր շնորհակալությունը: Սա նրա վերջին օրն էր գրասենյակում:

Կիրակի օրը 1972 թ. հուլիսի 2-ին, ճիշտ 17 օր մինչև իր 96րդ ծննդյան օրը, նա հաճախեց հաղորդության ժողով իր տեղական ծխում: Այդ կեսօրին ավելի ուշ նա այցելեց իր առաջնեկ երեխային՝ Ջոզեֆինին, իր որդու՝ Ռեյնոլդսի հետ: Այդ երեկո իր սիրելի աթոռին նստած, նա խաղաղությամբ հեռացավ կյանքից: Ինչպես նրա փեսան հետագայում ասաց, Նախագահ Սմիթը «կանչվեց Տիրոջ կողմից, որին նա այդքան շատ էր սիրում և այնքան լավ ծառայում՝ ուրիշ և ավելի մեծ գործեր կատարելու Նրա հավերժական այգում»:[77]

Նախագահ Հարոլդ Բ. Լին, որն այժմ ավագ Առաքյալն էր երկրի վրա, այցելեց Մակքոնկիի տուն, երբ նա լսեց Նախագահ Սմիթի կյանքից հեռանալու մասին: Նա «լուռ քայլեց դեպի մահիճը և ծնկի իջնելով վերցրեց Նախագահի ձեռքը իր ձեռքերի մեջ: Նա մնաց այդ դիրքում որոշ ժամանակ, լուռ, աղոթքի կամ խորհրդածության մեջ: Ապա նա վեր կացավ արտահայտելու իր ցավակցությունները ընտանիքին, նրա հիացմունքը նրանց հոր հանդեպ և իր հորդորը նրանց, որ նրանք պատվեն Նախագահ Սմիթին արժանավոր ապրելով:[78]

Հարգանքի տուրք «Աստծուն նվիրված մարդուն»

Նախագահ Սմիթի թաղման արարողությունների ժամանակ Նախագահ Ն. Էլդոն Թանները նրան նկարագրեց որպես «Աստծուն նվիրված մարդու, մեկը, ով ծառայեց շատ ազնվորեն՝ ինչպես Աստծուն, այնպես էլ իր մերձավորներին, և առաջնորդեց օրինակով իր ընտանիքին և բոլորին, ում նա կանչվել էր նախագահելու, մեկը, որի մասին կարելի է ճշմարտացիորեն

ասել. նա նենգությունից և հպարտությունից զերծ մարդ էր: Նրա մասին երբեք չի կարող ասվել, նկատեց Նախագահ Թանները, որ նա «մարդկանց գովասանքն ավելի էր սիրում, քան Աստծո գովասանքը» [Հովհաննես ԺԲ.43]:[79]

Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է. «Եղբայր Թաններն ու ես սիրել ենք այս մարդուն այս վերջին երկու և կես տարիների ընթացքում: Դա չի եղել ձևական: Նա սեր առաջացրեց, որովհետև նա սիրում էր մեզ և մենք կանգնեցինք նրա կողքին, երբ նա կանգնեց մեր կողքին և վստահեց մեզ:[80]

Մի լրագիր, որը քննադատական էր եղել Նախագահ Սմիթի հանդեպ, նույնիսկ կասկածի տակ դնելով նրա կանչվելը Տասներկուսի Քվորում ավելի քան 60 տարի առաջ, այժմ հրատարակել էր հետևյալ հարգանքի տուրքը. «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը՝ մարդ, որը խիստ էր իր համոզմունքներին նվիրվածությամբ, բայց մեղմ մարդկանց կենսական կարիքների վերաբերյալ ամենուրեք, տվել է իմաստուն խորհուրդ իր մերձավորներին, սիրառատ հոգատարություն իր ընտանիքին և վեհ առաջնորդություն իր եկեղեցական պարտականություններում:[81]

Հավանաբար, ամենահիմաստալի տուրքը ընտանիքի անդամի՝ Նախագահ Սմիթի փեսայի, Բրյուս Ռ. Մակքոնկիի հայտարարությունն էր, որը նկարագրել է նրան որպես «Աստծո որդի, Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալ, Ամենաբարձրյալի մարգարե և ամենից վեր՝ հայր Իսրայելում»: Երեց Մակքոնկին մարգարեացել է. «Գալիք տարիների ընթացքում նրա ձայնը կխոսի փոշուց, երբ դեռ չծնված սերունդները ավետարանի վարդապետություններ կսովորեն նրա գրվածքներից»:[82]

Երբ դուք ուսումնասիրեք այս գիրքը, Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները կօգնեն այդ հայտարարության իրագործվելուն: Երբ դուք «ուսումնասիրեք ավետարանի վարդապետությունները, նրա ձայնը կխոսի փոշուց» ձեզ հետ:

Հղումներ

1. Gordon B. Hinckley, "Believe His Prophets," Ensign, May 1992, 52.
2. Thomas S. Monson, in "News of the Church," *Ensign,* May 1996, 110.
3. Bruce R. McConkie, "Joseph Fielding Smith: Apostle, Prophet, Father in Israel," *Ensign,* Aug. 1972, 29.
4. Ջուլինա Լամբսոն Սմիթ, Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ կրտսեր և Ջոն Ջ. Սթյուարտը,*Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքը* (1972), 52:
5. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ,*Ջոզեֆ Ֆիլ-դինգ Սմիթի կյանքը,* 65:
6. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ կրտսեր և Ջոն Ջ. Սթյուարտը,*Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքը* 51:
7. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 57.
8. In Conference Report, Apr. 1930, 91.
9. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 62.
10. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 71–72.
11. Joseph Fielding Smith, in Conference Report, Oct. 1970, 92.
12. Տես Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 73–74; Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 52–53.
13. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 75.
14. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 79.
15. Տես *The Life of Joseph Fielding Smith,* 80.
16. In *The Life of Joseph Fielding Smith,* 81.
17. Տես *The Life of Joseph Fielding Smith,* 82:
18. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 83.
19. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 90.
20. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 117; տես նաև page 116.
21. Joseph F. Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 116.
22. Lewis Shurtliff, in *The Life of Joseph Fielding Smith,* 112–13.
23. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 113.
24. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 96.
25. Louie Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 113–14.
26. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 92.
27. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 115.
28. Տես *The Life of Joseph Fielding Smith,* 91.
29. In Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 124.
30. Տես Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 152–53.
31. Տես *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 113.
32. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 160
33. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 162.
34. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 169.
35. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 174–76.
36. In Conference Report, Oct. 1921, 39.
37. In Conference Report, Oct. 1899, 2.
38. Lucile C. Tate, *Boyd K. Packer: A Watchman on the Tower* (1995), 176.
39. Joseph Fielding Smith, in *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 162.
40. Ethel Smith, in Bryant S. Hinckley, "Joseph Fielding Smith," *Improvement Era,* June 1932, 459.
41. See *The Life of Joseph Fielding Smith,* 14.
42. See *The Life of Joseph Fielding Smith,* 234.
43. See *The Life of Joseph Fielding Smith,* 15.
44. See *The Life of Joseph Fielding Smith,* 237.
45. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 188–89.

46. *Hymns,* no. 127.
47. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 242–43.
48. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 249.
49. Joseph Fielding Smith, in *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 275.
50. See *The Life of Joseph Fielding Smith,* 251–58.
51. Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 278–79.
52. Martha Toronto Anderson, *A Cherry Tree Behind the Iron Curtain* (1977), 32.
53. Sheri L. Dew, *Ezra Taft Benson: A Biography (1987), 204.*
54. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 282–83.
55. See *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 315.
56. Joseph Fielding Smith, in *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 332.
57. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 287–88.
58. N. Eldon Tanner, "A Man without Guile," *Ensign,* Aug. 1972, 33.
59. Bruce R. McConkie, "Joseph Fielding Smith: Apostle, Prophet, Father in Israel," *Ensign,* Aug. 1972, 28.
60. Quorum of the Twelve Apostles, "President Joseph Fielding Smith," *Improvement Era,* July 1956, 495.
61. Ezra Taft Benson, in Sheri L. Dew, *Ezra Taft Benson,* 411.
62. Boyd K. Packer, "The Spirit Beareth Record," *Ensign,* June 1971, 87.
63. Joseph Fielding Smith, in "Message from the First Presidency," *Ensign,* Jan. 1971, inside front cover and page 1.
64. Joseph Fielding Smith, "Counsel to the Saints and to the World," *Ensign,* July 1972, 27.
65. Joseph Fielding Smith, *Sealing Power and Salvation,* Brigham Young University Speeches of the Year (Jan. 12, 1971), 2.
66. Joseph Fielding Smith, "The Plan of Salvation," *Ensign,* Nov. 1971, 5.
67. Joseph Fielding Smith, "To Know for Ourselves," *Improvement Era,* Mar. 1970, 3.
68. Joseph Fielding Smith, "The First Prophet of the Last Dispensation," *Ensign,* Aug. 1971, 7.
69. Joseph Fielding Smith, "Our Responsibilities as Priesthood Holders," *Ensign,* June 1971, 49.
70. Joseph Fielding Smith, "My Dear Young Fellow Workers," *New Era,* Jan. 1971, 4.
71. Joseph Fielding Smith, "I Know That My Redeemer Liveth," *Ensign,* Dec. 1971, 27.
72. Joseph Fielding Smith, "President Joseph Fielding Smith Speaks on the New MIA Theme," *New Era,* Sept. 1971, 40.
73. Joseph Fielding Smith, in Conference Report, Oct. 1970, 92.
74. Joseph Fielding Smith, in "Ogden Temple Dedicatory Prayer," *Ensign,* Mar. 1972, 6.
75. Joseph Fielding Smith, "Counsel to the Saints and to the World," 27.
76. Հարոլդ Բ. Լի, «Նախագահ—Մարգարե, Տեսանող, և Հայտնող», *Ensign,* Օգոստոս 1972, 35:
77. Բրյուս Ռ. Մակքոնկի, «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ՝ Առաքյալ, Մարգարե, Հայր Իսրայելում» 24:
78. Ֆրենսիս Մ. Գիբբոնս, *Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ՝ Ավետարանի Գիտակ, Աստծո Մարգարե,* 495:
79. N. Eldon Tanner, "A Man without Guile," *Ensign,* Aug. 1972, 32.
80. Հարոլդ Բ. Լի, «Նախագահ—Մարգարե, Տեսանող, և Հայտնող, 39:
81. *Salt Lake Tribune,* July 4, 1972, 12.
82. Բրյուս Ռ. Մակքոնկի, «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը՝ Առաքյալ, Մարգարե, Հայր Իսրայելում», 24, 27:

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի միջոցով «Աստծո մասին ճշմարիտ գիտելիքը» վերականգնվել է։

Մեր Երկնային Հայրը

«Իմ ցանկությունն է հիշեցնել ձեզ այն էության և բնույթի մասին ինչպիսին Աստված է, որպեսզի դուք երկրպագեք Նրան հոգով և ճշմարտությամբ և դրա միջոցով հասնեք Նրա ավետարանի բոլոր օրհնություններին»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հիանում էր իր օրերի տեխնոլոգիական առաջխաղացումներով: «Մեծ առաջընթաց էր կատարվել մեքենաշինության, քիմիայի, ֆիզիկայի, վիրաբուժության և այլ բնագավառներում, – ասել է նա: – Մարդիկ սարքել են մեծ հեռադիտակներ, որոնք բացահայտում են աչքից թաքնված համաստեղությունները: Մանրադիտակի օգնությամբ հայտնաբերել մանրէների վիթխարի աշխարհներ. . . Հայտնաբերվել են միջոցներ հիվանդությունը վերահսկելու համար: . . . Հայտնագործվել են մեքենաներ, որոնք ավելի զգայուն են, ավելի հեռուն տեսնող, քան մարդկային աչքը: Մարդիկ վերահսկում են տարերքը և սարքում մեխանիզմներ, որոնք կարող են լեռներ շարժել և էլի շատ ուրիշ բաներ են անում, որոնք խիստ բազմաթիվ են նշելու համար: Այո, սա սքանչելի դարաշրջան է»: Սակայն նա մտահոգվում էր մեկ ուրիշ միտումի համար, որը նա տեսնում էր աշխարհում: Նա ողբում էր. «Բոլոր այս հայտնագործությունները և նորարարությունները մարդկանց չեն մոտեցրել Աստծուն: Ոչ էլ նրանց սրտերում համեստության և ապաշխարության ոգի են ստեղծել, այլ ընդհակառակը, դատապարտում են դարձել իրենց համար. . . Հավատքը չի աճել աշխարհում, ոչ էլ արդարակեցությունը, ոչ էլ հնազանդությունն առ Աստված»:[1]

Ի տարբերություն աշխարհի աճող անտարբերությանն առ Աստված, Նախագահ Սմիթը դրսևորում էր մտերմություն իր Երկնային Հոր հանդեպ: Նրա թոռներից մեկը հիշում է. «Մայրս

գերազանց խոհարար էր և պապիկս հաճախ էր ճաշում մեր տանը: Շատ հաճախ հայրս նրան հրավիրում էր ասել ուտելիքի օրհնության աղոթքը: Նրա աղոթքները միշտ շատ անձնական էին՝ կարծես թե նա խոսում էր ընկերոջ հետ»:[2]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքից սկսած, Աստծո մասին ճշմարիտ գիտելիքը վերականգվել է մեր օրերում:

Ես շատ երախտապարտ եմ առաջին տեսիլքի համար, որի ժամանակ Հայրն ու Որդին հայտնվեցին պատանի մարգարեին և կրկին վերականգնեցին մարդու համար՝ ճշմարիտ գիտելիքը Աստծո մասին:[3]

Հարկ է հիշել, որ ողջ Քրիստոնյա աշխարհը 1820 թվականին կորցրել էր Աստծո վերաբերյալ ճշմարիտ վարդապետությունը: Պարզ ճշմարտությունը, որն այնպես հստակորեն հասկացվել էր առաքյալների և սրբերի կողմից հնում, կորել էր ուրացած աշխարհի խորհուրդների մեջ: Բոլոր հնադարյան մարգարեները և Հիսուս Քրիստոսի առաքյալները հստակ ըմբռնում էին, որ Հայրն ու Որդին առանձին անձնավորություններ էին, ինչպես մեր սուրբ գրություններն են հստակորեն ուսուցանում: Այս գիտելիքը ուրացության հետևանքով կորավ. . . Աստված դարձավ մի առեղծված և ինչպես Հայրն, այնպես էլ Որդին, համարվեցին անըմբռնելի մեկ ոգեղեն անձնավորություն, առանց մարմնի կամ մարմնի մասերի կամ էլ զգացմունքների: Հոր և Որդու գալը երկրի վրա մի ականատես թողեց, որը կարողացավ գիտելիքով վերականգնել Աստծո ճշմարիտ էությունն աշխարհի համար:[4]

Ջոզեֆ Սմիթի [առաջին] տեսիլքը հստակեցրին, որ Հայրն ու Որդին առանձին անձնավորություններ են, ունենալով մարմին՝ այնպես շոշափելի, ինչպես մարդունը: Հետագայում նրան հայտնի դարձվեց, որ Սուրբ Հոգին ոգեղեն անձնավորություն է, որոշակի և առանձին Հոր և Որդու անձնավորություններից [տես ՎևՈ 130.22]: Այս ամենակարևոր ճշմարտությունը ցնցեց աշխարհը, սակայն, երբ մենք մտածում ենք սուրբ գրության հստակ արտահայտությունների մասին, ամենաապշեցուցիչ և զարմանալի փաստն այն է, թե որքան հեռու կարող է շեղվել

մարդը։ Փրկիչն ասաց. «Իմ Հայրը մեծ է ինձանից» [Հովհաննես ԺԴ.28], և նա հրավիրեց իր աշակերտներին, Իր հարությունից հետո, շոշափել Իրեն և տեսնել, որ Ինքն էր, քանի որ Նա ասաց. «ոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ» [Ղուկաս ԻԴ.39]։ Առաքյալները հստակորեն հասկանում էին Հոր, Որդու և Սուրբ Հոգու առանձին անձնավորություններ լինելը, որին նրանք անընդհատ անդրադառնում էին իրենց թղթերում և Պողոսը տեղեկացրեց Կորնթացիներին այն փաստի մասին, որ երբ բոլոր բաները հնազանդվեն Հորը «այն ժամանակ ինքը Որդին էլ կհնազանդի նորան, որ ամենը հնազանդեցրեց նորան, որ Աստուած լինի ամենը ամենում» [Ա Կորնթացիս ԺԵ.28]։

Ջոզեֆ Սմիթը տեսավ Հորը և Որդուն, այդ պատճառով նա կարողացավ վկայել անձնական գիտելիքով, որ սուրբ գրությունները ճշմարիտ էին, որտեղ մենք կարդում ենք. «Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց նորան. արու եւ էգ ստեղծեց նորանց» [Ծննդոց Ա.27]։ Սա պետք է հասկանալ տառացիորեն, և ոչ թե ինչ-որ խորհրդավոր կամ փոխաբերական իմաստով։[5]

2

Առ Աստված հավատք գործադրելու և Նրան երկրպագելու համար, մենք պետք է հասկացողություն ունենանք Նրա բնորոշ հատկանիշների մասին։

Մեր հայտնություններից մեկն ասում է, որ եթե մենք պետք է փառավորվենք Քրիստոսում, ինչպես Նա է՝ Հորում, մենք պետք է հասկանանք և գիտենանք, թե ինչպես երկրպագենք և ինչ երկրպագենք (Տես ՎևՈւ 93.19–20)։

Իմ ցանկությունն է հիշեցնել ձեզ Աստծո էությունը և թե ինչպիսի էակ է Նա, որպեսզի դուք կարողանաք երկրպագել Նրան հոգով և ճշմարտությամբ և այդպիսով ձեռք բերեք Նրա ավետարանի բոլոր օրհնությունները։

Մենք գիտենք, որ Աստված ճանաչվում է միայն հայտնությամբ, որ մենք կարող ենք ճանաչել Նրան միայն մեզ տրված հայտնություններով կամ մնալ հավիտյան անհայտ։ Մենք պետք է դիմենք սուրբ գրություններին, ոչ թե գիտնականներին կամ փիլիսոփաներին, եթե մենք պետք է սովորենք

ճշմարտությունը Աստվածության վերաբերյալ: Իսկապես Հովհաննեսի մեծ մարգարեությունը ավետարանի վերականգման մասին մի հրեշտակի կողմից, որը պետք է թռչի երկնքի մեջ, ասում է, որ դա պետք է տեղի ունենար, որպեսզի մարդիկ կարողանային գալ ճշմարիտ Աստծո գիտությանը և ուսուցանվեին.« Վախեցէք Աստուածանից, եւ փառք տուէք նորան. . . եւ երկրպագեցէք երկինքը եւ երկիրը եւ ծովը եւ ջրերի աղբիւրները Ստեղծողին» (Հայտ. ԺԴ.7: Այլ խոսքով, ավետարանի վերականգնումից սկսած այս ժամանակաշրջանում մարդկանց կրկին կոչ կարվի երկրպագել և ծառայել իրենց Ստեղծողին և ոչ թե Աստվածության վերաբերյալ կեղծ տեսակետների, որոնք գերակշռում են աշխարհում:

Ամեն դարում Տիրոջ մարգարեները կանչվել են պայքարելու կեղծ պաշտամունքի դեմ և հռչակելու ճշմարտությունը Աստծո մասին: Հնադարյան Իսրայելում կային այնպիսիք, ովքեր պաշտում էին պատկերներ և հեթանոսական աստվածներ և Եսայիան հարցնում է. «Ուրեմն ո՞ւմ էք նմանեցնում Աստծուն, եւ ի՞նչ նմանութիւն՝ հաւասարեցնում նորան:

Մի՞թե չգիտես, կամ չե՞ս լսել, որ յավիտենական Աստուած է Եհովան երկրի ծայրերի ստեղծողը. նա չի յոգնիլ, եւ չի վաստակիլ. նորա հանճարը անքննելի է» (Եսայիա Խ.18, 28):

Աշխարհի մեծ մասն այսօր չունի Աստծո մասին այս գիտելիքը, և նույնիսկ [Եկեղեցում] կան այնպիսիք, ովքեր չեն կատարելագործել իրենց հասկացողությունը այդ փառահեղ էակի մասին, որը մեր Հավերժական Հայրն է: Նրանց, ովքեր առանց այս գիտելիքի են, մենք կարող ենք ասել. «Ինչո՞ւ եք սահմանափակում Աստծո փառքը: Կամ ինչո՞ւ եք ենթադրում, որ Նա ավելի փոքր է, քան կա: Չե՞ք ճանաչել: Չե՞ք լսել, որ հավիտենական Աստվածը՝ Տերը՝ Արարիչը երկրի ծայրերի, անսահման է և հավերժական, որ նա ունի ողջ ուժը, ողջ զորությունը, ողջ գերիշխանությունը, որ նա գիտի բոլոր բաները, և որ բոլոր բաները ներկա են նրա երեսի առաջին»:

Վարդապետություն և Ուխտերի 20–րդ բաժնում, որը կարգադրում էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին կրկին կազմակերպել Եկեղեցին այս տնտեսությունում, մենք փրկության հիմնական որոշ վարդապետությունների հայտնի դարձված շարադրանք ունենք: Ինչ վերաբերում է Աստվածությանը՝ հայտնությունն

ասում է. «. . . երկնքում կա Աստված, որն անսահման է և հավերժական, հավիտենականությունից հավիտենականություն, նույն անփոփոխ Աստվածը, ձևավորողը երկնքի և երկրի և բոլոր բաների, որոնք դրանց մեջ են» (ՎԵՈՒ 20.17): . . .

Աստված մեր Հայրն է, Նա է այն էակը, որի պատկերով ստեղծվել է մարդը: Նա ունի մսից և ոսկորից մարմին այնպես շոշափելի ինչպես մարդունը (ՎԵՈՒ 130.22), և Նա է բոլոր մարդկանց հոգիների տառացի և անձնական Հայրը: Նա ամենազոր է և ամենագետ, Նա ունի ողջ ուժն ու ողջ իմաստությունը և Նրա կատարելությունները բաղկացած են ողջ գիտությունը տիրապետելուց, ողջ հավատքը կամ ուժը, ողջ արդարադատությունը, ողջ դատաստանը, ողջ ողորմածությունը, ողջ ճշմարտությունը և բոլոր աստվածային հատկանիշների լրիվությունը. . . Եթե մենք պետք է ունենանք այն կատարյալ հավատքը, որով մենք կարող ենք ձեռք բերել հավերժական կյանք, մենք պետք է հավատանք Աստծուն որպես այս բոլոր հատկանիշների տեր: Ես ասում եմ նաև, որ Նա անսահման և հավերժական էակ է, և որպես անփոփոխ էակ, նա ունի այս կատարելացված զորությունները և հատկանիշները հավիտենականությունից հավիտենականություն, որը նշանակում է հավերժությունից հավերժություն:[6]

Մենք գիտենք, որ մեր Երկնային Հայրը փառավորված, վեհացած անձնավորություն է, ով ունի ողջ ուժը, ողջ զորությունը և ողջ գերիշխանությունը, և որ Նա գիտի բոլոր բաները: Մենք վկայում ենք, որ Նա, Իր Միածին Որդու միջոցով, այս երկրի և անթիվ աշխարհների Արարիչն է:[7]

3

Աստված անձնական էակ է և մեր հոգիների Հայրը:

Մենք Աստծո՝ մեր Երնային Հոր հոգեղեն զավակներն ենք. . . Մենք Նրա ընտանիքի անդամներն ենք. . . Մենք երկար դարեր ապրել ենք Նրա հետ մեր նախամահկանացու կյանքում. . . Նա կարգել է առաջընթացի և փրկության ծրագիր, որը մեզ համար հնարավոր կդարձնի, եթե հավատարիմ և ճշմարիտ մնանք բոլոր բաներում, զարգանանք և առաջադիմենք, մինչև որ նմանվենք Իրեն:[8]

Մենք ուսուցանվել ենք Սուրբ գրություններում, որ Աստված տառացիորեն և ոչ թե փոխաբերական իմաստով, մեր իսկ

հավերժական Հայրն է: Մեր Քավիչի խոսքերը, որոնք ասվել են Մարիամին գերեզմանի մոտ, որից Նա բարձրացել էր և հաղթանակ ձեռք բերել մահվան վրա, շատ վեհ են և լցված փառահեղ իմաստով. «Մի դպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ վեր ելլել իմ Հօր մօտ. Բայց դու գնա իմ եղբայրների մօտ եւ նորանց ասիր. Ես վեր եմ ելնում իմ Հօր մոտ եւ ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ եւ ձեր Աստուծոյ մօտ» [Հովհաննես Ի.17]: Այս խոսքերում Աստծո Հայրության ճշմարտությունը արտահայտիչ ձևով արտասանվեցին Նրա միակ Միածին Որդու կողմից, որը հայտարարեց, որ Նա մեր Եղբայրն է և որ մենք ունենք նույն հավերժական Հայրը:[9]

Ես երախտապարտ եմ, որ Աստծո գիտելիքը և Նրա օրենքները վերականգվել են մեր օրերում և որ մենք, ովքեր Եկեղեցու անդամներ ենք, գիտենք, որ Նա անհատական էակ է և ոչ թե ինչպես որոշ աղանդավորներ են ասում «[անկարգ հավաքված] օրենքների զանգված, որը մառախուղի նման լողում է տիեզերքում: Ես երախտապարտ եմ, որ մենք գիտենք, որ նա մեր երկնային Հայրն է՝ մեր հոգիների Հայրը, և որ նա կարգել է օրենքներ, որոնց շնորհիվ կարող ենք զարգանալ և առաջադիմել մինչև որ նմանվենք նրան: Եվ ես երախտապարտ եմ, որ մենք գիտենք, որ նա անսահման և հավերժական էակ է, որը գիտի բոլոր բաները և ունի ողջ զորությունը և նրա առաջընթացը նրանում չէ, որ ձեռք բերի ավելի շատ գիտություն կամ զորություն, կամ որ Իր աստվածային հատկանիշները կատարելագործի, այլ նրանում, որ իր արքայությունը աճեցնի ու բազմացնի:[10]

4

Երկնային Հայրը սիրում է մեզ և հետաքրքրվում է մեզանիից յուրաքանչյուրով:

Միտքս է գալիս մի արտահայտություն Թանկագին Մարգարիտից Մովսեսի տեսիլքում, որը տրվեց այն ժամանակ, երբ Մովսեսը տարվեց չափազանց բարձր մի սար և տեսավ Աստծուն դեմ առ դեմ և խոսեց Նրա հետ: Տերը ցույց տվեց Մովսեսին «իր ձեռքերի ստեղծագործությունը» և Մովսեսը տեսավ աշխարհը և բոլոր մարդկանց զավակներին մինչև ամենավերջին սերունդները [տես Մովսես 1.1–8, 27–29]:

Եվ Տերն ասաց Մովսեսին.

Այստեղ Մովսեսը պատկերված է խոստացված երկրին նայելիս, որի ժամանակ նա տեսավ տեսլիքը, որից իմացավ Աստծո գործն ու փառքը :

«Քանզի ահա, բազում աշխարհներ կան, որ անցել են իմ զորության խոսքով: Եվ շատերը կան, որոնք այժմ կանգուն են, և դրանք անհաշվելի են մարդու համար. Բայց ինձ համար բոլոր բաները հաշվելի են, քանզի դրանք իմն են, և ես գիտեմ դրանց:

Եվ եղավ այնպես, որ Մովսեսը խոսեց Տիրոջ հետ՝ ասելով. Ողորմած եղիր քո ծառայի հանդեպ, ով Աստված, և ասա ինձ այս երկրի և նրա բնակիչների և նաև երկինքների վերաբերյալ, և քո ծառան կգոհանա:

Եվ Տեր Աստված խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. Երկինքները շատ են, և դրանք անհաշվելի են մարդու համար, բայց ինձ համար դրանք հաշվելի են, քանզի դրանք իմն են» [Մովսես 1.35–37]:

. . . Միտք է ծագում, որ չնայած անհամար աշխարհներին և դրանցից շատերի հսկայական չափսերին, դրանք միջոցներ են՝ նպատակի համար և ոչ թե ինքնին նպատակ: Հայրը ստեղծում է աշխարհներ դրանք մարդկանցով բնակեցնելու համար՝ դնելով դրանց վրա Իր որդիներին և Իր դուստրերին: Մեզ տեղեկացվում է Վարդապետություն և Ուխտերի 76 բաժնում, որ Աստծո Որդով և Նրա միջոցով է. «որ աշխարհները կան և ստեղծվել են, և դրանց բնակիչները ծնված որդիներն ու դուստրերն են Աստծո» (ՎևՈւ 76.24):

Մենք սովորում ենք այս սուրբ գրություններից, որոնցից ես կարդացի և Տիրոջից ստացած այլ հայտնություններից, որ մարդը մեր Հոր բոլոր ստեղծագործություններից ամենակարևորն է: Մովսեսին տրված նույն տեսիլքում Հայրն ասաց. «Եվ ինչպես մի երկիրը և նրա երկինքները կանցնեն, ճիշտ այդպես կգա մեկ ուրիշը. Եւ չկա վերջ իմ գործերին, ոչ էլ իմ խոսքերին: Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» [Մովսես 1.38–39]:

Սրանից և մյուս սուրբ գրությունից, ես ասում եմ, մենք սովորում ենք, որ Հոր մեծ աշխատանքը պետք է իրականացնի Նրա զավակների փրկությունը՝ տալով յուրաքանչյուրին այն վարձքը, որին յուրաքանչյուրն արժանի է՝ համաձայն իր գործերի: Ես միանգամայն համոզված եմ զգում, որ մեր Երկնային Հայրը շատ ավելի է հետաքրքրված Իր զավակներից մեկի հոգով, քան դա հնարավոր է որևէ երկրային հոր համար հետաքրքրված լինել իր զավակներից մեկով: Նրա սերը մեր հանդեպ շատ ավելի մեծ է, քան կարող է լինել երկրային ծնողի սերը իր զավակի հանդեպ:[11]

5

Երկնային Հայրն արտասվում է Իր անհնազանդ զավակների համար:

Մեզ տեղեկացվում է, որ երբ Տերը խոսեց Ենովքի հետ և ցույց տվեց նրան երկրի ազգերը և բացատրեց նրան, թե ինչպիսի պատիժ է տրվում նրանց իր պատվիրաններն օրինազանցելու համար, որ Տերը արտասվեց և ցույց տվեց Իր վիշտը՝ արտասվելով

նրանց անհնազանդության համար։ Այդ պատճառով Ենովքը զարմացավ և մտածեց, որ տարօրինակ է, որ Տերն արտասվում է։

Ահա հատվածը.

«Եվ եղավ այնպես, որ երկնքի Աստվածը նայեց մնացած մարդկանց վրա, և լաց եղավ. Եվ Ենովքը վկայեց այդ մասին՝ ասելով. Ինչպե՞ս է, երկինքները լաց են լինում, և իրենց արցունքներն անձրևի պես թափում են սարերի վրա։

Եվ Ենովքն ասաց Տիրոջը. Ինչպե՞ս է, որ դու լաց ես լինում, տեսնելով, որ դու սուրբ ես և ողջ հավերժությունից ողջ հավերժություն ես։

Եվ եթե հնարավոր լիներ, որ մարդը կարողանար հաշվել երկրի մասնիկները, այո, սրա նման միլիոնավոր երկրները, դա չէր լինի քո արարչագործությունների թվի սկիզբը. Եւ քո վարագույրները դեռ տարածված են. Եւ դու, այնուամենայնիվ, այնտեղ ես և այնտեղ քո ծոցն է. Եւ նաև դու արդար ես. դու հավիտյան ողորմած ես և բարի» [տես Մովսես 7.28–30]։

Եվ Տերը պատասխանեց. «. . . Նայիր քո այս եղբայրներին. Նրանք իմ իսկ ձեռքերի ստեղծագործությունն են, և ես նրանց տվեցի իրենց գիտելիքը, այն օրը, երբ ես ստեղծեցի նրանց. Եվ Եդեմի պարտեզում ես մարդուն տվեցի իր կամքի ազատությունը,

Եվ քո եղբայրներին ես ասել եմ, և նաև տվել պատվիրաններ, որ նրանք պետք է սիրեն միմյանց, և որ նրանք պետք է ընտրեն ինձ, իրենց Հորը. Բայց ահա, նրանք անգութ են, և նրանք ատում են իրենց իսկ արյունակցին» [Մովսես 7.32–33]։

Սրանք են պատճառները, թե ինչու էր Տերն արտասվում և ինչու էր երկինքն արտասվում։

Մի անգամ մի եղբայր ինձ հարցրեց, թե արդյոք մարդ կարող է կատարելապես երջանիկ լինել սելեստիալ արքայությունում, եթե իր երեխաներից մեկին չթույլատրվի մտնել այնտեղ։ Ես ասացի նրան, որ ես ենթադրում էի, որ որևէ մարդ, որն այնքան դժբախտ է, որ նրա երեխաներից մեկին արգելվում է սելեստիալ արքայությունը, իհարկե կունենա վշտի զգացումներ, այդ վիճակի պատճառով և դա հենց այն վիճակն է, որում գտնվում է մեր Հայրը, որ երկնքում է։ Նրա ոչ բոլոր երեխաներն են, որ արժանի են սելեստիալ փառքին և շատերը ստիպված են տանել

Նրա ցասումը իրենց օրինազանցությունների պատճառով և այն ստիպում է Հորը և ողջ երկինքներին վշտանալ և արտասվել: Տերն աշխատում է համաձայն բնական օրենքի: Մարդը պետք է փրկագնվի համաձայն օրենքի և նրա վարձքը պետք է հիմված լինի արդարադատության օրենքի վրա: Այդ պատճառով Տերը չի տա մարդկանց այն, ինչին նրանք արժանի չեն, այլ կպարգևատրի բոլոր մարդկանց համաձայն իրենց գործերի:

. . . Ես գոհ եմ, որ մեր Հայրը երկնքում կկամենար, եթե հնարավոր լիներ, փրկել բոլոր մարդկանց և տալ նրանց սելեստիալ փառք, նույնիսկ վեհացման լրիվություն: Բայց նա տվել է մարդուն իր կամքի ազատությունը և մարդը անհրաժեշտության տակ է հնազանդվելու ճշմարտությանը համաձայն նրա, ինչ հայտնի է դարձվել որպեսզի ձեռք բերեն արդարների վեհացումը:[12]

6

Երկնային Հայրն ուզի է նախապատրաստել փրկագնման համար, որպեսզի մենք կարողանանք ետ բերվել Նրա ներկայությունը:

Երբ Ադամը Եդեմական Պարտեզում էր, նա Աստծո՝ մեր Հոր ներկայության մեջ էր. . . Եդեմական պարտեզից դուրս քշվելուց հետո տեսարանը փոխվեց: Ադամը վտարվեց իր օրինազանցության պատճառով Հոր ներկայությունից: Սուրբ գրություններն ասում են, նա հոգեպես մահացավ, այսինքն, նա մեկուսացվեց Աստծո ներկայությունից:[13]

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, և որ նա ստացավ իր Հորից ուժ՝ ազատելու մարդկանց հոգևոր և ֆիզիկական մահից, որն աշխարհ բերվեց Ադամի անկման միջոցով:[14]

Կար փրկագնման միայն մեկ ուղի, մի ուղի, որով կարող էր փրկագնում կատարվել և մարմինը վերականգվեր կրկին հոգու հետ, որն անսահման քավության միջոցով էր և դա պետք է արվեր անսահման էակի կողմից, մեկը որ ենթակա չէր մահվան, բայց և այնպես մեկը, ով ուներ զորություն մեռնելու և ով նաև զորություն ուներ մահվան վրա: Եվ այսպես՝ մեր Հայրը, որ երկնքում է, Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին ուղարկեց մեզ աշխարհ՝ Իր իսկ մեջ կյանք ունենալով: Եվ քանի որ Նա [Հիսուս Քրիստոսը] մայր ուներ, ով արյուն ուներ իր երակներում, նա զորություն ուներ մեռնելու: Նա կարող էր հանձնել իր մարմինը

մահվան և հետո կրկին վերցնել։ Թույլ տվեք կարդալ նրա իսկ խոսքերը. «Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպեսզի դարձեալ առնեմ նորան։

Ոչ ով նորան վեր չէ առնում ինձանից. Այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան. Ես իշխանութիւն ունիմ նորան դնելու եւ իշխանութիւն ունիմ նորան դարձեալ առնելու. Այս պատուէրն առայ իմ Հորիցը» (Հովհաննես Ժ.17–18)։[15]

Երբեք մեր Երկնային Հոր մտադրությունը չի եղել թողնել մարդկանց խարխափելով և շոշափելով գտնել իրենց ուղին խավարում և առանց որևէ լույսի նրանց առաջնորդելու համար և սպասել նրանցից, որ այդ պայմաններում գտնեն իրենց ուղին ետ՝ դեպի Իր արքայություն և դեպի Իր սուրբ ներկայություն։ Դա Տիրոջ ուղին չէ։ Բոլոր դարերի ընթացքում սկզբից ի վեր մեր Հայրը երկնքում ցույց է տվել իր բարությունը իր երեխաների հանդեպ և կամեցել է նրանց ուղղություն ցույց տալ։ Ամենավաղ ժամանակներից երկինքները բաց են եղել, Տերը սուրհանդակներ է ուղարկել իր ներկայությունից աստվածայնորեն նշանակված ծառաների, մարդկանց, ովքեր կրել են քահանայություն, ովքեր ուղարկվել են ուսուցանելու Ավետարանի սկզբունքները, նախազգուշացնելու մարդկանց և ուսուցանելու նրանց արդարակեցություն և այդ մարդիկ ստացել են այս գիտելիքը, այս ոգեշնչումը և առաջնորդությունը Աստծո ներկայությունից ուղարկված այս սուրհանդակներից։ Սա ճշմարիտ է մեր իսկ տնտեսության համար։ Կարիք չկա, որ մարդիկ փակեն իրենց աչքերը և զգան որ լույս չկա և իրենք կարող են միայն վստահել իրենց դատողությանը, քանի որ Տերը միշտ կամեցել է առաջնորդել և ուղղորդել և ցույց տալ ուղին։ Նա ուղարկել է, ինչպես ասացի, սուրհանդակներ Իր ներկայությունից։ Նա հայտնություն է ուղարկել։ Նա պատվիրել է, որ Իր խոսքը գրվի, որ այն հրատարակվի, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան իմանալ այն։[16]

Ես ասում եմ ձեզ և ողջ Եկեղեցուն և այդ հարցով ողջ աշխարհին, որ գթառատ և սիրառատ Հայրը այս վերջին օրերին խոսել է կրկին երկնքից իր ծառաների՝ մարգարեների հետ։

Նրա ձայնը եղել է բոլոր մարդկանց հրավիրող՝ գալու դեպի Իր Սիրելի Որդին, սովորելու Նրանից, ճաշակելու Նրա բարությունից, վերցնելու Նրա լուծը իրենց վրա և գործելու իրենց փրկությունը Նրա ավետարանի օրենքներին հնազանդվելով։[17]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ինչ եք կարծում, ի՞նչն է մարդուն առաջնորդում Աստծուն աղոթելու համար կարողանալ «խոսել ինչպես ընկերոջ հետ» (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։ Մտածեք ուղիներ որոնցով կարող եք ամրացնել ձեր հարաբերությունը ձեր Երկնային Հոր հետ։
- Նախագահ Սմիթն արտահայտել է իր երախտագիտությունը Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի համար, որը վերականգնեց «Աստծո մասին ճշմարիտ գիտելիքը» (բաժին 1)։ Որո՞նք են որոշ ճշմարտությունները, որոնք գիտեք Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի մասին Առաջին Տեսիլքի շնորհիվ։
- 2–րդ բաժնում Նախագահ Սմիթի կողմից նշված Աստծո բնորոշ հատկանիշներից որո՞նք են ամենահմաստալիցը ձեզ համար։ Ինչո՞ւ։ Երբ հավատք եք գործադրում ձեր Երկնային Հոր հանդեպ, ինչպե՞ս է այն օգնում ձեզ իմանալ Նրա բնորոշ հատկանիշները։
- Նախագահ Սմիթը վկայել է. «Մենք Աստծո՝ մեր Երկնային Հոր հոգեղեն զավակներն ենք. . . Մենք Նրա ընտանիքի անդամներն ենք (բաժին 3)։ Ինչպե՞ս է այս ճշմարտությունն ազդել ձեզ վրա։
- 4–րդ և 5–րդ բաժիններում ո՞ր արտահայտություններն են օգնում ձեզ զգալ Երկնային Հոր սերը ձեր հանդեպ։ Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Աստված սիրում է մեզ և անձնապես հետաքրքրվում է մեզանով։ Ինչպե՞ս կարող ենք օգնել ընտանիքի անդամներին և ընկերներին զգալ Նրա սերը։
- Մտածեք այն մասին, թե ինչ է Երկնային Հայրն արել օգնելու ձեզ վերադառնալ Իր ներկայությունը (տես բաժին 6)։ Ինչպիսի՞ն են ձեր զգացումները, երբ դուք մտածում եք Երկնային Հոր մասին, ով ուղարկեց Իր Սիրելի Որդուն։ Ի՞նչ ուղիներով է Երկնային Հայրն ուղարկել «լույս [ձեզ] առաջնորդելու համար»։

Առնչվող սուրբ գրություններ

Հովհաննես Գ.16, ԺԷ.3, 1 Նեփի 11.17, Ալմա 30.44

Օգնություն ուսուցչին

«Ուսուցման մի մասը, որը կատարվում է Եկեղեցում, արվում է կարծր տեսքով՝ դա բանախոսությունն է: Դասարանային միջավայրում մենք այնքան էլ լավ չենք արձագանքում բանախոսություններին: Հաղորդության ժողովներին և համաժողովներին մենք լավ ենք արձանքում բանախոսությանը, բայց ուսուցումը կարող է լինել երկկողմանի, այնպես որ կարող եք հարցեր տալ: Դուք կարող եք հեշտորեն հարցեր խրախուսել դասարանում» (Boyd K. Packer, "Principles of Teaching and Learning," *Ensign,* June 2007, 87):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1943, 15–16:
2. Unpublished manuscript by Hoyt W. Brewster Jr.
3. In Conference Report, Apr. 1930, 90.
4. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 3: 117.
5. "Origin of the First Vision," *Improvement Era,* Apr. 1920, 496–97; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 2–3.
6. "The Most Important Knowledge," *Ensign,* May 1971, 2–3.
7. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 2.
8. *Sealing Power and Salvation,* Brigham Young University Speeches of the Year (Jan. 12, 1971), 2.
9. "Purpose and Value of Mortal Probation," *Deseret News,* Church section, June 12, 1949, 21; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 1.
10. "The Most Important Knowledge," 3.
11. In Conference Report, Apr. 1923, 135–36. Նկատեք, որ Մովսեսի տեսիլքը, որ նկարագրված է Մովսես 1 գլխում, նրա օրինակն է, թե ինչպես է Փրկիչը աստվածային լիազորությամբ խոսում Հոր խոսքերը (տես "The Father and the Son: A Doctrinal Exposition by the First Presidency and the Twelve," *Improvement Era,* Aug. 1916, 939; reprinted in *Ensign,* Apr. 2002, 17). Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կողմից այս գլխում մեջվերված սուրբ գրությունները և դրանց մեկնաբանությունը ցույց են տալիս, որ Մովսես 1 գլխի խոսքերը ներկայացնում են Հայր Աստծո միտքը և կամքը:
12. In Conference Report, Apr. 1923, 136–37, 139. Տես նաև note 11 in this chapter, which applies also to Enoch's vision recorded in Moses 7.
13. In Conference Report, Oct. 1953, 58.
14. "A Witness and a Blessing," *Ensign,* June 1971, 109.
15. In Conference Report, Apr. 1967, 122.
16. In Conference Report, Oct. 1931, 15
17. "A Witness and a Blessing," 109.

«Բոլոր բաներդը կենդանացած են Տեր Հիսուս Քրիստոսի՝ աշխարհի Քավչի մեջ և շուրջը»:

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը

«Թող ձեր մտքերի ամենակարևոր բան սա լինի՝ այժմ և բոլոր ժամանակներում, որ Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստծո Որդին, ով եկավ աշխարհ՝ վայր դնելու Իր կյանքը, որ մենք կարողանանք ապրել: Սա է ճշմարտությունը և դա սկզբունքային է: Դրա վրա է կառուցված մեր հավատքը»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Որպես Առաքյալ՝ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հավատարիմ էր իր կոչմանը լինելու «Քրիստոսի անվան հատուկ վկա ողջ աշխարհում» (ՎևՈՒ 107.23): Նա ասել է. «Ես փորձում եմ սիրել Նրան՝ մեր Քավչին, ամեն բանից վեր: Դա իմ պարտականությունն է: Ես ճանապարհորդում եմ վեր ու վար այս երկրում որպես Նրա հատուկ վկաներից մեկը: Ես չէի կարող լինել Հիսուս Քրիստոսի հատուկ վկա, եթե չունենայի բացարձակ և դրական գիտելիք, որ Նա է Աստծո Որդին և Քավիչն աշխարհի:[1]

Որպես հայր՝ Նախագահ Սմիթը ճիշտ նույնչափ նվիրված էր իր պարտականությանը վկայելու Փրկչի մասին: 1948թ. հուլիսի 18-ին, նա նամակ ուղարկեց իր որդիներին՝ Դուգլասին ու Միլթոնին, ովքեր ծառայում էին որպես լիաժամկետ միսիոներներ: Նա գրել է.

Ես, երբեմն, նստում եմ ու խորհում, և սուրբ գրությունների իմ ընթերցանության ժամանակ, ես մտածում եմ Տիրոջ առաքելության մասին, թե Նա ինչ է արել *ինձ* համար, և երբ այդ զգացումները գալիս են ինձ վրա, ես ասում եմ ինքս ինձ, ես չեմ կարող անհավատարիմ լինել Նրան: Նա սիրել է ինձ կատարյալ սիրով, ինչպես որ սիրել է բոլոր մարդկանց, հատկապես նրանց, ովքեր ծառայում են Իրեն, և ես *պետք է* սիրեմ Նրան

ամբողջ սիրով, որին ունակ եմ, նույնիսկ եթե այն անկատար է, որն այդպես չպետք է լինի: Դա սքանչելի է: Ես չեմ ապրել Փրկչի օրերում, նա անձնապես չի եկել ինձ մոտ: Ես չեմ տեսել Նրան: Նրա Հայրը և Նա անհրաժեշտ չեն համարել շնորհել ինձ այնպիսի մեծ օրհնություն, ինչպիսին դա է: Բայց դա անհրաժեշտ չէ: Ես զգացել եմ Նրա ներկայությունը: Ես գիտեմ, որ Սուրբ Հոգին լուսավորել է միտքս և *Նրան ինձ հայտնի է դարձրել,* այնպես որ, որպեսզի ես իսկապես սիրեմ իմ Քավիչին, ես հուսով եմ և զգում եմ, որ դա ճշմարիտ է, ավելի, քան որևէ այլ բան այս աշխարհում: Ես չեմ կամենում ունենալ այդ որևէ այլ կերպ: Ես ուզում եմ հավատարիմ լինել Նրան: Ես գիտեմ, որ Նա մահացավ ինձ համար, ձեզ համար և ողջ մարդկության համար, որ մենք կրկին ապրենք հարության միջոցով: Ես գիտեմ, որ Նա մահացավ, որպեսզի ինձ ներվեին իմ թերությունները, իմ մեղքերը և մաքրվեի դրանցից: Որքան սքանչելի է այդ սերը: Ինչպես կարող եմ իմանալով այս, անել որևէ այլ բան, բացի Նրան՝ իմ Քավիչին սիրելուց: Ես ուզում եմ, որ իմ որդիները միսիոներական դաշտերում զգան այս նույն ձևով: Ես ուզում եմ, որ իմ երեխաներն ու իմ թոռները զգան այդ ձևով և երբեք չշեղվեն ճշմարտության և արդարակեցության ուղուց»[2]:

Նախագահ Սմիթի որդիներից մեր պատմում է.

«Երբ երեխա էինք, այնքան հաճախ էինք լսում նրան ասելիս. «Եթե միայն աշխարհի ժողովուրդները հասկանային փորձությունները ու չարչարանքները, մեղքերը, որոնք մեր Տերն Իր վրա վերցրեց հանուն մեզ»: Երբ որ նա ակնարկում էր այդ մասին, արցունքներ էին հայտնվում նրա աչքերում:

[Մի անգամ] երբ ես մենակ նստած էի հայրիկիս հետ իր առանձնասենյակում, ես նկատեցի, որ նա խորը մտածմունքների մեջ էր: Ես չէի համարձակվում խախտել լռությունը, բայց ի վերջո նա խոսեց. «Օ՜հ, որդիս, ես կկամենայի որ դու ինձ հետ եղած լինեիր անցյալ հինգշաբթի, երբ ես հանդիպեցի Եղբայրների հետ տաճարում: Օ՜, եթե դու լսեիր նրանց վկայելիս Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց սիրո մասին: Իսկ հետո նա կախեց իր գլուխը, և արցունքները հոսեցին երեսի վրայով և կաթեցին վերնաշապիկի վրա: Ապա շատ վայրկյաններ անց, առանց գլուխը շատ բարձրացնելու, բայց ետ ու առաջ

շարժելով իր գլուխը, նա ասաց.«Օ՜հ, ինչպես եմ սիրում իմ Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին»:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Հիսուս Քրիստոսը Աստծո Միածին Որդին է և աշխարհի Փրկիչը:

Թող որ ես կարողանամ ասել այնպես հստակորեն և այնպես ուժգնորեն, որքան կարող եմ, որ մենք հավատում ենք Քրիստոսին: Մենք ընդունում ենք Նրան առանց վերապահության որպես Աստծո Որդու և աշխարհի Փրկչի:[4]

Մենք գիտենք, որ փրկությունը Քրիստոսում է. որ Նա Հավերժական Հոր Անդրանիկ Որդին էր. որ Նա ընտրված և նախակարգված էր երկնքի խորհուրդներում՝ իրականացնելու անսահման և հավերժական քավությունը. որ նա ծնվել էր աշխարհում որպես Աստծո Որդին. և որ նա կյանք և անմահություն է լույս աշխարհ բերել՝ ավետարանի միջոցով:

Ես հավատում եմ կատարյալ համոզվածությամբ, որ Քրիստոսը եկավ ազատելու մարդկանց ֆիզիկական և հոգևոր մահից, որն աշխարհ էր եկել Ադամի անկման միջոցով, և որ Նա Իր վրա էր վերցրել բոլոր մարդկանց մեղքերը ապաշխարության պայմանով: . . .

Մենք հավատում ենք, որ շնորհով է, որ մենք փրկվում ենք այն ամենից հետո, ինչ կարող ենք անել [տես 2 Նեփի 25.23], և որ կառուցելով Քրիստոսի քավության հիմքի վրա բոլոր մարդիկ պետք է գործեն իրենց փրկությունը ահով և դողով Տիրոջ առաջին [տես Փիլիպպեցիս Բ.12, Մորմոն 9.27]:[5]

Մեր Փրկչի և մեզանից մնացածի միջև տարբերությունը նրանում է, որ մենք ունենք հայրեր, ովքեր մահկանացու էին և այդ պատճառով ենթակա ենք մահվան: Մեր Փրկիչը չուներ մահկանացու Հայր և այդ պատճառով մահը ենթարկվում էր նրան: Նա ուներ իշխանություն վայր դնելու իր կյանքը և այն կրկին վերցնելու [տես Հովհաննես Ժ.17–18], բայց մենք իշխանություն չունենք վար դնելու մեր կյանքը և կրկին այն վերցնելու: Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով է, որ մենք ստանում ենք

հավերժական կյանք՝ մեռելների հարության և ավետարանի սկզբունքներին հնազանդվելու միջոցով։[6]

Նա իսկապես Աստծո Միածին Որդին է և Նրա շնորհով է և Նրա Հոր շնորհի միջոցով է, որ փրկագնվում ենք մեղքից մեր ապաշխարության պայմանով։ Մենք գիտենք, որ Նա բարձրացել է մեռելներից, որ Նա վեր է համբարձվել, գերի անելով գերությունը։ Սաղմոս ԿԸ.18], և դարձել փրկության հեղինակ բոլորի համար, ովքեր կհավատան, ովքեր կապաշխարեն իրենց մեղքերից և կընդունեն Նրան որպես աշխարհի Քավիչ [տես Եբրայեցիս Ե.9]։ Վերջին Օրերի Սրբերը չեն թողնվել այս բաների վերաբերյալ կասկածի մեջ։[7]

Չնայած մարդիկ կարող են պլաններ կազմել, տեսություններ որդեգրել, արտասովոր գործեր ներկայացնել և հավաքել ու ուսուցանել հատուկ վարդապետություններ, մեկ ուսմունք սկզբունքային է և դրանից մենք չենք կարող հեռանալ. *բոլոր բաները կենտրոնացած են Տեր Հիսուս Քրիստոսի՝ աշխարհի Քավչի մեջ և շուրջը։* Մենք ընդունում ենք նրան, որպես Հոր Միածինը մարմնում, միակը, ով բնակվել է մարմնում, ով ուներ անմահ Հայր։ Իր անդրանիկության և երկիր գալու նրա պայմաններից ելնելով, նա դարձավ մարդկության Քավիչը. և իր արյուն թափելու շնորհիվ, մենք պատիվ ունենք վերադառնալ մեր Հոր ներկայությունը՝ մեր ապաշխարության և փրկագնման մեծ ծրագրի ընդունման պայմաններում, որի հեղինակը նա է։[8]

Մենք վկայում ենք, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը փրկության ծրագիրն է. և որ մեր Տիրոջ քավիչ զոհաբերության միջոցով բոլոր մարդիկ կբարձրացվեն անմահության մեջ, դատվելու Նրա կողմից՝ համաձայն մարմնում կատարած գործերի. և որ նրանք, ովքեր հավատում են և հնազանդվում ավետարանի լրիվության օրենքներին, նույնպես կբարձրացվեն դեպի հավերժական կյանք մեր Հոր արքայությունում։[9]

«Մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի զավակները՝ որդիներն ու դուստրերը, Նրան հնազանդվելու մեր ուխտերի միջոցով»:

2

Մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի որդիներն ու դուստրերը Նրա Քավության միջոցով և Նրան հնազանդվելու մեր ուխտերի միջոցով:

Մեր երկնային Հայրը Հիսուս Քրիստոսի Հայրն է, ինչպես հոգու, այնպես էլ մարմնի: Մեր Փրկիչը Անդրանիկն է որպես հոգի՝ Միածինը մարմնում:[10]

Նա [Հիսուս Քրիստոսը] մեր Ավագ Եղբայրն է և Հոր կողմից իշխանության և զորության լրիվությամբ պատվի է արժանացել որպես Հոր, Որդու և Սուրբ Հոգու մեծ Նախագահության անդամ:[11]

Մեր սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, որ Հիսուս Քրիստոսը և՛ Հայրն է և՛ Որդին: Պարզ ճշմարտությունն այն է, որ Նա Աստծո Որդին է ծննդով՝ ինչպես հոգով, այնպես էլ մարմնով: Նա կոչվում է Հայր այն աշխատանքի շնորհիվ, որը նա կատարել է:[12]

Փրկիչը դառնում է մեր Հայրը, այն իմաստով, որով այս տերմինը օգտագործվում է սուրբ գրություններում, որովհետև նա առաջարկում է մեզ կյանք՝ հավերժական կյանք քավության միջոցով, որը Նա արել է մեզ համար: Թագավոր Բենյամինի հրաշալի ուսուցման մեջ մենք գտնում ենք հետևյալը. «Եվ այժմ, ուխտի շնորհիվ, որ դուք արել եք, դուք կկոչվեք *Քրիստոսի զավակներ՝ նրա որդիներն ու նրա դուստրերը,* քանզի ահա, այս օրը *նա հոգով ծնեց ձեզ.* քանզի դուք ասում եք, որ ձեր սրտերը փոխվել են նրա անվան հանդեպ հավատքի միջոցով. հետևաբար, *դուք ծնվել եք նրանից և դարձել եք նրա որդիներն ու նրա դուստրերը* [Մոսիա 5.7, տես նաև հատվածներ 8–11]:

Այսպիսով, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի զավակները՝ որդիներն ու դուստրերը, Նրան հնազանդվելու մեր ուխտերի միջոցով: Նրա աստվածային իշխանության և խաչի վրա զոհաբերության շնորհիվ մենք դառնում ենք հոգեպես ծնված որդիներ և դուստրեր, և Նա մեր Հայրն է:[13]

Թագավոր Բենյամինի օրերի Նեփիացիների նման, մենք՝ Վերջին Օրերի Սրբերս, նույնպես վերցրել ենք մեզ վրա Քրիստոսի անունը [տես Մոսիա 5.1–9, 6.1–2]: Յուրաքանչյուր շաբաթ հաղորդության ծառայության ժամանակ, ինչպես մեզ պատվիրվել է անել, մենք վերցնում ենք մեզ վրա Նրա անունը, միշտ հիշելու Նրան և դա այն էր, ինչ Նեփիացիները ուխտեցին անել:[14]

3

Փրկիչը Իրեն հայտնի է դարձրել այս տնտեսությունում և մեզանից յուրաքանչյուրը կարող է ունենալ մնայուն վկայություն Նրա մասին:

Մենք ընդունում ենք Հիսուսին որպես աշխարհի Քավիչ: Մենք գիտենք. . . որ Նա Իրեն հայտնի դարձրեց արդի տնտեսության ժամանակ: Մենք կախված չենք հնադարյան արժանավոր մարդկանց. . . վկայություններից, ովքեր ապրում էին Նրա օրերում և զրուցում էին Նրա հետ Իր ծառայության ընթացքում,

և որոնց Նա հայտնվեց Իր հարությունից հետո: Մենք ունենք ականատեսներ, որոնք ապրել են մեր իսկ օրերում, ովքեր տեսել են Նրան, ովքեր գիտեին, որ Նա ապրում է և վկայել են մեզ և աշխարհին այս փաստի մասին: Մենք գիտենք, որ նրանց վկայությունները ճշմարիտ են: Ջոզեֆ Սմիթը մենակ չթողնվեց այս տնտեսությունում վկայություն բերելու Հիսուս Քրիստոսի առաքելության մասին, քանի որ Տերը բարձրացրեց այլ ականատեսների, ովքեր Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ տեսան Քավչին, հրահանգ ստացան Նրանից և տեսան Նրան երկինքներում, Հոր աջ կողմում նստած՝ շրջապատված սուրբ հրեշտակներով: Նրանք տվեցին մեզ իրենց վկայությունը, որը կկանգնի ընդդեմ աշխարհի՝ դատապարտելու նրանց, ովքեր ականջ չեն դնում:

Բայց ոչ էլ մենք կախված ենք որպես Եկեղեցու անդամներ Ջոզեֆ Սմիթի, Օլիվեր Քաուդերիի, Սիդնի Ռիգդոնի կամ ուրիշների վկայություններից, ովքեր այժմ մահացած են, ովքեր այս տնտեսությունում ստացան սքանչելի հայտնություններ և տեսիլքներ Տիրոջից, որոնցով նրանք իմացան, որ Հիսուսն ապրում է և աշխարհի Քավիչն է: Մենք ունենք անձնական վկայություն Տիրոջ Հոգու միջոցով տրված բոլորին, ովքեր ապրել են համաձայն Ավետարանի: Եթե մենք ներդաշնակության մեջ լինենք ճշմարտության հետ, մեր մեղքերի թողության համար մկրտվելուց հետո, և հաստատվենք ձեռնադրմամբ՝ Սուրբ Հոգու պարգևի համար, Տերը մեզ հայտնի է դարձրել անձնապես, որ այս բաները ճշմարիտ են: Մենք կախված չենք մեկ ուրիշի վկայությունից այս գիտելիքի համար, քանի որ ինքներս գիտենք՝ Հոգու միջոցով, որ Հիսուսը Քրիստոսն է՝ աշխարհի Քավիչը:[15]

Եթե կա մի բան, որը բերում է ուրախություն և խաղաղություն ու բավարարվածություն մարդու սրտին ամեն ինչից վեր, որ ես գիտեմ, դա մնայուն վկայությունն է, որը ես ունեմ, և որը դուք ունեք, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Դա է ճշմարտությունը, որը չի կարող փոխվել: Մարդիկ կարող են հարձակվել դրա վրա, նրանք կարող են ծաղրել, նրանք կարող են հայտարարել, որ Նա չէ աշխարհի Քավիչը, որ Նրա առաքելությունը ճիշտ չէր կամ դրա նպատակը՝ Իր արյունը հեղելու միջոցով չպիտի շնորհի բոլոր մարդկանց մեղքերի թողություն նրանց ապաշխարության պայմանով: Նրանք գուցե հրաժարվեն հավատալ մեռելների հարությանը, կամ նույնիսկ, որ Քրիստոսն

Ինքն է հարություն առել, ինչպես սուրբ գրություններն են հայտարարում՝ Իր թշնամիների կողմից մահվան դատապարտվելուց հետո, այնուամենայնիվ, ճշմարտությունը մնում է: Նա իսկապես մահացավ աշխարհի մեղքերի համար, Նա իրականացրեց մահից փրկագնումը, Նա մարդկանց շնորհեց ապաշխարության հնարավորությունը և մեղքերի թողությունը նրանց հավատքի միջոցով և ավետարանի ու Նրա առաքելության սկզբունքների ընդունումը: Այս ճշմարտությունները սկզբունքային են, դրանք պետք է հարատևեն, դրանք չեն կարող կործանվել, անկախ նրանից, թե ինչ կասեն կամ կմտածեն մարդիկ:[16]

Թող ձեր մտքերի ամենակարևոր բան սա լինի՝ այժմ և բոլոր ժամանակներում, որ Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստծո Որդին, ով եկավ աշխարհ՝ վայր դնելու Իր կյանքը, որ մենք կարողանանք ապրել: Սա է ճշմարտությունը և դա սկզբունքային է: Դրա վրա է կառուցված մեր հավատքը:[17]

4

Մենք բոլորս պետք է ձևավորենք մեր կյանքը ըստ Հիսուս Քրիստոսի կյանքի:

Մեծագույն օրինակը, որ երբևէ տրվել է մարդու համար, դա Ինքը՝ Աստծո Որդին էր: Նրա կյանքը կատարյալ էր: Նա բոլոր բաները լավ արեց և կարողացավ ասել բոլոր մարդկանց. «Հետևեք ինձ», [2 Նեփի 31.10] և մենք պետք է ձևավորենք մեր կյանքը ըստ Նրա կյանքի:

Ես ձեզ կտամ նրա կյանքից մի օրինակ: Նա ուսուցանեց մարդկանց ինչպես աղոթել և ապա ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ՝ դուք պետք է արթուն լինեք և միշտ աղոթեք, որ չլինի թե գայթակղվեք դևի կողմից ու գերության տարվեք նրա կողմից: Եվ ինչպես ես աղոթեցի ձեր մեջ, ճիշտ նույնպես դուք պետք է աղոթեք իմ եկեղեցում իմ ժողովրդի մեջ, ովքեր ապաշխարում և մկրտվում են իմ անունով: Ահա, ես եմ լույսը. Ես օրինակ եմ ծառայում ձեզ համար. . . Ուստի, բարձր պահեք ձեր լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Ահա, ես եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք, այն ինչ դուք տեսաք ինձ անելիս . . .» [3 Նեփի 18.15–16, 24]:

Հավանաբար ամենակատարյալ խորհուրդը այս առնչությամբ տրվել է Նեփիացի աշակերտներին. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել» [3 Նեփի 27.27]:[18]

Մենք պետք է հավատանք Քրիստոսին և ձևավորենք մեր կյանքը նրա նմանությամբ: Մենք պետք է մկրտվենք ինչպես Նա մկրտվեց: Մենք պետք է երկրպագենք Հորը, ինչպես Նա արեց: Մենք պետք է կատարենք Հոր կամքը, ինչպես Նա արեց: Մենք պետք է ձգտենք բարին անել և արդարություն գործել, ինչպես Նա արեց: Նա մեր Օրինակն է, փրկության մեծ Նախատիպը:[19]

Երբ դուք խնդիր ունեք և պետք է ընտրություն կատարեք, կատարեք դա ձեզ հարցնելով. «Ի՞նչ կաներ Հիսուսը»: Ապա արեք, ինչպես Նա կաներ:

Դուք կարող եք զգալ Նրա ներկայության ուրախությունը և ունենաք Նրա ոգեշնչումը՝ առաջնորդելու ձեզ ձեր կյանքի ամեն օրը, եթե դուք ձգտեք դրան և ապրեք դրան արժանի: Հիսուսի սերը և Նրա Սուրբ Հոգու մխիթարող ուժը կարող է հենց նույնքան իրական լինել ձեզ համար, ինչպես դրանք երեխաների համար էին, որոնց Նա Իր մոտ հավաքեց, երբ ապրում էր երկրի վրա:[20]

Թույլ տվեք ասել, որ նրանք, ովքեր հետևեն Նրա օրինակին, կդառնան Նրա նման և և կփառավորվեն Նրա հետ Նրա Հոր արքայությունում՝ ձեռք բերելու պատիվ, զորություն և իշխանություն: Որոշ Նեփիացի հետևորդների, ովքեր հետևել էին Նրան սրտի լիակատար միտումով, Նա ասել է. «. . . դուք կլինեք ճիշտ ինչպես ես եմ, և ես եմ, ճիշտ ինչպես Հայրը, և Հայրը և ես մեկ ենք» [3 Նեփի 28.10]:

Ես աղոթում եմ, որ մենք բոլորս քայլենք Նրա հետքերով և պահենք Նրա պատվիրանները, որպեսզի մենք նման լինենք Նրան: Սա իմ ցանկությունն է: Հուսով եմ այն ձերն էլ է:[21]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ եք կարծում, ինչպես Նախագահ Սմիթի երեխաները ազդվեցին նրա վկայությունից և Փրկչի հանդեպ նրա սիրո արտահայտություններից (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։ Մտածեք, թե ի՞նչ կարող եք դուք անել մեծացնելու ձեր սերը Փրկչի հանդեպ և կիսվեք ձեր վկայությամբ Նրա մասին։
- Նախագահ Սմիթը հայտարարել է, որ «բոլոր բաները կենտրոնացած են Տեր Հիսուս Քրիստոսում և Նրա շուրջ» (բաժին 1)։ Ի՞նչ ուղիներով կարող է այս ճշմարտությունը ազդել մեր անձնական կյանքի վրա։ Ի՞նչ ուղիներով կարող է այն ազդել մեր տների վրա։
- Ի՞նչ ուղիներով են 2–րդ բաժնի ուսմունքներն օգնում ձեզ հասկանալ ձեր հարաբերությունը Փրկչի հետ։ Ի՞նչ է նշանակում ձեզ համար ձեր վրա վերցնել Քրիստոսի անունը։
- Նախագահ Սմիթը նախազգուշացրել է, որ որոշ մարդիկ կհարձակվեն և կծաղրեն Հիսուս Քրիստոսին և Նրա Քավության վերաբերյալ ճշմարտությունները (տես բաժին 3)։ Ինչպե՞ս կարող ենք ամրացնել մեր վկայությունները, որպեսզի մենք կարողանանք դիմակայել այդպիսի մարտահրավերներին։ Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել երեխաներին ամրապնդել իրենց վկայությունները։
- Խորհեք Նախագահ Սմիթի խորհրդի մասին «Ի՞նչ կաներ Հիսուսը» (բաժին 4)։ Որո՞նք են մի քանի հատուկ ուղիները, որոնցով կարող ենք ձևավորել մեր կյանքը ըստ Հիսուս Քրիստոսի կյանքի։ Երբ մենք հետևում ենք Նրա օրինակին, ինչպե՞ս կարող ենք ազդել ուրիշների կյանքի վրա։

Առնչվող սուրբ գրություններ

Հովհաննես ԺԴ.6, 1 Նեփի 10.6, Մոսիա 3.5–7, Հելաման 5.12, 3 Նեփի 11.3–7, ՎևՈՒ 34.1–3, 76.22–24, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17

Օգնություն ուսուցչին

Օգնություն ուսուցչին. «[Խուսափեք] խիստ մեծ քանակությամբ նյութ մատուցելու գայթակղությունից: Ըստ էության, մենք ուսուցանում ենք մարդկանց, ոչ թե առարկայի նյութը. և. . . յուրաքանչյուր դասի ուրվագիծ, որ ես երբևէ տեսել եմ, անխուսափելիորեն ունեցել է ավելի շատ բան իր մեջ, քան կարելի է հնարավորինս յուրացվել սահմանված ժամանակի շրջանակներում» (Jeffrey R. Holland, "Teaching and Learning in the Church," *Ensign*, June 2007, 91):

Հղումներ

1. "Message of President Joseph Fielding Smith" (address delivered May 22, 1955, Joseph Fielding Smith Collection, Church History Library), 2.
2. In Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 387–88; italics in original.
3. In Leon R. Hartshorn, "President Joseph Fielding Smith: Student of the Gospel," *New Era,* Jan. 1972, 63.
4. "The First Prophet of the Last Dispensation," *Ensign,* Aug. 1971, 6.
5. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 2, 4.
6. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 28–29.
7. In Conference Report, Apr. 1912, 67.
8. "The One Fundamental Teaching," *Improvement Era,* May 1970, 3; italics in original.
9. "Out of the Darkness," 2, 4.
10. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 18.
11. "The Spirit of Reverence and Worship," *Improvement Era,* Sept. 1941, 573; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 15.
12. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 28.
13. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 29.
14. *Man: His Origin and Destiny* (1954), 117.
15. In Conference Report, Oct. 1914, 98.
16. In Conference Report, Oct. 1924, 100–101.
17. In Conference Report, Oct. 1921, 186; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 302.
18. "Follow His Example," *New Era,* Aug. 1972, 4.
19. "The Plan of Salvation," *Ensign,* Nov. 1971, 5.
20. "Christmas Message to Children of the Church in Every Land," *Friend,* Dec. 1971, 3.
21. «Հետևեք Նրա օրինակին», 4:



«Մենք ապրում էինք և բնակվում [մեր Երկնային Հոր] հետ նախքան այս երկրի հիմնադրումը»:

Փրկության ծրագիրը

«Մեր Երկնային Հայրը կազմեց փրկության մի ծրագիր իր հոգեղեն զավակների համար. . . հնարավորություն տալու նրանց զարգանալու և առաջընթաց ապրելու համար մինչև նրանք ձեռք բերեն հավերժական կյանք»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1901թ. ապրիլի 29-ին Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի 18 տարեկան քույրը՝ Ալիսը մահացավ երկարատև հիվանդությունից հետո: Ջոզեֆը հենց նոր վերջացնում էր լիաժամկետ միսիան Անգլիայում: Ալիսի մահվան առնչությամբ նրա արձագանքը բացահայտեց նրա սերն իր ընտանիքի հանդեպ և նրա վկայությունը փրկության ծրագրի վերաբերյալ: «Սա սոսկալի հարված էր մեզ բոլորիս, – գրել է նա իր օրագրում: – Ես չէի հասկանում նրա հիվանդության լրջությունը, չնայած գիտեի, որ նա հիվանդ էր: Ես լիովին ակնկալում էի նրան կրկին տեսնել մնացած ընտանիքի հետ մի քանի շաբաթ հետո, բայց Աստծո կամքը թող լինի: Հենց այսպիսի ժամանակներում է, երբ մեզ ներկայացրած ավետարանի հույսերը ամենառողջունելին են: Մենք բոլորս կրկին կհանդիպենք մյուս կողմում՝ վայելելու միմյանց ներկայության հաճույքներն ու օրհնությունները և կհասկանանք մեր Երկնային Հոր գորովագութ ողորմությունները: Թող որ ես միշտ քայլեմ ճշմարտության արահետում և պատվեմ այն անունը, որ կրում եմ, որպեսզի հանդիպումները իմ ազգականների հետ լինեն ինձ համար իսկապես ամենաքաղցրը և հարատևը, սա իմ խոնարհ աղոթքն է»:[1]

Որպես Առաքյալ, իսկ հետագայում որպես Եկեղեցու Նախագահ ծառայելիս Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն անընդհատ վկայում էր այն հույսի մասին, որը գալիս է ավետարանը հասկանալուց: Նա ուսուցանել է. «Մենք ունենք փրկության ծրագիրը, մենք

սպասավորում ենք ավետարանը և ավետարանը աշխարհի միակ հույսն է, միակ ուղին, որ կարող է բերել խաղաղություն երկրի վրա և ուղղել այն անիրավությունները, որոնք գոյություն ունեն բոլոր ազգերի մեջ»:[2]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Նախամահկանացու հոգևոր աշխարհում մենք ուրախացանք, իմանալով Երկնային Հոր փրկության ծրագրի մասին:

Մենք բոլորս մեր Երկնային Հոր ընտանիքի անդամներն ենք: Մենք ապրում էինք և բնակվում Նրա հետ նախքան այս երկրի հիմնադրումը: Մենք տեսնում էինք Նրա դեմքը, զգում Նրա սերը և լսում նրա ուսմունքները և Նա կարգեց օրենքներ, որոնցով մենք կարող ենք զարգանալ և առաջադիմել ու ձեռք բերել մեր սեփական հավերժական ընտանիքի միավորները:[3]

Մեր Երկնային Հայրը հիմնադրել է իր հոգեղեն զավակների համար փրկության ծրագիր: Այս ծրագիրը նախատեսված է նրանց հնարավորություն տալու զարգանալ և առաջ ընթանալ, մինչև որ նրանք ձեռք բերեն հավերժական կյանք, որն անվանումն է այնպիսի կյանքի, որով ապրում է Երկնային Հայրը: Այս ծրագիրը պետք է հնարավորություն տա Աստծո զավակներին դառնալ իր նման և ունենալ այն ուժն ու իմաստությունն ու գիտությունը, որ Ինքն ունի:[4]

Թանկագին Մարգարիտից սովորում ենք, որ խորհուրդ էր տեղի ունեցել երկնքում, երբ Տերը կանչեց իր առջև իր զավակների ոգիները և նրանց ներկայացրեց մի ծրագիր, ըստ որի նրանք պետք է ներքև գային, որպեսզի այս երկրի վրա ճաշակեին մահկանացու կյանք և ֆիզիկական մարմիններ ունենային, անցնեին մահկանացու կյանքի փորձարկումը և ապա գնային ավելի բարձր վեհացման՝ հարության միջոցով, որը պետք է առաջ գար Նրա Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի քավությամբ [տես Մովսես 4.1–2, Աբրահամ 3.22–28]: Մահկանացու կյանքով անցնելու և երկրային կյանքի բոլոր անկայունություններից ճաշակելու միտքը, որոնց ընթացքում նրանք ձեռք կբերեին փորձառություններ տառապանքի, ցավի, վշտի, գայթակղության և չարչարանքի, ինչպես նաև կյանքի հաճույքների միջոցով այս

Ադամի և Եվայի անկումը բերեց ցավ, բերեց վիշտ, այն բերեց մահ, բայց. . . այն բերեց նաև օրհնություններ:

ժամանակավոր գոյության ընթացքում և ապա, եթե հավատարիմ լինեին, անցնելով առաջ՝ հարության միջոցով դեպի հավերժական կյանք Աստծո արքայությունում, Նրան նման լինելու համար [տես Ա Հովհաննես Գ.2], լցրեց նրանց ուրախության ոգով, և նրանք «բացականչեցին ուրախությունից» [տես Հոբ ԼԸ.4–7]: Այս մահկանացու կյանքում ձեռք բերված փորձառությունն ու գիտելիքը, նրանք չէին կարող ստանալ որևէ այլ կերպ, իսկ ֆիզիկական մարմին ստանալը կարևոր էր նրանց վեհացման համար:[5]

2

Ադամի և Եվայի անկումը Երկնային Հոր ծրագրի մի մասն էր:

Փրկության ծրագիրը, կամ օրենքների ժողովածուն, որը հայտնի է որպես Հիսուս Քրիստոսի ավետարան, ընդունվել էր երկնքում, նախքան աշխարհի հիմնադրումը: Այնտեղ նշանակվեց, որ Ադամը մեր հայրը պետք է գար այս աշխարհ և կանգներ ողջ մարդկության ընտանիքի գլխին: Այս մեծ ծրագրի մասն էր, որ նա պետք է ճաշակեր արգելված պտղից և անկում ապրեր, դրանով տառապանք և մահ բերելով աշխարհ, այսինքն իր զավակների վերջնական բարիքի համար:[6]

Անկումը մարդու մահկանացու փորձարկման էական մասն է կազմում. . .. Եթե Ադամն ու Եվան չճաշակեին, մահկանացու կյանքի մեծ պարգևը չէր գա նրանց: Բացի այդ, նրանք հետնորդներ չէին ունենա և Տիրոջ կողմից նրանց տրված մեծ պատվիրանը չէր իրագործվի:[7]

Ադամի անկումը իրականություն դարձրեց մահկանացու կյանքի բոլոր անկայունությունները: Այն բերեց ցավ, այն բերեց վիշտ, այն բերեց մահ, բայց մենք չպետք է աչքից բաց թողնենք այն փաստը, որ այն նաև բերեց օրհնություններ. . . Այն բերեց գիտության և հասկացողության ու մահկանացու կյանքի օրհնությունը:[8]

3

Հիսուս Քրիստոսը Իրեն զոհ մատուցեց փրկելու մեզ Անկումից և մեր մեղքերից:

Ադամի օրինազանցությունը բերեց այս երկու մահերը, հոգևոր և ֆիզիկական՝ մարդը վտարված լինելով Աստծո ներկայությունից, և դառնալով մահկանացու և ենթակա մարմնի բոլոր անկատարություններին: Որպեսզի ետ բերվի կրկին, պետք է լինի խախտված օրենքի փոխհատուցում: Արդարադատությունն է պահանջում այդ:[9]

Խիստ բնական է և արդար, որ նա, ով գործում է սխալը, պետք է վճարի տուգանքը՝ քավի իր գործած սխալը: Ուստի, երբ Ադամը օրինազանցեց օրենքը, արդարադատությունը պահանջեց, որ նա և ոչ թե ուրիշ մեկը պետք է պատասխաներ մեղքի համար և վճարեր տուգանքը իր կյանքով: Բայց Ադամը խախտելով օրենքը, ինքը դարձավ անեծքին ենթակա և, լինելով անեծքի տակ, չէր կարող քավել կամ հետարկել իր արածը: Ոչ էլ նրա երեխաները կարող էին դա անել, քանի որ նրանք ևս անեծքի տակ էին և պահանջվում էր մեկը, ով ենթակա չէր անեծքին՝ քավելու այդ սկզբնական մեղքը: Բացի այդ, քանի որ մենք բոլորս անեծքի տակ էինք, մենք ևս անզոր էինք քավելու մեր անձնական մեղքերի համար: Այդ պատճառով անհրաժեշտ դարձավ Հոր համար ուղարկել Իր Միածին Որդուն, որը զերծ էր մեղքից, քավելու մեր մեղքերի համար ինչպես նաև Ադամի օրինազանցությունը, որը արդարադատությունը պահանջում էր, որ պետք է արվեր: Ուստի Նա Իրեն զոհաբերություն մատուցեց

մեղքերի համար և խաչի վրա Իր մահվան միջոցով Իր վրա վերցրեց ինչպես Ադամի օրինազանցությունը, այնպես էլ մեր անձնական մեղքերը, դրանով քավելով մեզ անկումից և մեր մեղքերից՝ ապաշխարության պայմանով:[10]

Մեր պարտականությունն է ուսուցանել Հիսուս Քրիստոսի առաքելությունը: Ինչո՞ւ Նա եկավ: Ի՞նչ արեց մեզ համար: Ինչպե՞ս մենք օգտվեցինք: Ի՞նչ գին վճարեց նա այդ անելու համար: Ինչո՞ւ նա վճարեց իր կյանքի գնով, այո ավելի քան իր կյանքը: Բացի խաչին գամվելուց էլ ի՞նչ նա արեց: Ինչո՞ւ նա գամվեց խաչին: Նա գամվեց խաչին, որ իր արյունը հեղվի քավելու մեզ այդ ամենասոսկալի տուգանքից, որ երբևէ կարող էր գալ՝ վտարում Աստծո ներկայությունից: Նա մահացավ խաչի վրա՝ մեզ կրկին ետ բերելու համար, մեր մարմիններն ու հոգիները վերամիավորելու համար: Նա մեզ տվեց այդ արտոնությունը: Եթե միայն մենք հավատանք նրան և պահենք Նրա պատվիրանները, Նա մահացավ մեզ համար, որպեսզի մենք ստանանք մեր մեղքերին թողություն և չկանչվենք վճարելու տուգանքը: Նա վճարեց գինը: . . .

. . . Ոչ մի մարդ չէր կարող անել այն, ինչ նա արեց մեզ համար: Նա ստիպված չէր մահանալ, նա կարող էր հրաժարվել: Նա դա կամավոր արեց: Նա արեց դա, որովհետև դա պատվիրան էր Իր Հորից: Նա գիտեր, թե ինչ տառապանք էր լինելու, և այնուամենայնիվ, մեր հանդեպ Իր սիրո պատճառով Նա հոժար էր անել դա: . . .

Գամերի խրվելը Փրկչի ձեռքերին և ոտքերին Նրա տառապանքների նվազագույն մասն էր: Կարծում եմ մեզ մոտ սովորույթ է դառնում զգալը կամ մտածելը, որ Նրա մեծ տառապանքը խաչին գամվելն էր և այնտեղ կախված թողվելը: Դե, աշխարհի պատմության այդ ժամանակահատվածում հազարավոր մարդիկ տառապեցին այդ ձևով: Այդպիսով, Նրա տառապանքը, ինչ վերաբերում է խաչին, ավելին չէր քան այլ մարդկանց տառապանքը, ովքեր այդ ձևով խաչվել էին: Ապա ո՞րն էր Նրա մեծ տառապանքը: Կկամենայի, որ մենք այս փաստը տպավորեինք այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամի մտքում՝ Նրա մեծագույն տառապանքը տեղի ունեցավ նախքան Նրա խաչ բարձրանալը: Դա տեղի ունեցավ Գեթսեմանիի պարտեզում, այսպես են սուրբ գրությունները պատմում մեզ,

որ արյունը հոսում էր Նրա մարմնի բոլոր ծակոտիներից, և իր հոգու ուժեղ տվայտանքի մեջ, Նա աղաղակեց դեպի Իր Հայրը: Դա նրա ձեռքերի և ոտքերի մեջ խրվող գամերը չէին: Արդ մի հարցրեք ինձ, թե ինչպես դա տեղի ունեցավ, որովհետև ես չգիտեմ: Ոչ ոք չգիտի: Այն ամենը, ինչ մենք գիտենք, այն է, որ ինչ-որ ձևով նա իր վրա վերցրեց այդ ծայրահեղ պատիժը: Նա Իր վրա վերցրեց մեր օրինազանցությունները և վճարեց գինը՝ տանջանքի գինը:

Մտածեք Փրկչի մասին, որը տարավ յուրաքանչյուր անձնավորության տանջանքի միացյալ բեռը ինչ–որ ձևով, որը ես ասում եմ, ես չեմ կարողանում հասկանալ, ես ուղղակի ընդունում եմ, որ այն ստիպեց Նրան տառապել ցավի հոգևարքից, որի հետ համեմատած գամերի խրվելը Նրա ձեռքերի և ոտքերի մեջ շատ փոքր մի բան էր: Իր չարչարանքի մեջ Նա աղաղակեց դեպի Իր Հայրը.«Եթե կամիս այս բաժակը անցրու ինձանից», բայց այն չէր կարող անցնել [տես Մատթեոս ԻԶ.42, Մարկոս ԺԴ.36, Ղուկաս ԻԲ.42]: Թույլ տվեք կարդալ ուղղակի մեկ կամ երկու խոսք այստեղ, թե ինչ է Տերն ասում այդ կապակցությամբ.

«Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ հոգով,– և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ,–

Այնուամենայնիվ, փա՛ռք լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար» (ՎևՈւ 19.16–19):

Երբ ես կարդում եմ սա, այն խոնարհեցնում է ինձ: Նրա սերը մարդկության, աշխարհի հանդեպ այնքան մեծ էր, որ նա հոժար էր կրել բեռը, որը ոչ մի մահկանացու մարդ չէր կարող տանել և վճարել սոսկալի մի գին, որը ոչ մի մարդ երբևէ չէր կարող վճարել, որպեսզի մենք կարողանայինք ազատվել:[11]

Աստծո Որդին [ասաց]. «Ես ներքև կգնամ և կվճարեմ գինը: Ես կլինեմ Քավիչ և կփրկագնեմ մարդկանց Ադամի օրինազանցությունից: Ես ինձ վրա կվերցնեմ աշխարհի մեղքերը և կփրկագնեմ կամ կփրկեմ ամեն հոգու իր իսկ մեղքերից, ովքեր կապաշխարեն»:[12]

Թույլ տվեք օրինակ բերել. Մի մարդ քայլում էր ճանապարհի երկայնքով և այնպես պատահեց, որ նա ընկավ մի փոս՝ այնքան խորը և մութ, որից չկարողացավ վեր մագլցել և վերգտնել իր ազատությունը: Ինչպես կարող էր նա փրկվել իր դժվարին կացությունից: Չէր կարող որևէ ճիգեր գործադրելով իր իսկ կողմից, քանի որ ոչ մի միջոց չկար փոսից ազատվելու: Նա օգնություն կանչեց և ինչ-որ բարի տրամադրված հոգի, լսելով նրա օգնություն աղերսող աղաղակները, շտապեց նրան օգնության՝ մի սանդուղք իջեցնելով, տվեց նրան հնարավորություն, որի միջոցով նա կրկին կարողացավ երկրի երես մագլցել: Սա ճշգրտորեն այն կացությունն էր, որի մեջ հայտնվել էր Ադամը և նրա սերունդը, երբ նա ճաշակեց արգելված պտղից: Բոլորը միասին լինելով փոսում, ոչ ոք չէր կարող հասնել մակերեսին և սփոփել մյուսներին: Փոսը Տիրոջ ներկայությունից վտարվածությունն էր և ժամանակավոր մահը, մարմնի քայքայումը: Եվ բոլորը ենթակա լինելով մահվան, ոչ ոք չէր կարող միջոցներ ապահովել ազատման համար:[13]

Փրկիչը մոտենում է, այդ փոսից դուրս լինելով և իջեցնում է սանդուղքը: Նա իջնում է փոսը և մեզ համար հնարավոր դարձնում՝ օգտագործել սանդուղքը ազատվելու համար:[14]

Իր անսահման ողորմածությամբ Հայրը լսում է իր զավակների աղաղակները և ուղարկում իր Միածին Որդուն, որը ենթակա չէր մահվան, ոչ էլ մեղքի, ապահովելու ազատվելու միջոց: Սա նա արեց իր անսահման քավության և հավիտենական ավետարանի միջոցով:[15]

Մեր սրտերի երախտագիտությունը պետք է լցվի դուրս թափվելով սիրով և հնազանդությամբ [Փրկչի] մեծ և գորովալից ողորմածության համար: Նրա համար, ինչ Նա արել է, մենք երբեք չպետք է Նրան մոռանանք: Նա գնել է մեզ Իր մեծ տառապանքի և խաչի վրա Իր արյան հեղման զոհաբերության գնով:[16]

4

Կառուցելով Հիսուս Քրիստոսի Քավության հիմքի վրա, մենք գործում ենք մեր փրկությունը մահկանացու կյանքի ընթացքում:

Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը առաջադիմության և փրկության այս մեծ ծրագրի կենտրոնական դեմքն է:[17]

Քավության հիմքի վրա կառուցված՝ փրկության ծրագիրը բաղկացած է հետևյալ բաներից.

Առաջինը՝ մենք պետք է հավատք ունենանք առ Տեր Հիսուս Քրիստոս, մենք պետք է ընդունենք Նրան որպես Աստծո Որդի, մենք պետք է դնենք մեր վստահությունը Նրա վրա, ապավինենք Նրա խոսքին և փափագենք ձեռք բերել այն օրհնությունները, որոնք զալիս են Նրա օրենքներին հնազանդվելուց:

Երկրորդը՝ մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից, մենք պետք է թողնենք աշխարհը, մենք պետք է որոշենք մեր սրտերում առանց վերապահումների, որ մենք կապրենք բարեպաշտորեն և շիտակ կյանքով:

Երրորդ՝ մենք պետք է մկրտվենք ջրում պաշտոնական սպասավորողի ձեռքերի ներքո, ով իշխանություն ունի կապելու երկրի վրա և կնքելու երկնքում, մենք պետք է այս սրբազան արարողության միջոցով մտնենք ուխտի մեջ՝ ծառայելու Տիրոջը և պահելու Նրա պատվիրանները:

Չորրորդ՝ մենք պետք է ստանանք Սուրբ Հոգու պարգևը, մենք պետք է կրկին ծնվենք, մենք պետք է մեղքը և անօրինությունը կարծես թե կրակով կիզենք մեր հոգիների միջից, մենք պետք է ձեռք բերենք նոր արարում Սուրբ Հոգու զորությամբ:

Հինգերորդ՝ մենք պետք է համբերենք մինչև վերջ, մենք պետք է պահենք պատվիրանները մկրտությունից հետո, մենք պետք է գործենք մեր փրկությունը ահով ու դողով Տիրոջ առաջին, մենք պետք է այնպես ապրենք, որ ձեռք բերենք բարեպաշտության հատկանիշներ և դառնանք այնպիսի մարդիկ, ովքեր կարող են վայելել սելեստիալ արքայության փառքը և հրաշքները:[18]

Այժմ ես վկայում եմ, որ այս օրենքները, որոնց մարդիկ պետք է հնազանդվեն փրկություն ձեռք բերելու համար և որը կազմում է Հիսուս Քրիստոսի ավետարանը, հայտնի է դարձվել այս օրերում մարգարեներին և առաքյալներին, և որ դրանք այժմ

«Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը առաջադիմության և փրկության այս մեծ ծրագրի կենտրոնական դեմքն է»:

սպասավորվում են Նրա եկեղեցու կողմից, որը Նա կրկին հաստատել է երկրի վրա:[19]

Մենք բոլորս այստեղ ենք այս մահկանացու աշխարհում ստուգվելու համար: Մենք ուղարկվել ենք այստեղ հիմնականում ձեռք բերելու խորաններ [մարմիններ] մեր հավերժական հոգիների համար, երկրորդը փորձության միջոցով ստուգվելու՝ ունենալու ձախորդություն, ինչպես նաև ուրախության և երջանկության առատություն, որը կարելի է ձեռք բերել ավետարանի հավերժական սկզբունքներին հնազանդության սրբազան ուխտի միջոցով: Մահկանացու կյանքը, ինչպես

Լեքին է տեղեկացրել իր զավակներին, «փորձնական վիճակ է» (2 Նեփի 2.21)։ Սա է այն տեղը, որտեղ մենք պետք է փորձվենք և ստուգվենք՝ տեսնելու, թե արդյոք, երբ մեր Հավերժական Հոր ներկայությունից հեռացված ենք, բայց դեռ ուսուցանվում ենք հավերժական կյանքի ուղով, սիրում և հարգում ե՞նք Նրան և հավատարի՞մ ենք Նրա Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին։[20]

Մենք եկել ենք այստեղ ստուգվելու և ապացուցվելու, շփման մեջ մտնելով ինչպես չարի, այնպես էլ բարու հետ. . . Հայրը թույլ է տալիս սատանային և նրա զորքին գայթակղել մեզ, բայց Տիրոջ Հոգու առաջնորդության և հայտնությամբ տրված պատվիրանների միջոցով մենք պատրաստվում ենք կատարել մեր ընտրությունները։ Եթե մենք չարիք ենք գործում, մեզ խոստացվել է, որ մենք կպատժվենք, եթե մենք բարիք ենք գործում, մենք կստանանք արդարակեցության հավերժական պարգևը։[21]

Այս մահկանացու փորձարկումը սեղմ ժամանակահատված է, ուղղակի մի կարճ ակնթարթ, կապելով անցյալ հավերժությունը ապագա հավերժության հետ։ Այնուամենայնիվ, դա վիթխարի կարևորություն ունեցող ժամանակահատված է։ Այս կյանքը մեր հավերժական գոյության ամենակենսական ժամանակահատվածն է։[22]

5

Բոլոր մարդիկ կստանան հարության օրհնությունը Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով։

Մենք եկել ենք այս աշխարհ մահանալու։ Դա հասկացվել է նախքան այստեղ գալը։ Դա ծրագրի մի մասն է, բոլորը քննարկված և պատրաստված՝ մարդկանց երկրի վրա դնելուց շատ առաջ. . .. Մենք պատրաստ էինք և հոժար կատարելու այդ ճանապարհորդությունը հոգևոր աշխարհում Աստծո ներկայությունից դեպի մահկանացու աշխարհ, այստեղ տանելու բոլորը, ինչ վերաբերում է այս կյանքին, դրա հաճույքներն ու ցավերը և մահանալ, իսկ մահը ճիշտ նույնքան կարևոր է, որքան ծնունդը։[23]

Չնայած այն փաստին, որ մարմինը կրկին տարալուծվում է, ֆիզիկական մահը, կամ մահկանացու մարդու մահը հոգու և մարմնական խորանի մշտական առանձնացում չէ, այլ միայն ժամանակավոր առանձնացում է, որը կդադարի հարության

օրը, երբ մարմինը առաջ կկանչվի փոշուց կրկին ապրելու՝ կառավարվելով հոգու կողմից: Այս օրհնությունը գալիս է բոլոր մարդկանց Քրիստոսի քավության միջոցով, անկախ նրանց բարությունից կամ ամբարշտությունից, երբ մականացու վիճակում էին: Պողոսն ասել է, որ պետք է լինի հարություն՝ ինչպես արդարների, այնպես էլ անարդարների (Գործք ԻԴ.15), և Փրկիչն ասել է, որ բոլորը, ովքեր գերեզմաններում են, պետք է լսեն Նրա ձայնը և դուրս գան. «նրանք, որ բարի են գործել՝ դէպի կեանքի յարութիւնը, եւ նորանք որ չար են արել՝ դէպի դատաստանի յարութիւնը» (Հովհաննես Ե.29):[24]

Յուրաքանչյուր մարմնի ամեն մի հիմնական մաս կրկին կվերականգվի իր ճիշտ տեղում հարության ժամանակ, անկախ նրանից թե ինչ կպատահի մարմնի հետ մահվան ժամանակ: Լինի դա կրակով այրվելը, թե շնաձուկներին բաժին դառնալը, նշանակություն չունի: Դրա ամեն մի հիմնական մասը կրկին կվերականգվի իր ճիշտ տեղում:[25]

Հոգիները չեն կարող կատարելագործվել առանց մսից և ոսկորներից կազմված մարմնի: Այս մարմինը և դրա հոգին բերվում են անմահության և փրկության օրհնությունների հարության միջոցով: Հարությունից հետո չի կարող կրկին առանձնացում լինել, մարմինը և հոգին դառնում են անքակտելիորեն կապված, որպեսզի մարդ ստանա ուրախության լիություն: Ոչ մի այլ ուղով, բացի այս կյանքում ծնվելուց և հարություն առնելուց, հոգիները չեն կարող դառնալ հավերժական Հոր նման:[26]

6

Հավատարիմները կժառանգեն հավերժական կյանք իրենց ընտանիքների հետ միասին Երկնային Հոր ներկայության մեջ:

Որոշ մարդիկ ժառանգում են հարստություն իրենց հայրերի աշխատասիրության շնորհիվ: Որոշ մարդիկ ժառանգության միջոցով բարձրացվում են աշխարհիկ գահեր, իշխանություն և դիրք իրենց ընկերների մեջ: Ոմանք ձգտում են աշխարհիկ գիտության ժառանգության և հայտնի են դառնում իրենց իսկ ջանասիրությամբ և հետևողականությամբ, բայց կա մի ժառանգություն, որն ավելին արժե քան բոլորը, դա հավերժական վեհացման ժառանգությունն է:

Սուրբ գրություններն ասում են, որ հավերժական կյանքը, որը մեր Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին պատկանող կյանքն է, Աստծո մեծագույն պարգևն է [տես ՎԵՈՒ 14.7]: Միայն նրանք կստանան այն, ովքեր մաքրվել են բոլոր մեղքերից: Այն խոստացված է նրանց «ովքեր հաղթում են հավատքով և կնքվում են խոստումի Սուրբ Հոգով, որը Հայրը թափում է բոլոր նրանց վրա, ովքեր արդար են և հավատարիմ: Այդ նրանք են, ովքեր Անդրանիկի եկեղեցուց են: Այդ նրանք են, ում ձեռքն է Հայրը հանձնել բոլոր բաները» [ՎԵՈՒ 76.53–55, տես նաև հատված 52]:[27]

Փրկության այս ծրագիրը ընտանիքակենտրոն է. . . [Այն] նախատեսված է հնարավորություն տալու մեզ ստեղծել մեր իսկ հավերժական ընտանեկան միավորները:[28]

Նրանք ովքեր ստանում են վեհացում սելեստիալ արքայությունում, կունենան «սերունդների հավերժական շարունակություն»: Նրանք կապրեն ընտանեկան փոխհարաբերություններում:[29]

Մենք ուսուցանվել ենք Հիսուս Քրիստոսի ավետարանում, որ ընտանեկան կազմակերպությունը կլինի, ինչ վերաբերում է սելեստիալ վեհացմանը, այնպիսին, որն ամբողջական է, հոր և մոր և երեխաների կազմակերպությունը մեկ սերունդը կապված հաջորդ սերնդի հոր և մոր և երեխաների հետ և այդպես ընդլայնվելով և տարածվելով մինչև ժամանակի վերջը:[30]

Հավերժական ժառանգության այս փառահեղ օրհնությունները. . . չեն գա, մինչև որ չլինի պատրաստակամություն պատվիրանները պահելու և անգամ, կարիքի դեպքում, Քրիստոսի հետ տառապելու. . . : Այլ խոսքով ասած, հավերժական կյանքի— Աստծո մեծագույն պարգևի— թեկնածուներից ակնկալվում է դնել ամեն ինչը, որ նրանք ունեն խորանին, եթե պահանջվի, քանի որ նույնիսկ այն ժամանակ, եթե նրանցից պահանջվի վայր դնել իրենց կյանքը հանուն Նրա գործի, նրանք երբեք չեն կարող վճարել Նրան այն առատ օրհնությունների համար, որոնք ստացվել են և խոստացվել հիմնված Նրա օրենքների և պատվիրանների հնազանդության վրա:[31]

Երբ մենք դուրս եկանք աշխարհից և ստացանք ավետարանի լրիվությունը, մենք դարձանք սելեստիալ փառքի թեկնածուներ. ո՛չ, մենք ավելին ենք քան թեկնածուներ, եթե

հավատարիմ լինենք, քանի որ Տերը տվել է մեզ հավաստիացում, որ մեր հավատարմության միջոցով, մենք կմտնենք սելեստիալ արքայություն։ . . .

. . . Եկեք այնպես ապրենք, որ համոզված լինենք մեր տեղի համար, այսպես մենք կիմանանք մեր ապրած կյանքի միջոցով, որ մենք կմտնենք Նրա ներկայությունը և կբնակվենք Նրա հետ, ստանալով օրհնությունների լրիվությունը, որ նրանց խոստացվել է։ Ո՞վ Վերջին Օրերի Սրբերից կբավարարվի որևէ բանով, որը պակաս կլինի փրկության լրիվությունից, որը խոստացվել է մեզ. . . Անհրաժեշտ է, որ մեր համեստությամբ և ապաշխարության ոգով, առաջ և առաջ շարժվենք, պահելով պատվիրանները մինչև վերջ, քանի որ մեր հույսը և մեր նպատակը հավերժական կյանքն է և դա կյանք է Հոր և Որդու ներկայությամբ, «Եվ սա է յաւիտենական կեանքը», ասել է Տերը, «որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. Եւ նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին» [Հովհաննես ԺԷ.3]։[32]

Ես այժմ կանգնած եմ, այսպես կոչված կյանքի վերջալույսում, գիտակցելով, որ ոչ շատ հեռու ապագայում ես կկանչվեմ հաշիվ տալու իմ մահկանացու կյանքի տնտեսության վերաբերյալ։ . . .

Ես համոզված եմ, որ մենք բոլորս սիրում ենք Տիրոջը։ Ես գիտեմ, որ նա ապրում է և ես անհամբեր սպասում եմ այն օրվանը, երբ ես կտեսնեմ Նրա դեմքը և հուսով եմ կլսեմ Նրա ձայնը ինձ ասելիս. «Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժառանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը» (Մատթ. ԻԵ.34)։

Եվ ես աղոթում եմ, որ սա լինի մեր բոլորիս երջանիկ ճակատագիրը, մեր իսկ ուրույն ժամանակին։[33]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Երբ դուք կարդաք «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» օրագրի արձանագրությունը, մտածեք մի ժամանակի մասին, երբ դուք սփոփանք եք գտել փրկության ծրագրի ձեր վկայությունում: Ինչպե՞ս կարող եք օգնել ընտանիքի որևէ անդամի կամ ընկերոջ ստանալ այդպիսի սփոփանք:
- Ինչպե՞ս կարող են Նախագահ Սմիթի ուսմունքները՝ երկնքում տեղի ունեցած խորհրդի վերաբերյալ, օգնել մեզ, երբ մենք փորձությունների ենք դիմակայում (տես բաժին 1):
- Նախագահ Սմիթը ուսուցանել է, որ «մենք չպետք է աչքից բաց թողնենք այն փաստը, որ [Ադամի և Եվայի անկումը] բերեց օրհնություններ» (բաժին 2): Ինչո՞ւ է ձեր կարծիքով կարևոր հիշել այս ճշմարտությունը: Որո՞նք են այն մի քանի օրհնությունները, որոնք դուք ստացել եք Անկման արդյունքում:
- Բաժին 3–ում, ինչպե՞ս է փոսն ընկած մարդու մասին Նախագահ Սմիթի օրինակը՝ կապված մեր կյանքի հետ: Մտածեք, թե ինչպես է Փրկիչը ազատել ձեզ Իր Քավության միջոցով:
- Ի՞նչ են Նախագահ Սմիթի խոսքերը բաժին 4-ում ակնարկում երկրի վրա մեր կյանքի մասին: Տերն ի՞նչ է տվել մեզ՝ օգնելու այս փորձարկման ժամանակը ապահով անցնելու համար:
- Ինչպե՞ս կարող եք դուք օգնել որևէ մեկին հասկանալ Նախագահ Սմիթի հայտարարությունը բաժին 5–ում, որ «մահը ճիշտ նույնքան կարևոր է, որքան ծնունդը»: Ինչպե՞ս է հարության վարդապետությունն ազդել ձեր կյանքի վրա:
- Ի՞նչ ուղիներով է աշխարհիկ հարստությունը տարբեր «հավերժական ժառանգությունից», որը մենք կարող ենք ստանալ փրկության ծրագրի միջոցով (տես բաժին 6): Ինչպե՞ս կարող է այս տարբերությունների ըմբռնումն օգնել մեզ նախապատրաստվել հավերժական կյանքի համար:

Առնչվող սուրբ գրություններ

Հոբ ԼԸ.4–7, 2 Նեփի 2.15–29; 9.5–27, Ալմա 12.20–35; ՎԵՌՈՒ 19.16–19; Մովսես 5.10–12

Օգնություն ուսուցչին

«Սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերը ուսուցանելիս մեզ օգնելու համար, Եկեղեցին լույս է ընծայել դասագրքեր և այլ նյութեր: Բացատրությունների և այլ տեղեկատվական նյութերի կարիք չկա» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում:* A Resource Guide for Gospel Teaching [1999], 52):

Հղումներ

1. In Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 117–18.
2. "To the Saints in Great Britain," *Ensign,* Sept. 1971, 4.
3. In "Pres. Smith Tells of Parents' Duty," *Church News,* Apr. 3, 1971, 10.
4. Address at the Logan Utah Institute of Religion, Jan. 10, 1971, 3; unpublished manuscript.
5. "Is Man Immortal?" *Improvement Era,* Feb. 1916, 318; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 58.
6. *Elijah the Prophet and His Mission* and *Salvation Universal* (1957), 65–66.
7. In Conference Report, Oct. 1899, 2.
8. "Principles of the Gospel: The Infinite Atonement—Redemption, Salvation, Exaltation," *Deseret News,* Church section, Apr. 22, 1939, 3; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 115.
9. "The Atonement," *Deseret News,* Church section, Mar. 2, 1935, 7; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 122.
10. *Elijah the Prophet and His Mission* and *Salvation Universal,* 79–80.
11. *Seek Ye Earnestly,* comp. Joseph Fielding Smith Jr. (1970), 118–20.
12. "Principles of the Gospel: The Infinite Atonement—Redemption, Salvation, Exaltation," 5; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 123.
13. *Elijah the Prophet and His Mission* and *Salvation Universal,* 80–81.
14. "Principles of the Gospel: The Infinite Atonement—Redemption, Salvation, Exaltation," 5; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 123.
15. *Elijah the Prophet and His Mission* and Salvation Universal, 81.
16. "Purpose and Value of Mortal Probation," *Deseret News,* Church section, June 12, 1949, 21; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 132.
17. Address at the Logan Utah Institute of Religion, Jan. 10, 1971, 3; unpublished manuscript.
18. "The Plan of Salvation," *Ensign,* Nov. 1971, 5.
19. "I Know That My Redeemer Liveth," *Ensign,* Dec. 1971, 26.
20. In Conference Report, Apr. 1965, 11.
21. In Conference Report, Apr. 1964, 107–8.
22. "Purpose and Value of Mortal Probation," 21; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 69.
23. I n "Services for Miss Nell Sumsion," *Utah Genealogical and Historical Magazine,* Jan. 1938, 10–11.
24. "What Is Spiritual Death?" *Improvement Era,* Jan. 1918, 191–92; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 216–17.
25. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 5: 103; italics removed.
26. I The Law of Chastity," *Improvement Era,* Sept. 1931, 643; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 85–86.
27. Կատարելագործման ուղին(1931), 21–22.
28. *Sealing Power and Salvation,* Brigham Young University Speeches of the Year (Jan. 12, 1971), 2.
29. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 2: 287; italics removed.
30. In Conference Report, Apr. 1942, 26; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 175.
31. *Կատարելագործման ուղին*23:
32. In Conference Report, Apr. 1922, 61–62:
33. "Let the Spirit of Oneness Prevail," *Ensign,* Dec. 1971, 136.

«Ամենապանը ընտանեակենտրոն է. ընտանիքում է պետք ապրել ամենապանով»։

Զորացնել և պահպանել ընտանիքը

«Տիրոջ կամքն է զորացնել և պահպանել ընտանեկան միավորը»:

Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հայտարարել է. «Ընտանիքը ամենակարևոր կազմակերպությունն է ժամանակի, թե հավերժության համար»:[1] Ոչ մի տեղ նա այնքան հստակորեն չի ուսուցանել, ինչպես իր սեփական տանը, օրինակ հանդիսանալով որպես սիրող ամուսին, հայր և պապ: Չնայած որպես Առաքյալ իր զբաղված օրացույցին, նա միշտ ժամանակ էր գտնում իր ընտանիքի համար, «փոխհատուցել[ով] մեկուսի օրերի համար՝ կրկնակի չափով սեր ցույց տալով նրանց, երբ տանն էր լինում»:[2]

Նախագահ Սմիթի երկրորդ կնոջը՝ Էթելին, մի անգամ հարցրեցին. «Չէի՞ք պատմի մեզ ինչ-որ բան այն մարդու մասին, որին դուք գիտեք»: Տեղյակ լինելով, որ շատ Եկեղեցու անդամներ տեսնում էին իր ամուսնուն միանգամայն խոժոռ մարդ, նա պատասխանեց.

«Դուք խնդրում եք ինձ պատմել այն մարդու մասին, որին ես գիտեմ: Ես հաճախ եմ մտածել, երբ նա կյանքից հեռանա մարդիկ կասեն. «Նա շատ լավ մարդ է, անկեղծ, վարդապետություններին ենթարկվող և այլն»: Նրանք կխոսեն նրա մասին ինչպես հասարակությունը գիտի նրան, բայց այն մարդը, որին նրանք պատկերացնում են, շատ տարբեր է այն մարդուց, որին ես գիտեմ: Մարդը, որին ես գիտեմ, շատ բարի է, սիրող ամուսին և հայր, որի մեծագույն ցանկությունն է կյանքում իր ընտանիքին երջանկացնելը լիովին մոռանալով իրեն այդ ջանքերը գործադրելիս: Նա այն մարդն է, որը քնացնում է անհանգիստ

երեխային, ով փոքրիկների քնելուց առաջ պատմում է պատմություններ, ով երբեք շատ հոգնած չէ կամ խիստ զբաղված մինչև ուշ գիշեր նստել կամ վեր կենալ վաղ առավոտյան օգնելու մեծ երեխաներին լուծելու դժվարին դպրոցական խնդիրներ: Երբ որևէ մեկս հիվանդանում է, մարդը, որին ես գիտեմ քնքշորեն հոգ է տանում տանջվածին և խնամում նրան: Իրենց հոր համար է, որ նրանք լաց են լինում, զգալով, որ նրա ներկայությունը սպեղանի է իրենց ցավերին: Նրա ձեռքերն են, որ կապում են վերքերը, նրա բազուկները, որոնք քաջալերում են տառապյալին, նրա ձայնը, որը մեղմորեն ուղղում է նրանց, երբ նրանք սխալվում են, մինչև որ նրանք ցանկանում են անել այն բաները, որոնք կերջանկացնեն նրան: . . .

Մարդը, որին ես գիտեմ անեսասեր է, չբողոքող, հոգատար, լրջամիտ, կարեկցող, անելով ամեն բան, որ իր ուժում է՝ դարձնելու կյանքը գերագույն ուրախություն իր սիրելիների համար: Սա է այն մարդը, որին ես գիտեմ»:[3]

Նախագահ Սմիթի երեխաները կիսվել են իր ընտանիքը զորացնելու ու պահպանելու և «կյանքը գերագույն ուրախություն դարձնելու» նրա ջանքերի օրինակներով: Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի մի կենսագրականում համահեղինակներ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ կրտսերը և Ջոն Ջ. Ստյուարտը ընդգրկել են հետևյալ վերհուշը. «Նրա երեխաների համար երջանիկ օր էր, երբ նրանք տեսնում էին, թե ինչպես էր իրենց հայրը հագնում գոգնոցը և սկսում մեծ քանակությամբ կարկանդակներ պատրաստել: Չամիչով, խնձորով և համեմունքներով լցոնախառնուրդը նրա սիրելին էր: Նա պատրաստում էր իր իսկ լցոնի խառնուրդը: Բայց նա նաև ռիսկի էր դիմում ուրիշ տեսակի՝ խնձորի, կեռասի, դեղձի և դդումի կարկանդակներ պատրաստել: Նրա կարկանդակներ պատրաստելու ջանքերը դառնում էին ընտանեկան նախագիծ, երբ երեխաներն ուղարկվում էին այս և այն կողմ՝ օգնելու հավաքել անհրաժեշտ գործիքներն ու բաղադրամասերը: Մեծ փռում թխվող կարկանդակների համեղ գրգռիչ բուրմունքը դարձնում էին սպասումը երջանիկ ակնկալիքի ժամ: Դրանց ուշադրությամբ հետևում էին, որպեսզի ժամանակից շատ շուտ կամ ժամանակից շատ ուշ չհանեյին: Այդ ընթացքում Էթելը մեծ քանակությամբ տնական պաղպաղակ էր պատրաստում, իսկ փոքրիկները հերթով պտտում էին պաղպաղակի սարքի բռնակը:[4]

Դուգլաս Ա. Սմիթն ասում է, որ նա և իր հայրը «հիանալի փոխհարաբերություն» ունեին: Նա պատմել է զբաղմունքերի օրինակներ, որոնցից նրանք բավականություն էին ստանում միասին անելով. «Մենք սովորություն ունեինք ժամանակ առ ժամանակ բռնցքամարտել կամ առնվազն ձևացնել, որ բռնցքամարտում էինք: Ես խիստ մեծ հարգանք ունեի՝ նրան հարվածելու համար, իսկ նա խիստ մեծ սեր՝ ինձ հարվածելու համար. . . Դա ավելի նման էր վարժանքի: Մենք սովորաբար շախմատ էինք խաղում, և ես ուրախանում էի, երբ նրան հաղթում էի: Այժմ, երբ ետ եմ նայում, զգում եմ, որ գուցե նա դիտավորյալ էր պարտվում:[5]

Ամելիա Սմիթ Մակքոնկին հիշում է. «Գրեթե զվարճություն էր հիվանդ լինելը, որովհետև նա խիստ հատուկ ուշադրություն էր դարձնում. . . Նա զվարճացնում էր մեզ Էդիսոնի ֆոնոգրաֆի վրա լավ երաժշտություն միացնելով: Ի հրճվանք մեզ, նա, սովորաբար, պարում էր երաժշտության տակ կամ համաքայլ շարժվում ողջ սենյակով մեկ և նույնիսկ փորձում երգել. . . Նա բերում էր մեզ մեծ, գեղեցիկ քաղցր նարինջներ և նստելով մահճակալին կլպում էր դրանք և ամեն անգամ մի կտոր տալիս: Նա պատմում էր մեզ պատմություններ իր մանկությունից կամ թե ինչպես էր իր հայրը հոգ տանում իր մասին, երբ նա էր հիվանդ լինում: Եթե անհրաժեշտ էր լինում նա մեզ օրհնություն էր տալիս»:[6] Ամելիան նաև հայտնել է իր երեխաներին կարգավարժելու իր հոր մեթոդը. «Եվ եթե մեզանից որևէ մեկը կարիք ուներ խրատվելու, ինչ-որ սխալ վարքի համար, նա ուղղակի դնում էր ձեռքերը մեր ուսերին և նայելով մեր աչքերի մեջ՝ իր ուրույն խիստ հայացքով ասում էր. «Ես ուզում եմ, որ իմ բալիկները լավը լինեն»: Ոչ մի խոսք կամ այլ պատիժ չէր կարող երբևէ ավելի արդյունավետ լինել»:[7]

Նախագահ Սմիթի սերը և ուշադրությունը իր երեխաներից տարածվեց դեպի իր թոռները: Նրա թոռ Հոյթ Վ. Բրյուսթեր կրտսերը պատմել է մի դեպքի մասին, երբ միսիոներ էր Նիդեռլանդներում, նրան թույլատրվել էր մասնակցել Անգլիայի Լոնդոնի Տաճարի նվիրագործմանը 1958թ.: Երբ նա և մյուս միսիոներները հավաքվել էին դահլիճում, նրա պապը տեսել էր նրան: Հոյթը հետագայում հիշում է. «Առանց վայրկյան իսկ տատանվելու նա ոտքի ցատկեց իր աթոռից և տարածելով իր ձեռքերը, շարժվեց դեպի ինձ: Այդ պահին ես չէի տեսնում Ջոզեֆ

Ֆիլդինգ Սմիթին՝ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահին. . . այլ պապիկի, որը տեսավ իր թոռներից մեկին, որի հանդեպ նա մեծ սեր էր զգում: Ես առանց տատանվելու թողեցի մեր խումբը և նետվեցի դեպի ամբիոնը, որտեղ նա գրկեց ինձ և համբուրեց ինձ այդ ողջ հանդիսավոր ժողովի առջև: Դա ինձ համար իմ կյանքի ամենասրբազան և հիշարժան պահերից է:[8]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Ընտանիքը ամենակարևոր կազմակերպությունն է ժամանակի և հավերժության համար:

Թույլ տվեք ուղղակի հիշեցնել ձեզ, թե որքան կարևոր է ընտանիքի միավորը ընդհանրապես մեր Երկնային Հոր ծրագրում: Փաստորեն Եկեղեցու կազմակերպությունը իրականում գոյություն ունի օգնելու ընտանիքին և դրա անդամներին հասնելու վեհացման:

Ընտանեկան միավորը և ընտանիքի նվիրվածությունը ավետարանին այնքան կարևոր է, որ հակառակորդն իր ուշադրության մեծ մասը ուղղել է մեր հասարակության մեջ ընտանիքի կործանմանը: Ամեն կողմից հարձակում է գործվում ընտանիքի հիմնական մաքրության վրա, որը հիմքն է այն ամենի, ինչ բարի է և ազնիվ կյանքում. . . Արհեստական վիժման օրենքների թողտվության մեծացումը ողջ աշխարհով մեկ առաջ է բերում կյանքի սրբազանության հանդեպ գոյություն ունեցող արհամարհանք: Ընտանիքները քայքայվում են անօրինական թմրադեղերի աճող օգտագործումից և օրինական թմրադեղերի չարաշահումից: Իշխանության հանդեպ արհամարհանքը ավելի ու ավելի շատ երիտասարդ մարդկանց մոտ, սովորաբար, սկսվում է տներում տիրող անհարգալից վերաբերմունքով և անհնազանդությամբ: . . .

Երբ չարի ուժերը հարձակվում են անձնավորության վրա՝ կտրելով նրան իր ընտանեկան արմատներից, Վերջին Օրերի Սրբերի ծնողների համար վճռորոշ է դառնում պահպանել և զորացնել ընտանիքը: Կարող են հավանաբար լինել մի քանի շատ ուժեղ անձնավորություններ, ովքեր կարող են գոյատևել առանց ընտանիքի աջակցության, բայց մեզանից շատերը

կարիք ունեն սիրո, ուսուցման և ընդունելության, որոնք գալիս են նրանցից, ովքեր շատ խորապես են հոգ տանում։[9]

Կան որոշ հին ճշմարտություններ, որոնք կլինեն ճշմարտություններ, որքան որ աշխարհը կանգուն է, և որոնք ոչ մի առաջընթացի մեծություն չի կարող փոխել։ Դրանցից մեկն այն է, որ ընտանիքը (կազմակերպություն, որը բաղկացած է հորից, մորից և երեխաներից) բոլոր բաների հիմքն է Եկեղեցում, մյուս բանն այն է, որ մաքուր և առողջ ընտանեկան կյանքի դեմ մեղքերը նրանք են, որոնք բոլոր մյուսներից առաջ, անկասկած, ամենախիստ ձևով վերջում կթափվեն ազգերի վրա, որոնցում դրանք տեղի են ունենում։ . . .

Քանզի մարդկանց աշխատանքի և հարստության հարցից ավելի կարևոր է այն հարցը, թե ինչպես են նրանք վարում իրենց ընտանեկան կյանքը։ Բոլոր մյուս բաները քիչ կարևորություն ունեն, քանի դեռ կան իսկական ընտանիքներ և քանի դեռ նրանք, ովքեր այդ օջախներում են, կատարում են իրենց պարտականությունը միմյանց հանդեպ։[10]

Չկա արդար օջախին փոխարինող ոչ մի բան։ Դա կարող է այդպես չհամարվել աշխարհում, բայց դա պարտավոր է այդպես լինի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում։ Ընտանիքն է միավորը Աստծո թագավորությունում։[11]

Ընտանիքն է ամենակարևոր կազմակերպությունը ժամանակի և հավերժության համար. . . Տիրոջ կամքն է զորացնել և պահպանել ընտանեկան միավորը։ Մենք աղերսում ենք հայրերին զբաղեցնել իրենց օրինավոր տեղը որպես տան գլխավոր։ Մենք խնդրում ենք մայրերին հաստատել և աջակցել իրենց ամուսնիններին և լինել լույս իրենց երեխաների համար։[12]

Ավետարանը ընտանեակենտրոն է. ընտանիքում է պետք ապրել ավետարանով։ Այստեղ է, որ մենք ստանում ենք մեր մեծագույն և ամենակարևոր վարժեցումը, երբ մենք ձգտում ենք ստեղծել մեզ համար հավերժական ընտանիքի միավորը մեր Հայր Աստծո ընտանիքի օրինակով։[13]

«Փաստորեն, Եկեղեցու կազմակերպությունը իրականում զորություն ունի օգնելու ընտանիքին և դրա անդամներին՝ հասնելու վեհացման»:

2

Տերը հաստատել է ընտանիքը հարատևելու հավերժորեն:

Մենք իմացանք, որ ամուսնությունը հավերժական սկզբունք է, որը կարգվել է մինչև աշխարհի հիմնադրումը և հաստատվել այս երկրի վրա, նախքան մահը եկավ այստեղ: Մեր առաջին ծնողներին պատվիրվեց բազմանալ և լցնել աշխարհը: Դա, բնականաբար, նշանակում է, որ ընտանիքի կազմակերպությունը նույնպես նախատեսված էր հավերժական լինել: Այս երկրի համար նախապատրաստված ծրագրում սելեստիալ աշխարհում կառավարող օրենքները դարձան դրա հիմքը: Տիրոջ մեծ գործն ու փառքն է՝ «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Միակ ուղին, որով կարելի է սա անել՝ ամուսնության միջոցով է, և, փաստորեն, ընտանիքն է վեհացածների մեջ հավերժական կարգը և եղել են աշխարհներ առանց վերջի:[14]

Այս աշխարհի վրա մարդուն կառավարելու համար տրված ծրագիրը նույնանման է Աստծո թագավորությունում գործող օրենքին։ Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել ավելի մեծ վշտի աղբյուր, քան հավերժական աշխարհում առանց հոր կամ մոր կամ առանց երեխաների պահանջի թողնված լինելը։ Այնպիսի մի ազգի վերաբերյալ միտքը՝ առանց ընտանիքի միավորի հիմնարար հիմքի, որտեղ բոլոր քաղաքացիները համեմատաբար օտարականներ են միմյանց հանդեպ և որտեղ չկա բնական սեր, որտեղ ընտանեկան կապերը չեն միացնում խմբերին միմյանց, սոսկալի մի բան է։ Այսպիսի վիճակը կարող է տանել դեպի միայն մեկ վախճանի՝ անիշխանության և անետացման։ Միթե՞ խելամիտ չէ հավատալ նույն բանի ճիշտ լինելուն Աստծո թագավորության հետ կապված։ Եթե այդ թագավորությունում ընտանեկան կապեր չլինեին և բոլոր տղամարդիկ և կանայք լինեին «հրեշտակներ» առանց բնական ազգակցական կապերի, ինչպես հավատում են շատ մարդիկ, արդյոք կարող է լինել դա երջանկության մի վայր, այսինքն՝ երկինք։[15]

Տիրոջ տաճարում զույգը գնում է կնքվելու կամ ամուսնանալու ժամանակի և ողջ հավերժության համար։ Երեխաները, որոնք ծնվում են այդ միությունից, կլինեն այդ հոր և մոր երեխաները, ոչ միայն մահկանացու կյանքում, այլ ողջ հավերժությունում և նրանք դառնում են Աստծո ընտանիքի անդամներ երկնքում և երկրի վրա, ինչպես խոսվել է Պողոսի կողմից [տես Եփեսացիս Գ.14–15]։

. . . Այդ երեխաները, որոնք ծնվում են նրանցից, իրավունք ունեն հոր և մոր ընկերակցության, և հայրն ու մայրը պարտավորությունների տակ են Հավերժական Հոր առջև հավատարիմ լինել միմյանց և մեծացնել այդ երեխաներին լույսի և ճշմարտության մեջ, որպեսզի նրանք կարողանան գալիք հավերժություններում լինել մեկ՝ ընտանիք Աստծո մեծ ընտանիքի ներսում։[16]

Մենք պետք է հիշենք՝ որպես Վերջին Օրերի Սրբեր, որ սելեստիալ արքայությունից դուրս չկա ընտանեկան կազմակերպություն [մահից հետո]։ Այդ կազմակերպությունը պահվում է նրանց համար, ովքեր հոժար են մնալ յուրաքանչյուր ուխտում և յուրաքանչյուր պարտավորությունում, որոնք մենք կանչվում ենք ընդունելու մինչ մենք ճամփորդում ենք այս մահկանացու կյանքում։[17]

Աստծո թագավորությունը կլինի մի մեծ ընտանիք: Մենք կոչում ենք միմյանց եղբայրներ և քույրեր: Հենց գործով մենք դառնում ենք ժառանգակիցներ Հիսուս Քրիստոսի հետ Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով [տես Հռովմայեցիս Ը.16–17], Աստծո որդիներ ու դուստրեր և իրավունք ունենք Նրա թագավորության օրհնությունների լրիվությանը, եթե կամենանք ապաշխարել և պահել պատվիրանները:[18]

Հավերժական կյանքի հույսը, ներառյալ ընտանիքի անդամների վերամիավորումը, երբ գա հարությունը, բերում է սրտին ավելի մեծ սեր և քնքշանք ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանդեպ: Այդ հույսով ամուսինները միտված են սիրել իրենց կանանց ավելի ուժեղ և ավելի սուրբ սիրով, իսկ կանայք էլ նույն ձևով սիրում են իրենց ամուսիններին: Քնքուշ զգացումները և և հոգատարությունը ծնողների կողմից իրենց երեխաների հանդեպ աճում է, քանի որ երեխաները դառնում են նրանց համար թանկագին, միացած սիրո և երջանկության կապերով, որը չի կարող կոտրվել:[19]

3

Մենք զորացնում ենք և պահպանում մեր ընտանիքները, երբ միասին ժամանակ ենք անցկացնում, սիրում միմյանց և միասին ապրում ավետարանով:

Վերջին Օրերի Սրբի տան հիմնական ֆունկցիան կայանում է նրանում, որ ապահովի որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ աշխատի ստեղծել մթնոլորտ և պայմաններ, որում բոլորը կարող են աճել դեպի կատարելություն: Ծնողների համար սա պահանջում է ժամանակի և էներգիայի նվիրաբերում, որոնք շատ հեռու են միայն իրենց երեխաների ֆիզիկական կարիքները հոգալուց: Երեխաների համար սա նշանակում է վերահսկել բնական միտումը դեպի եսասիրություն:

Արդյոք դուք նվիրաբերո՞ւմ եք ձեր լավագույն ստեղծագործական էներգիան հասարակության ամենակարևոր միավորին՝ ընտանիքին, թե ձեր հարաբերությունը ձեր ընտանիքի հետ, պարզապես, ամենօրյա կրկնվող, չհատուցվող մասն է ձեր կյանքի: Ծնողն ու երեխան պետք է հոժար լինեն ընտանեկան պարտականությունները առաջինը դնել, որպեսզի հասնեն ընտանիքի վեհացմանը:[20]

Օջախն. . . այն արտադրամասն է, որտեղ մարդկային բնավորություններ են կառուցվում, իսկ թե ինչ ձևով են դրանք ձևավորվում, կախված է այն փոխհարաբերությունից, որը գոյություն ունի ծնողների և երեխաների միջև: Օջախը չի կարող լինել այն, ինչ պետք է լինի մինչև այս փոխհարաբերությունները պատշաճ բնույթի չլինեն: Արդյոք դրանք այդպե՞ս են թե ոչ, կախված է իրականում ինչպես ծնողներից, այնպես էլ երեխաներից, բայց ավելի շատ ծնողներից: Նրանք պետք է անեն իրենց լավագույնը:[21]

«Օ՜ֆ, հեռու գնա և թող ինձ հանգիստ, ես գլխացավանքի ժամանակ չունեմ», ասաց մի շտապող, անհամբեր մայր իր փոքրիկ երեք տարեկան դստերը, որը փորձում էր օգնել որոշակի տնային հանձնարարություն կատարել. . . Օգնելու ցանկությունը ծնվում է յուրաքանչյուր նորմալ երեխայի հետ և ծնողներն իրավունք չունեն բողոքելու: Չի կարող լինել այնպիսի բան ինչպես տաղտկալի տնային գործեր, երբ բոլորն օգնում են հանձնարարությունները կատարել և աշխատելով միասին իրականացնելով այդ պարտականությունները գալիս է ամենաքաղցր ընկերակցությունը, որ կարելի է ճաշակել:

Եթե ես առաջարկելու լինեի մի բան, որը կարծում եմ ծնողների մեծամասնության մոտ բացակայում է, դա մեր երեխաներին համակրանքով ըմբռնելն է: Ապրեք երեխաների հետ, հետևեք նրանց ուղիներին. . . Իմացեք այն ամենը, ինչ գրավում է երեխաների հետաքրքրությունը, նրանց հետ եղեք ընկերական:[22]

Մենք փորձում էինք ներգործել ծնողների վրա, որ նրանք ավելի շատ ուշադրություն դարձնեին իրենց երեխաներին, ունենալով մի քիչ ավելի շատ ավետարանի հոգին իրենց տներում, մի քիչ ավելի շատ միաբանություն և մի քիչ ավելի շատ հավատք, մի քիչ ավելի շատ կրոնական պատասխանատվություն, հոգևորով հայրերի կողմից, նաև մայրերի, ավելի շատ ավետարանի ուսուցում տանը:[23]

Եկեղեցու ծնողներին մենք ասում ենք. Սիրեք միմյանց ողջ ձեր սրտով: Պահեք բարոյական օրենքը և ապրեք ավետարանով: Դաստիարակեք ձեր երեխաներին լույսով և ճշմարտությամբ, ուսուցանեք նրանց ավետարանի փրկարար ճշմարտությունները և դարձրեք ձեր տունը երկինք երկրի վրա՝

մի տեղ որտեղ Տիրոջ Հոգին կարող է բնակվել և որտեղ արդարակեցությունը կարող է գահ բարձրացվել յուրաքանչյուր անդամի սրտում:[24]

Աղոթում եմ, որ մեր Երկնային Հայրը տա մեզ բոլորիս ուժ՝ հասնելու մեր իսկական ներուժին: Ես խնդրում եմ, որ Նրա Հոգին լինի Եկեղեցու տների վրա, որ այնտեղ սեր և ներդաշնակություն լինի: Թող մեր Հայրը պահպանի և վեհացնի մեր ընտանիքները:[25]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Երբ դուք կարդաք «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնի պատմվածքները, մտածեք, թե ինչպես Նախագահ Սմիթի օրինակը կարող է ուղեցույց լինել ձեր կյանքում: Մտածեք ուղիների մասին, թե ինչպես կարող եք անհատապես բարեփոխվել ուժեղացնելու՝ ընտանեկան փոխհարաբերությունները:
- Մտածեք ընտանիքի կարևորության մասին, ինչպես ներկայացված է բաժին 1-ում: Ի՞նչ եք անում՝ ամրացնելու ձեր ընտանիքը աշխարհի բացասական ազդեցությունների դեմ:
- Նախագահ Սմիթը խոսել է «հավերժական կյանքի հույսի մասին, ներառյալ ընտանիքի անդամների վերամիավորման մասին, երբ գա հարությունը» (բաժին 2): Ինչպե՞ս է այս հույսն ազդում ընտանիքի անդամների հետ ձեր փոխհարաբերությունների վրա:
- Բաժին 3-ում Նախագահ Սմիթը հարցնում է երեք հոգեխույզ հարցեր: Հարցրեք այս հարցերը ձեր մտքում: Երբ կարդաք այս բաժինը, մտածեք, թե ինչ փոփոխություններ դուք կարող եք կատարել ձեր կյանքում, որը կարող է բարելավել ձեր տան զգացողությունը:

Առնչվող սուրբ գրություններ

Առակաց ԻԲ.6, 1 Նեփի 8.37, ՎևՈՒ 88.119, 93.40–50, տես նաև «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին»:

Օգնություն ուսուցչին

«Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին [գլխից] և կարդալ այն մտքում: Հրավիրեք նրանց հավաքվել երկու կամ երեք հոգուց բաղկացած խմբերով, ովքեր ընտրել են նույն բաժինը և քննարկեք, թե ինչ են նրանք սովորել» (այս գրքի X էջից):

Հղումներ

1. "Counsel to the Saints and to the World," *Ensign,* July 1972, 27.
2. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 14.
3. Ethel Smith, in Bryant S. Hinckley, "Joseph Fielding Smith," *Improvement Era,* June 1932, 459.
4. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 228.
5. Douglas A. Smith, in D. Arthur Haycock, *Exemplary Manhood Award,* Brigham Young University Speeches of the Year (Apr. 18, 1972), 5.
6. Amelia Smith McConkie, "Joseph Fielding Smith," *Church News,* Oct. 30, 1993, 10.
7. Amelia Smith McConkie, "Joseph Fielding Smith," 10.
8. In Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 254.
9. In "Message from the First Presidency," *Ensign,* Jan. 1971, inside front cover and page 1.
10. "Our Children—'The Loveliest Flowers from God's Own Garden,'" *Relief Society Magazine,* Jan. 1969, 4.
11. In Conference Report, Oct. 1948, 152.
12. "Counsel to the Saints and to the World," 27.
13. "Mothers in Israel," *Relief Society Magazine,* Dec. 1970, 886.
14. *Կատարելագործման ուղին*251:
15. "A Peculiar People," *Deseret News,* Church section, Apr. 2, 1932, 6; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2: 65–66.
16. In Conference Report, Apr. 1961, 49.
17. In Conference Report, Oct. 1948, 153.
18. In Conference Report, Apr. 1959, 24.
19. *The Way to Perfection* 258:
20. In "Message from the First Presidency," *Ensign,* Jan. 1971, 1.
21. "Our Children—'The Loveliest Flowers from God's Own Garden,'" 6.
22. "Our Children—'The Loveliest Flowers from God's Own Garden,'" 6–7.
23. *Take Heed to Yourselves!* (1966), 354.
24. "Counsel to the Saints and to the World," 27.
25. In "Message from the First Presidency," *Ensign,* Jan. 1971, 1.

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրում էր Վերջին Օրերի Սրբերին ապաշխարության կանչելու իր պատճառը. «Ես սիրում եմ Եկեղեցու անդամներին»:

Հավատք և ապաշխարություն

«Այն, ինչի մենք կարիք ունենք Եկեղեցում, ինչպես նաև Եկեղեցուց դուրս, ապաշխարությունն է: Մենք կարիք ունենք ավելի շատ հավատքի և ավելի շատ վճռականության Տիրոջը ծառայելու համար»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ուսուցանել է. «Մեղքերի ներումը գալիս է հավատքի և անկեղծ ապաշխարության միջոցով»:[1] Նա ասել է, որ «անհարաժեշտ է, որ ոչ թե պարզապես մենք հավատանք, այլ որ ապաշխարենք», և նա ուսուցանել է նաև, որ երբ մենք կատարում ենք բարի գործեր հավատքով մինչև վերջ, մենք «կստանանք հավատարիմների վարձքը և մի տեղ Աստծո սելեստիալ արքայությունում»:[2] Բոլոր մարդկանց համար այս վարձքը ստանալու ցանկությամբ, նա վկայեց Հիսուս Քրիստոսի մասին և քարոզեց ապաշխարություն Իր ողջ ծառայության ընթացքում:

Որպես Առաքյալ իր ծառայության վաղ շրջանում նա ասել է. «Իմ կարծիքով, ես համարել եմ իմ առաքելությունը, Սիոնի ցցերում իմ ուղևորությունների ժամանակ Տիրոջ Հոգու կողմից այդպես տպավորված լինելով, որ ասեի մարդկանց, որ *այսօր* է ապաշխարության օրը և կոչ անել Վերջին Օրերի Սրբերին հիշել իրենց ուխտերը, խոստումները, որ իրենք արել են Տիրոջ հետ, պահել Նրա պատվիրանները և հետևել Իսրայելի երեցների՝ Աստծո մարգարեների ուսմունքներին և հրահանգներին, ինչպես որ դրանք գրված են այս սուրբ գրություններում: Բոլոր բաներում մենք պետք է քայլենք խոնարհաբար և զգուշորեն Տիրոջ առջև, որ մենք կարողանանք օրհնվել և առաջնորդվել Նրա Սուրբ Հոգու կողմից: Կարծում եմ սա նախազգուշացման օր է: Սա նախազգուշացման ժամանակ է եղել այն օրվանից, երբ մարգարեն առաջին անգամ հայտնություն ունեցավ երկնքից, որ ավետարանը պետք է վերականգվեր:[3]

Մի կիրակի հաղորդության ժողովի ժամանակ Նախագահ Սմիթը պատմեց համայնքին, թե ինչու էր նա խոսում նախազգուշացնող ձայնով: Նրա որդին, որը մասնակցում էր ժողովին, հետագայում գրեց. «Ես պարզ հիշում եմ դիտողություններից մի քանիսը, որ [հայրս]արեց այդ առթիվ: «Ո՞վ է ձեր ընկերը կամ ո՞վ է ձեզ ամենաշատը սիրում» հարցրեց նա ժողովի մասնակիցներին: «Մարդը, ով ասում է ամեն ինչ լավ է Սիոնո՞ւմ, որ բարգավաճումը մոտակա անկյունում է, թե մարդը, ով նախազգուշացնում է ձեզ այն աղետների և դժվարությունների մասին, որոնք խոստացված են, մինչև ավետարանի սկզբունքներով չապրեն: Ես ուզում եմ, որ իմանաք, որ ես սիրում եմ Եկեղեցու անդամներին և ես չեմ ուզում, որ նրանցից որևէ մեկը մեղադրանքով մատնացույց անի ինձ, երբ մահկանացու գոյությունից հետո մենք վարագույրի այն կողմն անցնենք և ասի. «Եթե միայն դու ինձ նախազգուշացրած լինեիր, ես չէի լինի այս դժվարին կացության մեջ»: Եվ այսպիսով, ես բարձրացնում եմ նախազգուշացնող ձայն հույսով, որ եղբայրներս և քույրերս կարողանան նախապատրաստվել փառքի արքայության համար:[4]

Նրանք, ովքեր սերտորեն աշխատում էին Նախագահ Սմիթի հետ, տեսնում էին, որ իր խոժոռ նախազգուշացումների ետևում մեղքի մեջ մաքառող ժողովրդի հանդեպ գորովալից մտահոգությամբ մարդ էր կանգնած: Երեց Ֆրենսիս Մ. Գիբբոնսը, որը ծառայում էր որպես քարտուղար Առաջին Նախագահությունում, հաճախ ներկա էր գտնվում, երբ Նախագահ Սմիթը Եկեղեցու կարգապահությանը վերաբերող հարցեր էր քննարկում: Երեց Գիբբոնսը հիշում է. «Նրա որոշումները միշտ ընդունվում էին բարությամբ և սիրով և մեծագույն ողորմածությամբ, որոնք հանգամանքները կարող էին արդարացնել: Նրա համար անսովոր չէր ասել դժվարին որևէ դեպքի հանգամանքներն ուսումնասիրելուց հետո. «Ինչո՞ւ մարդկ իրենց լավ չեն պահում»: Սա չէր ասվում մեղադրելով կամ դատապարտության ձևով, այլ տխրությամբ և ափսոսանքով»:[5] Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը, որը ծառայում էր Նախագահ Սմիթի հետ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, ասել է. «Շատ անգամներ ենք մենք ասել, քանի որ Տասներկուսը կլինեն Իսրայելի դատավորները, մեզանից յուրաքանչյուրը երջանիկ կլիներ ընկնել նրա ձեռքը, քանի որ նրա դատաստանը կլինի բարի, ողորմածությամբ լի,

արդար, և սուրբ»:[6] Երբ Նախագահ Սմիթը եպիսկոպոսներ էր կարգում, նա հաճախ խորհուրդ էր տալիս. «Հիշեք ամենքն էլ թուլություններ ունեն և կա առնվազն երկու տարբերակ յուրաքանչյուր դեպքի համար: Եթե դատելիս սխալ կատարեք, թող որ ձեր սխալը լինի սիրո և ողորմածության տարբերակով»:[7]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոսը:

Մեր հավատքը կենտրոնացած է Տեր Հիսուս Քրիստոսի վրա և Նրա միջոցով՝ Հոր վրա: Մենք հավատում ենք Քրիստոսին, ընդունում Նրան որպես Աստծո Որդի, և վերցնում Նրա անունը մեզ վրա մկրտության ջրերում:[8]

Թող ձեր մտքերում ամենից վեր այժմ և բոլոր ժամանակներում լինի այն, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, ով աշխարհ եկավ վայր դնելու իր կյանքը, որ մենք ապրենք: Դա է ճշմարտությունը և դա էական է: Դրա վրա է կառուցված մեր հավատքը: Այն չի կարող կործանվել: Մենք պետք է հարենք այս ուսմունքին, անկախ աշխարհի ուսմունքներից և մարդկանց տեսակետներից, քանի որ սա կարևորագույնն է, սա էական է մեր փրկության համար: Տերը փրկագնեց մեզ Իր արյամբ, Նա տվեց մեզ փրկություն՝ ապահովեց և կա այս պայմանը, որը մենք չպետք է մոռանանք, որ մենք պետք է պահենք Նրա պատվիրանները և միշտ հիշենք Նրան: Եթե մենք դա անենք, մենք կփրկվենք, մինչդեռ մարդկանց գաղափարները և հիմարությունը կոչնչանա երկրի վրայից:[9]

Մենք հավատքով ենք գալիս դեպի Աստված: Եթե չհավատայինք Տեր Հիսուս Քրիստոսին, եթե հավատք չունենայինք Նրա հանդեպ կամ Նրա քավության հանդեպ, մենք միտված չէինք լինի ուշադրություն դարձնել Նրա պատվիրաններին: Այդ հավատքի շնորհիվ է, որ մենք ունենք, որ բերվել ենք ներդաշնակության Նրա ճշմարտության հետ և ունենք ցանկություն մեր սրտերում՝ ծառայելու Նրան: . . .

Ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոս և իհարկե մենք չենք պատրաստվում ունենալ

հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս առանց հավատք ունենալու Նրա Հոր հանդեպ։ Ուրեմն, եթե հավատք ունենք առ Հայր Աստված և Որդին և առաջնորդվում ենք Սուրբ Հոգով, ինչպես որ պարտավոր ենք, մենք հավատք կունենանք Տիրոջ ծառաների հանդեպ, որոնց միջոցով Նա խոսել է։[10]

2

Հավատք նշանակում է գործ։

«Հավատքը բոլոր գործերի շարժիչ ուժն է» [Lectures on Faith, lecture 1]։ Եթե կանգ առնեք մտածելու այդ մասին մի պահ, կարծում եմ դուք կհամաձայնվեք, որ դա բացարձակապես ճիշտ է ինչպես աշխարհիկ բաներում այնպես էլ հոգևոր։ Այն ճշմարիտ է մեզ համար մեր սեփական գործողություններում ինչպես նաև Աստծո հետ գործերում։ . . .

«Հավատքն առանց գործերի մեռած է» [Հակոբոս Բ.26]— այլ խոսքով ասած, այն գոյություն չունի։ «Իմ կարծիքով Հակոբոսի միտքը հստակորեն սա է նշանակում. «Դուք ցույց եք տալիս ձեր հավատքը առանց ձեր գործերի և ոչ մի արդյունք չի լինի, բայց ես ցույց կտամ ձեզ իմ հավատքը իմ գործերով և ինչ-որ բան կիրագործվի» [տես Հակոբոս Բ.18]։ Հավատք նշանակում է գործ։ . . . Հավատքն, այդ պատճառով, ավելի ուժեղ է, քան համոզմունքը։ . . .

Հավատքն Աստծո պարգև է։ Ամեն բարի բան Աստծո պարգև է։ Դա մի ուսմունք է սուրբ գրություններից, ինչպես գտնում ենք Եբրայեցիս 11–րդ գլխում, —այդ գլուխը շատ հրաշալի ատենախոսություն է հավատքի վերաբերյալ, — [և] այն հայտնություններում, որ Տերը տվել է մեզ Վարդապետություն և Ուխտերում և մյուս սուրբ գրություններում։ Հավատքը չի կարող ձեռք բերվել անգործությամբ, ո՛չ անտարբերությամբ, ո՛չ էլ անգործուն հավատամքով։ Պարզապես հավատք ձեռք բերելու ցանկությունը ավելի շատ հավատք չի բերի, ինչպես որ երաժշտությունում կամ նկարչությունում ավելի հմտանալու ցանկությունը առաջ չի բերի փորձվածություն այս բաներում առանց խելամիտ գործողությունների։ Ահա թե որտեղից է գալիս մեր դժբախտությունը։ Մենք վկայություն ենք ստանում Ավետարանի մասին, մենք հավատում ենք Ջոզեֆ Սմիթին, մենք հավատում ենք Հիսուս

Քրիստոսին, մենք հավատում ենք Ավետարանի սկզբունքներին, բայց որքա՞ն տքնաջան ենք աշխատում դրանց վրա։

. . . Եթե ուզում ենք ունենալ կենդանի, մնայուն հավատք, մենք պետք է ակտիվ լինենք մեր յուրաքանչյուր պարտականությունը կատարելիս որպես այս Եկեղեցու անդամներ։ . . .

Երանի թե մենք ունենայինք այնպիսի հավատք, ինչպիսին ցույց տվեց Նեփին։ Կարդացեք 1 Նեփի 17–րդ գլուխը, որտեղ նրա եղբայրները հակառակվում էին նրան և ծաղրում նրան, որովհետև նա պատրաստվում էր նավ կառուցել, ասելով.

«Մեր եղբայրը հիմար է, քանի որ կարծում է, թե կարող է նավ կառուցել. Այո, և նաև կարծում է, թե կարող է անցնել այս մեծ ջրերը» [1 Նեփի 17.17]։

Նեփին պատասխանեց նրանց.

«Եթե Աստված պատվիրեր ինձ՝ անել բոլոր բաները, ես կկարողանայի անել դրանք։ Եթե նա պատվիրեր ինձ, որ ես ասեի այս ջրին՝ հող դարձիր, այն կլիներ հող. և եթե ես ասեի դա, այն կկատարվեր» [1 Նեփի 17.50]։

Այդ էր նրա հավատքը։[11]

Մենք այժմ չենք քայլում տեսողությամբ, ինչպես մինչև այս աշխարհ գալը, այլ Տերն ակնկալում է, որ մենք քայլենք հավատքով [տես Բ Կորնթացիս Ե.7], և քայլելով հավատքով մենք կստանանք արդարների վարձքը, եթե հավատարիմ մնանք այն պատվիրաններին, որոնք տրվել են մեր փրկության համար։[12]

Մինչև մարդ հավատարիմ չլինի վարդապետությանը և քայլի հավատքում, ընդունելով ճշմարտությունը և հետևելով պատվիրաններին, ինչպես դրանք տրվել են, անհնարին կլինի նրա համար ստանալ հավերժական կյանք, անկախ նրանից, թե որքան շատ կարող է խոստովանել իր շուրթերով, որ Հիսուսը Քրիստոսն է կամ հավատա, որ Նրա Հայրն է ուղարկել Նրան աշխարհ մարդու փրկագնման համար։ Այսպիսով՝ Հակոբոսը ճիշտ է, երբ նա ասում է, որ դևերն էլ են «հավատում և սարսափում են», բայց նրանք չեն ապաշխարում [տես Հակոբոս Բ.19]։[13]

3

Ապաշխարությունը ավետարանի երկրորդ սկզբունքն է և էական է մեր փրկության և վեհացման համար:

Ապաշխարությունը ավետարանի երկրորդ հիմնական սկզբունքն է և հավատքի արդյունքն է:[14]

Այն, ինչի կարիքը մենք ունենք Եկեղեցում, ինչպես նաև Եկեղեցուց դուրս, ապաշխարությունն է: Մենք կարիք ունենք ավելի շատ հավատքի և ավելի շատ վճռականության Տիրոջը ծառայելու համար:[15]

Արդյոք ճի՞շտ է, որ մեզանից ոմանք այն կարծիքին են, որ նշանակություն չունի, որ մենք մեղանչում ենք, քանի դեռ այն դառնաղետ մեղք չէ, մահացու մեղք, որ մենք միևնույն է կփրկվենք Աստծո արքայությունում: Նեփիին տեսավ մեր օրը: Նա ասաց, որ մարդիկ կասեն այդ [տես 2 Նեփի 28.7–9]: Բայց ես ձեզ ասում եմ, մենք չենք կարող հեռու շրջվել ճշմարտության և արդարության ուղուց և պահպանել Տիրոջ Հոգու առաջնորդությունը:[16]

Սիոնում տեղ չկա դիտավորյալ մեղսավորի համար: Կա տեղ ապաշխարող մեղավորի համար, մարդու համար, ով հեռու է շրջվում անօրինությունից և որոնում հավերժական կյանք և Ավետարանի լույսը: Մենք չպետք է նայենք մեղքին նվազագույն իսկ աստիճանի թույլտվությամբ, ինչպես որ Տերը դա չի անի, այլ պետք է ուղիղ և կատարյալ քայլենք Տիրոջ առջև:[17]

Մարդիկ կարող են փրկվել և վեհանալ Աստծո արքայությունում միայն արդարակեցության մեջ. ուստի, մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից և քայլենք լույսի մեջ, քանի որ Քրիստոսը լույսի մեջ է [տես Ա Հովհաննես Ա.7], որ Նրա արյունը կարողանա մեզ մաքրել բոլոր մեղքերից, և որ մենք կարողանանք ունենալ ընկերակցություն Տիրոջ հետ և ստանալ Նրա փառքից և վեհացումից:[18]

Մենք կարիք ունենք ապաշխարության, և մենք կարիք ունենք ասվելու, որ ապաշխարենք:[19]

«Ապաշխարությունը ավետարանի ամենամխիթարող և ամենափառահեղ սկզբունքներից է»:

4

Ապաշխարության սկզբունքում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ողորմածությունն է երևում:

Ապաշխարությունը ամենամխիթարիչ և ամենափառահեղ սկզբունքներից մեկն է, որն ուսուցանվել է ավետարանում: Այդ սկզբունքում մեր Երկնային Հոր և Նրա Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի ողորմածությունը ավելի ուժեղ է դրսևորվում, քան որևէ այլ սկզբունքում: Ինչպիսի սոսկալի բան կլիներ, եթե մեղքերի ներում չլիներ և չլինեին միջոցներ մեղքերի թողության համար այն մարդկանց համար, ովքեր խոնարհաբար ապաշխարող են: Մենք միայն մասնակիորեն կարող ենք պատկերացնել այն սոսկումը, որը կպատեր մեզ, եթե մենք դիմանայինք մեր օրինազանցությունների պատժին հավիտյանս հավիտենից առանց որևէ մխիթարության հույսի: Ինչպե՞ս է այդ մխիթարությունը ձեռք բերվում: Ո՞ւմ միջոցով կարող է այն ձեռք բերվել:

Մեր Տերն ասել է.

«Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա։

«Որովհետեւ Աստուած իր Որդին չուղարկեց աշխարհքը, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով փրկուի» [Հովհաննես Գ.16–17, տես նաևհատվածներ 18–21]։

Եթե Հայրը ուղարկած չլիներ Հիսուս Քրիստոսին աշխարհ, ապա չէր կարող լինել մեղքերի թողություն և չէր կարող լինել մեղքից թեթևացում ապաշխարության միջոցով։[20]

Եթե մենք իսկապես հասկանայինք և կարողանայինք զգալ, նույնիսկ մի փոքր աստիճանով, Հիսուս Քրիստոսի սերը և նրա կողմից մեր մեղքերի համար տառապելու բարեգութ հոժարակամությունը, մենք հոժար կլինեինք ապաշխարել բոլոր մեր օրինազանցություններից և ծառայել նրան։[21]

5

Ապաշխարությունը ներառում է անկեղծ վիշտ՝ մեղքի համար և լիակատար հեռացում մեղքից։

Սուրբ գրություններն ասում են.

«Արդարությամբ զոհ մատուցիր Տիրոջը քո Աստծուն, այսինքն՝ կոտրված սրտի ու փշրված հոգու զոհը» [ՎևՈ 59.8–9]։

Դա նշանակում է ապաշխարություն։

. . . Ապաշխարությունը, ըստ բառարանում տրված սահմանման, անկեղծ վիշտն է մեղքի համար, ինքնադատապարտությունը և լիովին մեղքից հեռու շրջվելը. . . Չի կարող լինել ճշմարիտ ապաշխարություն առանց վշտի և մեղքից ազատվելու ցանկության։

Զղջումը կոտրված կամ խոնարհված հոգու դրսևորումն է մեղքի պատճառով և մեղքի ստորության անկեղծ զգացումը և Աստծո ողորմածության և շնորհի իրականացումը, որը շնորհվում է ապաշխարող մեղավորին. . . Այդ պատճառով Տերն ասում է, ինչպես ես արդեն մեջբերել եմ, մենք պետք է զոհ մատուցենք «արդարությամբ այսինքն՝ կոտրված սրտի ու փշրված հոգու զոհը» . . .

Ապաշխարությունը Աստծո պարգևն է. . . Այնքան էլ հեշտ չէ որոշ մարդկանց համար ապաշխարել, բայց ապաշխարության պարգևը և հավատքը կտրվի ամեն մարդու, ով կորոնի այն:[22]

Ես սովորել եմ իմ սեփական փորձառությունից, որ երբ դուք կամենում եք փոխվել, իսկապես ուզում եք փոխվել, դուք կարող եք դա անել: Մեր խիղճը և սուրբ գրությունները ասում են մեզ, թե ինչով ապրենք և դրանք ասում են մեզ ինչ սովորույթներ մենք պետք է փոխենք մեր հավերժական բարօրության և առաջընթացի համար:[23]

6

Ապաշխարելու ժամանակը հիմա է:

Աստված չի պատրաստվում փրկել յուրաքանչյուր տղամարդու և կնոջ սելեստիալ արքայությունում: Եթե դուք ուզում եք հասնել այնտեղ, և դուք ունեք ձախողումներ, եթե դուք գործում եք մեղքեր, եթե դուք խախտում եք Տիրոջ պատվիրանները և դուք գիտեք այդ, ճիշտ ժամանակն է հենց այժմ ապաշխարել և փոխվել, և ոչ թե մտածել, որ դա փոքր բան է, որ Տերը կների ձեզ, հենց մի քանի հարվածով, մի փոքր պատժելով և մենք կներվենք, քանզի դուք կգտնեք ձեզ դուրս գցված, եթե դուք շարունակեք և համառեք այդ ուղով:[24]

Հետաձգումը, ինչպես այն կարելի է կիրառել ավետարանի սկզբունքների վերաբերյալ, հավերժական կյանքի գողն է, որը կյանք է Հոր և Որդու ներկայությամբ: Մեր շարքերում կան շատերը, նույնիսկ Եկեղեցու անդամներ, ովքեր զգում են, որ կարիք չկա շտապել ավետարանի սկզբունքները և պատվիրանները պահելիս: . . .

Եկեք թույլ չտանք մեզ մոռանալ [Ամուղեկի] խոսքերը. «Քանզի ահա, մարդկանց համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. Այո, ահա, մարդկանց համար այս կյանքի օրն է իրենց գործերը կատարելու օրը:

Եվ այժմ, ինչպես ես առաջ եմ ասել ձեզ, քանի որ դուք ունեցել եք այսքան շատ ապացույցներ, հետևաբար, ես աղերսում եմ ձեզ, որ դուք չհետաձգեք ձեր ապաշխարության օրը մինչև վերջ. քանզի կյանքի այս օրից հետո, որը տրված է մեզ, որ նախապատրաստվենք հավերժության համար, ահա, եթե մենք

ճիշտ չենք օգտագործում մեր ժամանակն այս կյանքում, հետո գալիս է խավարի գիշերը, որի ժամանակ ոչ մի գործ չի կարող կատարվել։

Դուք չեք կարող ասել, երբ դուք կբերվեք այն սոսկալի ճգնաժամին, որ՝ ես կապաշխարեմ, որ՝ ես կվերադառնամ իմ Աստծո մոտ։ Ո՛չ, դուք չեք կարող ասել այս. քանզի այն նույն ոգին, որը տիրել է ձեր մարմիններին այն պահին, երբ դուք դուրս եք գալիս այս կյանքից, այդ նույն ոգին կունենա զորություն՝ տիրելու ձեր մարմնին այն հավերժական աշխարհում» [Ալմա 34.32–34]։[25]

7

Մեր պարտքն է նախազգուշացնող ձայն բարձրացնել աշխարհին։

Տիրոջ մտադրությունն է, որ մարդիկ երջանիկ լինեն, սա է Նրա նպատակը, բայց մարդիկ հրաժարվում են երջանիկ լինել և իրենց դարձնում են թշվառ, այն պատճառով, որմտածում են, թե իրենց ուղիներն ավելի լավն են, քան Աստծո ուղիները, և եսասիրության, ագահության ու ամբարշտության պատճառով, որը նրանց սրտերում է, և այսօր մեր դժբախտությունը սրանում է։[26]

Այն դիտարկումներից, որ մենք ենք կատարում, երբ ճամփորդում ենք մեկ տեղից մյուսը, և նրանից, ինչ կարդում ենք հասարակական մամուլում, մենք անխուսափելիորեն ստիպված ենք եզրակացության գալ, որ այսօր մեղքից ապաշխարությունը չափազանց կարևոր է ողջ աշխարհում։[27]

Մի մտածեք, որ մենք հասել ենք մի վիճակի, որտեղ գործերը չէին կարող ավելի վատ լինել։ Եթե չկա ապաշխարություն, դրանք ավելի վատ կլինեն։ Եվ այսպես, ես ապաշխարություն եմ աղաղակում այս ժողովրդին՝ Վերջին Օրերի Սրբերին. . . և երկրագնդի ազգերին ամենուրեք։[28]

Մենք պարտական ենք աշխարհին, բարձրացնելու նախազգուշացման ձայն և հատկապես Եկեղեցու անդամներին [տես ՎևՈՒ 88.81]։[29]

Մեր պարտականությունն է հոգալ միմյանց մասին, պաշտպանել միմյանց, նախազգուշացնել միմյանց վտանգների մասին, ուսուցանել միմյանց արքայության Ավետարանի սկզբունքները և կանգնել միասին՝ միասնական ճակատով, աշխարհի մեղքերի դեմ։[30]

Ես չգիտեմ ավելի կարևոր կամ անհրաժեշտ բան այս ժամանակաշրջանում, քան ապաշխարություն աղաղակելը, նույնիսկ Վերջին Օրերի Սրբերի մեջ, և ես կոչ եմ անում նրանց, ինչպես նաև նրանց, ովքեր Եկեղեցու անդամներ չեն, ականջ դնել մեր Քավչի այս խոսքերին: Արդ, նա որոշակիորեն նշել է, որ ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել Նրա ներկայությունը: Բացի նրանցից, ովքեր ապացուցում են իրենց հավատարմությունը և լվացել են իրենց հանդերձները Նրա արյամբ՝ իրենց հավատքով և իրենց ապաշխարությամբ, ուրիշ ոչ ոք չի գտնի Աստծո արքայությունը:[31]

«Ահա բոլոր ազգերը, ցեղերը, լեզուները և ժողովուրդները պիտի բնակվեն ապահով Սուրբովն Իսրայելի, եթե այնպես լինի, որ նրանք ապաշխարեն» [1 Նեփի 22.28]: Եվ ես աղոթում եմ, որ նրանք ապաշխարեն: Ես ուզում եմ, որ նրանք ապահով բնակվեն: Ես ուզում եմ, որ նրանք հավատան Սուրբին Իսրայելի, ով աշխարհ եկավ և քավեց մեր մեղքերի համար, ողջ մարդկության մեղքերի համար, ով մեզ փրկագնում տվեց մահից, ով խոստացավ մեզ փրկություն և մեղքերի թողություն մեր ապաշխարության պայմանով:

Երանի թե ողջ մարդկությունը հավատա Նրան, երկրպագի Նրան և նրա Հորը և ծառայի Տիրոջը՝ մեր Աստծուն, Որդու անունով, և այդ ժամանակ կգա խաղաղություն, այդ ժամանակ արդարակեցությունը կգերիշխի, այդ ժամանակ Տերը կկարողանա հաստատել Իր արքայությունը երկրի վրա:[32]

Ես աղաչում եմ աշխարհին ապաշխարել և հավատալ ճշմարտությանը, թույլ տալ, որ Քրիստոսի լույսը շողա իրենց կյանքում, պահել ամեն բարի և ճշմարիտ սկզբունք, որ նրանք ունեն և ավելացնել դրան ավելի շատ լույս և գիտելիք, որոնք եկել են հայտնությամբ այս օրերին: Ես աղերսում եմ նրանց միանալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն և քաղել ավետարանի օրհնությունները:

Ես աղերսում եմ Եկեղեցու անդամներին կատարել արդարակեցության գործեր, պահել պատվիրանները, որոնել Հոգին, սիրել Տիրոջը, առաջինը դնել իրենց կյանքում Աստծո արքայության բաները և դրանով գործել իրենց փրկությունը ահով և դողով Տիրոջ առաջին [տես Փիլիպպեցիս Բ.12]:[33]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնում վերանայեք Նախագահ Սմիթի մեկնաբանությունները, թե ինչու էր նա կամենում «բարձրացնել նախազգուշացնող ձայնը»: Ինչպե՞ս է ապաշխարության կոչը սիրո արտահայտություն համարվում:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի վրա կենտրոնացնել ձեր հավատքը: (Տես բաժին 1):
- Ինչո՞ւ է ճշմարիտ հավատքը միշտ գործի մղում: (Որոշ օրինակների համար տես 2–րդ բաժինը:) Թվարկեք մի քանի օրինակ, թե ինչպես կարող ենք գործերի միջոցով հավատք ցուցաբերել:
- Ինչպե՞ս է ապաշխարությունը «հավատքի հետևանք» (տես բաժին 3):
- Լուռ մտածեք մի ժամանակի մասին, երբ ապաշխարել եք և զգացել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ողորմածությունն ու սերը (տես բաժին 4): Ի՞նչ կարող եք ասել Փրկչի Քավության համար ձեր երախտագիտության մասին:
- Ինչո՞ւ է ապաշխարությունը անհնարին «առանց վշտի և մեղքից ազատվելու ցանկության» (տես բաժին 5): Ինչպե՞ս կարող է բաժին 5-ի վերջին երկու պարբերությունները հույս տալ ինչ-որ մեկին, ով վիշտ է զգում մեղքի պատճառով:
- Ինչպե՞ս է հետաձգումը «գողանում հավերժական կյանքը» (տես բաժին 6): Որո՞նք են մեր ապաշխարությունը հետաձգելու վտանգները:
- Երբ վերանայեք բաժին 7–ը, մտածեք թե ինչ է նշանակում «բարձրացնել նախազգուշացման ձայն»: Ինչպե՞ս կարող ենք լինել բարի և սիրառատ ուրիշներին նախազգուշացնելու մեր ջանքերում:

Առնչվող սուրբ գրություններ

Եբրայեցիս ԺԱ.1–6, Մոսիա 4.1–3, Ալմա 34.17,Եթեր 12.4, Մորոնի 7.33–34, ՎևՈՒ 18.10–16, Հավատո Հանգանակ 1.4

Օգնություն ուսուցչին

«Ուսուցման մեջ աշակերտն է, որ պետք է գործի դրվի: Երբ ուսուցիչն է ուշադրության կենտրոնում, երբ նա է դառնում դասիաստղը, ողջ ժամանակ ինքն է խոսում կամ այլ ձևով իր վրա է վերցնում ողջ գործունեությունը, գրեթե անկասկած փաստ է այն, որ նա խանգարում է դասարանի անդամների սովորելուն» (Asahel D. Woodruff, Teaching the Gospel [1962], 37; in Virginia H. Pearce, "The Ordinary Classroom—A Powerful Place for Steady and Continued Growth," *Ensign,* Nov. 1996, 12):

Հղումներ

1. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 1: 84.
2. "Faith and Works: The Clearing of a Seeming Conflict," *Improvement Era,* Oct. 1924, 1151; տես նաև *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2: 311.
3. In Conference Report, Oct. 1919, 88; italics in original.
4. Joseph Fielding Smith Jr., in *Take Heed to Yourselves!* (1966), v–vi.
5. Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), viii.
6. Spencer W. Kimball, quoted by Bruce R. McConkie in "Joseph Fielding Smith: Apostle, Prophet, Father in Israel," *Ensign,* Aug. 1972, 28.
7. In Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 10.
8. In Conference Report, Apr. 1970, 113.
9. In Conference Report, Oct. 1921, 186; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 302.
10. "Redemption of Little Children," *Deseret News,* Apr. 29, 1939, Church section, 3; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 302–3.
11. "Faith," *Deseret News,* Mar. 16, 1935, Church section, 3, 7.
12. In Conference Report, Apr. 1923, 139.
13. "Faith and Works: The Clearing of a Seeming Conflict," 1151; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 311.
14. *The Restoration of All Things* (1945), 196.
15. "The Pearl of Great Price," *Utah Genealogical and Historical Magazine,* July 1930, 104; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 48.
16. In Conference Report, Oct. 1950, 13.
17. In Conference Report, Apr. 1915, 120.
18. In Conference Report, Oct. 1969, 109.
19. "A Warning Cry for Repentance," *Deseret News,* May 4, 1935, Church section, 6; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 44.
20. *The Restoration of All Things,* 196–97.
21. *The Restoration of All Things,* 199.
22. "Repentance and Baptism," *Deseret News,* Mar. 30, 1935, Church section, 6.
23. "My Dear Young Fellow Workers," *New Era,* Jan. 1971, 5.
24. "Relief Society Conference Minutes," *Relief Society Magazine,* Aug. 1919, 473, տես նաև *Doctrines of Salvation,* 2: 17.
25. In Conference Report, Apr. 1969, 121, 123.
26. "A Warning Cry for Repentance," 6; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 35.
27. In Conference Report, Oct. 1966, 58.
28. In Conference Report, Oct. 1932, 91–92; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 31–32.
29. In Conference Report, Apr. 1937, 59; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 49.
30. In Conference Report, Apr. 1915, 120.
31. In Conference Report, Oct. 1960, 51.
32. In Conference Report, Oct. 1919, 92.
33. In Conference Report, Oct. 1970, 7–8.



«Այս արեաք ի հիշատակ ինձ» (Ղուկաս ԻԲ.19):

Հաղորդության կարևորությունը

«Այս խորհրդանիշներից ճաշակելը ամենասուրբ և սրբազան արարողություններից մեկն է Եկեղեցում»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1929թ. հոկտեմբերի 5-ին որպես Առաքյալ 19 տարվա ծառայությունից հետո, Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը կանգնեց Սոլթ Լեյքի Թաբերնաքլում հաղորդելու գերագույն համաժողովի իր 39–րդ ելույթը: Նա ասաց. «Կան մեկ կամ երկու մտքեր, որոնք ես կկամենայի ներկայացնել կապված հաղորդության հարցի հետ, ավելի մասնավորապես կապված ժողովների հետ, որոնք հիմնադրվել են Եկեղեցում հայտնությամբ, Տիրոջ պատվիրանով, ճաշակելու այս խորհրդանիշներից, որոնք ներկայացնում են Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը»: Որպես այս թեմայի նախաբան նա կիսվեց հաղորդության վերաբերյալ իր զգացումներով.

«Իմ կարծիքով հաղորդության ժողովը ամենասրբազանն է, ամենասուրբը Եկեղեցու բոլոր ժողովներից: Երբ ես մտածում եմ Փրկչի և Նրա առաքյալների հավաքույթի մասին այդ հիշարժան գիշերը, երբ Նա ներկայացրեց հաղորդությունը, երբ ես մտածում եմ այդ հանդիսավոր առիթի մասին, սիրտս լցվում է զարմանահրաշ և հուզումնալի զգացումներով:

Այնտեղ Փրկիչն ուսուցանեց նրանց Իր գալիք զոհաբերության մասին, որը նրանք իրենց շփոթության մեջ չկարողացան հասկանալ: Նա հստակորեն ասաց նրանց Իր մահվան մասին և որ պետք է հեղվեր Նրա արյունը և դա ասվեց աշխարհի մեղքերի համար Իր տվայտանքի այդ ժամին: Դա շատ հանդիսավոր առիթ էր, այնտեղ հաստատվեց հաղորդությունը, և աշակերտներին պատվիրվեց հաճախ ժողովվել միասին և

հիշել Հիսուս Քրիստոսի մահն ու տառապանքները, քանի որ Նրա զոհաբերությունը աշխարհի փրկագնման համար էր։

Նա պատրաստվում էր Իր վրա վերցնել անկման հետևանքով աշխարհի վրա բերված պարտքը վճարելու պատասխանատվությունը, որպեսզի մարդիկ կարողանային փրկագնվել մահից և դժոխքից։ Նա ուսուցանել էր մարդկանց, որ Ինքը պետք է բարձրացվեր, որպեսզի բոլոր մարդկանց կարողանար ձգել Իր մոտ և որ բոլորը, ովքեր կապաշխարեին և կհավատային Իրեն, պահելով Իր պատվիրանները, չպիտի տառապեն, քանի որ Նա վերցնելու էր Իր վրա նրանց մեղքերը»։[1]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Տերը պատվիրել է մեզ հաճախ հանդիպել հաղորդությունից ճաշակելու համար։

Այս խորհրդանիշները ճաշակելը [հացն ու ջուրը] ամենասուրբ և սրբազան արարողություններից մեկն է Եկեղեցում՝ մի արարողություն, որը փոխարինեց զատկի գառի մորթելն ու ուտելը, որը [խորհրդանշում էր] մեր Քավիչի զոհաբերությունը խաչի վրա. . . Եգիպտոսից ելիցի ժամանակից մինչև մեր Քավիչի խաչելությունը, Իսրայելացիներին պատվիրվում էր պահել զատիկը ամեն տարվա որոշակի ժամանակ։ Նախքան խաչելությունը, այդ հանդիսավոր գիշերը Տերը փոխեց այս արարողությունը և դրա փոխարեն տվեց հաղորդությունը։ Մեզ պատվիրվել է հաճախ հանդիպել, ոչ թե պարզապես տարին մեկ անգամ, և գնալ աղոթքի տուն և այնտեղ հիշել մեր Քավիչին և ուխտեր կապել Նրա հետ՝ հաճախ ճաշակելով այդ սուրբ արարողությունից։[2]

Մարդը, որը բացակայում է հաղորդության ժողովից շաբաթ շաբաթի ետևից և ամիս ամսի ետևից, երբ ոչինչ չի խանգարում նրան գալ, հավատարիմ չէ ճշմարտությանը։ Նա չի սիրում այն։ Եթե նա սիրեր, նա ներկա կլիներ ճաշակելու այդ խորհրդանիշներից՝ մի փոքրիկ կտոր հաց, մի փոքրիկ բաժակ ջուր։ Նա կկամենար անել այդ՝ ցույց տալու իր սերը ճշմարտության հանդեպ և իր հավատարիմ ծառայությունը Աստծո Որդուն։[3]

Մեզ կոչ է արվել հիշել այս մեծ իրադարձությունը [Հիսուս Քրիստոսի Քավությունը] և պահել այն մտքում անընդհատ։ Այս

նպատակով մենք կանչվում ենք շաբաթը մեկ անգամ ճաշակել այս խորհրդանիշներից, վկայելով, որ մենք իսկապես հիշում ենք մեր Տիրոջը, որ մենք կամենում ենք վերցնել Նրա անունը մեզ վրա, և որ մենք կպահենք Նրա պատվիրանները: Եթե մենք սիրում ենք Տիրոջը, մենք ներկա կլինենք այս ժողովներին՝ երկրպագության ոգով և աղոթքով, հիշելով Տիրոջը և այն ուխտը, որը մենք պետք է նորգենք ամեն շաբաթ այս հաղորդության միջոցով, ինչպես Նա է պահանջել մեզանից:[4]

2

Մենք ճաշակում ենք հաղորդությունից ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության:

Եկեղեցու անդամների պարտականությունն է խոնարհաբար և հավատարմորեն քայլել Հիսուս Քրիստոսի Քավության գիտության և հասկացողության մեջ. . . Ես ունեմ զգացողություն, կկամենայի սխալ լինել, բայց չեմ կարծում որ սխալ եմ, որ Եկեղեցու անդամների շատ շատ մեծ տոկոսը չի գիտակցում, թե ինչ է նշանակում ուտել մի փոքրիկ հացի փշուր, խմել մի փոքրիկ բաժակ ջուր ի հիշատակ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի արյան հեղման և խաչի վրա Նրա զոհաբերության:

Թույլ տվեք ձեր ուշադրությունը հրավիրել [հացի] օրհնության վրա: Ես կկարդամ այն խոնարհաբար, որպեսզի մենք հասկանանք թե ինչ է նրանում.

«Ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս հացը բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են այն, որ նրանք կարողանան ուտել, ի հիշատակ Որդուդ մարմնի, և վկայեն քեզ, ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, որոնք նա տվել է իրենց. որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան: Ամեն» (ՎևՈւ 20.75–77):

Ուտել ի հիշատակ Նրա: Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ ես պետք է ուղղակի հիշեմ, որ մոտ 2,000 տարի առաջ ամբարիշտ մարդիկ բռնեցին Նրան, կախեցին խաչից, գամեր խփեցին նրա ձեռքերին և ոտքերին և թողեցին այնտեղ որ մահանար: Ինձ համար դա շատ ավելի խորն իմաստ ունի, քան դա: Հիշել

նրան՝ թե ինչո՞ւ էր Նա խաչի վրա։ Նրա խաչի վրա լինելը ի՞նչ բարիք է շնորհում ինձ։ Ի՞նչ տառապանքով Նա անցավ խաչի վրա, որ ես փրկագնվեի կամ հանգստանայի իմ մեղքերից։

Դեհ, բնականաբար, մարդ կարող է մտածել. «Նրա ձեռքերի և ոտքերի մեջ գամեր խփեցին և Նա կախված մնաց այնտեղ մինչև որ մահացավ. . . Ուրիշ ինչի՞ համար նա տառապեց։ Սա մի բան է, որն, իմ կարծիքով, մեզանից շատերն աչքաթող են անում։ Ես համոզված եմ, որ Նրա մեծագույն տառապանքը գամերի մեխելուց չէր Նրա ձեռքերում և ոտքերում և խաչից կախվելուց, որքան էլ որ ցավատանջ և սոսկալի էր դա։ Նա կրում էր մեկ այլ բեռ, որը շատ ավելի կարևոր էր և ցավագին։ Ինչպե՞ս։ Մենք չենք հասկանում հստակորեն, բայց ես մի աղոտ պատկերացում ունեմ դրա մասին։[5]

Մեզանից չկա մեկը, որ արած չլինի մի սխալ բան և ապա զղջացած լինի և ցանկացած, որ արած չլիներ։ Հետո մեր խիղճը տանջել է մեզ և մենք շատ շատ թշվառ ենք զգացել։ Դուք անցե՞լ եք այդպիսի փորձառությամբ։ Ես անցել եմ. . . Բայց այստեղ մենք տեսնում ենք Աստծո Որդուն, իմ օրինազանցությունների և ձեր օրինազանցությունների բեռը կրելիս. . . Նրա մեծագույն տանջանքը գամերը չէին ձեռքերում կամ Նրա ոտքերում, որքան էլ որ ցավալի էին դրանք, այլ մտավոր տանջանքն էր՝ ինչ-որ մի ձևով, որն ինձ համար պարզ չէ։ Բայց Նա կրեց բեռը՝ մեր բեռը։ Ես ավելացրել եմ նրա բեռըինչ-որ, նույնպես և դուք եք ավելացրել դրան։ Նույնպես և բոլոր մյուսները։ Նա վերցրեց այն իր վրա՝ վճարելու գինը, որ ես խույս տամ, որ դուք խույս տաք պատժից՝ այն պայմանով, որ մենք կընդունենք Նրա ավետարանը և կլինենք ազնիվ և հավատարիմ դրանում։

Արդ, սա է այն, ինչի մասին ես փորձում եմ մտածել։ Սա է այն, ինչի մասին ես հիշում եմ՝ ցավատանջ տվայտանքը, երբ Նա Իր աղոթքում աղաղակում էր առ Հայրը՝ խնդրելով, որ այդ բաժակն անցներ։ Նա չէր աղերսում պարզապես հանգստության համար գամերը խրելիս Իր ձեռքերի և Իր ոտքերի մեջ, Նա ավելի խիստ տանջանքի մեջ էր, քան այդ բոլորը, ինչ-որ կերպ, որը ես չեմ հասկանում։[6]

Անհնարին է թույլ մահկանացուների համար, իսկ մենք բոլորս թույլ ենք, լիովին հասկանալ Աստծո Որդու տանջանքի

«Ես կցանկանայի, որ մենք կարողանանք Եկեղեցու անդամներին ավելի հստակորեն հասկացնել այն ուխտերը, որ նրանք կապում են, երբ ճաշակում են հաղորդությունից մեր հաղորդության ժողովներում»:

չափը: Մենք չենք կարող գիտակցել այն գինը, որ Նա ստիպված էր վճարել: Մարգարե Ջոզեֆ Սմիթին Նա ասել է.

«Քանզի ահա, ես Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես. Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե հոգով, և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ, այնուամենայնիվ, փառքը լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար» (ՎևՈւ 19.16-19):

Սակայն մեր ըմբռնման սահմաններում է իմանալ և գիտակցել, որ Նրա զոհաբերության այս ցավատանջ տվայտանքը բերեց մեզ մեծագույն օրհնություն, որը հնարավորինս կարող էր տրվել: Դեռ ավելին, մենք կարող ենք հասկանալ, որ այդ ծայրահեղ տառապանքը, որը վեր էր մահկանացու մարդու ուժից, ինչպես իրականացնելն, այնպես էլ դիմանալը, նախաձեռնվեց այն մեծ սիրո շնորհիվ, որ Հայրն ու Որդին ունեին մարդկության հանդեպ: . . .

. . . Եթե մենք լիովին գնահատենք այն բազում օրհնությունները, որոնք մերն են մեզ համար արված քավութան շնորհիվ, չկա ոչինչ, որ Տերը խնդրի մեզանից, որ մենք մեծ ցանկությամբ և պատրաստակամությամբ չանենք:[7]

Ես համոզված եմ, եթե կարողանայինք պատկերացնել մեր առջև, ինչպես ես եմ բազմաթիվ անգամներ փորձել անել, այն հանդիսավոր առիթը, երբ Փրկիչը հանդիպեց Իր առաքյալներին, եթե մենք կարողանայինք տեսնել նրանց այնտեղ հավաքված, Տերը Իր տխրության մեջ, վշտանալով աշխարհի մեղքերի համար, վշտանալով Իր առաքյալներից մեկի համար, որը պետք է դավաճաներ Իրեն, սակայն ուսուցանելով այդ տասնմեկ տղամարդկանց, ովքեր սիրում էին Նրան և ուխտ կապում նրանց հետ, ես համոզված եմ, մենք կզգայինք մեր սրտում, որ երբեք չէինք լքի Նրան: Եթե կարողանայինք տեսնել նրանց այնտեղ հավաքված և կարողանայինք հասկանալ բեռան ծանրությունը, որը մեր Տիրոջ վրա էր, և իրենց ընթրիքից հետո և օրհներգ երգելով նրանց առաջ գնալը, Տերը մատնվելու, ծաղրվելու և մտրակվելու, աշակերտները լքելով Նրան Իր փորձության ամենախորը ժամին, եթե մենք հասկանայինք բոլոր այս բաները, չնայած դա աղոտ լինի, և դա աղոտ պիտի լինի, համոզված եմ, իմ եղբայրներ և քույրեր, մենք հավերժ ավելի կցանկանայինք քայլել ճշմարտության լույսի մեջ: Եթե կարողանայինք տեսնել մարդկանց Փրկչին պարտեզում տառապելիս և խաչի վրա և կարողանայինք լիովին հասկանալ այն ամենը, ինչ դա նշանակում է մեզ համար, մենք կցանկանայինք պահել Նրա պատվիրանները և մենք կսիրեինք Տիրոջը՝ մեր Աստծուն, ողջ մեր սրտով, մեր ողջ զորությամբ, մտքով և ուժով և Հիսուս Քրիստոսի անունով կծառայեինք Նրան:[8]

3

Մեր պարտականությունն է լրջորեն մտածել այն ուխտի մասին, որ մենք կապում ենք, երբ ճաշակում ենք հաղորդությունից:

Ես կցանկանայի, որ մենք կարողանանք Եկեղեցու անդամներին ավելի հստակորեն հասկացնել այն ուխտերը, որ նրանք կապում են, երբ ճաշակում են հաղորդությունից մեր հաղորդության ժողովներում:[9]

Ես տեսել եմ երկու Եկեղեցու անդամների [հաղորդության ժողովում] միասին նստած, զրույցի բռնված, հացի և ջրի համար օրհնություն խնդրելու ընթացքում դադար տալիս, ապա կրկին իրենց զրույցը շարունակելիս. . . Դա ինձ համար ապշեցուցիչ էր, և ես համոզված եմ Տիրոջ համար նույնպես:[10]

Մեր պարտականությունն է ուշադիր և լրջորեն մտածել [հաղորդության] ժողովի աղոթքների բնույթի մասին, երբ դրանք լսում ենք մեր ժողովներում ասվելիս: Կան չորս խիստ կարևոր բաներ, որ մենք ուխտ ենք կապում անել ամեն անգամ, երբ ճաշակում ենք այդ խորհրդանիշներից և ճաշակելիս առկա է գործողություն, որը ցույց է տալիս, որ մենք լիովին պարտավորվում ենք կատարել պարտականությունները և այսպիսով, դրանք դառնում են պարտադիր մեզ համար: Դրանք հետևյալն են.

1. Մենք ուտում ենք՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մարմնի, խոստանալով, որ մենք միշտ կհիշենք խաչի վրա սպանված Նրա վիրավոր մարմինը:

2. Մենք խմում ենք՝ ի հիշատակ արյան, որը հեղվել է աշխարհի մեղքերի համար, որը քավեց Ադամի օրինազանցությունը, և որը ազատում է մեզ մեր սեփական մեղքերից մեր անկեղծ ապաշխարության պայմանով:

3. Մենք ուխտում ենք, որ մենք հոժար կլինենք վերցնել մեզ վրա *անունը* Որդու և միշտ կհիշենք Նրան: Պահելով այս ուխտը՝ մենք խոստանում ենք, որ մենք կկոչվենք Նրա անունով և երբեք չենք անի որևէ բան, որն ամոթ կբերի կամ նախատինք այդ անվան վրա:

4. Մենք ուխտում ենք, որ կպահենք Նրա պատվիրանները, որոնք Նա տվել է մեզ, ոչ թե մեկ պատվիրանը, բայց որ մենք

Մեր պարտականությունն է ուշադիր և լրջորեն մտածել [հաղորդության] ժողովի աղոթքների բնույթի մասին, երբ դրանք լսում ենք մեր ժողովներին:

հոժարակամ կլինենք «ապրել Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով» [ՎԱՌՒ 84.44]:

Եթե մենք անենք այս բաները, ապա մեզ խոստացվում է Սուրբ Հոգու շարունակական առաջնորդությունը, և եթե մենք չկամենանք անել այս բաները, մենք չենք ունենա այդ առաջնորդությունը:[11]

Ես ուզում եմ տալ ձեզ մի քանի հարց և, իհարկե, խոսել Եկեղեցու բոլոր անդամների հետ: Ի՞նչ եք կարծում, երբ մի մարդ գալիս է հաղորդության ծառայության աղոթքի, համեստության և երկրպագության ոգով և ով ճաշակում է այդ խորհրդանիշները, որոնք ներկայացնում են Հիսուս Քրիստոսի մարմինը և արյունը, արդյոք նա գիտակցաբար կխախտի՞ Տիրոջ պատվիրանները: Եթե մարդ լիովին հասկանում է, թե ինչ է նշանակում, երբ նա ճաշակում է հաղորդությունից, որ նա ուխտում է իր վրա

վերցնել Հիսուս Քրիստոսի անունը և միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները և այս երդումը նորոգվում է շաբաթից շաբաթ, ինչ եք կարծում նա կթերանա՞ վճարել իր տասանորդը: Ինչ եք կարծում այդպիսի մարդը կխախտի՞ հանգստության օրը կամ կանտեսի՞ Իմաստության Խոսքը: Միթե՞ կարծում եք նա կթերանա աղոթքով լի լինել, և որ նա չի կատարի իր քվորումի պարտականությունները և այլ պարտականություններ Եկեղեցում: Ինձ թվում է, որ այդպիսի բան ինչպիսին է այս սրբազան սկզբունքների և պարտականությունների խախտումը, անհնար է, երբ մարդը գիտի, թե ինչ է նշանակում շաբաթից շաբաթ Տիրոջ և սրբերի առջև նման երդումներ տալը:[12]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- «Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնում Նախագահ Սմիթը կիսվում է իր մտքերով այն ժամանակի մասին, երբ Փրկիչը հաստատեց հաղորդությունը: Ինչո՞ւ է այդ իրադարձությունը կարևոր ձեզ համար:
- Երբ ուսումնասիրեք 1-ին բաժինը, մտածեք ամեն շաբաթ հաղորդությանը մասնակցելու կարևորության մասին: Ինչպե՞ս կարող եք նախապատրաստվել հաղորդության ժողովի համար: Ի՞նչ կարող են անել ծնողները իրենց երեխաներին օգնելու նախապատրաստվել:
- Ի՞նչն է ձեր վրա տպավորություն թողնում Նախագահ Սմիթի մտքերից, երբ նա ճաշակեց հաղորդությունից (տես բաժին 2): Ի՞նչ կարող ենք անել հիշելու Փրկչին և Նրա Քավությունը, երբ ճաշակում ենք հաղորդությունից:
- Ուշադրություն դարձրեք այն ուխտերին, որոնք գրված են բաժին 3-ում: Լուռ խորհեք թե ինչ եք մտածում այդ ուխտերի մասին: Ինչպե՞ս են այս ուխտերը ազդում ձեր կյանքի վրա:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս ԻԶ.26–29, Ա Կորնթացիս ԺԱ.23–29, 3 Նեփի 18.1–13, Մորմոն 9.29, Մորոնի 4–5, ՎևՈՒ 20.75–79, 59.9–12

Օգնություն ուսուցչին

«Հանձնարարեք մասնակիցներին կարդալ ընտրված հարցերը գլխի վերջում (կամ անձնապես կամ փոքր խմբերով)։ Խնդրեք նրանց որոնել ուսմունքներ այն գլխում, որոնք կապված են հարցերի հետ։ Ապա հրավիրեք նրանց կիսվել իրենց մտքերով և ներըմբռնումներով խմբի մնացած անդամների հետ» (այս գրքի X էջից)։

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1929, 60–61; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2: 340–41.
2. "Importance of the Sacrament Meeting," *Relief Society Magazine,* Oct. 1943, 590; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 339–40.
3. *Seek Ye Earnestly,* comp. Joseph Fielding Smith Jr. (1972), 99.
4. In Conference Report, Oct. 1929, 61; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 341.
5. "Fall–Atonement–Resurrection–Sacrament," address delivered at the Salt Lake City Utah University Institute of Religion, Jan. 14, 1961, 7–8.
6. "Fall–Atonement–Resurrection–Sacrament," 8.
7. "Importance of the Sacrament Meeting," 591–92.
8. In Conference Report, Oct. 1929, 63; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 347.
9. "Fall–Atonement–Resurrection–Sacrament," 7.
10. *Seek Ye Earnestly,* 122.
11. "Importance of the Sacrament Meeting," 591.
12. In Conference Report, Oct. 1929, 62–63; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 346.

Ջոզեֆ Սմիթ և Հայրում Սմիթ՝ Քրիստոսի վկաներ

«Մենք բարձրացնում ենք մեր ձայնը շնորհակալություն հայտնելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Հայրում Սմիթի՝ Հայրապետության կյանքի և ծառայության համար և առաքյալների ու արդարակյաց տղամարդկանց և կանանց համար, ովքեր կառուցել են նրանց դրած հիմքի վրա»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Շատ վաղ հասակից Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը գիտեր, որ իր ընտանիքը հատուկ կապ ուներ Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ: Նա ոգեշնչված էր իր պապի՝ Հայրում Սմիթի օրինակով, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մեծ եղբայրն էր ու հավատարիմ ընկերը: Հայրումը հավատարմորեն ծառայեց իր եղբոր կողքին որպես Եկեղեցու առաջնորդ: Նա նաև օգնեց Մորմոնի Գրքի հրատարակությանը և կանչվեց լինելու այդ գրքի ութ վկաներից մեկը: 1844թ. հունիսի 27-ին Ջոզեֆը և Հայրումը նահատակվեցին Քարթրիջում՝ Իլլինոյս, կնքելով Փրկչի և Նրա ավետարանի վերաբերյալ իրենց վկայությունները (տես ՎևՈւ 135.3):

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը երբեք չէր ճանաչել իր Սմիթի պապիկին ու տատիկին: Իր ծնվելուց շատ առաջ նրա Հայրում պապիկը նահատակվեց: Հայրումի կինը՝ Մերի Ֆիլդինգ Սմիթը, նույնպես երիտասարդ մահացավ: Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Ես երբեք իմ Սմիթ տատիկին չեմ տեսել: Ես միշտ դրա համար ափսոսել եմ, որովհետև նա ամենաազնվական կանանցից է եղել, որ երբևէ ապրել է, բայց ես ճանաչում էի նրա հրաշալի քրոջը, իմ մորաքույր Մերսի Թոմփսոնին, և երբ տղա էի, ես գնում էի և այցելում նրան իր տանը և նստում նրա ծնկին, որտեղ նա պատմում էր ինձ պատմություններ Մարգարե Ջոզեֆ

Ջոզեֆ և Հայրում Սմիթերը. «Կյանքում նրանք անբաժան էին, մահվան մեջ էլ նրանք չառանձնացան» (ՎԱՈՒ 135.3):

Սմիթի մասին, և օ՜հ, որքան երախտապարտ եմ ես այդ փորձառության համար։[1]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը սովորեց նաև իր հոր՝ Ջոզեֆ Ֆ. Սմիթի օրինակից, ով անձնապես գիտեր Մարգարե Ջոզեֆ Սմիթին։ Իր հոր մասին Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Չկար կասկածի կամ անհամոզվածության որևէ մասնիկ նրա վկայությունում։ Դա այդպես էր հատկապես, երբ նա խոսում էր մեր Փրկչի աստվածայնության կամ մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելության մասին»։[2]

Այս օրինակներն ու ուսմունքները Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի մեջ վկայություն ստեղծեցին վերականգված ավետարանի վերաբերյալ իր մանկության տարիներին։ «Ես չեմ հիշում մի ժամանակ, երբ ես չհավատայի Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի առաքելությանը, կամ էլ Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելությանը»,[3] ասել է նա։ Երբ նա ուսուցանում էր ավետարանը, նա երբեմն արտահայտում էր իր վկայությունը ընտանեկան արտահայտություններով. «Արդյոք ես սիրո՞ւմ եմ Մարգարե Ջոզեֆ Սմիթին։ Այո, սիրում եմ, ինչպես իմ հայրն էր սիրում ինձանից առաջ։ Ես սիրում եմ նրան, որովհետև նա Աստծո ծառան էր և ավետարանի վերականգման համար և այն արտոնությունների և օրհնությունների համար, որոնք եկան ինձ և իմ ընտանիքին և ձեզ ու ձեր ընտանիքին, այն օրհնությունների միջոցով, որոնք շնորհվեցին այս մարդուն և նրանց, ովքեր աշխատում էին նրա հետ»։[4]

Չնայած Նախագահ Սմիթը երախտապարտ էր իր ընտանքի ուսմունքների և ժառանգության համար, նրա վկայությունը իր սեփականն էր։ Նա ասել է. «Ես միշտ շատ երախտապարտ եմ եղել այն վկայության համար, որ եկել է ինձ Տիրոջ Հոգու միջոցով, որ Ջոզեֆ Սմիթը՝ Աստծո Մարգարեն, կանչվել է գլխավորելու Ժամանակների Լրության Տնտեսությունը»։[5] Մեկ այլ առիթով նա վկայել է. «Սա իմ գիտելիքն է Տիրոջ պարգևով, որ Ջոզեֆ Սմիթը 1820 թվականին տեսավ Հորը և Որդուն, որ Հայրը ներկայացրեց Իր Որդուն, որ Որդին խոսեց նրա հետ, հարցրեց նրան ինչ էր ուզում իմանալ և խորհուրդ տվեց, ասաց նրան ինչ անել, խոստումով, որ ուրիշ լույս էր ի վերջո գալու և ավետարանի լրիվությունը, որն այդ ժամանակ երկրի երեսին չէր, պիտի վերականգվեր»։ Ապա նա կիսվեց համոզմունքով, որ բոլոր մարդիկ կարող էին ստանալ նույն վկայությունը. «Ամեն հոգի երկրի երեսին, ով ցանկություն ունի իմանալու, ունի

արտոնություն, քանի որ յուրաքանչյուր հոգի, որը կխոնարհեցնի իրեն և համեստության և հավատքի խորքերում, ապաշխարող հոգով կգնա Տիրոջ առջև, կստանա այդ գիտելիքը ճիշտ այնպես անկասկած, ինչպես որ Նա ապրում է:[6]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Երկու թեմա ամենակարևորն են. որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, և որ Ջոզեֆ Սմիթը եղել է մարգարե:

Մենք կապում ենք Հիսուս Քրիստոսի և Ջոզեֆ Սմիթի անունները: Քրիստոսը Տերն է, Նա քավիչ զոհաբերություն կատարեց. նա է հարությունը և կյանքը. Նրա միջոցով են բոլոր մարդիկ բարձրանում անմահության մեջ, այն ժամանակ, երբ նրանք, ովքեր հավատում են և հնազանդվում նրա օրենքներին նույնպես ձեռք կբերեն հավերժական կյանք:

Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, կանչված այս վերջին օրերին հայտնությամբ՝ ստանալու ավետարանի փրկարար ճշմարտությունները և կանգնելու որպես պաշտոնական սպասավորող, ունենալով իշխանություն ի վերուստ, սպասավորելու ավետարանի արարողությունները:

Քանի որ այս ճշմարտությունները, որոնք հայտնի են դարձվել նրա միջոցով պիտի առաջ գնան ամեն ազգի նախքան Երկրորդ Գալուստը, զարմանալի չէ, որ մենք գտնում ենք Մորոնիին ասելիս Ջոզեֆ Սմիթին, որ նրա «անունը՝ որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ, կամ, որ բոլոր ժողովուրդների մեջ նրա մասին կխոսվի և՛ բարի, և՛ չար» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33):

Ոչ էլ զարմանալի է, երբ հետագայում մենք գտնում ենք Տիրոջը Մարգարեին ասելիս. «Աշխարհի ծայրերը գիտելիք կփնտրեն քո անվան մասին, և հիմարները կծաղրեն քեզ, և դժոխքը կմոլեգնի քո դեմ.

Մինչդեռ սրտով մաքուրները և իմաստունները և ազնվահոգիները և առաքինիները, շարունակ խորհուրդ և իշխանություն և օրհնություններ պիտի փնտրեն քո ձեռքի տակ» (ՎևՈւ 122.1):

Աշխարհի ծայրերն այժմ սկսում են գիտելիք փնտրել Ջոզեֆ Սմիթի անվան մասին, և շատ մարդիկ շատ ազգերի մեջ ուրախանում են նրա միջոցով վերականգված ավետարանով:

Այս տնտեսությունից սկսած Հիսուսի մասին վկայությունը ինչպես հայտնի էր դարձվել Ջոզեֆ Սմիթին, քարոզվել է Միացյալ Նահանգներում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Եվրոպայի մեծ մասում և Խաղաղ օվկիանոսի կղզիներում:

Վերջին տարիներին եղել է աշխատանքի գրեթե անհավատալի աճ Մեքսիկայում, Կենտրոնական Ամերիկայի երկրներում և Հարավային Ամերիկայում:

Եվ Ասիան է այժմ [1971թ.] բացվում ավետարանի ուղերձի համար մի ձևով, որն անցնում է անցյալում եղած ամեն բան: Եկեղեցին սկսում է հաստատվել Ճապոնիայում և Կորեայում, Տայվանում և Հոնգ Կոնգում և մենք սկսում ենք Տայլանդում, Սինգապուրում և Ինդոնեզիայում:

Եվ կգա օրը Տիրոջ կանխատեսությամբ, երբ այլ ազգեր, որոնք այժմ փակ են ճշմարտության ուղերձի համար, պիտի իրենց դռները բացեն մեր առջև և Իսրայելի երեցները ներս կմտնեն ասելու սրտով ազնիվներին այդ ազգերի մեջ Քրիստոսի և Նրա թագավորության ավետարանի մասին, որը եկել է երկրի վրա այս օրերում Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:[7]

Ջոզեֆ Սմիթը Քրիստոսի և այս օրերում և սերնդին աշխարհի փրկության գիտության հայտնողն է:[8]

Երկու թեմաներ միշտ ամենակարևորն են իմ մտքում: Որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, որը խաչվեց աշխարհի մեղքերի համար, և որ Ջոզեֆ Սմիթը կանչված և նշանակված մարգարե էր՝ առաջնորդելու ժամանակների լրության տնտեսության մուտքը: Սա է իմ ուղերձը աշխարհին:[9]

2

Տերը կանչեց Ջոզեֆ Սմիթին այս փառահեղ տնտեսության գլխին կանգնելու:

Ջոզեֆ Սմիթը. . . եկավ և սուրբ սուրհանդակների ղեկավարությամբ դրեց Աստծո թագավորության և այս սքանչելի աշխատանքի և զարմանալիքի հիմքը, որպեսզի աշխարհը կարողանար նախապատրաստվել Տիրոջ գալստի համար:[10]

«Ջոզեֆ Սմիթը կանչված և նշանակված մարգարե էր՝ առաջնորդելու ժամանակների լրության տնտեսության մուտքը»։

Ես գիտեմ, որ [Ջոզեֆ Սմիթը] կանչվել էր, նշանակվել մեր Հոր կողմից, որ երկնքում է, որ նա ստացավ հայտնություն և առաջնորդություն Աստծո Որդուց, որը կլինի ի օգուտ և օրհնություն բոլոր մարդկանց, եթե նրանք կամենան ընդունել այն։[11]

Իմ մտքում կասկած չկա, որ Տերը բարձրացրեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին և տվեց նրան հայտնություն, պատվիրան, բացեց երկինքները նրա համար, և կանչեց նրան գլխավորելու այս փառահեղ տնտեսությունը։ Ես կատարելապես բավարարված եմ իմ մտքում, որ նա իր պատանեկան տարիքում, երբ նա դուրս եկավ աղոթելու, նա տեսավ և կանգնեց Հայր Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի իրական ներկայության մեջ, իմ մտքում կասկած չկա՝ ես գիտեմ սա ճիշտ է։ Ես գիտեմ, որ հետագայում նա ստացավ այցելություններ Մորոնիից,

Ահարոնյան Քահանայություն Հովհաննես Մկրտչի ձեռքերի ներքո, Մելքիսեդեկյան Քահանայություն Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի ձեռքերի ներքո, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կազմակերպվեց 1830թ. ապրիլի վեցերորդ օրը, աստվածային հրամանով:[12]

Ընտրելով ներկայացուցիչ գլխավորելու այս «մեծ և զարմանալի գործը, [որն] առաջ է գալիս մարդկանց զավակների մեջ», [տես ՎևՈՒ 4.1] Տերը չընտրեց մեկին, որը կրթված էր աշխարհի գիտությամբ և ավանդույթներով: Նրա ուղիները մարդկանց ուղիները չեն, ոչ էլ մտքերն են մարդկանց մտքերի նման [տես Եսայիա ԾԵ.8]: Այն մարդը, ով ուսուցանվում է աշխարհիկ գիտությամբ, ստիպված կլինի խիստ շատ բան մոռանալ մարդկային սովորույթներից և փիլիսոփայությունից: Իր մեծ իմաստությամբ Տերն ընտրեց անփորձ մի երեխայի՝ տասնչորս տարեկան մի պատանու: Այս պատանուն Տերը հայտնի դարձրեց ավետարանի լրիվությունը, որն աշխարհը չէր ընդունի՝ անհավատության պատճառով: Երկնային առաջնորդության տարիների ընթացքում, քանի որ նա ուսուցանվում էր Տիրոջ ներկայությունից ուղարկված սուրհանդակների կողմից, այս պատանին՝ Ջոզեֆ Սմիթը, նախապատրաստվեց ղեկավարելու ավետարանի վերականգման աշխատանքը և Աստծո թագավորության կառուցումը:[13]

3

Տերն ասաց, որ այս սերունդը կունենա Իր խոսքը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Ամեն դարում, երբ ավետարանը երկրի վրա է, այն պետք է հայտնի դարձվի Տիրոջ մարգարեներին և նրանք պետք է կանչվեն կանգնելու որպես պաշտոնական սպասավորողներ՝ կատարելու և ղեկավարելու իրենց մերձավորների փրկության արարողությունների սպասավորումը:

Ջոզեֆ Սմիթն այն մարգարեն է, որին Տերը կանչեց այս օրերում վերականգնելու փրկության ճշմարտությունները և ստանալու բանալիներ և զորություններ՝ սպասավորելու այս փրկարար ճշմարտությունները:

Նրան Տերն ասաց. «. . . Այս սերունդն իմ խոսքը կունենա քո միջոցով» (ՎևՈւ 5.10): Իսկ հետո, անդրադառնալով Ջոզեֆ Սմիթի

միջոցով վերականգված ավետարանին, Տերն ասաց. «Արքայության այս ավետարանը պիտի քարոզվի ողջ աշխարհում, որպես վկայություն բոլոր ազգերին, իսկ հետո պիտի գա վերջը, կամ ամբարիշտների կործանումը» (Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.31)։[14]

Ես այժմ ասում եմ,

Որ Ջոզեֆ Սմիթն այն մեկն է, որին բոլոր մարդիկ պետք է նայեն այդ օրերում սովորելու ճշմարտությունը Քրիստոսի և Նրա ավետարանի մասին։

Որ իր ուրույն ժամանակին այս մարգարեի անունը հայտնի կլինի երկրի ամեն անկյունում և բոլոր մարդկանց մեջ։

Որ սրտով ազնիվները կընդունեն նրան որպես մարգարե և կերկրպագեն այն Տիրոջը, ում հայտնեց,

Որ եկեղեցին, որը կազմակերպվեց աստվածային հրամանով, բարգավաճում է, որովհետև այն հետևում է հայտնություններին, որոնք գալիս են նրա միջոցով,

Եվ որ բոլորը, ովքեր հավատում են Ջոզեֆ Սմիթի ուսմունքներին և աշխատում են այն ուղով, որը սահմանվել է Նրա կողմից, պիտի գան մի գիտության, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, որը խաչվեց աշխարհի մեղքերի համար։

Նույն ձևով է, որ ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է, և Սուրբ Հոգու հայտնությամբ է, որ ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է և էր, և հավիտենականորեն պիտի լինի Աստծո մարգարեն։ . . .

Վկայության և գոհության ոգով ես [կիսվում եմ] այս ոգեշնչված խոսքերով Վարդապետություն և Ուխտերից. «Ջոզեֆ Սմիթը՝ Տիրոջ Մարգարեն և Տեսանողը, ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա, բացի միայն Հիսուսից» (ՎևՈւ 135.3)։[15]

4

Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայրը՝ Հայրումը միասին էին կյանքում և մահվան մեջ։

Ես շնորհակալ եմ հավերժական ճշմարտության վերականգման համար այս վերջին ավետարանի տնտեսությունում, Ջոզեֆ Սմիթի՝ Մարգարեի և իմ պապ Հայրում Սմիթի՝ Հայրապետի առաքելության և ծառայության համար և այն փաստի համար,

որ Աստծո թագավորության բանալիները կրկին շնորհվեցին մարդկանց երկրի վրա։[16]

«Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ քեզ. օրհնյալ է իմ ծառա Հայրում Սմիթը. քանզի ես՝ Տերս, սիրում եմ նրան իր սրտի շիտակության համար, և որովհետև նա սիրում է այն, ինչը ճիշտ է իմ առաջ, ասում է Տերը» (ՎևՈւ 124.15)։

Ո՞վ երջանիկ չի լինի Տիրոջ կողմից եկող իրեն տրված այսպիսի վստահության տուրքի և գովասանքի համար։ Հայրում Սմիթը այս տնտեսությունում մկրտված առաջինների շարքում էր։ Իր կյանքի ընթացքում նա կանգնեց իր եղբայր Ջոզեֆի կողքին և զորացրեց նրան քաջալերելով, հավատքով և նվիրված սիրով։ Հայրումը սրտի սքանչելի փափկության մարդ էր։ Նա օժտված էր խորը համեստությամբ և իր եղբորն ավելի էր սիրում, քան իր սեփական կյանքը։ Սա ցույց տրվեց նրա մահով, որի միջոցով նա ձեռք բերեց նահատակի պսակ։ Նա անվախ էր ճշմարտության իր պաշտպանության մեջ։ Նա իսկապես «սիրում էր այն, ինչը ճիշտ էր»։

Հայրում Սմիթը ծնվել է 1800թ. փետրվարի իններորդ օրը և մոտ վեց տարով մեծ էր Մարգարեից։ Ոչ մի պատիվ չտրվեց Ջոզեֆ Սմիթին, որով նա չկիսվեց Հայրումի հետ, որն ուրախանում էր իր եղբոր համար այն բոլոր օրհնությունների պատճառով, որոնք շնորհվում էին նրան։ Նույնօրինակ եղբայրական սեր էր ցույց տրվում Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից իր եղբայր Հայրումի հանդեպ։ Նրանք միասին անցան նույն տառապանքների և ուրախությունների միջով։ Նույն հալածանքներն իջան երկուսի վրա էլ։ Նրանք նույն զնդանում էին հանուն Ավետարանի, և երբ եկավ իրենց վկայությունը կնքելու ժամանակը, նրանք միասին կիսեցին նահատակության պսակը։ «Կյանքում նրանք անբաժան էին, մահվան մեջ էլ նրանք չառանձնացան» [ՎևՈւ 135.3]։ . . .

Սա հարգանքի արժանավոր տուրք է՝ Մարգարեի կողմից. «Եղբա՛յր Հայրում, ինչպիսի՜ հավատարիմ սիրտ ունես դու։ Օ՜հ, թող Հավերժական Եհովան հավերժական օրհնություններով պսակի քո գլուխը, որպես պարգև այն հոգատարության համար, որ դու ես ունեցել իմ հոգու համար։ Օ՜հ, որքան շատ են եղել տառապանքները, որոնք մենք միասին ենք կրել և կրկին մենք գտնում ենք մեզ կապված ճնշողի անգութ ձեռքով։

Զոզեֆ և Հայրում Սմիթերը իրենց վկայությունները կնքեցին իրենց արյունով:

Հայրո՛ւմ, քո անունը պիտի գրվի Տիրոջ Օրենքի գրքում՝ նրանց համար, ովքեր գալիս են քեզանից հետո՝ նայելով, որ կարողանան ընդօրինակել քո գործերից:

Մարգարեն կրկին ասել է. «Ես կաղոթեի իմ սրտում, որպեսզի բոլոր իմ եղբայրները նման լինեին իմ սիրելի եղբայր Հայրումին, ով ունի գառան մեղմություն և Հոբի հավատարմությունը և կարճ ասած Քրիստոսի հեզությունն ու համեստությունը, և ես սիրում եմ նրան այն սիրով, որն ավելի ուժեղ է, քան մահը, քանզի ես երբեք առիթ չեմ ունեցել նախատելու նրան, ոչ էլ նա ինձ»:[17]

5

Զոզեֆ և Հայրում Սմիթերը կնքեցին իրենց վկայություններն իրենց արյունով:

Իմ պապը՝ Հայրապետ Հայրում Սմիթը, կանչվեց կրելու այս տնտեսության բանալիները Մարգարե Զոզեֆի՝ իր փոքր եղբոր հետ միասին: Տերն ասել է, որ երկու ականատեսի բերանով պիտի բոլոր բաները հաստատվեն [տես Բ Կորնթացիս ԺԳ.1]: . . .

Ջոզեֆ Սմիթը չէր կարողանա միայնակ դիմանալ, այլապես նրա գործը կձախողվեր, ճիշտ ինչպես Փրկչի գործը պահանջում էր ևս մեկ ականատեսի հաստատումը, իսկ ո՞վ կարող էր վկայել Քրիստոսի համար, եթե ոչ Իր Հայրը: [Տես Հովհաննես Ը.12–18]: Եվ այսպիսով, Տերը կանչեց ևս մեկ մարդու՝ կանգնելու Ջոզեֆ Սմիթի հետ և կրելու փրկության բանալիները այս տնտեսությունում որպես վկա իր հետ: . . .

. . . [Հայրումը] ոչ միայն կանչվեց դառնալ Եկեղեցու Հայրապետը, որը նրա անդրանիկության իրավունքն էր, այլ միևնույն ժամանակ Տերն ասաց նրան.

«Եվ այս ժամանակից ի վեր, ես նրան նշանակում եմ, որ նա մարգարե և տեսանող և հայտնող լինի իմ եկեղեցու համար, այնպես ինչպես իմ ծառա Ջոզեֆը,

Որպեսզի նա նաև միաբանորեն գործի իմ ծառա Ջոզեֆի հետ. և որ նա պիտի խորհուրդ ընդունի իմ ծառա Ջոզեֆից, որը նրան ցույց կտա բանալիները, որոնցով նա կարող է խնդրել և ստանալ, և պսակվի միևնույն օրհնությամբ, և՛ փառքով, և՛ պատվով, և՛ քահանայությամբ, և՛ քահանայության պարգևներով, որոնք մի ժամանակ դրվել էին նրա գլխին, ով իմ ծառան էր՝ Օլիվեր Քաուդերին.

Որպեսզի իմ ծառա Հայրումը կարողանա վկայել այն բաների մասին, որոնք ես նրան ցույց կտամ, որպեսզի նրա անունը պատվով հիշվի սերդե սերունդ՝ հավիտյանս հավիտենից» [ՎևՈՒ 124.94–96]:

Համաձայն այս կոչման և պատվիրանի, Մարգարե Ջոզեֆ Սմիթը Հայրում Սմիթին շնորհեց բոլոր բանալիները, իշխանությունն ու քահանայության պարգևները, որը ինքը՝ Մարգարեն էր կրում, և որը նախկինում կրում էր Օլիվեր Քաուդերին: Տերը նաև հայտնի դարձրեց Հայրում Սմիթին բոլորը, ինչ անհրաժեշտ էր նրան լիովին և լիարժեք չափով վկա լինելու իր եղբայր Ջոզեֆի հետ՝ որպես մարգարե, տեսանող, հայտնող և Եկեղեցու Նախագահ և բոլոր ժամանակներում և ողջ հավերժության մեջ այս տնտեսության գլխին կանգնելու իր եղբայր Ջոզեֆի հետ՝ վկա Հիսուս Քրիստոսի համար:[18]

Իր եղբոր՝ իմ պապ Հայրապետ Հայրում Սմիթի հետ, նա [Ջոզեֆ Սմիթը] իր վկայությունն իր արյամբ կնքեց Քարթրիջի

Բանտում: Եվ ես, մեկընդմիշտ, ուզում եմ գործիք լինել Տիրոջ ձեռքում, որպեսզի երկրի ծայրերն իմանան, որ փրկությունը կրկին հասանելի է, որովհետև Տերը մի հզոր տեսանող է բարձրացրել այս օրերում՝ Իր թագավորությունը երկրի վրա հաստատելու համար:[19]

Մենք բարձրացնում ենք մեր ձայնը՝ շնորհակալություն հայտնելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Հայրում Սմիթի՝ Հայրապետի կյանքի և ծառայության համար և առաքյալների ու արդարակյաց տղամարդկանց և կանանց համար, ովքեր կառուցել են նրանց դրած հիմքի վրա:[20]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Նախագահ Սմիթը պատմեց ընտանիքի անդամների մասին, ովքեր օգնեցին զարգացնել իր մանկության տարիների վկայությունը Ջոզեֆ Սմիթի առաքելության վերաբերյալ (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը): Ի՞նչ կարող ենք անել օգնելու երեխաներին ձեռք բերել վկայություն Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելության մասին:
- Ինչպե՞ս են կապված Հիսուս Քրիստոսի և Ջոզեֆ Սմիթի անունները (տես բաժին 1): Ինչպե՞ս է Մարգարե Ջոզեֆ Սմիթի ծառայությունը ազդել Փրկչի և Նրա ավետարանի վերաբերյալ ձեր վկայության վրա:
- Խորհեք Նախագահ Սմիթի դիտարկումների մասին, երբ Տերը կանչեց Ջոզեֆ Սմիթին նախընտրելով նրան, քան «մեկին, որը կրթված էր աշխարհի գիտությամբ և ավանդույթներով» (բաժին 2): Ինչպե՞ս կարող է այս հասկացողությունն օգնել մեզ, երբ մենք անհամապատասխան ենք զգում կատարելու մեր պարտականությունները:
- Բաժին 3-ում Նախագահ Սմիթը մեջբերում է Վարդապետություն և Ուխտերի 5.10–ից և 135.3– ից: Ինչպե՞ս կարող եք դուք բացատրել այս հատվածները որևէ մեկին, ով անծանոթ է Ջոզեֆ Սմիթի առաքելությանը:

- Ի՞նչ կարող եք սովորել Ջոզեֆ Սմիթի և նրա եղբայր Հայրումի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունից (Տես բաժին 4)։
- Ի՞նչ զգացում ունեք այն մասին, որ Ջոզեֆ և Հայրում Սմիթները կնքեցին իրենց վկայությունը իրենց արյամբ (տես բաժին 5)։ Ի՞նչ ձևերով մենք կարող ենք պատվել նրանց զոհաբերությունը։

Սոնչվող սուրբ գրություններ

Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց Ծ.30–31; 2 Նեփի 3.5–15, ՎևՈՒ 11.11–26, 76.22–24, 135

Օգնություն ուսուցչին

Ջանասեր ուսումնասիրություն խրախուսելու ուղիներից մեկը ուշադիր լսելն է, երբ ինչ-որ մեկը հարց է տալիս կամ մեկնաբանություն անում։ «Լսելը սիրո արտահայտություն է։ Այն հաճախ զոհաբերություն է պահանջում։ Երբ մենք իսկապես լսում ենք ուրիշներին, մենք հաճախ հրաժարվում ենք ասել այն, ինչ կամենում ենք ասել, որպեսզի նրանք կարողանան արտահայտվել» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում [1999],* 66)։

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1962, 44.
2. In Bryant S. Hinckley, "Joseph Fielding Smith," *Improvement Era,* June 1932, 459
3. In Conference Report, Apr. 1962, 44.
4. In Conference Report, Apr. 1960, 73.
5. In Conference Report, Apr. 1962, 45.
6. In Conference Report, Oct. 1949, 88–89.
7. In Conference Report, Oct. 1970, 6.
8. "The First Prophet of the Last Dispensation," *Ensign,* Aug. 1971, 7.
9. In Conference Report, Apr. 1920, 108–9.
10. In Conference Report, Apr. 1920, 107.
11. In Conference Report, Oct. 1949, 88.
12. "To Know for Ourselves," *Improvement Era,* Mar. 1970, 3.
13. *Essentials in Church History* (1950), 20–21.
14. In Conference Report, Oct. 1970, 6.
15. "The First Prophet of the Last Dispensation," 7.
16. "A Prophet's Blessing," *Ensign,* July 1972, 130.
17. "Hyrum Smith: A Tribute by Joseph Fielding Smith," *Improvement Era,* Feb. 1933, 201; italics removed from original; տես նաև *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 461.
18. In Conference Report, Apr. 1930, 91–93; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 216–19.
19. "The First Prophet of the Last Dispensation," 7.
20. "Ogden Temple Dedicatory Prayer," *Ensign,* Mar. 1972, 9.

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ՝ Տիրոջ թագավորության նվիրյալ ծառա

Եկեղեցին և Աստծո արքայությունը

«Թող բոլոր մարդիկ իմանան, որ սա է Տիրոջ Եկեղեցին և Նա է ղեկավարում նրա գործերը: Ինչպիսի արտոնություն է անդամակցություն ունենալ այսպիսի աստվածային հաստատությունում»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ծառայությունը որպես Եկեղեցու Նախագահ՝ 1970թ. հունվարի 23–ից մինչև 1972թ. հուլիսի 2-ը Տիրոջ թագավորությանը կյանքի մի ողջ ժամանակահատվածի նվիրաբերման գագաթնակետը եղավ: Նա կատակում էր, որ իր առաջին հանձնարարությունը եղավ, երբ նա մանուկ էր: Երբ նա ինն ամսեկան էր, նա և իր հայրը՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ուղեկցեցին Նախագահ Բրիգամ Յանգին, գնալով Մենթ Ջորջ, Յուտա՝ մասնակցելու Մենթ Ջորջի Տաճարի նվիրագործմանը:[1]

Որպես երիտասարդ տղամարդ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը լիաժամկետ միսիա ծառայեց և ավելի ուշ կանչվեց լինելու քահանայության քվորումի նախագահ և Երիտասարդ Տղամարդկանց Փոխադարձ Բարելավման Ընկերության անդամ (Երիտասարդ տղամարդկանց կազմակերպության նախատիպը): Նա նաև աշխատեց Եկեղեցու Պատմաբանական գրասենյակում որպես գործավար և նա համեստորեն օգնում էր իր հորը՝ որպես ոչ պաշտոնական քարտուղար, երբ նրա հայրը Եկեղեցու նախագահն էր: Ծառայելու այս առիթները թույլ տվեցին Ջոզեդ Ֆիլդինգ Սմիթին գնահատել Եկեղեցու ոգեշնչված կազմակերպությունը և դրա դերը անհատներին և ընտանիքներին դեպի հավերժական կյանք առաջնորդելիս:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը կարգվեց որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ 1910թ. ապրիլի 7-ին: Նա ծառայեց որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ մոտ 60 տարի, ներառյալ 20 տարի որպես Քվորումի Նախագահ: Որպես Առաքյալ՝ նա օգնեց ղեկավարել Եկեղեցին ողջ աշխարհում: Նա շատ ուղիներով մասնակցեց Եկեղեցու առաքելությանը, ծառայելով որպես Եկեղեցու Պատմաբան, Սոլթ Լեյքի Տաճարի Նախագահ, Յուտայի Ծագումնաբանական Ընկերության նախագահ և Առաջին Նախագահության Խորհրդական:

Լինելով հասարակ և իրեն չերևակայող մարդ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը երբեք չէր ձգտում այս պաշտոններին: Բայց երբ Տերը կանչեց նրան ծառայելու, նա պատրաստակամորեն և խանդավառորեն հնազանդվեց: Մի օր նա հանդարտորեն ցույց տվեց այդ նվիրաբերումը, երբ 89 տարեկանում նա գնում էր ժողով: Քայլելով իր տնից, նա սայթաքեց և ընկավ աստիճաններից: Չնայած նա ցավացրեց իր ոտքը, նա մոտ մեկ քառորդ մղոն քայլեց՝ «կաղալով ծեր մարդու նման», ասաց նա, որպեսզի կատարեր իր պարտականությունները: Ժողովից հետո նա քայլելով ետ գնաց տուն, որտեղ ի վերջո թույլ տվեց բժշկին զննել իրեն: Բժիշկը հայտնաբերեց, որ Նախագահ Սմիթի ոտքը մի քանի տեղից կոտրվել էր: Նախագահ Սմիթը հետագայում այդ փորձառության մասին ասաց. «Ժողովը մի քիչ երկար տևեց», ասաց նա: «Բայց այդ ժամանակ ժողովների մեծ մասը երկար էին տևում»:[2]

Վերջին Օրերի Սրբերի երիտասարդներին ուղղված մի ուղերձում Նախագահ Սմիթը կիսվեց Եկեղեցու աշխատանքին այդքան նվիրված լինելու իր պատճառի վերաբերյալ:

«Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը Հոր Միածին Որդին է մարմնում: Ես կատարյալ հավատք ունեմ Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելության վերաբերյալ և նրանց վերաբերյալ, ովքեր հաջորդել են նրան:

Ես գիտեմ, որ մենք ունենք Հիսուս Քրիստոսի հավիտենական ավետարանի ճշմարտությունը, ճիշտ այնպես վստահ, ինչպես գիտեմ, որ ես ապրում եմ: Եթե ես չգիտենայի դա, ես չէի կամենա այստեղ լինել կամ որևէ բան ունենալ այս աշխատանքի հետ: Բայց ես գիտեմ դա իմ մարմնի ամեն ջիղով: Աստված այն հայտնի է դարձրել ինձ:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Հոգևոր խավարի և ուրացության դարերից հետո, Տերը վերականգնել է Իր ավետարանը և կազմակերպել Իր Եկեղեցին երկրի վրա։

Տերը վերականգնել է ավետարանը և կրկին կազմակերպել Իր Եկեղեցին երկրի վրա։ Այսպիսի կազմակերպության և վերականգման պատճառն այն փաստն է, որ դարեր շարունակ աշխարհը հոգևոր խավարում էր գտնվում, առանց իշխանության և առանց հասկացողության, նրանք չգիտեին թե ինչպես երկրպագեին կենդանի Աստծուն։ . . .

Հավիտենական ուխտը խախտվել էր. ավետարանի սկզբունքների ճիշտ հասկացողությունն անհետացել էր՝ ուրացության պատճառով. ավետարանի արարողությունները պաշտոնավարելու իրավունքը դադարել էր մարդկանց մեջ։ Անհրաժեշտ դարձավ, որ այս բոլորը վերականգվեր և որ հավատքն աճեր մարդկանց մեջ երկինքների բացվելու և ավետարանը վերականգվելու միջոցով։

Այսպիսով, Տերը սուրհանդակներ ուղարկեց իր ներկայությունից, ավետարանի լրիվությունը և քահանայության զորությունն ու իշխանությունը շնորհելու մարդկանց, և տվեց նրանց պատվիրաններ. . . որովհետև Տերը գիտեր այն աղետները, որոնք պետք է գային աշխարհի վրա և նրա կամքն էր, որ մի պատշաճ նախազգուշացում և ավետարանն ընդունելու հնարավորություն տրվեր մարդկանց, որ նրանք ապաշխարեին և իրենց չար ուղիներից ետ դառնային և ծառայեին Տիրոջը [տես ՎևՈւ 1.17–23]։[4]

Մենք հայտարարում ենք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո թագավորությունն է երկրի վրա՝ միակ վայրը, որտեղ մարդիկ կարող են գալ սովորելու փրկության ճշմարիտ վարդապետություններ և գտնելու սուրբ քահանայության իշխանությունը։[5]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես անչափ երախտապարտ եմ արտահայտելու երախտագիտությունը այն օրհնությունների համար, որոնք Տերը տվել է ինձ և իր եկեղեցու հավատարիմ անդամներին տարբեր ազգերում աշխարհի և բոլոր իր զավակներին ամենուրեք։

Ես շնորհակալություն եմ հայտնում Նրան իմ կյանքի ամեն օրը, որ Նա վերականգնել է այս վերջին օրերում Իր հավիտենական ավետարանը՝ բոլորի փրկության համար, ովքեր կհավատան և կհնազանդվեն դրա օրենքներին:[6]

2

Տերն Ինքն է ղեկավարում Եկեղեցու աշխատանքը և մեր արտոնությունն է անդամակցություն ունենալ դրանում:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին իրականում տառացիորեն Աստծո թագավորությունն է երկրի վրա:[7]

Ես կամենում եմ ասել, որ ոչ մի մարդ ինքնուրույն չի կարող ղեկավարել այս եկեղեցին: Սա Տեր Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, նա է գլխավորում այն: Եկեղեցին կրում է Նրա անունը, ունի Նրա քահանայությունը, սպասավորում է Նրա ավետարանը, քարոզում է Նրա վարդապետությունը և կատարում Նրա աշխատանքը:

Նա ընտրում է մարդկանց և կանչում նրանց գործիքներ լինելու Իր ձեռքում իրականացնելու Իր նպատակները, և նա առաջնորդում է և ուղղություն տալիս նրանց իրենց գործերում: Բայց մարդիկ ընդամենը գործիքներ են Տիրոջ ձեռքում, և պատիվն ու փառքը այն ամենի համար, որ Նրա ծառաներն արել են, պիտի Նրան վերագրվեն հավիտյանս:

Եթե սա մարդու աշխատանքը լիներ, այն կձախողվեր, բայց սա Տիրոջ աշխատանքն է, իսկ նա չի ձախողվում: Եվ մենք ունենք համոզվածություն, որ եթե մենք պահենք պատվիրանները և քաջարի լինենք Հիսուսի վկայության մեջ և հավատարիմ լինենք այն ամենում ինչ Նա վստահել է մեզ, Տերը կառաջնորդի և կղեկավարի մեզ և Իր եկեղեցին արդարության ուղիներում, բոլոր Իր նպատակների իրականացման համար:[8]

Եկեղեցու բոլոր անդամներին ողջ աշխարհում ես կկամենայի ասել, որ այս եկեղեցին Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի ուղղորդմամբ և ղեկավարությամբ աստվածայնորեն նշանակված առաքելություն ունի կատարելու և որ ոչինչ չի կանգնեցնի Նրա ծրագրերը դրա հետ կապված: Դա կիրականացնի մեր Երկնային Հոր նախագծերը: Հուսով եմ, որ Սրբերը ողջ աշխարհում ամեն օր շնորհակալություն են հայտնում Տիրոջը Իր եկեղեցու անդամները լինելու համար և մեր ուրախության և

երջանկության համար՝ ավետարանը վերականգնելիս Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելության համար։[9]

Բոլոր ազգերում սրտով ազնիվներին մենք ասում ենք. Տերը սիրում է ձեզ։ Նա ուզում է, որ դուք ստանաք ավետարանի լրիվ օրհնությունները։ Նա այժմ հրավիրում է ձեզ հավատալ Մորմոնի Գրքին, ընդունել Ջոզեֆ Սմիթին որպես մարգարե և գալ իր երկրային թագավորություն և այդ ձևով Իր երկնային թագավորությունում հավերժական կյանքի ժառանգներ դառնալ։[10]

Եկեղեցու կազմակերպվելուց սկսած երբեք չի եղել մի ժամանակ, երբ Եկեղեցին որևէ մարդ ղեկավարի։ Դա չի եղել նաև ոչ Ջոզեֆ Սմիթի ոչ էլ Բրիգամ Յանգի օրերին, դա այդպես չի եղել այդ ժամանակից մինչև այժմ։ Դա Տիրոջ աշխատանքն է և մի մոռացեք, որ Ամենազորն է, ով պատրաստվում է անել այս աշխատանքը և ոչ թե մարդը։[11]

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո թագավորությունն է երկրի վրա և այժմ ինչպես որ կազմակերպված է և ղեկավարվում է, այն ունի Տիրոջ հավանությունը և շարժվում է այն ուղով, որով ուղղորդվում է։

Թող բոլոր մարդիկ իմանան, որ սա Տիրոջ Եկեղեցին է և Նա է ղեկավարում դրա գործերը։ Ինչպիսի արտոնություն է ունենալ անդամակցություն այսպիսի աստվածային հաստատությունում։[12]

3

Եկեղեցին կազմակերպված է օգնելու անդամներին ուրախություն և երջանկություն գտնել այս կյանքում և հավերժական կյանք եկող կյանքում։

Տերը հաստատել է բոլոր բաները կարգով, և տվել է մեզ կատարյալ համակարգ։ Մարդիկ չեն կարող բարեփոխել այն։ Եթե մենք ի կատար ածենք այն, ինչ Տերը հայտնի է դարձրել, ինչպես Նա է բացահայտել դա, ապա բոլոր բաները կատարյալ կլինեն, քանզի կազմակերպությունը կատարյալ կազմակերպություն է, դրա տեսությունը, դրա ծրագիրն անբիծ է։[13]

Տերը հիմնադրել է Իր եկեղեցում քահանայության կազմակերպությունը, որը ղեկավարվում է առաքյալների և

մարգարեների կողմից։ Եվ Նա տվել է նաև այլ կազմակերպություններ. . . քահանայությանն օգնելու և աջակցելու համար։

Յուրաքանչյուր ավետարանի տնտեսությունում կան բավարարելու հատուկ կարիքներ, լուծելու խնդիրներ և օգնություն, որը պետք է տրվի աջակցելու և օգնելու Եկեղեցու անդամներին իրենց փրկությունը «ահով եւ դողալով» գործելու Տիրոջ առաջին (Տես Փիլ. Բ.12)։ Այդ պատճառով մենք ունենք օժանդակ կազմակերպություններ [Սփոփող Միությունը, Երիտասարդ տղամարդիկ, Երիտասարդ Կանայք, Երեխաների Միությունը և Կիրակնօրյա դպրոցը] օգնելու և աջակցելու քահանայությանը։ Դրանք այնպես են կազմակերպված, որպեսզի բավարարեն մարդկանց կարիքները ինչպիսի սոցիալական պայմաններ էլ, որ գոյություն ունենան։ Դրանք Աստծո կառավարման մասն են կազմում և հիմնադրվել են օգնելու Եկեղեցու անդամներին կատարելագործելու իրենց կյանքը և անելու այն բաները, որոնք ապահովում են նրանց ուրախություն և երջանկություն այս կյանքում և հավերժական կյանք եկող կյանքում։ . . .

Եկեղեցին և նրա ծրագրերը ծառայողական կազմակերպություն են՝ ընտանիքներին ու անհատներին օգնելու համար։ Տնային ուսուցիչները, քահանայության առաջնորդներն ու եպիսկոպոսները նշանակված են առաջնորդելու նրանց, ում հետ նրանք ջանք են թափում դեպի հավերժական կյանք Հոր արքայությունում, և օժանդակ կազմակերպությունները նշանակցած են օգնելու և աջակցելու փրկության այս մեծ աշխատանքին։

Հնարավոր չէ չափից շատ ուժգնորեն շեշտել բոլոր այս ծրագրերը բոլոր մեր Հոր զավակների օգտի և օրհնության համար օգտագործելու մեծ անհրաժեշտության մասին։ . . .

Եթե մեզանից բոլորն անեն բոլոր բաները, ինչ մենք պետք է անենք Եկեղեցու ծրագրերն առաջ տանելու համար, Տերը կօրհնի և կբարգավաճեցնի մեզ այնքան լիովին, որ հաջողությունը կուղեկցի մեր գործերին և այդ բոլորից խաղաղությունն ու ուրախությունը կլինի մեր ճակատագիրն այստեղ և հավերժական փառք այստեղից հետո։[14]

«Ձեր կարողությունն անկատար չի անցնում այն Աստծո կողմից, որին դուք ծառայում եք և ում աշխատանքով դուք զբաղված եք»:

4

Մեր ծառայությունը Եկեղեցում արտահայտում է սեր մյուսների հանդեպ և երախտագիտություն Տիրոջ անսահման ծառայության համար:

Տերը Եկեղեցու հետ է: Նա մեզ առաջնորդում է: Նրա հոգին հանգչում է այս ժողովրդի վրա: Այն, ինչ Նա պահանջում է մեզանից, խոնարհությամբ ծառայելն է և սրտով ու հոգով մեկ լինելը:[15]

Մեր Փրկիչը եկավ աշխարհ ուսուցանելու մեզ սեր միմյանց հանդեպ, և երբ այդ մեծ դասը ցույց տրվեց իր մեծ տառապանքով և մահվամբ, որ մենք կարողանայինք ապրել, միթե՞ մենք չպետք է արտահայտենք մեր սերը մեր մերձավորների հանդեպ ծառայություն մատուցելով ի օգուտ նրանց: Միթե՞ մենք չպետք

է ցույց տանք երախտագիտություն այն անսահման ծառայության համար, որ Նա մատուցեց մեզ, ծառայություն մատուցելով Իր գործում:

Մարդը, որն անում է միայն այն բաները Եկեղեցում, որը միայն իրեն է վերաբերում, երբեք չի հասնի վեհացման: Օրինակ՝ մարդը, որ կամենում է աղոթել, վճարել իր տասանորդները և նվիրատվությունները և կատարել սովորական պարտականությունները, որոնք վերաբերում են իր անձնական կյանքին և ոչ մի ավելի բան, երբեք չի հասնի կատարելության:[16]

Երբեք մի հրաժարվեք ծառայել: Երբ նախագահող պաշտոնյան խնդրում է ձեզ օգնել, ուրախ եղեք ընդունել և ներդնել լավագույնը, որ դուք ունեք այդ աշխատանքի համար: Տերը մեզանից ակնկալում է այս, և մենք ուխտի ներքո ենք այդ անելու համար: Այս ուղին բերում է ուրախություն և խաղաղություն և միևնույն ժամանակ, նրանք ովքեր ծառայում են, ստանում են մեծագույն պարգևը: Ուսուցիչը ստանում է ավելին, քան նրանք, ում նա ուսուցանում է, օրհնությունը, որը վերադառնում է մեզ, երբ մենք ընդունում ենք Եկեղեցում ծառայելու կոչումը, շատ ավելի մեծ է, քան այն օրհնությունը, որ մենք կարող ենք տալ ուրիշներին: Նա, ով հրաժարվում է կատարել որևէ աշխատանք կամ խուսափում պարտականությունից, երբ այն տրված է նրան Եկեղեցում, Հոգու առաջնորդությունը կորցնելու մեծ վտանգի տակ է: Ի վերջո, նա դառնում է գաղջ և անտարբեր բոլոր պարտականությունների հանդեպ, և բույսի նման, որը չի մշակվում և ջրվում, նա թառամում է և մահանում հոգևոր մահով:[17]

Ձեր կարողունակ ծառայությունն աննկատ չի անցնում այն Աստծո կողմից, որին դուք ծառայում եք և ում աշխատանքով դուք զբաղված եք:[18]

Իմ աղոթքն է, որ մեզանից բոլորը, միասին աշխատելով որպես իսկական եղբայրներ և քույրեր Տիրոջ թագավորությունում, այնպես աշխատեն որպեսզի իրականացնեն այն մեծ աշխատանքը, որը գտնվում է առջևում:[19]

5

Այս տնտեսությունում Աստծո թագավորությունը և Տիրոջ աշխատանքը կտարածվի ողջ աշխարհով մեկ:

Ավետարանի տնտեսությունը բնորոշվում է որպես աստվածայնորեն ընտրված պաշտոնյաներին զորության և իշխանության Աստծո կողմից հանձնարարության շնորհում՝ տարածելու Աստծո խոսքը և սպասավորելու բոլոր դրա արարողությունները: . . .

Եղել են ժամանակներ, երբ Ավետարանը վերցվել է մարդկանցից նրանց օրինազանցության պատճառով: Այդպիսին էր դեպքը Նոյի օրերում: Իսրայելը շրջվեց Տիրոջից և թողվեց խավարում շատ սերունդների ընթացքում նախքան Հիսուս Քրիստոսի գալուստը, և երբ Նա եկավ մարդկանց մեջ, Նա վերականգնեց Ավետարանի լրիվությունը: Նա ուղարկեց Իր աշակերտներին հայտարարելու Իր ուղերձը ողջ աշխարհում, բայց շատ դարեր չէին անցել, մինչև մարդիկ նորից ընկան սխալի մեջ և կորցրեցին Տիրոջ անունով գործելու իշխանությունը: Սա անհրաժեշտ դարձրեց բացել երկինքները և ներկայացնել նոր տնտեսությունը՝ նախապատրաստելու երկնքի ամպերով մեր Տիրոջ երկրորդ գալուստը՝ թագավորելու երկրի վրա փառքով՝ հազար տարի, իրադարձություն, որը մոտ է, նույնիսկ մեր դռներին:[20]

Ավետարանը ինքը նույնն է եղել բոլոր տնտեսություններում, փրկության ծրագիրը նույնն է մեր Հոր բոլոր զավակների համար ամեն դարում: Ժամանակ առ ժամանակ այն կորել է ուրացության պատճառով, բայց երբ էլ որ Տերը ժողովուրդ է ունեցել երկրի վրա, նրանց առաջարկվել է փրկության նույն օրենքներն ու ճշմարտությունները, որը նա հայտնի է դարձրել մեզ:

Բայց կա մի մեծ հավելյալ բան, որը մենք ենք ստացել այս դարում, որը երբեք չի եղել նախկինում: Այս տնտեսությունում Տերը հայտնել է, որ Եկեղեցին այլևս երբեք չի շեղվի, այս անգամ ավետարանը մնալու է այստեղ: Այս անգամ բացահայտված ճշմարտությունը կանխորոշված է պատրաստել մի ժողովուրդ Մարդու Որդու երկրորդ գալուստի համար, և Եկեղեցին կհաստատվի երկրագնդի բոլոր մասերում, երբ Տերը գա խաղաղության և արդարության հազարամյա ժամանակաշրջանի մուտքը բացելու:[21]

Մենք համաշխարհային եկեղեցու անդամներ ենք, եկեղեցի, որն ունի կյանքի և փրկության ծրագիրը, եկեղեցի,

որը հիմնադրվել է հենց Տիրոջ կողմից այս վերջին օրերում՝ տանելու Իր փրկության ուղերձը բոլոր Իր զավակներին ողջ աշխարհում: . . .

Մենք ձեռք ենք բերել դիրք և ուժ, որոնք հնարավոր են դարձնում մեզ համար կատարել հանձնարարությունը, որը տրվել է մեզ Տիրոջ կողմից Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, որ մենք պետք է տանենք վերականգման ուրախ լուրերը ամեն ազգի և բոլոր մարդկանց:

Եվ մենք ոչ միայն պետք է քարոզենք ավետարանը ամեն ազգում, նախքան Մարդու Որդու երկրորդ գալուստը, բայց մենք պետք է ուխտ կապենք և հիմնադրենք համայնքներ նրանց մեջ:[22]

Աստծո թագավորությունը և Տիրոջ աշխատանքն ավելի ու ավելի կտարածվի, այն ավելի բուռն առաջընթաց կունենա աշխարհում ապագայում, քան այն ունեցել է անցյալում: Տերն է ասել դա և Հոգին հաստատում է, և ես բերում եմ վկայություն այս մասին, քանզի ես գիտեմ, որ դա ճշմարիտ է: Աստծո թագավորությունը այստեղ է՝ աճելու, ամենուրեք տարածվելու, արմատներ գցելու հողում և բնակվելու, որտեղ Տերն է տնկել այն՝ Իր իսկ զորությամբ և Իր իսկ խոսքով, երբեք այլևս չկործանվելու, այլ շարունակելու մինչև Ամենազորի նպատակները իրականանան՝ յուրաքանչյուր սկզբունք, որ խոսվել է մարգարեների կողմից աշխարհի սկզբից ի վեր: Սա Աստծո աշխատանքն է, որն Ինքն Իր իսկ իմաստությամբ և ոչ թե մարդու իմաստությամբ, վերականգել է երկրի վրա վերջին օրերում:[23]

Ավետարանը բոլոր մարդկանց համար է, և Եկեղեցին պիտի հաստատվի ամենուրեք, բոլոր ազգերի մեջ, նույնիսկ մինչև երկրի ծայրերը, նախքան Մարդու Որդու երկրորդ գալուստը:[24]

Ես գիտեմ և վկայում եմ, որ Տիրոջ նպատակները երկրի վրա պիտի գերիշխեն: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին մնալու է այստեղ: Տիրոջ աշխատանքը պիտի հաղթանակի: Ոչ մի ուժ երկրի վրա չի կարող խանգարել ճշմարտության տարածմանը և ամեն ազգում ավետարանի քարոզմանը:[25]

Ես թողնում եմ իմ օրհնությունը ձեզ հետ և իմ համոզմունքը, որ Աստված Իր ժողովրդի հետ է, և որ այն աշխատանքը, որով մենք զբաղվում ենք, կհաղթանակի և առաջ կգլորվի մինչև որ Տիրոջ հավերժական նպատակներն իրագործվեն:[26]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ինչպե՞ս կարող ենք հետևել Նախագահ Սմիթի օրինակին Եկեղեցու մեր ծառայությունում (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։
- Խորհեք Նախագահ Սմիթի ուսմունքները ավետարանի Վերկանգման մասին (տես բաժին 1)։ Ինչպիսի՞ն են ձեր զգացումները, երբ դուք մտածում եք մի ժամանակում ապրելու մասին, երբ Տիրոջ Եկեղեցին վերականգվել է երկրի վրա։
- Նախագահ Սմիթը վկայում է, որ Հիսուս Քրիստոսը Եկեղեցու գլխին է (տես բաժին 2)։ Ինչպե՞ս կկիսվեիք ձեր վկայությամբ այս ճշմարտության մասին մեկի հետ, ով Եկեղեցու անդամ չէ։
- Ինչպե՞ս են Եկեղեցու կազմակերպություններն ու ծրագրերն օգնել ձեզ ստանալ բաժին 3-ում նշված օրհնությունները։ Ինչե՞ս են դրանք օգնել ձեր ընտանիքին։
- Նախագահ Սմիթն ասել է. «Մեր Փրկիչը եկավ աշխարհ ուսուցանելու մեզ սեր միմյանց հանդեպ» (բաժին 4)։ Ի՞նչ ուղիներով կարող ենք հետևել Փրկչի սիրո օրինակին, երբ մենք ծառայում ենք որպես տնային ուսուցիչներ կամ այցելող ուսուցիչներ։
- Երբ վերընթերցեք 5–րդ բաժինը, նկատեք թե ինչպես է այս տնտեսությունը տարբերվում մյուսներից։ Ինչպե՞ս կարող է այս ըմբռնումն ազդել Եկեղեցում մեր ծառայության վրա։ Որո՞նք են ձեր զգացումները, երբ մտածում եք Փրկչի Երկրորդ Գալստին աշխարհը նախապատրաստելու մասին։

Առնչվող սուրբ գրություններ

Մոսիա 18.17–29, ՎևՈՒ 1.30, 65.1–6, 115.4, 128.19–22

Օգնություն ուսուցչին

«Երբ օգտագործում եք ուսանելու տարբեր վարժություններ, ուսանողները միտում ունեն ավելի լավ հասկանալու ավետարանի սկզբունքները և ավելի լավ հիշելու դրանք։ Ուշադիր ընտրված մեթոդը կարող է դարձնել սկզբունքը ավելի պարզ, ավելի հետաքրքիր և ավելի լավ հիշվող» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 89)։

Հղումներ

1. See Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 16.
2. In *The Life of Joseph Fielding Smith,* 4.
3. "My Dear Young Fellow Workers," *New Era,* Jan. 1971, 5.
4. In Conference Report, Oct. 1944, 140–41.
5. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 4.
6. In Conference Report, Apr. 1970, 4.
7. "Use the Programs of the Church," *Improvement Era,* Oct. 1970, 3.
8. In Conference Report, Apr. 1970, 113.
9. "For Thus Shall My Church Be Called," *Improvement Era,* Apr. 1970, 3.
10. "Counsel to the Saints and to the World," *Ensign,* July 1972, 27.
11. In Conference Report, Oct. 1968, 123.
12. In Conference Report, Oct. 1970, 8.
13. "The One Fundamental Teaching," *Improvement Era,* May 1970, 3.
14. "Use the Programs of the Church," 2–3.
15. "The One Fundamental Teaching," 3.
16. In Conference Report, Apr. 1968, 12.
17. In Conference Report, Apr. 1966, 102.
18. In Conference Report, Apr. 1970, 59.
19. In Conference Report, Apr. 1970, 114.
20. "A Peculiar People: Gospel Dispensations," *Deseret News,* Dec. 5, 1931, Church section, 6.
21. "A Call to Serve," *New Era,* Nov. 1971, 5.
22. In Conference Report, British Area General Conference 1971, 5.
23. In Conference Report, Oct. 1968, 123.
24. In Conference Report, British Area General Conference 1971, 176.
25. "Counsel to the Saints and to the World," 28.
26. In Conference Report, Apr. 1970, 148–49.

Գ Լ Ո Ւ Խ 9

Մորմոնի Գրքի վկաները

«Ինձ թվում է, որ այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ երբեք չի բավարարվի, եթե ժամանակ առ ժամանակ կրկին չկարդա Մորմոնի Գիրքը և խորապես չիորհի դրա մասին, որպեսզի կարողանա վկայել, որ այն իսկապես գրված է Ամենազորի ներշնչմամբ, և որ այդ պատմությունը ճշմարիտ է»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ծառայեց որպես Եկեղեցու Պատմաբան և Մատենագիր 1921թ. մարտից մինչև 1970թ. փետրվար ամիսը: Այս պաշտոնում ծառայելիս նա օժանդակում էր Եկեղեցու համար պատմական նշանակություն ունեցող բնագիր փաստաթղթեր ձեռք բերելու գործին: Այդ փաստաթղթերից մեկը Դեյվիդ Ուիթմերի ստորագրությամբ ձեռագիր վկայությունն էր, որը Մորմոնի Գրքի երեք հատուկ վկաներից մեկն էր: Նախագահ Սմիթը արտոնություն ունեցավ նաև աշխատել Օլիվեր Քաուդերիի ձեռագիր վկայության հետ, որը Մորմոնի Գրքի Երեք Վկանից ևս մեկն էր: Այս երկու փաստաթղթերը ձեռքով արտագրելուց հետո Նախագահ Սմիթը կարդաց դրանք առնվազն երկու հասարակական բանախոսությունների ժամանակ՝ մեկը 1939թ մարտին և կրկին 1956թ. Եկեղեցու Գերագույն համաժողովում:

Չնայած Նախագահ Սմիթը զգում էր, որ այս գրված վկայությունները բավականաչափ կարևոր էին կիսվելու համար, նա ավելի հաճախ խոսում էր Մորմոնի Գրքի մասին մեկ այլ վկայության վերաբերյալ՝ իր սեփական վկայության մասին, որը նա ստացել էր շատ առաջ, նախքան Եկեղեցու Պատմաբանի գրասենյակում աշխատելը: Նա ասել է. «Ես սկսեցի կարդալ Մորմոնի Գիրքը, նախքան բավականաչափ մեծացա սարկավագ

Հրեշտակը ցույց տվեց ոսկե թիթեղները Օլիվեր Քաուդերիին և Դեյվիդ Ուիթմերին, Երեք Վկաներից երկուսին, Ջոզեֆ Սմիթի ներկայությամբ: Հրեշտակը հետագայում ցույց տվեց թիթեղները Մարտին Հարրիսին՝ երրորդ վկային:

դառնալու համար և «Ես սկսել եմ կարդալ Մորմոնի Գիրքը այն տարիքում, երբ դեռ չէի կարող սարկավագ դառնալ, և այդ ժամանակից ի վեր շարունակում եմ կարդալ այն, և գիտեմ, որ այն ճշմարիտ է»:[1] «Ես կարդացել եմ այն շատ, շատ անգամներ, ասել է նա Վերջին Օրերի Սրբերին, Ես չեմ կարդացել այն բավականաչափ: Այն դեռ պարունակում է ճշմարտություններ, որոնք ես կարող եմ դեռ որոնել և գտնել, քանզի ես դեռ չեմ տիրապետել դրան, բայց ես գիտեմ, որ այն ճշմարիտ է»:[2]

Կիսվելով Մորմոնի Գրքի վերաբերյալ այս վկայություններով՝ Նախագահ Սմիթի նպատակն էր քաջալերել ուրիշներին ստանալ իրենց անձնական վկայությունները: Նա հայտարարել է. «Ես վկայություն եմ բերում ձեզ, որ Տերը շատ հստակ է դարձրել ինձ համար հայտնությամբ, որը ես եմ ստացել, և ձեզանից շատերը, ովքեր այստեղ ներկա են, նույնպես կարող են վկայություն բերել, որ այս բաները ճշմարիտ են, և դա ամեն անկեղծ անձնավորության արտոնությունն է, որ ձգտի կարդալ աղոթքի ոգով և իմանալու ցանկությամբ, թե արդյոք գիրքը ճշմարիտ է թե ոչ, և նա կստանա այդ վկայությունը խոստման համաձայն, որն արվել է Մորոնիին, ով կնքեց հիշատակարանը՝ ի հայտ գալու Ժամանակների Լրության Տնտեսությունում:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Մորմոնի Գիրքը սրբազան հիշատակարան է, որը պարունակում է հավիտենական ավետարանը և բերում է վկայություն Հիսուս Քրիստոսի մասին:

Մորմոնի Գիրքը Ամերիկյան մայրցամաքի հնադարյան բնակիչների սրբազան պատմությունն է, և պարունակում է նրանց մարգարեների կանխագուշակումները, Տիրոջ պատվիրանները նրանց և այդ հնադարյան ժողովուրդների պատմությունն ու ճակատագիրը: Սա Ամերիկյան սուրբ գրության մի հատոր է և ճիշտ նույնքան սրբազան է և ոգեշնչված, որքան որ Աստվածաշունչն է, որը պարունակում է Եբրայեցի ցեղի սրբազան հիշատակարանները արևելյան կիսագնդում:[4]

Նեփիացի մարգարեները աղոթքով լրջորեն ձգտում էին, որ իրենց գրվածքները պահպանվեին ի հայտ գալու և խոսելու կարծես թե դրանք մեռածների կողմից լինեն, բերելու վկայություն

Լեքիի մնացորդներին, ինչպեսև հրեաներին ու հեթանոսներին, որ Աստված հայտնի էր դարձրել իրենց՝ Ավետարանի լրիվությունը: Նրանց բուռն ցանկությունը նրանում էր, որ այս վերջին օրերին մարդիկ զուցե բերվեին ապաշխարության և հավատքի առ Աստված՝ շատ դարեր առաջ այս Նեփիացի մարգարեներին տրված վկայությունների միջոցով: Փաստորեն, մենք իմանում ենք Մորմոնի Գրքի միջոցով, որ այս է հիմնական նպատակը Մորմոնի Գրքի, ինչպես նշվում է դրա շատ հատվածներում: . . .

. . . Տերը շատ հստակ դարձրեց Նեփիացի մարգարեներին, որ նրանց պատմությունը և մարգարեությունները կպահպանվեն՝ ի հայտ գալու վերջին օրերին, որպես վկայություն Հիսուս Քրիստոսի համար և հաստատելու ժողովրդի մեջ Իր Ավետարանը: Նեփին մարգարեացավ Հեթանոսներին և Հրեաներին մեր օրերի մասին և թողեց նրանց իր վկայությունը շատ արտահայտիչ և ազդեցիկ ձևով (2 Նեփի 33): Մորոնին արեց նույնը (Մորոնի 10.24–34):[5]

Նեփին՝ Իսրայելացիների գաղութի ամենավաղ մարգարեներից մեկը, կանխագուշակել էր մոտավորապես վեց հարյուր տարի քրիստոնեական դարաշրջանից առաջ, որ երբ իր ժողովրդի պատմությունը պարունակող հիշատակարանները կհայտնաբերվեն փոշուց, դա կլինի այնպիսի օրերում, երբ մարդիկ «[կժխտեն] Աստծո զորությունը, Սուրբին Իսրայելի». և նրանք կասեն . «Լսեք մեզ և լսեք մեր ցուցումը. քանզի ահա, այսօր Աստված չկա, քանզի Տերը և Քավիչն արել է իր գործը, և նա տվել է իր զորությունը մարդկանց» [2 Նեփի 28.5]: Բացի այդ, շատերը նրանց մեջ կասեն, երբ նրանց ներկայացվի արևմտյան այս աշխարհի մարդկանց պատմությունը պարունակող մի նոր սուրբ գրության հատոր. «Աստվածաշունչ, Աստվածաշունչ: Մենք ունենք Աստվածաշունչ և չի կարող լինել որևէ այլ Աստվածաշունչ» [2 Նեփի 29.3]:

. . . Սուրբ գրության այս նոր հատորը պետք է լինի մի վկայություն, ոչ միայն Քրիստոսի համար և պարունակի հավիտենական Ավետարանը, այլ պետք է նաև լինի վկայություն հրեական սուրբ գրությունների՝ Աստվածաշնչի, և այս երկու հիշատակարանները, համաձայն Նեփիի, նրա հոր և նաև Հովսեփի՝ Իսրայելի որդու մարգարեության, պիտի միասին աճեին բերելով

վկայություն հավիտենական ավետարանի մասին [տես 2 Նեփի 3.11–13, 29.10–14]: Որպես այդպիսի վկա՝ այս հիշատակարանները այսօր կանգնում են վկայելով ճշմարտությունը՝ ի դատապարտություն բոլորին, ովքեր ժխտում են նրանց ուսմունքները:[6]

Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մորմոնի Գիրքը Աստծո պարգևով ու զորությամբ, և որ այն ի հայտ է եկել «որպեսզի համոզի հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը, որն իրեն հայտնում է բոլոր ազգերին» [տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը]:[7]

2

Համաձայն վկաների օրենքի, Տերը կանչեց հատուկ վկաներ՝ Մորմոնի Գրքի մասին վկայելու համար:

Կա հատուկ սահմանված օրենք սուրբ գրություններում, որը կառավարում է վկայությունը և վկաների նշանակումը: Տերը միշտ հետևել է այդ օրենքին, երբ նոր հայտնություն է պարգևել ժողովրդին:[8]

Բոլոր դարերի ընթացքում այս օրենքը [վկաների օրենքը] եղել է հաստատուն և հստակ: Եթե մենք ունենայինք կատարյալ հիշատակարաններ բոլոր դարերի համար, մենք կգտնեինք, որ երբ Տերը հիմնադրել է տնտեսություն, եղել են մեկից ավելի վկաներ, ովքեր վկայել են Իր մասին: Պողոսը, գրելով Կորնթացիներին, ասել է. «Երկու կամ երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի» [Բ Կորնթացիս ԺԳ.1]:[9]

Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ Տերն ասել է, որ Նա կընտրի վկաներ: Պետք է լինեն երեք հատուկ վկաներ, որոնք պետք է վկայություն տան աշխարհին, և նա ասել է.

«Եվ չկա մեկ ուրիշը, որը կտեսնի այն, բացի մի քանիսից, Աստծո կամքի համաձայն վկայություն բերելու համար մարդկանց զավակներին, նրա խոսքի վերաբերյալ. Քանզի Տեր Աստված ասել է, որ հավատարիմների խոսքերը կխոսվեն, կարծես թե դրանք մեռածների կողմից լինեն:

Ուստի, Տեր Աստված կսկսի առաջ բերել գրքի խոսքերը. և նա կհաստատի իր խոսքն այնքան շատ վկաների բերանով, որքան նրան բարի կթվա. և վայ լինի նրան, որ մերժում է Աստծո խոսքը» (2 Նեփի 27.13–14):[10]



Ջոզեֆ Սմիթը ցույց տվեց ոսկե թիթեղները Ութ Վկաների։

Երեք մարդիկ, ովքեր կանչվել էին ծառայելու որպես հատուկ վկաներ Աստծո զորությամբ Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին, Օլիվեր Քաուդերին էր, Դեյվիդ Ուիթմերը և Մարտին Հարրիսը. . . Նրանք ընկերակցեցին Ջոզեֆ Սմիթի հետ այս տնտեսությունում այս սքանչելի գործը հաստատելիս։ . . .

Նրանց վկայությունն այն է, որ նրանք ստացան այցելություն մի հրեշտակի կողմից Տիրոջ ներկայությունից, որը դրեց նրանց առջև ոսկե հիշատակարանը, որտեղից Մորմոնի Գիրքը թարգմանվեց և ուսուցանվեց նրանց։ Նրանք տեսան թիթեղների վրայի փորագրությունները, երբ թիթեղները մեկ առ մեկ շրջվեցին նրանց առջև և Աստծո ձայնը լսվեց նրանց կողմից,

հայտարարելով երկնքից, որ թարգմանությունը Աստծո պարգևով և զորությամբ է և պատվիրելով նրանց վկայություն բերել դրա մասին ողջ աշխարհին: Այս երեք վկաները ձախորդության, հալածանքի և կյանքի բոլոր փոփոխությունների ընթացքում միշտ մնացին հավատարիմ իրենց վկայությանը, որ նրանք տեսել էին թիթեղները հրեշտակի ներկայությամբ և լսել էին Աստծո ձայնը, որ նրանց հետ խոսում էր երկնքից:

Եղան ևս ութ վկաներ, ովքեր նույնպես տեսան թիթեղները, ձեռքով շոշափեցին, մանրամասն զննեցին դրանց վրայի փորագրությունները, երբ Ջոզեֆ Սմիթը նրանց ցույց տվեց դրանք: Նրանց վկայությունը տրվեց նաև աշխարհին և հայտնվում է Մորմոնի Գրքի յուրաքանչյուր հրատարակության մեջ: Բոլոր այդ ութ մարդիկ իրենց վկայությանը հավատարիմ մնացին մինչև մահ:

Այս տասներկու վկաները [ներառյալ Ջոզեֆ Սմիթը], որոնցից չորսը տեսան հրեշտակներ և ունեցան երկնային այցելուներ, իսկ ութը, ովքեր տեսան հիշատակարանը, երբ այն ցույց տրվեց նրանց Ջոզեֆ Սմիթի կողմից, ըստ երևույթի, այն բոլորն էին, ում միջոցով Տերը անհրաժեշտ համարեց հաստատել Մորմոնի Գրքի ճշմարտությունը, ինչպես խոստացել էր Նեփիի միջոցով, որ կաներ: «Եվ վայ լինի նրան, ով ժխտում է Աստծո խոսքը»: Այս մարդկանց վկայություններն ավելի քան բավարարում են օրենքը:[11]

Ջոզեֆ Սմիթը. . . միայնակ էր առաջին տեսիլքում, միանակ էր, երբ Մորոնին ուղերձ բերեց նրան, մենակ էր, երբ ստացավ թիթեղները, բայց դրանից հետո նա մենակ չէր: Տերը կանչեց այլ վկաներ: Սմիթ տատիկը (Ջոզեֆ Սմիթի մայրը, Լյուսի Մակ Սմիթը) իր պատմության մեջ ասում է, որ Մարգարեն տուն եկավ ուրախությունից արտասվելով, հետո երբ վկաները տեսան թիթեղները Աստծո հրեշտակի ցուցումով, որովհետև, ասաց նա. «Բեռը բարձրացվել է, և ես այլևս մենակ չեմ»:[12]

3

Երեք վկաները հավատարիմ մնացին Մորմոնի Գրքի իրենց վկայություններին:

Բոլոր երեք [հատուկ] վկաները օտարացան և թողեցին Եկեղեցին: Օլիվեր Քաուդերին և Մարտին Հարրիսը ետ վերադարձան, խոնարհաբար ձգտելով անդամակցություն Եկեղեցում, և երկուսն էլ մահացան լիիրավ անդամակցությամբ: Դեյվիդ

Ուիթմերը դուրս մնաց Եկեղեցուց, սակայն այս մարդկանցից բոլոր երեքն էլ հավատարիմ մնացին այն վկայությանը, որ իրենք տվեցին աշխարհին, որը գտնվում է Մորոմնի Գրքի յուրաքանչյուր օրինակում:[13]

Սա Դեյվիդ Ուիթմերի վկայությունն է, որը տրվել է Ռիչմոնդում՝ Միսսուրի նահանգ, 1881թ. մարտի 19-ին, կրկնօրինակվել է բնօրինակից, որը հրատարկվել էր Ռիչմոնդի Conservator *(Կոնսերվատոր)* պարբերականում՝ այդ ամսաթվին:

«Բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին, ում այս գրվածքները կհասնեն:

Ոմն Ջոն Մերֆի Պոլոյի կողմից [Քոլդուել գավառից], Միսսուրի, ներկայացվել է, որ ես, անցած ամառ նրա հետ զրուցելիս, հրաժարվել եմ իմ վկայությունից, որպես Մորոմնի Գրքի երեք վկաներից մեկը—

Այդ պատճառով, որպեսզի նա հասկանա ինձ այժմ, եթե նա չի հասկացել այն ժամանակ, և որպեսզի աշխարհը կարողանա իմանալ ճշմարտությունը, ես կամենում եմ այժմ՝ լինելով իմ կյանքի մայրամուտին, և Աստծո երկյուղով, մեկընդմիշտ անել այս հրապարակային հայտարարությունը.

Որ ես երբեք որևէ ժամանակ չեմ հրաժարվել այդ վկայությունից կամ դրա որևէ մասից, որն այսքան ժամանակ հրատարկվել է այդ գրքի հետ, որպես երեք վկաներից մեկը:

Նրանք, ովքեր ինձ լավ գիտեն, գիտեն, որ ես միշտ հավատարիմ եմ մնացել այդ վկայությանը: Եվ որպեսզի ոչ մի մարդ չմոլորեցվի կամ կասկածի իմ ներկա հայացքների վերաբերյալ այդ հարցի առնչությամբ, ես այժմ կրկին հաստատում եմ ճշմարտությունը բոլոր իմ հայտարարությունների, երբ այն ժամանակ արել եմ և հրատարակել»:[14]

Այժմ թույլ տվեք ասել ինչ-որ բան Մարտին Հարրիսի մասին. . . Չնայած նա շարունակում էր հավատարիմ մնալ Մորոմնի Գրքի իր վկայությանը, նա երկար տարիներ զայրացած էր Եկեղեցու վրա: Բայց որոշ ժամանակ անց, երբ Սրբերը եկան Յուտա մեր լավ եղբայրներից մի քանիսը գնացին նրա ետևից, գտան նրան և ջերմացրին ու ետ բերին նրան: Նա եկավ այստեղ [Յուտա], վերամկրտվեց և այստեղ ապրեց մի քանի տարի, բերելով ականատես լինելու վերաբերյալ իր

վկայությունը բնակավայրերում: Նա մահացավ այստեղ և թաղվեց [Կլարկսթունում՝ Յուտա]:

Այժմ հասանք Օլիվեր Քաուդերիին: Իսկ ի՞նչ պատահեց Օլիվեր Քաուդերիի հետ, երեքից ամենակարևորը, որը Ջոզեֆ Սմիթի հետ էր այնքան շատ անգամներ հրեշտակներ հայտնվելիս և բանալիները վերականգնելիս: Իսկ ի՞նչ եղավ նրան: Նա թողեց Եկեղեցին և խիստ դառնացավ, բայց երբեք չհրաժարվեց վկայությունից: Որոշ մարդիկ ասում են, որ նա այդ արել էր, բայց նա այդ չի արել: Նա միշտ հավատարիմ էր այդ վկայությանը: . . .

. . . Նավույից Սրբերի դուրս քշվելուց հետո և երբ նրանք տափաստաններում էին և ամեն ինչ թվում էր խիստ մռայլ (Սիդնի Ռիգդոնն ասել էր, որ նրանք գնացել էին իրենց կործանմանը և հույս չկար նրանց համար և լրագրերն ասում էին նրանք չէին կարող գոյատևել), այդ պայմաններում Օլիվեր Քաուդերին խնդրեց ետ գալ Եկեղեցի. . . Նրան ետ ընդունեցին, և նա պատրաստվում էր միսիա գնալ Մեծ Բրիտանիա, երբ հանկարծակի հիվանդացավ և մահացավ: Նա մահացավ Դեյվիդ Ուիթմերի տանը, վկայություն բերելով ճշմարտության մասին:[15]

4

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ կարող է Մորմոնի Գրքի վկա լինել:

Սրանք բոլոր վկաները չեն, ովքեր կարող են խոսել Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության մասին կամ Մորմոնի Գրքի ճշմարտության մասին: Խոստումը տրված է Մորմոնի Գրքում, որ բոլորը, ովքեր ցանկանում են իմանալ, թե արդյոք այն ճշմարիտ է և պարունակում է Տիրոջ խոսքը, կկարողանան իմանալ, որ այն ճիշտ է, եթե հարցնեն մաքուր սրտով և անկեղծ միտումով, ունենալով հավատք առ Քրիստոս, քանզի Նա հայտնի կդարձնի նրանց Սուրբ Հոգու զորությամբ այդ մասին [տես Մորոնի 10.3–5]: Կան հարյուր հազարավորներ, ովքեր ստուգել են այդ խոստումը և կարող են ողջ անկեղծությամբ ասել, որ նրանք ստացել են այդ գիտելիքը:[16]

Ես այնպես ամուր համոզված եմ, որ այս Մորմոնի Գիրքը, որից ես կարդացի, Աստծո խոսքն է և հայտնի է դարձվել այնպես, ինչպես Ջոզեֆ Սմիթն է հայտարարելդրա հայտնի դառնալու մասին, ինչպես որ կանգնած եմ այստեղ՝ նայելով ձեր

«Կա ոգեշնչում և խաղաղ ուրախություն և բավարարվածություն, որոնք ուղեկցում են այս գրքի անկեղծ և աղոթքով ընթերցանությանը»:

դեմքերին: Յուրաքանչյուր հոգի երկրի երեսին, ով ունի բավականաչափ խելամտություն հասկանալու, կարող է իմանալ այդ ճշմարտությունը: Ինչպե՞ս կարող է նա իմանալ դա: Այն ամենը ինչ նա պետք է անի բանաձևին հետևելն է, որը տրվել է հենց Տիրոջ կողմից, երբ Նա հայտարարեց Հրեաներին, որ նրանք, ովքեր կանեն Իր Հոր կամքը, պիտի իմանան վարդապետության մասին, թե արդյոք այն Աստծուց էր, թե Ինքն իրենից էր խոսում [տես Հովհաննես Է.17]: Իմ վկայությունն է ողջ աշխարհին, որ այս գիրքը ճշմարիտ է . . .

Ես գիտեմ, որ այս երեք վկաների վկայությունը, որը գրված է Մորմոնի Գրքի յուրաքանչյուր օրինակի վրա, ճշմարիտ է, որ նրանք կանգնեցին Աստծո հրեշտակի ներկայության մեջ, ով հայտարարեց նրանց, որ հիշատակարանը ինչպես որ այն թարգմանված էր, ճիշտ է, որ նրանց վկայությունը, որ Աստված խոսեց նրանց հետ երկնքից, կոչ անելով նրանց վկայություն բերել, որ այդ փաստը ճիշտ է և չկա մի հոգի, ով չկարողանա ստանալ այդ վկայությունը, եթե նա ցանկանում է ստանալ այն, կարդալով այդ գիրքը աղոթքով և հավատարմորեն, ճշմարտությունն իմանալու ցանկությամբ, ինչպես որ Մորոնին է

հայտարարել հայտնությամբ: Նա կիմանա ճշմարտության վերականգման մասին այս սուրբ գրությունից, որը տրվել է այս մայրցամաքի հնադարյան բնակիչներին:[17]

Ինձ թվում է, որ այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ երբեք չի բավարարվի, եթե ժամանակ առ ժամանակ կրկին չկարդա Մորմոնի Գիրքը և խորապես չխորհի դրա մասին, որպեսզի կարողանա վկայել, որ այն իսկապես գրված է Ամենազորի ներշնչմամբ, և որ դրա պատմությունը ճշմարիտ է: . . .

. . . Այս Եկեղեցու ոչ մի անդամ չի կարող կանգնել հավանությամբ Աստծո ներկայության մեջ, ով լրջորեն և ուշադիր չի կարդացել Մորմոնի Գիրքը:[18]

Երբ կարդում եք Մորմոնի Գիրքը, դուք գիտեք, որ կարդում եք ճշմարտությունը: Ինչո՞ւ: Որովհետև Աստված կարգադրել է մարդկանց գրել իրադարձությունները ինչպես որ տեղի են ունեցել և Նա տվել է նրանց իմաստություն և ոգեշնչում անելու այդ: Այսպիսով, հիշատակարանները գրվել են այն մարդկանց կողմից, ովքեր հավատացել են Աստծուն: Այս հիշատակարանները երբեք չեն ընկել ուրացածների ձեռքը, բայց պատմաբանները գրել են և խոսել, երբ նրանք մղվել են Սուրբ Հոգուց, և մենք գիտենք, որ այն, ինչ նրանք գրել են, ճշմարիտ է, որովհետև Տերը դրել է Իր հավանության կնիքը դրա վրա [տեսՎԿՈՒ 17.6]:[19]

5

Երբ մենք շարունակում ենք կարդալ Մորմոնի Գիրքը անկեղծորեն և աղոթքով, այն ավելի ու ավելի է մեզ սիրելի դառնում:

Բոլորը, ովքեր անկեղծորեն կարդում են Մորմոնի Գիրքը, խորը տպավորություն են ստանում դրա էջերի ոգեշնչված բովանդակությունից. . . Կա ոգեշնչում և խաղաղ ուրախություն և բավարարավածություն, որոնք ուղեկցում են այս գրքի անկեղծ և աղոթքով ընթերցանությունը:[20]

Երբ կարդում եմ [Մորմոնի Գիրքը], ես ավելի ու ավելի եմ տպավորվում դրա սրբությամբ, ուղերձով, որն այն պարունակում է ի պաշտպանություն Տեր Հիսուս Քրիստոսի առաքելության և ավետարանով, որը վերականգվել է ժամանակների լրության տնտեսությունում հոգիների փրկության համար: Այս հիշատակարանը օրեցօր ավելի ու ավելի սիրելի է դառնում ինձ

համար, երբ ես տեսնում եմ, թե ինչպես է մարգարեությունների իրականացումը տեղի ունենում, որոնք արտասանվել են այդ մարգարեների կողմից, ովքեր այժմ խոսում են մեռած տեղից և փոշուց երկրի ազգերի համար, նրանց ապաշխարություն աղաղակելով և կոչ անելով նրանց հավատալ Քրիստոսին։[21]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Նախագահ Սմիթն ասել է, որ նա բավականաչափ չի կարդացել Մորմոնի Գիրքը (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։ Ի՞նչ կարող ենք սովորել այս դիտարկումից։
- Այս գլխի 1-ին բաժինն ընդգրկում է Նախագահ Սմիթի ուսմունքներից մի քանիսը Մորմոնի Գրքի նպատակների վերաբերյալ։ Ինչպե՞ս են այս նպատակները իրագործվել ձեր կյանքում։
- Չնայած Օլիվեր Քաուդերին, Մարտին Հարրիսը և Դեյվիդ Ուիթմերը թողեցին Եկեղեցին, նրանցից ոչ մեկը երբևէ չհրաժարվեց Մորմոնի Գրքի իր վկայությունից (տես բաժիններ 2 և 3)։ Ինչո՞ւ է այս փաստը կարևոր, երբ մենք մտածում ենք նրանց վկայությունների մասին։
- Նախագահ Սմիթն ասել է, որ բոլոր մարդիկ կարող են լինել Մորմոնի Գրքի վկաներ (տես բաժին 4)։ Ինչպե՞ս եք ձեռք բերել վկայություն գրքի մասին։ Ի՞նչ կարող եք անել այս վկայությամբ կիսվելու համար։
- Մորմոնի Գրքի մասին Նախագահ Սմիթն ասել է. «Այս հիշատակարանը օրեցօր ավելի ու ավելի սիրելի է դառնում ինձ համար» (բաժին 5)։ Արդյոք սա ճշմարի՞տ է նաև ձեզ համար։ Ի՞նչ կարող է մարդ անել զորացնելու իր վկայությունը Մորմոնի Գրքի մասին։

Առնչվող սուրբ գրություններ

1 Նեփի 6.3–5, 2 Նեփի 29.7–8, ՏՀակոբ 4.1–4, Ենովս 1.13, ՎԵՈՒ 20.8–12

Օգնություն ուսուցչին

«Վկայեք, երբ որ Հոգին հուշի ձեզ այդ անել, ոչ թե ուղղակի յուրաքանչյուր դասի վերջում: Ապահովեք հնարավորություններ նրանց համար, ում դուք ուսուցանում եք, բերել իրենց վկայությունները» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 45):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1961, 18.
2. In Conference Report, Oct. 1949, 89; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 3: 231.
3. In Conference Report, Oct. 1956, 20; տես նաև Moroni 10: 3–5.
4. I Origin of the First Vision," *Improvement Era,* Apr. 1920, 503; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 209.
5. *Church History and Modern Revelation* (1953), 1: 31–32.
6. "Predictions in the Bible Concerning the Book of Mormon," *Improvement Era,* Sept. 1923, 958–59; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 228–29.
7. In Conference Report, Oct. 1970, 8.
8. "Testimonies of the Witnesses to the Book of Mormon," *Improvement Era,* Sept. 1927, 950; տես նաև *Doctrines of Salvation,* rev. ed., 1: 203.
9. *Doctrines of Salvation,* rev. ed., 1: 203; italics deleted from original.
10. In Conference Report, Oct. 1956, 19–20.
11. "Testimonies of the Witnesses to the Book of Mormon," 952–53; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 229–30.
12. *Doctrines of Salvation,* rev. ed., 1: 210–11.
13. "Testimonies of the Witnesses to the Book of Mormon," 952; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 229–30.
14. In Conference Report, Oct. 1956, 20.
15. *Doctrines of Salvation,* I ev. ed., 1: 226–28.
16. "Testimonies of the Witnesses to the Book of Mormon," 953; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 231.
17. In Conference Report, Oct. 1949, 89; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 231–32.
18. In Conference Report, Oct. 1961, 18.
19. "History and History Recorders," *Utah Genealogical and Historical Magazine,* Apr. 1925, 55; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 202.
20. "Origin of the First Vision," 503.
21. In Conference Report, Apr. 1925, 73.



Երեց Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, և Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը, 1914թ.

Ճշմարտության մեր որոնումները

«Դա պահանջ է, որը մեզ տրվում է որպես այս Եկեղեցու անդամների, ծանոթանալու նրա հետ, ինչ Տերն է հայտնել, որպեսզի մենք չմոլորվենք. . . Ինչպե՞ս ենք մենք պատրաստվում քայլել ճշմարտության մեջ, եթե մենք չգիտենք դա»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ութ տարեկան էր, նրա հայրը տվեց նրան Մորմոնի Գրքի մի օրինակ և խնդրեց նրան, որ կարդա այն: «Ես ընդունեցի Նեփիացիների հիշատակարանը երախտագիտությամբ», հետագայում հիշում էր նա, «և ինձ նվիրեցի այդ հանձնարարությանը, որն ինձ էր տրվել»: Նրա սերը գրքի հանդեպ դրդում էր նրան իր ամենօրյա գործերն արագ կատարել և երբեմն նույնիսկ վաղ թողնել բեյսբոլի խաղերը, որպեսզի գտներ մի խաղաղ անկյուն կարդալու համար: Երկու տարուց քիչ ժամանակաընթացքում նա երկու անգամ կարդաց գիրքը: Այդ վաղ ուսումնասիրության մասին նա ասել է. «Կան որոշ հատվածներ, որոնք դրոշմվեցին մտքիս մեջ, և ես երբեք չմոռացա դրանք»:[1] Նա կարդում էր նաև ուրիշ գրքեր: «Ես, սովորաբար, կարդում էի գրքեր, որոնք պատրաստված էին Երեխաների Միության փոքրիկների համար և Կիրակնօրյա դպրոցի երեխաների համար այդ վաղ օրերում, ասաց նա, և ես, սովորաբար, ձեռքումս միշտ գիրք էի ունենում, երբ տանն էի լինում. . . Հետագայում ես կարդացի Եկեղեցու պատմությունը, ինչպես այն գրվել էր *Millennial Star* ամսագրում: Ես կարդում էի նաև Աստվածաշունչը, Մորմոնի գիրքը, Թանկագին Մարգարիտը, Վարդապետություն և Ուխտերը և այլ գրականություն, որոնք ընկնում էին իմ ձեռքը»:[2]

Նախագահ Սմիթը պահպանեց ավետարանական գիտելիքի հանդեպ այդ ծարավը ողջ իր կյանքի ընթացքում։ Երբ որ նա սովորում էր ավետարանի ճշմարտությունները, նա կիսվում էր դրանցով, երբ անհրաժեշտ էր լինում, նա պաշտպանում էր դրանք։ Երեք տարի անց, երբ նա կարգվեց որպես Առաքյալ, նա ստացավ մի քահանայության օրհնություն, որը ներառում էր հետևյալ խորհուրդը. «Դուք ստացել եք ըմբռնելու ունակության օրհնություն, վերլուծելու և պաշտպանելու ճշմարտության սկզբունքները ձեր ընկերներից շատերից ավելի և կգա ժամանակ, երբ կուտակված փաստերը, որ դուք կհավաքեք, կկանգնի որպես պաշտպանող պատ նրանց դեմ, ովքեր ձգտում են և կձգտեն կործանել Մարգարե Ջոզեֆի առաքելության աստվածայնության փաստը և այդ պաշտպանության մեջ դուք երբեք չեք կարկամի և Հոգու լույսը կգցի իր ճառագյթները ձեր սրտին՝ այնպես մեղմորեն, ինչպես երկնքից իջնող ցողը, և այն կբացի ձեր հասկացողությանը շատ ճշմարտություններ այս աշխատանքի վերաբերյալ»։[3] Նա հավատարիմ ապրեց այս մարգարեական խոսքերին։ Որպես ավետարանի գիտակ, ուսուցիչ և գրող՝ նա ջանասիրաբար աշխատեց՝ բացատրելով և պաշտպանելով փրկության վարդապետությունները։ Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը մի անգամ անվանեց նրան բոլոր բարձրագույն իշխանավորներից «սուրբ գրությունների լավագույն գիտակ»։[4]

Իր կյանքի ավարտին մոտ, Նախագահ Սմիթը հաճախ էր մտածում այն օրհնությունների մասին, որ նա ստացել էր ավետարանի իր ուսումնասիրության միջոցով։

«Ողջ իմ կյանքը ես ուսումնասիրել եմ և խորհրդածել ավետարանի սկզբունքների մասին և ձգտել եմ ապրել Տիրոջ օրենքներով։ Դրա հետևանքով մեծ սեր է առաջացել իմ սրտում Նրա հանդեպ և Նրա աշխատանքի և բոլոր նրանց հանդեպ, ովքեր ձգտում են առաջ տանել Նրա նպատակները երկրի վրա»։[5]

«Բոլոր իմ օրերում ես ուսումասիրել եմ սուրբ գրությունները և որոնել Տիրոջ Հոգու առաջնորդությունը՝ դրանց ճշմարիտ իմաստի հասկացողությանը գալու համար։[6]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Մենք պետք է որոնենք ճշմարտությունը բազմաթիվ բնագավառներում, բայց ամենակարևոր գիտելիքը ավետարանի գիտելիքն է:

Մենք հավատում ենք կրթությանը: Որպես ժողովուրդ՝ մենք միշտ որոնել ենք գիտություն ամեն բնագավառում, և որպես Եկեղեցի՝ մենք մեծ գումարներ ենք ծախսել և կատարել նշանակալի զոհաբերություն՝ հասանելի դարձնելու կրթության հնարավորությունները Եկեղեցու անդամների համար: Եվ հատկապես այսօրվա գիտական հետազոտություններն ու զարգացումը: Մենք կարծում ենք մեր երիտասարդները պետք է ստանան որքան հնարավոր է շատ կրթություն և մասնագիտական ուսուցում, այն ինչ իմաստությամբ անհրաժեշտ կլինի:

Բայց մենք կարծում ենք աշխարհիկ գիտելիքի այս ձգտումը պետք է զսպվի հոգևոր ըմբռնողության նմանատիպ ձգտմամբ: Ավելի կարևոր է, հազար անգամ ավելի, ունենալ գիտելիք Աստծո և Նրա օրենքների մասին, որպեսզի մենք կարողանանք անել այն բաները, որոնք փրկություն են բերում, քան ունենալ ողջ աշխարհիկ գիտելիքը, որ կարելի է ձեռք բերել:[7]

Յուրաքանչյուրը պետք է սովորի ինչ-որ նոր բան ամեն օր: Դուք բոլորդ ունեք հետաքրքրասեր միտք և ճշմարտություն եք որոնում շատ բնագավառներում: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ ձեր մեծագույն որոնումը հոգևոր բաների ոլորտում է, որովհետև այնտեղ է, որ մենք կարող ենք հասնել փրկության և առաջընթաց ապրել, որը տանում է դեպի հավերժական կյանք մեր Հոր արքայությունում:

Ամենակարևոր գիտելիքը աշխարհում ավետարանի գիտելիքն է: Դա Աստծո գիտելիքն է և Նրա օրենքները, այն բաների վերաբերյալ, որ մարդիկ պետք է անեն իրենց փրկությունը գործելու համար՝ ահով ու դողալով Տիրոջ առաջին [տես Փիլիպպեցիս Բ.12, Մորմոն 9.27]:[8]

Ոչ բոլոր ճշմարտությունն է նույն արժեքի կամ կարևորության: Որոշ ճշմարտություններ ավելի մեծ են, քան մյուսները: Ամենամեծ ճշմարտությունը, կամ ամենամեծ

«Եւ ճշմարտութիւնը կճանաչէք. Եւ ճշմարտութիւնը կազատէ ձեզ» (Հովհաննես Ը.32):

ճշմարտությունները մենք գտնում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմունքներում: Ամենից առաջինը, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, աշխարհի Քավիչը, ով եկավ այս աշխարհ մահանալու, որպեսզի մարդիկ ապրեն: Այդ ճշմարտությունը մենք պետք է իմանանք: Շատ ավելի կարևոր է իմանալ, որ Հիսուս Քրիստոսը մեր Քավիչն է, որ նա տվել է մեզ հավերժական կյանքի սկզբունքները, քան իմանալը բոլորը, ինչ կարելի է ձեռք բերել աշխարհիկ կրթությամբ:[9]

Ինչ վերաբերում է աշխարհի փիլիսոփայությանն ու իմաստությանը, դրանք ոչ մի նշանակություն չունեն, եթե չեն հաստատում Աստծո հայտնի դարձրած խոսքը: Ցանկացած վարդապետություն, որը ներկայացվում է կրոնի, գիտության, փիլիսոփայության կամ այլ աղբյուրի ներքո, եթե այն հակասության մեջ է Տիրոջ հայտնած խոսքի հետ, մատնված է ձախողման: Այն կարող է խելամիտ թվալ: Այն կարող է դրվել ձեր առջև մի լեզվով, որը գրավիչ լինի և որը գուցե հնարավոր չլինի վիճարկել: Այն կարող է հիմնավորված թվալ փաստով,

որն անժխտելի կթվա ձեզ, բայց այն, ինչ դուք պետք է անեք, համբերությամբ սպասելն է: Ժամանակը կպատասխանի բոլոր հարցերին: Դուք կպարզեք, որ յուրաքանչյուր վարդապետություն, յուրաքանչյուր սկզբունք, անկախ նրանից, թե որքան համատարած է հավատացվել, եթե այն համաձայնության մեջ չէ իր ծառաներին Տիրոջ կողմից տրված աստվածային խոսքին, կոչնչանա: Ոչ էլ անհրաժեշտ է մեզ փորձել Տիրոջ խոսքը մեկնաբանել զուր աշխատելով հարմարեցնել այն այս տեսությունների և ուսմունքների հետ: Տիրոջ խոսքը չպիտի անց կենա առանց իրագործվելու, բայց այդ կեղծ վարդապետություններն ու տեսությունները բոլորը կոչնչանան: Ճշմարտությունը և միայն ճշմարտությունը կմնա, երբ բոլոր մյուս բաները ոչնչանան:[10]

2

Տերը պատվիրել է մեզ ուսումնասիրել սուրբ գրությունները:

Տերը պատվիրել է Եկեղեցու անդամներին այս օրերում որոնել Իրեն աղոթքով, հավատքով և ուսումասիրությամբ: Մեզ պատվիրված է ուսումնասիրել Իր տված պատվիրանները Վարդապետություն և Ուխտերում, Մորմոնի Գրքում և բոլոր մյուս սուրբ գրություններում, այն խոստումով, որ «Բանականության ինչ աստիճանի, որ մենք հասնենք այս կյանքում, այն կբարձրանա մեզ հետ հարության ժամանակ: Եվ եթե մի մարդ ավելի շատ գիտելիք և բանականություն ձեռք բերի այս կյանքում, իր ջանասիրության և հնազանդության միջոցով, քան մեկ ուրիշը, նա կունենա նույնքան առավելություն գալիք աշխարհում»: [ՎևՈ 130.18–19]. . . Փրկիչն ասաց հրեաներին «Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յավիտենական կեանք եւ նորանք են, որ ինձ համար վկայում են» [Հովհաննես Ե.39]: Որքան Եկեղեցու անդամներ են *մտածում* նույն ձևով, բայց թերանում են նախապատրաստվել՝ ուսումնասիրելով և հավատքով:[11]

Ինձ թվում է այս Եկեղեցու անդամը չի կարողանա հանգստանալ խաղաղությամբ և հարմարավետությամբ և ունենա մաքուր խիղճ՝ առանց գիտելիք ունենալու ուսումնասիրությամբ և հավատքով Եկեղեցու օրինակելի աշխատությունների վերաբերյալ: Այս հիշատականներն անգին են: Աշխարհը ծաղրում է դրանք, բայց դրանց ուսմունքների միջոցով մեզ թույլատրվում է ավելի շատ մոտենալ Աստծուն, ավելի լավ պատկերացում

ունենալ մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին, ավելի մոտիկից ծանոթանալ նրանց հետ և ավելի շատ բան իմանալ փրկության այն սքանչելի ծրագրի մասին, որը նրանք տվել են մեզ և աշխարհին:[12]

Հնադարյան մարգարեները, ովքեր տեսել էին մեր ժամանակները, խոսել են ոչ թե ի օգուտ իրենց օրերի մարդկանց, այլ այն ժողովրդի օգտի համար, ովքեր ապրելու էին այն օրերում, որոնց մասին այդ մարգարեությունները խոսում էին:[13]

Ես ասում եմ ձեզ իմ եղբայրներ և քույրեր, դուք չեք կարող պահել Տիրոջ պատվիրանները և քայլել արդարակեցության մեջ, մինչև չիմանաք, թե դրանք ինչ են: Տերը պատվիրել է մեզ հետազոտել սուրբ գրությունները, քանզի բաները, որոնք դրանք պարունակում են, ճշմարիտ են և պիտի իրականանան [տես ՎԿՈՒ 1.37]. . . Հետազոտեք սուրբ գրությունները, ծանոթացեք այն բաների հետ, որոնք Տերը հայտնել է ձեր փրկության, ձեր տան փրկության և աշխարհի համար:[14]

3

Մենք մեծ պատասխանատվություն ունենք ականջ դնելու ճշմարտության ուղերձին, որը Տերը այժմ հայտնում է Իր ծառաներին:

Եթե մենք ականջ դնենք Տիրոջ խոսքերին և հետազոտենք ինքնուրույն և ձեռք բերենք գիտելիք Մորմոնի Գրքից, Աստվածաշնչից, Վարդապետություն և Ուխտերից, Թանկագին Մարգարիտից և այն հրահանգներից, որոնք տրվում են մեզ Եկեղեցու իշխանավորների կողմից և ձգտենք կատարել Տիրոջ կամքը, հիշելով մեր աղոթքները և մեր ուխտերըՆրա առաջին, մենք չենք մոլորվի:[15]

Հավատո Հանգանակի իններորդ կետում մենք հայտարարում ենք, որ «Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ»: Սա ճշմարիտ լինելով, անհրաժեշտ է դառնում մեզ համար հասկանալ բոլորը, ինչ Նա հայտնել է և այն ամենը, ինչ հիմա է հայտնում, այլապես մենք կապ չունենք Նրա աշխատանքի հետ և չենք կարող իմանալ Նրա կամքը մեր վերաբերյալ, քանի որ մենք չենք հասկանում այդ:[16]

Վերջին Օրերի Սրբերը պետք է վստահեն իրենց առաջնորդներին և հետևեն Եկեղեցու իշխանավորների ուսմունքներին, քանի որ նրանք խոսում են իրենց հետ մարգարեության և ոգեշնչման ձայնով: Տերը հայտարարել է Վարդապետություն և Ուխտերի հենց առաջին բաժնում, որ լինի դա իր իսկ ձայնով, թե իր ծառաների ձայնով՝ միևնույն է [տես ՎևՈՒ 1.38]: Ուստի, մենք ճիշտ նույնպիսի մեծ պատասխանատվության և պարտավորության տակ ենք՝ ականջ դնելու նրա ձայնին, ով կանգնած է ժողովրդի գլխին ուսուցանելու համար կամ լսելու Իսրայելի երեցների ձայնին, երբ նրանք տանում են ճշմարտության ուղերձը ժողովրդի մեջ, ինչպես կանեինք, [եթե] Տերը Իր ներկայությունից հրեշտակ ուղարկեր կամ անձամբ գար այս բաները մեզ հայտարարելու համար:[17]

4

Մենք կարող ենք իմանալ ավետարանի ճշմարտությունը, ուսումասիրելով, հավատքով և հնազանդությամբ և Սուրբ Հոգու առաջնորդությամբ:

Լավ կլինի, եթե մենք հետևենք Տիրոջ մեզ տված խորհրդին, որն ասում է. «Եվ ով որ գանձում է իմ խոսքը, չի մոլորվի» [Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.37.] Նրա խոսքը գանձելը շատ ավելին է, քան պարզապես այն կարդալը: Այն գանձելու համար մարդ չպետք է միայն կարդա այն և ուսումնասիրի, այլ ձգտի համեստությամբ և հնազանդությամբ կատարել տրված պատվիրանները և ձեռք բերի ոգեշնչում, որը Սուրբ Հոգին կտա:[18]

Մենք հաճախ լսում ենք բողոք. «Ես ժամանակ չունեմ»: Բայց մենք բոլորս ունենք ժամանակ կարդալու և ուսումնասիրելու, որը մեր լուրջ պարտականությունն է: Միթե՞ մենք չենք կարող առնվազն տասնհինգ րոպե գտնել ամեն օր նվիրելու սիստեմատիկ ընթերցանության և խորհրդածության: Սա կլինի փոքր ժամանակ, սակայն այն կլինի մեկ ժամ և քառասունհինգ րոպե շաբաթական և ամսական երեսուն օրվա ընթացքում յոթ ու կես ժամ և տարեկան իննսունմեկ ժամ և մեկ քառորդ: . . .

. . . Մեզանից շատ քչերն են չափից շատ կարդում. մեզանից շատերը չափից քիչ են կարդում. «Եվ քանի որ բոլորը չէ, որ հավատք ունեն, ջանասիրաբար փնտրեք և իմաստության խոսքեր

ուսուցանեք միմյանց. Այո, իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից. Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» [ՎԿՈՒ 88.118, 109.7]:[19]

Մենք պետք է ուսումանսիրենք և սովորենք այն ամենը, ինչ կարող ենք՝ հետազոտելով և վերլուծելով: Բայց բանականության և ուսման ոլորտներում մեր սովորելու ունակություններին կան սահմաններ: Աստծո բաները կարող են իմացվել միայն Աստծո Հոգով: Մենք պետք է գիտելիք ձեռք բերենք հավատքով:[20]

Մարդիկ կարող են հետազոտել, նրանք կարող են ուսումնասիրել, նրանք կարող են սովորել բազմաթիվ բաներ, նրանք կարող են հավաքել տեղեկությունների մեծ ֆոնդ, բայց նրանք երբեք չեն կարող հասնել ճշմարտության լրիվությանը. . . մինչև նրանք չառաջնորդվեն ճշմարտության Հոգով՝ Սուրբ Հոգով, և պահեն Աստծո պատվիրանները:[21]

Ճշմարիտ հավատքը, որն ուղեկցվում է համեստության ոգով, կառաջնորդի մարդկանց դեպի ճշմարտության իմացությունը: Չկա լավ պատճառաբանություն, թե ինչու մարդիկ ամենուրեք չեն կարող իմանալ ճշմարտությունը, որը մարդկանց ազատ է դարձնում: Չկա խելամիտ պատճառաբանություն, թե ինչու բոլոր մարդիկ չեն կարող հայտնաբերել ճշմարտության լույսը և իմանալ թե արդյոք Տերը կրկին խոսել է այս վերջին օրերին, թե ոչ: Պողոսը հայտարարել է, որ մարդիկ պետք է «Աստծուն փնտրեն. որ խարխափելով թերևս գտնեն նրան. թէ եւ ինքը հեռու չէ մեր ամեն մէկիցը» [Գործք ԺԷ.27]: Նույնիսկ հոգևոր խավարի և հավատքի բացակայության մեջ, որը պատել է երկիրը, Տիրոջ բազուկը չի կարճացել: Նա կլսի ճշմարտության ազնիվ որոնողի անկեղծ աղերսանքը և ոչ ոք կարիք չունի քայլել առանց աստվածային ճշմարտության իմացության և թե որտեղ գտնի Հիսուս Քրիստոսի Եկեղեցին: Այն ամենը, ինչի կարիքն ունի ամեն մի անձնավորություն, խոնարհ հավատքն է և ապաշխարող հոգին, վճռականությամբ քայլելու լույսի մեջ, և Տերը նրա համար կբացահայտի այն:[22]

Մենք բոլորս կարող ենք իմանալ ճշմարտությունը. մենք անօգնական չենք: Այդ իմացությունը Տերը հնարավոր է դարձրել յուրաքանչյուր մարդու համար՝ հետևելով [Նրա] օրենքներին և Նրա Սուրբ Հոգու ուղեկցությամբ, որն ուղարկվում է մեզ օգնելու նպատակով, երբ մենք ենթարկվենք օրենքներին,



«Եկեք հետազոտենք սուրբ գրությունները, եկեք իմանանք, թե ինչ է հայտնել Տերը, եկեք մեր կյանքը ներդաշնակության մեջ պահենք Նրա ճշմարտության հետ»:

որպեսզի մենք կարողանանք իմանալ այն ճշմարտությունը, որը մեզ ազատ է դարձնում [տես Հովհաննես Ը.32]:[23]

5

Երբ մենք մեր կյանքը ներդաշնակ ենք դարձնում ճշմարտությանը, Տերը մեծացնում է մեր լույսը և հասկացողությունը:

Սա պահանջ է, որն առաջադրվում է մեզ որպես այս Եկեղեցու անդամներ՝ ծանոթանալ այն բաների հետ, որոնք Տերը հայտնել է, որպեսզի մեզ չկարողանան մոլորեցնել. . . Ինչպե՞ս կարող ենք քայլել ճշմարտության մեջ, եթե մենք չգիտենք այն:[24]

Մեր միակ նպատակը՝ ինչ վերաբերում է փրկության ճշմարտություններին, պետք է լինի պարզել, թե ինչ է Տերը բացահայտել և ապա հավատալ և գործել համապատասխանաբար:[25]

Եթե մենք հետևենք լույսի հոգուն, ճշմարտության հոգուն, հոգին, որն ուղարկվում է Տիրոջ հայտնություններում, եթե մենք

աղոթքի և համեստության հոգով, որոնենք Սուրբ Հոգու առաջնորդությունը, Տերը կմեծացնի մեր լույսը և մեր հասկացողությունը, որպեսզի մենք ունենանք խորաթափանցության հոգին, մենք կհասկանանք ճշմարտությունը, մենք կտարբերենք կեղծիքը, երբ տեսնենք այն և մենք չենք խաբվի։

Ո՞վ է, որ խաբվում է այս Եկեղեցում։ Ոչ թե այն մարդը, ով հավատարիմ է եղել պարտականությունը կատարելիս, ոչ թե այն մարդը, ով կատարել է պատվիրանները, որոնք տրվել են այս հայտնություններում, այլ այն մարդը, ով ծանոթ չէ ճշմարտությանը, մարդը, ով հոգևոր խավարի մեջ է, մարդը ով չի խորհրդածում և հասկանում Ավետարանի սկզբունքները։ Այդպիսի մարդը կխաբվի, և երբ կեղծ ոգիները գան մեր մեջ, նա չի կարողանա հասկանալ կամ զանազանել լույսը խավարից։

Բայց, եթե մենք քայլենք Տիրոջ հայտնությունների լույսի մեջ, եթե մենք ականջ դնենք խորհուրդներին, որոնք տրվում են նրանց կողմից, ովքեր կանգնած են Եկեղեցու խորհուրդներում, զորացված՝ հրահանգներ տալու համար, մենք չենք մոլորվի։[26]

Եկեք հետազոտենք սուրբ գրությունները, եկեք իմանանք, թե ինչ է հայտնել Տերը, եկեք մեր կյանքը ներդաշնակության մեջ պահենք Նրա ճշմարտության հետ։ Այդ դեպքում մենք չենք խաբվի, այլ կունենանք ուժ դիմակայելու չարին և գայթակղությանը։ Մեր մտքերը կաշխուժացվեն և մենք կկարողանանք հասկանալ ճշմարտությունը և տարբերել այն սխալից։[27]

Եթե կա որևէ վարդապետություն կամ սկզբունք կապված Եկեղեցու ուսմունքների հետ, որը մենք չենք հասկանում, ապա եկեք ծնկի իջնենք։ Եկեք գնանք Տիրոջ առջև աղոթքի, համեստության հոգով և խնդրենք, որ մեր մտքերը լուսավորվի, որպեսզի մենք հասկանանք։[28]

Այն ինչ Աստծուց է, լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում [ՎևՈւ 50.24]։

Այսպիսով, մենք հասկանում ենք սրանից, որ մարդը, ով որոնում է Աստծուն և առաջնորդվում ճշմարտության Հոգու կողմից, կամ Մխիթարիչի կողմից և շարունակում է Աստծով, կաճի

գիտելիքի, լույսի, ճշմարտության մեջ, մինչև որ, ի վերջո, նա կգա դեպի լույսի և ճշմարտության կատարյալ օրը։

Արդ, մենք չենք ստանա այդ բոլորը այս կյանքում։ Անհնարին է, որ մարդ հասնի այդ նպատակին մահկանացու գոյության մի քանի տարիների ընթացքում։ Բայց այն, ինչ մենք սովորում ենք այստեղ, այն ինչ հավերժական է, այն ինչ ոգեշնչված է ճշմարտության Հոգու կողմից, կշարունակի մեզ հետ գերեզմանից այն կողմում և ապա մենք կշարունակենք, եթե շարունակենք Աստծով, ստանալ լույս և ճշմարտություն, մինչև վերջում մենք կգանք այդ կատարյալ օրվան։[29]

Խոստումը տրված է բոլոր նրանց, ովքեր կստանան ճշմարտության լույսը և իրենց որոնումների և հնազանդության միջոցով կջանան ծանոթանալ Ավետարանի հետ, որ նրանք կստանան տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ, մինչև ճշմարտության լրիվությունը կլինի նրանց բաժինը, նույնիսկ արքայության թաքցված ճշմարտությունները հայտնի կդարձվեն նրանց. «քանզի ամեն մեկը, որ խնդրում է, ստանում է. և նա, ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի» [Մատթեոս Է.8, 3 Նեփի 14.8, տես նաև Եսայիա ԻԸ.10, ՎևՈՒ 76.1–10, 98.11–12]։ Բոլոր սրանք փրկության ժառանգներ են և նրանք կպսակվեն փառքով, անմահությամբ և հավերժական կյանքով, որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ վեհացմամբ Նրա սելեստիալ արքայությունում։[30]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Երբ կարդաք ավետարանը սովորելու Նախագահ Սմիթի ջանքերի մասին (տես «Նախագահ Ջոզեֆ Սմիթի կյանքից» բաժինը), մտածեք ձեր սեփական ջանքերի մասին։ Ի՞նչ օրհնություններ են եկել ձեզ, երբ դուք ուսումնասիրել եք սուրբ գրությունները և այլ ավետարանական ուսմունքներ։
- Ի՞նչ կարող ենք սովորել բաժին 1-ից հոգևոր և աշխարհիկ գիտելիքի միջև համակշռության մասին։ Ինչպե՞ս կարող ենք օգնել ընտանիքի անդամներին և ուրիշներին

առաջնահերթություն տալ հոգևոր գիտելիքին, երբ նրանք հետումուտ են լինում կրթական նպատակների։

- Ինչպե՞ս են սուրբ գրություններն օգնել ձեզ «ավելի մոտիկից ծանոթանալ» Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ (տես բաժին 2)։ Մտածեք այն մասին, թե ինչ կարող եք անել բարելավելու սուրբ գրությունների ձեր ուսումնասիրությունը։
- Բաժին 3-ը կարդալոց հետո, մտածեք այն օրհնությունների մասին, որոնք դուք ստացել եք, երբ հետևել եք Եկեղեցու առաջնորդների խորհուրդներին։ Ինչպե՞ս կարող ենք կիսվել ապրող մարգարեների ուսմունքներով մեր ընտանիքների և ուրիշների հետ։
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար գանձել Տիրոջ խոսքը։ (Որոշ գաղափարների համար տես բաժին 4)։ Ի՞նչ ուղիներով կարող է «առնվազն տասնհինգ րոպե ամեն օր նվիրաբերելը սիստեմատիկ ընթերցանությանը և խորհրդածելուն» ազդել մեր կյանքի վրա։
- Խորհեք, թե ինչպես է բաժին 5-ի խորհուրդը վերաբերում ձեր կյանքին։ Երբ կեղծ տեղեկությունները դառնում են ավելի մատչելի և տարածվում համարձակորեն, ինչպե՞ս կարող ենք «զանազանել լույսը խավարից»։ Ի՞նչ կարող ենք անել՝ օգնելու երեխաներին և երիտասարդներին։

Առնչվող սուրբ գրություններ

Սաղմոս ՃԺԹ.105; Հովհաննես Է.17, Բ Տիմոթեոս Գ.15–17, 2 Նեփի 4.15, 32.3, Հելաման 3.29–30, ՎևՈՒ 19.23, 84.85, 88.77–80

Օգնություն ուսուցչին

«Նույնիսկ, երբ ուսուցանում եք շատ մարդկանց միևնույն ժամանակ, դուք կարող եք անհատական ներգործում ունենալ։ Օրինակ՝ դուք անհատական ներգործում եք ունենում, երբ ողջունում եք յուրաքանչյուր անձին ջերմորեն դասի սկզբում. . . Դուք նաև ներգործում եք, երբ դարձնում եք մասնակցությունը ողջունելի և ապահով» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 35)։

Հղումներ

1. Տես Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 57.
2. *The Life of Joseph Fielding Smith,* v.
3. In *The Life of Joseph Fielding Smith,* 195.
4. Heber J. Grant, in Richard O. Cowan, "Advice from a Prophet: Take Time Out," *Brigham Young University Studies,* spring 1976, 416.
5. "I Know That My Redeemer Liveth," *Ensign,* Dec. 1971, 27.
6. In Conference Report, Oct. 1970, 5.
7.
8. "The Most Important Knowledge," *Ensign,* May 1971, 2.
9. In Conference Report, Apr. 1955, 51.
10. In Conference Report, Oct. 1952, 60.
11. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 1: xiv; italics in original.
12. In Conference Report, Oct. 1961, 18.
13. In Conference Report, Oct. 1927, 142.
14. In Conference Report, Oct. 1920, 58–59.
15. In Conference Report, Oct. 1918, 56–57.
16. "Search the Scriptures," *Young Woman's Journal,* Nov. 1917, 592.
17. In Conference Report, Oct. 1916, 73.
18. "The Resurrection," *Improvement Era,* Dec. 1942, 780; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 305.
19. "How and What to Read," *Improvement Era,* Aug. 1913, 1004–5; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 207.
20. "Pres. Smith Stresses Value of Education," *Church News,* June 12, 1971, 3.
21. "And the Truth Shall Make You Free," *Deseret News,* Mar. 30, 1940, Church section, 4; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 299.
22. *The Restoration of All Things* (1945), 195.
23. "Evidences of Eternal Life," *Deseret News,* June 3, 1933, Church section, 5; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 295–96
24. In Conference Report, Oct. 1934, 65; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 302.
25. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 2.
26. In Conference Report, Apr. 1931, 71; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 285–86.
27. "The New and Everlasting Covenant," *Deseret News,* May 6, 1939, Church section, 8; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 301.
28. In Conference Report, Oct. 1959, 20.
29. "And the Truth Shall Make You Free," 4; punctuation and capitalization standardized.
30. "Search the Scriptures," 591–92; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 303.

Երբ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայություն Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին, նրանք նաև պարգևեցին քահանայության բանալիները։

Պատվել Ջոզեֆ Սմիթի կողմից վերականգված Քահանայության բանալիները

«Այժմ կկամենայի ասել՝ շատ հստակորեն և շատ շեշտակի, որ մենք ունենք սուրբ քահանայությունը, և որ Աստծո թագավորության բանալիներն այստեղ են: Դրանք գտնվում են միայն Հիսուս Քրիստոսի Եկեղեցում»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հայտարարել է. «Ես կատարյալ գիտելիք ունեմ Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության վերաբերյալ: Իմ մտքում չկա ոչ մի կասկած, որ Տերը մեծացրեց նրան և տվեց հայտնություն, պատվիրան, բացեց երկինքները նրա համար և կանչեց նրան կանգնելու այս փառահեղ տնտեսության գլխին»:[1] Նախագահ Սմիթը զուգորդում էր այս «կատարյալ գիտելիքը» հարգալիր ակնածանքով քահանայության այն բանալիների հանդեպ, որոնք վերականգվել էին Մարգարե Ջոզեֆի միջոցով: Նա միշտ հարգում էր և աջակցում նրանց, ովքեր կրում էին բանալիները և նա խորհուրդ էր տալիս բոլոր Եկեղեցու անդամներին ունենալ այդ նույն հարգանքը: Նա ասել է. «Յուրաքանչյուր մարդ, ով պատշաճորեն ընտրվում է նախագահելու Եկեղեցու որևէ պաշտոնում, պետք է հարգվի իր կոչումում»:[2]

Մի առիթով, որպես Առաքյալ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ծառայության ընթացքում, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը զբաղված էին մի դժվար հարցի շարունակական քննարկմամբ: Երեց Սմիթը մի հիմնավոր կարծիք արտահայտեց այդ հարցի կապակցությամբ: Օրեր անց Նախագահ Հեբեր Ջ. Գրանթը, որն այդ ժամանակ Եկեղեցու

Նախագահն էր, եկավ Երեց Սմիթի գրասենյակ: Նախագահ Գրանթը բացատրեց, որ աղոթքով մտածելով քննարկված հարցի մասին, նա տպավորություն էր զգացել առաջարկել մի գործողություն, որը տարբերվում էր Երեց Սմիթի տեսակետից: Երեց Սմիթն անմիջապես հայտնեց իր աջակցությունը Նախագահ Գրանթի որոշմանը: Նա հետագայում հայտարարեց. «Ինչ վերաբերում է ինձ, երբ Եկեղեցու Նախագահն ասում է՝ Տերը ցույց է տվել իրեն կամ ոգեշնչել է իրեն անել որևէ բան, ես լիովին կաջակցեմ նրան այդ քայլում»:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը այդպիսի աջակցություն ցույց տվեց բոլոր իր քահանայության առաջնորդներին, ոչ միայն Եկեղեցու Նախագահին: Օրինակ՝ Նաթան Էլդոն Թանները կանչվեց ծառայելու որպես Տասներկուսի Քվորումի անդամ 1962թ. հոկտեմբերին: Մեկ տարի անց նա կանչվեց որպես Խորհրդական Առաջին Նախագահությունում, այսպիսով դնելով նրան նախագահող դիրքում Նախագահ Սմիթի վրա, որը Տասներկուսի Քվորումի Նախագահն էր: Հետագայում Նախագահ Թանները արտահայտեց իր երախտագիտությունը Նախագահ Սմիթի աջակցության համար: «Երբ ես կանչվեցի Առաջին Նախագահություն, չնայած նա Տասներկուսի ավագ անդամն էր և այդ պաշտոնում էր հիսուն տարուց ավելի, նա ցույց տվեց մեծ հարգանք իմ հանդեպ այդ պաշտոնում և լիակատար աջակցություն հանդես բերեց և վստահություն:[4]

Նախագահ Սմիթը նաև հարգում էր քահանայության առաջնորդներին իր ծխում: Երբ նա ծառայում էր Տասներկու Առաքյալների Քվորումում, նա ասել է. «Ես իրավունք չունեմ. . . մկրտել իմ սեփական երեխաներից որևէ մեկին առանց առաջինը գնալու եպիսկոպոսի մոտ ծխում, որտեղ ես ապրում եմ և ստանամ նրա համաձայնությունը, որովհետև նա է կրում բանալիները այդ ծխի համար, որին պատկանում եմ ես, որպես անդամ: Ես երբեք չեմ մկրտել իմ երեխաներից որևէ մեկին. . . մինչև չեմ գնացել եպիսկոպոսի մոտ և ստացել նրա թույլտվությունը կատարելու այդ արարողությունը և հաստատելու նրանց որպես Եկեղեցու անդամ:[5]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Քահանայության բանալիները Տիրոջ աշխատանքը երկրի վրա ղեկավարելու զորությունն են և իշխանությունը:

Տարբերություն կա քահանայության պաշտոն ստանալու և քահանայության բանալիները ստանալու միջև: Սա մենք պետք է հստակորեն հասկանանք: . . .

. . . Չնայած բոլոր տղամարդիկ կրում են քահանայություն, ովքեր կարգվում են որևէ պաշտոնի, սակայն կան հատուկ, կամ ղեկավարող լիազորություններ, որոնք շնորհվում են նրանց վրա, ովքեր կանչվում են նախագահելու: Այդ լիազորությունները կոչվում են բանալիներ:[6]

[Քահանայության] բանալիները նախագահության իրավունքն է, դրանք Տիրոջ բոլոր գործերը կառավարելու և ղեկավարելու զորությունն է և իշխանությունը երկրի վրա: Նրանք, ովքեր կրում են դրանք, զորություն ունեն կառավարելու և վերահսկելու այն ձևով, որ մյուս բոլորը կարողանան ծառայել քահանայությունում:[7]

Երբ մարդիկ նշանակվում են մեկի կողմից, ով կրում է այս բանալիները, ապա նրանց գործողությունները օրինական են: Այն, ինչ նրանք անում են, կնքվում է և վավերացվում Եկեղեցում՝ ինչպես երկրի վրա, այնպես էլ երկինքներում:[8]

2

Տերն ուղարկել է սուրբ սուրհանդակներ Իր ներկայությունից վերականգնելու քահանայության բանալիները:

Մենք հավատում ենք, որ խավարի, անհավատության և կատարյալ Քրիստոնեության մաքուր ճշմարտություններից հեռանալու երկար գիշերից հետո, Տերը Իր անսահման իմաստությամբ կրկին վերականգնել է երկրի վրա հավիտենական ավետարանի լրիվությունը:

Մենք գիտենք, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, որ Հայրը և Որդին հայտնվեցին նրան 1820թ. գարնանը՝ ավետարանի այս վերջին տնտեսությունը մուտք գործելու համար, որ նա թարգմանեց Մորմոնի Գիրքը Աստծո պարգևով ու զորությամբ, որ նա

ստացավ բանալիներն ու իշխանությունը հենց այս նպատակի համար ուղարկված հրեշտակներից, և որ Տերը հայտնեց նրան փրկության վարդապետությունները։[9]

Տերը չի ճանաչում, որևէ արարողություն կամ ծիսակատարություն, եթե նույնիսկ այն արվի կամ կատարվի Իր անունով, մինչև այն համաձայն չլինի իր կամքին և արվի մեկի կողմից, որը ճանաչվել է որպես Իր լիազորված ծառա։ Այդ պատճառով էր, որ Նա ուղարկեց Իր ներկայությունից սուրբ սուրհանդակներ Ջոզեֆ Սմիթին և մյուսներին, վերականգնելու այն, ինչ վերցվել էր երկրից, այսինքն՝ ավետարանի լրիվությունը և քահանայության բանալիների լրիվությունը։[10]

Քահանայության բանալիները պետք է վերականգվեին։ Բավական չէր, որ Հովհաննես Մկրտիչը եկավ Ահարոնյան Քահանայության բանալիներով և Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը Մելքիսեդեկյան Քահանայության բանալիներով, որոնց շնորհիվ կազմակերպվեց Եկեղեցին, բայց պետք է լիներ երկինքների բացում և բանալիների վերականգնում, որոնք կրել էին բոլոր մարգարեները, ովքեր գլխավորել էին Ադամի օրերից սկսած տնտեսությունները ընդհուպ մինչև Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի օրերը։ Այս մարգարեները եկան իրենց հերթին և յուրաքանչյուրը շնորհեց այն իշխանությունը, որն ինքն էր կրում։[11]

Բոլոր տնտեսությունների բոլոր բանալիները պետք է կարգի բերվեին իրականացնելու մարգարեների խոսքերը և Տիրոջ նպատակները՝ իրագործելով բոլոր բաների վերականգնումը։ Հետևաբար, մարդկության ընտանիքի հայրը, առաջին մարդը երկրի վրա՝ Ադամը պետք է գար և նա եկավ իր իշխանությամբ։ Մովսեսը եկավ և մյուսները։ Բոլորը, ովքեր ունեին բանալիներ, եկան շնորհելով իրենց իշխանությունները. . . Մենք չունենք տարեթվերը, երբ այս իշխանավորներից մի քանիսը հայտնվեցին, բայց Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրելով Նավույի Սրբերին մեռելների փրկության կապակցությամբ, հայտարարեց, ինչպես մենք ունենք այն գրանցված Վարդապետություն և Ուխտերի 128 բաժնում [հատվածներ 17–21], որ բոլոր այս մարգարեները եկան իրենց բանալիներով այն տնտեսությունը, որում ապրում ենք մենք։[12]

Եկեղեցին կազմավորելուց հետո, Տերը պատվիրեց Իր Սրբերին, որ նրանք Իր անունով մի տուն կառուցեն։ Սրբերը հազիվ

Կիրթլենդի Տաճարում Եղիան հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին և պարգևեց կնքման բանալիները:

թե գիտակցեցին դրա կարևորությունը և նրանք չգնացին աշխատելու միանգամից այդ տունը կառուցելու համար, այսպիսով Տերը նախատեց նրանց [տես ՎԿՈՒ 95.1–4]: Նախատվելուց հետո նրանք գնացին իրենց զորությամբ և իրենց աղքատության մեջ կառուցեցին Կիրթլենդի Տաճարը: Ինո՞ւ այն կառուցվեց: Որպես մի սրբազան սրբավայր, որտեղ Հիսուս Քրիստոսը կկարողանար գալ, ուր կկարողանար ուղարկել Իր ծառաներին՝ մարգարեներին, իրենց իշխանության բանալիներով. . . Մենք գիտենք, որ

երեք հնադարյան մեծ մարգարեներ, ովքեր կրում էին կարևոր բանալիներ, եկան իսկապես 1836թ. ապրիլի 3–րդ օրը։

Առաջինը եկավ Մովսեսը [տես ՎևՈՒ 110.11]։ Նա տվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Իսրայելը հավաքելու բանալիները. . . Նա հավաքեց Իսրայելը և չնայած նա արտոնություն չունեցավ նրանց տեր դարձնել հողին, այնուամենայնիվ, հավաքելու բանալիները նրա ձեռքում էին։ Նա եկավ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի մոտ, երբ նրանք փոխակերպության սարի վրա էին և այնտեղ շնորհեց նրանց նույն բանալիները Իսրայելի հավաքման համար՝ այն օրերում, երբ նրանք ապրում էին։ Նա ուղարկվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քաուդերիի մոտ՝ շնորհելու բանալիները Իսրայելի հավաքման համար ժամանակների լրիվության տնտեսությունում։ . . .

Նրանից հետո, երբ Մովսեսը շնորհեց իր բանալիները, եկավ Եղիասը և բերեց այն տնտեսության ավետարանը, երբ Աբրահամն էր ապրել [տես ՎևՈՒ 110.12]։ Այն ամենը, ինչ վերաբերում էր այդ տնտեսությանը, օրհնությունները, որոնք շնորհվել էին Աբրահամին, խոստումները, որոնք տրվել էին նրա սերդին, բոլորը պիտի վերականգվեր և Եղիասը, ով կրում էր այդ տնտեսության բանալիները, եկավ։

Ապա Եղիան, մարգարեներից վերջինը, ով կրում էր հնադարյան Իսրայելի կնքող զորության բանալիները, եկավ և շնորհեց այդ իշխանությունը, կնքելու իշխանությունը [տես ՎևՈՒ 110.13–16]։ Եկեղեցու որոշ անդամներ շփոթվում են մտածելով, որ Եղիան եկավ մեռելների մկրտության կամ մեռելների փրկության բանալիներով։ Եղիայի բանալիներն ավելի մեծ էին քան դա։ Դրանք կնքման բանալիներ էին, և այդ կնքման բանալիները վերաբերում են ապրողներին և ընդգրկում մահացածներին, ովքեր հոժար են ապաշխարել։[13]

Եղիա մարգարեն. . . շնորհեց նրանց [Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին] կնքելու իշխանությունը՝ քահանայությունը գործածելու զորությունը՝ կապելու երկրի վրա և կնքելու երկնքում։[14]

Կնքման իշխանությունը դնում է վավերացնող կնիք յուրաքանչյուր արարողության վրա, որը կատարվում է այս Եկեղեցում և ավելի մասնավորապես նրանց, որոնք կատարվում են Տիրոջ տաճարներում։[15]

Եղբայրներ և քույրեր, սա փառահեղ տնտեսություն է: Բոլոր մյուս տնտեսությունները հոսում են դեպի այն: Բոլոր իշխանությունները, բոլոր զորությունները կենտրոնանում են այս տնտեսությունում, որում ապրում ենք մենք: Մենք արտոնված ենք ճաշակել այս օրհնություններից մեր հավատարմության միջոցով:[16]

Այժմ կկամենայի ասել՝ շատ հստակորեն և շատ շեշտակի, որ մենք ունենք սուրբ քահանայությունը, և որ Աստծո թագավորության բանալիներն այստեղ են: Դրանք գտնվում են միայն Հիսուս Քրիստոսի Եկեղեցում:[17]

3

Եկեղեցու Նախագահը կրում է բանալիները ողջ Եկեղեցու վրա:

Իր նահատակությունից կարճ ժամանակ առաջ Մարգարե [Ջոզեֆ Սմիթը] Տասներկու Առաքյալներին, ովքեր կազմում են Եկեղեցու երկրորդ քվորումը, շնորհեց բոլոր բանալիները և բոլոր արարողությունները և քահանայությունը, որոնք անհրաժեշտ են նրանց համար կրել, որպեսզի շարունակեն համամարդկային փրկության այս մեծ և փառահեղ աշխատանքը:[18]

Այս քահանայությունը և այս բանալիները. . . տրվել են յուրաքանչյուր տղամարդու, որը ի սպաս է դրվել որպես Տասներկուսի Խորհրդի անդամ: Բայց, քանի որ դրանք նախագահության իրավունքն են, դրանք կարող են լիովին գործադրվել միայն Աստծո ավագ առաքյալի կողմից, որը Եկեղեցու նախագահն է:[19]

Եկեղեցու Նախագահը կրում է բանալիները ողջ Եկեղեցու վրա. . . Նրանում է կենտրոնացած Քահանայության իշխանությունը: Նա է կրում Ժամանակների Լրության տնտեսությանը վերաբերող բոլոր տեսակի բանալիները: Նախորդ տնտեսությունների բոլոր բանալիները, որոնք հայտնի են դարձվել, վստահված են նրան:[20]

4

Մենք պետք է պատվենք նրանց, ում Եկեղեցու Նախագահությունը պատվիրակել է իշխանության բանալիներ:

[Եկեղեցու Նախագահը] իրավունք ունի իշխանությունը պատվիրակել և իշխանությունը ետ վերցնել, երբ հարմար է տեսնում և ոգեշնչում է ստանում այդպես վարվելու:[21]

Հիշեք կա միայն մեկը երկրի երեսին, ով կրում է քահանայության կնքող զորությունը. և նա կարող է պատվիրակել այդ իշխանությունը մյուսներին, որպեսզի նրանք կարողանան գործել և կարողանան կնքել երկրի վրա և այն վավերական է, այն կապող է, եթե լիազորությունը նրա կողմից է. եթե նա ետ է վերցնում այն, ոչ ոք չի կարող գործադրել այդ իշխանությունը:[22]

Ոչ մի մարդ չի կարող պաշտոնավարել և շնորհել տաճարային օրհնությունները, եթե այդ անելու իշխանությունը նրան պատվիրակված չէ Եկեղեցու Նախագահի կողմից. . . Ոչ մի մարդ չի կարող պաշտոնավարել որևէ կոչումում այս Եկեղեցում, առանց այդ գործում նրան ուղեկցող իշխանության, և այն ձեռք է բերվում իշխանությամբ և բանալիներով, որոնք կրում է Եկեղեցու Նախագահը. . . Եթե իր իշխանության բանալիներով նա ասի, որ որոշ արտոնություններ պիտի ետ վերցվեն մարդկանցից, ապա ոչ մի մարդ իշխանություն չունի շնորհելու նրանց այդ որոշակի արտոնությունները: Եթե որևէ մեկը փորձի դա անել, այդ գործողությունը կհամարվի անվավեր և անձը, որը փորձում է պաշտոնավարել, ստիպված կլինի պատասխան տալ Աստծո դատարանի առջև, եթե ոչ Եկեղեցու առջև, և կգտնվի օրինազանցության մեջ: . . .

. . . Երբ առաքյալները և այլ եղբայրներ այցելում են Սիոնի ցցերը և հանձնարարվում կարգի բերել որևէ բան, որն ուշադրության է արժանի այնտեղ, նրանք դա անում են լիազորության միջոցով կամ իշխանությամբ, որը նրանց պատվիրակվել է Եկեղեցու Նախագահի կողմից: Այդ նույն սկզբունքը վերաբերում է ավելի ցածր աստիճաններին՝ ցցերում և ծխերում:[23]

Յուրաքանչյուր մարդ, որը պատշաճորեն ընտրվում է Եկեղեցում նախագահելու որևէ կոչումում, պետք է հարգվի իր կոչումում: Երբ մարդ կարգվում է եպիսկոպոսի պաշտոնի, նրան տրվում է

իր բնակության ծխի վրա նախագահելու բանալիները, և ծխի յուրաքանչյուր անդամ, անկախ իր կոչումից, պետք է հարգի նրան: Նույնը ճիշտ է ցցի նախագահի համար, քվորումի նախագահի համար կամ ինչ նախագահ էլ որ լինի: Օրինակի համար թե ինչ է սա նշանակում, մեզ ուսուցանվել է, որ ոչ մի հայր, թեև կարող է ունենալ Մելքիսեդեկյան Քահանայություն, իրավունք չունի մկրտել իր սեփական երեխաներից որևէ մեկին, առանց առաջինը թույլտվություն վերցնելու իր եպիսկոպոսից: Երբ թույլտվությունը ձեռք է բերվում, հայրը լիազորվում է կատարել այդ արարողությունը իր երեխայի համար: Եթե որևէ հայր իր վրա լիազորություն վերցնի մկրտություն կատարել կամ իր որդուն կարգել, առանց տվյալ դեպքի համար պահանջվող իշխանության բանալիներ կրող ծխի կամ ցցի նախագահող պաշտոնյայից նախապես լիազորություն ստանալունա օրինազանցության մեջ կլինի: Սա վերաբերում է թե՛ առաքյալին, թե՛ ծխի որևէ երեցի: Նույնիսկ Եկեղեցու Նախագահը երբեք չի մտածի գործել այս տիպի որևէ հարցում առանց առաջինը ընդունելու իր ծխի եպիսկոպոսին կամ ցցի նախագահին և իշխանությունը, որով պատվիրակվել է եպիկոպոսը կամ ցցի նախագահը:[24]

5

Արքայության բանալիները կրողների միացյալ ձայնը մեզ միշտ կառաջնորդի լինել այնտեղ, որտեղ Տերն է ուզում, որ լինենք:

Կարծում եմ կա մի բան, որը մենք չափազանց հստակորեն պետք է պահենք մեր մտքում: Ո՛չ Եկեղեցու Նախագահը, ո՛չ Առաջին Նախագահությունը, ոչ էլ Առաջին Նախագահության և Տասներկուսի միացյալ ձայնը երբևէ չի շեղի Սրբերին կամ խորհուրդ ուղարկի աշխարհին, որը հակառակ լինի Տիրոջ կամքին:

Անհատը կարող է շեղվել ճշմարտությունից կամ ունենալ տեսակետներ կամ անհամապատասխան խորհուրդ տալ, որը Տերը չի նախատեսել: Բայց Առաջին Նախագահության ձայնը և մյուս նրանց միացյալ ձայնը, ովքեր կրում են նրանց հետ արքայության բանալիները, միշտ կառաջնորդի Սրբերին և աշխարհը այն ուղիներով, որտեղ Տերն է կամենում, որ նրանք լինեն: . . .

Ես վկայում եմ, որ եթե մենք նայենք դեպի Առաջին Նախագահությունը և հետևենք նրանց խորհրդին և ուղղորդմանը, ոչ մի ուժ երկրի վրա չի կարող կանգնեցնել կամ փոխել մեր

ուղղությունը որպես եկեղեցի, և որպես անհատներ մենք ձեռք կբերենք խաղաղություն այս կյանքում և կլինենք հավերժական փառքի ժառանգներ գալիք աշխարհում [տես ՎԱՈՒ 59.23]։[25]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ ուղիներով մենք կարող ենք հետևել Նախագահ Սմիթի օրինակին, երբ հաստատում ենք նրանց, ովքեր կրում են քահանայության բանալիները (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։
- Ինչպե՞ս է 1-ին բաժինը օգնում ձեզ հասկանալ տարբերությունը քահանայությունում պաշտոն կրելու և քահանայության բանալիները կրելու միջև։ Ինչո՞ւ եք կարծում, որ դա կարևոր տարբերություն է։
- Ի՞նչ ուղիներով եք օրհնվել, քահանայության բանալիները երկրի վրա վերականգվելու շնորհիվ (տես բաժին 2)։
- Ձեր կարծիքով ինչպե՞ս է Եկեղեցին զորացվում այն կազմակերպության միջոցով, որը նկարագրվում է բաժին 3-ում և 4-ում։ Ինչպե՞ս են զորացվում Եկեղեցու անդամները։
- Ի՞նչ զգացումներ են առաջանում, երբ մտածում եք Նախագահ Սմիթի խոսքերի մասին Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի միջև միաբանության վերաբերյալ։ Ե՞րբ եք առաջնորդություն ստացել նրանց «միաբան» ձայնի միջոցով։

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս ԺԶ.13–19; Գործք Գ.21, ՎԱՈՒ 21.4–6, 27.5–13, 65.2; 128.8–21, 132.7

Օգնություն ուսուցչին

«Կարող են. . . լինել դեպքեր, երբ դուք չեք իմանա որևէ հարցի պատասխանը։ Եթե այդպես պատահի, ուղղակի ասեք, որ դուք չգիտեք։ Գուցե ասեք, որ դուք կփորձեք գտնել պատասխանը։ Կամ գուցե հրավիրեք ուսանողներին պատասխանը գտնել՝ տալով նրանց ժամանակ մեկ այլ դասի ընթացքում հաղորդել, թե ինչ են նրանք սովորե» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 64)։

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1951, 58:
2. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 2: 40.
3. In Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 342.
4. N. Eldon Tanner, "A Man without Guile," *Ensign,* Aug. 1972, 33.
5. "Principles of the Gospel: The New and Everlasting Covenant," *Deseret News,* May 6, 1939, Church section, 5; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 3: 136–37.
6. In Conference Report, Apr. 1967, 98.
7. "Eternal Keys and the Right to Preside," *Ensign,* July 1972, 87.
8. In Conference Report, Apr. 1967, 99.
9. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 4.
10. "The Coming of Elijah," *Ensign,* Jan. 1972, 5.
11. "The Keys of the Priesthood Restored," *Utah Genealogical and Historical Magazine,* July 1936, 98–99.
12. "The Keys of the Priesthood Restored," 101.
13. "The Keys of the Priesthood Restored," 99–100.
14. In Conference Report, Apr. 1970, 58.
15. In Conference Report, Apr. 1948, 135; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 129.
16. "The Keys of the Priesthood Restored," 101.
17. "Eternal Keys and the Right to Preside," 87–88
18. *Doctrines of Salvation,* 3: 154.
19. "Eternal Keys and the Right to Preside," 87.
20. "Priesthood—Restoration of Keys," *Deseret News,* Sept. 16, 1933; Church section, 4; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 135.
21. "The Keys of the Priesthood Restored," 101; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 135.
22. *Elijah the Prophet and His Mission* and *Salvation Universal* (1957), 50; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 136.
23. In Conference Report, Apr. 1967, 98–99.
24. *Answers to Gospel Questions,* 2: 40–41.
25. "Eternal Keys and the Right to Preside," 88



Նախագահ Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթը Բրիտանիայի Տարածքային Համաժողովում խոսելիս՝: 1971թ. օգոստոսին: Ձախից աջ նստած են՝ Երեցներ Մարիոն Գ. Ռոմնիին, Ռիչարդ Լ. Էվանսը և Հովարդ Վ. Հանթերը:

ԳԼՈՒԽ 12

Քահանայության երդումն ու ուխտը

«Տիրոջ օրհնություններն առաջարկվում են Սրբերին և աշխարհին նրանց ծառայության միջոցով, ովքեր կրում են Նրա սուրբ քահանայությունը, ովքեր ներկայացնում են Նրան»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1951թ. ապրիլի 9-ին Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը որպես Առաքյալ 41–ամյա ծառայությունից հետո հաստատվեց որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ: Հաստատող քվեարկումից ոչ շատ անց Նախագահ Սմիթը դիմեց համայնքին: Նա հակիրճ կիսվեց իր կոչման վերաբերյալ իր զգացումներով:

«Ես հասկանում եմ, որ պաշտոնը, որին ես կանչվել եմ կատարելու, մեծ կարևորություն ունի: Դա ինձ խոնարհեցնում է . . .

Ես շնորհակալ եմ Տիրոջը Հիսուս Քրիստոսի ավետարանի համար, Եկեղեցու անդամակցության համար, ծառայություն մատուցելու ինձ տրված հնարավորության համար»: Ես ունեմ միայն մեկ ցանկություն, այնքան թույլ, որ ես եմ, և դա իմ ունակության լավագույնով ունեցած կոչումս մեծարելն է»:[1]

Նախագահ Սմիթը հաճախ հորդորում էր քահանայություն կրողներին մեծարել իրենց կոչումները: Չնայած նա հրապարակավ կիսվում էր իր իսկ ցանկությամբ մեծարելու իր կոչումները քահանայությունում,[2] նա հազվադեպ էր խոսում այդ անելիս իր ջանքերի մասին: Սակայն, մի անգամ, նա արտահայտվեց քահանայության ծառայության վերաբերյալ, որ նա մատուցել էր իր ընկեր Ջորջ Ֆ. Ռիչարդսի հետ, որը նախորդել էր իրեն որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ:

«Քառասուն տարի ես նստել եմ խորհրդում, մասնակցել համաժողովների, և ծառայել տարբեր ուղիներով Նախագահ Ջորջ Ֆ. Ռիչարդսի հետ: . . .

Մենք ճանապարհորդել ենք միասին Սիոնի մեկ ծայրից մինչև մյուսը: Վաղ օրերին, մենք՝ գերագույն իշխանավոր եղբայրներով գնում էինք երկու–երկու այցելելով Սիոնի ցցերը: Որտեղ որ երկաթուղին մեզ չէր տանում, իսկ այդպիսի վայրեր շատ էին, մենք, սովորաբար, ճանապարհորդում էինք այդ ժամանակ հայտնի «ճերմակազազաթներով», որոնք թեթև զսպանակավոր կառքեր էին: Հեռավոր ուղևորությունները, սովորաբար, նշանակում էին ծառայություններ երկու, հաճախ երեք կամ չորս ցցերում:

Այդպիսի ուղևորություններում ժողովները տեղի էին ունենում ամեն օր ցցի համաժողովների միջև տարբեր բնակավայրերում կամ ցցերի ծխերում: Այդպիսի ուղևորություններ հիմնականում կատարվում էին քարքարոտ ճանապարհներով, երբեմն կարճ արահետներով, ամռանը խիտ փոշու միջով, իսկ ձմռանը ծակող ցրտի պայմաններում, հաճախ խորը ցեխի կամ առատ ձյան միջով»:[3]

Երեց Ֆրենսիս Մ. Գիբբոնսը, որը ծառայում էր որպես քարտուղար Առաջին Նախագահությունում, կիսվել է մի ներըմբռնումով, թե ինչպես էր Նախագահ Սմիթը մեծարում իր կոչումները քահանայությունում. «Չնայած [նա] լիովին տեղյակ էր իր իշխանությանը, նա միշտ հեզ էր և մեղմ խոսելաձևով այն գործադրելիս: Նրա բնավորությունը զերծ էր գոռոզությունից, կեցվածքավորումից կամ ինքնակարևորումից: Նա երբեք իրեն բարձր չէր պահում մյուսներից, երբեք չէր չարաշահում իր պաշտոնը ի օգուտ իրեն»:[4]

Որպես Եկեղեցու Նախագահ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը խոսեց գերագույն համաժողովի քահանայության հինգ նիստերում, խրախուսելով եղբայրներին մեծարել քահանայության իրենց կոչումները: Այս գլխի ուսմունքերից չորսը վերցված են այդ քարոզներից՝ հատուկ ուշադրություն հրավիրելով մի ելույթի վրա, որը Նախագահ Սմիթը հաղորդեց 1970թ. հոկտեմբերի 3-ին: Քանի որ քարոզները տրվում էին քահանայության ժողովներին, այս խոսքերը ուղղված էին տղամարդկանց: Սակայն, այս խոսքերը ներառում են մի հասկացողություն, որ քահանայության

իշխանությունը մեծ օրհնություն է Եկեղեցու բոլոր անդամների համար: Քարոզներից մեկում Նախագահ Սմիթն ասել է. «Կարծում եմ մենք բոլորս գիտենք, որ քահանայության օրհնությունները չեն սահմանափակվում միմիայն տղամարդկանցով: Այս օրհնությունները նաև դուրս են թափվում մեր կանանց և դուստրերի և Եկեղեցու բոլոր հավատարիմ կանանց վրա: Այս հիանալի քույրերը կարող են նախապատրաստել իրենց՝ պահելով պատվիրանները և ծառայելով Եկեղեցում, Տիրոջ տան օրհնությունների համար: Տերն առաջարկում է իր դուստրերին ամեն մի հոգևոր պարգևը և օրհնությունը, որոնք կարող են ձեռք բերվել Իր որդիների կողմից, քանզի ոչ տղամարդն է առանց կնոջ, ոչ էլ կինը՝ առանց տղամարդու Տերումը [տես Ա Կորնթացիս ԺԱ.11]:[5]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Տղամարդիկ պետք է ունենան հստակ հասկացողություն այն ուխտերի վերաբերյալ, որ նրանք արել են, երբ նրանք պաշտոններ են ստանում քահանայությունում:

Ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել Մելքիսեդեկյան Քահանայության երդման և ուխտի վրա: Կարծում եմ, եթե մենք հստակ պատկերացում ունենանք ուխտի մասին, որը մենք կապում ենք, Տիրոջ խոստման մասին, երբ ստանում ենք պաշտոններ քահանայությունում և եթե մենք մեծարում ենք մեր կոչումները, ապա մենք կունենանք մեծ դրդապատճառ՝ անելու բոլոր բաները, որ մենք պետք է անենք հավերժական կյանք ձեռք բերելու համար:

Կասեի ավելին, որ ամեն բան, որ կապված է այս բարձրագույն քահանայության հետ նախատեսված է և միտված պատրաստելու մեզ ձեռք բերելու հավերժական կյանք Աստծո թագավորությունում:

Քահանայության վերաբերյալ հայտնության մեջ, որը տրված է Ջոզեֆ Սմիթին 1832թ. սեպտեմբերին, Տերն ասում է, որ Մելքիսեդեկյան Քահանայությունը հավիտենական է, որ այն սպասավորում է ավետարանը, գտնվում է ճշմարիտ եկեղեցում բոլոր սերունդներում և կրում է Աստծո գիտության բանալիները: Նա ասում է, որ այն հնարավորություն է տալիս Տիրոջ ժողովրդին սրբագործվել, տեսնել Աստծո երեսը և մտնել Տիրոջ

հանգիստը, «այն հանգիստը, որ Նրա փառքի լիությունն է» (Տես ՎԿՈ 84.17–24)։

Ապա խոսելով ինչպես Ահարոնյան և այնպես էլ Մելքիսեդեկյան քահանայությունների մասին, Տերն ասում է. «Քանզի նրանք, ովքեր հավատարիմ են այս երկու քահանայությունները ստանալու, և իրենց կոչումը մեծարելու, Հոգու կողմից սրբագործվում են՝ ի նորացումն իրենց մարմնի։

Նրանք դառնում են Մովսեսի և Ահարոնի որդիները և Աբրահամի սերունդը, և եկեղեցին ու արքայությունը և ընտրյալներն Աստծո։

Եվ նաև, բոլոր նրանք, ովքեր ընդունում են այդ քահանայությունը, ընդունում են ինձ, ասում է Տերը,

Քանզի նա, ով ընդունում է իմ ծառաներին, ընդունում է ինձ,.

Եվ նա, ով ընդունում է ինձ, ընդունում է իմ Հորը.

Եվ նա, ով ընդունում է իմ Հորը, ընդունում է իմ Հոր արքայությունը. հետևաբար, այն ամենն, ինչ Հայրն ունի, կտրվի նրան։

Եվ դա երդման և ուխտի համաձայն, որը պատկանում է քահանայությանը։

Հետևաբար, բոլոր նրանք, ովքեր ընդունում են քահանայությունը, ընդունում են այս երդումն ու ուխտն իմ Հորից, որը նա չի կարող դրժել, ոչ էլ այն կարող է խախտվել»։

Պատիժն այս ուխտը դրժելու և ամբողջովին նրանից շրջվելու համար, տրված է այս պատվիրանի հետ միասին. «. . . որ զգուշանաք ձեր համար, որ ջանասիրաբար ուշք դարձնեք հավերժական կյանքի խոսքերին։

Քանզի դուք պետք է ապրեք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով» (ՎԿՈՒ 84.33–44)։[6]

Ձեզանից նրանք, ովքեր կրում են Ահարոնյան Քահանայություն, դեռ չեն ստացել այդ երդումը և ուխտը, որը պատկանում է Բարձրագույն Քահանայությանը, բայց դուք իսկապես ունեք մեծ զորություն և իշխանություն ձեզ տրված Տիրոջից։ Ահարոնյան Քահանայությունը նախապատրաստական քահանայություն է, որն ուսուցանում է և վարժեցնում մեզ արժանի լինել այն մեծ օրհնություններին, որոնք գալիս են հետագայում։

Եթե դուք հավատարմորեն ծառայեք որպես սարկավագ, որպես ուսուցիչ և որպես քահանա, դուք ձեռք կբերեք ունակություններ, որոնք հնարավորություն կտան ձեզ ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն և մեծարել ձեր կոչումը նրանում:[7]

2

Քահանայություն կրողները խոստանում են մեծարել իրենց կոչումները քահանայությունում և ապրել ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից:

Ինչպես մեզանից բոլորը գիտեն, ուխտը պայմանագիր է և համաձայնագիր առնվազն երկու կողմերի միջև: Ավետարանի ուխտերի դեպքում, այդ կողմերն են՝ Տերը երկնքում և մարդիկ երկրի վրա: Մարդիկ համաձայն են պահել պատվիրանները և Տերը խոստանում է նրանց վարձահատույց լինել համապատասխանաբար: Ավետարանն ինքնին նոր և հավիտենական ուխտն է և ներառում է բոլոր համաձայանգրերը, խոստումները և պարգևները, որոնք Տերն առաջարկում է Իր ժողովրդին:

Եվ այսպես, երբ մենք ստանում ենք Մելքիսեդեկյան Քահանայություն, մենք այդպես ենք անում ուխտով: Մենք հանդիսավոր ձևով խոստանում ենք ստանալ քահանայությունը, մեծարել մեր կոչումները և ապրել յուրաքանչյուր խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից: Տերն իր կողմից խոստանում է մեզ, որ եթե մենք պահենք ուխտը, մենք կստանանք բոլորը, ինչ Հայրն ունի, որը հավերժական կյանք է: Կարո՞ղ է մեզանից որևէ մեկը մտածել ավելի մեծ կամ ավելի փառահեղ համաձայնագրի մասին, քան սա է:

Երբեմն մենք խոսում ենք անփութորեն մեր քահանայությունը մեծարելու մասին, բայց այն, ինչ հայտնություններն են ասում, դա քահանայությունում մեր կոչումները մեծարելն է, որպես երեցներ, յոթանասունականներ, քահանայապետեր, հայրապետեր և առաքյալներ:

Մարդու կողմից կրվող քահանայությունը մարդուն լիազորված Աստծո զորությունն է և իշխանությունը երկրի վրա՝ գործելու բոլոր բաները մարդկության փրկության համար: Քահանայության պաշտոններն ու կոչումները ծառայողական հանձնարարություններ են՝ կատարելու քահանայությունում առանձնապես նշանակված ծառայություն: Եվ այս կոչումները մեծարելու ուղին՝

նախատեսված աշխատանքն անելն է՝ նրանց կողմից կատարելը, ովքեր զբաղեցնում են դրա հետ կապված տվյալ պաշտոնը։

Նշանակություն չունի, թե ինչ պաշտոն ենք կրում, քանի դեռ մենք ճշմարիտ ենք և հավատարիմ մեր պարտականություններին։ Մեկ պաշտոնը ավելի մեծ չէ, քան մյուսը, չնայած վարչական նպատակներով մեկ քահանայություն կրող կարող է կանչվել նախագահելու և ղեկավարելու մյուսի աշխատանքը։

Հայրս՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն, ասել է. «Չկա պաշտոն, որն աճում է այս քահանայությունից, որն ավելի մեծ է կամ կարող է ավելի մեծ լինել, քան ինքը քահանայությունը։ Քահանայությունից է, որ պաշտոնը ձեռք է բերում իր իշխանությունը և զորությունը։ Ոչ մի պաշտոն իշխանություն չի տալիս քահանայությանը։ Ոչ մի պաշտոն զորություն չի ավելացնում քահանայությանը։ Բայց բոլոր պաշտոնները Եկեղեցում ձեռք են բերում իրենց զորությունը, իրենց ուժը, իրենց իշխանությունը *քահանայությունից*»։

Մենք կանչվում ենք մեծարելու մեր կոչումները քահանայությունում և կատարելու աշխատանքը, որը տրվում է պաշտոնի հետ, որը մենք ստանում ենք։ Եվ այսպես Տերն ասում է քահանայության վերաբերյալ հայտնության մեջ. «Հետևաբար, թող ամեն մարդ կանգնի իր պաշտոնում և ծառայի իր իսկ կոչման մեջ. . . որպեսզի համակարգը կատարյալ պահվի» (ՎԵՈՒ 84.109–110)։

Սա մեծ նպատակներից մեկն է, որի ուղղությամբ մենք աշխատում ենք Եկեղեցու քահանայության ծրագրում, որպեսզի երեցները կատարեն երեցների աշխատանքը, յոթանասունները կատարեն յոթանասուններինը, քահանայապետերը քահանայապետերի աշխատանքը և այլն, որպեսզի բոլոր քահանայություն կրողները կարողանան մեծարել իրենց իսկ կոչումները և հնձեն հարուստ օրհնությունները, որոնք խոստացված են այդպիսի ուղուց։[8]

Մենք Տեր Հիսուս Քրիստոսի դեսպաններն ենք։ Մեր լիազորությունը Նրան ներկայացնելն է։ Մենք ուղղորդվում ենք քարոզելու Նրա ավետարանը, կատարելու փրկության արարողությունները՝ օրհնելու մարդկությանը, բժշկելու հիվանդներին և հավանաբար գործելու հրաշքներ, անելու այն, ինչ Նա կաներ, եթե նա անձնապես ներկա լիներ, և բոլոր այս բաներն այն պատճառով, որ մենք կրում ենք սուրբ քահանայությունը։

«Քահանայությունը. . . մարդուն լիազորված Աստծո զորությունն է և իշխանությունը՝ երկրի վրա կատարելու մարդկության փրկության համար անհրաժեշտ բոլոր բաները»:

Որպես Տիրոջ գործակալներ՝ մենք կապված ենք Նրա օրենքով՝ անելու այն, ինչ Նա է կամենում, որ մենք անենք, անկախ անձնական զգացումներից կամ աշխարհիկ գայթակղություններից: Ինքներս մեզանից մենք փրկության ոչ մի ուղերձ չունենք, ոչ մի վարդապետություն, որ պետք է ընդունվի, ոչ մի իշխանություն մկրտելու կամ կարգելու՝ ոչ էլ ամուսնացնելու հավերժության համար: Բոլոր այս բաները գալիս են Տիրոջից և դրանց հետ կապված այն ամենը, ինչ անում ենք, լիազորված իշխանության հետևանքով է:[9]

3

Վեհացման խոստումը տրվում է յուրաքանչյուր Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի, ով հավատարիմ է քահանայության երդմանն ու ուխտին:

Այժմ կկամենայի մի քանի խոսք ասել Մելքիսեդկայն Քահանայություն ընդունելուն ուղեկցող երդումին:

Երդում տալը ամենահանդիսավոր և պարտավորեցնող խոսքն է, որը հայտնի է մարդկային լեզվին, և այս տիպի լեզվով էր, որ Հայրն ընտրեց օգտագործել Քրիստոսի և քահանայության մասին մեծ մեսիական մարգարեության մեջ: Իր մասին Նա ասում է. «Տերը երդում արաւ եւ չի զղջալ. Դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս» (Սաղ.ճԺ.4):

Բացատրելով այս մեսիական մարգարեությունը, Պողոսն ասում է, որ Հիսուսը «քահանայութիւն ունի անանցանելի», և որ դրա միջոցով եկավ «անվախճան կեանքի զօրութեան պէս» (Տես Եբրայեցիս Է.24, 16.) Ջոզեֆ Սմիթն ասել է, որ «Բոլոր նրանք, ովքեր կարգվում են այս քահանայությանը, դառնում են Աստծո Որդու նման՝ շարունակ մնալով քահանա», այսինքն, եթե նրանք մնում են հավատարիմ և ճշմարիտ [տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Եբրայեցիս 7.3]:

Եվ այսպես Քրիստոսը մեծ նախատիպն է, ինչ վերաբերում է քահանայությանը, ինչ կապված է մկրտության և բոլոր մյուս բաների հետ: Եվ այսպես Հայրը երդումով երդում է տալիս, որ Իր Որդին կժառանգի բոլոր բաները քահանայության միջոցով, այսպիսով, նա երդումով երդում է տալիս, որ մենք բոլորս, ովքեր մեծարում ենք մեր կոչումները այդ նույն քահանայությունում, պիտի ստանան բոլորը, ինչ Հայրն ունի:

Սա վեհացման խոստումն է տրված յուրաքանչյուր տղամարդու, ով կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, բայց դա պայմանական խոստում է, խոստում, պայմանավորված քահանայությունում մեր կոչումները մեծարելու հետ և ապրելով ամեն մի խոսքով, որն առաջ է գալիս Աստծո բերանից:

Բացարձակապես պարզ է, որ չկան ավելի փառահեղ խոստումներ, որոնք եղել են կամ կարող է տրվեն, քան նրանք, որոնք եկել են մեզ, երբ մենք ընդունեցինք արտոնությունը և

ստանձնեցինք պատասխանատվությունը կրելու սուրբ քահանայությունը և կանգնելու որպես Քրիստոսի ծառաներ։

Ահարոնյան Քահանայությունը նախապատրաստական քահանայություն է՝ որակավորելու մեզ ուխտ կապելու և ստանալու երդումը, որն ուղեկցում է այս բարձրագույն քահանայությանը։[10]

4

Տիրոջ օրհնությունները տրվում են բոլոր մարդկանց, նրանց սպասավորման միջոցով, ովքեր կրում են Նրա սուրբ քահանայությունը։

Չկա ոչինչ այս ողջ աշխարհում այնքան կարևոր մեզանից յուրաքանչյուրի համար, ինչպես մեր կյանքում առաջինը Աստծո արքայության բաները դնելը, ինչպես պատվիրանները պահելը, ինչպես մեր կոչումները մեծարելը քանայությունում, ինչպես Տիրոջ տուն գնալը և մեր Հոր արքայության օրհնությունների լրիվության տրվելը։[11]

Տիրոջ օրհնությունները տրվում են Սրբերին և աշխարհին նրանց սպասավորումների միջոցով, ովքեր կրում են Նրա սուրբ քահանայությունը, ովքեր ներկայացնում են Նրան, ովքեր փաստորեն Նրա ծառաներն ու գործակալներն են և հոժար են ծառայել Նրան և պահել Նրա պատվիրանները։[12]

Իմ աղոթքն է, որ մենք բոլորս, ովքեր կանչվել ենք ներկայացնելու Տիրոջը և կրելու Նրա իշխանությունը, կարողանանք հիշել, ով ենք մենք և գործենք համապատասխանաբար։

. . . Ես բոլոր իմ օրերում մեծարել եմ իմ կոչումը քահանայությունում և հույս ունեմ համբերել մինչև վերջ այս կյանքում և վայելել հավատարիմ սրբերի ընկերակցությունը գալիք կյանքում։[13]

Իմ զգացումն է օրհնել նրանց՝ երիտասարդ լինի, թե ծեր, ովքեր մեծարում են իրենց կոչումը քահանայությունում, և խնդրել Տիրոջը դուրս թափել նրանց վրա Իր Հոգու հիասքանչ բաները այս կյանքում և հավաստիացնել նրանց գալիք կյանքի հավերժական գանձերի մասին։ . . .

Ինչպիսի փառահեղ բան է իմանալ, որ Տերը տվել է մեզանից յուրաքանչյուրին քահանայության լրիվությունը և խոստացել է մեզ, որ եթե մենք ընդունենք այս քահանայությունը և մեծարենք

մեր կոչումները, մենք ձեռք կբերենք հավիտենական ժառանգություն Նրա հետ Իր արքայությունում:[14]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Նախագահ Սմիթը ուսուցանել է, որ քահանայության միջոցով «Տերը տալիս է իր դուստրերին ամեն հոգևոր պարգև և օրհնություն, որոնք կարող են ձեռք բերվել Նրա որդիների կողմից» («Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից»): Ի՞նչ մտքեր են առաջանում ձեր մոտ, երբ մտածում եք այդ հայտարարության մասին:
- Նախագահ Սմիթն ասել է, որ քահանայություն կրողները ավելի մեծ դրդապատճառ ունեն ձգտելու հավերժական կյանքի, երբ նրանք հասկանում են իրենց ուխտերը և Տիրոջ խոստումները (տես բաժին 1): Ինչո՞վ է սա ճիշտ Եկեղեցու բոլոր անդամների համար:
- Ինչպե՞ս է Նախագահ Սմիթի բացատրությունը կոչումները մեծարելու մասին (տես բաժին 2) տարբերվում *մեծարել* բառի մյուս գործածություններից: Ինչպե՞ս եք դուք օրհնվել Եկեղեցու անդամների ծառայության միջոցով, ովքեր մեծարել են իրենց կոչումները:
- Նախագահ Սմիթն ուսուցանել է, «Քրիստոսը մեծ նախատիպն է, ինչ վերաբերում է քահանայությանը» (բաժին 3): Ի՞նչ կարող ենք անել ուրիշների ծառայության մեջ Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելու համար:
- Բաժին 4-ում վերանայեք Նախագահ Սմիթի խոսքերն այն օրհնությունների մասին, որոնք տրվում են տաճարում: Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին պատրաստվել քահանայության օրհնությունների համար, որոնք մատչելի են տաճարում:

Առնչվող սուրբ գրություններ

Եբրայեցիս Ե.4, Ալմա 13.1–2, 6, ՎևՈՒ 20.38–60, 84.19–22, 107.99–100, Հավատո Հանգանակ 1.5

Օգնություն ուսուցչին

Հմուտ ուսուցիչը չի մտածում. «Ի՞նչ եմ անելու այսօր դասարանում», այլ հարցնում է. «Ի՞նչ են անելու իմ ուսանողները այսօր դասարանում», ոչ թե «Ի՞նչ եմ ուսուցանելու այսօր», այլ ավելի շուտ՝ «Ինչպե՞ս եմ օգնելու, որ ուսանողներս հայտնաբերեն, թե ի՞նչ կարիք ունեն իմանալու» (Virginia H. Pearce, "The Ordinary Classroom—A Powerful Place for Steady and Continued Growth," Ensign, Nov. 1992, 12; տես նաև *Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 61):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1951, 152.
2. See Conference Report, Apr. 1951, 152; Conference Report, Oct. 1970, 92.
3. "President George F. Richards: A Tribute," *Relief Society Magazine,* Oct. 1950, 661.
4. Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 352.
5. In Conference Report, Apr. 1970, 59.
6. In Conference Report, Oct. 1970, 90–91.
7. In Conference Report, Apr. 1970, 59.
8. In Conference Report, Oct. 1970, 91–92; տես նաև Joseph F. Smith, in Conference Report, Oct. 1903, 87.
9. "Our Responsibilities as Priesthood Holders," *Ensign,* June 1971, 49.
10. In Conference Report, Oct. 1970, 92.
11. In Conference Report, Apr. 1970, 59.
12. "Blessings of the Priesthood," *Ensign,* Dec. 1971, 98.
13. In Conference Report, Oct. 1970, 92.
14. In Conference Report, Apr. 1970, 58.

Այս նկարը ցույց է տալիս Կիևի մոտ՝ Ռկրսաինայում,
Դնեպր գետում մկրտվող մի մարդու։

Մկրտություն

«Մկրտությունը տառացիորեն. . . մի վերաբնակեցում է, կամ հարություն է մեկ կյանքից դեպի մեկ այլ կյանք՝ մեղքի կյանքից դեպի հոգևոր կյանքը»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1951թ. ապրիլի համաժողովին Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը խոսեց 67 տարի առաջ ունեցած փորձառության մասին, որ նա ունեցել էր, երբ մկրտվել էր 8 տարեկանում: Իր մկրտության օրը, նա ասել է, որ զգացել էր, որ «կանգնել էր անբիծ, մաքուր Տիրոջ առջև»: Բայց նա իմացել էր, որ նա պետք է ջանք գործադրեր իր ողջ կյանքի ընթացքում պահելու իրեն այդ նույն վիճակում: Նա հիշում է. «Ես ունեի քույր, որը շատ բարի էր, ինչպես իմ բոլոր քույրերն էին, որը տպավորեց իմ մտքում ինձ աշխարհից անբիծ պահելու անհրաժեշտությունը: Նրա ուսուցումներն այն օրը, երբ մկրտվեցի, մնացել են ինձ հետ իմ կյանքի բոլոր օրերում:[1]

Իր քրոջ ուսուցումներին հավատարիմ՝ Նախագահ Սմիթը խրախուսեց Եկեղեցու անդամներին հավատարիմ մնալ իրենց մկրտության ուխտերին՝ մնալ «հոգևոր կյանքի մեջ», որն իրենք ստացել էին, երբ մկրտվել էին:[2] Նա հայտարարեց.

«Չկա ավելի կարևոր խորհուրդ, որ կարելի է տալ որևէ Եկեղեցու անդամի, քան մկրտությունից հետո պատվիրանները պահելը: Տերն առաջարկում է մեզ փրկություն ապաշխարության պայմանով և հավատարմություն իր օրենքներին»:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Ընկղմամբ մկրտությունը նման է ծնվելուն, մահին և հարությանը:

Մկրտությունը՝ Ավետարանի երրորդ սկզբունքը և առաջին արարողությունը, կարևոր է փրկության և վեհացման համար Աստծո արքայությունում: Մկրտությունը առաջինը միջոց է, որով ապաշխարող անձնավորությունը ձեռք է բերում մեղքերի թողություն: Երկրորդը՝ այն դեպի Աստծո արքայություն տանող դարպասն է: Տերը, խոսելով Նիկոդեմոսի հետ, այդպես է ասում մեզ Հովհաննես Գ.1–11: . . .

. . . Մկրտությունը ջրի մեջ ընկղմվելով է. . . Մկրտությունը չի կարող լինել որևէ ուրիշ ձևով, բացի ողջ մարմինը ջրի մեջ ընկղմելուց, հետևյալ պատճառներով.

(1) Այն նման է Հիսուս Քրիստոսի և մյուս բոլորի մահվանը, թաղմանը և հարությանը:

(2) Մկրտությունը նաև ծնունդ է և նման է երեխայի ծննդին այս աշխարհում:

(3) Մկրտությունը տառացիորեն, որպես հարության նմանություն, մի վերաբնակեցում է, կամ հարություն է մեկ կյանքից դեպի մեկ այլ կյանք՝ մեղքի կյանքից դեպի հոգևոր կյանքը:

Ես ուզում եմ խոսել երկրորդ պատճառի մասին. Մկրտությունը նաև ծնունդ է և այս աշխարհում երեխայի ծնվելու նմանությամբ է. . . Մովսես 6.58–60 հատվածներում մենք կարդում ենք.

«Դրա համար, ես ձեզ պատվիրում եմ այս բաներն ազատ սովորեցնել ձեր զավակներին՝ ասելով.

Որ օրինազանցության պատճառով գալիս է անկումը, անկում, որը մահ է բերում, և քանի որ դուք աշխարհում ծնվել եք ջրով և արյունով և ոգով, որն արարել եմ ես, և այդպես փոշուց կենդանի հոգի դարձավ, ճիշտ այդպես, դուք պետք է վերստին ծնվեք երկնքի արքայության մեջ՝ ջրով և Հոգով, և մաքրվեք արյունով, այսինքն՝ իմ Միածնի արյունով, որպեսզի դուք սրբագործվեք բոլոր մեղքերից և վայելեք հավերժական կյանքի խոսքերն այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում, այսինքն՝ անմահության փառքը,

Քանզի, ջրով դուք պահում եք պատվիրանը. Հոգով դուք արդարացվում եք, և արյամբ դուք սրբագործվում եք»: . . .

Յուրաքանչյուր երեխա, որ այս աշխարհ է գալիս, զարգանում է ջրում, ծնվում է ջրով և արյունով և հոգով: Այսպիսով, երբ մենք ծնվում ենք Աստծո արքայությունում, մենք պետք է ծնվենք նույն ձևով՝ մկրտությամբ ջրով ծնվենք, Քրիստոսի արյան թափվելու միջոցով մաքրվենք, սրբագործվենք և արդարացվենք Աստծո Հոգու միջոցով, քանզի մկրտությունը, ամբողջական չէ առանց Սուրբ Հոգու մկրտության: Դուք տեսնում եք զուգահեռը աշխարհում ծնվելու և Աստծո թագավորությունում ծնվելու միջև: . . .

Գալով երրորդ պատճառին. Մկրտությունը տառացիորեն, որպես հարության նմանություն, մի վերաբնակեցում, կամ հարություն է մեկ կյանքից դեպի մեկ այլ կյանք՝ մեղքի կյանքից դեպի հոգևոր կյանքը: . . .

. . . Բոլոր տղամարդիկ և կանայք. . . կարիք ունեն ապաշխարության. . . Նրանք հոգևոր մահվան մեջ են: Ինչպե՞ս են նրանք պատրաստվում ետ վերադառնալ: Ջրի մեջ թաղվելով: Նրանք մեռած են և թաղվում են ջրում և դուրս գալիս հոգու հարությունում ետ՝ դեպի հոգևոր կյանք: Ահա թե ինչ է մկրտությունը:[4]

2

Փոքրիկ երեխաները, ովքեր չեն հասել պատասխանատվության տարիքի, կարիք չունեն մկրտության, որովհետև նրանք փրկագնվում են Հիսուս Քրիստոսի Քավությամբ:

Ես գիտեմ, որ փոքր երեխաները, ովքեր չեն հասել պատասխանատվության տարիքի, և հետևաբար, մեղավոր չեն մեղքի համար. . . փրկագնվում են Քրիստոսի արյան միջոցով և լուրջ ծաղր է վիճելը, որ նրանք կարիք ունեն մկրտության, մերժելով Աստծո արդարությունն ու ողորմածությունը [տես Մորոնի 8.20–23]:[5]

Վարդապետություն և Ուխտերի 29–րդ բաժնում Տերն ասում է հետևյալը (46–47-ում հատվածներ):

«Բայց ահա, ես ասում եմ քեզ, որ փոքր երեխաները փրկագնված են աշխարհի հիմնադրումից ի վեր՝ իմ Միածնի միջոցով.

Ուստի, նրանք չեն կարող մեղանչել, քանզի սատանային տրված չէ փոքր երեխաներին գայթակղելու զորություն, մինչև որ նրանք չսկսեն պատասխանատու դառնալ իմ առաջ»:

Միթե՞ հրաշալի չէ հնչում. «Փոքր երեխաները փրկագնված են աշխարհի հիմնադրումից ի վեր»: Ի՞նչ Նա ի նկատի ունի դրանով: Դա նշանակում է, որ նախքան այս երկրի հիմնադրումը, փրկագնման այս ծրագիրը, որին ակնկալվում է, որ մենք հետևենք այս մահկանացու կյանքում, ամբողջը նախապատրաստված էր, և Աստված, իմանալով վերջը սկզբից ի վեր, պատրաստություններ տեսավ փոքրիկ երեխաների փրկագնման համար՝ Հիսուս Քրիստոսի քավության միջոցով: . . .

. . . Երբ նայում եք փոքրիկ մանկիկի դեմքին, և նա նայում է ձեզ և ժպտում ձեզ, կարո՞ղ եք հավատալ, որ այդ փոքրիկ երեխան արատավորված է որևէ տեսակի մեղքով, որը նրան կզրկի Աստծո ներկայությունից, եթե նա մահանա. . .:

Հիշում եմ, երբ ես միսոնիներական դաշտում էի Անգլիայում, այնտեղ մի Ամերիկացի ընտանիք կար. . . Երբ [ամուսինը] լսեց Երեցներին փողոցում քարոզելիս նա հրավիրեց նրանց իր տուն, որովհետև նրանք իր հայրենակիցներն էին: Նա չէր հետաքրքրվում ավետարանով, նա հետաքրքրվում էր նրանցով, որովհետև նրանք էլ Միացյալ Նահանգներից էին: Դե՜հ, այնպես եղավ, որ ես աշխատում էի այնտեղ: Ես առաջինը չէի, ումից նա քարոզ լսեց, բայց հետագայում ես հրավիրվեցի նրանց տուն: . . .

Մենք մտածեցինք, որ կգնանք նրա տուն և կխոսենք բեյսբոլի և ֆուտբոլի և այլ բաների մասին, և կհամեմատեինք որոշ բաներ Ամերիկայում Մեծ Բրիտանիայի հետ՝ բաներ, որոնցով նա էր հետաքրքրվում: Մենք այդպես էլ արեցինք և սկզբում ոչ մի խոսք չասացինք կրոնի մասին: Մենք մի քանի անգամ էլ այցելեցինք, և նա մտածում էր մենք բավականին լավ տղաներ էինք, որովհետև չէինք ձգտում փաթաթել մեր կրոնը նրա վզին: Բայց որոշ ժամանակ անց նրանք սկսեցին հարցեր տալ, որին մենք սպասում էինք, և մի երեկո, երբ մենք նստած էինք նրանց տանը, այդ մարդու կինը շրջվեց դեպի ինձ և ասաց. «Երեց Սմիթ, ես ուզում եմ ձեզ մի հարց տալ»: Նախքան հարցը տալը նա սկսեց արտասվել: Ես չգիտեի թե ինչ էր պատահել: Նա հեկեկաց, և երբ նա իրեն բավականաչափ հավաքեց հարցը տալու համար, պատմեց ինձ այս պատմությունը.

Երբ նրանք եկան Անգլիա, դժբախտություն ունեցան կորցնելով մի փոքրիկ մանկիկի. . . Նրանք գնացին քահանայի մոտ [եկեղեցու, որտեղ հաճախում էին] և ուզում էին այդ մանկիկին

թաղել քրիստոնեական թաղման ծեսով. . . Քահանան ասաց նրան. «Մենք չենք կարող ձեր երեխային քրիստոնեական թաղում կատարել, որովհետև նա կնքված չէ: Ձեր մանկիկը կորած է»: Դա բավական կոպիտ ձևով էր ասված, բայց կինը այդպես պատմեց պատմությունը և նրա սիրտը երկու, թե երեք տարի ցավում էր ու ցավում: Այսպիսով, նա հարցրեց ինձ իր հարցը. «Միթե՞ իմ երեխան կորած է: Միթե՞ ես այլևս չեմ տեսնելու նրան: Ես բացեցի և կարդացի նրա համար Մորմոնի Գրքից Մորմոնի խոսքերը իր որդի Մորոնիին [տես Մորոնի 8]: Ես ասացի. «Ձեր մանկիկը կորած չէ: Ոչ մի մանկիկ չի կորում: Յուրաքանչյուր մանկիկ փրկվում է Աստծո արքայությունում, երբ նա մահանում է»:

. . . «Եվ ես նաև տեսա, որ բոլոր երեխաները, ովքեր մահանում են նախքան պատասխանատվության տարիքին հասնելը, փրկվում են երկնքի Սելեստիալ Արքայությունում» [ՎԱՈՒ 137.10]: Սա այն էր, ինչ Տերն ասաց Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնության կամ տեսիլքի մեջ, որը նա ունեցավ Կիրթլենդի Տաճարում: Միթե՞ դա հրաշալի չի հնչում: Միթե՞ դա արդար չէ: Միթե՞ դա ճիշտ չէ. . . [Երեխան] պատասխանատու չէ սկզբնական մեղքի համար, նա պատասխանատու չէ որևէ մեղքի համար և Աստծո ողորմածությունը պահանջում է նրան և նա փրկագնվում է:

Բայց ինչպե՞ս է ձեր և ինձ հետ: Ահա և մենք, ովքեր ունակ ենք հասկանալու, և Տերն ասում է. «Նրան, ով գիտելիք ունի, մի՞թե ես չեմ պատվիրել, որ ապաշխարի» [ՎԱՈՒ 29.49]: Մեզ պատվիրված է ապաշխարել, մեզ պատվիրված է մկրտվել, մեզ պատվիրված է մեր մեղքերը լվանալ մկրտության ջրերում, որովհետև մենք ունակ ենք հասկանալու, և մենք բոլորս էլ մեղանչել ենք: Բայց ես չեմ մկրտվել և դուք չեք մկրտվել որևէ բանի համար, որ Ադամն է արել: Ես մկրտվել եմ, որ կարողանամ մաքրվել նրանից, ինչ ինքս եմ արել, և նույնն էլ ձեզ հետ է, և որպեսզի ես կարողանամ գալ Աստծո արքայություն:

. . . Տերը պատրաստություններ է տեսել նրանց համար, ովքեր առանց օրենքի են և փոքր երեխաները ենթակա չեն ապաշխարության օրենքին: Ինչպե՞ս կարող եք ուսուցանել փոքր երեխային ապաշխարել: Նա ոչինչ չունի ապաշխարելու:

Տերը սահմանել է, և Իր իսկ դատողությամբ, պատասխանատվության տարիքը ութ տարեկանն է: Ութ տարեկան դառնալուց հետո մեզանից ակնկալվում է ունենալ բավականաչափ

հասկացողություն, որ մենք պետք է մկրտվենք: Տերը հոգ է տանում նրանց մասին, ովքեր այդ հասակից ցածր են:[6]

3

Յուրաքանչյուր անձնավորություն, ով մկրտվել է Եկեղեցում, ուխտ է կապել Տիրոջ հետ:

Յուրաքանչյուր անձ, երբ նա մտնում է մկրտության ջրերը, իր վրա ուխտ է վերցնում:

«Եվ բացի այդ, եկեղեցուն որպես պատվիրան, մկրտության ձևի վերաբերյալ, Բոլոր նրանք, ովքեր իրենց խոնարհեցնում են Աստծո առաջ և ցանկանում են մկրտվել, և առաջ են գալիս կոտրված սրտով և փշրված հոգով, և եկեղեցու առաջ վկայում են, որ իրենք ճշմարտապես ապաշխարել են իրենց բոլոր մեղքերից և հոժար են իրենց վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը, վճռականություն ունենալով ծառայել նրան մինչև վերջ, և իրենց գործերով ճշմարտապես ցույց են տալիս, որ իրենք ստացել են Քրիստոսի Հոգուց՝ իրենց մեղքերի թողության համար, մկրտությամբ պիտի ընդունվեն իր եկեղեցին» (ՎԱՌՒ 20.37):[7]

Ես կկարդամ Վարդապետություն և Ուխտեր 59–րդ բաժնից.

«Ուստի, ես նրանց տալիս եմ [նշանակում է Եկեղեցու անդամներին] պատվիրան, ասելով այսպես. Սիրիր Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ սրտով, քո ողջ զորությամբ, մտքով և ուժով. և Հիսուս Քրիստոսի անունով ծառայիր Նրան:

Սիրիր քո մերձավորին քո անձի պես: Մի գողացիր. Շնություն մի արա, մի սպանիր, ոչ էլ նման որևէ բան գործիր:

Գոհություն հայտնիր Տիրոջը՝ քո Աստծուն, բոլոր բաներում» [ՎԱՌՒ 59.5–7]:

Յուրաքանչյուր ոք, որ մկրտվել է Եկեղեցում, ուխտ է կապել Տիրոջ հետ պահել Նրա պատվիրանները և այդ պատվիրանով, որը կրկնվել է այն տնտեսությունում, որում մենք ապրում ենք, մեզ ասվել է, որ պետք է ծառայենք Տիրոջը ողջ մեր սրտով և ողջ մեր մտքով և ողջ մեր ուժով, որ ունենք, և դա նույնպես մենք պետք է անենք Հիսուս Քրիստոսի անունով:

Մկրտության ջրերում մենք ուխտեցինք, որ կպահենք այս պատվիրանները. որ մենք կծառայենք Տիրոջը, որ մենք կպահենք այս առաջին և բոլորից մեծագույն պատվիրանները և

«Այս Եկեղեցում մկրտված յուրաքանչյուր անձ ուխտ է կապել Տիրոջ հետ պահելու Նրա պատվիրանները»։

կսիրենք մեր Տեր Աստծուն. որ մենք կպահենք հաջորդ մեծ պատվիրանը՝ մենք կսիրենք մեր ընկերոջը ինչպես մեզ և ողջ զորությամբ, որ մենք ունենք, ողջ ուժով, ողջ մեր սրտով մենք կապացուցենք Նրան, որ մենք «պետք է ապրե[ն]ք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով» [ՎԿՈՒ 84.44], որ մենք

կլինենք հնազանդ և խոնարհ, ջանասեր Նրա ծառայության մեջ, հոժար հնազանդվելու, ականջ դնելու նրանց խորհուրդներին, ովքեր նախագահում են մեզ վրա և կանենք բոլոր բաները միայն Աստծո փառքին ուղղված աչքով:

Մենք չպետք է մոռանանք այս բաները, քանի որ այս պատվիրանը պարտադիր է մեզ համար որպես Եկեղեցու անդամներ:[8]

4

Ավետարանի լրիվ օրհնությունները ձեռք բերելու համար, մենք պետք է շարունակենք խոնարհ, ապաշխարող և հնազանդ լինել մեր մկրտվելուց հետո:

«Ճշմարիտ եկեղեցու մեծ նպատակներից մեկը մարդկանց ուսուցանելն է, թե ինչ պետք է նրանք անեն մկրտությունից հետո՝ ձեռք բերելու համար ավետարանի լրիվ օրհնությունները:[9]

Յուրաքանչյուր մկրտված հոգի՝ իսկապես մկրտված, իրեն խոնարհեցրել է. նրա սիրտը կոտրված է, հոգին փշրված է, նա ուխտ է կապել Աստծո առջև, որ նա կպահի Նրա պատվիրանները և կթողնի բոլոր իր մեղքերը: Հետո, երբ մտնում է Եկեղեցի, միթե նրա արտոնությունն է մեղանչել՝ ներսում լինելուց հետո: Կարո՞ղ է նա թուլանալ: Կարո՞ղ է նա զբաղվել այն բաներով, որոնք Տերն ասել է, որ պետք է խուսափի: Ո՛չ: Դա ուղղակի նույնքան անհրաժեշտ է, որ նա ունենա այդ փշրված հոգին, այդ կոտրված սիրտը, մկրտվելուց հետո, որքան դա անհրաժեշտ էր նախքան մկրտվելը:[10]

Ես լսել եմ մեր երիտասարդ տղամարդկանցից մի քանիսին և որոշ ոչ երիտասարդների մկրտության մասին խոսելիս: Նրանք ասում են, թե իրենք չգիտեն, թե ինչու է այդպես, քանի որ մկրտությունը մեղքերի թողության համար է, որ մարդ չպետք է ամեն անգամ մկրտվի, երբ մեղք է գործում: Ձեզ հասկանալի է պատճառը: Քանի դեռ մարդը մեղանչել է, բայց մնում է հոգևոր կյանքի մեջ, նա կենդանի է, նա կարող է ապաշխարել և ներվել: Նա հարկ չկա, որ մկրտվի ետ բերվելու այնտեղ, որտեղ արդեն գտնվում է:[11]

Ո՞վ է Վերջին Օրերի Սրբերի միջից ձգտում մի տեղի թելեստիալ արքայությունում: Ո՞վ է Վերջին Օրերի Սրբերի միջից մի տեղի ձգտում թերեստրիալ արքայությունում: Այդ արքայությունների հետ մենք չպետք է գործ ունենանք.Եկեղեցում մկրտված

մարդու մտադրությունը այն չէ, կամ չպետք է այն լինի, որ այնպես ապրի, որ տեղ չգտնի Աստծո սելեստիալ արքայությունում. քանի որ մկրտությունը ինքնին ուղի է դեպի այդ արքայություն: Մկրտությունը երկկողմանի բնույթ ունի. նախ՝ մեղքերի թողության համար, և ապա՝ մուտք դեպի Աստծո արքայություն՝ ո՛չ թելեստիալ արքայություն, ո՛չ էլ թերեստրիալ արքայություն, այլ սելեստիալ արքայություն, որտեղ Աստված է բնակվում: Ահա թե ինչի համար է մկրտությունը, ահա թե ինչի համար է Սուրբ Հոգու պարգևը՝ ձեռնադրմամբ, նախապատրաստելու մեզ, որ կարողանանք հնազանդության միջոցով շարունակել առաջ և առաջ, պահելով Տիրոջ պատվիրանները, մինչև որ մենք ստանանք սելեստիալ արքայության լրիվությունը:[12]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Երբ կարդաք Նախագահ Սմիթի հիշողությունները «Նախագահ Ջոզեֆ Սմիթի կյանքից» բաժնում, մտածեք ձեր մկրտության մասին: Ինչպե՞ս է մկրտության մասին ձեր հասկացողությունը աճել այդ ժամանակից ի վեր: Ինչպե՞ս կարող ենք օգնել ընտանիքի անդամներին կամ ընկերներին, ովքեր պատրաստվում են մկրտվել:
- Ի՞նչ ներըմբռնումներ եք մկրտության վերաբերյալ ձեռք բերում Նախագահ Սմիթի ուսմունքներից բաժին 1-ում: Ինչպե՞ս կարող է նրա ուսմունքները մկրտության խորհրդանշական լինելու մասին մեծացնել մեր հասկացողությունը մկրտության ուխտի վերաբերյալ:
- Ի՞նչ է ուսուցանում բաժին 2-ի պատմությունը Իր զավակների հանդեպ Երկնային Հոր սիրո մասին:
- Խորհեք մկրտության ուխտը պահելու ձեր ջանքերի մասին (տես բաժին 3): Ինչպե՞ս է այդ ուխտն ազդում ընտանիքի անդամների և մյուսների հետ ձեր փոխհարաբերությունների վրա:
- Մտածեք բաժին 4-ի սկզբումՆախագահ Սմիթի հայտարարության մասին: Ի՞նչ եք կարծում ինչի մասին պետք է մարդիկ ուսուցանվեն իրենց մկրտությունից հետո: Ինչպե՞ս կարող ենք օգնել միմյանց մկրտության ուխտը պահելու համար:

Սոնչվող սուրբ գրություններ

Մատթեոս Գ.13–17, 2 Նեփի 31.5–13, Մոսիա 18.8–13, 3 Նեփի 11.31–39, ՎևՈՒ 68.25–27, Հավատո Հանգանակ 1.4

Օգնություն ուսուցչին

«Դուք կարող եք օգնել նրանց, ում ուսուցանում եք, ավելի վստահ զգալ քննարկմանը մասնակցելու իրենց ունակության մեջ, եթե դուք դրականորեն արձագանքեք յուրաքանչյուր անկեղծ մեկնաբանությանը: Օրինակ՝ դուք կարող եք ասել. «Շնորհակալություն ձեր պատասխանի համար: Այն շատ խելամիտ էր». . . կամ «Դա լավ օրինակ է» կամ «Շնորհակալություն այն ամենի համար ինչ ասացիք այսօր» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 64):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1951, 57–58.
2. "Repentance and Baptism," *Deseret News,* Mar. 30, 1935, Church section, 8; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2: 326.
3. In Conference Report, Oct. 1970, 7.
4. "Repentance and Baptism," 6, 8; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 323–26.
5. "Testimony of Elder Joseph F. Smith Jr.," *Liahona: The Elder's Journal,* Mar. 30, 1915, 629.
6. "Redemption of Little Children," *Deseret News,* Apr. 29, 1939, Church section, 7.
7. "Seek Ye Earnestly the Best Gifts," *Ensign,* June 1972, 2.
8. In Conference Report, Apr. 1940, 95; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 328.
9. "The Plan of Salvation," *Ensign,* Nov. 1971, 5.
10. In Conference Report, Oct. 1950, 12; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 329.
11. "Repentance and Baptism," 8; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 326.
12. In Conference Report, Apr. 1922, 60–61.

Սուրբ Հոգու պարգևը

«Մենք կարող ենք մկրտությունից և հաստատումից հետո դառնալ Սուրբ Հոգու ընկերակիցներ, ով կուսուցանի մեզ Տիրոջ ուղիները, կարթնացնի մեր միտքը և կօգնի մեզ հասկանալ ճշմարտությունը»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ուսուցանել է, որ Եկեղեցու յուրաքանչյուր հավատարիմ անդամ իրավունք ունի հայտնություններ ստանալ, որոնք նպատակահարմար են և անհրաժեշտ անձնապես իր առաջնորդության համար»:[1] Նա միշտ որոնել է այս անձնական առաջնորդությունը, հատկապես իր որդիններին և դուստրերին ուսուցանելու և ապահովելու իր ջանքերում: Երեց Ֆրենսիս Մ. Գիբբոնսը, որը ծառայում էր որպես քարտուղար Առաջին Նախագահությունում, պատմել է հետևյալ փորձառությունը, ինչպես նրան պատմել էր Նախագահ Սմիթի որդին՝ Ռեյնոլդսը (որի մականունը Ռեյն էր):

«Ռեյնը խոստովանեց, որ նա գլանակ է դրել իր բերանում կյանքում ընդամենը մեկ անգամ և այն էլ մի կարճ պահ: Դա տեղի էր ունեցել, երբ նա ուսանող էր Ռուզվելտ Կրտսերի ավագ դպրոցում Սոլթ Լեյք Սիթիում: [Դպրոցի] մուտքը մի խաղաղ կից փողոցից էր, որով շատ քիչ մեքենաների երթևեկություն էր նկատվում: Այդ օրը Ռեյնը հենց նոր էր դուրս եկել դպրոցի դիմացի մուտքից մի ընկերոջ հետ, որը ծխում էր և ստիպեց նրան ինչպես հաճախ էր արել «ուղղակի մի հատ փորձել»: Այս անգամ ընկերոջը հաջողվեց: Ռեյնը վերցրեց գլանակներից մեկը և վառեց այն: Մի քանի ծխի քուլա արձակելուց հետո, ինչ եք կարծում ո՞վ հայտնվեց, եթե ոչ Ռեյնոլդսի հայրը իր մեքենայով: Բացելով պատուհանը, Երեց Սմիթն ասաց իր ապշահար որդուն. «Ռեյնոլդս, ես ուզում եմ խոսել քեզ հետ երեկոյան ճաշից հետո» և հեռացավ: Ռեյնը պատմեց. «Երբ հայրս կոչում էր ինձ Ռեյնոլդս,



«Եւ երբոր Պօղոսը ձեռք դրաւ նորանց վերայ, Սուրբ Հոգին եկաւ նորանց վերայ» (Գործք ԺԹ.6):

ես գիտեի, որ նա ի նկատի ուներ լուրջ խոսակցություն»: Երեց Սմիթը թողեց, որ Ռեյնը իր մեղքի մասին մի լավ մտածեր կեսօրվա մնացած մասը և երեկոյան ճաշի ընթացքում, երբ նա զարմանալիորեն քիչ բան խոսեց: Հետո իր հոր առանձնասենյակում անհարմարավետ նստած. . . Ռեյնոլդսը դատաստանի առջև կանգնեց: Այն ինչ նա ստացավ, պարզապես բարի, սիրառատ դասախոսություն էր «այդ կեղտոտ սովորույթի» չարիքների մասին և հիշեցնում, թե ով էր ինքը և ինչպես էր իր վարքը տարածվում ողջ ընտանիքի վրա: Այն ավարտվեց խնդրանքով, որ Ռեյնը խոստանա, որ այլևս երբեք գլանակ չի դնի իր բերանը: Ռեյնը հանդիսավոր խոստում տվեց: «Դա երբեք այլևս չպատահեց, ասաց նա: Բոլոր հետագա տարիների ընթացքում, ներառյալ Միացյալ Նահանգների նավատորմում II Համաշխարհային Պատերազմի ժամանակահատվածում, որտեղ ծխելը խիստ տարածված էր, նա հարգեց իր հորը տված խոստումը:

Մտածելով այս փորձառության մասին, Երեց Գիբբոնսը նկատեց. «Այդ մեկուսի փողոցում Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հայտնվելու հավանականությունը հենց այն պահին, երբ նրա փոքր որդին վառեց իր մեկ և միակ գլանակը խիստ անհավատալի էր: Չնայած նա չասաց այդ մասին, Ռեյնի շարժուձևից և տոնից զգացվում էր, որ այդ դիպվածը նրան համոզեց իր հոր արտասովոր հոգևոր զգայունության խորության և ուժի մասին, հատկապես, երբ այն կապված էր իր ընտանիքի բարօրության հետ»:[2]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Սուրբ Հոգու առաքելությունն է վկայություն բերել Հոր և Որդու և ողջ ճշմարտության մասին:

Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է: Նա Հոգի է՝ մարդու կերպարանքով: Հայրը և Որդին մարմնով անձնավորություններ են, նրանք ունեն մսից և ոսկորից մարմիններ: Սուրբ Հոգին Հոգեղեն անձնավորություն է, և ունի միայն հոգեղեն մարմին [տես ՎևՈՒ 130.22]: Նրա առաքելությունն է վկայություն բերել Հոր և Որդու և ամեն ճշմարտության մասին [տես 2 Նեփի 31.18, Մորոնի 10.5]:[3]

Նա մասնակցում է Հոր և Որդու գործերին և բացահայտում է դրանք նրանց, ովքեր Տիրոջը հավատարմությամբ են ծառայում: Մխիթարիչի կամ Սուրբ Հոգու ուսմունքների միջոցով է, որ Հիսուս Քրիստոսի ուսմունքները վերհիշվեցին առաքյալների կողմից [տես Հովհաննես ԺԴ.26]: Սուրբ Հոգու ուսուցումների միջոցով է, որ գալիս է մարգարեությունը [տես Բ Պետրոս Ա.21]:[4]

Աստծո Հոգին խոսելով մարդու հոգու հետ զորություն ունի ճշմարտությունը ավելի մեծ ազդեցությամբ և ըմբռնմամբ հաղորդելու, քան այն կարող է հաղորդվել նույնիսկ երկնային էակների հետ անձնական շփման միջոցով: Սուրբ Հոգու միջոցով ճշմարտությունը կարող է միահյուսվել մարմնի հենց ջլերին և մկաններին, որպեսզի այն չմոռացվի:[5]

2

Սուրբ Հոգին ամենուրեք ցույց է տալիս ճշմարտությունը ազնիվ մարդկանց:

Մենք հավատում ենք Սուրբ Հոգին հայտնող է, և որ Նա վկայություն կբերի ազնիվ մարդկանց ամենուրեք, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, և որ այս եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսի վրա» (ՎևՈւ 1.30):

Ոչ ոք չպետք է մնա խավարում. հավիտենական ավետարանի լույսն այստեղ է և ամեն անկեղծ որոնող երկրի վրա կարող է ձեռք բերել անձնական վկայություն Սուրբ Հոգուց՝ ճշմարտության և Տիրոջ աշխատանքի աստվածայնության մասին:

Պետրոսն ասել է. «Աստված աչառ չէ. Այլ ամեն ազգումն, ով որ վախենում է նորանից՝ եւ արդարութիւն է գործում, ընդունելի է նորան» (Գործք Ժ.34–35), որը նշանակում է, որ Տերը դուրս կթափի Իր Հոգին վախեցողների վրա, որպեսզի նրանք իմանան ինքնուրույն այս կրոնի ճշմարտությունների մասին:[6]

Սուրբ Հոգին ցույց կտա իրեն ամեն անձնավորության, ով հարցնում է ճշմարտության մասին, ճիշտ ինչպես Նա արեց Կոռնելիուսի հետ [տես Գործք 10]: Մենք ունենք այս հայտարարությունը Մորմոնի Գրքում Մորոնիի կողմից, երբ նա իր հիշատակարանն ավարտելու մոտ էր (գլուխ 10, հատված 4):

«Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չե՞ն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ» (Մորոնի 10.4):

Ամեն մարդ կարող է Սուրբ Հոգուց հայտնություն ստանալ, նույնիսկ երբ նա Եկեղեցուց դուրս է, եթե նա անկեղծորեն որոնում է լույս և ճշմարտություն: Սուրբ Հոգին կգա և կտա մարդուն վկայություն, որը նա որոնում է և ապա կհեռանա:[7]



3

Մկրտությունից հետո Սուրբ Հոգու պարգևը տրվում է ձեռնադրմամբ:

Խոստումը տրվել է Հիսուս Քրիստոսի սկզբնական եկեղեցում, որ բոլորը ովքեր կապաշխարեն, կմկրտվեն մեղքերի թողության համար և հավատարիմ կլինեն, կստանան Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ: Այդ նույն խոստումը տրվել է բոլոր նրանց, ովքեր կընդունեն Ավետարանը այս տնտեսությունում, քանզի Տերն ասում է.

«Եվ նրանց, ովքեր հավատք ունեն, դուք պիտի հաստատեք իմ եկեղեցում, ձեռնադրմամբ, և ես նրանց կշնորհեմ Սուրբ Հոգու պարգևը» [ՎևՈւ 33.15]:[8]

Դուք չեք կարող ստանալ Սուրբ Հոգին աղոթելով դրա համար, վճարելով տասանորդ, պահելով Իմաստության Խոսքը, ոչ էլ նույնիսկ մկրտվելով ջրով ՝ մեղքերի թողության համար: Դուք պետք է ավարտեք այդ մկրտությունը Հոգու մկրտությամբ: Մարգարեն ասել է մի առիթով, որ նույնն է ինչ մկրտեք մի պարկ ավազ, երբ չեք հաստատում մարդուն և չեք տալիս նրան Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ: Այն դուք չեք կարող ստանալ որևէ այլ ձևով:[9]

Ես հավատում եմ Սուրբ Հոգու պարգևի համար ձեռնադրման վարդապետությանը, որի միջոցով մենք բերվում ենք հաղորդության մեր Հոր հետ, որ երկնքում է և սովորում Նրա ուղիները, որպեսզի քայլենք Նրա շավիղներով:[10]

4

Սուրբ Հոգու պարգևի միջոցով՝ Եկեղեցու անդամները կարող են ունենալ Սուրբ Հոգին որպես մշտական ուղեկից։

Սուրբ Հոգին Սուրհանդակն է կամ Մխիթարիչը, որը Փրկիչը խոստացավ ուղարկել Իր աշակերտներին Իր խաչելությունից հետո։ Այս Մխիթարիչը իր ազդեցությամբ պետք է մշտական ուղեկից լինի յուրաքանչյուր մկրտված անձնավորության համար և սպասավորի Եկեղեցու անդամներին հայտնությամբ և առաջնորդությամբ, ճշմարտության գիտելիքով, որպեսզի նրանք կարողանան քայլել նրա լույսով։ Սուրբ Հոգին է, որ լուսավորում է իսկապես մկրտված անդամի միտքը։ Նրա միջոցով է, որ գալիս է անձնական հայտնությունը և ճշմարտության լույսը հաստատվում է մեր սրտերում։[11]

Մեր մկրտվելուց հետո, մենք հաստատվում ենք։ Ինչի՞ համար է այդ հաստատումը։ Մեզ ուղեկից դարձնելու Սուրբ Հոգուն, տալու մեզ Աստվածագլխի երրորդ անդամի կողմից առաջնորդության արտոնությունը՝ ընկերակցություն, որպեսզի մեր մտքերը կարողանան լուսավորվել, որպեսզի մենք կարողանանք կենդանանալ Սուրբ Հոգու միջոցով՝ որոնելու գիտելիք և հասկացողություն այն ամենի վերաբերյալ, ինչ կապված է մեր վեհացման հետ։[12]

Մենք կարող ենք մկրտությունից և հաստատումից հետո դառնալ Սուրբ Հոգու ընկերակիցներ, որը մեզ կուսուցանի Տիրոջ ուղիները, կկենդանացնի մեր մտքերը և կօգնի մեզ հասկանալ ճշմարտությունը։[13]

Մեզ խոստացված է, որ երբ մենք մկրտվում ենք, եթե մենք ազնիվ լինենք ու հավատարիմ, մենք կունենանք Սուրբ Հոգու առաջնորդությունը։ Ո՞րն է դրա նպատակը։ Ուսուցանել մեզ, ուղղություն ցույց տալ, վկայություն բերել մեզ Հիսուս Քրիստոսի ավետարանի փրկարար սկզբունքների մասին։ Յուրաքանչյուր երեխա, որը բավականաչափ մեծ է մկրտվելու համար, և ով որ մկրտված է, Սուրբ Հոգու առաջնորդության իրավունքն ունի։ Ես լսել եմ, թե ինչպես են մարդիկ ասում, որ ութ տարեկան փոքր երեխան չի կարող հասկանալ։ Ես ավելի լավ գիտեմ այդ մասին։ Ես վկայություն ստացա այս ճշմարտության մասին, երբ ութ տարեկան էի, որը եկավ Սուրբ Հոգու միջոցով։ Այդ ժամանակից ի վեր ես միշտ ունեցել եմ այն։[14]

Ինչպիսի՞ փառահեղ արտոնություն է անընդհատ առաջնորդվել Սուրբ Հոգու կողմից և բացահայտված ունենալ Աստծո թագավորության խորհուրդները:[15]

5

Սուրբ Հոգու ընկերակցությունը մատչելի է միայն նրանց, ովքեր պատրաստվում են ընդունել այն:

Իմ կարծիքն է, որ կան այս Եկեղեցու շատ անդամներ, ովքեր մկրտվել են իրենց մեղքերի թողության համար և ձեռնադրվել են Սուրբ Հոգու պարգևի համար, բայց ովքեր երբեք չեն ստացել այդ պարգևը՝ այսինքն դրա դրսևորումները: Ինչո՞ւ: Նրանք երբեք չեն խոնարհեցրել իրենց: Նրանք երբեք չեն կատարել քայլեր, որոնք կնախապատրաստեր նրանց Սուրբ Հոգու ընկերակցությանը: Ուստի նրանք գնում են կյանքի ընթացքում առանց այդ գիտելիքի. նրանք զուրկ են այդ հասկացողությունից: Երբ խորամանկ և իրենց խաբեություններում հնարամիտ մարդիկ գալիս են նրանց մոտ՝ քննադատելով Եկեղեցու իշխանավորներին և Եկեղեցու վարդապետությունները, այդ թույլ անդամները բավականաչափ հասկացողություն չեն ունենում, բավականաչափ տեղեկություն և բավականաչափ Տիրոջ Հոգու առաջնորդություն՝ դիմադրելու կեղծ վարդապետություններն ու ուսմունքները: Նրանք լսում են և մտածում, որ գուցե սխալ են գործել և գիտեք, առաջին բանը, որ նրանք անում են, բռնում են Եկեղեցուց դուրս գալու ուղին, որովհետև նրանք չունեն հասկացողություն:[16]

Տիրոջ կողմից պատվիրան կա, որ Եկեղեցու անդամները պետք է ջանասեր լինեն իրենց գործողություններում և ուսումնասիրեն ավետարանի հիմնարար ճշմարտությունները, ինչպես որ այն հայտնի է դարձվել: Տիրոջ Հոգին չի շարունակի տքնել անտարբերների հետ, կամակորների և ապստամբների հետ, ովքեր ձախողվում են ապրել աստվածային ճշմարտության լույսի սահմաններում: Յուրաքանչյուր մկրտված անձնավորության արտոնությունն է ունենալ վերկանգված ավետարանի մասին մնայուն վկայություն, բայց այս վկայությունը կխամրի և, ի վերջո, կանհետանա մինչև մենք անընդհատ հոգևոր բարիք չստանանք ուսումնասիրության, հնազանդության միջոցով և ջանասիրաբար չձգտենք իմանալ և հասկանալ ճշմարտությունը:[17]

«Սա պատվիրան է Տիրոջից, որ Եկեղեցու անդամները պետք է ջանասեր լինեն իրենց գործողություններում և ուսումնասիրեն ավետարանի ֆունդամենտալ ճշմարտությունները»:

Մենք Սուրբ Հոգու առաջնորդության իրավունքն ունենք, բայց մենք չենք կարող ունենալ այդ առաջնորդությունը, եթե մենք կամավոր մերժում ենք հաշվի առնել հայտնությունները, որոնք տրվել են մեզ օգնելու հասկանալ և առաջնորդվել վերականգված ավետարանի լույսի և ճշմարտության մեջ: Մեք չենք կարող հույս տածել, որ կունենանք այդ առաջնորդությունը, երբ մենք մերժում ենք այդ մեծ հայտնությունները, որոնք այնքան մեծ նշանակություն ունեն մեզ համար՝ ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես: Այժմ, եթե մենք գտնվում ենք Տիրոջ կողմից մեր հասանելիության սահմաններում, դրված լույս և գիտելիք որոնելու անհավատության կամ անհոժարակամության այս վիճակում, ապա մենք վտանգի մեջ ենք՝ խաբվելու չար ոգիների կողմից, չարքերի վարդապետությունների կողմից և մարդկանց ուսմունքների կողմից [տես ՎԿՈՒ 46.7]: Եվ երբ այս կեղծ ազդեցությունները ներկայացվում են մեր առջև, մենք չենք ունենա զանազանելու խորաթափանցություն, որի միջոցով մենք կարողանանք դրանք տարբերակել և իմանալ, որ դրանք

Տիրոջից չեն: Եվ, այսպիսով, մենք կարող է զոհ դառնանք անաստված, չար, խորամանկ մարդկային նենգություններին:[18]

Տիրոջ Հոգին չի բնակվում անմաքուր խորաններում, և երբ անձնավորությունը շրջվում է ճշմարտությունից ամբարշտության միջոցով, այդ Հոգին չի հետևում նրան և հեռանում է և դրա փոխարեն գալիս է սխալմունքի ոգին, անհանգստության ոգին, ամբարշտության ոգին, հավերժական կործանման ոգին:[19]

6

Երբ մենք մնում ենք հավատարիմ, Սուրբ Հոգին տալիս է մեզ հայտնություններ առաջնորդելու և ուղղություն ցույց տալու մեզ ողջ կյանքի ընթացքում:

Տերը խոստացել է բոլորին, ովքեր կկամենան ապաշխարել և մնալ հավատարիմ, գործադրելով համեստության և ջանասիրության ոգի, որպեսզի արժանանան Աստծո Հոգու առաջնորդությանը: Այդ Հոգին կառաջնորդի նրանց և ուղղություն կտա նրանց ողջ իրենց կյանքի ընթացքում:[20]

Եկեղեցու յուրաքանչյուր անդամի գլխի վրա կատարվել է ձեռնադրություն՝ Սուրբ Հոգու պարգևի համար: Նա իրավունք ունի հայտնություններ ստանալ, որոնք նպատակահարմար են և անհրաժեշտ անձնապես իր առաջնորդության համար, ոչ թե Եկեղեցու համար, այլ իրեն համար: Նա ունի իրավունք՝ իր հնազանդության միջոցով, իր համեստության միջոցով, ստանալ լույս և ճշմարտություն, ինչպես որ կբացահայտվի Ճշմարտության Հոգու միջոցով, և նա ով ականջ կդնի այդ Հոգուն և կձգտի Հոգու պարգևին, համեստությամբ և հավատքով, չի խաբվի:[21]

Մենք պետք է քայլենք կյանքի սրբության մեջ, լույսի մեջ և ճշմարտության մեջ համապատասխան հասկացողությամբ, որը գալիս է Սուրբ Հոգու պարգևով և զորությամբ, որը խոստացված է բոլորին, ովքեր կհավատան ապաշխարությանը և կընդունեն հավերժական կյանքի խոսքերը: Եթե մենք այս Հոգու հետ ընկերակցության մեջ ենք, ապա մենք քայլում ենք լույսի մեջ և ունենք Աստծո ընկերակցությունը:[22]

Եկեղեցու յուրաքանչյուր անդամի արտոնությունն է գիտենալ ճշմարտությունը, խոսել ճշմարտությամբ, ունենալ Սուրբ Հոգու

ոգեշնչումը, մեր արտոնությունն է անձնապես. . . ստանալ լույս և քայլել լույսի մեջ, և եթե մենք շարունակենք Աստծո հետ, այսինքն՝ պահենք Նրա բոլոր պատվիրանները, մենք կստանանք ավելի շատ լույս, մինչև, ի վերջո, մեզ կտրվի գիտելիքի կատարյալ օրը [տես ՎևՈւ 50. 24]։[23]

Մենք, ի վերջո, վերադառնում ենք մեր Հայր Աստծո ներկայությունը՝ Սուրբ Հոգու առաջնորդության միջոցով։[24]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ է ուսուցանում «Ջոզեֆ ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնի պատմվածքը Սուրբ Հոգու մասին։ Ե՞րբ է Հոգին հուշել ձեզ օգնել ինչ-որ մեկին։
- Նախագահ Սմիթը հիշատակում է «Աստծո Հոգին խոսում է մարդու հոգու հետ» (բաժին 1)։ Ինչպե՞ս է մեր հոգիների հաղորդակցությունը տարբերվում մեր ականջների և մեր աչքերի հետ հաղորդակցությունից։ Ինչպե՞ս է այն ավելի զորավոր։
- Որո՞նք են Հոգուց դրսևորում ունենալու, ինչպես Կոռնելիուսի մոտ եղավ, և Սուրբ Հոգու պարգևը ստանալու միջև որոշ տարբերությունները (տես բաժին 2)։
- Նախագահ Սմիթը ուսուցանել է, որ մկրտությունը անավարտ է առանց Սուրբ Հոգու պարգևի (տես բաժին 3)։ Ի՞նչ ուղիներով ձեր կյանքն անավարտ կլիներ առանց Սուրբ Հոգու պարգևի։
- Խորհեք Նախագահ Սմիթի ուսմունքների մասին բաժին 4-ում, թե ինչ է նշանակում ունենալ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը։ Ի՞նչ ուղիներով եք օրհնվել այս ընկերակցության միջոցով։
- Ի՞նչ կարող ենք անել Սուրբ Հոգու ընկերակցությունը ընդունելուն նախապատրաստվելու համար։ (Մի քանի օրինակների համար տես բաժին 5։)
- Երբ վերանայեք 6–րդ բաժինը, ուշադրություն դարձրեք այն առաջնորդությանը, որ կարող ենք ստանալ Սուրբ Հոգու միջոցով։ Ինչպե՞ս կարող են ծնողներն ուսուցանել իրենց երեխաներին ճանաչել և ընդունել այս առաջնորդությունը։

Սոնչվող սուրբ գրություններ

Հովհաննես ԺԶ.13, Գործք ԺԹ.1–6, Ա Կորնթացիս ԺԲ.3, 1 Նեփի 10.17–19, 2 Նեփի 31.15–20, 3 Նեփի 19.9, ՎևՈՒ 46.13, Հավատո Հանգանակ 1.4

Օգնություն ուսուցչին

«Մի անհանգստացեք, եթե ուսանողները մի քանի վայրկյան լուռ են մնում ձեր հարցը ուղղելուց հետո: Մի պատասխանեք սեփական հարցին, ժամանակ տվեք ուսանողներին մտածել պատասխանների մասին: Ինչևէ, երկարատև լռությունը կարող է նշանակել, որ նրանք չեն հասկացել հարցը, և որ դուք պետք է վերաձևակերպեք այն» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 69):

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1940, 96.
2. Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), xiv–xv.
3. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 38; italics removed from original.
4. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 38.
5. "The Sin against the Holy Ghost," *Instructor,* Oct. 1935, 431; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 47–48.
6. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 4.
7. "Address by Elder Joseph Fielding Smith before Seminary Teachers," *Deseret News,* Apr. 27, 1935, Church section, 7; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 42.
8. "Avoid Needless Speculations," *Improvement Era,* Dec. 1933, 866; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 38–39.
9. "Address by Elder Joseph Fielding Smith before Seminary Teachers," 7; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 41; *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 95.
10. In Conference Report, Apr. 1915, 118.
11. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 2: 149–50.
12. "Seek Ye Earnestly the Best Gifts," *Ensign,* June 1972, 2.
13. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 42.
14. In Conference Report, Oct. 1959, 19.
15. *Answers to Gospel Questions,* 4: 90.
16. "Seek Ye Earnestly the Best Gifts," 3.
17. In Conference Report, Oct. 1963, 22.
18. In Conference Report, Oct. 1952, 59–60; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 43.
19. In Conference Report, Apr. 1962, 45.
20. In Conference Report, Apr. 1931, 68.
21. In Conference Report, Apr. 1940, 96.
22. In Conference Report, Apr. 1916, 74; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 290.
23. "What a Prophet Means to Latter–day Saints," *Relief Society Magazine,* Jan. 1941, 7.
24. In Conference Report, Apr. 1955, 51.



«Ամուսնությունը, ինչպես հասկացվում է Վերջին Օրերին Սրբերի կողմից, ուխտ է, որը կարգվում է հավերժական լինելու համար»։

Հավերժական ամուսնություն

«Քահանայության և Ավետարանի օրհնությունների լրիվությունը գալիս է Սելեստիալ ամուսնությունից: Սա Ավետարանի բարձրագույն արարողությունն է և տաճարի բարձրագույն արարողությունը»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Տասնութամյա Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթին ասվեց, որ Լյուի Էմիլի Շուրթլիֆ անունով մի երիտասարդ կին էր գալու ապրելու Սմիթների ընտանիքում և հաճախելու էր քոլեջ: Բայց նա միևնույն է զարմացած էր և գոհ, երբ մի օր աշխատանքից տուն գալով տեսավ, որ Լյուին նվագում էր մի օրհներգ դաշնամուրի վրա: Այդ օրվանից սկսած՝ 1894թ. ուշ ամռանից, Ջոզեֆը և Լյուին զարգացրեցին իրենց ընկերությունը, որն աստիճանաբար խորացավ, մինչև որ նրանք սիրահարվեցին: Նրանք կնքվեցին Սոլթ Լեյքի Տաճարում 1898թ. ապրիլի 26-ին:[1]

Լյուին և Ջոզեֆը վայելում էին իրենց սիրո փոխհարաբերությունը: Երբ նա կանչվեց ծառայելու երկամյա միսիա Անգլիայում իրենց ամուսնությունից ոչ շատ անց, նա սկսեց աշխատել իր հոր մոտ նրան ֆինանսապես օգնելու համար: Նա աջակցում էր նրան նաև էմոցիոնալ առումով և հոգեպես նրան ուղարկելով քաջալերող նամակներ: Նրա վերադարձից հետո նրանք հիմնեցին երջանիկ տուն և ունեցան երկու դուստր իրենց ընտանիքում: Բայց 10 տարվա ամուսնությունից հետո, Լյուին ծանր հիվանդացավ իր երրորդ հղիության ընթացքում և մահացավ 31 տարեկանում:

Ջոզեֆը սփոփանք էր գտնում այն համոզմունքում, որ Լյուին հեռացել էր «ավելի լավ աշխարհ», և նա իր օրագրում մի աղոթք գրեց, որ «արժանի լիներ հանդիպելու նրան հավերժական փառքում, նրա հետ կրկին միասին լինելու համար:[2] Բայց չնայած մխիթարությանը և հույսին, որ նա գտնում էր ավետարանում, նա սոսկալի կարոտում էր Լյուիին: Նա նաև

անհանգստանում էր տանն առանց մոր մնացած իր դուստրերի համար: Լյուիի մահից ոչ շատ անց Ջոզեֆը հանդիպեց Էթել Ջորջինա Ռեյնոլդսի հետ: Չնայած նրա սերը Լյուիի նկատմամբ չէր նվազել, նա սկսեց սիրել Էթելին և նրա դուստրերը՝ ևս: Իր ծնողների և նաև Լյուիի ծնողների ու Էթելի ծնողների հավանությամբ՝ Ջոզեֆը խնդրեց Էթելին իր հետ ամուսնանալ: Նրանք կնքվեցին 1908թ. նոյեմբերի 2-ին: Նրանք միասին ունեցան ուրախալի և իրադարձություններով հարուստ կյանք, քանի որ ունեցան ևս ինը երեխա: Նրանց տանը բնորոշ էր կարգ ու կանոն, տքնաջան աշխատանք, հարգանք, մաքրասիրություն, մեղմ կարգապահություն, սեր և առողջ զվարճանք:[3]

29 տարվա ամուսնությունից հետո Էթելը մահացավ վտանգավոր հիվանդությունից, որը ուժասպառ արեց նրան 4 տարի շարունակ: Եվ մեկ անգամ ևս Ջոզեֆը միայնակ էր, բայց սփոփվում էր հավերժական ամուսնության համոզմունքով:[4] Եվ մեկ անգամ ևս նա հանդիպեց մեկին, որի հետ նա կարողացավ կիսել իր կյանքը: Նա և Ջեսսի Էվանսը կնքվեցին 1938թ. ապրիլի 12-ին: «Իրենց 33 տարվա համատեղ կյանքում նա ամենուրեք՝ մոտիկ թե հեռու, ուղեկցում էր նրան»: Նա իր հերթին օգնում էր նրան մթերքներ գնելիս, չորացնում էր ընթրիքի ափսեները և աշնանը պահածոյացնում միրգը: Նրան չէր մտահոգում գոգնոց կապած առաքյալ լինելը»:[5] Ջեսսին հաճախ էր ասում իր ամուսնու մասին. «Նա ամենաբարի մարդն է, որ ես երբևէ հանդիպել եմ: Ես երբեք չեմ լսել, որ նա որևէ անգութ խոսք ասի»: Նա, սովորաբար, պատասխանում էր ժպիտով. «Ես որևէ անգութ խոսք չգիտեմ»:[6]

Ջոն Ջ. Ստյուարտը՝ Նախագահ Սմիթի կենսագիրը, գրել է Ջեսսի հանդեպ նրա հեզահամբույր և կարեկից վերաբերմունքի մասին. «Ամբիոնից նա հորդորում էր ամուսիններին լինել սիրող և նվիրված իրենց կանանց: Բայց քարոզը, որը հուզում է ինձ, այն է, երբ 1971թ. հուլիսի մի շոգ օր նա Սոլթ Լեյք Սիթիի զառիվեր հյուսիսիային փողոցներով ինը թաղամաս բարձրացավ՝ դեպի Վերջին Օրերի Սրբերի Հիվանդանոց, և անցկացրեց իր 95–րդ տարեդարձը իր հիվանդ կնոջ՝ Ջեսսի մահճակալի կողքին: Երբ կնոջ վիճակը վատթարացավ, նա մնաց նրա հետ գիշեր, թե ցերեկ, մի քանի շաբաթ ուշադիր խնամք տանելով, որքան կարող էր՝ նրան սփոփանք և խրախուսանք տալով մինչև վերջ»:[7]

Ջեսսին մահացավ 1971թ. օգոստոսի 3-ին: Երկու ամիս անց Նախագահ Սմիթը գերագույն համաժողովում բացման խոսք ասաց: Նրա վկայությունը ցույց տվեց, որ նրա տխրությունը հանդարտվել էր Տիրոջը վստահելուց և հավերժական կյանքի հույսից:

«Ես ուզում եմ ասել հին օրերի Հոբի նման, որի գիտելիքը գալիս էր նույն աղբյուրից, որից իմն է գալիս. «Իսկ ես գիտեմ, որ փրկիչս կենդանի է, եւ նա վերջը պիտի կանգնէ հողի վերայ, և որ, իմ մարմնիցը տեսնելու եմ Աստուծուն, Որին որ ես ինքս եմ տեսնելու, եւ իմ աչքերն են մտիկ տալու նորան . . .» (Յոբ ԺԸ.25–27):

Եվ միացնելով իմ վկայությունը Հոբի վկայությանը, թույլ տվեք ես նաև միանամ նրա հետ շնորհակալությամբ, այն աղաղակի համար, որ արտաբերվել էր նրա հուզու տվայտանքից ու ցավից. «Տէրը տուաւ եւ Տէրն առաւ. Տիրոջ անունը օրհնեալ լինի» (Յոբ Ա.21):

Աղոթում եմ, որ մենք բոլորս առաջնորդվենք Սուրբ Հոգու զորությամբ, որ մենք ուղիղ քայլենք Տիրոջ առաջին, և որ մենք կարողանանք ժառանգել հավերժական կյանք ապարանքներում և թագավորություններում, որոնք պատրաստված են հնազանդների համար:[8]

Նախագահ Սմիթի ելույթից հետո, Նախագահ Հարոլդ Բ. Լին, որը վարում էր ժողովը, ասաց. «Համոզված եմ, որ բոլոր Եկեղեցու անդամները, ամենուրեք, գիտակցելով հանգամանքները, որի ներքո նա հաղորդեց այս հզոր ուղերձը, մեծապես կբարձրանան այն զորությամբ և ուժով, որ նա դրսևորեց մեր առջև այստեղ այս առավոտ: Մեր սրտի խորքից շնորհակալություն, Նախագահ Սմիթ»:[9]

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Մելեստիալ ամուսնությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի բարձրագույն արարողությունն է:

Հիսուս Քրիստոսի Ավետարանի հետ կապված չկա ոչ մի արարողություն, որն ավելի մեծ կարևորություն ունենա, ավելի հանդիսավոր և սրբազան լինի բնույթով և ավելի անհրաժեշտ [մեր] հավերժական ուրախության համար. . . քան ամուսնությունը:[10]

Քահանայության և ավետարանի օրհնությունների լրիվությունը գալիս է Սելեստիալ ամուսնությունից: Սա տաճարի բարձրագույն արարողությունն է:[11]

Ես ուզում եմ աղերսել իմ հիանալի եղբայրներին և քույրերին, Եկեղեցու լավ անդամներին, գնալ տաճար՝ ամուսնանալու ժամանակի և հավերժության համար:[12]

2

Ի տարբերություն աշխարհի սովորությունների, ավետարանի ծրագրում ամուսնությունը տևում է հավերժ:

Ամուսնությունը մեծ թվով մարդկանց համար համարվում է ուղղակի պայմանագիր կամ համաձայնագիր տղամարդու և կնոջ միջև, որ նրանք կապրեն միասին ամուսնական կապի մեջ: Դա, փաստորեն, հավերժական սկզբունք է, որի վրա է հիմնված հենց մարդկության գոյությունը: Տերը տվել է այս օրենքը մարդուն հենց աշխարհի սկզբից, որպես Ավետարանի օրենքի մաս, և առաջին ամուսնությունը պետք է տևեր հավերժ: Համաձայն Տիրոջ օրենքի՝ յուրաքանչյուր ամուսնություն պետք է հավերժ տևի: Եթե ողջ մարդկությունն ապրի խիստ հնազանդությամբ ավետարանին և այն սիրուն, որը ծնվում է Տիրոջ Հոգու միջոցով, բոլոր ամուսնությունները հավերժական կլինեն: . . .

. . . Ամուսնությունը, ինչպես հասկացվում է Վերջին Օրերին Սրբերի կողմից, ուխտ է, որը կարգվում է հավերժական լինելու համար: Այն հիմքն է հավերժական վեհացման համար, քանի որ առանց դրա չի կարող լինել հավերժական առաջընթաց:[13]

Բոլորիս համար ակնհայտ է, ովքեր կարդում են լրագրերը, ովքեր լսում են նորությունները ռադիոյով և ովքեր դիտում են հեռուստացույց, որ խիստ շատերը չեն պահպանում ամուսնությունը և ընտանեկան միավորը այն ձևով, ինչպես Տերն է նախատեսել:[14]

Ամուսնությունը սրբազան ուխտ է, սակայն շատ դեպքերում այն դառնում է գռեհիկ կատակների առարկա, ժեստ, անցողիկ երևույթ գռեհիկ և անմաքուր մարդկանց կողմից և նաև շատերի կողմից, ովքեր կարծում են իրենք բարեկիրթ են, բայց չեն հասկանում այս մեծ սկզբունքի սրբազան լինելը:[15]

Տերը տվել է մեզ Իր հավիտենական ավետարանը լինելու լույս և դրոշ մեզ համար և այս ավետարանը ներառում է

«Ընտանեկան կապերը և ընտանիքի միասնությունը պետք է շարունակվեն, երբ պատշաճորեն կազմակերպված են, արդարակեցության մեջ՝ եկող կյանքում»:

ամուսնության Նրա սուրբ կարգը, որը հավերժական է իր բնույթով: Մենք կարիք չունենք և չպետք է հետևենք աշխարհի ամուսնական սովորություններին: Մենք ունենք ավելի շատ լույս, քան աշխարհը, և Տերը սպասում է մեզանից ավելին, քան նրանցից:

Մենք պետք է իմանանք, թե ինչ է ամուսնության ճշմարիտ կարգը: Մենք գիտենք ընտանեկան միավորի տեղը փրկության ծրագրում: Մենք գիտենք, որ պետք է ամուսնանանք տաճարում և պետք է մեզ մաքուր և անարատ պահենք, որպեսզի ձեռք բերենք Սուրբ Հոգու հավանության խոստումի կնիքը մեր ամուսնության միության վրա:

Մենք մեր Երկնային Հոր հոգեղեն զավակներն ենք, ով կարգել է փրկության ծրագիրը, որի միջոցով մենք կարող ենք գալ երկիր և առաջադիմել և զարգանալ և նմանվել Նրան, այսինքն՝ Նա տվել է ավետարանական ծրագիր, որը մեզ հնարավորություն կտա ունենալ մեր իսկ հավերժական ընտանեկան միավորները և վայելել հավերժական կյանք:[16]

Ամուսնությունը երբեք չի նախատեսվել Տիրոջ կողմից վերջանալ մահկանացու մարմնի մահով, այլ որ ավելացնի պատիվ,

իշխանություն, զորություն ուխտի մեջ մտնող զույգերին և ընտանիքի շարունակվող ու հավերժական միություն Աստծո արքայությունում: Այդպիսի օրհնությունները պահվում են պահուստում նրանց համար, ովքեր հոժար են մնալ այս ուխտում, ինչպես որ Տերն է բացահայտել այն: Դա պարզապես տղամարդու և կնոջ միջև ընկերակցություն չէ, քանի որ ինչպես Տերն է ասել՝ ամուսնանալով նրանք դառնում են մեկ մարմին և մտնում են ընկերակցության մեջ Աստծո հետ:[17]

3

Հավատարմությունը ամուսնության ուխտին բերում է երջանկություն և տանում դեպի հավերժական փառքի օրհնությունները:

Ես շնորհակալ եմ Տիրոջը ամուսնության ուխտի հավերժական լինելու գիտելիքի համար, որն իրավունք է տալիս ամուսնուն պահանջելու իր կնոջը, իսկ կնոջը իրավունք՝ պահանջելու իր ամուսնուն գալիք աշխարհում, տալով նրանց Տիրոջ Տունը գնալու և ժամանակի և ողջ հավերժության համար միավորվելու հնարավորություն մեկի կողմից, ով կրում է այս կնքող զորությունը, քանի որ ուրիշ ոչ մի ձևով այս մեծ օրհնությունը չի կարող ձեռք բերվել: Ես նաև շնորհակալ եմ այն գիտելիքի համար, որ ընտանեկան կապերը և ընտանիքի միասնությունը պիտի շարունակվի, երբոր պատշաճորեն կազմակերպված է, արդարակեցության մեջ՝ գալիք կյանքում:[18]

Ես ուզում եմ աղերսել նրանց, ովքեր եղել են տաճարում և ադպես են ամուսնացել, որ հավատարիմ և ճշմարիտ լինեն իրենց ուխտերին և իրենց պարտականություններին, քանի որ Տիրոջ Տանը նրանք հանդիսավոր ուխտեր են կապել:[19]

Ոչ մի բան մարդկությանը չի պատրաստի փառքի համար Աստծո արքայությունում այնպես հեշտորեն, ինչպես ամուսնության ուխտին հավատարմությունը: . . .

Պատշաճ ընդունվելու դեպքում այս ուխտը դառնում է մեծ երջանկության միջոց: Մեծագույն պատիվը այս կյանքում և գալիք կյանքում, պատիվ, իշխանություն և զորություն կատարյալ սիրով այն օրհնություններն են, որոնք բխում են դրանից: Հավերժական փառքի այս օրհնությունները պահվում են պահուստում

նրանց համար, ովքեր հոժար են մնալ սրանում և Ավետարանի բոլոր մյուս ուխտերում։[20]

Ի՞նչ է նշանակում ամուսնությունը Եկեղեցու անդամների համար։ Դա նշանակում է, որ այդ արարողությունով նրանք ստանում են մեծագույն, բարձրագույն օրհնությունը՝ հավերժական կյանքերի օրհնությունը։ Արդ, այդպես է Տերը անվանում դա՝ «հավերժական կյանքեր», որը նշանակում է, որ ոչ միայն ամուսինն ու կինը կմտնեն հավերժական կյանք, այլ նրանց երեխաները, ովքեր ծնվել են ուխտի ներքո, նմանապես իրավունք կստանան հավերժական կյանքերի՝ իրենց հավատարմության միջոցով։ Եվ ապագայում, որ ամուսինն ու կինը մեռելների հարությունից հետո չեն ունենա վերջ։ Դրանով Տերն ի նկատի ունի, որ նրանք կունենան սերնդի հավերժական շարունակություն և ընտանեկան կազմակերպությունը չի ունենա վախճան [Տես ՎԿՈ 132.19–24]։[21]

Որպեսզի մեր Երկնային Հոր նպատակներն իրականանան, պետք է միություն լինի, ամուսիններն ու կանայք ստանալով խոստացված օրհնությունները նրանց, ովքեր հավատարիմ են և ճշմարիտ, որը կվեհացնի նրանց դեպի Աստվածություն։ Տղամարդը չի կարող ստանալ Աստծո արքայության օրհնությունների լրիվությունը մենակ, ոչ էլ կինը կարող է, բայց երկուսով միասին կարող են ստանալ բոլոր օրհնություններն և արտոնությունները, որոնք վերաբերում են Աստծո արքայության լրիվությանը։[22]

4

Յուրաքանչյուր հոգի, ում սիրտը ուղիղ է, կունենա հնարավորություն հավերժական ամուսնության օրհնություններ ստանալու՝ լինի այս կյանքում, թե հաջորդ կյանքում։

Փրկության մեծ ծրագրում ոչ մի բան անտեսված չէ։ Հիսուս Քրիստոսի ավետարանը ամենագեղեցիկ բանն է աշխարհում։ Այն ներառում է ամեն մի հոգու, որի սիրտն ուղիղ է, և որը ջանասիրաբար որոնում է Իրեն և ցանկանում հնազանդվել Նրա օրենքներին և ուխտերին։ Ուստի, եթե մարդը, որևէ պատճառով մերժել է ուխտերից որևէ մեկին հետևելու արտոնությունը, Տերը կդատի նրան սրտի միտումից ելնելով։ Կան Եկեղեցու հազարավոր անդամներ, որոնց [տաճարները հասանելի չեն], ովքեր ամուսնացել

են և ընտանիքներ մեծացրել Եկեղեցում, ովքեր զուրկ են եղել ժամանակի և ողջ հավերժության համար «կնքվելու» արտոնությունից: Նրանցից շատերը հեռացել են կյանքից և նրանց օրհնությունները նրանց փոխարինաբար են տրվում: Ավետարանը փոխարինաբար կատարվող աշխատանք է: Հիսուսը փոխարինաբար կատարեց մեզ բոլորիս համար աշխատանքը, որովհետև մենք չէինք կարող կատարել դա մեզ համար: Նմանապես, Նա շնորհել է Եկեղեցու ապրող անդամներին, որ նրանք գործեն որպես փոխանորդներ մահացածների համար, ովքեր մահացել են՝ առանց իրենց համար գործելու հնարավորություն ունենալու:

Բացի այդ, կան հազարավոր երիտասարդ տղամարդիկ ինչպես նաև երիտասարդ կանայք, ովքեր անցել են հոգիների աշխարհ առանց այդ օրհնությունների հնարավորության: Նրանցից շատերը վար են դրել իրենց կյանքը ճակատամարտում, շատերը մահացել են իրենց վաղ երիտասարդ հասակում և շատերն էլ մահացել են մանուկ հասակում: Տերը չի մոռանա նրանցից ոչ մեկին: Վեհացմանը պատկանող բոլոր օրհնությունները կտրվեն նրանց, քանի որ սա է արդարության և ողորմածության ուղին: Այսպիսով, նրանք, ովքեր ապրում են Սիոնի ցցերում և մեր տաճարներին մոտիկ, եթե նրանք զրկված են օրհնություններից այս կյանքում, այս օրհնությունները կտրվեն նրանց հազարամյակի օրոք:[23]

Ոչ ոք չի զրկվի վեհացումից, ով հավատարիմ կմնա. . . Անարժան ամուսինը չի կարող արգելել հավատարիմ կնոջ վեհացմանը և ընդհակառակը:[24]

5

Երեխաները և երիտասարդները պատրաստվում են հավերժական ամուսնության համար, երբ նրանք սովորում են ամուսնության ուխտի մասին, զարգացնում մնայուն հավատք և պահում իրենց մաքուր և անարատ:

Թող բոլոր Վերջին Օրերի Սուրբ հայրերը և մայրերը հոգ տանեն, որ նրանք ուսուցանեն իրենց երեխաներին ամուսնական ուխտի սրբազանության մասին: Թող նրանք խորապես տպավորեն իրենց զավակների մեջ, որ ոչ մի այլ ուղով, բացի Աստծո ուխտերը հարգելուց, որոնց շարքում է հավերժական ամուսնության ուխտը, որը մեծագույն և ամենահիմնական ուխտերից մեկն է, նրանք կարող են ձեռք բերել *հավերժական կյանքի* օրհնությունները:[25]

Այս կյանքը կարճ է, իսկ հավերժությունը՝ երկար: Երբ մտածում ենք, որ ամուսնության ուխտը կտևի հավերժ, լավ է, որ մենք դրան մեծ ուշադրություն դարձնենք: Ճիշտ խորհուրդ է մեր երիտասարդներին՝ ուշադիր մտածել նպատակ ունենալով՝ ընտրել Ավետարանում մնայուն հավատքով զուգընկեր: Այդպիսի անձնավորությունը ավելի հավանական է, որ հավատարիմ մնա ամեն երդման և ուխտի: Երբ երիտասարդ տղամարդը և երիտասարդ կինը խորապես հիմնավորված են մեր Տիրոջ աստվածային առաքելությունում, հավատում են Ավետարանին, ինչպես որ այն հայտնի է դարձվել Ջոզեֆ Սմիթի՝ Մարգարեի միջոցով, ամեն հավանականություն կա ի օգուտ երջանիկ միության են, որը կտևի հավերժ:[26]

Ես աղերսում եմ ձեզ՝ Սիոնի երիտասարդներիդ, ամենուրեք ձեզ մաքուր պահել և անարատ, որպեսզի դուք իրավունք ունենաք գնալու Տիրոջ տունը և ձեր ընտրած զուգընկերոջ հետ միասին վայելեք բոլոր այս մեծ օրհնությունները, որոնք Տերն առաջարկում է ձեզ:[27]

Մեկ բան. . . որի վրա կկամենայի երիտասարդների ուշադրությունը հրավիրել, այն է, որ երբ նրանք ամուսնանում են, չեն բավարարվում՝ սկսելով փոքրից և համեստորեն, այլ ցանկանում են ստանալ գրեթե ճիշտ նույնքան, որքան նրանց ծնողներն ունեն՝ իրենց երեխաների ամուսնանալու պահին. . . Նրանք ուզում են սկսել հնարավոր ամեն մի հարմարությամբ իրենց հարմարավետ դարձնելու համար: Կարծում եմ սա սխալ է: Իմ կարծիքով նրանք պետք է սկսեն համեստորեն, դնելով իրենց հավատքը Տիրոջ վրա, կառուցելով մի քիչ այստեղ մի քիչ այնտեղ, ինչքան կարող են, կուտակելով աստիճանաբար, մինչև որ կարողանան հասնել բարգավաճ մի դիրքի, ինչպիսին որ իրենք ուզում են:[28]

6

Երբ ամուսինն ու կինը հավատարմորեն հետևում են ավետարանի բոլոր արարողություններին և սկզբունքներին նրանց ուրախությունը ամուսնությունում դառնում է ավելի քաղցր:

Ամուսնությունը կարգվել է Աստծո կողմից: Դա արդար սկզբունք է, երբ այն ընդունվում է և կիրառվում սրբության մեջ: Եթե տղամարդիկ և կանայք այսօր կամենան մտնել այս ուխտի մեջ համեստության ոգով, սիրով և հավատքով, ինչպես նրանց

Եթե տղամարդը և կինը հավատարմորեն միասին հետևում են ավետարանին, ամուսնության մեջ ուրախությունն ու երջանկությունը «դառնում է ավելի քաղցր»:

պատվիրվում է անել, արդար քայլելով հավերժական կյանքի ուղիներում, ամուսնալուծություն չի լինի, ոչ քանդված տներ, այլ երևակայությունից վեր երջանկություն, ուրախություն:[29]

Ես ուզում եմ օգնել բոլոր իմ հիանալի եղբայրներին և քույրերին, ովքեր ամուսնացել են տաճարում, որ նրանք երբեք չմոռանան այն մեծ օրհնությունները, որոնք շնորհվել են իրենց: Որ Տերը նրանց, իրենց հավատարմության շնորհիվ իրավունք է տվել՝ դառնալու Իր որդիներն ու Իր դուստրերը, ժառանգակիցներ Հիսուս Քրիստոսի հետ, տիրանալով, ինչպես նշվեց այստեղ, բոլորը, ինչ Հայրն ունի [տես Հռովմայեցիս Ը.13–19 և Վարդապետություն և Ուխտեր 76.54–60]:

Եվ, այնուամենայնիվ, դեռ կան Եկեղեցու անդամներ, ովքեր դժվարանում են հասկանալ սա և ժամանակի և ողջ հավերժության համար ամուսնանալուց հետո. . . ընդունելով Հոր արքայության խոստումի լրիվությունը, նրանք թույլ են տալիս, որ իրենց կյանք մտնեն բաներ, որոնք առաջացնում են խառնակություններ և բաժանում նրանց: Եվ նրանք մոռանում են, որ իրենք ուխտ են կապել ժամանակի և ողջ հավերժության

համար միմյանց հետ, և ոչ միայն դա, այլ որ ուխտ են կապել իրենց Հոր հետ, որ երկնքում է:[30]

Եթե տղամարդը և կինը լրջորեն և հավատամորեն հետևում են ավետարանի բոլոր արարողություններին և սկզբունքներին, չի կարող որևէ պատճառ ծագել ամուսնալուծության համար: Ամուսնական հարաբերությանը վերաբերող ուրախությունն ու երջանկությունը կդառնա ավելի քաղցր և ամուսինն ու կինն ավելի մոտիկ կլինեն միմյանց, երբ օրերն անցնեն: Ոչ միայն ամուսինը կսիրի կնոջը և կինն ամուսնուն, այլ իրենցից ծնված երեխաները կապրեն սիրո և ներդաշնակության մթնոլորտում: Միմյանց հանդեպ սերը չի խամրի և դեռ ավելին, բոլորի սերը մեր Երկնային Հոր և Նրա Որդու Հիսուս Քրիստոսի հանդեպ ավելի խորապես կարմատավորվի նրանց հոգիներում:[31]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Այս գլուխը սկսում է ուրախության և տխրության օրինակներով, որոնք կարող են ամուսնության և ընտանիքի մասը կազմել: Ինչպե՞ս կարող է հավերժական ընտանիքների վարդապետությունը հաստատել մեզ մեր կյանքի երջանիկ և տխուր ժամանակներում:
- Ի՞նչն է սելեստիալ ամուսնության մեջ, որ դարձնում է այն «բարձրագույն արարողությունը տաճարում» (տես բաժին 1):
- Նախագահ Սմիթը հակադրել է ամուսնության Տիրոջ տեսակետը ամուսնության աշխարհիկ տեսակետին (տես բաժին 2): Ի՞նչն է էական ձեզ համար այս հակադրության մեջ: Ինչպե՞ս կարող ենք պահպանել և ամրացնել ամուսնությունը և ընտանիքը աշխարհում այսօր:
- Բաժին 3-ում, Նախագահ Սմիթը թվում է առնվազն հինգ օրինություններ, որոնք գալիս են նրանց, ովքեր «հավատարիմ են և ճշմարիտ» ամուսնության ուխտին: Ի՞նչ է նշանակում ձեզ համար հավատարիմ և ճշմարիտ լինել ամուսնության ուխտին:
- Որոնք են այն բաները, որոնք կարող են ծնողներն անել «ուսուցանելու իրենց զավակներին ամուսնության ուխտի

սրբազանության մասին»: (Մի քանի գաղափարների համար տես բաժին 5:)

- Բաժին 6-ում Նախագահ Սմիթը բացատրում է, թե ինչպես ամուսնական հարաբերությունը կարող է «ավելի քաղցր դառնալ»: Այս սկզբունքի ի՞նչ օրինակներ եք տեսել: Եթե դուք ամուսնացած եք, մտածեք, թե ինչ կարող եք անել ավելի մեծ ուրախություն և սեր բերելու ձեր ամուսնությունն:

Առնչվող սուրբ գրություններ

Ա Կորնթացիս ԺԱ.11, ՎԿՈՒ 42.22, 131.1–4, Մովսես 3.18–24

Օգնություն ուսուցչին

Օգնություն ուսուցչին. «Դասից առաջ գրատախտակին գրառված հարցերը կօգնեն սովորողներին սկսել մտածել այդ թեմաների շուրջ, նույնիսկ մինչև դասը սկսելը» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* 93):

Հղումներ

1. Տես Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 65–75; Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 51–55.
2. In *The Life of Joseph Fielding Smith,* 162.
3. Տես *The Life of Joseph Fielding Smith,* 214–41.
4. Տես *The Life of Joseph Fielding Smith,* 249.
5. *The Life of Joseph Fielding Smith,* 12–13.
6. In *The Life of Joseph Fielding Smith,* 268.
7. John J. Stewart, in *The Life of Joseph Fielding Smith,* 11; although this book was coauthored by John J. Stewart and Joseph Fielding Smith Jr., this comment is a personal observation by John J. Stewart.
8. "I Know That My Redeemer Liveth," *Ensign,* Dec. 1971, 27.
9. In Conference Report, Oct. 1971, 7.
10. "The Law of Chastity," *Improvement Era,* Sept. 1931, 643; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2: 58.
11. In "Lay Cornerstone at Provo Temple," *Deseret News,* May 22, 1971, B2.
12. In Conference Report, Oct. 1951, 120.
13. "The Perfect Marriage Covenant," *Improvement Era,* Oct. 1931, 704.
14. "President Joseph Fielding Smith Speaks to 14,000 Youth at Long Beach, California," *New Era,* July 1971, 7–8.
15. *The Restoration of All Things* (1945), 259.
16. "President Joseph Fielding Smith Speaks to 14,000 Youth at Long Beach, California," 8.
17. *The Restoration of All Things,* 259
18. In Conference Report, Apr. 1915, 119.
19. In Conference Report, Oct. 1951, 120.
20. "The Law of Chastity," 643; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 58–59.
21. In Conference Report, Oct. 1951, 120–21.
22. "Obedience to the Truth," *Relief Society Magazine,* Jan. 1960, 6.
23. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 2: 37–38.
24. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 2: 65.

25. In Conference Report, Oct. 1965, 30.
26. "Marriage Ordained of God," *Young Woman's Journal,* June 1920, 307–8; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 77–78.
27. "President Joseph Fielding Smith Speaks to 14,000 Youth at Long Beach, California," 10.
28. In Conference Report, Apr. 1958, 30.
29. *The Restoration of All Things,* 259.
30. In Conference Report, Apr. 1949, 135.
31. In Conference Report, Apr. 1965, 11.

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը և նրա ծոռնուհին՝ Շաննա Մակքոնկիին։

Երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ

«Առաջին պարտականությունը, որը վերաբերում է Եկեղեցու երեխաներին ուսումնասիրելուն, պատկանում է տանը»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը նկարագրել է իր հորը՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին, որպես «մեկը, որի հանդեպ ես ավելի մեծ վստահություն եմ ունեցել, քան որևէ այլ մարդու հանդեպ, ում ճանաչել եմ այս աշխարհում»:[1] Նա հիշում է, թե ինչպես էր իր հայրը հաճախ հավաքում ընտանիքը «ուսուցանելով իր երեխաներին ավետարանի հիմունքները: Նրանք մեկ մարդու պես ուրախանում էին նրա ներկայությամբ և երախտապարտ էին խորհրդի ու հրահանգի խոսքերի համար, որը նա տալիս էր. . . Նրանք երբեք չմոռացան այն, ինչ իրենց ուսուցանվել էր և տպավորությունները մնացել են նրանց հետ և, հավանաբար, կմնան հավերժ»:[2] Նա նաև ասել է. «Հայրս ամենափափկասիրտ մարդն էր, որ երբևէ իմացել եմ. . . Իմ ամենասիրելի հիշողություններից են այն ժամերը, որ ես անցկացրել եմ նրա կողքին՝ ավետարանի սկզբունքները քննարկելիս և ստանալով ուսուցում ինչպես միայն նա կարող էր տալ: Այս ձևով իմ սեփական գիտելիքի հիմքը դրվեց ճշմարտությամբ, որպեսզի ես ևս կարողանայի ասել, ես գիտեմ, որ Քավիչս ապրում է, և որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, էր և միշտ կլինի կենդանի Աստծո մարգարեն»:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը սիրով էր խոսում նաև իր մոր՝ Ջուլինա Լ. Սմիթի և նրա ուսուցումների մասին: Նա ասել է.«Ես մորս ծնկին նստած եմ սովորեցվել սիրել Մարգարե Ջոզեֆ Սմիթին և սիրել իմ Քավչին. . . Ես երախատապարտ եմ այն ուսուցանման համար, որ ես ստացել եմ և փորձել եմ հետևել խորհրդին,

որը տրվում էր հորս կողմից: Բայց ես չեմ կարող նրան վերագրել ողջ երախտիքը: Կարծում եմ դրա բավականին մեծ մասը, ավելի շուտ խիստ մեծ մասը պետք է արտահայտեմ մայրիկիս, որի ծնկին սովորաբար նստում էի, երբ փոքրիկ երեխա էի և լսում նրա պատմությունները ռահվիրաների մասին. . . Նա, սովորաբար, ուսուցանում էր ինձ և երբ բավականին մեծ էի, իմ ձեռքում դնում այն բաները, որոնք կարող էի կարդալ և հասկանալ: Նա սովորեցնում էր ինձ աղոթել [և] լինել ճշմարիտ և հավատարիմ իմ ուխտերին և պարտականություններին, հոգ տանել իմ պարտականություններին որպես սարկավագ և որպես ուսուցիչ. . . իսկ հետագայում որպես քահանա. . . Ես ունեի մայր, ով հետևում էր, որ ես կարդայի, և ես սիրում էի կարդալ:[4]

Երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հայր դարձավ, նա հետևեց իր ծնողների օրինակին: Նրա դուստրը՝ Ամելիան ասել է.

«Հայրիկը կատարյալ ուսանող էր և ուսուցիչ, մեկը, ով ոչ միայն ուսուցանում էր մեզ գիտելիքի իր մեծ շտեմարանից, այլ խրախուսում էր մեզ սովորել ինքնուրույն: . . .

Իր երեխաների հետ նա հետևում էր խորհրդին, որը գտնվում է ՎԿՈՒ 93.40 հատվածում. «Բայց ես պատվիրել եմ ձեզ՝ մեծացնել ձեր երեխաներին լույսի և ճշմարտության մեջ»:

Նա ուսուցանում էր մեզ նախաճաշի սեղանի շուրջը, երբ պատմում էր մեզ պատմություններ սուրբ գրություններից, և ունակություն ուներ նորովի դարձնել ամեն մեկը և հետաքրքիր, չնայած մենք լսել էինք այն շատ անգամներ նախկինում: Անհամբերությունը, որով սպասում էի, թե փարավոնի զինվորներն արդյոք կգտնեին ոսկյա գավաթը Բենյամինի ցորենի պարկում, իրական է նույնիսկ այսօր: Մենք իմացանք Ջոզեֆ Սմիթի կողմից ոսկյա թիթեղները գտնելու մասին և Հոր և Որդու այցելության մասին: Եթե հայրիկը ժամանակ էր ունենում մեզ հետ դպրոց քայլելու, պատմությունները շարունակվում էին: Մենք քայլելով անցնում էինք [Սոլթ Լեյքի] Տաճարի կողքով դպրոցի ճանապարհին, և նա պատմում էր մեզ Մորոնի հրեշտակի մասին: Մենք գիտեինք, որ տաճարը շատ հատուկ վայր էր, որ պետք էր բարի լինել այնտեղ գնալու համար և երբ այնտեղ ամուսնանում են, դա հավիտյան է: Նա ուսուցանում էր մեզ այն բաների միջոցով, որոնց մասին ընտանեկան

աղոթքների ժամանակ աղոթում էր մեզ հետ, երբ ծնկի էինք իջնում մեր աթոռների կողքին նախքան նախաճաշը և կրկին ճաշի ժամանակ: . . .

Այսօր նրա ուսմունքները ոչ միայն բարձրացնում և հաստատում է իր սերունդներին, այլ անհամար թվով Եկեղեցու հավատարիմ անդամների նույնպես: Ինչպիսի մեծ արտոնություն է և օրհնություն լինել նրա դուստրը»:[5]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Հակառակորդի ազդեցությանը դիմակայելու համար, ծնողները պետք է դաստիարակեն իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:

Ընտանիքի միասնության կարևորությունը՝ սերը և հարգանքը միմյանց հանդեպ ընտանիքում, չի կարող գերագնահատվել: Ընտանեկան հարաբերություններում հոգևոր միասնությունը ապահով հիմք է, որի վրա Եկեղեցին և հասարակությունը ինքնին կծաղկեն: Այս փաստը լավ հայտնի է և գնահատվում է հակառակորդի կողմից և ինչպես երբեք նախկինում, նա օգտագործում է իր վերահսկողության ներքո գտնվող ամեն խելացի միջոց, ազդեցություն և ուժ և զորություն թուլացնելու և կործանելու այս հավերժական հաստատությունը: Միայն Հիսուս Քրիստոսի ավետարանը, որը կիրառվում է ընտանեկան հարաբերություններում, կդադարեցնի այս դիվական կործանարարությունը:[6]

Կան շատ մեծ և իրական վտանգներ, որոնց հետ պետք է հաշվի նստել, և նրանք, որոնք մեզ ամենաշատն են մտահոգում, քան բոլոր մյուսները միասին վերցրած, առնչվում են մեր երեխաներին: Միակ իրական պահպանությունը կամ համապատասխան պաշտպանությունը կարող է ապահովվել տան և նրա ազդեցությունների միջոցով:[7]

Մեր երեխաները պետք է ուսուցանվեն զանազանել բարու և չարի միջև, այլապես շատ դեպքերում նրանք չեն կարող հասկանալ, թե ինչու նրանց չի թույլատրվում զբաղվել գործերով, որոնք սովորական են իրենց հարևանների համար: Մինչև նրանք չուսուցանվեն Եկեղեցու վարդապետությունները, նրանք երևի չհասկանան, թե ինչ վնաս կա կիրակնօրյա համերգի մեջ, կիրակնօրյա

թատրոնի, նկարների ցուցահանդեսի, զնդակ խաղալու կամ ուրևէ նման բանի մեջ, երբ նրանց խաղընկերներն առանց քաշվելու և խրախուսանքով զբաղվում են Տիրոջ կողմից արգելված այս բաներով Նրա սուրբ օրը: Ծնողները պատասխանատու են իրենց երեխաներին ճիշտ ուսուցանելու համար, [և] Տերը կդատապարտի ծնողներին, եթե նրանց երեխաները մեծանան մեր Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքների ազդեցությունից դուրս:[8]

Տերը պատվիրել է մեզ՝ ինչպես յուրաքանչյուրին, այնպես էլ բոլորին՝ մեր երեխաներին դաստիարակել լույսի և ճշմարտության մեջ: Որտեղ կա այս ոգին, աններդաշնակությունը, անհնազանդությունը և սրբազան պարտականությունների անտեսումը հաջողություն չի ունենա, չի կարող ունենալ:[9]

2

Ծնողները հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների ուսուցանման համար:

Հայրը երբեք չի հրաժարվել այս աշխարհում ծնված երեխաների իր իրավունքից: Նրանք միևնույն է Իր երեխաներն են: Նա դրել է նրանց մահկանացու ծնողների խնամքի ներքո հորդորելով, որ նրանք դաստիարակվեն լույսի և ճշմարտության մեջ:[10]

Առաջին պարտականությունը՝ կապված Եկեղեցու երեխաներին ուսուցանելու հետ, պատկանում է տանը: Ծնողների պարտականությունն է դաստիարակել իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ, և Տերը հայտարարել է, որ եթե նրանք ձախողվեն այդ անել, նրանք կկանգնեն դատաստանի աթոռի առջև պատասխան տալու:[11]

Տերն ասել է մի հայտնության մեջ, որը տրվել էր Եկեղեցուն 1931թ.

«Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում կամ նրա կազմակերպված ցցերում, որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի մասին, մեղքը լինի ծնողների գլխին:

Քանզի դա օրենք կլինի Սիոնի բնակիչների և նրա կազմակերպված ցցերի համար» [ՎԿՈ 68.25–28]:

. . . Տերը պահանջում է սա մեր ձեռքից։[12]

Ծնողները պատասխանատու կլինեն իրենց երեխաների գործողությունների համար, եթե նրանք ձախողվել են ուսուցանել իրենց երեխաներին օրինակով և սկզբունքով։

Եթե ծնողներն ամեն ինչ արել են իրենց ուժի սահմաններում՝ ճշտորեն սովորեցնելու իրենց երեխաներին օրինակով և սկզբունքով, իսկ հետո երեխաները մոլորվում են, ծնողները պատասխանատվության չեն ենթարկվի և մեղքը կլինի երեխաների վրա։[13]

3

Եկեղեցին օգնում է ծնողներին իրենց երեխաներին ուսուցանելու ջանքերում։

Այն բաներն անելու գլխավոր պատասխանատվությունը, որոնք տանում են դեպի փրկություն, դրված է յուրաքանչյուր անձնավորության վրա։ Մենք բոլորս դրվել ենք երկրի վրա ենթարկվելու մահկանացու կյանքի ստուգող փորձառություններին։ Մենք այստեղ ենք՝ տեսնելու, թե արդյոք կպահենք պատվիրանները և կհաղթենք աշխարհը, և մենք պետք է անենք այն բոլորը, ինչ կարող ենք՝ մեր փրկության համար։

Մեր փրկության համար հաջորդ պարտականությունը դրված է մեր ընտանիքների վրա։ Ծնողները դրված են որպես լույս և ուղեցույց իրենց երեխաների համար և պատվիրվել են դաստիարակել նրանց՝ լույսի և ճշմարտության մեջ, ուսուցանելով նրանց ավետարանը և հանդիսանալով ճիշտ օրինակ։ Երեխաներից ակնկալվում է, որ հնազանդվեն իրենց ծնողներին և պատվեն ու հարգեն նրանց։

Եկեղեցին ու նրա ծրագրերը ծառայողական կազմակերպություն են՝ ընտանիքներին ու անհատներին օգնելու համար։[14]

Ես խնդրում եմ ձեզ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ամուսիններ և կանայք, հայրեր և մայրեր, օգտվել այն բոլոր հնարավորություններից, որ Եկեղեցին ընձեռում է ձեր երեխաներին ուսուցում ստանալ տարբեր կազմակերպություններում, որոնք Տերն է ապահովել նրանց համար հայտնությամբ՝ Երեխաների Միությունում, Կիրակնօրյա Դպրոցում, Փոխադարձ Բարելավման [Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց]

«Եկեղեցին և նրա ծրագրերը ծառայողական կազմակերպություն են՝ ընտանիքներին ու անհատներին օգնելու համար»:

կազմակերպություններում, և եպիսկոպոսության ղեկավարությամբ գործող Ցածրագույն Քահանայության քվորումներում: . . .

. . . Ողջ եկեղեցում, որտեղ հնարավոր է, մենք ունենք սեմինարիաներ և ինստիտուտներ: Եղբայրներ և քույրեր, ուղարկեք ձեր երեխաներին սեմինարիայի դասերի: Նրանք, ովքեր գնում են քոլեջ, բավականաչափ մեծ կլինեն հաճախելու Եկեղեցու ինստիտուտի դասերին, եթե պատշաճ ուսուցում ստացած լինեն իրենց պատանեկության տարիներին:[15]

4

Ծնողները պետք է անեն ամեն ինչ, որ իրենք կարող են՝ օգնելու իրենց երեխաներին հասկանալ և ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով:

Անձնական, անհատական վկայությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ուժն է և կլինի միշտ: Վկայությունը լավագույնս ձևավորվում է ընտանեկան մթնոլորտում. . .

Վկայություններ ձեռք բերելն ու պահելը պետք է լինի ընտանեկան ծրագիր: Մի անտեսեք որևէ բան, որը կօգնի զորացնել ձեր ընտանիքի որևէ անդամի վկայությունը:[16]

Մենք պետք է ապաստանենք [երեխաներին] աշխարհի մեղքերից և չարիքներից, որքան որ կարող ենք, որպեսզի նրանք հեռու չտարվեն ճշմարտության և արդարակեցության ուղիներից:[17]

Օգնեք ձեր երեխաներին ամեն ձևով, ինչպես որ կարող եք, աճել Հիսուս Քրիստոսի ավետարանի գիտելիքով: Սովորեցրեք նրանց աղոթել: Սովորեցրեք նրանց հետևել Իմաստության Խոսքին՝ հավատարմորեն և խոնարհաբար քայլելով Տիրոջ առջև, այնպես որ, երբ նրանք մեծանան դառնալով տղամարդ նրանք կկարողանան շնորհակալ լինել ձեզ այն բանի համար, ինչ դուք արել եք նրանց համար և ետ նայեն իրենց կյանքին երախտապարտ սրտով և սիրով իրենց ծնողների հանդեպ, այն հոգատարության համար, որով իրենց ծնողները խնամք են տարել իրենց և ուսուցանել Հիսուս Քրիստոսի ավետարանը:[18]

Արդարակյաց օրինակ եղեք

Մենք խնդրում ենք ծնողներին արդարակեցության օրինակ ծառայել իրենց սեփական կյանքում և հավաքել իրենց երեխաներին իրենց շուրջը և ուսուցանել նրանց ավետարանը, իրենց ընտանեկան երեկոների ժամանակ և այլ առիթներով:[19]

Ծնողները պետք է լինեն կամ առնվազն իրենց լավագույն ջանքերը գործադրեն՝ լինելու այն, ինչ նրանք կամենում են, որ իրենց երեխաները լինեն: Անհնարին է ձեզ համար օրինակ լինել մի բանի, ինչը ձեր էությունը չէ:[20]

Դուք պետք է ուսուցանեք օրինակով ինչպես նաև ցուցումով: Դուք պետք է ծնկի իջնեք ձեր երեխաների հետ աղոթելիս: Դուք պետք է ուսուցանեք նրանց ողջ խոնարհությամբ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի առաքելության մասին: Դուք պետք է ցույց տաք նրանց ուղին, և հայրը, ով ցույց է տալիս իր որդուն ուղին, չի ասի նրան. «Որդիս, գնա Կիրակնօրյա Դպրոց կամ միացյալ միջոցառում կամ քահանայության ժողով», այլ կասի նրան. «Արի գնանք միասին»: Նա կուսուցանի օրինակով:[21]

Սկսեք ուսուցանել երեխաներին, երբ նրանք երիտասարդ են

Չի կարող որևէ մեկի համար չափից վաղ լինել ծառայելու Տիրոջը. . . Երիտասարդները հետևում են իրենց ծնողների ուսուցմանը: Երեխան, որին ուսուցանվում է արդարակեցություն ծննդից սկսած, շատ հավանական է, որ միշտ հետևի արդարակեցության: Լավ սովորույթները հեշտ են ձևավորվում և հեշտորեն են հետևում:[22]

Տանը պետք է լինի աղոթք և հավատք ու սեր և հնազանդություն Աստծուն: Ծնողների պարտքն է ուսուցանել իրենց երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանի այս փրկարար սկզբունքները, որպեսզի նրանք իմանան, թե ինչու իրենք պետք է մկրտվեն, և որպեսզի նրանք իրենց սրտերում տպավորված ունենան Աստծո պատվիրանները պահել շարունակելու ցանկություն, իրենց մկրտվելուց հետո, որպեսզի նրանք ետ վերադառնան Նրա ներկայություն: Իմ լավ եղբայրներ և քույրեր, դուք արդյոք կամենո՞ւմ եք կնքվել ձեզանից առաջ գնացած ձեր հայրերի և ձեր մայրերի հետ, դուք կամենո՞ւմ եք այս ընտանեկան միավորը կատարյալ լինի, երբ դուք, եթե ձեզ թույլատրվի, մտնեք Աստծո սելեստիալ արքայություն: Եթե այդպես է, ապա դուք պետք է սկսեք ուսուցանել օրորոցից սկսած:[23]

Երեխաներին աղոթել սովորեցրեք

Ի՞նչ է տունը առանց աղոթքի ոգու: Դա Վերջին Օրերի Սրբերի տուն չէ: Մենք պետք է աղոթենք, մենք չպետք է թույլ տանք, որ առավոտն անցնի առանց շնորհակալություն հայտնելու Տիրոջը մեր ծնկների վրա ընտանեկան շրջանում, շնորհակալություն հայտնելով Նրան Իր օրհնությունների համար և խնդրելով Նրա առաջնորդությունը: Մենք չպետք է թույլ տանք գիշերն ավարտվի, չպետք է գնանք քնելու մինչև չհավաքենք այդ ընտանիքի անդամներին կրկին և շնորհակալություն հայտնի Տիրոջը Նրա պաշտպանության համար և խնդրի Նրա առաջնորդությունը մեր կյանքի յուրաքանչյուր օրը:[24]

Հուսով եմ, որ դուք ուսուցանում եք ձեր երեխաներին ձեր տներում աղոթել: Ես հուսով եմ, որ դուք ունենում եք ընտանեկան աղոթքներ առավոտյան և երեկոյան, որ ձեր երեխաները ուսուցանվում են օրինակով և ցուցումով, հետևելով պատվիրաններին, որոնք այնքան թանկ են և սրբազան և այնքան շատ

նշանակություն ունեն մեր փրկության համար Աստծո արքայությունում:[25]

Ծանոթացրեք երեխաներին սուրբ գրությունների հետ

Աշխարհի որևէ մասում չպետք է լինի որևէ տուն, որտեղ չգտնվի Աստվածաշունչ: Չպետք է լինի տուն, որտեղ Մորմոնի Գիրք չգտնվի: Ես խոսում եմ Վերջին Օրերի Սրբերի տների մասին: Չպետք է լինեն տներ, որտեղ չգտնվի Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը: Մի պահեք դրանք գրադարակներում կամ սպասքապահարաններում, այլ բացված, որտեղից դրանք հեշտորեն հասանելի կլինեն, որպեսզի ընտանիքի անդամների համար դրանք մատչելի լինեն և նստեն ու կարդան և ուսումնասիրեն ավետարանի սկզբունքներն իրենց համար:[26]

Անցկացրեք ընտանեկան երեկոներ

Երեխաները, ովքեր մեծանում են տներում, որտեղ նրանք մասնակցում են ընտանեկան երեկոների, որտեղ առատանում է սեր և միաբանություն, կառուցում են ամուր հիմք առողջ քաղաքացիության և Եկեղեցու ակտիվ մասնակցության համար: Չկա ավելի մեծ ժառանգություն, որ ծնողները կարողանան թողնել իրենց երեխաներին, քան սիրով միավորված երջանիկ տան օրհնությունները:

Լավ պլանավորված ընտանեկան երեկոները կարող են երկարատև ուրախության և ազդեցության աղբյուր լինել: Այս երեկոները ժամանակ են խմբային գործունեության, կազմակերպվելու, սիրո արտահայտման, վկայություն բերելու, ավետարանի սկզբունքները սովորելու, ընտանեկան զվարճության և ուժերի վերականգման և ընտանիքի բոլոր բաներում միասնության և համախմբվածության համար:

Հայրերը և մայրերը, ովքեր հավատարմորեն կազմակերպում են ընտանեկան երեկոներ և ովքեր կառուցում են ընտանեկան միասնություն ամեն հնարավոր ուղիներով, պատվով կատարում են բոլոր պարտականություններից մեծագույնը՝ ծնող լինելու պարտականությունը:[27]

Հայրերն Աստծո արքայությունում չեն կարող մատուցել ավելի մեծ ղեկավար դեր, քան իրենց ընտանիքները ղեկավարելը՝ կազմակերպելով ընտանեկան երեկոներ: Երբ այսպիսի

փորձառությունները ընտանեկան կյանքի մասն են կազմում, կառուցվում է միասնություն և ընտանեկան հարգանք, որն ազդում է յուրաքանչյուր անձնավորության վրա՝ դեպի արդարակեցության մեծացում և երջանկություն։[28]

Ծնողները, ովքեր անտեսում են այս ծրագրի՝ [ընտանեկան երեկոյի] մեծ օգնությունը, իրենց երեխաների ապագան վտանգի տակ են դնում։[29]

Ուսուցանեք առաքինություն, մաքրաբարոյություն և բարոյականություն

Դուք պետք է ձեր երեխաներին ուսուցանեք առաքինություն, մաքրաբարոյություն և նրանք պետք է ուսուցանվեն իրենց վաղ մանկությունից։ Եվ նրանց պետք է տեղյակ պահել թակարդներին և վտանգներին, որոնք այնքան գերակշռում են ողջ աշխարհում։[30]

Մենք մեծ մտահոգություն ունենք բոլոր երիտասարդների հոգևոր և բարոյական բարօրության համար ամենուրեք։ Բարոյականությունը, պարկեշտությունը, առաքինությունը, մեղքից զերծ լինելը, սրանք են և պետք է լինեն մեր կենսակերպի հիմքը, եթե մենք հասկանում ենք դրա լրիվ նպատակը։

Մենք աղաչում ենք հայրերին և մայրերին սովորեցնել անձնական մաքրություն՝ ցուցումով և օրինակով և խորհրդակցել իրենց երեխաների հետ բոլոր այդպիսի բաներում։ . . .

Մենք վստահում ենք Եկեղեցու երիտասարդ և աճող սերնդին ու խնդրում ենք նրանց չհետևել նորաձևություններին և աշխարհիկ սովորույթներին, չճաշակել ապստամբության ոգուց, և չթողնել ճշմարտության և առաքինության ուղիները։ Մենք հավատում ենք նրանց սկզբունքային բարությանը և ակնկալում նրանցից, որ դառնան արդարակեցության սյուներ և Եկեղեցու աշխատանքն առաջ տանեն աճող հավատքով և արդյունավետությամբ։[31]

Նախապատրաստեք երեխաներին լինել ճշմարտության վկաներ և ծառայել միսիայում

Մեր երիտասարդները մեր Հոր զավակների ամենաօրհնվածների և հովանավորվածների շարքում են։ Նրանք երկնքի ազնվականությունն են, ընտիր և ընտրյալ սերունդ, ովքեր

ունեն աստվածային ճակատագիր։ Նրանց ոգիները պահվել էին՝ առաջ գալու այս օրը, երբ ավետարանը երկրի վրա է, և երբ Տերը կարիք ունի քաջարի ծառաների՝ իրականացնելու Իր վերջին օրերի մեծ աշխատանքը։[32]

Մենք պետք է նախապատրաստենք [երեխաներին] լինել այս վերջին օրերի մեծ աշխատանքի ճշմարտության և աստվածայնության ապրող վկաներ և հատկապես մեր որդիների դեպքում, հետևեք, որ նրանք արժանի լինեն և որակավորված՝ գնալու միսիայի՝ քարոզելու ավետարանը մեր Հոր մյուս զավակներին։[33]

Օգնեք երեխաներին նախապատրաստվել ունենալու իրենց իսկ հավերժական ընտանիքները

Դուք ուսուցանո՞ւմ եք [ձեր երեխաներին] այնպես, որ երբ նրանք ամուսնանան, նրանք կամենան գնալ Տիրոջ տունը։ Արդյոք դուք ուսուցանում եք նրանց այնպես, որ նրանք ցանկանան ստանալ այն մեծ օժտումը, որը Տերը պահել է նրանց համար։ Արդյոք դուք տպավորե՞լ եք նրանց մեջ այն փաստը, որ նրանք կարող են կնքվել որպես ամուսիններ և կանայք, և որ նրանց կշնորհվեն ամեն պարգև և ամեն օրհնություն, որը վերաբերում է սելեստիալ արքայությանը։[34]

Մենք պետք է. . . այնպես ուղեկցենք և առաջնորդենք [երեխաներին], որ նրանք կամենան ընտրել զուգընկերներ և ամուսնանան Տիրոջ տանը և այդպես դառնան ժառանգներ բոլոր մեծ օրհնությունների, որոնց մասին մենք խոսում ենք։[35]

Եկեք փորձենք խոնարհաբար մեր ընտանիքներն ամբողջական պահել, պահենք նրանց Տիրոջ Հոգու ազդեցության ներքո, ուսուցանված ավետարանի սկզբունքներով, որ նրանք աճեն արդարակեցության և ճշմարտության մեջ. . . [Երեխաները] տրվում են մեզ, որ մենք կարողանանք նրանց վարժեցնել կյանքի ուղիներում, հավերժական կյանքի, որպեսզի նրանք կարողանան ետ վերադառնալ կրկին Աստծո՝ իրենց Հոր ներկայություն։[36]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնից նշեք ծնողների օրինակները, որոնք ցույց են տալիս սեր իրենց երեխաների հանդեպ: Մտածեք ուղիներ, որոնցով կարող եք հետևել այս օրինակներին, անկախ ձեր ընտանեկան պարտականություններից: Ինչպե՞ս կարող են ծնողները կազմակերպվել, որպեսզի կարողանան ավելի շատ ժամանակ անցկացնել իրենց երեխաների հետ:
- Նախագահ Սմիթը նշեց հոգևոր վտանգները, որոնք գոյություն ունեին իր կյանքի ընթացքում (տես բաժին 1): Որո՞նք են որոշ հավելյալ վտանգները, որոնք գոյություն ունեն այժմ: Ինչպե՞ս կարող են ծնողներն ու պապիկ տատիկներն օգնել երեխաներին դիմակայել այդ ազդեցություններին:
- Մտածեք այն վստահության մասին, որ Երկնային Հայրը դնում է ծնողների վրա, երբ Նա թույլ է տալիս նրանց հոգ տանել Իր զավակներին (տես բաժին 2): Ի՞նչ առաջնորդություն և օգնություն է Նա առաջարկում:
- Ի՞նչ ուղիներով է Եկեղեցին «ծառայողական կազմակերպություն՝ ընտանիքներին ու անհատներին օգնելու համար» (տես բաժին 3): Ինչպե՞ս են Եկեղեցու կազմակերպություններն օգնել ձեզ և ձեր ընտանիքին: Ի՞նչ կարող ենք անել մենք, որպեսզի երեխաներին օգնենք լիարժեքորեն մասնակցել:
- Բաժին 4-ը նշում է հետևյալ ուղիները՝ երեխաներին և երիտասարդությանը օգնելու ապրել ավետարանով: Երբ վերանայեք խորհուրդը, մտածեք հետևյալ հարցերի մասին: Որո՞նք են այն բաները, որոնք դուք և ձեր ընտանիքը լավ եք անում: Ի՞նչ ուղիներով կարող եք բարելավել: Ի՞նչ կարող եք անել օգնելու Եկեղեցու երիտասարդությանը իրենց վկայությունները զորացնելու համար:

Առնչվող սուրբ գրություններ

Բ Օրինաց Զ.1–7, Սաղմոս ՃԼԲ.12, Մոսիա 1.4,4.14–15, ՎևՈՒ 68.25–28, 93.36–40, տես նաև «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին»

Օգնություն ուսուցչին

«Զգույշ եղեք չավարտել լավ քննարկումը շատ շուտ՝ փորձելով ներկայացնել ողջ նյութը, որ դուք պատրաստել եք: Չնայած նյութը սպառելը կարևոր է, ավելի կարևոր է օգնել սովորողներին զգալ Հոգու ազդեցությունը, լուծել նրանց հարցերը, ընդլայնել ավետարանի նրանց հասկացողությունը և խորացնել պատվիրանները պահելու նրանց պարտավորվածությունը»: Սակայն, նաև «կարևոր է քննարկումը ճիշտ ժամանակին ավարտելը: Վեհացնող քննարկման ոգին մեծ մասամբ կորչում է, երբ այն շատ է երկարում. . . Ժամանակը կառավարեք: Իմացեք, թե երբ պետք է ավարտեք դասը: Բավականաչափ ժամանակ տրամադրեք ամփոփելուն, ինչ-որ ասվել էր և բերելու ձեր վկայությունը» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 64, 65):

Հղումներ

1. In Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 40.
2. In *The Life of Joseph Fielding Smith,* 40.
3. In Bryant S. Hinckley, "Joseph Fielding Smith," *Improvement Era,* June 1932, 459.
4. In *The Life of Joseph Fielding Smith,* 56.
5. Amelia Smith McConkie, "Joseph Fielding Smith," *Church News,* Oct. 30, 1993, 8, 10.
6. Message from the First Presidency, in *Family Home Evenings 1970–71* (family home evening lesson manual, 1970), v.
7. "Our Children—'The Loveliest Flowers From God's Own Garden,'" *Relief Society Magazine,* Jan. 1969, 5.
8. In Conference Report, Oct. 1916, 71–72.
9. In Conference Report, Apr. 1898, 13.
10. "The Sunday School's Responsibility," *Instructor,* May 1949, 206; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 316.
11. *Take Heed to Yourselves!* (1966), 221.
12. In Conference Report, Apr. 1958, 29–30.
13. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 316; italics removed.
14. "Use the Programs of the Church," *Improvement Era,* Oct. 1970, 3.
15. In Conference Report, Apr. 1958, 29–30.
16. "The Old and the New Magazines," *Improvement Era,* Nov. 1970, 11.
17. "Mothers in Israel," *Relief Society Magazine,* Dec. 1970, 886.
18. In Conference Report, Apr. 1958, 30.
19. In Conference Report, Apr. 1970, 6.
20. "Our Children—'The Loveliest Flowers From God's Own Garden,'" 6.
21. In Conference Report, Oct. 1948, 153.
22. *Take Heed to Yourselves!* 414.
23. In Conference Report, Oct. 1948,153.
24. "How to Teach the Gospel at Home," *Relief Society Magazine,* Dec. 1931, 685.
25. In Conference Report, Apr. 1958, 29.
26. "Keeping the Commandments of Our Eternal Father," *Relief Society Magazine,* Dec. 1966, 884.
27. Message from the First Presidency, in *Family Home Evenings 1970–71,* v.
28. Message from the First Presidency, in *Family Home Evenings* (family home evening lesson manual, 1971), 4.
29. In "Message from the First Presidency," *Ensign,* Jan. 1971, 1.

30. "Teach Virtue and Modesty," *Relief Society Magazine,* Jan. 1963, 5.
31. In Conference Report, Apr. 1970, 5–6.
32. In Conference Report, Apr. 1970, 6.
33. "Mothers in Israel," 886.
34. In Conference Report, Oct. 1948, 154.
35. "Mothers in Israel," 886.
36. In Conference Report, Apr. 1958, 30.

Կնքող զորությունը և տաճարային օրհնությունները

«Եղիան եկավ վերականգնելու երկրի վրա. . . քահանայության զորության լրիվությունը: Այս քահանայությունը կրում է մարդու փրկությանը վերաբերող երկրի վրա և երկնքում կապող և կնքող բոլոր արարողությունների ու սկզբունքների բանալիները»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1902թ. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ճանապարհորդեց դեպի Մասաչուսետս նահանգ, որտեղ նա կարողացավ տեղեկություն գտնել իր Սմիթ նախնիների մասին: Մինչ նա այնտեղ էր, նա հանդիպեց մի ծագումնաբանի հետ, որի անունը Սիդնի Փերլեյ էր: Պր. Փերլեյն ասաց նրան. «Իմ նպատակն է, եթե կարողանամ դա անել, որոնել յուրաքանչյուր մարդու արձանագրություն, ով Էսսեքսի գավառ է եկել մինչև 1700 թվականը:

Նախագահ Սմիթը հետագայում հիշում էր. «Ես ասացի նրան, Պր. Փերլեյ դուք հանձն եք առել մեծ աշխատանք, այդպե՞ս չէ: Նա պատասխանեց. «Այո, և ես վախենում եմ, որ երբեք չեմ կարողանա ավարտի հասցնել այն»: Այնուհետև ասաց նրան. «Ինչո՞ւ եք անում այս աշխատանքը»: Նա մի պահ մտածեց և բավականին շփոթված տեսք ուներ, ապա պատասխանեց. «Ես չգիտեմ թե ինչու, բայց սկսեցի և չեմ կարողանում կանգ առնել»: Ես ասացի. «Կարող եմ ասել, թե ինչու եք անում այդ և ինչու չեք կարողանում կանգ առնել, բայց եթե ասեմ, դուք չեք հավատա ինձ և կծիծաղեք ինձ վրա»:

«Օհ,– ասաց նա,– ես չգիտեմ: Եթե դուք ինձ ասեք, համոզված եմ, որ ինձ կհետաքրքրի»: Հետո ես նրան պատմեցի Եղիայի մարգարեության մասին և Մարգարե Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր

Ընտանիքի բոլոր անդամները կարող են մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին:

Քառուդերիին ապրիլի 5-ին Կիրթլենդի տաճարում այդ խոստման իրականացման մասին և թե ինչպես հետազոտության այդ ոգին շատ մարդկանց է համակել և նրանց սրտերը դարձրել դեպի մահացածներին որոնելու աշխատանքը՝ ի կատարումն այն մեծ խոստման, որը պետք է գա նախքան երկրորդ գալուստը, որպեսզի երկիրը չզարկվի անեծքով: Այժմ զավակներն իրենց սրտերը դարձնում են դեպի իրենց հայրերը և մենք կատարում ենք արարողական աշխատանք մահացածների համար, որպեսզի նրանք կարողանան փրկագնում ստանալ և արտոնություն ունենալ գալ Աստծո արքայություն, չնայած մահացած են:

«Երբ ես ավարտեցի, նա ծիծաղեց և ասաց. «Շատ գեղեցիկ պատմություն է, բայց ես չեմ հավատում դրան»: Սակայն նա ընդունեց, որ կար ինչ-որ բան, որ նրան ստիպում էր այս հետազոտությունը իրականացնել, և նա չէր կարողանում կանգ առնել: Ես հանդիպել եմ շատ ուրիշների, ովքեր նույնպես սկսել են և չեն կարողացել կանգ առնել, տղամարդիկ և կանայք, ովքեր Եկեղեցու անդամներ չէին: Այսպիսով, մենք տեսնում ենք այժմ հազարավոր տղամարդկանց և կանանց, ովքեր որոնում են մահացածների արձանագրություններ»: Նրանք չգիտեն պատճառը, բայց դա նրա համար է, որ մենք արձանագրություններ ունենանք և գնանք մեր տաճարները և աշխատանք կատարենք մեր մահացածների համար»:[1]

Նախագահ Սմիթն ուսուցանել է, որ ընտանեկան պատմությունը ավելին է քան միայն անուններ և վայրեր գտնելը և պատմություններ հավաքելը: Այն տաճարային արարողություններ ապահովելն է, որոնք միացնում են ընտանիքներին հավերժության համար, կնքելով բոլոր սերունդների հավատարիմ մարդկանց որպես Աստծո ընտանիքի անդամներ: «Ծնողները պետք է կնքվեն միմյանց հետ, իսկ երեխաները ծնողների, որպեսզի ստանան սելեստիալ արքայության օրհնությունները», ասել է նա: «Ուստի մեր փրկությունը և առաջընթացը կախված է մեր արժանավոր մահացած նախնիների փրկությունից, որոնց հետ մենք պետք է միանանք ընտանեկան կապերով: Սա կարող է իրականացվել միայն մեր Տաճարներում»:[2] Նախքան նվիրագործման աղոթքն ասելը Յուտայի Օգդենի Տաճարում, նա ասաց. «Թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ երբ Տիրոջ տունն ենք նվիրագործում, այն ինչ մենք իրականում անում ենք՝

նվիրագործում ենք մեզ Տիրոջ ծառայությանը, ուխտով, որ մենք կօգտագործենք տունը այն ձևով, որ Նա է նախատեսել այն օգտագործելու համար։[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Եղիան վերականգնեց կնքելու, կամ կապելու զորությունը երկրի վրա և երկնքում։

Հին Կտակարանի վերջին մարգարեներից Մաղաքիան ավարտում է իր կանխագուշակումներն այս խոսքերով.

«Ահա ես կուղարկեմ ձեզ համար Եղիա մարգարէն, Տիրոջ մեծ եւ ահեղ օրը գալոցս առաջ.

Եւ նա պիտի դարձնէ հայրերի սիրտը դէպի որդիքը եւ որդկանց սիրտը՝ դէպի իրանց հայրերը. Որ մի գուցէ ես գամ եւ երկիրը զարկեմ անէծքով» (Մաղ. Դ.5–6)։

Թվում է շատ տեղին, որ հին մարգարեներից վերջինը պետք է փակեր իր խոսքերը ապագա սերունդներին խոստումով և այդ խոստումում կանխագուշակեր մի ժամանակի գալստի մասին, երբ կլինի մի կապ՝ հին տնտեսությունները միացնելով ապագա ժամանակների տնտեսությունների հետ։ . . .

Մենք ունենք Մաղաքիայի խոսքերի շատ ավելի հստակ մեկնաբանություն, որը տրված է Նեփիացի մարգարե Մորոնիի կողմից, ով հայտնվեց Ջոզեֆ Սմիթին 1823թ. սեպտեմբերի 21-ին։ Ահա թե ինչպես հրեշտակը մեջբերեց դրանք.

«Ահա, ես ձեզ կհայտնեմ Քահանայությունը, Եղիա մարգարեի ձեռքով, նախքան Տիրոջ մեծ ու ահեղ օրվա գալը։

Եվ զավակների սրտերում նա կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը։

Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայանա նրա գալստյան ժամանակ» (ՎևՈւ 2.1–3)։

Մորոնին հաղորդեց Ջոզեֆ Սմիթին, որ այդ կանխագուշակումը մոտ էր իրականանալուն։ Իրականացումը տեղի ունեցավ մոտ տասներկու տարի անց՝ 1836թ. ապրիլի 3-ին։ Այդ օրը Եղիան հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին Կիրթլենդի

Տաճարում և նրանց շնորհեց. . . զորություն՝ կապելու կամ կնքելու երկրի վրա և երկնքում: Այս քահանայության բանալիները կրում էր Եղիան, ում Տերը զորությունն էր տվել տարրերի վրա, ինչպես նաև մարդկանց վրա, իշխանությամբ կնքելու ժամանակի և հավերժության համար արդարների վրա բոլոր արարողությունները, որոնք վերաբերում էին փրկության լրիվությանը:[4]

Որոշ Եկեղեցու անդամներ շփոթվում են՝ մտածելով, որ Եղիան եկավ մահացածների համար մկրտության կամ փրկության բանալիներով: Եղիայի բանալիներն ավելի մեծ էին, քան այդ: Դրանք կնքման բանալիներն էին, և այդ կնքման բանալիները վերաբերում են ողջերին և ընդգրկում մահացածներին, ովքեր կամենում են ապաշխարել:[5]

Եղիան եկավ վերականգնելու երկրի համար, մահկանացու մարգարեներին պատշաճ կերպով Տիրոջ կողմից լիազորված, Քահանայության զորության լրիվությունը: Այս քահանայությունը կրում է մարդու փրկությանը վերաբերող երկրի վրա և երկնքում բոլոր կապող և կնքող արարողությունների ու սկզբունքների բանալիները, որպեսզի նրանք կարողանան այդպիսով վավերական լինել Աստծո սելեստիալ արքայությունում: . . .

Այդ իշխանության զորությամբ է, որ արարողություններ են կատարվում տաճարներում՝ ինչպես ողջերի, այնպես էլ մահացածների համար: Դա այն ուժն է, որը միավորում է ամուսիններին և կանանց՝ հավերժության համար, երբ նրանք հավերժական ծրագրի համաձայն մտնում են ամուսնության մեջ: Սա այն իշխանությունն է, որով ծնողները ձեռք են բերում ծնողական իրավունք իրենց երեխաների վերաբերյալ ողջ հավերժության մեջ և ոչ թե միայն ժամանակի համար, որն ընտանիքը հավերժական է դարձնում Աստծո Արքայությունում:[6]

2

Կնքող իշխանության վերականգնումը փրկում է երկիրը լիակատար ամայացումից Հիսուս Քրիստոսի գալստյան ժամանակ:

Եթե Եղիան չգար, մենք հավատում ենք, որ անցյալ դարերի ողջ աշխատանքը քիչ նշանակություն կունենար, քանզի Տերն ասել է ողջ երկիրը այդպիսի պայմաններում, ամբողջապես կամայանար իր գալստյան ժամանակ: Ուստի, նրա

Քահանայության կնքող զորությունը «միավորում է ամուսիններին և կանանց՝ հավերժության համար, երբ նրանք հավերժական ծրագրի համաձայն մտնում են ամուսնության մեջ»:

առաքելությունը վիթխարի կարևորություն ուներ աշխարհի համար: Դա միայն մկրտության հարցը չէ մահացածների համար, այլ նաև ծնողների կնքումը և երեխաներին կքելը ծնողների հետ, որպեսզի լիներ «լրիվ ու ամբողջական ու կատարյալ մի միացում և տնտեսությունների ու բանալիների ու զորությունների ու փառքերի փոխկապակցում տեղի ունենա», սկզբից սկսած մինչև ժամանակի վերջը [տես ՎԵՈՒ 128.18]: Եթե այս կնքող զորությունը երկրի վրա չլիներ, ապա խառնաշփոթություն կտիրեր և անկարգություն տեղի կունենար կարգ ու կանոնի այն օրը, երբ Տերը կգա և իհարկե սա չի կարող լինել, քանի որ բոլոր բաները կառավարվում են և վերահսկվում կատարյալ օրենքով Աստծո թագավորությունում:[7]

Ինչո՞ւ պիտի երկիրը ամայանար: Պարզապես այն պատճառով, եթե չլիներ փոխկախկապակցող օղակ հայրերի և զավակների միջև, որը մահացածների համար աշխատանքն է. այդ

ժամանակ մենք բոլորս կկանգնեինք մերժված, Աստծո ողջ աշխատանքը կձախողվեր և ամբողջապես կամայեցվեր: Այդպիսի վիճակ, իհարկե, չպետք է լինի:[8]

[Կնքման] իշխանության այս վերականգնումը այն օրհնությունն է, որը փրկում է երկիրը ամբողջապես ամայանալուց Հիսուս Քրիստոսի գալստյան ժամանակ: Երբ այս ճշմարտությունը հստակորեն հիմնավորվի մեր մտքերում, հեշտ է տեսնել, որ կլիներ միայն խառնաշփոթ և աղետ, եթե Քրիստոսը զար և կնքող զորությունը չլիներ այստեղ:[9]

3

Իր լիությամբ փրկության պատրաստվելու համար, մենք պետք է ստանանք տաճարային արարողություններ կնքող զորության միջոցով:

Տերը տվել է մեզ արտոնություններ և օրհնություններ և հնարավորություն ուխտերի մեջ մտնելու, ընդունելու արարողությունները, որոնք վերաբերում են մեր փրկությանը, բացի նրանից, ինչ քարոզվում է աշխարհում, բացի առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի սկզբունքներից, մեղքից ապաշխարության և մեղքերից ազատման համար մկրտության և Սուրբ Հոգու պարգևի համար ձեռնադրման. իսկ այս սկզբունքներն ու ուխտերը ոչ մի այլ տեղում չեն ստացվում, բացի Աստծո տաճարից:[10]

Տաճարային աշխատանքն այնպես միահյուսված է փրկության ծրագրի հետ, որ մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի: Այլ խոսքով ասած, չի կարող լինել փրկություն, որտեղ չկան տաճարային արարողություններ, որոնք առանձնապես պատկանում են տաճարին:[11]

Կան հազարավոր Վերջին Օրերի Սրբեր, ովքեր. . . կամենում են զնալ ժողով, կամենում են վճարել իրենց տասանորդը և կատարել Եկեղեցու սովորական պարտականությունները, բայց թվում է նրանք չեն զգում կամ հասկանում Տիրոջ տաճարում օրհնություններ ստանալու կարևորությունը, որոնք կբերեն նրանց վեհացման: Դա տարօրինակ բան է: Մարդիկ, թվում է, բավարարվում են ուղղակի հեշտ կյանքով ապրել, առանց օգտվելու իրենց ներկայացված այն հնարավորություններից և առանց ստանալու այն անհրաժեշտ ուխտերը, որոնք կբերեն նրանց ետ՝ դեպի Աստծո ներկայությունը որպես որդիներ և դուստրեր:[12]

Եթե դուք կամենում եք լիակատար փրկություն, այսինքն՝ վեհացում Աստծո թագավորությունում. . . դուք պետք է գնաք Տիրոջ տաճարը և ստանաք այդ սուրբ արարողությունները, որոնք պատկանում են այդ տանը, որոնք հնարավոր չէ գտնել այլ տեղում: Ոչ մի մարդ չի կարող ստանալ հավերժության լրիվությունը, վեհացում միայնակ, ոչ մի կին չի ստանա այդ օրհնությունը միայնակ, բայց տղամարդը և կինը, երբ նրանք ստանում են կնքող զորությունը Տիրոջ տաճարում, պիտի անցնեն վեհացում և շարունակեն և դառնան Տիրոջ նման: Եվ սա է մարդկանց ճակատագիրը, սա է այն, ինչ Տերը կամենում է Իր զավակների համար:[13]

Հիշեցում. Նախագահ Սմիթի հույսի և խոստման խոսքերից մի քանիսը կարդալու համար՝ հավատարիմ մարդկանց համար, ովքեր անկարող են եղել ստանալ տաճարային բոլոր արարողություններն իրենց կյանքի ընթացքում, տես 18 գլուխ այս գրքում:

4

Կնքող զորության շնորհիվ մենք կարող ենք կատարել փրկող արարողություններ նրանց համար, ովքեր մահացել են առանց դրանք ստանալու:

Ովքե՞ր են հայրերը, որոնց մասին խոսում է Մաղաքիան, և ովքեր են զավակները: Հայրերը մեր մահացած նախնիներն են, ովքեր մահացել են առանց Ավետարանը ստանալու արտոնության, բայց ովքեր ստացել են խոստում, որ ժամանակը կգա, երբ այդ արտոնությունը կշնորհվի նրանց: Զավակները նրանք են, ովքեր այժմ ապրում են, ովքեր պատրաստում են ծագումնաբանական տվյալներ, և ովքեր փոխարինաբար արարողություններ են կատարում Տաճարներում:[14]

Եղիան եկավ, ունենալով կնքման բանալիները և զորությունը տրված է մեզ, որի միջոցով մենք կարող ենք օգնություն հասցնել մահացածներին: Այս կնքող զորությունն ընդգրկում է նրանց, ովքեր մահացած են, ովքեր կամենում են ապաշխարել և ստանալ Ավետարանը, ովքեր մահացել են առանց այդ գիտելիքի, ճիշտ նույն կերպ, ինչպես այն հասնում է նրանց, ովքեր ապաշխարում են, ովքեր ողջ են:[15]

Տերը հրամանագրել է, որ բոլոր Իր հոգեղեն զավակները, յուրաքանչյուր հոգի, որն ապրել է կամ կապրի երկրի վրա, կունենա արդար և պատշաճ հնարավորություն հավատալու և

հնազանդվելու Նրա հավիտենական ավետարանի օրենքներին: Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը և ապրում դրա օրենքներին ներդաշնակ, ներառյալ մկրտություն և սելեստիալ ամուսնությունը, կունենան հավերժական կյանք:

Ակնհայտ է, որ մարդկության միայն մի փոքր մասն է մինչև այժմ լսել ճշմարտության հայտնի դարձված խոսքը Տիրոջ ճշմարիտ ծառաներից մեկի միջոցով: Ինչպես Պետրոսն է ասել.

«Որովհետեւ իսկ սորա համար մեռելներին էլ աւետարանվեցաւ, որ մարդի կողմանէ մարմնով դատուին, բայց կենդանի լինեն Աստուծոյ կողմանէ հոգով» (Ա Պետրոս Դ.6):

Նրանք, ովքեր չունեին հնարավորություն լսելու փրկության ուղերձն այս կյանքում, բայց ովքեր կընդունեին այն ողջ իրենց սրտով, եթե այդպիսի հնարավորություն տրվեր նրանց, նրանք են այն մարդիկ, ովքեր կընդունեն այն հոգևոր աշխարհում, նրանք են այն մարդիկ, ում համար մենք կկատարենք տաճարային արարողություններ տաճարներում, և նրանք են, ովքեր այս ձևով կդառնան փրկության և հավերժական կյանքի ժառանգներ մեզ հետ:[16]

Հայրերի սրտերը դարձնելն իրենց երեխաներին, իսկ երեխաներինը իրենց հայրերին, փրկության ուժն է մահացածների համար՝ փոխարինաբար աշխատանքի միջոցով, որը երեխաները կարող են կատարել իրենց հայրերի համար և ամեն իմաստով խելամիտ է և հետևողական: Ես շատ անգամներ եմ լսել նրանց կողմից, ովքեր դեմ են այս աշխատանքին, որ անհնարին է մի մարդու համար փոխարինաբար կանգնել մեկ ուրիշի համար: Նրանք, ովքեր այդպես են արտահայտվում, անտեսում են այն փաստը, որ փրկության ողջ աշխատանքը փոխարինաբար կատարվող աշխատանք է, Հիսուս Քրիստոսը կանգնելով որպես քավություն, փրկագնելով մեզ մահից, որի համար մենք պատասխանատու չէինք և նաև փրկագնելով մեզ՝ մեր իսկ մեղքերի պատասխանատվությունից, մեր ապաշխարության և ավետարանն ընդունելու պայմանով: Նա արել է այս անսահման վիթխարի մի մասշտաբով և նույն սկզբունքով նա լիազորել է իշխանություն Իր Եկեղեցու անդամներին գործել մահացածների համար, ովքեր անօգնական են փրկարար արարողություններ կատարելու իրենց համար:[17]

Կարծում եմ, երբեմն մենք նայում ենք մահացածների համար փրկության այս աշխատանքին բավականին սահմանափակորեն: Սխալ տեսակետ է մտածել մարդկանց մասին, որոնց համար մենք Տիրոջ տաճարում աշխատանք ենք կատարում, որպես մահացած: Մենք պետք է նրանց մասին մտածենք՝ որպես ողջերի, և կենդանի փոխարինողը ներկայացնում է նրանց ստանալու օրհնությունները, որոնք նրանք պետք է ստացած լինեին և կստանային այս կյանքում, եթե նրանք ապրեին ավետարանի տնտեսությունում: Ուստի, յուրաքանչյուր մահացած մարդ, որի համար աշխատամք է կատարվում տաճարում, համարվում է ողջ՝ արարողությունը կատարելու ժամանակ:[18]

Փրկության այս վարդապետությունը մահացածների համար ամենափառահեղ սկզբունքներից է, որ երբևէ հայտնի է դարձվել մարդուն: Սա է այն ուղին, որով ավետարանը կմատուցվի բոլոր մարդկանց: Սա հաստատում է այն փաստը, որ Աստված աչառ չէ [տես Գործք Ժ.34], որ ամեն հոգի թանկ է Նրա աչքում, և որ բոլոր մարդիկ փաստորեն և իրականում կդատվեն համաձայն իրենց գործերի:

Այժմ ես շնորհակալ եմ Տիրոջը, որ Նա վերականգնել է ավետարանը մեզ համար այսօր: Ես շնորհակալ եմ Նրան կնքող զորությունը երկիր վերադարձնելու համար Մարգարե Եղիայի կողմից: Ես շնորհակալ եմ Նրան ընտանիքի հավերժական միավորի համար, Նրա սուրբ տաճարներում մեր կնքվելու արտոնության համար, իսկ հետո այդ կնքումները մատչելի դարձնելու օրհնությունների համար, որոնք տրվել են մեր նախնիներին, ովքեր մահացել են առանց ավետարանի գիտության:[19]

5

Ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքը սիրո աշխատանք են:

Կան շատ բարի, խոնարհ հոգիներ, ովքեր իրենց զրկել են հարմարավետություններից, և որոշ դեպքերում կյանքի կենսական միջոցներից, որպեսզի կարողանան պատրաստել արձանագրություններն ու կատարեն աշխատանքը իրենց մահացածների համար, որ փրկության պարգևը կարողանա հասնել նրանց: Սիրո այս աշխատանքները զուր չեն լինի, քանի որ բոլոր նրանք, ովքեր աշխատել են այս նշանակալի գործի

համար, կգտնեն իրենց գանձը և հարստությունները Աստծո սելեստիալ արքայությունում: Մեծ կլինի նրանց վարձքը, այո, նույնիսկ մահկանացուների հասկանալու զորությունից վեր:[20]

Չկա աշխատանք կապված ավետարանի հետ, որը լինի ավելի անեսասեր բնույթի, քան Տիրոջ Տան աշխատանքը՝ մեր մահացածների համար: Նրանք, ովքեր աշխատում են մահացածների համար, չեն ակնկալում որևէ փոխհատուցում կամ վարձք: Դա ամենից վեր սիրո աշխատանք է, որը ծնվում է մարդու սրտում այս փրկարար արարողություններում հավատարիմ և հաստատուն աշխատանքի միջոցով: Չկան ֆինանսական շահույթներ, բայց կլինի մեծ ուրախություն երկնքում՝ այն հոգիների հետ, ում մենք օգնել ենք հասնել իրենց փրկությանը: Դա մի աշխատանք է, որը մեծացնում է հոգին, լայնացնում է նրա տեսակետները իր մերձավորի բարօրության վերաբերյալ և ցանում նրա սրտում սեր՝ մեր Երկնային Հոր բոլոր զավակների հանդեպ: Չկա աշխատանք, որ հավասար լինի մահացածների համար տաճարային աշխատանքին, որն ուսուցանում է մարդուն սիրել իր մերձավորին, ինչպես իրեն: Հիսուսն այնպես սիրեց աշխարհը, որ կամեցավ Իրեն զոհ մատուցել մեղքի համար, որպեսզի աշխարհը կարողանար փրկվել: Մենք ևս մի փոքր չափով արտոնություն ունենք, ցույց տալու մեր մեծ սերը Նրա հանդեպ և մեր մերձավորի, օգնելով նրանց ստանալ ավետարանի օրհնությունները, որոնք նրանք այժմ չեն կարող ստանալ առանց մեր աջակցության:[21]

6

Ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքի միջոցով, մենք սերնդե սերունդ ամբողջացնում ենք ընտանեկան կազմակերպությունը:

Փրկության վարդապետությունը մահացածների համար և տաճարային աշխատանքն ապահովում է մեզ ընտանեկան հարաբերությունների շարունակման փառահեղ հնարավորություն: Սրա միջոցով մենք իմանում ենք, որ ընտանեկան կապերը չպետք է կտրվեն, որ ամուսիններն ու կանայք հավերժորեն կունենան իրավունք միմյանց հանդեպ և իրենց երեխաների հանդեպ ընդհուպ մինչև ամենավերջին սերունդը: Սակայն որպեսզի ստանանք այս արտոնությունները մեր Աստծո տաճարում, պետք է ձեռք բերել կնքման արարողությունները:



Երբ մենք դարձնում ենք մեր սրտերը դեպի մահացած նախնիները, մենք կարող ենք նաև մեր սրտերը դարձնել դեպի ընտանիքի կենդանի անդամները:

Բոլոր պայմանագրերը, կապերը, պարտավորությունները և համաձայնագրերը, որոնք արվել են մարդկանց կողմից կգան ավարտի, բայց պարտավորություններն ու համաձայնագրերը, որոնց մեջ են մտել Տիրոջ տանը, եթե հավատարմորեն պահվեն, կտևեն հավերժ [տես ՎԵՈՒ 132.7]: Այս վարդապետությունը տալիս է մեզ Իր զավակների հանդեպ Տիրոջ նպատակների ավելի հստակ հասկացողություն: Այն ցույց է տալիս Նրա լիառատ և անսահմանափակ ողորմածությունը և սերը բոլորի հանդեպ, ովքեր հնազանդվում են Իրեն, այո, նույնիսկ, նրանց հանդեպ, ովքեր ապստամբ են, քանզի Իր բարությամբ նույնիսկ նրանց նա կշնորհի մեծ օրհնություններ:[22]

Մեզ ուսուցանվում է Հիսուս Քրիստոսի ավետարանում, որ ընտանեկան կազմակերպությունը կլինի, ինչ վերաբերում է սելեստիալ վեհացմանը, այնպիսին, որ կլինի ամբողջական, մի

կազմակերպություն՝ կապված մեկ սերնդի հոր և մոր ու երեխաներին հաջորդ սերնդի հոր և մոր ու երեխաների հետ և, այսպիսով, ընդարձակվելով և տարածվելով մինչև ժամանակի վերջը:[23]

Պետք է լինի մի կապակցում, սերունդների հետ միմյանց միակցում Ադամի օրերից սկսած մինչև ժամանակի վերջը: Ընտանիքները կմիակցվեն և կկապակցվեն միմյանց՝ ծնողները երեխաներին, երեխաները ծնողներին, մեկ սերունդը մյուսին, մինչև մենք կմիացվենք միմյանց մեկ մեծ ընտանիքում՝ մեր հայր Ադամի գլխավորությամբ, որտեղ Տերը դրեց նրան: Այսպիսով, մենք չենք կարող փրկվել և վեհացվել Աստծո արքայությունում, մինչև որ չունենանք մեր սրտերում ցանկություն՝ անել այս աշխատանքը և կատարել դա այնքան, որքան ուժ ունենք մեր մահացածների համար: Սա փառահեղ վարդապետություն է, ճշմարտության մեծ սկզբունքներից մեկը, որը հայտնի է դարձվել Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Մենք պետք է օգտվենք մեր հնարավորություններից և ապացուցենք ինքներս մեզ արժանի և ընդունելի Տիրոջ աչքում, որ մենք կարողանանք ստանալ այս վեհացումը մեզ համար, և այնտեղ ուրախանանք Աստծո թագավորությունում մեր ազգականների և ընկերների հետ Անդրանիկի Եկեղեցու Սրբերի այս մեծ վերամիավորմամբ և հավաքով, ովքեր իրենց պահել են զերծ և անբիծ աշխարհի մեղքերից:

Իմ աղոթքն է, որ Տերն օրհնի մեզ և շնորհի, որ մենք կարողանանք ունենալ ցանկություն մեր սրտերում մեծարելու մեր կոչումները և ծառայենք Նրան հավատարմությամբ բոլոր բաներում,:[24]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնում կարդացեք Նախագահ Սմիթի խորհրդի մասին, թե «ինչ ենք իրականում անում» տաճարը նվիրագործելիս: Ի՞նչ կարող ենք անել այս խորհրդին հետևելու համար:
- Ինչպե՞ս են բաժին 1-ի ուսմունքները կապված մեր մահացած նախնիներին օգնելու մեր ջանքերի հետ: Ինչպե՞ս կարող են այս ուսմունքները կապված լինել ընտանիքի կենդանի անդամների մեր հարաբերությունների հետ:

- Երբ կարդաք բաժին 2-ը, որոնեք Նախագահ Սմիթի բացատրությունը, թե ինչու կնքող զորությունը «փրկում է երկիրը լիակատար ամայացումից Հիսուս Քրիստոսի գալստի ժամանակ»։ Ի՞նչ է այս ուսուցանում մեզ փրկության ծրագրում ընտանիքների տեղի վերաբերյալ։
- Ինչպե՞ս է տաճարային աշխատանքը «միահյուսված փրկության ծրագրի հետ» (տես բաժին 3)։ Ինչպե՞ս կարող է այս սկզբունքն ազդել տաճարային աշխատանքի հետ կապված մեր զգացումների վրա։
- Նախագահ Սմիթը խորհուրդ է տվել, որ երբ մենք տաճարային աշխատանք ենք կատարում մահացածների համար, մենք պետք է մտածենք այդ մարդկանց մասին որպես ողջերի (տես բաժին 4)։ Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար։ Ինչպե՞ս կարող է այս գաղափարն ազդել տաճարում ձեր ծառայելու ձևի վրա։
- Երբ վերանայեք բաժին 5-ը, որոնեք օրհնությունները, որոնք Նախագահ Սմիթն ասել է կգան նրանց, ովքեր անում են ընտանեկան պատմության աշխատանք։ Ինչպե՞ս եք պարզել, որ այս բաները ճշմարիտ են։
- Ուսումնասիրեք բաժին 6-ը, և պատկերացրեք ձեր նախնիների հետ ուրախանալու փորձառությունը «մի մեծ վերամիավորման հավաքում»։ Մտածեք, թե ինչ կարող եք անել՝ պատրաստելու ձեզ և ձեր ընտանիքին այդ արտոնության համար։

Առնչվող սուրբ գրություններ

Ա Կորնթացիս ԺԵ.29, ՎևՈՒ 95.8, 97.15–16, 128.16–19

Օգնություն ուսուցչին

«Երբ որևէ անձնավորություն հարց է տալիս, մտածեք հրավիրել մյուսներին պատասխանել դրան, փոխարենը ինքներդ պատասխանելու։ Օրինակ՝ դուք կարող եք ասել. «Դա հետաքրքիր հարց է։ Ի՞նչ են կարծում մյուսները» կամ «Կարո՞ղ է որևէ մեկն օգնել այս հացում» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 64)։

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1948, 134.
2. "Salvation for the Dead," *Improvement Era,* Feb. 1917, 361; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 2: 147.
3. "Ogden Temple Dedicatory Prayer," *Ensign,* Mar. 1972, 6.
4. "The Coming of Elijah," *Ensign,* Jan. 1972, 2, 5.
5. "The Keys of the Priesthood Restored," *Utah Genealogical and Historical Magazine,* July 1936, 100.
6. "A Peculiar People: The Authority Elijah Restored," *Deseret News,* Jan. 16, 1932, Church section, 8; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 117.
7. "Salvation for the Living and the Dead," *Relief Society Magazine,* Dec. 1918, 677–78; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 121.
8. *Doctrines of Salvation,* 2: 122.
9. "The Coming of Elijah," 5.
10. In "Relief Society Conference Minutes," *Relief Society Magazine,* Aug. 1919, 466; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 40.
11. "One Hundred Years of Progress," *Liahona: The Elders' Journal,* Apr. 15, 1930, 520.
12. "The Duties of the Priesthood in Temple Work," *Utah Genealogical and Historical Magazine,* Jan. 1939, 4.
13. "Elijah the Prophet and His Mission—IV," *Instructor,* Mar. 1952, 67.
14. "Salvation for the Dead," *Millennial Star,* Dec. 8, 1927, 775; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 127.
15. "The Keys of the Priesthood Restored," 101.
16. *Sealing Power and Salvation,* Brigham Young University Speeches of the Year (Jan. 12, 1971), 2–3; italics removed.
17. *The Restoration of All Things* (1945), 174–75.
18. "The Keys of the Priesthood Restored," 100–101.
19. *Sealing Power and Salvation,* 3.
20. "A Greeting," *Utah Genealogical and Historical Magazine,* Jan. 1935, 5; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 180.
21. "Salvation for the Dead," *Improvement Era,* Feb. 1917, 362; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 144.
22. "Salvation for the Dead," *Improvement Era,* Feb. 1917, 362–63; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 173.
23. In Conference Report, Apr. 1942, 26; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 175.
24. In Conference Report, Oct. 1911, 122:

«Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանքները պահեցեք» (Հովհաննես ԺԴ.15)։

Ապրել Աստծո բերանից դուրս եկած ամեն մի խոսքով

«Երկրպագության բարձրագույն գործողությունը պատվիրանները պահելն է, Աստծո Որդու հետքերով քայլելը՝ այն բաներն անելը, որոնք գոհացնում են Նրան»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

«Ես որոնում եմ իմ փրկությունը, – հայտարարել է Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, – և ես գիտեմ, որ ես կարող եմ գտնել այն՝ միայն հնազանդվելով Տիրոջ օրենքներին, պահելով պատվիրանները, կատարելով արդարակեցության գործեր, հետևելով մեր շարասյան առաջնորդին՝ Հիսուսին, բոլորի օրինակին և գլխավորին»:[1]

Բացի իր իսկ փրկությունը որոնելուց, Նախագահ Սմիթը ջանասիրաբար աշխատեց օգնելու մյուսներին անել նույնը: Երեց Ֆրենսիս Մ. Գիբբոնսը, որը ծառայում էր որպես քարտուղար Առաջին Նախագահությունում, նկատել է, որ Նախագահ Սմիթը «իր պարտականությունն էր համարում բարձրացնել նախազգուշացնող ձայն, երբ մարդիկ սկսում էին հեռանալ սուրբ գրությունների կողմից նշված ուղուց: Եվ նա մտադրություն չուներ լքել այդ պարտականությունը, անկախ նրանից, թե ինչ կասեր ինչ-որ մեկը: Այդ խոսելաձևը, որը նրան դարձրեց չընդունված որոշ շրջանակներում, թվում է ոչ մի անհանգստացնող ազդեցություն չունեցավ նրա վրա, նրա նպատակը չէր հանրաճանաչ կամ հանրահայտ դառնալ մարդկանց աչքում: Դրա փոխարեն, նա իր դերն էր համարում աշտարակի վրա դետ լինելը, որի պարտականությունը նախազգուշացման կոչ հնչեցնելն էր ներքևում գտնվողներին, ովքեր չէին կարողանում տեսնել մոտեցող վտանգը:[2]

Նախագահ Սմիթը կիսվեց մի անգամ մի փորձառությամբ, որը ցույց տվեց սրտի փոփոխությունը, որը կարող է գալ մարդուն, որն ուշադրություն է դարձնում այդ նախազգուշացնող ձայնին:

«Ես մասնակցում էի ցցի համաժողովին մի քանի տարի առաջ և խոսեցի Իմաստության խոսքի մասին. . . Երբ գնացի շենքի ետնամասը [համաժողովի ավարտից հետո], գրեթե բոլորը հեռացել էին, բացի մի մարդուց, որն առաջ մեկնեց ձեռքը և ասաց.

«Եղբայր Սմիթ, սա առաջին ելույթն էր Իմաստության Խոսքի վերաբերյալ, որ ես երբևէ հավանել եմ»:

Ես ասացի. «Դուք չե՞ք լսել այլ ելույթներ Իմաստության Խոսքի վերաբերյալ»:

Նա ասաց. «Այո, բայց սա առաջինն էր, որից ես երբևէ բավականություն եմ ստացել»:

Ես ասացի. «Իսկ ինչո՞ւ»:

Նա ասաց. «Դեհ հասկանում եք, ես այժմ պահում եմ Իմաստության Խոսքը»:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Աստված կառավարում է տիեզերքը օրենքով, և մենք ենթակա ենք այդ օրենքին:

Պետք է բոլոր մարդկանց կողմից ընդունվի, քանի որ Ամենազորը կառավարում է ամբողջ տիեզերքը անփոփոխ օրենքով, մարդը, որը մեծագույնն է Նրա բոլոր արարչագործություններից, պետք է ինքը ենթակա լինի այդպիսի օրենքի: Տերը նշել է այս ճշմարտությունը հակիրճ և համոզիչ՝ Եկեղեցուն տրված մի հայտնության մեջ.

«Բոլոր թագավորություններին տրված է օրենք.

Եվ կան բազմաթիվ թագավորություններ. Քանզի չկա տարածություն, որտեղ չլինի թագավորություն. և չկա թագավորություն, որտեղ չլինի տարածություն՝ լինի մեծ, թե փոքր թագավորություն:

Եվ ամեն մի թագավորության տրված է օրենք. և ամեն մի օրենքում կան նաև որոշակի սահմաններ և պայմաններ:

«Բոլոր էակները, ովքեր չեն մնում այդ պայմաններում, չեն արդարացվում (ՎԵՈՒ 88.36–39)։

Այս ճշմարտությունն ինքնին ակնհայտ է։ Այսպիսով, միանգամայն խելամիտ է, որ մենք պետք է ակնկալենք, որ Աստծո թագավորությունը պետք է կառավարվի օրենքով և բոլորը, ովքեր ցանկանում են մտնել այնտեղ, ենթակա են այդ օրենքին։ «Ահա, իմ տունը կարգ ու կանոնի տուն է, ասում է Տեր Աստվածը, ոչ թե խառնաշփոթության տուն» (ՎԵՈՒ 132.8)։

Տերը տվել է մարդուն օրենքների մի ժողովածու, որը մենք կոչում ենք Հիսուս Քրիստոսի ավետարան։ Ոգեշնչման և հոգևոր առաջնորդության բացակայության պատճառով այս օրենքների և դրանց կիրառման հետ կապված մարդիկ կարող են տարբերվել, բայց հազիվ թե վիճաբանություն հարուցի այն փաստը, որ այդպիսի օրենքներ իսկապես գոյություն ունեն, և որ բոլորը, ովքեր ձգտում են մտնել այդ արքայությունը, ենթակա են դրանց։[4]

Մենք ունենք յուրաքանչյուր ճշմարտությունը, յուրաքանչյուր վարդապետությունը, ամեն օրենք և պահանջ, ամեն ծիսակատարություն և արարողություն, որոնք անհրաժեշտ են՝ փրկելու և վեհացնելու մեզ սելեստիալ աշխարհի ամենաբարձր երկինքում։[5]

2

Պատվիրանները պահելը Տիրոջ հանդեպ մեր սիրո արտահայտությունն է։

Եկեղեցում մեր պարտականությունն է երկրպագել Տիրոջը հոգով և ճշմարտությամբ և սա մենք ձգտում ենք անել ողջ մեր սրտով, զորությամբ և մտքով։ Հիսուսն ասել է. «Տիրոջը՝ քո Աստծուն երկրպագիր եւ միայն նորան [ծառայիր]» (Մատթ. Դ.10)։

Մենք հավատում ենք, որ երկրպագությունն ավելին է, քան աղոթքը և քարոզելն ու ավետարանի ծիսակատարությունները։ Երկրպագության գերագույն ձևը պատվիրանները պահելն է, Աստծո Որդու հետքերով քայլելը՝ միշտ այն բաներն անելը, որոնք գոհացնում են Նրան։ Մի բան է Տիրոջը շրթունքների ծառայություն ցույց տալը, լիովին այլ բան է Նրա կամքը հարգելն ու պատվելը, Նրա օրինակին հետևելը, որ Նա է սահմանել մեզ համար. . . Ես ուրախանում եմ Նրա հետքերով քայլելու արտոնությամբ։ Ես երախտապարտ եմ հավերժական կյանքի

խոսքերի համար, որոնք ես ստացել եմ, ես շատ ուրախ եմ ասել այս աշխարհում և հավերժական կյանքի հույսի համար, որն իմն է գալիք աշխարհում, եթե ես հավատարիմ մնամ և ճշմարիտ մինչև վերջ:[6]

Սա է Եկեղեցու անդամներին տրված օրենքը Փրկչի խոսքերով. «Ով որ իմ պատվիրանքներն ունի եւ նորանց պահում է, նա է ինձ սիրողը» (Հովհաննես ԺԴ.21): Կրկին Փրկիչն ասել է. «Եթե ինձ սիրում եք, պահեք իմ պատվիրանները» (Հովհաննես ԺԴ.15):

Փրկիչը երբեք չի գործել որևէ սխալ, ոչ էլ տարել է խղճի խայթ: Նա ապաշխարելու անհրաժեշտության տակ չէր, ինչպես ես կամ դուք, բայց ինչ-որ ձևով, որը ես չեմ կարող հասկանալ, նա տարավ իմ և ձեր օրինազանցությունների ծանրությունը. . . Նա եկավ և մատուցեց Իրեն որպես զոհաբերություն՝ վճարելու պարտքը մեզանից յուրաքանչյուրի համար, ով կամենում է ապաշխարել իր մեղքերից և վերադառնալ դեպի Նա և պահել Նրա պատվիրանները: Մտածեք, եթե կարող եք: Փրկիչն ինչ-որ ձևով տարավ այդ բեռը, որը վեր է մեր ըմբռնումից: Ես գիտեմ դա, որովհետև ընդունում եմ Նրա խոսքը: Նա պատմում է մեզ այն տանջանքը, որ Նա տարավ, տանջանքն այնքան մեծ էր, որ Նա աղերսեց Իր Հորը, որ եթե հնարավոր էր, որ չխմեր այդ դառը բաժակը և ընկերկեր, «. . . սակայն ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի» (Ղուկաս ԻԲ.42): Պատասխանը, որ Նա ստացավ Իր Հորից, հետևյալն էր. «Դու պետք է խմես այն»:

Կարո՞ղ եմ ես չսիրել Նրան: Ոչ, ես չեմ կարող չսիրել: Դուք սիրո՞ւմ եք Նրան: Ուրեմն պահեք Նրա պատվիրանները:[7]

3

Եթե մենք շրջվենք Տիրոջ պատվիրաններից, մենք չենք կարող ակնկալել Նրա օրհնությունները:

Երբ մենք շրջվենք Տիրոջ պատվիրաններից, որոնք նա տվել է մեզ՝ մեր առաջնորդության համար, ապա մենք Նրա օրհնությունների իրավունքը չունենք:[8]

Ի՞նչ օգուտ է մեզ Տիրոջից խնդրել, եթե մենք մտադրություն չունենք Նրա պատվիրանները պահել: Այդպիսի աղոթքն անիմաստ ծաղր է և վիրավորանք ողորմածության գահի առաջին: Ինչպե՞ս ենք համարձակվում ենթադրել դրական պատասխանի

Ծնողները կարող են օգնել իրենց երեխաներին «քայլել ճշմարտության լիակատար լույսով»:

սպասել, եթե այդպիսին է դեպքը: «Խնդրեցեք Տիրոջը, քանի որ նա գտնվում է. նորան կանչեցէք, քանի որ նա մոտ է: Ամբարիշտը թողէ իր ճանապարհը, եւ անօրէն մարդը՝ իր ճանապարհը, եւ անօրէն մարդը՝ իր խորհուրդները, եւ դառնայ Տիրոջը, եւ նա կողորմէ նորան, եւ՝ մեր Աստուծուն. որովհետեւ նա շատ ներող է»: Այսպես է ասել Եսայիան (Եսայիա ԾԵ.6–7): Բայց միթե՞ Տերը միշտ մոտիկ չէ, երբ մենք խնդրում ենք Նրան: Իսկապես, ոչ: Նա ասել է. «Նրանք հապաղում էին լսել իրենց Տեր Աստծո ձայնը. Հետևաբար, Տերը՝ իրենց Աստվածը, հապաղում է լսել նրանց աղոթքները, որ պատասխանի նրանց իրենց նեղության օրը: Իրենց խաղաղության օրը նրանք թեթևամտորեն վերաբերվեցին իմ խորհրդին. Սակայն, իրենց նեղության օրը նրանք կարիքից խարխափում են՝ փնտրելով ինձ» [ՎԵՈՒ 101.7–8]: Եթե մենք մոտենանք Նրան, Նա էլ կմոտենա մեզ և մենք չենք լքվի, բայց եթե մենք չենք մոտենում Նրան, մենք խոստում չունենք, որ Նա մեզ կպատասխանի մեր ապստամբության մեջ:[9]

Մենք չենք կարող աղոթել Տիրոջը և ասել. «Լսիր մեր խնդիրը, հաղթանակ տուր մեզ, արա ինչ մենք ենք կամենում, որ դու անես, բայց մեզանից մի խնդրիր անել այն, ինչ դու ես ուզում, որ մենք անենք»:[10]

Մեզ համար անհրաժեշտ է քայլել ճշմարտության լիակատար լույսով, ոչ թե ճշմարտության մի մասով: Ես արտոնություն չունեմ ավետարանի մի քանի սկզբունքներ դեն նետել և հավատալ մյուսներին, իսկ հետո զգալ, որ ես արժանի եմ Աստծո արքայությունում փրկության և վեհացման լիարժեք օրհնություններին: Եթե մենք ուզում ենք վեհացում, եթե մենք ուզում ենք այն տեղը, որը Տերը պատրաստել է նրանց համար, ովքեր արդար են և ճշմարիտ, ուրեմն մենք պետք է հոժար լինենք քայլել Հիսուս Քրիստոսի ավետարանի լիակատար լույսով և պահել բոլոր պատվիրանները: Մենք չենք կարող ասել, որ դրանցից մի քանիսը փոքր են և անկարևոր, և ուստի Տերը ուշադրություն չի դարձնի, եթե մենք խախտենք դրանք [տես Երկրորդ Օրինաց Ը.3, ՎԱՈՒ 98.1]: «Եվ ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր կոչում, եւ չէք անում այն որ ասում եմ» [տես Ղուկաս Զ.46]:[11]

4

Երբ մենք պահում ենք Տիրոջ պատվիրանները, մենք դեպի կատարելություն տանող ճանապարհի վրա ենք:

Տերն ակնկալում է, որ մենք հավատանք Իրեն, ընդունենք հավիտենական ավետարանը և ապրենք ներդաշնակության մեջ իր պահանջների հետ: Մեր պարտականությունը չէ ընտրել և հնազանդվել ավետարանի այն սկզբունքների հետ, որոնք մեզ դուր են գալիս և մոռանում մնացածի մասին: Դա մեր իրավասությունը չէ որոշել, որ որոշ սկզբունքներ այլևս չեն կիրառվում մեր հասարակության և մշակութային պայմաններում:

Տիրոջ օրենքները հավերժական են, և մենք ունենք հավիտենական ավետարանի լրիվությունը և պարտավոր ենք հավատալ բոլոր Նրա օրենքներին և ճշմարտություններին և ապա քայլենք դրանց համապատասխան: Որևէ անձնավորության համար չկա ավելի կարևոր բան, քան Տիրոջ պատվիրանները պահելը: Նա ակնկալում է, որ մենք կառչենք ամեն մի ճշմարիտ սկզբունքից, առաջինը դնենք Իր թագավորության բաները, առաջ շարժվենք անսասանությամբ Քրիստոսում, և ծառայենք Նրան մեր ողջ

զորությամբ, մտքով և ուժով։ Սուրբ գրությունների լեզվով, եկեք լսենք ողջ խնդրի եզրակացությունը. «Աստուածանից վախեցիր եւ նորա պատվիրանքները պահիր. որովհետեւ սա է մարդու [ողջ պարտականությունը] (Ժողովող ԺԲ.13)։[12]

Ես հաճախ եմ մտածում և, կարծում եմ, դուք էլ, այն մեծ և սքանչելի քարոզի մասին՝ մեծագույնը, որ երբևէ քարոզվել է, որքանով որ մենք գիտենք, որը մենք կոչում ենք Լեռան Քարոզ. . . Եթե միայն մենք ականջ դնենք այդ ուսմունքներին, մենք կկարողանանք կրկին վերադառնալ Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ներկայությունը։

Ես հաճախ եմ մտածում այն մասին, ինչն իսկապես ամփոփում է.

«Արդ, դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը, որ երկնքումն է, կատարեալ է» [Մատթեոս Ե.48]։

. . . Հավատում եմ Տերն ի նկատի ուներ հենց այն, ինչ Նա ասել է, որ մենք պետք է կատարյալ լինենք, ինչպես մեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է։ Դա չի գա միանգամից, այլ տող տողի վրա, ցուցում ցուցումի վրա, օրինակ օրինակի վրա և այդպես անդադար, քանի դեռ ապրում ենք այս մահկանացու կյանքում, քանզի մենք գերեզմանից այն կողմ էլ պետք է գնանք մինչև հասնենք կատարելության և լինենք Աստծո նման։

Բայց այստեղ ենք մենք դնում հիմքը։ Այստեղ է որ մենք ուսուցանվում ենք այս պարզ ճշմարտությունները Հիսուս Քրիստոսի Ավետարանի մասին, այս փորձնական վիճակում, նախապատարաստվելու այդ կատարելության համար։ Իմ պարտականությունն է և նաև ձերը՝ ավելի լավը լինել այսօր, քան երեկ էի, և դուք էլ ավելի լավը լինեք այսօր, քան երեկ էիք, ավելի լավը՝ վաղը, քան այսօր եք։ Ինչո՞ւ։ Որովհետև մենք այդ ճանապարհի վրա ենք, եթե մենք պահում ենք Տիրոջ պատվիրանները, մենք դեպի կատարելություն տանող այդ ճանապարհի վրա ենք և դա կարող է գալ միայն հնազանդության և աշխարհին հաղթելու մեր սրտերի ցանկության միջոցով։ . . .

. . . Եթե ձախողում ունենք, եթե թուլություն ունենք, այդտեղ է, որ պետք է կենտրոնանանք, հաղթահարելու ցանկությամբ, մինչև մենք տիրապետենք և հաղթենք։ Եթե մարդ զգում է, որ դժվար է իր համար վճարել տասանորդը, ուրեմն դա հենց այն

է, ինչ պետք է անի, մինչև նա սովորի վճարել իր տասանորդը: Եթե դա Իմաստության Խոսքն է, հենց դա է, որ նա պիտի անի, մինչև նա սովորի սիրել այդ պատվիրանը:[13]

5

Երբ մենք պահում ենք Տիրոջ պատվիրանները, Տերը մխիթարում է և օրհնում մեզ ու զորացնում մեզ դառնալու տղամարդիկ և կանայք, ովքեր արժանի են վեհացման:

[Տիրոջը] գոհացնելու համար մենք պետք է ոչ միայն երկրպագենք Նրան գոհաբանությամբ և օրհնաբանությամբ, այլ ցույց տանք հոժարակամ հնազանդություն Նրա պատվիրաններին: Այդ անելով, նա պարտավորված է շնորհել Իր օրհնությունները, քանզի այս սկզբունքի վրա է (օրենքին հնազանդվելու), որի վրա հիմնված են բոլոր բաները [տես ՎԿՈՒ 130.20–21]:[14]

Աստված մեզ [պատվիրաններ] է տվել, որպեսզի կարողանանք ավելի մոտենալ Նրան և հավատքով ամրանանք և զորանանք: Ոչ մի պատվիրան, որևէ ժամանակ, Նա չի տվել մեզ, որը մեր մխիթարության և օրհնության համար չլինի: Դրանք չեն տրվում ուղղակի գոհացնելու Տիրոջը, այլ մեզ ավելի լավ տղամարդիկ և կանայք դարձնելու համար և արժանի՝ փրկության և վեհացման Նրա արքայությունում:[15]

Եթե մենք գնում ենք տաճար, մենք բարձրացնում ենք մեր ձեռքերը և ուխտ կապում, որ կծառայենք Տիրոջը և կպահենք Նրա պատվիրանները և մեզ անբիծ կպահենք աշխարհից: Եթե մենք գիտակցում ենք, թե ինչ ենք անում, ապա օժտումը պաշտպանություն կլինի մեզ համար ողջ մեր կյանքում՝ պաշտպանություն, որը եթե մարդ չի գնում տաճար, չի ունենում:

Ես լսել եմ, թե ինչպես էր հայրս ասում, որ փորձության պահին, զայթակղության պահին, նա մտածում էր խոստումների մասին, ուխտերի մասին, որ նա արել էր Տիրոջ Տանը և դա պաշտպանություն էր նրա համար. . . Մասամբ այս ծիսակատարությունները հենց պաշտպանության համար են: Դրանք փրկում են մեզ այժմ և դրանք վեհացնում են մեզ այս կյանքից հետո, եթե մենք հարգենք դրանք: Ես գիտեմ, որ այս պաշտպանությունն իրական է, քանի որ ես ևս հասկացել եմ, ինչպես հազարավոր ուրիշներ էլ, ովքեր հիշել են իրենց պարտականությունները:[16]

Տաճարում մենք ուխտ ենք կապում, որ «կծառայենք Տիրոջը և կպահենք Նրա պատվիրանները և մեզ անբիծ կպահենք աշխարհից:

Տերը կտա մեզ պարգևներ: Նա կաշխուժացնի մեր մտքերը: Նա կտա մեզ գիտելիք, որը կմաքրի բոլոր դժվարությունները և մեզ կդնի ներդաշնակության մեջ պատվիրանների հետ, որ Նա տվել է մեզ, Նա կտա մեզ գիտելիք, որն այնքան խորապես կարմատավորվի մեր հոգիներում, որ այն երբեք արմատախիլ չի արվի, եթե մենք ուղղակի ձգտենք լույսի և ճշմարտության և հասկացողության, որոնք մեզ խոստացված են, և որը մենք կարող ենք ստանալ, եթե միայն ճշմարիտ և հավատարիմ լինենք յուրաքանչյուր ուխտին և պարտականությանը, որը կապված է Հիսուս Քրիստոսի ավետարանի հետ:[17]

Այն մեծ խոստումը, որ տրված է այս Եկեղեցու անդամներին, ովքեր կամենում են մնալ օրենքում և պահել Տիրոջ պատվիրանները, այն է, որ նրանք պիտի ոչ միայն մի տեղ ստանան Աստծո թագավորությունում, այլ որ նրանք նաև ունենան Հոր և Որդու ներկայությունը, և դա բոլորը չէ, քանզի Տերը խոստացել է, որ այն ամենը, ինչ Նա ունի պիտի տրվի նրանց [տես ՎԵՈՒ 84.33–39]:[18]

Այդ պատվիրաններին հնազանդության միջոցով, որոնք սահմանված են Հիսուս Քրիստոսի Ավետարանում, և շարունակելով հնազանդվել, մենք կստանանք անմահություն, փառք, հավերժական կյանք և կբնակվենք Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ներկայությամբ, որտեղ մենք իսկապես կճանաչենք նրանց:[19]

Եթե մենք քայլենք առաքինության և սրբության ուղիներով, Տերը դուրս կթափի Իր օրհնությունները մեզ վրա այնչափ, որ երբեք չենք էլ պատկերացրել, որ հնարավոր է: Մենք հենց իրականում ինչպես Պետրոսն է ասել.«ընտիր ազգ ենք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ» (Ա Պետ. Բ.9): Եվ մենք կլինենք սեփական, որովհետև մենք նման չենք լինի մյուս մարդկանց, ովքեր չեն ապրում ըստ այս չափանիշների:

Որպես Տիրոջ ծառաներ՝ մեր նպատակն է քայլել այն ուղով, որ Նա է պատրաստել մեզ համար: Մենք ոչ միայն ցանկանում ենք անել և ասել այն, ինչ կգոհացնի Նրան, այլ մենք ձգտում ենք այնպես ապրել, որ մեր կյանքը նման լինի Նրա կյանքին:

Նա ինքն է կատարյալ օրինակ հանդիսանում մեզ համար բոլոր բաներում և ասել է մեզ. «Հետևեք ինձ»: Իր Նեփիացի աշակերտներից Նա հարցրել է. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27):

Այժմ մենք զբաղված ենք աշխարհում ամենամեծ աշխատանքով: Այս քահանայությունը, որը մենք ունենք, Տիրոջ զորությունն է և իշխանությունը, և նա խոստացել է մեզ, որ եթե մեծարենք մեր կոչումները և քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ, մենք կարող ենք ունենալ հավերժական փառք և պատիվ Նրա հետ Իր Հոր թագավորությունում:

Այդպիսի փառահեղ հույսով մեր առջևում, կարո՞ղ ենք անել ավելի քիչ, քան աշխարհի չար ուղիները թողնելը: Միթե՞ մեր կյանքում առաջին տեղում չենք դնի Աստծո թագավորության բաները: Միթե՞ մենք չենք ապրի յուրաքանչյուր խոսքով, որ դուրս է գալիս Նրա բերանից:[20]

Ես վկայում եմ, որ Տերը խոսել է մեր օրերում. որ Նրա ուղերձը հույսի և ուրախության և փրկության ուղերձ է, և ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք քայլեք երկնքի լույսի մեջ, հավատարիմ

լինեք ձեզ վստահված բաներին և պահեք պատվիրանները, դուք կունենաք խաղաղություն և ուրախություն այս կյանքում և հավերժական կյանք գալիք աշխարհում։[21]

Պահե՛ք պատվիրանները։ Քայլե՛ք լույսի մեջ։ Համբերե՛ք մինչև վերջ։ Հավատարի՛մ եղեք ամեն ուխտին և պարտավորությանը, և Տերը կօրհնի ձեզ՝ ձեր ամենասիրված երազանքներից վեր։[22]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնի վերջում գտնվող պատմությունը։ Ինչո՞ւ են մեր զգացումներն ավետարանի վերաբերյալ փոխվում, երբ ձգտում ենք պահել պատվիրանները։
- Ի՞նչ եք սովորում սուրբ գրությունների հատվածներից, որոնք մեջբերվում են բաժին 1-ում։
- Ինչպե՞ս է մեր հնազանդությունը պատվիրաններին Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրո արտահայտություն։ Ինչպե՞ս է այն Նրա քավող զոհաբերության հանդեպ երախտագիտության արտահայտություն։ Ինչպե՞ս է այն երկրպագության արտահայտություն (տես բաժին 2)։
- Խորհեք 3–րդ բաժնի ուսմունքների մասին։ Ինչո՞ւ է սխալ՝ ակնկալել, որ Տերը կօրհնի մեզ, եթե մենք չենք ձգտում հնազանդ լինել։
- Ինչպե՞ս է ձեզ համար օգտակար իմանալ, որ դուք չպետք է ակնկալեք կատարյալ դառնալ միանգամից կամ նույնիսկ այս կյանքում (տես բաժին 4)։ Մտածեք թե ինչ կարող եք դուք անել յուրաքանչյուր օր, Տիրոջ օգնությամբ, որպեսզի մնաք «կատարելության ճանապարհին»։
- Բաժին 5-ում Նախագահ Սմիթը թվում է առնվազն 10 ուղիներ, որոնցով Տերը կօրհնի մեզ, երբ մենք պահենք պատվիրանները։ Ի՞նչ փորձառություններով կարող եք կիսվել, որոնց ժամանակ դուք ստացել եք այս օրհնություններից մի քանիսը։

Սոնչվող սուրբ գրություններ

Մատթեոս Դ.4, 2 Նեփի 31.19–20, Օմնի 1.26, ՎևՈՒ 11.20, 82.8–10, 93.1, 130.20–21, 138.1–4

Օգնություն ուսուցչին

«Խնդրեք մասնակիցներից կիսվել, թե ինչ են սովորել գլխի իրենց անձնական ուսումնասիրությունից: Օգտակար կարող է լինել կապվել մի քանի մասնակցի հետ շաբաթվա ընթացքում և խնդրել, որ նրանք պատրաստված գան կիսվելու նրանով, ինչ սովորել են» (էջ X այս գրքում):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1969, 110.
2. Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 313.
3. In Conference Report, Oct. 1935, 12.
4. "Justice for the Dead," *Ensign,* Mar. 1972, 2.
5. In "President Smith's Last Two Addresses," *Ensign,* Aug. 1972, 46.
6. "I Know That My Redeemer Liveth," *Ensign,* Dec. 1971, 27.
7. In Conference Report, Apr. 1967, 121–22.
8. In Conference Report, Oct. 1935, 15.
9. In Conference Report, Oct. 1935, 15.
10. In Conference Report, Oct. 1944, 144–45.
11. In Conference Report, Apr. 1927, 111–12.
12. "President Joseph Fielding Smith Speaks on the New MIA Theme," *New Era,* Sept. 1971, 40.
13. In Conference Report, Oct. 1941, 95.
14. "The Virtue of Obedience," *Relief Society Magazine,* Jan. 1968, 5.
15. In Conference Report, Apr. 1911, 86.
16. "The Pearl of Great Price," *Utah Genealogical and Historical Magazine,* July 1930, 103.
17. "Seek Ye Earnestly the Best Gifts," *Ensign,* June 1972, 3.
18. "Keep the Commandments," *Improvement Era,* Aug. 1970, 3.
19. In Conference Report, Oct.1925, 116.
20. "Our Responsibilities as Priesthood Holders," *Ensign,* June 1971, 50.
21. In Conference Report, British Area General Conference 1971, 7.
22. "Counsel to the Saints and to the World," *Ensign,* July 1972, 27.

Աշխարհում, բայց ոչ աշխարհից

«Չնայած մենք աշխարհում ենք, մենք աշխարհից չենք: Ակնկալվում է, որ մենք հաղթենք աշխարհին և ապրենք, դառնալով սրբեր»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1944թ. դեկտեմբերի 29-ին Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի որդին՝ Լյուիսը մահացավ, երբ ծառայում էր Միացյալ Նահանգների բանակում: Չնայած այն վշտին, որ Նախագահ Սմիթը տարավ, նա սփոփվում էր Լյուիսի լավ կյանքի հիշողությամբ: «Եթե Լյուիսը երբևէ ասել է և արել որևէ ստոր բան, ես երբեք չեմ լսել այդ մասին», – իր օրագրում գրել է Նախագահ Սմիթը: «Նրա մտքերը մաքուր էին, ինչպեսև նրա գործողությունները. . . Որքան որ հարվածն էր սուր, այնքան էլ մենք ունենք խաղաղություն և երջանկություն՝ իմանալով, որ նա մաքուր էր և զերծ այն մեղքերից, որոնք այնքան գերակշռում են աշխարհում և գտնվում բանակում: Նա հավատարիմ էր իր հավատքին և արժանի փառահեղ հարության, երբ մենք կրկին կմիավորվենք»:[1]

Մոտ 11 տարի անց, Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը և նրա կինը՝ Ջեսսին, տեսան նույն հատկանիշները մեկ այլ զինվորական անձնակազմում: Նրանք ճանապարհորդում էին Եկեղեցու միսիաներում Արևելյան Ասիայում և նաև այցելում Միացյալ Նահանգներից Վերջին Օրերի Սրբերին, ովքեր ծառայում էին զինված ուժերում: Նախագահ Սմիթն ու Քույր Սմիթը մեծ տպավորություն ստացան այն երիտասարդներից, ովքեր չնայած աշխարհի գայթակղություններին, ապրում էին բարի, մաքուր կյանքով: 1955թ. հոկտեմբերի գերագույն համաժողովում Նախագահ Սմիթը հաղորդեց.

Նույնիսկ պատերազմի ժամանակ, մենք կարող ենք ապրել աշխարհում, բայց չլինել աշխարհից։

«Դո՛ւք, հայրեր և մայրեր, ովքեր զինված ուժերում ծառայող որդիներ ունեք, եղեք հպարտ նրանցով: Նրանք հիանալի երիտասարդներ են: Մեր ծառայողներից ոմանք նորադարձներ են, ովքեր բերվել են Եկեղեցի ուսուցումների, ցուցումների և օրինակի միջոցով՝ հիմնականում Եկեղեցու անդամների օրինակով, ովքեր նույնպես ծառայում են նրանց հետ զինուժերում:

Ես հանդիպեցի մի քանի երիտասարդների հետ, ովքեր ասացին. «Մենք եկել ենք Եկեղեցի այդ երիտասարդների կյանքի շնորհիվ, և որովհետև նրանք ուսուցանեցին մեզ ավետարանի սկզբունքները:

Նրանք լավ գործ են անում: Կարող են լինել մեկ կամ երկու անփույթներ, բայց այն երիտասարդներն, ում հետ ես արտոնություն ունեցա հանդիպելու, խոսելու, ճշմարտության մասին իրենց վկայությունն էին բերում և նրանք քայլում էին համեստորեն:

Եվ երբ ես հանդիպեցի սպաների և կապելանների հետ . . . , նրանք բոլորն ասացին. «Ես հավանում եմ երիտասարդներին: Նրանք մաքուր են: Նրանք վստահելի են:[2]

Նախագահ Սմիթը հորդորեց Եկեղեցու անդամներին նման լինել այդ զինծառայողներին՝ «տարբերվել աշխարհի մնացած մասից»:[3] Այդ քարոզներում նա հաճախ էր խոսում Հանգստության օրը սուրբ պահելու, Իմաստության Խոսքին հնազանդվելու, Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի անունները հարգելու, համեստորեն հագնվելու և մաքրաբարոյության օրենքը պահելու մասին: Նա հավաստիացնում էր Վերջին Օրերի Սրբերին, որ օրհնությունները, որ նրանք ստանալու էին, եթե նրանք հրաժարվեին աշխարհի չարիքներից և պահեին պատվիրանները, «զերազանցելու էին ամեն ինչ, որ մենք կարող ենք այժմ պատկերացնել»:[4]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Տերն ակնկալում է մեզանից հրաժարվել աշխարհի չարիքներից և ապրել՝ դառնալով Սրբեր:

Մենք ապրում ենք չար և ամբարիշտ աշխարհում: Բայց չնայած մենք աշխարհում ենք, մենք աշխարհից չենք: Մեզանից սպասվում է հաղթել աշխարհը և ապրել՝ դառնալով սրբեր. . .

Մենք ավելի շատ լույս ունենք, քան աշխարհը, և Տերն ավելի շատ բան է սպասում մեզանից, քան աշխարհից։[5]

Հովհաննեսի տասնյոթերորդ գլխում ես հազիվ եմ կարողանում կարդալ այս գլուխն առանց արցունքների —. . . մեր Տերը աղոթելով Իր Հորը Իր Հոգու ողջ քնքշությամբ, քանի որ Նա գիտեր, որ ժամը հասել էր, որ Նա իրեն զոհ մատուցեր, աղոթեց Իր աշակերտների համար։ Այդ աղոթքում Նա ասաց.

«Ես չեմ աղաչում, որ աշխարհքիցը վեր առնես նորանց. Այլ որ նորանց պահես չարիցը։

Այս աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշխարհքիցը չեմ։

Նորանց սուրբ արա քո ճշմարտութիւնովը. Քո խոսքը ճշմարտութիւն է» (Հովհաննես ԺԵ.15–17)։

Եթե մենք ապրում ենք այն կրոնով, որ Տերն է հայտնի դարձրել, և որը մենք ընդունել ենք, մենք չենք պատկանում աշխարհին։ Մենք չպետք է մաս ունենանք դրա ողջ հիմարությունում։ Մենք չպետք է մասնակից լինենք դրա մեղքերին և սխալներին՝ փիլիսոփայության սխալներին և վարդապետության սխալներին, կառավարման վերաբերյալ սխալներին կամ ինչպիսի սխալներ էլ դրանք լինեն, մենք չպետք է մաս ունենանք դրանց մեջ։

Միակ մասը, որ մենք ունեք, Աստծո պատվիրանները պահելն է։ Դա է բոլորը, հավատարիմ լինելով ամեն ուխտի և ամեն պարտականության, որի մեջ մենք մտել ենք և վերցրել մեզ վրա։[6]

Մի կարծեք, նրանից ելնելով, ինչ ասացի, որ ես զգում եմ, որ մենք պետք է հեռու մնանք Եկեղեցուց դուրս գտնվող բոլոր մարդկանցից և չհաղորդակցվենք նրանց հետ։ Ես դա չեմ ասել, բայց ես ցանկանում եմ, որ մենք լինենք հետևողական Վերջին Օրերի Սրբեր և եթե աշխարհի մարդիկ քայլում են խավարում և մեղանչում են և հակառակվում Տիրոջ կամքին. սա է այն պահը, երբ մենք պետք է գիծը քաշենք։[7]

Երբ մենք միանանք Եկեղեցուն . . . , մեզանից սպասվում է, որ մենք կթողնենք աշխարհի ուղիները և կապրենք՝ դառնալով սրբեր։ Մենք այլևս չպետք է հագնվենք կամ խոսենք, կամ գործենք, կամ էլ նույնիսկ մտածենք ինչպես մյուսներն են խիստ հաճախ անում։ Աշխարհում շատերն են թեյ, սուրճ, ծխախոտ և ալկոհոլ և թմրադեղեր օգտագործում։ Շատերն են հայհոյում, գռեհիկ են և անպարկեշտ ու անմաքուր իրենց կյանքում, բայց

բոլոր այս բաները պետք է օտար լինեն մեզ։ Մենք Բարձրյալի Սրբերն ենք։ . . .

Ես կոչ եմ անում ողջ Եկեղեցուն և բոլոր նրա անդամներին թողնել աշխարհի չարիքները։ Մենք պետք է հեռու մնանք անմաքրաբարոյությունից և ամեն ձևի անբարոյականությունից ինչպես հեռու կմնայինք համաճարակից։

Որպես Տիրոջ ծառաներ՝ մեր նպատակն է քայլել այն ուղով, որ Նա է գծել մեզ համար։ Մենք ոչ միայն ցանկանում ենք անել և ասել այն, ինչ կգոհացնի Նրան, այլ մենք ձգտում ենք ապրել այնպես, որ մեր կյանքը նման լինի Նրա կյանքին։[8]

Հանգստության օրը սուրբ պահելը

Ես ցանկանում եմ մի քանի խոսք ասել հանգստության օրը հարգելու և այն սուրբ պահելու վերաբերյալ։ Այս պատվիրանը տրվել է սկզբում և Աստված պատվիրեց Սրբերին և երկրի բոլոր մարդկանց, որ նրանք հարգեն հանգստության օրը և այն սուրբ պահեն՝ յոթ օրերից մեկը։ Այդ օրը մենք պետք է հանգստանանք մեր գործերից, մենք պետք է գնանք Տիրոջ տունը և մեր հաղորդությունները մատուցենք Նրա սուրբ օրը։ Քանզի սա մեզ համար նշանակված օր է, որի ժամանակ մենք պետք է հանգստանանք մեր գործերից և մեր տուրքը մատուցենք Բարձրյալին [տես ՎԵՈՒ 59.9–10]։ Այս օրը մենք պետք է մատուցենք Նրան մեր երախտագիտությունը և հարգենք Նրան աղոթքով, ծոմով, երգելով և դաստիարակելով և ուսուցանելով միմյանց։[9]

Հանգստության օրը դարձել է հաճույքի, զվարճության, ամեն բանի օր, բացի երկրպագության օրից. . . և ես ափսոսում եմ ասել, որ չափից շատ անդամներ, մեկն էլ չափից շատ է, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու շատ անդամներ միացել են այդ թափորին, և հանգստության օրը Եկեղեցու որոշ անդամների համար դիտվում է ավելի շատ որպես զվարճության, հաճույքի օր, քան մի օր, որի ընթացքում մենք կարող ենք ծառայել Տիրոջը՝ մեր Աստծուն մեր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով։ . . .

Արդ, սա Եկեղեցու օրենքն է այսօր, ճիշտ ինչպես հնադարյան Իսրայելի օրերում էր և մեր մարդկանցից ոմանք բավականին անհանգստանում են, որովհետև նրանք զգում են, որ հանգստության օրը հարգելը նվազեցնում է իրենց գործունեությունը։[10]

Մենք իրավունք չունենք հանգստության օրը խախտել. . . Եա ափսոսում եմ շատ, որ նույնիսկ Վերջին Օրերի Սրբերի համայնքներում այս վարդապետությունը ոմանց կողմից չի դիտվում այնպես ինչպես պետք է դիտվի, որ մենք մեր շարքերում ունենք այնպիսիք, ովքեր կարծես թե զգում են, որ բացարձակապես ճիշտ է այս հարցում հետևել աշխարհի սովորույթին: Նրանք աշխարհի գաղափարների և հասկացությունների ճաշակողներ են՝ ի խախտումն Տիրոջ պատվիրանների: Բայց եթե մենք այդպես վարվենք, Տերը մեզ պատասխանտվության կենթարկի և մենք չենք կարող խախտել Նրա խոսքը և ստանալ հավատարիմների օրհնությունները:[11]

Իմաստության Խոսքին հնազանդվելը

Իմաստության Խոսքը հիմնական օրենք է: Այն ուղղորդում է ճանապարհը և տալիս մեզ առատ հրահանգավորում կապված ինչպես սննդի և ըմպելիքների, այնպես էլ մարմնի բարօրության համար և նաև վնասակարության վերաբերյալ: Եթե մենք անկեղծորեն հետևենք նրան, ինչ գրված է Տիրոջ Հոգու օգնությամբ, մենք կարիք չունենք հետագա խորհրդի: Այս սքանչելի հրահանգը պարունակում է հետևյալ խոստումը.

«Եվ բոլոր սրբերը, ովքեր հիշում են, որ պահեն և կատարեն այս ասածները, քայլելով պատվիրաններին հնազանդ, կունենան առողջություն իրենց պորտում և ծուծ՝ իրենց ոսկորներում.

Եվ կգտնեն իմաստություն և գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքնված գանձեր.

Եվ կվազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի» [ՎևՈ 89.18–20]:[12]

Միլիարդավոր դոլարներ են ծախսվում ամեն տարի թունավորումներ առաջացնող ալկոհոլայնին խմիչքների և ծխախոտի վրա: Հարբեցողությունը և աղտոտվածությունը, որոնք բերում են այս չարիքները մարդկային ընտանիքի վրա, վտանգավոր են, ոչ միայն առողջության համար, այլ մարդկության բարոյական և հոգևոր պաշտպանվածության համար:[13]

Ընտանիքները մասնատվում են արգելված թմրադեղերի օգտագործումից և չարգելված թմրադեղերի չարաշահումից:[14]

Տերը հայտնեց Իմաստության Խոսքը Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ օգնելու Սրբերին ստանալ ֆիզիկական և հոգևոր ուժ։

Մենք չպետք է լսենք գայթակղություններին և այն բաների ամբարիշտ գովազդներին, որոնք կործանարար են մարմնի համար և դատապարտվում են մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից, ի հակադրություն ավետարանի, որ նրանք տվել են մեզ։ . . .

Մեր մարմինները պետք է մաքուր լինեն։ Մեր մտածողությունը պետք է մաքուր լինի։ Մենք պետք է մեր սրտերում ունենանք ցանկություն՝ ծառայելու Տիրոջը և պահելու Նրա պատվիրանները, հիշելու մեր աղոթքները, և խոնարհաբար որոնելու խորհուրդներ, որոնք գալիս են Տիրոջ Հոգու առաջնորդության միջոցով։[15]

Հարգել Աստվածության անունը

Մենք պետք է կրենք Աստվածության անունը ամենասրբազան և հանդիսավոր ձևով։ Ոչ մի բան այնպես չի մտահոգում և

ցնցում քաղաքակիրթ մարդու զգացումներըինչ-որ, ինչպես մի անտաշ, անգրագետ կամ զարշելի արարածի կողմից Աստվածության անվան անհարգալից օգտագործում լսելը։Որոշ անձնավորություններ դարձել են այնքան անպարկեշտ, որ իրենց կարծիքով գրեթե անհնարին է խոսել մեկ կամ երկու նախադասություն առանց շեշտադրման՝ առանց հայհոյանքի գռեհիկ և անարգիչ խոսքերի։ Կան որոշ անձինք, ովքեր ևս, թվում է մտածում են. . . որ տղամարդու վարվելակերպ է և բարձրացնում է նրանց սովորական մարդկանց մակարդակից վեր, եթե նրանք օգտագործում են հայհոյանքի լեզուն. . . Ցանկացած աղտոտություն այլասերող է և հոգեկործան, որից Եկեղեցու բոլոր անդամները պետք է խուսափեն ինչպես մահացու թույնից։

Լավ պատմությունները հաճախ աղավաղվում են պարզապես այն պատճառով, որ հեղինակները չեն հասկանում սրբազան անունների օգտագործման պատշաճությունը։ Երբ անպատշաճ արտահայտություններ են դրվում հարգարժան կերպարների բերանում, պատմվածքը լավացնելու փոխարեն, դրանք կորցնում են իրենց արժեքը և հետաքրքրությունը. . . Որքան տարօրինակ է, որ որոշ մարդիկ, այդ թվում և լավ մարդիկ, մտածում են, որ Տիրոջ անունը ներառող որոշ արտահայտություններ օգտագործելը ավելացնում է հետաքրքրություն, սրամտություն կամ ուժ իրենց պատմություններին։ . . .

Երկրի վրայի բոլոր մյուս մարդկանցից վեր, Վերջին Օրերի Սրբերը պետք է պահեն ծայրահեղ սրբազանությամբ և ակնածանքով բոլոր բաները, որոնք սուրբ են։ Աշխարհի ժողովուրդը չի վարժեցվել, ինչպես մենք ենք վարժեցվել այդպիսի հարցերում, չնայած կան շատ ազնիվ, նվիրված և քաղաքակիրթ մարդիկ աշխարհում։ Բայց մենք ունենք Սուրբ Հոգու առաջնորդությունը և Տիրոջ հայտնությունները, իսկ Նա լրջորեն ուսուցանել է մեզ՝ մեր իսկ օրերում մեր պարտականությունը բոլոր այսպիսի բաների վերաբերյալ։[16]

Հազնվել համեստ և պահել մաքրաբարոյության օրենքը

Վերջին Օրերի Սրբերը չպետք է հետևեն աշխարհի նորաձևություններին և անհամեստությանը։ Մենք Տիրոջ ժողովուրդն ենք։ Նա ակնկալում է, որ մենք ապրենք մաքուր, անարատ և հավատարիմ մտքերով՝ հետևելով բոլոր Իր մյուս պատվիրաններին։

Ինչո՞ւ մենք պետք է հետևենք աշխարհին, ինչու մենք չենք կարող համեստ լինել, ինչո՞ւ չենք կարող համեստ լինել, ինչո՞ւ չենք կարող անել այն բաները, որոնք Տերն է տվել մեզ անել։[17]

Երբ քայլում եմ փողոցներով դեպի Եկեղեցու գրասենյակ և այնտեղից ետ, ես ճանապարհին տեսնում եմ ինչպես երիտասարդ, այնպես էլ մեծահասակ կանանց, նրանցից շատերը «Սիոնի դուստրեր» են, ովքեր անհամեստ են հագնված [տես Եսայիա Գ.16–24]։ Ես գիտակցում եմ, որ ժամանակներն ու նորաձևություններն իսկապես փոխվում են. . . [Բայց] համեստության և պատշաճավորության սկզբունքը դեռևս նույնն է. . . Եկեղեցու Գերագույն Իշխանավորների կողմից արտահայտված չափանիշներն այն են, որ կանայք, ինչպես նաև տղամարդիկ, պետք է համեստ հագնվեն։ Նրանց ուսուցանվում է պատշաճ պահելաձև և համեստություն բոլոր դեպքերում։

Իմ կարծիքով դա տխուր է անդրադառնում «Սիոնի դուստրերի» համար, երբ նրանք անհամեստ են հագնվում։ Բացի այդ, այս դիտողությունը վերաբերում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց։ Տերը տվել է պատվիրաններ հնադարյան Իսրայելին, որ ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, պետք է ծածկեն իրենց մարմինները և հետևեն մաքրաբարոյության օրենքին բոլոր ժամանակներում։

Ես աղերսանք եմ հղում համեստության և մաքրաբարոյության համար և Եկեղեցու բոլոր անդամների համար, ինչպես արական, այնպես էլ իգական, լինել պարկեշտ, մաքուր իրենց կյանքում և հնազանդ այն ուխտերին և պատվիրաններին, որոնք Տերը տվել է մեզ։ . . .

. . . Անհամեստ հագուստներ կրելը, որը կարող է թվալ փոքր հարց, հեռացնում է ինչ-որ բան Եկեղեցու մեր երիտասարդ կանանցից կամ երիտասարդ տղամարդկանցից։ Այն պարզապես ավելի դժվար է դարձնում պահել այդ հավերժական սկզբունքները, որոնցով մենք բոլորս պիտի ապրենք, եթե մենք պիտի վերադառնանք մեր Երկնային Հոր ներկայությունը։[18]

2

Հավատարիմներին խոստացված օրհնությունները շատ ավելի մեծ են, քան աշխարհի ժամանակավոր հաճույքները:

[Եկեղեցու մի անդամ մի անգամ ասաց], որ չէր կարողանում լիովին հասկանալ, երբ նա վճարում էր տասանորդը և պահում Իմաստության Խոսքը, աղոթքով լեցուն և փորձում լինել հնազանդ բոլոր պատվիրաններին, որոնք Տերը տվել էր իրեն և, այնուամենայնիվ, նա պետք է մաքառեր ապրուստ հայթայթելու համար, մինչդեռ իր հարևանը խախտում էր հանգստության օրը, ենթադրում եմ, որ նա ծխում էր և խմում, նա, ինչպես աշխարհը կասեր, լավ ժամանակ էր անցկացնում, նա ուշադրություն չէր դարձնում Հիսուս Քրիստոսի ավետարանին, բայց, այնուամենայնիվ, նա բարգավաճում էր:

Գիտեք, մենք ունենք մեծ քանակությամբ անդամներ Եկեղեցում, ովքեր մտածում են այդ մասին իրենց սրտերում և զարմանում, թե ինչու: Ինչո՞ւ այդ մարդը թվում է օրհնված երկրի բոլոր բարիքներով՝ հատկապես, վատ բաներից շատերով, որոնք նա կարծում է լավ են, սակայն Եկեղեցու այնքան շատ անդամներ մաքառում են, աշխատելով տքնաջանորեն՝ փորձելով իրենց ուղին բացել աշխարհում:

Պատասխանը մի պարզ բան է: Եթե ես երբեմն գնում եմ ֆուտբոլի խաղի կամ բասկետբոլի խաղի կամ որևէ այլ զվարճության վայր, ես կշրջապատվեմ տղամարդկանց և կանանց կողմից, ովքեր գլանակներ կամ սիգարներ կամ կեղտոտ ծխամորճեր են ծխում: Շատ ձանձրալի է դառնում և ես մի փոքր անհանգստանում եմ: Ես շրջվում եմ դեպի Քույր Սմիթը և նրան ինչ-որ բան ասում, իսկ նա ասում է. «Դեհ, այժմ գիտես, թե ինչ ուսուցանեցիր ինձ: Դու *նրանց* աշխարհում ես: Սա նրանց աշխարհն է»: Եվ դա ինձ ուշքի է բերում: Այո, մենք նրանց աշխարհում ենք, բայց մենք կարող ենք չլինել այդ աշխարհից:

Այսպիսով, եթե սա նրանց աշխարհն է, որտեղ մենք ապրում ենք, նրանք բարգավաճում են, բայց իմ լավ եղբայրներ և քույրեր, նրանց աշխարհը մոտենում է իր վախճանին: . . .

Կգա օրը, երբ մենք չենք ունենա *այս* աշխարհը: Այն կփոխվի: Մենք կստանանք ավելի լավ աշխարհ: Մենք կստանանք

այնպիսին, որն արդար է, որովհետև, երբ Քրիստոսը գա, նա կմաքրագործի աշխարհը:[19]

Եթե մենք ջանասիրաբար փնտրենք, միշտ աղոթենք, հավատանք և քայլենք ուղիղ, մենք ունենք Տիրոջ խոստումը, որ բոլոր բաները կաշխատեն միասին մեր բարու համար [տես ՎԱՈՒ 90.24]: Սա խոստում չէ, որ մենք ազատ կլինենք փորձություններից և կյանքի խնդիրներից, քանի որ այս փորձնական ժամանակը նախատեսված է մեզ փորձառություն տալու համար՝ և՛ դժվար, և՛ հակասական իրավիճակների մեջ:

Կյանքը երբեք նախատեսված չի եղել, որ հեշտ լինի, բայց Տերը խոստացել է, որ Նա բոլոր փորձություններն ու դժվարությունները կդարձնի մեր բարիքի համար: Նա կտա մեզ ուժ և ունակություն հաղթելու աշխարհը և ամուր կանգնելու հավատքում, չնայած ողջ ընդդիմությանը: Սա խոստում է, որ մենք կունենանք խաղաղություն մեր սրտերում, չնայած աշխարհի խառնաշփոթին ու անհանգստությանը: Եվ բացի այս բոլորից, սա խոստում է, որ երբ այս կյանքն ավարտվի, մենք կարժանանանք հավերժական խաղաղության Նրա ներկայության մեջ, ում երեսը մենք փնտրել ենք, ում օրենքները մենք պահել ենք և– ում մենք ընտրել ենք՝ ծառայելու:[20]

3

Երբ Աստծո արքայությանն առաջնահերթություն ենք տալիս մեր կյանքում, մենք գործում ենք որպես լույս աշխարհի համար և օրինակ ենք ծառայում, որ ուրիշները հետևեն:

Վերջին Օրերի Սրբերը սարի վրայի քաղաքի պես են, որը չի կարող թաքցվել և ճրագի պես են, որը լույս է տալիս որպես արդարակեցության օրինակ, ոչ միայն այն մադկանց, ում հետ մենք ապրում ենք, այլ ողջ երկրագնդի ժողովուրդներին [տես Մատթեոս Ե.14–16]:[21]

Մենք ցանկանում ենք տեսնել Սրբերին ամեն ազգում ավետարանի լիակատար օրհնությունները ստանալիս և որպես հոգևոր առաջնորդներ իրենց ազգերում կանգնելիս:[22]

Եղբայրներ և քույրեր, եկեք պահենք Աստծո պատվիրանները, ինչպես դրանք հայտնի են դարձվել: Եկեք օրինակ ծառայենք երկրի ժողովուրդների մեջ, որպեսզի նրանք տեսնելով մեր բարի

գործերը կարողանան ապաշխարել և ստանալ ճշմարտությունը և ընդունեն փրկության ծրագիրը, որպեսզի նրանք կարողանան ստանալ փրկություն Աստծո սելեստիալ արքայությունում:[23]

Ես աղոթում եմ, որ Սրբերն անսասան կանգնեն աշխարհի ճնշումների և գայթակղությունների դեմ, որպեսզի նրանք առաջինը դնեն իրենց կյանքում Աստծո արքայության բաները, որպեսզի նրանք հավատարիմ լինեն ամեն վստահության և պահեն ամեն ուխտ:

Ես աղոթում եմ երիտասարդների և աճող սերնդի համար, որ նրանք մաքուր պահեն իրենց մտքերն ու մարմինները՝ զերծ անբարոյականությունից, թմրադեղերի չարաշահումից, և ապստամբության ոգուց և օրինավորության արհամարհանքից, որը լցրել է երկիրը:

Մեր Հա՛յր, դուրս թափիր քո Հոգին Քո այս զավակների վրա, որ նրանք կարողանան պահպանվել աշխարհի չարիքներից և պահվեն մաքուր և անարատ, արժանի թեկնածուներ՝ վերադառնալու Քո ներկայություն և ապրելու Քո հետ:

Եվ թող Քո պահպանող խնամքը լինի բոլոր նրաց հետ, ովքեր փնտրում են Քո երեսը և ովքեր քայլում են Քո առաջին իրենց հոգիների շիտակությամբ, որպեսզի նրանք լույս լինեն աշխարհին, գործիք Քո ձեռքում՝ իրականացնելու Քո նպատակները երկրի վրա: [24]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Երբ կարդաք «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը, մտածեք այն մարտակոչերի մասին, որոնց երիտասարդ մարդիկ դիմակայում են այսօր, երբ նրանց ծնողները կամ մեծահասակ առաջնորդները նրանց հետ չեն: Ի՞նչ կարող եք անել օգնելու երիտասարդներին հավատարիմ մնալ այդպիսի իրավիճակներում:
- Որո՞նք են որոշ օրհնություններ, որոնք գալիս են մեզ, երբ պահում ենք 1 բաժնում նշված պատվիրանները:

- Ինչպե՞ս կարող եք օգտագործել 2–րդ բաժնի ուսմունքները՝ օգնելու ինչ-որ մեկին, որը շեղվել է աշխարհիկ բաներով: Ինչպե՞ս կարող ենք գտնել «խաղաղություն մեր սրտերում, չնայած աշխարհի խառնաշփոթին ու անհանգստությանը»:
- Ինչպե՞ս կարող է մեր օրինակն օգնել ուրիշներին հրաժարվել աշխարհիկ ուղիներից (տես բաժին 3): Ե՞րբ եք տեսել արդարակյաց օրինակի ուժը: Մտածեք այն մասին, թե ինչ կարող եք անել արդարակյաց օրինակ ծառայելու ձեր ընտանիքին և ուրիշներին:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս Զ.24, Մարկոս Ը.34–36, Հովհաննես ԺԴ.27, Փիլիպպեցիս Բ.14–15, Մորոնի 10.30, 32

Օգնություն ուսուցչին

«Դուք կարող եք սեր արտահայտել նրանց հանդեպ, ում ուսուցանում եք, նրանց ուշադիր լսելով և անկեղծորեն հետաքրքրվելով նրանց կյանքով: Քրիստոսանման սերն ունի ուժ՝ փափկացնելու սրտերը և օգնելու մարդկանց ընկալունակ լինել Հոգու շշունջներին» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* [1999], 46):

Հղումներ

1. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 287–88.
2. In Conference Report, Oct. 1955, 43–44.
3. In Conference Report, Apr. 1947, 60–61.
4. “Our Responsibilities as Priesthood Holders,” *Ensign,* June 1971, 50.
5. “President Joseph Fielding Smith Speaks to 14,000 Youth at Long Beach, California,” *New Era,* July 1971, 8.
6. In Conference Report, Apr. 1952, 27–28.
7. “The Pearl of Great Price,” *Utah Genealogical and Historical Magazine,* July 1930, 104.
8. “Our Responsibilities as Priesthood Holders,” 49–50.
9. “Our Responsibilities as Priesthood Holders,” 49–50.
10. In Conference Report, Apr. 1957, 60–61.
11. In Conference Report, Apr. 1927, 111.
12. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 1: 199.
13. “Be Ye Clean!” *Church News,* Oct. 2, 1943, 4; տես նաև *Doctrines of Salvation,* I d. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 3: 276.
14. In “Message from the First Presidency,” *Ensign,* Jan. 1971, 1.
15. In Conference Report, Oct. 1960, 51.
16. “The Spirit of Reverence and Worship,” *Improvement Era,* Sept. 1941, 525, 572; տես նաև *Doctrines of Salvation,* 1: 12–14.
17. “Teach Virtue and Modesty,” *Relief Society Magazine,* Jan. 1963, 6.
18. “My Dear Young Fellow Workers,” *New Era,* Jan. 1971, 5.

19. In Conference Report, Apr. 1952, 28.
20. "President Joseph Fielding Smith Speaks on the New MIA Theme," *New Era,* Sept. 1971, 40.
21. In Conference Report, Oct. 1930, 23.
22. In Conference Report, British Area General Conference 1971, 6.
23. In Conference Report, Apr. 1954, 28.
24. "A Witness and a Blessing," *Ensign,* June 1971, 110.

Սեր և մտահոգություն մեր Հոր բոլոր զավակների հանդեպ

«Կարծում եմ, եթե մարդիկ իմանային և հասկանային, թե ով են իրենք և տեղյակ լինեին աստվածային սկզբնաղբյուրին, որտեղից իրենք եկել են. . . նրանք կունենային բարության և ազգակցության զգացումներ միմյանց հանդեպ, որը կփոխեր նրանց ողջ կենսակերպը և կբերեր խաղաղություն երկրի վրա»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Ջոզեֆ Ֆիլդինգ կրտսերը և Ջոն Ջ. Ստյուարտը նկատել են. «Կյանքի հոգատար փոքր բաներում էր, որ իսկական Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը կարող էր ամենահստակորեն բացահայտվել»: Ապա նրանք կիսվեցին «հոգատար փոքր բաների» երեք օրինակով, որոնք նա արել էր.

«Մի օր եկեղեցու համաժողովի ժամանակ Տաճարային Հրապարակի վրայի Մորմոնական Թաբերնաքլում մի 12-ամյա տղա, հուզված լինելով առաջին անգամ այնտեղ լինելու առթիվ, վաղ էր եկել՝ հավաստիացած լինելու, որ տեղ կգբաղեցներ առջևի շարքում. . . Ժողովի սկսելուց հենց առաջ, և երբ բոլոր տեղերը զբաղեցվեցին, մի դռնապան խնդրեց տղային զիջել իր տեղը, որպեսզի ուշացումով ժամանող Միացյալ Նահանգների մի սենատոր տեղ ունենար: Տղան համեստորեն ենթարկվեց և կանգնեց շարքամիջյան միջանցքում, հիասթափված, նեղսրտված, արցունքոտված»: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը «նկատեց պատանուն և ձեռքով նշան արեց իր մոտ գալ [ամբիոնի վրա]: Երբ տղան պատմեց, թե ինչ էր պատահել, նա ասաց. «Այդ դռնապանն իրավունք չուներ այդպես վարվել քեզ



«Պետրոսն ասաց. Արծաթ եւ ոսկի չունիմ. Բայց ինչ-որ ունիմ, այն քեզ կտամ. Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունովը վեր կաց եւ ման եկ» (Գործք Գ.6):

հետ: Բայց ահա, նստիր կողքիս» և իր մոտ նստեցրեց նրան՝ Եկեղեցու առաքյալների մեջ:

Մի օր երբ նա հարցազրույց էր անցկացնում երիտասարդ տղամարդկանց մի խմբի հետ, ովքեր երկամյա միսիա պետք է ծառայեին Եկեղեցու համար, [նա] նկատեց մի ֆերմեր տղայի, որին հանձնարարվել էր ծառայել Կանադայի արևելքում. «Որդի, այնտեղ ցուրտ է: Դու ունե՞ս մի տաք լավ վերարկու: «Ո՛չ, պարոն, չունեմ: Նա տարավ տղային դիմացի մայթի խանութը և գնեց նրա համար այդ բաժնի ամենատաք վերարկուն:

«Այն օրը, երբ նա հաստատվեց համաժողովում որպես Եկեղեցու նախագահ, ժողովից հետո մի փոքրիկ աղջիկ մարդկանց ամբոխի միջով ճանապարհ բացելով հասավ նրան և բռնեց նրա ձեռքը: Նա այնքան հուզվեց այդ ժեստից, որ կռացավ և գրկեց երեխային: Նա իմացավ, որ նրա անունը Վենուս Հոբս էր. . . շուտով դառնալու էր չորս տարեկան: Իր ծննդյան օրը Վենուսը ստացավ անակնկալ հեռախոսային զանգ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը և նրա կինը միջքաղաքային զանգ էին կատարել, որ նրա համար երգեին «Ծնունդդ շնորհավոր» երգը»:[1]

Այս բարության գործերը հազվադեպ երևույթ չէին նրա համար, այլ կենսաձև: Նախագահ Սմիթը «մեծ գորովանքի և կարեկցանքի տեր մարդ էր: Նրա կյանքը կարիքավորներին օգնություն, սրտով կոտրվածներին մխիթարություն, մոլորվածներին խորհուրդ հասցնելու մեկը մյուսի ետևից կրկնվող դեպքերի շարան էր և օրինակ էր այն գթության, որը «Քրիստուսի մաքուր սերն է» [Մորոնի 7.47]:[2]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Գիտելիքով, որ Աստված բոլոր մարդկանց Հայրն է, մենք ցանկանում ենք սիրել և օրհնել ուրիշներին:

Կարծում եմ, եթե մարդիկ իմանային և հասկանային, թե ով են իրենք և տեղյակ լինեին աստվածային սկզբնաղբյուրին, որտեղից իրենք եկել են. . . նրանք կունենային բարության և ազգակցության զգացումներ միմյանց հանդեպ, որը կփոխեր նրանց ողջ կենսակերպը և կբերեր խաղաղություն երկրի վրա:

Մենք հավատում ենք մարդու արժանապատվությանը և աստվածային ծագմանը: Մեր հավատքը հիմնված է այն փաստի վրա, որ Աստված մեր Հայրն է, և որ մենք Նրա զավակներն ենք և որ բոլոր մարդիկ եղբայրներ և քույրեր են նույն հավերժական ընտանիքում:

Որպես իր ընտանիքի անդամներ՝ մենք բնակվել ենք Նրա հետ նախքան այս երկրի հիմնադրումը, և Նա կարգել և հաստատել է փրկության ծրագիրը, որի միջոցով մենք ձեռք բերեցինք զարգանալու և առաջադիմելու արտոնություն, որը մենք ջանում ենք անել:

Աստված, որին մենք պաշտում ենք, փառավորված Էակ է, որի մեջ բնակվում է ողջ զորությունն ու կատարելությունը, և Նա ստեղծել է մարդուն իր իսկ պատկերով և նմանությամբ, այն բնորոշ գծերով և հատկանիշներով, որոնցով Ինքն է օժտված:

Եվ այսպես մարդու արժանապատվության և ճակատագրի հանդեպ մեր հավատքը մեր աստվածաբանության և մեր կենսակերպի էական մասն է կազմում: Այն մեր Տիրոջ ուսմունքի հենց հիմքն է հանդիսանում, որ «առաջին եւ մեծ պատվիրանքն է». «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը»: Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս» (տես Մատ. ԻԲ.37–39):

Քանի որ Աստված մեր Հայրն է, մենք բնական ցանկություն ունենք սիրել և ծառայել Նրան և լինել Նրա ընտանիքի արժանի անդամներ: Մենք պարտավորություն ենք զգում անելու այն, ինչ Նա կկամենար, որ մենք անենք, պահելով Նրա պատվիրանները և ապրելով ներդաշնակության մեջ Նրա ավետարանի չափանիշների հետ, որոնցից բոլորը ճշմարիտ երկրպագության հիմնական տարրերն են:

Եվ քանի որ բոլոր մարդիկ մեր եղբայրներն են, մենք ցանկություն ունենք սիրել և օրհնել ու ընկերակցել նրանց և սա նույնպես մենք ընդունում ենք որպես ճշմարիտ երկրպագության հիմնական տարր:

Այսպիսով, այն ամենը, ինչ մենք անում ենք Եկեղեցում, կենտրոնացած է աստվածային օրենքի շուրջ, որ մենք պետք է սիրենք և երկրպագենք Աստծուն և ծառայենք մեր մերձավորներին:

Զարմանալի չէ այդ դեպքում, որ որպես եկեղեցի և որպես ժողովուրդ՝ մենք ունենք խորը և մշտական մտահոգություն մեր Հոր բոլոր զավակների բարօրության համար: Մենք ձգտում ենք մեր սեփականի հետ նրանց ֆիզիկական և հոգևոր բարօրությանը: Մենք աղոթում ենք նրանց համար, ինչպես անում ենք մեզ համար և մենք ձգտում ենք այնպես ապրել, որ նրանք տեսնելով մեր բարի գործերը, առաջնորդվեն փառաբանելու մեր Հորը, որ երկնքում է [տես Մատթեոս Ե.16]:[3]

2

Երբ մենք սիրում ենք և աջակցում միմյանց Եկեղեցում, մենք դառնում ենք ուժ աշխարհում բարու համար:

«Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանքները պահեցեք» (Հովհաննես ԺԴ.15):

Այս խոսքերն ուղղված էին Վարդապետի կողմից Իր աշակերտներին Իր մահից ընդամենը մի քանի ժամ առաջ, երբ Նա հավաքել էր նրանց՝ միասին ուտելու զատիկը և նրանց նաև տալու վերջնական հրահանգ նախքան նա կտառապեր աշխարհի մեղքերի համար: Այդ նույն առիթով և այս դիտողությունները տալուց ոչ շատ անց, Նա անդրադարձավ նույն թեմային, երբ Նա ասաց.

«Որդեակք, տակաւին մի քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ. Ինձ կորոնէք, եւ ինչպէս Հրեաներին ասեցի, թէ որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ. և հիմա էլ ձեզ եմ ասում: Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք» [Հովհաննես ԺԳ.33–34] . . .

. . .Մենք պարզապես ըկերներ չենք, մենք եղբայրներ և քույրեր ենք, Աստծո զավակներ, ովքեր դուրս են եկել աշխարհից, ինչպես ասացի. մտնելու ուխտի մեջ, հետևելու Նրա օրենքներին և մնալու բոլոր բաներում, որոնք մեզ են տրվել ոգեշնչմամբ: Մեզ պատվիրված է որ իրար սիրենք: Տիրոջ խոսքերով, այն «Նոր պատվիրանք» է և, այնուամենայնիվ, շատ ուրիշ պատվիրանների նման, այն նույնքան հին է, որքան հավերժությունը: Չի եղել ժամանակ, երբ այդ պատվիրանը գոյություն չի ունեցել, և որ այն կարևոր չի եղել փրկության համար և, այնուամենայնիվ, այն միշտ նոր է: Այն երբեք չի հնանում, որովհետև այն ճշմարիտ է:[4]

Հավատում եմ, որ մեր հանդիսավոր պարտականությունն է սիրել միմյանց, վստահել միմյանց, հավատք ունենալ միմյանց հանդեպ, որ մեր պարտականությունն է անտեսել միմյանց սխալներն ու թերությունները և դրանք չմեծացնել մեր իսկ աչքում ոչ էլ աշխարհի աչքում: Չպետք է լինի մեղք գտնել, ոչ էլ ետևից խայթել, ոչ էլ չարախոսել միմյանց դեմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Մենք պետք է հավատարիմ լինենք միմյանց և մեր կրոնի յուրաքանչյուր սկզբունքի և չլինենք նախանձ միմյանց հանդեպ: Մենք չպետք է խանդենք միմյանց, ոչ էլ բարկանանք միմյանց վրա և մեր սրտերում չպետք է լինի այնպիսի զգացում, որ չպետք է ներենք միմյանց մեր զանցանքները: Աստծո զավակների սրտերում չպետք է լինի որևէ աններողամտություն որևէ մարդու հանդեպ, նշանակություն չունի թե ով կարող է նա լինել: . . .

. . . Մենք չպետք է միմյանց դեմ զգացումներ պահենք, այլ պետք է ունենանք ներողամտության և եղբայրական սիրո և քույրական սիրո զգացումներ միմյանց հանդեպ: Թող ամեն մեկը հիշի իր իսկ անձնական ձախողումները և թուլությունները և ջանա ուղղել դրանք: Մենք դեռ չենք հասել կատարելության մի վիճակի, դժվար է ակնկալել դա այս կյանքում, բայց, այնուամենայնիվ, Սուրբ Հոգու օգնության միջոցով, մեզ համար հնարավոր է միասին միավորված կանգնել դեմ հանդիման՝ տեսնելով և հաղթահարելով մեր մեղքերն ու թերությունները: Եթե մենք անենք այս, հարգելով Տիրոջ բոլոր պատվիրանները, մենք կլինենք ուժ աշխարհում՝ բարու համար, մենք կջախջախենք և կհաղթահարենք ամեն չարիք, ճշմարտության դեմ ամեն ընդդիմություն և կիրականացնենք արդարակեցություն երկրի երեսին: Քանզի ավետարանը կտարածվի և աշխարհում մարդիկ կզգան ազդեցությունը, որը կհեղվի Սիոնի ժողովրդից և նրանք ավելի հակված կլինեն ապաշխարել իրենց մեղքերից և ընդունել ճշմարտությունը:[5]

3

Մենք արտահայտում ենք մեր սերը մեր մերձավորների հանդեպ՝ ծառայելով նրանց:

Մեր Փրկիչը եկավ աշխարհ՝ ուսուցանելու մեզ սեր միմյանց հանդեպ, և երբ այդ մեծ դասը ցույց տրվեց նրա մեծ տառապանքով և մահով, որ մենք ապրենք, միթե՞ մենք չպետք է

Երբ մենք օգնության ձեռք ենք մեկնում ուրիշներին, մենք ցույց ենք տալիս մեր սերը նրանց հանդեպ։

արտահայտենք մեր սերը մեր մերձավորներին նրանց ծառայություն մատուցելով։

Ծառայություն պետք է մատուցվի մյուսներին։ Մենք պետք է ձեռք մեկնենք դժբախտներին, նրանց, ովքեր չեն լսել ճշմարտությունը և հոգևոր խավարում են գտնվում, կարիքավորին, ճնշվածին։ Միթե՞ դուք ձախողվում եք։ Եկեք մտածենք բանաստեղծ Վիլլ Լ. Թոմփսոնի խոսքերի մասին. . . Բանաստեղծությունը սկսվում է այս ձևով.

«Գործե՞լ եմ արդյոք որևէ բարիք աշխարհում,
Արդյոք օգնե՞լ եմ կարիքավորին
Արդյոք մխիթարե՞լ եմ տրտմածին,
Եվ ինչ-որ մեկին ուրախացրել,
Եթե ոչ, թերացել եմ իսկապես»։ [*Hymns*, no. 223][6]

Մեր առաքելությունը ողջ աշխարհին է ուղղված՝ խաղաղության համար, հույսի և երջանկության համար և մեր Հոր բոլոր զավակների ֆիզիկական ու հավերժական փրկության համար. . . Համոզելու իմ ողջ զորությամբ ես հորդորում եմ այս ժողովրդին շարունակել օգնության հասնել և օրհնել մեր Հոր բոլոր զավակներին ամենուրեք։[7]

4

Մենք պետք է գնահատենք և սիրենք մարդկանց ինչպես որ կան:

Երբ ես պատանի էի, մենք մի ձի ունեինք, որի անունը Ջունի էր: Նա իմ տեսած ամենախելացի կենդանիներից մեկն էր: Նա գրեթե մարդու պես խելացի էր թվում: Ես չէի կարողանում նրան փակված պահել իր գոմում, որովհետև նա անընդհատ բացում էր իր ախոռի դռան կաշեփոկը: Ես, սովորաբար, կաշեփոկը դնում էի կիսափեղկ դռան սյունից վեր, բայց նա ուղղակի բարձրացնում էր այն իր քթով և ատամներով և ապա դուրս գալիս բակ:

Բակում մենք ջրի ծորակ ունեինք և օգտագործում էինք այն՝ կենդանիների համար տաշտակը ջրով լցնելու նպատակով: Ջունին այն շրջում էր իր ատամներով և թողնում, որ ջուրը հոսեր: Հայրս դժգոհ էր ինձանից, որովհետև ես չէի կարողանում այդ ձիուն պահել ախոռում: Նա երբեք չէր փախչում, ուղղակի միացնում էր ջուրը, իսկ հետո բակով կամ մարգագետնում կամ էլ պարտեզում քայլում: Գիշերվա կեսին ես լսում էի ջրի հոսքի ձայնը և այդ ժամանակ ստիպված վեր էի կենում և փակում ծորակը և նորից Ջունիին փակում:

Հայրս մի միտք արտահայտեց, որ ձին կարծես ավելի խելացի է, քան ես: Մի օր նա որոշեց, որ ինքը փակեր նրան այնպես, որ նա չկարողանար դուրս գալ: Նա վերցրեց կաշեփոկը, որը սովորաբար կախված էր լինում սյան գագաթից և փաթաթեց սյունին և վանդակաճաղերի տակից, իսկ հետո ասաց. «Օրիորդ, հիմա տեսնենք ոնց ես դուրս գալու»: Հայրս և ես հեռացանք ախոռից և սկսեցինք քայլել ետ՝ դեպի տուն և նախքան մենք տուն կհասնեինք, Ջունին հայտնվեց մեր կողքին: Ապա նա գնաց և ջուրը կրկին միացրեց:

Այս անգամ ես ասացի, որ նա գրեթե այնքան խելացի է, որքան մենք երկուսով: Մենք ուղղակի չէինք կարողանում Ջունիին պահել ախոռից դուրս գալուց: Բայց դա չէր նշանակում, որ նա վատն էր, որովհետև նա վատը չէր: Հայրիկը չէր պատրաստվում վաճառել նրան կամ փոխանակել, որովհետև նա ուրիշ այնքան շատ լավ հատկանիշներ ուներ, որոնք նրա այս մեկ թերությունը դարձնում էին աննշան:

Ձին վստահելի էր և հուսալի մեր երկանիվ կառքը քաշելիս, ինչպես որ հմտացած էր ախոռից դուրս գալու մեջ: Եվ սա կարևոր էր, որովհետև մայրս արտոնագրված մանկաբարձուհի էր: Երբ նրան կանչում էին երեխայի ծննդաբերության ինչ-որ տեղ հովտում, սովորաբար, գիշերվա կեսին, ես ստիպված էի վեր կենալ, ճրագը գոմ տանել և Ջունիին կառքին լծել:

Ես ընդամենը մոտ տասը կամ տասնմեկ տարեկան էի այդ ժամանակ և այդ ձին պետք է հնազանդ լիներ, բայց, այնուամենայնիվ, բավականաչափ ուժեղ լիներ՝ ինձ և մայրիկիս տանելու ողջ հովտով մեկ, ամեն տեսակի եղանակի: Սակայն մեկ բան, որ ես երբեք չէի կարողանում հասկանալ, այն էր, թե ինչու երեխաների մեծ մասը կեսգիշերին էին ծնվում և նրանցից այնքան շատերը՝ ձմռանը:

Հաճախ ես մայրիկիս սպասում էի կառքում, իսկ այդ ժամանակ հաճելի էր ունենալ ծեր Ջունիի ընկերակցությունը: Այս ձիու հետ ունեցած իմ փորձառությունը շատ լավ էր ինձ համար, որովհետև կյանքի վաղ շրջանում ես ստիպված էի սովորել սիրել և գնահատել նրան ինչպիսին որ նա կար: Նա հիանալի ձի էր՝ ընդամենը մի քանի վատ սովորույթներով: Մարդիկ շատ բաներում նույնն են: Մեզանից ոչ ոք կատարյալ չէ, սակայն մեզանից յուրաքանչյուրը փորձում է դառնալ կատարյալ, նույնիսկ ինչպես մեր Հայրը, որ երկնքում է: Մենք պետք է գնահատենք և սիրենք մարդկանց, ինչպիսին նրանք կան:

Երևի դուք պետք է հիշեք այս, երբ գնահատում եք ձեր ծնողներին կամ ուսուցիչներին կամ էլ ծխի և ցցի առաջնորդներին կամ ընկերներին կամ էլ եղբայրներին և քույրերին: Այս դասը միշտ մնացել է ինձ հետ՝ մարդկանց մեջ տեսնել լավը, չնայած մենք փորձում ենք օգնել նրանց հաղթահարել մեկ կամ երկու վատ սովորույթներ: . . .

Ես վաղ սովորեցի կյանքում սիրել և չդատել ուրիշներին, փորձելով միշտ հաղթահարել իմ սեփական սխալները:[8]

5

Երբ մենք սիրում ենք Տիրոջը ողջ մեր սրտով և մեր մերձավորին ինչպես մեզ, մենք ներդաշնակության մեջ ենք լինում ողջ սրբազան օրենքի հետ:

«Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը» (Մատթեոս ԻԲ.37):

«Սա է առաջին և մեծ պատվիրանը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս:

Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրենքը եւ մարգարէքը» (Մատթեոս ԻԲ.37–40):

Այլ խոսքով ասած, բոլորը ինչ հայտնի է դարձվել մարդու փրկության համար ի սկզբանե՝ մինչև մեր իսկ ժամանակը, պայմանավորված է, ներառում է և այս երկու մեծ օրենքների մաս կազմում: Եթե մենք սիրում ենք Տիրոջը ողջ սրտով, ողջ հոգով և ողջ մտքով և մեր մերձավորներին, ինչպես մեզ, ապա չկա ցանկանալու որևէ այլ բան: Այդ ժամանակ մենք ներդաշնակության մեջ կլինենք ողջ սրբազան օրենքի հետ: Եթե մենք հոժար լինենք ապրել այս երկու պատվիրանների հետ ներդաշնակության մեջ և անենք այդպես, ի վերջո, եթե մենք արժանի լինենք ապրելու Աստծո ներկայության մեջ, ապա ամբարշտությունը, նախանձը, փառասիրությունը, ցանկասիրությունը, արյունահեղությունը և ամեն ձևի բոլոր մեղքերը կվերանան երկրի վրայից: Այն ժամանակ կգա հավերժական խաղաղության և երջանկության մի օր: Ինչպիսի փառահեղ օր կլինի դա: Մենք օժտված ենք բավականաչափ խելքով՝ իմանալու, որ այդպիսի վիճակը ամենաերանելին է և այն կհաստատի մարդկանց մեջ Աստծո Հայրությունը և մարդկանց կատարյալ եղբայրությունը:

Կարող ենք ասել, որ մենք սիրում ենք Տիրոջը ողջ մեր հոգով: Կարո՞ղ ենք ասել, որ մենք այնքան մտահոգված ենք մեր մերձավորի համար, որքան մեր սեփական անձի համար:[9]

Եկեք սիրենք Տիրոջը, քանզի սա է հիմքը բոլոր բաների: Սա առաջին պատվիրանն է և երկրորդ պատվիրանը՝ սիրել մեր մերձավորին ինչպես մեզ, նման է դրան, և երբ մենք դա անենք, կատարած կլինենք օրենքը, որովհետև չկա ոչինչ, որն անկատար թողնվի:[10]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Մտածեք «հոգատար փոքր բաների» մասին, որոնք Նախագահ Ֆիլդինգ Սմիթն անում էր ուրիշների համար (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։ Ի՞նչ կարող ենք անել մենք հաստատելու նմանատիպ բարության ձևեր մեր կյանքում։
- Ինչպե՞ս կարող են բաժին 1-ի վարդապետություններն օգնել մեզ բարի լինել և սիրալիր մեր շրջապատի մարդկանց համար։
- Ի՞նչն է տպավորություն գործում ձեզ վրա Նախագահ Սմիթի խորհրդում բաժին 2-ում։ Ինչո՞ւ եք կարծում որ մենք «ուժ կլինենք աշխարհում բարու համար», երբ մենք հետևենք այս խորհրդին։
- Ի՞նչ արեց Հիսուս Քրիստոսը «ուսուցանելու մեզ սեր միմյանց հանդեպ» (տես բաժին 3)։ Ինչպե՞ս կարող ենք հետևել Նրա օրինակին։
- Վերանայեք պատմությունը Ջունի ձիու մասին (տես բաժին 4)։ Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է «գնահատել և սիրել մարդկանց ինչպիսին որ կան»։ Ի՞նչ կարող ենք անել՝ տեսնելու բարին ուրիշների մեջ, եթե նույնիսկ փորձում ենք օգնել նրանց հաղթահարել վատ սովորույթները։
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար պահել պատվիրանները Մատթեոս ԻԲ.37–40 հատվածներում (տես մի քանի օրինակներ բաժին 5-ում)։ Ինչո՞ւ մենք «ներդաշնակության մեջ կլինենք ողջ սրբազան օրենքի հետ» երբ պահենք այս պատվիրանները։

Առնչվող սուրբ գրություններ

Գործք ԺԷ.28–29, Հռովմեացիս Ը.16–17, Ա Հովհաննես Դ.18–21, Մոսիա 2.17, 18.8–10, Մորոնի 7.45–48

Օգնություն ուսուցչին

Մտածեք գլխի ենթավերնագրերը կարդալու համար մասնակիցներին հրավիրելու մասին և ընտրելու մի բաժին, որը խորհմաստ է նրանց կամ իրենց ընտանիքի համար։ Հրավիրեք

նրանց ուսումնասիրել Նախագահ Սմիթի ուսմունքներն այդ բաժնում, ներառյալ համապատասխան հարցերը գլխի վերջում: Ապա խնդրեք դասարանի անդամներին կիսվել նրանով, ինչ սովորել են:

Հղումներ

1. In Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 10–11.
2. S. Perry Lee, "Church Expresses Devotions to President Smith," *Church News,* July 14, 1956, 2.
3. In Conference Report, Apr. 1970, 4–5.
4. In Conference Report, Oct. 1920, 53–55.
5. In Conference Report, Apr. 1915, 119–20.
6. In Conference Report, Apr. 1968, 12.
7. In Conference Report, Apr. 1970, 4.
8. "My Dear Young Fellow Workers," *New Era,* Jan. 1971, 4–5.
9. In Conference Report, Apr. 1943, 12.
10. In Conference Report, Oct. 1920, 59.

Ավետարանը աշխարհին քարոզելը

«Մենք ճաշակել ենք ավետարանի պտուղները և գիտենք, որ դրանք բարի են, և մենք ցանկանում ենք, որ բոլոր մարդիկ ստանան նույն օրհնությունները և նույն հոգին, որն այնքան առատորեն թափվել է մեզ վրա»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը և նրա կինը՝ Լյուին, չզարմացան, երբ մի նամակ ստացան, որը ստորագրված էր Նախագահ Լորենզո Սնոուի կողմից, կանչելով Ջոզեֆին ծառայելու որպես լիաժամկետ միսիոներ: Եկեղեցու այդ վաղ օրերին ամուսնացած տղամարդիկ հաճախ էին ծառայում տնից հեռու: Այսպիսով, երբ այդ նամակը ժամանեց 1899թ. մարտի 17-ին իրենց հարսանեկան առաջին տարեդարձից մոտ մեկ ամիս առաջ, Ջոզեֆը և Լյուին ընդունեցին հնարավորությունը հավատքով և քաջությամբ, միախառնված տխրության հետ՝ այն մտքից, որ առանձնացած էին լինելու երկու տարի:

Երեց Սմիթը ծառայեց Անգլիայում մոտ 4,700 մղոն (մոտ 7,600 կիլոմետր) տնից հեռու: Նա և Լյուին հաճախ էին միմյանց նամակներ ուղարկում՝ նամակներ, որոնք լցված էին սիրո և վկայության արտահայտություններով: Երեց Սմիթը իր առաջին նամակներից մեկում գրել է. «Ես գիտեմ, որ այն աշխատանքը, որին ես կանչվել եմ կատարելու, Աստծո աշխատանքն է, այլապես ես չէի մնա այստեղ մեկ րոպե իսկ, ոչ, ես չէի թողնի տունը: Բայց ես գիտեմ, որ մեր երջանկությունը կախված է իմ հավատարմությունից, երբ ես այստեղ եմ: Ես պետք է հոժար լինեմ անելու այսքանը մարդկության հանդեպ սիրուց, մինչդեռ մեր Փրկիչը տառապեց, երբ Նա արեց դա մեզ համար. . . Ես

Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը 1910 թվականին,
Առաքյալ կարգվելուց ոչ շատ անց։

մեր Երկնային Հոր ձեռքում եմ, և Նա կհսկի ինձ ու կպահպանի, եթե ես կատարեմ Նրա կամքը: Եվ Նա կլինի քեզ հետ, երբ ես հեռու եմ և կհսկի քեզ և կպահպանի քեզ բոլոր բաներում»:[1]

Երեց Սմիթն ու նրա միսիոներ զուգընկերները Տիրոջ նվիրված ծառաներն էին: Լյուիին ուղղված մի նամակում, նա հաղորդել է, որ ամեն ամիս, նա և մյուս միսիոներները բաժանում էին 10,000 գրքույկներ կամ բրոշուրներ և այցելում մոտ 4,000 տուն: Սակայն, այս տեղեկությունից հետո գրել է մի զուսպ դիտարկում.«Ես չեմ հավատում, որ յուրաքանչյուր հարյուրից մեկ կամ մեկից ավելի գրքույկ կարդացվի»:[2] Երեց Սմիթի Անգլիայում եղած ժամանակաընթացքում, այնտեղ շատ քչերը ժողովրդից ընդունեցին ավետարանի վերականգման ուղերձը: Իր երկու տարիների ծառայության ընթացքում «նա մեկին էլ դարձի չբերեց, չունեցավ հնարավորություն կատարելու մեկ իսկ մկրտություն, չնայած նա հաստատեց մի նորադարձի»:[3] Չկարողանալով տեսնել իր աշխատանքների արդյունքերը, նա հանգստություն գտավ իմանալով, որ նա կատարում էր Տիրոջ կամքը և որ օգնում էր մարդկանց նախապատրաստվել, ովքեր ավելի ուշ իրենց կյանքում գուցե ընդունեին ավետարանը:

Իր միսիայի մոտ երկու շաբաթը Երեց Սմիթը մեկուսացված էր հիվանդանոցում չորս ուրիշ միսիոներների հետ: Հինգ երեցները վարակվել էին ծաղիկ հիվանդությամբ, այսպիսով նրանք մեկուսացվել էին՝ այդ հիվանդությունը տարածվելուց կանխարգելելու համար: Չնայած Երեց Սմիթը վերաբերում էր իրենց այնտեղ մնալուն որպես «բանտարկության», նա և նրա զուգընկերներն այն դաձրեցին միսիոներական լավագույն աշխատանք: Նրանք ավետարանով կիսվեցին նույնիսկ հիվանդանոցի աշխատակազմի հետ: Մեկուսացման վերջում Երեց Սմիթը գրեց հետևյալ տեղեկությունն իր օրագրում. «Մենք ընկերացել ենք բուժքույրերի և մյուսների հետ, ովքեր այցելում էին մեզ մեր բանտարկության ժամանակ: Շատ անգամներ մենք խոսել ենք նրանց հետ ավետարանի մասին, նրանց համար նաև կարդալու գրքեր ենք թողել: Երբ մենք թողեցինք հիվանդանոցը մենք մեկ կամ երկու օրհներգ երգեցինք, որոնք մյուս բաների հետ տպավորություն գործեցին նրանց վրա, ովքեր լսում էին, քանի որ մենք թողեցինք նրանց արցունքներով լցված աչքերով: Կարծում եմ մենք հիվանդանոցում լավ տպավորություն թողեցինք,

հատկապես բուժքույրերի վրա, ովքեր խոստովանեցին, որ մենք այն մարդիկ չենք, ինչ իրենք կարծում էին, և [որ] նրանք այժմ ամեն անգամ մեզ պաշտպանելու էին։[4]

Երեց Սմիթը ավարտեց իր միսիան 1901թ. հունիսին։ Յոթանասուն տարի անց, նա վերադարձավ Անգլիա որպես Եկեղեցու Նախագահ՝ նախագահելու տարածաշրջանի համաժողովում։ Մինչև այդ ժամանակը, այն սերմերը, որոնք նա և մյուսները ցանել էին, աճել էին և ծաղկել։ Նա ուրախանում էր տեսնելով այդքան շատ Բրիտանացի Սրբերի ժողովների հաճախելիս։[5] Նա ասաց. «Սիոնի մի քանի ցցեր, Տիրոջ նվիրագործած մի տաճար, մեծ թվով ծխի և ցցի շենքեր և շատ հաջող միսիոներական աշխատանքը՝ բոլորը վկայում են այն փաստի մասին, որ Եկեղեցին հասունանում է Մեծ Բրիտանիայում»։ Եվ նա ասաց, որ այս առաջընթացը Մեծ Բրիտանիայում օրինակ էր այն բանի, ինչ պիտի պատահեր ողջ աշխարհում։ Նա հայտարարեց, որ ավետարանը բոլոր մարդկանց համար է և որ «Եկեղեցին կհաստատվի ամենուրեք, բոլոր ազգերի մեջ, նույնիսկ մինչև երկրի ծայրերը, նախքան Մարդու Որդու երկրորդ գալուստը»։[6]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Միայն մենք ունենք վերականգված ավետարանի լրիվությունը և մենք ցանկանում ենք, որ բոլոր մարդիկ ստանան նույն օրհնությունը։

Իր անսահման իմաստությամբ, և որպեսզի իրականացնի հնադարյան մարգարեներին տրված ուխտերն ու խոստումները, Տերը վերականգնել է այս վերջին օրերում Իր հավիտենական ավետարանի լրիվությունը։ Այս ավետարանը փրկագնման ծրագիրն է։ Այն կարգված է և հաստատված հավերժության խորհուրդներում նախքան այս երկրի հիմնադրումը և այն վերստին հայտնի է դարձվել մեր օրերում մեր Հոր զավակների փրկության և օրհնության համար ամենուրեք։ . . .

Մոտավորապես վեց հարյուր տարի նախքան Քրիստոսը, այսինքն՝ Նրա գալուստը, մեծ մարգարե Նեփին ասել է իր ժողովրդին. «. . .կա մեկ Աստված և մեկ Հովիվ ողջ աշխարհի վրա։

Եվ կգա ժամանակը, որ նա հայտնի կդարձնի իրեն բոլոր ազգերին . . .» (1 Նեփի13.41–42)։

Այդ խոստացված օրն այժմ բացվում է։ Սա է ավետարանը քարոզելու նշանակված ժամանակը ողջ աշխարհում և յուրաքանչյուր ազգում՝ Տիրոջ թագավորությունը կառուցելու համար։ Կան բարի և ուղղամիտ մարդիկ բոլոր ազգերում, ովքեր կարձագանքեն ճշմարտությանը, ովքեր կգան Եկեղեցի և ովքեր կդառնան լույս առաջնորդելու իրենց սեփական ժողովրդին։ . . .

. . . Ավետարանը բոլոր մարդկանց համար է, և Տերը սպասում է նրանցից, ովքեր կընդունեն այն՝ ապրել դրա ճշմարտություններով և առաջարկել դրանք նրանց, ովքեր իրենց իսկ ազգից և լեզվից են։

Եվ այսպիսով, այժմ սիրո և եղբայրության ոգով, մենք հրավիրում ենք բոլոր մարդկանց ամենուրեք ուշադրություն դարձնել հավերժական կյանքի խոսքերին, որոնք հայտնի են դարձվել այս օրերում Մարգարե Ջոզեֆ Սմիթի և նրա գործակիցների կողմից։

Մենք հրավիրում ենք մեր Հոր մյուս զավակներին. «եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից» (Մորոնի 10.32)։

Մենք հրավիրում ենք նրանց հավատալ Քրիստոսին և Նրա ավետարանին, գալ Նրա եկեղեցին և լինել մեկ Իր սրբերի հետ։

Մենք ճաշակել ենք ավետարանի պտուղները և գիտենք, որ դրանք բարի են, և մենք ցանկանում ենք, որ բոլոր մարդիկ ստանան նույն օրհնությունները և նույն հոգին, որն այնքան առատորեն թափվել է մեզ վրա։[7]

Ես հասկանում եմ, որ կան լավ և նվիրված մարդիկ բոլոր կրոնների, խմբերի և դավանանքների մեջ և նրանք կօրհնվեն և վարձք ունեն այն բոլոր բարիքի համար, որ նրանք անում են։ Բայց փաստը մնում է, որ միայն մենք ունենք այն օրենքների և արարողությունների լրիվությունը, որոնք նախապատրաստում են մարդկանց վերին ապարանքներում պարգևատրության լրիվության համար։ Եվ այսպիսով, մենք ասում ենք բարի և ազնիվ, ուղղամիտ և նվիրված մարդկանց ամենուրեք. Պահեք այն լավը,

որ ունեք, կառչեք ամեն մի ճշմարիտ սկզբունքից, որը ձերն է այժմ, բայց եկեք և ճաշակեք ավելի շատ լույս և գիտելիք, որն Աստված, ով նույնն է երեկ, այսօր և հավիտյան, կրկին դուրս է թափում իր ժողովրդի վրա։[8]

Ես աղոթում եմ, որ Տիրոջ նպատակները երկրի վրա, ինչպես Եկեղեցու ներսում, այնպես էլ դրսում, արագ իրականանան, որ Նա օրհնի իր հավատարիմ Սրբերին, և որ մարդկանց բազմությունների սրտերը, ովքեր ձգտում են ճշմարտության և որոնց սրտերը ուղիղ են Տիրոջ առջև կարողանան վերականգված ավետարանի օրհնությունների լրիվության ժառանգներ դառնալ մեզ հետ։[9]

2

Բոլոր Եկեղեցու անդամները պարտականություն ունեն օգտագործել իրենց ուժը, էներգիան, միջոցները և ազդեցությունը հրապարակելու ավետարանը։

Մենք լսել ենք, որ բոլորս միսիոներներ ենք. . . Մենք բոլորս ի սպաս ենք դրվել, բայց ոչ ձեռնադրմամբ, մենք հատուկ կոչում չենք ստացել. մենք անհատապես չենք առանձնացվել միսիոներական աշխատանք կատարելու, բայց որպես Եկեղեցու անդամներ, պարտավորվելով նվիրվել Հիսուս Քրիստոսի ավետարանի առաջընթացին, մենք դառնում ենք միսիոներներ։ Դա Եկեղեցու յուրաքանչյուր անդամի պարտականության մասն է կազմում։[10]

Բոլոր մարդկանց հանդեպ սիրով լի սրտով ես խնդրում եմ Եկեղեցու անդամներին սովորել և ապրել ավետարանով և օգտագործել իրենց ուժը, էներգիան և միջոցները՝ այն հրապարակելու աշխարհում։ Մենք հրաման ենք ստացել Տիրոջից։ Նա մեզ տվել է աստվածային հանձնարարություն։ Նա մեզ պատվիրել է առաջ գնալ անխոնջ ջանասիրությամբ և առաջարկել իր մյուս զավակներին այդ փրկարար ճշմարտությունները, որոնք հայտնի են դարձվել Մարգարե Ջոզեֆ Սմիթին։[11]

Մեր առաքելությունն է, այնքան շատ, որքան մեզ համար հնարավոր է, վերածնել, բերել ապաշխարության, մեր Երկնային Հոր զավակներից այնքան շատերին, որքան հնարավոր է մեզ համար անել դա։ Դա պարտավորություն է, որը Տերը դրել է Եկեղեցու վրա և հատկապես Եկեղեցու քահանայության

«Յուրաքանչյուր անձ, ով ավետարանի լույսն է ստանում, դառնում է լույս և ուղեցույց բոլորին, ում նա կարողանում է ուսուցանել»:

քվորումների վրա և, այնուամենայնիվ, այս պարտականությունը պատկանում է ամեն հոգու:[12]

Մեր մեջ կան մեծ թվով ազնիվ հոգիներ, ովքեր երբեք չեն ընդունել հնարավորությունը կամ երբեք նեղություն չեն քաշել հետազոտելու, որ գտնեն այս փառահեղ ճշմարտությունները, որոնք հայտնի են դարձվել Տիրոջ հայտնություններում: Նրանք չեն մտածում այս բաների մասին, նրանք ապրում են մեր մեջ, մենք ընկերակցում ենք նրանց, և ամեն օր շփվում ենք նրանց հետ: Նրանք մտածում են, որ մենք հրաշալի մարդկանց խումբ ենք, բայց տարօրինակ կրոնական տեսակետներ ունենք և այդ պատճառով նրանք ուշադրություն չեն դարձնում մեր հավատքին և այդ պատճառով այս միսիոներական մեծ աշխատանքը, որն իրականացվում է այժմ Սիոնի ցցերում, ժողովում է ազնիվ, հավատարիմ հոգիների բերքահավաք հենց այստեղ նրանց միջից, ովքեր նախկինում երբեք չեն օգտվել հնարավորությունից, որը նրանցն է եղել՝ լսելու ավետարանը:[13]

Մենք, որ ստացել ենք հավիտենական ավետարանի ճշմարտությունը, չպետք է բավարարվենք որևէ այլ բանով, բացի լավագույնից, իսկ լավագույնը Հոր թագավորության լիությունն է, և դրա հույսն ունեմ ես և աղոթում եմ, որ մենք ապրենք և արդարակեցության օրինակներ լինենք բոլոր մարդկանց համար, որպեսզի ոչ մեկը չսայթաքի, որ ոչ մեկը չերերա, որ ոչ մեկը արդարակեցության ուղուց չշեղվի, այն պատճառով, որ մենք կարող է անենք կամ ասենք որևէ բան։[14]

Կա մի ազդեցություն, որը ճառագում է ոչ միայն անձից, այլ Եկեղեցուց։ Ես հավատում եմ, որ մեր հաջողությունը աշխարհում կախված է մեծապես Սրբերի վերաբերմունքից։ Եթե մենք ամբողջապես միավորված լինեինք մտքով, գործով, մեր գործողություններով, եթե մենք սիրեինք ճշմարտության խոսքը, եթե մենք քայլեինք դրանում, ինչպես Տերն է կամենում, որ մենք անենք, ապա այս համայնքը կճառագայթեր, Վերջին Օրերի Սրբերի բոլոր այս համայնքների [հավաքույթներում], դուրս գալով դեպի ողջ աշխարհը, մի ազդեցություն, որն անդիմադրելի կլիներ։ Ավելի շատ ազնիվ տղամարդիկ և կանայք դարձի կգային, քանի որ Տիրոջ Հոգին մեզանից առաջ կգնար պատրաստելու ճանապարհը. . . Եթե նրանք, այս մարդիկ, պահեին Տիրոջ պատվիրանները, դա կլիներ մի ուժ և զորություն և ազդեցություն, որը կխորտակեր ընդդիմությունը և կպատրաստեր մարդկանց՝ ստանալ հավիտենական ավետարանի լույսը, և երբ մենք ձախողվում ենք անել այդ, մենք մեր վրա ենք վերցնում մի պարտականություն, որը սոսկալի է իր հետևանքներով։

Ինչպե՞ս կզգայի ես կամ դուք, երբ կանչվեինք դատաստանի աթոռի մոտ, եթե ինչ-որ մեկը մատնացույց աներ ինձ կամ ձեզ և ասեր, որ «եթե այս մարդու կամ այս խմբի գործողությունները չլինեին, ես կընդունեի ճշմարտությունը, բայց ես կուրացա, որովհետև նրանք, հայտարարելով, որ ունեին լույսը, չէին ապրում դրանով»։[15]

Տերն ասում է, եթե մենք աշխատենք բոլոր մեր օրերում և փրկենք մեկ հոգու, որքան մեծ կլինի մեր ուրախությունը նրա հետ [տես ՎԿՈՒ 18.15]. մյուս կողմից որքան մեծ կլինի մեր վիշտը և մեր դատապարտությունը, եթե մեր գործողությունների միջոցով մենք հեռու տանենք մեկ հոգու այս ճշմարտություններից։[16]

Վերջին Օրերի Սրբերը, ուր էլ որ լինեն, կան և պետք է լինեն լույս աշխարհի համար: Ավետարանը խավարում շողացող լույս է և յուրաքանչյուր անձ, ով ստանում է ավետարանի լույսը, դառնում է լույս և ուղեցույց բոլորին, ում նա կարողանում է ուսուցանել:

Ձեր պարտականությունն է. . . լինել ճշմարտության և աշխատանքի աստվածայնության ապրող վկաներ: Մենք հուսով ենք, դուք կապրեք ավետարանով և [կգործեք ձեր սեփական փրկությունը, և որ ուրիշները, տեսնելով ձեր բարի գործերը, կփառաբանեն մեր Հորը, որ երկնքում է: [տես Մատթեոս Ե.16]:[17]

3

Եկեղեցին կարիք ունի ավելի շատ միսիոներների՝ Տիրոջ հանձնարարությամբ առաջ գնալու համար:

Մենք կարիք ունենք միսիոներների. . . Արտը լայնարձակ է, բերքը առատ, բայց աշխատողները քիչ են [տես Ղուկաս Ժ.2]: Նմանապես արտը սպիտակել է և պատրաստ է հնձի համար [տես ՎԵՈՒ 4.4]: . . .

. . . Մեր միսիոներներն առաջ են գնում: Ոչ մի ուժ չի կարող կանգնեցնել նրանց ձեռքերը: Փորձեր արվել են: Մեծ ջանքեր գործադրվեցին հենց սկզբից, երբ ընդամենը մի փոքր խումբ միսիոներներ էին, բայց աշխատանքի առաջընթացը հնարավոր չէր կանգնեցնել: Դա հնարավոր չէ կանգնեցնել այժմ: Այն պետք է գնա և կգնա առաջ, որպեսզի երկրի բնակիչները կարողանան հնարավորություն ունենալ ապաշխարել իրենց մեղքերից և ստանալ իրենց մեղքերին թողություն և գալ Եկեղեցի և Աստծո թագավորությունը, նախքան վերջնական ավերումները գան ամբարիշտների վրա, քանզի նրանց խոստացված է: . . .

Եվ այս միսիոներները, մեծամասամբ երիտասարդ տղամարդիկ, չվարժեցված աշխարհի ուղիներում, առաջ են գնում փրկության այս ուղերձով և ապշեցնում մեծերին և հզորներին, որովհետև նրանք ունեն ճշմարտությունը: Նրանք հռչակում են այս ավետարանը, ազնիվներն ու անկեղծները լսում են այն և ապաշխարում իրենց մեղքերից և գալիս Եկեղեցի:[18]

Մենք հուսով ենք տեսնել օրը, երբ ամեն արժանի և որակավորված երիտասարդ Վերջին Օրերի Սուրբ տղամարդ կունենա

«Մենք զուլաբանում ենք նրանց, ովքեր այնքան քաջաբար ծառայում են միսիոներական մեծ գործին»:

արտոնություն առաջ գնալու Տիրոջ հանձնարարությամբ կանգնելու որպես ճշմարտության վկա երկրի ազգերի մեջ:

Մենք այժմ ունենք շատերին և կարող ենք ավելի շատ հաստատուն և հասուն զույգերի օգտագործել այս մեծ միսիոներական գործում և մենք հուսով ենք, որ նրանք ովքեր արժանի են և որակավորված, իրենց գործերը կարգի կդնեն և կարձագանքեն ավետարանը քարոզելու կանչերին և իրենց պարտականությունները բարյացակամորեն կկատարեն:

Մենք նաև ունենք և կարող ենք օգտագործել երիտասարդ քույրեր այս աշխատանքում, չնայած նույն պարտականությունը դրված չէ նրանց վրա, ինչ-որ դրված է եղբայրների վրա, և մեր մեծագույն մտահոգությունը կապված երիտասարդ քույրերի հետ այն է, որ նրանք մտնեն ամուսնական միության մեջ Տիրոջ տաճարներում:

Մենք հրավիրում ենք Եկեղեցու անդամներին օժանդակել ֆինանսապես միսիոներական գործին և իրենց միջոցներից առատորեն նվիրաբերեն ավետարանի տարածմանը:

Մենք գովաբանում ենք նրանց, ովքեր այնքան քաջաբար ծառայում են միսիոներական մեծ գործին: Ջոզեֆ Սմիթն ասել է. «Այն ամենից հետո ինչ ասվել է, մեծագույն և ամենակարևոր պարտականությունը ավետարանը քարոզելն է»:[19]

4

Մենք պետք է քարոզենք փրկության վարդապետությունները, ինչպես դրանք գրված են սուրբ գրություններում՝ հստակորեն և պարզորեն, և երբ առաջնորդվում ենք Հոգու կողմից:

Այս տնտեսության վաղ օրերին Տերն ասաց նրանց, ովքեր կանչվել էին Իր ծառայությանը. «որ ամեն մարդ կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով. . . Որ իմ ավետարանի լրիվությունը թույլերի և պարզամիտների միջոցով հռչակվի աշխարհի ծայրերում և թագավորների ու կառավարիչների առաջ» (ՎևՈՒ 1.20, 23):

Նրանց, ովքեր կանչվել են «առաջ գնալ քարոզելու» Իր ավետարանը և Իր Եկեղեցու բոլորին «երեցներին, քահանաներին և ուսուցիչներին, Նա ասել է. որ նրանք «պետք է ուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են, և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (տես ՎևՈւ 42.11–13):

Որպես Տիրոջ ներկայացուցիչներ՝ մենք կանչված չենք կամ լիազորված՝ ուսուցանելու աշխարհի փիլիսոփայությունները կամ մեր գիտական դարի մտահայեցողական տեսությունները: Մեր առաքելությունն է՝ քարոզել փրկության վարդապետությունները *հստակությամբ* և պարզությամբ, ինչպես դրանք հայտնի են դարձվել և գրվել սուրբ գրություններում:

Կարգադրելով մեզ ուսուցանել ավետարանի սկզբունքները, որոնք գտնվում են օրինակելի աշխատություններում, ինչպես առաջնորդում է Հոգին, Տերն այդ ժամանակ արեց այս կարևոր հայտարարությունը, որը Եկեղեցում կառավարում է Իր ավետարանի ողջ ուսուցումը ամեն մեկի կողմից. «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով. և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎևՈւ 42.14):[20]

5

Ավետարանը միակ հույսն է աշխարհի, միակ ուղին, որը խաղաղություն կբերի երկրագնդի վրա:

Դուք արդյոք գիտե՞ք, թե որն է ամենամեծ ուժը, ամենազորեղ գործոնը ողջ աշխարհում, երկրի վրա մշտական խաղաղություն հաստատելու համար: Ուղղելով հարցը, ես կկամենայի պատասխանել դրան, առնվազն ես կարտահայտեմ իմ տեսակետը դրա վերաբերյալ՝ չասելով որևէ բան աշխարհի մյուս իրադարձությունների մասին: Մեծագույն գործոնը ողջ աշխարհում Սուրբ Քահանայության զորությունն է, իսկ դա Վերջին Օրերի Սրբերի տնօրինության տակ է: Հենց սկզբից Տերն ուղարկեց աշխարհ երեցների՝ պատվիրելով նրանց կոչ անել մարդկանց, ասելով. Ապաշխարեք, եկեք Սիոն: Հավատացեք իմ ավետարանին և դուք կունենաք խաղաղություն:

Խաղաղությունը կգա արդարակեցության միջոցով, արդարադատության միջոցով, Աստծո ողորմածության միջոցով, այն զորության միջոցով, որը Նա կշնորհի մեզ, որով մեր սրտերը զգայուն կդառնան և մենք սեր կունենանք մեկս մյուսի հանդեպ: Այժմ մեր պարտականությունն է հայտարարել այս բաները ողջ ժողովրդի մեջ, կոչ անել նրանց գալ Սիոն, որտեղ դրոշ է դրված՝ խաղաղության դրոշը, և ստանալու Տիրոջ տան օրհնություններից և Նրա Հոգու ազդեցությունից, որն այստեղ դրսևորվում է: Եվ ես ուզում եմ ասել ձեզ, որ մենք ինքներս, եթե ծառայենք Տիրոջը, հրաշալի ուժ կլինենք աշխարհում խաղաղություն հաստատելու համար:

Այժմ մենք կամենում ենք, որ այլ իրադարձություններ այս ուղղությամբ շարունակվեն: Մենք կողմ ենք բոլոր այն բաներին, որոնք խաղաղություն կբերեն աշխարհին, բայց եկեք աչքից բաց չթողնենք այն փաստը, որ մենք՝ Վերջին Օրերի Սրբերս, եթե համախմբված լինենք միմյանց հետ և կանգնենք միաբան ծառայելով Տիրոջը և առաջ ուղարկենք հավերժական կյանքի խոսքը ազգերի մեջ, մենք կունենանք ավելի մեծ զորություն, իմ կարծիքով ՝ աշխարհում խաղաղություն հաստատելու համար, քան որևէ այլ ուժ: Ես լիովին համաձայն եմ այն զաղափարի հետ, որն արտահայտվել է այն բանի վերաբերյալ, որ Տերն օգտագործում է շատ գործակալություններ, Նրա աշխատանքը չի սահմանափակվում Վերջին Օրերի Սրբերով, քանի

որ Նա շատերին է կանչել Իր ծառայությանը Եկեղեցուց դուրս և շնորհել նրանց զորություն, ոգեշնչել նրանց կատարելու Իր աշխատանքը. . . Այնուամենայնիվ, իմ եղբայրներ և քույրեր, եկեք աչքից բաց չթողնենք այն փաստը, որ մենք զորություն ենք երկրի վրա բարու համար և ճշմարտության տարածման համար և խաղաղության հաստատման համար բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և ժողովուրդների մեջ. . . Մեր առաքելությունը եղել է և կլինի.«Ապաշխարեք, քանզի Աստծո արքայությունը մոտ է» [տես ՎԼՈ 33.10]։

Մենք պետք է շարունակենք մինչև բոլոր արդարները հավաքվեն, մինչև բոլոր մարդիկ նախազգուշացվեն, մինչև բոլորը, ովքեր կկամենան լսել, լսեն, և նրանք ովքեր չեն կամենա լսել, նույնպես կլսեն, քանզի Տերը հայտարարել է, որ չի լինի մի հոգի, որ չլսի, ոչ մի սիրտ որ չներթափանցվի [տես ՎԼՈ 1.2], քանի որ Նրա խոսքը առաջ կգնա, լինի դա իր երեցների խոսքով, թե այլ միջոցներով, դա նշանակություն չունի, բայց Իր ուրույն ժամանակին նա կարագացնի Իր աշխատանքը արդարությամբ, նա կհաստատի Իր ճշմարտությունը և Նա կգա և կթագավորի երկրի վրա։[21]

Մենք հարգում ենք բոլոր կրոններին, խմբերին և դավանանքներին պատկանող մեր Հոր զավակներին և այլ ցանկություն չունենք, բացի նրանից, որ տեսնենք նրանց հավելյալ լույս և գիտելիք ընդունելիս, որը տրվել է մեզ հայտնությամբ, և դառնալ մեզ հետ վերականգված ավետարանի մեծ օրհնությունների ժառանգորդներ։

Բայց մենք ունենք փրկության ծրագիրը, մենք սպասավորում ենք ավետարանը, և ավետարանը միակ հույսն է աշխարհի, միակ ուղին, որը կբերի խաղաղություն երկրի վրա և կուղղի անիրավությունները, որոնք գոյություն ունեն բոլոր ազգերում։[22]

Ես գիտեմ, որ եթե մարդիկ հավատք ունենան առ Քրիստոս, ապաշխարեն իրենց մեղքերից, ուխտ կապեն մկրտության ջրերում և ապա ստանան Սուրբ Հոգին ձեռնադրմամբ, նրանց կողմից, ովքեր կանչված են և կարգված այդ իշխանության և եթե նրանք այդ ժամանակ պահեն պատվիրանները, նրանք պիտի խաղաղություն ունենան այս կյանքում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում [տես ՎԼՈՒ 59.23]։[23]

Աշխարհի խնդիրների համար չկա սպեղանի, բացի Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանից: Մեր հույսը խաղաղության համար, ֆիզիկական և հոգևոր բարգավաճման համար և վերջնական ժառանգության համար Աստծո թագավորությունում, գտնվում է միայն վերականգված ավետարանում և դրա միջոցով: Չկա ոչ մի աշխատանք, որ մեզանից որևէ մեկը կարողանա զբաղվել, որն այնքան կարևոր լինի, որքան ավետարանը քարոզելը և Եկեղեցին ու Աստծո արքայությունը կառուցելը երկրի վրա:[24]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Մտածեք, թե ինչպես էր Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը արձագանքում մարտահրավերներին որպես լիաժամկետ միսիոներ (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը): Ինչպե՞ս կարող է նրա օրինակն ազդել ձեր ծառայության վրա Եկեղեցում:
- Խորհեք «ավետարանի պտուղները» ճաշակելու օրհնության մասին (բաժին 1): Մտածեք այն մարդկանց մասին, ում հետ դուք կարող եք կիսվել այդ «պտուղներով»:
- Ինչպե՞ս կարող է բաժին 2-ում Նախագահ Սմիթի խոսքերն օգնել մեզ կիսվել ավետարանով ուրիշների հետ:
- Նախագահ Սմիթն ասել է, որ Եկեղեցին կարիք ունի ավելի շատ լիաժամկետ միսիոներների, ներառյալ «հասուն զույգերի» (բաժին 3): Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք երիտասարդներին նախապատրաստվել ծառայությանը: Ի՞նչ կարող եք անել դուք ծառայության նախապատրաստվելու համար:
- Ի՞նչ ուղիներով կարող են մեր խոսքերը և գործողությունները հաղորդել ավետարանի հստակությունն ու պարզությունը (տես բաժին 4): Ե՞րբ եք զգացել, որ Սուրբ Հոգին առաջնորդել է ձեզ այս ջանքերում:
- Ի՞նչ ուսմունքներ են հատկապես ոգեշնչում ձեզ: Ի՞նչ զգացումներ եք ունենում, երբ մտածում եք կիսվել, որ «ավետարանը միակ հույսն է աշխարհի, միակ ուղին, որը կբերի խաղաղություն երկրի վրա»:

Սոնչվող սուրբ գրություններ

Մատթեոս ԻԴ.14, Մարկոս ԺԶ.15; 1 Նեփի 13.37; 2 Նեփի 2.6–8, 3 Նեփի 12.13–16, ՎևՈՒ 1.17–24, 4, 50.13–14, 88.81, 133.57–58

Օգնություն ուսուցչին

Երբ որևէ մասնակից կարդում է բարձրաձայն Նախագահ Սմիթի ուսմունքներից, հրավիրեք մյուս մասնակիցներին «լսել և որոնել հատուկ սկզբունքներ կամ գաղափարներ: Եթե հատվածը պարունակում է անսովոր կամ դժվար խոսքեր կամ արտահայտություններ, բացատրեք դրանք նախքան հատվածը կարդալը: Եթե որևէ մեկը խմբում դժվարություն ունի կարդալիս, հերթով կարդալու փոխարեն խնդրեք կամավորների կարդալ» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 56):

Հղումներ

1. Joseph Fielding Smith to Louie ¥ Smith, in Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 114–15.
2. Joseph Fielding Smith to Louie Shurtliff Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 102.
3. See *The Life of Joseph Fielding Smith,* 91.
4. Journal of Joseph Fielding Smith, Apr. 30, 1901, Church History Library; punctuation and capitalization standardized.
5. See Conference Report, British Area General Conference 1971, 85.
6. In Conference Report, British Area General Conference 1971, 176.
7. "I Know That My Redeemer Liveth," *Ensign,* Dec. 1971, 26–27.
8. "A Witness and a Blessing," *Ensign*, June 1971, 109–10.
9. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 4.
10. *Take Heed to Yourselves,* comp. Joseph Fielding Smith Jr. (1966), 27–28.
11. In Conference Report, Oct. 1970, 5–6.
12. In Conference Report, Apr. 1944, 50; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 308.
13. In Conference Report, Apr. 1921, 42.
14. In Conference Report, Apr. 1923, 139.
15. In Conference Report, Oct. 1933, 62–63.
16. In Conference Report, Apr. 1951, 153.
17. In Conference Report, British Area General Conference 1971, 176.
18. In Conference Report, Apr. 1953, 19–20.
19. In Conference Report, Oct. 1970, 7; տես նաև *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 330.
20. In Conference Report, Oct. 1970, 5.
21. In Conference Report, Oct. 1919, 89–90.
22. "To the Saints in Great Britain," *Ensign,* Sept. 1971, 3–4.
23. In Conference Report, Oct. 1970, 7.
24. "Counsel to the Saints and to the World," *Ensign,* July 1972, 27.

«Ծնողների պարտականությունն է իրենց երեխաներին աղոթել սովորեցնել, հենց որ նրանք սկսում են հասկանալ»։

Աղոթք՝ պատվիրան և օրհնություն

«Քիչ բաներ են կյանքում այնքան կարևոր, որքան Աստվածության հետ աղոթքով հաղորդակցվելը»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ուսուցանել է, որ մենք պետք է դարձնենք աղոթքի հոգին «մեր իսկ գոյության մասը»:[1] Նա այս սկզբունքի օրինակ է եղել իր ապրելաձևով և այն ձևով, որ նա աղոթել է՝ միայնակ, ընտանիքի անդամների հետ և հասարակության մեջ:

Իր առաջին կնոջ՝ Լյուիի մահից հետո, նա գրել է այս քնքուշ աղաչանքն իր օրագրում՝ ներկայացնելով իր անձնական աղոթքների մի ակնարկ. «Օ՜ Հայր իմ, որ երկնքում ես, օգնիր ինձ, ես Քեզ եմ աղոթում, որ այնպես ապրեմ, որ ես արժանի լինեմ հանդիպելու նրան հավերժական փառքում, նրա հետ միավորվելու կրկին, երբեք այլևս չբաժանվելու հավերժության անհաշվելի դարերի ընթացքում: Օգնիր ինձ խոնարհ լինել, վստահել Քեզ: Տուր ինձ իմաստություն և երկնային բաների մասին գիտելիք, որպեսզի ես կարողանամ ուժ ունենալ դիմադրելու ամեն չարի և մնալու անսասան Քո *ճշմարտությանը:* Ո՜վ Տեր, օգնիր ինձ, շնորհիր ինձ հավերժական կյանք Քո Թագավորությունում: Առաջնորդիր իմ քայլերը արդարակեցության մեջ, տուր ինձ Քո Ողջ Հոգին: Օգնիր ինձ խնամել իմ թանկագին երեխաներին, որ նրանք մնան մաքուր և անբիծ իրենց կյանքի ընթացքում, և երբ մենք վերջացնենք մեր ուղին, տար մեզ Քո Մելեստիալ Արքայությունը, մենք աղաչում ենք Քեզ մեր Քավիչի անունով, թող դա լինի, ամեն»:[2]

Նախագահ Սմիթի որդին՝ Ջոզեֆ կրտսերը, պատմել է Նախագահ Սմիթի կողմից ասված մի հիշարժան աղոթքի մասին, երբ իրենք երկուսով գտնվում էին դեպի տուն՝ Սոլթ Լեյք Սիթի տանող

ճանապարհին: Նրանք «ընկան ուժեղ անձրևով ուղեկցվող մի փոթորիկի մեջ և սխալ տեղից թեքվեցին», ի վերջո հասնելով մի տեղ, որը կոչվում էր Հնդկացիների Կիրճ: «Փոթորիկն ավելի ուժեղացավ, իսկ ճանապարհը շատ ցեխոտ և սայթաքուն էր, այնքան վատ, որ այն ոչ միայն վտանգավոր էր, այլ անհնարին էր շարունակել ճանապարհը: Խիտ մառախուղը պատել էր խորը անդունդի կողքով ձգվող միակողմանի հողաշեն ճանապարհը և պատանի Ջոզեֆ կրտսերը և դոկտոր Դեյվիդ Ի. Սմիթը, ովքեր ուղևորներ էին, փորձում էին հրել և մեքենան հաստատուն պահել, վախենալով, որ այն կսահի խորն անդունդը: Անիվները սկսեցին պտտվել ցեխի մեջ և ի վերջո ավտոմեքենան անշարժացավ. . . Ջոզեֆը հիշում էր, որ իր հայրն ասաց. «Մենք արեցինք այն ամենը, ինչ կարող էինք: Մենք կկանչենք առ Տերը» Նա խոնարհեց գլուխն աղոթքով՝ կանչելով առ Տերը, որ պատրաստեր ճանապարհը, որպեսզի նա ուղղեր իր սխալը և դուրս գար վտանգավոր կիրճից և շարունակեր ուղևորությունը դեպի տուն: Նա ասաց Տիրոջը, որ նա կարևոր պարտականություններ ուներ, որոնք իր ուշադրության կարիքն ունեին հաջորդ օրը, և որ խիստ անհրաժեշտ էր, որ վերադառնար Սոլթ Լեյք Սիթի: Հրաշքով փոթորիկը հանդարտվեց, քամի փչեց, ճանապարհը բավականաչափ չորացնելով, այնպես որ նրանք վերջապես կարողացան ետ դառնալ մայրուղի: Հազիվ էին հասել ցածրադիր վայրեր, փոթորիկը կրկին սկսեց, կանգնեցնելով երթևեկությունը մերձակա տարածքում մի քանի ժամով: Երբ նրանք հասան Պրովոյի Կիրճը և շարժվեցին դեպի Սոլթ Լեյք Սիթի, շատ ժամեր տևած ավելորդ ճամփորդությունից, նրանց կանգնեցրեց ճանապարհային մի ոստիկան և հարցրեց, թե որտեղից էին գալիս: Երբ պատասխանեցին, որ Հնդկացիների Կիրճով են եկել, սպան ասաց. «Անհնարին է: Մենք տեղեկացվել ենք, որ բոլոր կամուրջներն այդ տարածքում հեղեղաջրերն ավերել են»: Ի զարմանս նրանց հաջորդ առավոտ բոլոր թերթերի վերնագրերը ազդարարում էին, որ 200 ավտոմեքենա խրվել մնացել էին այդ տարածքում, որից նրանք խույս էին տվել:[3]

Նախագահ Սմիթի 62–ամյա առաքելական ծառայության ընթացքում, նրա քարոզներից շատերը ներառում էին հասարակության առջև աղոթքներ, որոնցում նա երկնքի օրհնություններն էր խնդրում Եկեղեցու անդամների և ժողովրդի համար ողջ աշխարհում: Օրինակ իր առաջին գերագույն

համաժողովում որպես Եկեղեցու Նախագահ, նա խնդրեց. «Ես աղոթում եմ, որ Աստված՝ մեր Երկնային Հայրը բացի երկնքի պատուհանները և դուրս թափի իր զավակների վրա այն մեծ և հավերժական օրհնությունները, որոնք կլավացնեն նրանց ճակատագիրը ֆիզիկապես և հոգեպես»:[4]

Նախագահ Սմիթի աղոթքները բացահայտում էին նրա վկայության խորությունը և սերը իր Երկնային Հոր և իր Փրկչի հանդեպ: Նախագահ Բոյդ Կ. Փաքերը, որը կանչվել էր ծառայելու Տասներկու Առաքյալների Քվորում, երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն էր Եկեղեցու Նախագահ, ասել է. «Դա մի փորձառություն էր, լսել Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթին աղոթելիս: Նույնիսկ երբ նա անցել էր իննսուն տարեկանը, նա աղոթում էր, որ «պահեր իր ուխտերը և պարտականությունները և համբերեր մինչև վերջ»:[5]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Մեզ պատվիրված է մոտ գալ Երկնային Հորը աղոթքով:

Սա պատվիրան է Տիրոջից, որ մենք Նրան որոնենք շարունակ խոնարհ աղոթքով: Երբ Փրկիչը Իր աշակերտների հետ էր, նա նրանց սովորեցրեց աղոթել, և նա օրինակ ծառայեց նրանց առջև հաճախակի աղոթելով Իր Հորը: Մենք կարող ենք համոզված լինել, քանի որ դա պատվիրան է Տիրոջից, որ առաքինություն կա աղոթքի մեջ, և երբ մենք որոնում ենք Տիրոջը, դա պետք է լինի համեստության և ակնածանքի ոգով: . . .

. . . Ծնողների պարտականությունն է իրենց երեխաներին աղոթել սովորեցնել, հենց որ նրանք սկսում են հասկանալ: Թույլ տվեք, որ նրանք իրենց Երկնային Հորը մոտենալու սովորույթ ձևավորեն և հասկանան աղոթելու նպատակը: Եթե այս սովորույթը ձևավորվել է մանկությունում, այն կարող է մնալ հասուն տարիներին, և տղամարդը կամ կինը, ով լրջորեն որոնել է Տիրոջը և շնորհակալություն հայտնել Նրան օրհնությունների համար, կարող է սպասել, որ Տերը չի լքի նրանց կարիքի ժամին:[6]

Զարմանում եմ, թե երբևէ մենք կանգ առնո՞ւմ ենք և մտածում, թե ինչու է Տերը խնդրել մեզ աղոթել: Միթե՞ Նա խնդրել է մեզ աղոթել, որովհետև նա ուզում է, որ մենք խոնարհվենք և

երկրպագենք Նրան: Դա՞ է հիմնական պատճառը: Չեմ կարծում, որ դա է: Նա մեր Երկնային Հայրն է և մեզ պատվիրված է երկրպագել Նրան և աղոթել Նրան Իր Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով: Բայց Տերը կարող է հաջողություն ունենալ առանց մեր աղոթքների: Նրա աշխատանքը նույն ձևով կընթանա, մենք աղոթենք, թե չաղոթենք. . . Աղոթքը մի բան է, որի կարիքը *մենք* ունենք, ոչ թե որ Տերն ունի դրա կարիքը: Նա գիտի, թե ինչպես վարի Իր գործերը և ինչպես հոգ տանի դրանց մասին առանց մեր օգնության: Մեր աղոթքները այն նպատակով չեն, որ մենք ասենք Նրան, թե ինչպես վարի Իր գործերը: Եթե մենք ունենք այդպիսի ինչ-որ գաղափար, ապա իհարկե դա սխալ գաղափար է: Մեր աղոթքներն ասվում են ավելի շատ մեր օգտի համար, մեզ շենացնելու և մեզ ուժ տալու և քաջություն ու մեր հավատքը Նրա հանդեպ մեծացնելու համար:

Աղոթքը մի բան է, որ խոնահեցնում է հոգին: Այն մեծացնում է մեր հասկացողությունը, այն աշխուժացնում է միտքը: Այն մոտեցնում է մեզ մեր Հորը, որ երկնքում է: Մենք Նրա օգնության կարիքն ունենք, դրանում կասկած չկա: Մենք Նրա Սուրբ Հոգու առաջնորդության կարիքն ունենք: Մենք պետք է իմանանք, թե ինչ սկզբունքներ են մեզ տրվել, որոնց միջոցով մենք կարող ենք ետ վերադառնալ Նրա ներկայություն: Մենք պետք է մեր մտքով աշխուժացվենք այն ոգեշնչմամբ, որը գալիս է Նրանից, և այդ պատճառներով մենք աղոթում ենք Նրան, որ Նա մեզ օգնի ապրել այնպես, որ մենք իմանանք Նրա ճշմարտությունը և կարողանանք քայլել դրա լույսով, որ մենք մեր հավատարմության միջոցով, նորից վերադառնանք Նրա ներկայությունը:[7]

Քիչ բաներ կան կյանքում, որ այնքան կարևոր լինեն, որքան աղոթքով Աստվածության հետ հաղորդակցվելը: Տերը մեր մտքերի վրա մոռացության վարագույրն է քաշել, որպեսզի մենք չհիշենք Նրան և մեր կապը Նրա հետ որպես իր ընտանիքի անդամներ նախամահկանացու կյանքում: Աղոթքը հաղորդակցության մայրուղին է, որը Նա տվել է մեզ Իր հետ կրկին հաղորդակցվելու համար: Այսպիսով, մեր մահկանացու փորձարկման ամենագլխավոր պատճառներից մեկը պարզելն է, թե մենք արդյոք կարող ենք սովորել աղոթքի ոգին միշտ մեր սրտերում, այնպես որ, երբ Տերն ընտրի խոսել, մենք լսենք Նրա ձայնը մեր հոգիներում:[8]

2

Աղոթքի համար ժամանակը միշտ պատշաճ է:

«Եվ մի պատվիրան եմ տալիս ես նրանց, (այսինքն՝ Սիոնի ծնողներին), որ նա, ով չի պահպանում իր աղոթքները Տիրոջ առաջ, իր ժամանակին, թող հիշողության մեջ պահվի իմ ժողովրդի դատավորի առաջ» [ՎԿՈ 68.33]:

Ես չեմ կարծում, որ մենք այդ հատվածը այդքան շատ կարդացած լինենք այդ բաժնում, և երբեմն զարմանում եմ, թե արդյոք հասկանո՞ւմ ենք, թե որքան իրականում կարևոր է այդ պատվիրանը: Ոչ մի մարդ չի կարող պահել Տիրոջ Հոգին, մինչև չաղոթի: Ոչ մի մարդ չի կարող ունենալ Սուրբ Հոգու ոգեշնչումը, մինչև նրա սրտում չգտնվի աղոթքի ոգին: . . .

Այժմ կկամենայի կանգ առնել այս հատվածի վրա մեկ կամ երկու րոպե: Ի՞նչ է նշանակում ժամանակին աղոթել:

Մեզանից ոմանք գուցե կարծում են, որ ժամանակին աղոթքն այն ժամն է, երբ մենք առավոտյան վեր ենք կենում, և երբ մենք գնում ենք քնելու, երբ մեր աշխատանքն ավարտված է, և որ չկա աղոթքի համար ուրիշ ժամանակ: Բայց ես ասում եմ ձեզ, և ես լավ հիմնավորում ունեմ դրա համար, որ աղոթքի համար ժամանակը միշտ պատշաճ է: Թույլ տվեք կարդալ ձեզ համար: Դուք գիտեք, որ ես սիրում եմ ապացուցել այն, ինչ ասում եմ, ես սիրում եմ բերել վկայություններ այն բանի վերաբերյալ, ինչ ասում եմ և ես չեմ խնդրում մարդկանց ընդունել այն, ինչ ասում եմ, մինչև դա բացարձակապես ներդաշնակության մեջ չլինի նրա հետ, ինչ Տերն է ասել, լինի դա ուղղակիորեն, թե Իր մարգարեների միջոցով: Մենք կարդում ենք Մորմոնի Գրքում [Ամուղեկի խոսքերը] աղքատ Զորամացիներին, ովքեր հեռացել էին ճշմարտությունից, և դուրս գցված լինելով իրենց ժողովատներից, իրենց աղքատության պատճառով և զգալով, որ նրանք կարող էին միայն աղոթել ամեն անգամ մեկը, երբ բարձրանում էին ռամեումփթոմի վրա, ինչպես կոչում էին այն [տես Ալմա 31.12–23], նրանք չգիտեին թե ինչ անեն: Ամուղեկը սովորեցրեց նրանց հետևյալը.

«Այո, կանչեք առ նա ողորմածության համար քանզի նա հզոր է փրկելիս: Այո, խոնարհեցրեք ձեզ, և շարունակեք աղոթքի մեջ առ նա: Կանչեք առ նա, երբ դուք ձեր դաշտերում եք, այո, բոլոր ձեր հոտերի համար: Կանչեք առ նա ձեր տներում, այո, ողջ ձեր

Այստեղ՝ Ալմայի հետ պատկերված Ամուղեկը խրախուսում էր մարդկանց. «կանչեք առ [Տերը] ողորմածության համար. քանզի նա հզոր է փրկելիս» (Ալմա 34.18):

գերդաստանի համար՝ և՛ առավոտյան, և՛ կեսօրին, և՛ երեկոյան: Այո, կանչեք առ նա ձեր թշնամիների զորության դեմ: Այո, կանչեք առ նա դևի դեմ, որը թշնամի է ամենայն արդարության: Կանչեք առ նա ձեր դաշտերի բերքի համար, որպեսզի դուք կարողանաք բարգավաճել դրանով: Կանչեք ձեր դաշտերի հոտերի համար, որպեսզի դրանք կարողանան ավելանալ: Բայց այս բոլորը չէ, դուք պիտի դուրս թափեք ձեր հոգիները ձեր սենյակներում և ձեր գաղտնի տեղերում և ձեր անապատում: Այո, և երբ դուք չեք կանչում առ Տերը, թող ձեր սրտերը լցված լինեն՝ ուղղված նրան, շարունակ աղոթքով՝ ձեր բարօրության համար և նաև նրանց բարօրության համար, ովքեր ձեր շրջապատում են: Եվ այժմ, ահա, իմ սիրելի եղբայրներ, ես ասում եմ ձեզ, մի կարծեք, որ սա բոլորն է, քանզի այս բոլոր բաներն անելուց հետո, եթե դուք երես դարձնեք կարիքավորից ու մերկից,

և չայցելեք հիվանդին ու չարչարվածին, և բաժին չհանեք ձեր ստացվածքից, եթե դուք ունեք, նրանց համար, ովքեր կարիքի մեջ են, ես ասում եմ ձեզ, եթե դուք այս բաներից որևէ մեկը չեք անում, ահա, ձեր աղոթքը զուր է, և ձեզ ոչնչով օգտակար չէ, և դուք նման եք կեղծավորների, ովքեր ուրանում են հավատքը [Ալմա 34. 18–28:]

Կարծում եմ դա գերազանց վարդապետություն է, և ես կարդում եմ այն՝ «ժամանակին աղոթելը» ձեր մտքում տպավորելու համար: Աղոթքը ժամանակին է, երբ ասվում է առավոտյան, նախքան ընտանիքի անդամների առանձնանալը: Լավ ժամանակ է աղոթքի համար, երբ դուք հավաքվում եք սեղանի շուրջը նախքան առավոտյան նախաճաշը ուտելը և թույլ տալիս, որ ընտանիքի անդամներից ամեն անգամ մեկն աղոթի: Դա ժամանակին աղոթք է: Աղոթքը ժամանակին է առևտրականի համար առավոտյան, երբ նա գնում է իր գործատեղը և նախքան իր օրվա աշխատանքը սկսելը աղոթում է՝ իր առևտրի համար: Հովվի համար աղոթքը ժամանակին է, երբ նա դրսում է իր հոտերի հետ, նրանց հսկելիս: Հողագործի համար ժամանակին աղոթելն այն ժամանակ է, երբ գութանով մտնում է դաշտ, երբ նա գնում է ցանելու իր հացահատիկը, և երբ նա գնում է հավաքելու իր բերքը: Եվ եթե որևէ մարդ աղոթում է, ինչպես իրեն պատվիրվել է անել սուրբ գրքի այս հատվածի համաձայն, որը ես կարդացի, ապա նա ավելի քան հավանական է, որ բոլոր բաներում կգտնվի Տիրոջ պատվիրանները արդարակյաց պահելիս:[9]

3

Մեր բոլոր արածները պետք է ներդաշնակության մեջ լինեն մեր արտասանած աղոթքների հետ:

Մենք չպետք է միայն մեր շրթունքներով աղոթենք, բայց ամեն մի քայլում, մեր խոսակցությունում, բոլոր բաներում, որ մենք նախաձեռնում ենք անել, մենք պետք է գործենք մեր արտասանած աղոթքների համաձայն, և լինենք ներդաշնակության մեջ այն մտքերի հետ, որ մենք հայտարարում ենք Տիրոջը մեր ամենօրյա խնդրանքներում:[10]

Մենք արդյոք աղոթքի հոգու տիրապետության տակ ենք: Արդյոք մենք դա դարձրե՞լ ենք մեր էության մասը: Արդյոք մենք կապի մե՞ջ ենք Երկնային Հոր հետ Սուրբ Հոգու միջոցով, թե՞ ոչ:[11]

4

Մեր աղոթքներում մենք պետք է լցնենք մեր հոգիները երախտագիտությամբ:

Որքան ուշադիր մենք պետք է լինենք՝ մշակելու աղոթքով լի կյանքի միջոցով երախտապարտ վերաբերմունք: Ես հավատում եմ, որ այսօրվա մեծագույն մեղքերից մեկը, որի համար մեղավոր են երկրի բնակիչները, երախտամոռության մեղքն է, երախտագիտության պակասը [կամ բացակայությունը] նրանց կողմից Տիրոջ հանդեպ և նրա կառավարելու և վերահսկելու իրավունքի հանդեպ:[12]

Մեր աղոթքներում մենք պետք է լցնենք մեր հոգիները շնորհակալությամբ կյանքի և գոյության համար, Աստծո Որդու փրկագնող զոհաբերության համար, փրկության ավետարանի համար, Ջոզեֆ Սմիթի համար և նրա միջոցով վերականգման հզոր աշխատանքի իրականացման համար: Մենք երախտապարտ պիտի լինենք Տիրոջ ձեռքը բոլոր բաներում տեսնելով և շնորհակալ լինենք բոլոր բաների համար՝ ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր:[13]

5

Մենք պետք է աղերսենք Երկնային Հորը մեր բոլոր արդար ցանկությունների համար:

Մենք պետք է աղերսենք [Երկնային Հորը] հավատքի և ազնվության և ամեն բարեպաշտ հատկանիշի համար, Նրա աշխատանքի հաղթանակի և հաջողության, Նրա Սուրբ Հոգու առաջնորդության և Նրա արքայությունում փրկության համար: Մենք պետք է աղոթենք մեր ընտանիքների համար, մեր կանանց և երեխաների համար, ուտելիքի և ապաստանի ու հագուստի համար, մեր գործնական խնդիրների և բոլոր մեր արդար ցանկությունների համար:[14]

Ես աղոթում եմ, որ երկնքի օրհնությունները լինեն և մնան մեզ հետ և բոլոր մարդկանց հետ:

Թող որ երկինքները վար թափեն արդարակեցություն և ճշմարտություն ողջ աշխարհի վրա:

Թող որ բոլոր մարդիկ ամենուրեք կարողանան ունենալ լսող ականջ, և որ նրանք կարողանան ուշադրություն

դարձնել ճշմարտության խոսքերին և լույսին, որը գալիս Տիրոջ ծառաներից։

Թող որ Տիրոջ նպատակները բոլոր մարդկանց մեջ ամեն մի երկրում շուտափույթ իրականանան։

Ես աղոթում եմ Եկեղեցու անդամների համար, ովքեր Ամենաբարձրյալի սրբերն են, որ նրանք կարողանան զորացվել իրենց հավատքում, և որ արդարակեցության համար ցանկություններն աճեն նրանց սրտերում, և որ նրանք գործեն իրենց փրկությունը ահով ու դողալով Տիրոջ առաջին [տես Փիլ Բ.12, Մորմոն 9.27]։

Ես աղոթում եմ բարիների և ուղղամիտների համար բոլոր մարդկանց մեջ, որպեսզի նրանք առաջնորդվեն որոնելու ճշմարտություն, աջակցեն ամեն ճշմարիտ սկզբունքի և առաջ տանեն ազատության և արդարության գործը։

Այս անհանգիստ և դժվարին ժամանակներում ես աղոթում եմ, որ բոլոր մարդիկ կարողանան առաջնորդվել այն լույսի կողմից, որը լուսավորում է ամեն մի մարդու, ով գալիս է աշխարհ [տես Հովհ. Ա.9, ՎևՈՒ 93.2], և որ նրանք կարողանան ձեռք բերել դրա միջոցով իմաստություն՝ լուծելու խնդիրները, որոնցով պատված է մարդկությունը։

Ես աղոթում եմ ողորմած Հորը՝ դուրս թափել Իր օրհնությունները բոլոր մարդկանց վրա, երիտասարդների և ծերերի, նրանց վրա, ովքեր սգալու պատճառ ունեն, քաղցածների և կարիքավորների, նրանց վրա, ովքեր թակարդվել են դժբախտ հանգամանքների մեջ և անառողջ միջավայրերում և բոլոր նրանց վրա լինի, ովքեր օգնության և աջակցության ու իմաստության և բոլոր բարի և մեծ բաների կարիքն ունեն, որը միայն Նա կարող է տալ։

Ձեզ բոլորիդ հետ միասին ես սեր և մտահոգություն և կարեկցանք ունեմ մեր Հոր զավակների հանդեպ ողջ երկրագնդի վրա և աղոթում եմ, որ նրանց պայմանները բարելավվեն՝ ինչպես նյութապես, այնպես էլ հոգեպես. ես աղոթում եմ, որ նրանք կարողանան գալ դեպի Քրիստոս և սովորեն Նրանից, և վերցնեն Նրա լուծը իրենց վրա, որ նրանք կարողանան հանգստություն գտնել իրենց հոգիներին, քանզի նրա լուծը քաղցր է և բեռը թեթև [տես Մատթեոս ԺԱ.29–30]։

Ես աղոթում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը և բոլորը, ովքեր կմիանան նրանց մեր բոլորիս Հոր պատվիրանները պահելիս,

այնպես ապրեն, որպեսզի ձեռք բերեն խաղաղություն այս կյանքում և հավերժական կյանք գալիք աշխարհում [տես ՎԿՈՒ 59.23]: Այս բոլոր բաները ես խնդրում եմ խոնարհաբար և շնորհակալությամբ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն:[15]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- «Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը պարունակում է աղոթքների չորս օրինակ, որոնք ասվել են Նախագահ Սմիթի կողմից: Ի՞նչ կարող ենք սովորել այդ օրինակներից յուրաքանչյուրից:
- Մտածեք աղոթքի հանդեպ ձեր անձնական մոտեցման մասին: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեր աղոթքներն օգնեն մեզ գալ «ավելի մոտ մեր Հորը, որ երկնքում է» (տես բաժին 1):
- Նախագահ Սմիթն ուսուցանել է. «Աղոթքի համար ժամանակը միշտ պատշաճ է» (բաժին 2): Ի՞նչ ուղիներով կարող ենք մենք հետևել միշտ աղոթելու խորհրդին:
- Ի՞նչ է նշանակում ձեզ համար «գործենք մեր արտասանած աղոթքների» համաձայն (տես բաժին 3): Մտածեք այն մասին, թե ինչպես կարող եք բարելավվել այս ասպարեզում:
- Ինչպե՞ս է փոխվում մեր վերաբերմունքը, երբ մենք «լցնում ենք մեր հոգիները երախտագիտությամբ» մեր Երկնային Հոր հանդեպ (տես բաժին 4):
- Երբ դուք ուսումնասիրեք Նախագահ Սմիթի աղոթքը բաժին 5-ում, մտածեք ձեր իսկ աղոթքների մասին: Լուռ խորհեք այս հարցի շուրջ. Ի՞նչ մարդկանց կամ հարցեր ավելի հաճախ դուք կներառեիք ձեր աղոթքներում:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս Է.7–8, Փիլիպպեցիս Դ.6, Ա Թեսաղոնիկեցիս Ե.17–18, Հակոբոս Ա.5–6, 2 Նեփի 32.8–9, Ալմա 34.38–39, 3 Նեփի 18.18–21, ՎԿՈՒ 10.5

Օգնություն ուսուցչին

Քննարկում ծավալելու համար, օգտագործեք յուրաքանչյուր գլխի վերջում գտնվող հարցերը: Դուք կարող եք նաև կազմել

ձեր իսկ հարցերը, հատուկ նրանց համար, ում դուք ուսուցանում եք։» (այս գրքի IX էջից)։

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1918, 40.
2. In Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 162–63; italics in original.
3. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 232–33.
4. In Conference Report, Apr. 1970, 6.
5. Boyd K. Packer, "Covenants," *Ensign,* Nov. 1990, 84; italics removed from original.
6. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 3: 83–85.
7. In Conference Report, Apr. 1968, 10; italics in original.
8. "President Joseph Fielding Smith Speaks on the New MIA Theme," *New Era,* Sept. 1971, 40.
9. In Conference Report, Oct. 1919, 142–43.
10. In Conference Report, Oct. 1913, 73.
11. In Conference Report, Apr. 1918, 156 .
12. In Conference Report, Oct. 1969, 110.
13. "President Joseph Fielding Smith Speaks on the New MIA Theme," 40.
14. "President Joseph Fielding Smith Speaks on the New MIA Theme," 40.
15. In Conference Report, Apr. 1970, 149.



«Տերն. . . ակնկալում է մեզանից գիտելիք ունենալ նյութական բաների վերաբերյալ»:

Անձնական պարտավորություն

«Մենք ակնկալում ենք մեր անդամներից ամենուրեք սովորել ճիշտ սկզբունքներ և կառավարել իրենք իրենց»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Մի օր Եղբայր Դ. Արթուր Հեյքոկը քայլում էր դեպի Եկեղեցու Վարչության շենքը, երբ տեսավ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացում էր շենքի կողքի դուռը: Ուզենալով շենք մտնել, որտեղ նա աշխատում էր որպես քարտուղար՝ Տասներկու Առաքյալների Քվորումում, եղբայր Հեյքոկը «շտապեց աստիճաններով վեր, երկու կամ երեքը միանգամից բարձրանալով՝ հասցնելու դռնից ներս մտնել նախքան այն կփակվեր: Նա հազիվ հասցրեց դա անել: Երբ նա շենք մտավ, նա կրկին շտապեց հասնելու Նախագահ Սմիթին՝ նրա հետ մեկտեղ վերելակ մտնելու համար: Նա բացատրեց նրան.«Հուսով եմ կարող եմ լինել այն բախտավորը, ով երկինք կսողոսկի այն դռնով, որ դուք կբացեք»: Սկզբում Նախագահ Սմիթը չպատասխանեց և Եղբայր Հեյքոկն անհանգստացավ, որ ձգտելով ծիծաղաշարժ լինել, նա ինչ-որ սխալ բան ասաց: Բայց «երբ նրանք հասան վերելակին Նախագահ Սմիթն ասաց՝ աչքով անելով. «Սրանից հետո, եղբա՛յր, երբևէ դրա վրա հույս չդնես»:[1]

Քարոզների և գործերի միջոցով Նախագահ Սմիթը հաճախ ուսուցանում էր այն սկզբունքը, որով նա կիսվել էր Եղբայր Հեյքոկի հետ. Նա շեշտում էր, որ չնայած վերջին Օրերի Սրբերը պետք է ջանասիրաբար օգնեն մյուսներին ստանալ ավետարանի օրհնությունները, փրկությունը անձնական պարտավորություն է: Նա նաև խրախուսում էր Սրբերին լինել ինքնապահով՝ տքնաջանորեն աշխատել նյութական կարիքները հոգալու համար: «Սա է ողջ կյանքի իմաստը, ասում էր նա, զարգացնել մեր ներուժը և հատկապես հասնել ինքնատիրապետման»:[2]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը սովորեց աշխատել, երբ փոքր տղա էր: Նրա հայրը հաճախ էր բացակայում տնից, այսպիսով «նա իր մանկության մեծ մասն անցկացրեց կատարելով մեծի աշխատանք»: Փաստորեն, նա այնքան ջանասեր աշխատող էր, որ «պատահականորեն ժառանգեց մի աշխատանք ավելի վաղ, քան պետք էր, երբ տղայական հպարտությամբ գաղտնի կթում էր ընտանեկան կովերից մեկին՝ ապացուցելու, որ կարող էր դա անել և այսպիսով, նրան հանձնարարվեց մշտապես անել այդ գործը»[3]

Աշխատելու նրա պատրաստակամությունը շարունակվեց, երբ նա ծառայեց լիաժամկետ միսիա Անգլիայում: Նրա կինը՝ Լյուին գրեց նրան հետևյալը, երբ նա այնտեղ էր. «Ես գիտեմ, որ դու շատ ավելի շատ ես սիրում պարտականությունը քան հաճույքը և, այսպիսով, ես այնքան շատ սեր և վստահություն ունեմ, որ կարծես թե զգում եմ, որ դու գրեթե այնքան մոտ ես կատարյալ երիտասարդ լինելուն, որքան կարող ես»:[4] Բացի իր պարտականությունը կատարելը՝ ուսուցանելով ավետարանը ուրիշներին, նա տքնաջան աշխատում էր ինքը սովորել ավետարանը: Տուն ուղարկած նամակներից մեկում, նա պատմել է սուրբ գրության հատվածն անգիր սովորելու իր ջանքերի մասին. «Ես փորձեցի ողջ օրը անգիր սովորել սուրբ գրության մի հատված և դեռ չեմ սերտել: Բայց ես վճռական եմ սովորել այն, նախքան վերջացնելս»:[5]

Նախագահ Սմիթը փոխանցեց իր աշխատելու էթիկան իր երեխաներին: Նա ասաց նրանց. «Մարդիկ մահանում են անկողնում: Եվ ձգտումը երբեք արդյունավետ չէ, երբ դուք անկողնում եք»: Մտքում ունենալով այս սկզբունքը նա և նրա կինը երեխաներին անպայման վաղ էին արթնացնում առավոտյան և անում էին իրենց մասը տունը մաքուր և կոկիկ պահելու համար: «Երբեմն Հայրիկի համար անբարոյական էր թվում մեզ անկողնում քնած տեսնել ժամը վեցից հետո», հիշում էր նրա որդիներից մեկը: «Ես, իհարկե, մի անգամ փորձեցի դա: Հայրիկը հոգաց այդ մասին»:[6] Նախագահ Սմիթն օգնում էր նաև տնային գործերում: Երբ նա և Լյուին նոր էին ամուսնացել, նա անում էր այնքան շատ աշխատանք, որքան կարողանում էր, իրենց առաջին տան կառուցման համար: Տարիների ընթացքում նա ինքն էր անում տան հիմնական վերանորոգումը, օգնում էր խոհանոցում և օգնում հավաքել միրգը ժամանակին և պահածոյացնում բանկաներում:[7]

Եղբայր Հեյքոքը, նույն մարդը, որը մի անգամ առաջ նետվեց հետևելու Նախագահ Սմիթին դեպի Եկեղեցու Վարչության շենքում, հետագայում դարձավ Եկեղեցու հինգ Նախագահների անձնական քարտուղար, ներառյալ՝ Նախագահ Սմիթը: Այս սերտ համագործակցության ընթացքում նա տեսավ Նախագահ Սմիթի հոգեպես իրեն բարելավելու շարունակական ջանքերը: Նա ասաց, որ հաճախ էր քայլում Նախագահ Սմիթի գրասենյակ և գտնում մարգարեին սուրբ գրություններն ուսումնասիրելիս կամ որևէ այլ գիրք կարդալիս:[8]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Տերն ակնկալում է մեզանից, որ մենք աշխատասեր լինենք՝ ձգտելով ֆիզիկական և հոգևոր օրհնությունների:

Տերն ասել է [Ադամին]. «Երեսիդ քրտինքովը հաց ուտես» [Ծննդոց Գ.19, տես նաև Մովսես 4.25]:

Եկեղեցու վաղ օրերին այս հովտում [Յուտայում], մեծ շեշտ էր դրվում աշխատասիրության վրա Նախագահ Բրիգամ Յանգի և մյուս եղբայրների կողմից և դա անհրաժեշտ էր, որովհետև մեր նախահայրերը եկան այստեղ առանց որևէ բանի: Նրանք ստիպված էին աշխատել: Նրանք ստիպված էին աշխատասեր լինել: Կարևոր էր, որ նրանք արտադրեին այն բաները, որոնց կարիքն ունեին, և այդ պատճառով դրա վերաբերյալ և այդ ուղղությամբ անընդհատ խորհուրդ էր տրվում, որ նրանք պետք է աշխատասեր լինեին: Նրանց ասվել էր, որ նրանք հպարտ չլինեին իրենց սրտերում: Նրանք եկան հասան այստեղ, որտեղ կարող էին երկրպագել Տիրոջը՝ իրենց Աստծուն և պահել Նրա պատվիրանները: Նրանց ասվել էր խոնարհ լինել ինչպես նաև ջանասեր. . . Օ՜հ, ես ցանկանում եմ, որ մենք հիշենք այդ: Ես ափսոսում եմ, որ մենք մոռացել ենք: . . .

. . . Տերն ասել է. «Ծույլ մի եղիր. Քանզի նա, ով ծույլ է, չպետք է ուտի աշխատավորի հացը, ոչ էլ հագնի նրա հանդերձները» [ՎԱՌ 42.42]: Դա հիանալի, առողջ միտք է, այնպես չէ՞: Ինչո՞ւ պետք է մարդը ծուլության մեջ ճաշակի աշխատասերի աշխատանքից՝ տալով այդ մարդուն, ով ծույլ է, ֆիզիկապես ի վիճակի

է աշխատելու։ Ես չեմ համակրում որևէ տեսակի շարժման, որը միտված է կործանել մարդկությանը՝ խրախուսելով մարդկանց ծույլ լինել և ինձ համար նշանակություն չունի, թե որ տարիքում է։ Նշանակություն չունի, թե որքան ծեր է, եթե մարդը ֆիզիապես ուժեղ է և կարող է կատարել ծառայություններ, նա պետք է իրեն հոգ տանի, որը Տերն ակնկալում է, որ նա անի։

Տերն ասաց մեկ ուրիշ հայտնության մեջ.

«Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ամեն տղամարդ, ով պարտավոր է ապահովել իր սեփական ընտանիքը, թող ապահովի այն, և ոչ մի դեպքում նա չի կորցնի իր պսակը. և թող նա ծառայի եկեղեցում։ Իսկ ծույլը տեղ չպիտի ունենա եկեղեցում, եթե չապաշխարի և չուղղի իր ճանապարհները [ՎԿՈՒ 75.28–29]։

Այսպիսով, սա է այն խորհուրդը, որ Տերը տվել է Եկեղեցուն այսօր։ Եվ սա չի վերաբերում միայն դաշտերը հերկելուն կամ հնձելուն ու բերքահավաքին և արդյունաբերությունում աշխատելուն, սակայն դա նշանակում է նմանապես, որ մարդ պետք է լինի աշխատասեր հոգևոր բաներում ևս, ինչպես ֆիզիկականում, որի միջոցով հայթայթում է իր ապրուստը։[9]

Մենք այստեղ ենք մեծ նպատակի համար։ Այդ նպատակը 100 տարի ապրելը չէ կամ պակաս և մեր դաշտերը ցանելը, բերքը հնձելը, միրգը հավաքելը, տներում ապրելը և մեզ շրջապատելը մահկանացու կյանքի անհրաժեշտ իրերով։ Դա չէ կյանքի նպատակը։ Այդ բաներն անհրաժեշտ են այստեղ մեր գոյության համար և դա է պատճառը, որ մենք պետք է աշխատասեր լինենք։ Բայց որքան շատ մարդիկ են իրենց ժամանակն անցկացնում մտածելով, որ այն ամենը ինչ այս կյանքում պետք է անենք դա այս աշխարհի բաները կուտակելն է, ապրելու հարմարավետ և շրջապատելու իրենց բոլոր ճոխություններով, և արտոնություններով և հաճույքներով, որոնք մահկանացու կյանքի համար հնարավոր է ապահովել և երբեք չմտածել որևէ այլ բանի մասին։

Ինչո՞ւ են այս բաները միայն ժամանակավոր օրհնություններ։ Մենք ուտում ենք ապրելու համար։ Մենք հագնվում ենք՝ տաք լինելու և ծածկվելու համար։ Մենք տներ ունենք ապրելու մեր հանգստի և հարմարության համար, բայց մենք պարտավոր ենք նայել բոլոր այս օրհնությունների վրա որպես ժամանակավոր

օրհնությունների, որոնց կարիքը կա այս կյանքում մեր ճանապարհորդության ընթացքում: Եվ դրանք բոլորը բարի են մեզ համար: Մենք չենք կարող դրանցից ոչ մեկը մեզ հետ վերցնել, երբ հեռանանք: Ոսկին, արծաթը և թանկարժեք քարերը, որոնք կոչվում են հարստություն, ոչ մի օգուտ չունեն մարդու համար, բացի միայն այն դեպքում, երբ դրանք հնարավորություն են ընձեռում իր մասին հոգ տանել և բավարարել իր կարիքներն այստեղ:[10]

Տերն. . . ակնկալում է մեզանից գիտելիք ունենալ նյութական բաների վերաբերյալ, որպեսզի մենք կարողանանք հոգ տանել մեզ նյութապես, որպեսզի մենք կարողանանք ծառայել մեր մերձավորին, և որպեսզի մենք կարողանանք տանել ավետարանի ուղերձը Նրա մյուս զավակներին ողջ աշխարհում:[11]

Մեր այստեղ լինելու նպատակը Հոր կամքը կատարելն է, ինչպես որ այն արվում է երկնքում, գործել արդարություն երկրում, հաղթել ամբարշտությունը և դնել այն մեր ոտքի տակ, հաղթել մեղքը և մեր հոգիների թշնամուն, բարձրանալ թշվառ, ընկած մարդկության թերություններից և ամբարշտությունից վեր, Տիրոջ ոգեշնչմամբ և նրա զորության դրսևորմամբ և այսպես դառնալ սրբեր և Տիրոջ ծառաներ երկրում:[12]

2

Մենք վերջում պատասխանատու ենք Տիրոջը պարտականությանը հետևելու համար:

Մենք գործ ունենք մեր հավատքի և մեր խղճի հետ, դուք գործ ունեք ոչ թե ինձ հետ, ոչ թե Եկեղեցու Նախագահության հետ, այլ Տիրոջ հետ: Ես գործ չունեմ մարդկանց հետ իմ տասանորդի առնչությամբ, իմ գործերը Տիրոջ հետ են, այսինքն՝ Եկեղեցում իմ սեփական վարքի վերաբերյալ և ինչ վերաբերում է Եկեղեցու մյուս օրենքներին և կանոններին հետևելուն: Եթե ես թերանամ հետևել Եկեղեցու օրենքներին, ես պատասխանատու եմ Տիրոջը և ի վերջո ստիպված կլինեմ պատասխան տալ Նրան, պարտականությունն անտեսելու համար և ես գուցե ստիպված լինեմ պատասխան տալ Եկեղեցուն իմ անդամակցության համար: Եթե ես կատարեմ իմ պարտքը, ինձանից սպասվող Տիրոջ պահանջները՝ համաձայն իմ հասկացողության, ապա ես պետք է ունենամ վիրավորանքից զերծ խիղճ: Ես պարտավոր եմ բավականություն ունենալ իմ հոգում, որ ես

«Ոչ մի մարդ Հոր որևէ հրամանագրով երբևէ չի հարկադրվել բարիք անել. . . Յուրաքանչյուրը կարող է գործել ինքնուրույն»:

ուղղակի արել եմ իմ պարտքը, ինչպես որ հասկանում եմ այն և ես կընդունեմ հետևանքները: Ինձ համար դա իմ և Տիրոջ միջև հարց է, այդպես է մեզանից ամեն մեկի համար:

Նա, ով Իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց իրականացնելու առաքելությունը, որը Նա արեց, նույնպես ուղարկեց ամեն հոգու իմ ձայնի սահմաններում և իսկապես ամեն տղամարդ և կին աշխարհում՝ իրականացնելու առաքելություն, և այդ առաքելությունը չի կարող իրականացվել անփութությամբ, ոչ էլ անտարբերությամբ, ոչ էլ կարող է իրականացվել անգիտությամբ:

Մենք պետք է սովորենք պարտականությունը, որի ներքո ենք մենք Տիրոջ առջև և միմյանց հանդեպ, այս բաները էական են և մենք չենք կարող բարգավաճել հոգևոր բաներում, մենք չենք կարող աճել Տիրոջ գիտության կամ իմաստության մեջ, առանց նվիրելու մեր մտքերը և մեր ջանքերը դեպի մեր իսկ բարելավումը, դեպի Տիրոջ բաների վերաբերյալ մեր իսկ իմաստության և գիտելիքի մեծացումը:[13]

Այնքան հեշտ է մարդկանց համար մեղադրել ուրիշ ինչ-որ մեկին իրենց իսկ սխալների համար և այնքան հեշտ է մեզ համար մեր մարդկային էության պատճառով մեզ վերագրել ինչ-որ բան, երբ այն իրականացվել է, գոհացուցիչ է և օգտակար: Բայց մենք երբեք չենք ուզում պատասխանատվություն կրել մեր սխալների համար, որոնք գոհացուցիչ չեն և, այսպիսով, մենք ջանում ենք դնել այս պատասխանատվությունը որևէ ուրիշ տեղ և ուրիշների վրա. . . Եկեք ընդունենք մեր իսկ պարտականությունները և չջանանք մի կողմ դնել դրանք:[14]

3

Աստված մեզ տվել է ազատ կամք և ակնկալում է մեզանից անել այն ամենը, ինչ ինքներս կարող ենք:

Ազատ կամքը մեծ պարգև է, որը Տերը տվել է յուրաքանչյուր հոգու ինքնուրույն գործելու համար, կատարելու իր իսկ ընտրությունը, լինելու գործակալ՝ հավատալու զորությամբ և ընդունելու ճշմարտությունը և ստանալու հավերժական կյանք կամ մերժելու ճշմարտությունը և ստանալու խղճի խայթ: Սա Աստծո մեծագույն պարգևներից մեկն է: Ի՞նչ կարող ենք լինել առանց դրա, եթե մենք հարկադրված լինեինք ինչպես որոշ մարդիկ կամենում են իրենց կամքը պարտադրել իրենց ընկերներին: Այնտեղ չի կարող փրկություն լինել, չի կարող արդարակեցության պարգևներ լինել, ոչ ոք չի կարող պատժվել անհավատարմության համար, որովհետև մարդիկ պատասխանատու չէին լինի իրենց Արարչի առջև:[15]

Ջոզեֆ Սմիթին հարցրեցին, թե ինչպես է նա կառավարում այդպիսի մի մեծ և բազմազան ժողովրդի, ինչպիսին Վերջին Օրերի Սրբերն են: Նա պատասխանեց. «Ես ուսուցանում եմ նրանց ճիշտ սկզբունքներ և նրանք կառավարում են իրենք իրենց»:

Սա է այն սկզբունքը, որի վրա մենք գործում ենք Եկեղեցում: Մենք ակնկալում ենք մեր անդամներից ամենուրեք սովորել ճիշտ սկզբունքներ և կառավարել իրենք իրենց:[16]

Ազատ կամքի այս մեծ պարգևը, որը մարդուն տրված արտոնությունն է՝ կատարելու իր սեփական ընտրությունը, երբեք չեղյալ չի հայտարարվել, և երբեք չի էլ հայտարարվի: Դա հավերժական սկզբունք է՝ յուրաքանչյուր հոգու տալով մտքի և գործողության ազատություն: Ոչ մի մարդ Հոր որևէ հրամանագրով երբևէ չի

հարկադրվել բարիք անել, ոչ մի մարդ երբևէ չի պարտադրվել չարիք անել: Յուրաքանչյուրը կարող է գործել ինքնուրույն: Այս ազատ կամքը կործանելը և մարդկանց ստիպելը իր կամքը կատարել սատանայի ծրագիրն է: Չի կարող լինել բավարար գոյություն առանց այս մեծ պարգևի: Մարդիկ պետք է ընտրելու արտոնություն ունենան, նույնիսկ, այն աստիճանի, որ կարող է ապստամբեն աստվածային հրամանագրերի դեմ: Իհարկե փրկությունը և վեհացումը պետք է գա ազատ կամքով՝ առանց բռնադատման, և անձնական արժանավորության միջոցով, որպեսզի արդար վարձք տրվի և ճիշտ պատիժ սահմանվի օրինազանցին:[17]

Մենք հավատում ենք, որ շնորհով է, որ փրկվում ենք, այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել, և որ կառուցելով Քրիստոսի Քավության հիմքի վրա, բոլոր մարդիկ պետք է գործեն իրենց փրկությունը ահով և դողով Տիրոջ առջև [տես 2 Նեփի 25.23, Մորմոն 9.27]:[18]

Կարևոր փաստ է, որը ցույց է տրվում ուղիղ գործերով և բոլոր սուրբ գրությունների ենթատեքստերով, որ Աստված ամեն ինչ արել է մարդկանց համար, որոնք մարդիկ չէին կարող իրենք անել իրենց համար փրկություն ապահովելու համար, բայց նա ակնկալում է մարդկանցից անել բոլոր բաներն իրենց համար, որ իրենց ուժում է:

Այս սկզբունքից ելնելով՝ երկնքի կարգին հակառակ է, որը հաստատվել է նախքան երկրի հիմնադրումը, որ սուրբ սուրհանդակները, ովքեր անցել են հարության միջով կամ սուրհանդակները, ովքեր պատկանում են երկնային ոլորտին, գան երկիր և կատարեն աշխատանք մարդկանց համար, որը նրանք իրենք կարող են անել . . .

Ամենալուրջ սխալը կլիներ հավատալ, որ Հիսուսն ամեն ինչ արել է մարդկանց համար, եթե միայն նրանք խոստովանեն Նրան իրենց շուրթերով, և որ նրանց համար այլևս ոչինչ չկա անելու: Մարդիկ անելու բաներ ունեն, եթե նրանք կամենում են ձեռք բերել փրկություն: Դա այս հավերժական օրենքի հետ ներդաշնակության մեջ էր, երբ հրեշտակն ուղարկեց Կոռնելիուսին Պետրոսի մոտ [տես Գործք Ժ] և երբ Անանիան ուղարկվեց Պողոսի մոտ [տես Գործք Թ.1–22]: Դա, այս օրենքին հնազանդվելու պատճառով էր, երբ Մորոնին, ով հասկանում էր Նեփիի թիթեղների վրայի գրվածքները, չկատարեց թարգմանությունը,

այլ Տիրոջ ղեկավարությամբ տվեց Ջոզեֆ Սմիթին Ուրիմն ու Թումիմը, որի միջոցով նա կարողացավ իրականացնել այդ կարևոր աշխատանքը Աստծո պարգևով և զորությամբ։[19]

4

Մեր երկու մեծ պարտականություններն են՝ ձգտել մեր սեփական փրկությանը և աշխատել ջանասիրաբար ուրիշների փրկության համար։

Մենք ունենք այս երկու մեծ պարտականությունները. . . Առաջինը՝ ձգտել մեր սեփական փրկությանը, իսկ երկրորդը՝ մեր պարտականությունն է մեր մերձավորի հանդեպ։ Այժմ ես վերցնում եմ այն, ինչը իմ առաջին պարտականությունն է, քանի որ ես անհատապես մտահոգված եմ ձգտել իմ իսկ փրկությանը։ Դա ձեր առաջին անհատական պարտավորությունն է և դա այդպես է այս Եկեղեցու ամեն մի անդամի հետ։[20]

Մեր առաջին մտահոգությունը պետք է լինի մեր իսկ փրկությունը։ Մենք պետք է ձգտենք ավետարանական ամեն մի օրհնության մեզ համար։ Մենք պետք է մկրտվենք և մտնենք սելեստիալ ամուսնության կարգի մեջ, որպեսզի կարողանանք դառնալ մեր Հոր արքայության լրիվության ժառանգներ։ Ապա մենք պետք է մտահոգվենք մեր ընտանիքների, մեր երեխաների և մեր նախնիների փրկությամբ։[21]

Մեր. . . պարտքն է փրկել աշխարհը՝ ինչպես մահացածներին, այնպես էլ ողջերին։ Մենք փրկում ենք ողջերին, ովքեր կամենում են ապաշխարել ավետարանը քարոզելով ազգերի մեջ և հավաքելով Իսրայելի զավակներին՝ սրտով մաքուրներին նրանց միջից։ Մենք փրկում ենք մահացածներին՝ գնալով Տիրոջ տունը և կատարելով այս ծիսակատարությունները՝ մկրտություն, ձեռնադրում, հաստատում և այսպիսի այլ բաներ, ինչպես որ Տերն է պահանջել դա մեր ձեռքից, նրանց համար։[22]

Սա ինչպես իմ պարտքն է, այնպես էլ ձերը՝ իմ եղբայրներ և իմ քույրեր, քանի որ պատասխանատվությունը դրվել է նմանապես ձեր վրա՝ անելու այն լավագույնը, ինչ ձեր ուժում է, և չանտեսեք, այլ ջանաք ողջ ձեր հոգով մեծարել կոչումները, որ Տերն է տվել մեզ, աշխատել տքնաջանորեն մեր սեփական տների փրկության համար, մեզանից յուրաքանչյուրը և մեր հարևանների փրկության համար, նրանց փրկության համար, ովքեր ամենուրեք են։[23]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչն է ձեզ տպավորում Նախագահ Սմիթի ջանքերից իր երեխաներին աշխատել սովորեցնելիս (տես «Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժինը)։ Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք երեխաներին ավելի պարտավորված լինել։
- Ինչպե՞ս է բաժին 1-ի ուսմունքները մեծացնում մեր հասկացողությունը ինքնապահովման վերաբերյալ։
- Վերանայեք խորհուրդը բաժին 2-ում։ Ի՞նչ է նշանակում «պարտավոր լինել Տիրոջը»։
- Նախագահ Սմիթն ուսուցանել է. «Մենք ակնկալում ենք մեր անդամներից ամենուրեք սովորել ճիշտ սկզբունքներ և կառավարել իրենք իրենց» (բաժին 3)։ Ինչպե՞ս կարող է այս ուսմունքն օգտակար լինել ընտանիքներին։ Ինչպե՞ս կարող է այն առաջնորդել քահանայության քվորումները և Սփոփող Միությունները։
- Ուրիշներին փրկելու մեր ջանքերում, ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ «առաջինը պետք է մտահոգվենք մեր իսկ փրկությամբ» (տես բաժին 4)։

Առնչվող սուրբ գրություններ

Փիլիպպեցիս Բ.12, 2 Նեփի 2.14–16, 25–30, ՎԵՈՒ 58.26–28

Օգնություն ուսուցչին

Երբ ուսուցանեք այս գրքից, հրավիրեք մյուսներին կիսվել իրենց մտքերով, ուղղել հարցեր և միմյանց ուսուցանել։ Երբ նրանք ակտիվորեն մասնակցեն, նրանք ավելի լավ պատրաստված կլինեն սովորել և ստանալ անձնական հայտնություն (էջ IX այս գրքում)։

Հղումներ

1. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 358–59.
2. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 10.
3. Joseph Fielding Smith Jr. and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith,* 51–52.
4. Louie Shurtliff Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 113.
5. Joseph Fielding Smith, in *The Life of Joseph Fielding Smith,* 116.
6. In Joseph Fielding McConkie, "Joseph Fielding Smith," in Leonard J. Arrington, ed. *The Presidents of the Church* (1986), 336–37; տես նաև *The Life of Joseph Fielding Smith,* 217–21.
7. Տես *The Life of Joseph Fielding Smith,* 12–13, 155–57; Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 202.
8. Տես Jay M. Todd, "A Day in the Life of President Joseph Fielding Smith," *Ensign,* July 1972, 5.
9. In Conference Report, Apr. 1945, 48–49.
10. "Salvation for the Dead," *Utah Genealogical and Historical Magazine,* Apr. 1926, 154–55; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 68–69.
11. Address at the Logan Utah Institute of Religion, Jan. 10, 1971, 2, Church History Library; unpublished manuscript.
12. In Conference Report, Oct. 1969, 108.
13. In Conference Report, Oct. 1969, 108.
14. In Conference Report, Oct. 1932, 88.
15. In Conference Report, Oct. 1949, 88.
16. In Conference Report, British Area General Conference 1971, 6; տես նաև *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 284.
17. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 2: 20.
18. "Out of the Darkness," *Ensign,* June 1971, 4.
19. "Priesthood—Restoration of Divine Authority," *Deseret News,* Sept. 2, 1933, Church section, 4; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 90–91.
20. "The Duties of the Priesthood in Temple Work," *Utah Genealogical and Historical Magazine,* Jan. 1939, 3; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 145.
21. *Sealing Power and Salvation,* BYU Speeches of the Year (Jan. 12, 1971), 2.
22. In Conference Report, Oct. 1911, 120; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 192–93.
23. In Conference Report, Apr. 1921, 41.

Եկեղեցու ողջ պատմության ընթացքում կանայք կարևոր դեր են կատարել Տիրոջ վերջին օրերի աշխատանքում։

Վերջին Օրերի Սուրբ Կանանց աշխատանքը. «Անձնազոհ նվիրում այս փառահեղ գործին»

«Սահման չկա այն բարիքին, որ մեր քույրերը կարող են անել»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1963թ. հոկտեմբերի 2-ին Սփոփող Միության գերագույն ժողովում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Մենք՝ Եկեղեցու Եղբայրներս, պատվում ենք և հարգում մեր հիանալի քույրերին այս փառահեղ գործին նրանց անձնազոհ նվիրվածության համար»:[1]

Կատարելով այս հայտարարությունը՝ Նախագահ Սմիթը խոսում էր տարիների փորձից: Նա կյանքը անցկացրել էր : հավատարիմ Վերջին օրերի Սուրբ Կանանց կողքին: Այդ ծառայությունը սկսվել էր 1880–ականների վերջում, երբ նա մոտ 10 տարեկան էր: Այդ ժամանակ Վերջին Օրերի Սուրբ կանանց խրախուսվեց կրթություն ձեռք բերել բժշկության և առողջապահության ասպարեզում: Նրա մայրը՝ Ջուլինա Լ. Սմիթը հետևեց այդ խորհրդին և ստացավ կրթություն՝ ծառայելու որպես մանկաբարձուհի: Մայրը հաճախ էր արթնացնում նրան կեսգիշերին, որպեսզի նա ձիակառքը վարեր դեպի այն տունը, որտեղ մանկիկ պիտի ծնվեր: Իր մորն այս ձևով ծառայելով՝ երիտասարդ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը տեսել էր Եկեղեցու կանանց ուժի և կարեկցանքի օրինակը:[2] Հետագայում Քույր Սմիթը ծառայեց որպես Սփոփող Միության գերագույն նախագահության խորհրդական:

Նախագահ Սմիթը մեծ հարգանք ուներ Սփոփող Միության հանդեպ, որը, ըստ նրա խոսքերի, «երկրի վրա Աստծո

թագավորության կենսական մասն է կազմում»:[3] Նրա երկրորդ կինը՝ Էթելը, 21 տարի ծառայեց որպես Սփոփող Միության գերագույն հանձնախմբի անդամ: Քույր Էմի Բրաուն Լիմանը, որը ծառայում էր Էթելի հետ հանձնախմբում, իսկ հետագայում ծառայեց որպես Սփոփող Միության գերագույն նախագահ, ասել է. «Քույր Սմիթը ամենափայլուն կանանցից էր, որ երբևէ ճանաչել եմ: Ողջ հանձնախմբում ես նրան էի համարում լավագույն գրողն ու խոսողը»:[4]Այս պաշտոնում Էթելը հաճախում էր ցցի համաժողովներին՝ հրահանգավորելով տեղի Սփոփող Միության քույրերին: Նա և Նախագահ Սմիթը որոշ Եկեղեցական հանձնարարությունների միասին էին գնում և նրանք հաճախ էին երկուսով կիսում ամբիոնը՝ անդամներին ուսուցանելու համար:[5]

Էթելի մահից հետո, Նախագահ Սմիթը ամուսնացավ Ջեսսի Էվանսի հետ: Ջեսսին ուղեկցում էր նրան ամեն անգամ, երբ նա ճանապարհորդում էր՝ ուսուցանելու Սրբերին: Նա գեղեցիկ երգեցիկ ձայն ուներ և Նախագահ Սմիթը միշտ ցանկանում էր, որ նա երգեր ժողովներում, որոնց նրանք մասնակցում էին: Երեց Ֆրենսիս Մ. Գիբբոնսը, որը ծառայում էր որպես քարտուղար Առաջին Նախագահությունում, հիշում է. «Երբ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն էր նախագահում, նա կամենում էր, որ կինը երգ կատարեր՝ հենց միայն այն պատճառով, որ նա երբեք չէր հոգնում նրա երգելուց: Բացի դրանից, այնուամենայնիվ, նրա լավ մշակված կոնտրալտո ձայնը, սրբազան հիմներ երգելով, հոգևոր հատուկ զգացողություն էր հաղորդում ժողովներին՝ ոգեշնչելով ունկնդիրներին, և բարձրացնելով իր իսկ ունակությունները խոսվող խոսքը հաղորդելիս: Հետագայում, իր կնոջ հետևողական և կատակախառը պնդումներից հետո, Ջոզեֆը ժամանակ առ ժամանակ միանում էր Ջեսսիին զուգերգ կատարելու, միախառնելով իր գեղեցիկ բարիտոնը նրա ձայնին: Այդպիսի առիթների դեպքում, նրանք, սովորաբար, նստում էին միասին դաշնամուրի աթոռին, մինչ Ջեսսիին նվագակցում էր, չափավորելով իր սովորական, լիակոկորդ ձայնը, որպեսզի չխլացներ իր ամուսնու երգեցողությունը»:[6]

Որպես Եկեղեցու Նախագահ՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը կանոնավորապես աշխատում էր Քույր Բելե Ս. Սփաֆորդի՝ Սփոփող Միության գերագույն նախագահի հետ: Հետագայում քույր Սփաֆորդը խոսել է նրա հետ աշխատելու իր փորձառության մասին. «Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը՝ ժողովրդի հանդեպ

մեղմություն և մեծ սեր ունեցող անձնավորություն էր և ամեն անգամ ցուցաբերում էր Եկեղեցու կանանց աշխատանքի խորը գիտակցություն, և նա փոխանցում էր այդ Սփոփող Միության նախագահությանը անհամար դեպքերում և տարբեր ձևերով, բացելով մեր տեսադաշտը և ուղղորդելով մեր ուղիները»:[7]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Սուրբ գրքերը պատմում են հավատարիմ կանանց մասին, ովքեր պարտականություններ են ունեցել Տիրոջ Եկեղեցում:

Մենք կարող ենք կարդալ Թանկագին Մարգարիտում, որ Ադամի և Եվայի վրա անկման հետևանքները բերվելուց հետո, Եվան քարոզեց հետևյալ խոսքը: Այն հակիրճ է, բայց զարմանալիորեն իմաստալի.

«. . . Եթե չլիներ մեր օրինազանցությունը, մենք երբեք սերունդ չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին [Մովսես 5.11]:

«Եվ Ադամն ու Եվան օրհնեցին Աստծո անունը, և *նրանք* բոլոր բաները հայտնի դարձրեցին իրենց որդիներին ու դուստրերին» [Մովսես 5.12, շեղագիրն ավելացված է]:

Մենք սրանից սովորում ենք, որ Եվան, ինչպես Ադամը, հայտնություն և պատվիրան ստացավ ուսուցանել իրենց երեխաներին հավերժական կյանքի ուղիները:[8]

Մենք կարդում ենք, որ վաղ օրերում Իսրայելի կանայք ակտիվ էին և կատարում էին պարտականություններ [տես Ելից ԺԵ.20, Դատավորաց Դ–Ե]:[9]

Նոր կտակարանում մենք կարդում ենք մեծ թվով հավատարիմ կանանց մասին, ովքեր որոնում էին և տալիս խորհուրդ: Նրանցից շատերը հետևում էին Տիրոջը և ծառայում Նրան [տես Ղուկաս Ը.1–3, Ժ.38–42]:[10]

2

Վերջին օրերին Սփոփող Միության քույրերը կենսական դեր են կատարում Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցում:

1842թ. մարտի 17-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթը հանդիպեց Նավուի Եկեղեցու մի քանի քույրերի հետ և նրանց կազմակերպեց մի միության մեջ, որին տրվեց «Նավույի Կանանց Սփոփող Միություն» անունը. . . Չի կարող լինել որևէ կասկած, որ այս կազմակերպությունը հայտնությամբ էր ստեղծվել: Այս ճշմարտությունը բազմաթիվ անգամներ դրսևորվել է տարիների ընթացքում և այսօր նրա արժեքը և անհրաժեշտությունը մեծապես ակնհայտ է:[11]

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, անկասկած, լիովին չէր կազմավորվի, եթե այս սքանչելի կազմակերպությունը գոյություն չունենար. . . Այս վերականգնումը լիակատար չէր լինի առանց Սփոփող Միության, որում քույրերը կարողանում են իրականացնել աստվածայնորեն նշանակված ծառայությունը, որն այնքան կարևոր էր Եկեղեցու բարօրության համար:[12]

«Նավուի Կանանց Սփոփող Միությունը» կազմավորվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից Երեց Ջոն Թեյլորի օգնությամբ: Տերը հայտնել էր, որ Եկեղեցու կանայք պետք է կազմավորվեին որպես միություն, քանի որ նրանց համար կարևոր աշխատանք կար անելու՝ օգնելու «առաջ տանել և հաստատել Սիոնի գործը» [ՎևՈւ 6.6]: Քույրերի այս աշխատանքը հիմնականում պետք է բոլոր բաներում ի օգուտ լիներ մի տեղի համար սելեստիալ արքայությունում: Նրանց նաև պարտականություն է տրված օգնել ողորմածության և սփոփանքի գործին դժբախտության և տառապանքի մեջ գտնվող աղքատներին, հիվանդներին և չարչարվածներին ողջ Եկեղեցում: Այդ կազմակերպության ստեղծումից ի վեր բոլոր տարիների ընթացքում այս միության քույրերը հավատարիմ են եղել իրենց կոչմանը և իրենց փառավոր են արել այդ աշխատանքին իրենց հավատարմությամբ: Ոչ մի հանձնարարություն շատ դժվար չի եղել, ոչ մի պարտականություն չի անտեսվել և նրանց ծառայությունների միջոցով հազարավորներ են օրհնվել:[13]

Սփոփող Միությունն. . . աճել է՝ դառնալով ուժ Եկեղեցում: Բացարձակապես անհրաժեշտ է՝ մենք խոսում ենք դրա մասին որպես օժանդակ կազմակերպություն, որը նշանակում է օգնող

Սփոփող Միությունը «մեծագույն կանանց կազմակերպությունն է աշխարհում, կազմակերպություն, որն Աստծո թագավորության կենսական մասն է կազմում երկրի վրա»:

կազմակերպություն, բայց Սփոփող Միությունն ավելին է, քան դա: Այն անհրաժեշտություն է:[14]

Ես ցանկանում եմ գովաբանել այս մեծ կազմակերպության քույրերին, նրանց ազնվության և հավատարմության համար, որը դրսևորվել է անընդհատ՝ սկսած Նավուի օրերից:[15]

Տերը գոհ է ձեր աշխատանքից: Դուք ձեր ծառայության միջոցով օգնել եք կառուցել և զորացնել Աստծո թագավորությունը: Սփոփող միության աշխատանքը ճիշտ նույնքան անհրաժեշտ է Եկեղեցում, որքան, ես կասեի, Քահանայության քվորումներինը: Արդ, ոմանք երևի այնպես զգան, որ ես չափից ավելի ուժեղ եմ արտահայտվում, բայց իմ կարծիքով աշխատանքը, որ դուք, կամ մեր հիանալի քույրերն են անում, գտնում է իր տեղը և ճիշտ նույնքան կարևոր է այս թագավորության կառուցման, նրա զորացման, այն տարածելու, հիմք դնելու համար, որի վրա

մենք բոլորս կարող ենք կառուցել, ճիշտ նույնքան, որքան եղբայրների համար է, ովքեր կրում են Աստծո Քահանայությունը: Մենք չենք կարող գործել առանց ձեզ:[16]

[Սփոփող Միության քույրերը] աշխարհում մեծագույն կանանց կազմակերպության անդամներն են, կազմակերպություն, որը Աստծո թագավորության կենսական մասն է կազմում երկրի վրա և այնպես է նախագծված և գործում, որ այն օգնում է իր հավատարիմ անդամներին ձեռք բերել հավերժական կյանք մեր Հոր արքայությունում: . . .

Սփոփող Միությունը հիմնադրվել է ոգեշնչման ոգով, առաջնորդվել է այդ ոգով [սկզբից ի վեր] և մեր անհամար հիանալի քույրերի սրտերում սերմանել այն ցանկությունները արդարակեցության, որը գոհացուցիչ է եղել Տիրոջ համար:[17]

3

Սփոփող Միության քույրերն օգնում են հոգալ Աստծո զավակների ֆիզիկական և հոգևոր բարօրության մասին:

Տերն Իր իմաստությամբ կանչել է մեր քույրերին օժանդակելու Քահանայությանը: Նրանց կարեկցանքի, սրտի նրբազգացության և բարության շնորհիվ Տերը համարում է [կանանց] և տալիս նրանց պարտականություններ և պարտավորություններ՝ լինելու ծառաներ կարիքավորներին ու չարչարվածներին: Նա նշել է ուղին, որին նրանք պիտի հետևեն, և Նա տվել է նրանց այս մեծ կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխի եպիսկոպոսների ղեկավարության ներքո և լինելու ներդաշնակության մեջ ծխի եպիսկոպոսների հետ, հոգ տանելով մեր ժողովրդի կարիքների համար՝ ինչպես հոգեպես, այնպես էլ ֆիզիկապես:

Եվ Տերը կարող է կանչել մեր քույրերին գնալ տները և սփոփել կարիքավորներին, օգնել և Տժանդակել չարչարվածին, ծնկի գալ և աղոթել նրանց հետ, և Տերն ականջ կդնի քույրերի աղոթքներին, երբ դրանք մատուցվում են անկեղծորեն հիվանդների համար, ճիշտ ինչպես Նա լսում է Եկեղեցու երեցների աղոթքները:[18]

Սփոփող Միության նպատակներն ու պարտականությունները բազմաթիվ են. . . Հայրս՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն [ասել է]. «Սա մի կազմակերպություն է, որը հիմնադրվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից: Ուստի, դա Եկեղեցու ամենահին

օժանդակ կազմակերպությունն է և այն առաջնակարգ կարևորություն ունի: Այն չի առնչվում միայն աղքատների կարիքներին, այլ նրա պարտականության մի մասն է կազմում՝ և ավելի մեծ մասը նաև, հոգալ Սիոնի մայրերի և դուստրերի հոգևոր բարօրության ու փրկության մասին, հետևելու, որ ոչ ոք չանտեսվի, այլ որ բոլորը պահպանված լինեն դժբախտության, աղետի, խավարի ուժերի և այն չարիքների դեմ, որոնք սպառնում են նրանց աշխարհում: Սփոփող Միության պարտականությունն է հոգ տանել իրենց իսկ հոգևոր բարօրությանը և Եկեղեցու բոլոր կին անդամներին»:[19]

Սփոփող Միության պարտականությունն է ոչ միայն հոգալ նրանց մասին, ովքեր Սփոփող Միության անդամ են, այլ նրանց աշխատանքը պիտի տարածվի այդ սահմաններից այն կողմ: Որտեղ էլ որ ինչ-որ մեկը դժբախտության մեջ լինի, դժվարությունների մեջ, օգնության կարիք ունենա, հիվանդ կամ չարչարված լինի, մենք դիմում ենք Սփոփող Միությանը. . . Նրանք կարող են կատարել մեծ և սքանչելի աշխատանք՝ քաջալերելով կամակորներին, օգնելով նրանց, ետ բերելով նրանց գործունեության, օգնելով նրանց հաղթահարել իրենց թուլությունները կամ մեղքերն ու թերությունները, և բերելով նրանց ճշմարտության իմացությանը: Ես ասում եմ չկա սահման այն բարիքին, որ մեր քույրերը կարող են անել:

. . . Ես չգիտեմ, թե ինչ կանեին ցցի նախագահները և ծխի եպիսկոպոսները, եթե նրանք չունենային Սփոփող Միության այս հիանալի քույրերին, որոնց կարող են վստահել, որոնց կարող են դիմել ծառայության համար, շատ անգամներ հաղթահարելով իրավիճակները, որոնք շատ նուրբ մոտեցում են պահանջում, այսինքն՝ մեր եղբայրների համար, բայց որոնք մեր քույրերը կարող են կատարել մեծագույն արտոնությամբ: Սքանչելի կլիներ, եթե Եկեղեցու բոլոր անդամները կատարյալ լինեին: Եթե դա այդպես լիներ, մենք բոլորս ավելի քիչ պատասխանատվություն կունենայինք՝ ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, բայց այդ ժամանակը չի եկել: Մենք ունենք անդամներ մեր քույրերի մեջ, ովքեր խրախուսանքի կարիք ունեն, մի փոքր կարիք օգնության՝ ինչպես հոգեպես, այնպես էլ ֆիզիկապես, և ոչ ոք չի կարող դա անել ավելի լավ, քան մեր քույրերը, ովքեր պատկանում են այս մեծ և սքանչելի կազմակերպությանը:

Այս աշխատանքի մեջ քույրերը կարող են օգնություն ցույց տալ՝ խրախուսելով և օգնելով կամակորներին, անտարբերներին, անփույթներին, ճիշտ ինչպես Քահանայության եղբայրներն են կանչվում անելու այդ՝ կամակորների, անփույթների և անտարբերների հետ եղբայրների մեջ։ Մենք բոլորս պետք է աշխատենք արդարություն գործել և ձգտենք ետ բերել ակտիվության նրանց, ովքեր շեղվել են և անտեսել Եկեղեցու պարտականությունները։[20]

Դժվարագույն պայմաններում նրա համեստ սկզբնավորումից ի վեր, երբ Եկեղեցու անդամակցությունը փոքր էր, մենք տեսել ենք այս Միության աճը. . . Բարիքի չափը, որն իրականացվել է, հոգ տանելով աղքատների համար, խնամելով հիվանդներին և չարչարվածներին և նրանց, ովքեր ֆիզիկական, մտավոր կամ հոգևոր կարիքներ ունեին, երբեք ճշգրիտ չի իմացվի. . . Բոլոր այս բաներն իրականացվել են սիրո ոգով՝ համաձայն Հիսուս Քրիստոսի ավետարանի իսկական ոգու։[21]



4

Տերն ակնկալում է, որ կանայք լույս և ճշմարտություն կփնտրեն, որպեսզի կարողանան արժանանալ սելեստիալ փառքին։

Ավետարանը ճիշտ նույնքան նշանակություն ունի մեր քույրերի համար, որքան որ եղբայրների համար։ Նրանք ճիշտ նույնքան մտահոգված են դրանով, որքան որ եղբայրները։ Եվ երբ Տերն ասաց Մարգարե Ջոզեֆ Սմիթին «Քննեք այս պատվիրանները, քանզի դրանք ճշմարիտ են ու հավատարիմ, և մարգարեությունները ու խոստումները, որոնք դրանց մեջ են, բոլորը պիտի կատարվեն» [ՎևՈՒ 1.37] Նա չսահմանափակեց պատվիրանը Եկեղեցու արական սեռին պատկանող անդամներով. . . Ճիշտ նույնքան կարևոր է, որ մեր քույրերը հասկանան Փրկության ծրագիրը, որքան որ տղամարդիկ։ Ճիշտ նույնքան կարևոր է, որ նրանք պահեն պատվիրանները։ Ոչ մի կին չի փրկվի Աստծո արքայությունում առանց մկրտության մեղքերի թողության համար և ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևը ստանալու համար։

. . .Երբ Տերն ասաց, որ ոչ մի անձնավորություն չի կարող փրկվել անգիտության մեջ [տես ՎևՈւ 131.6], կարծում եմ, Նա ի նկատի ուներ նաև կանանց, ինչպես որ տղամարդկանց և,

կարծում եմ, եկեղեցու կանայք սուրբ գրություններն ուսումնասիրելու պարտականության տակ են։[22]

Տերը պահանջում է կանանցից, ինչպես նաև Եկեղեցու տղամարդկանցից, որ նրանք իմանան Իր աստվածային կամքը և ունենան մնայուն վկայություն իրենց սրտերում Աստծո արքայությունում փրկության բացահայտված ճշմարտության վերաբերյալ։ Տերը հայտնի չի դարձրել Մորմոնի Գիրքը միայն նրանց օգտի համար, ովքեր Քահանայություն են կրում, այլ յուրաքանչյուր հոգու համար, ով որոնում է ճշմարտությունը՝ արական և իգական սեռի համար հավասարապես։[23]

Տերը սպասում է քույրերից արժանանալ վկայության ճշմարտության վերաբերյալ՝ հասկանալու Եկեղեցու վարդապետությունները, ճիշտ ինչպես Նա սպասում է նրանցից, ովքեր Քահանայություն են կրում։ Եթե մենք հասնելու ենք վեհացման, որը մենք հուսով ենք ձեռք բերել, անհրաժեշտ է, որ մենք նախապատրաստվենք գիտելիքով, հավատքով, աղոթքով։ Եվ երբ Տերն ասել է.«Սակայն առաջ Աստուծոյ արքայութիւնը եւ նորա արդարութիւնը խնդրեցէք» [Մատթեոս Զ.33, 3 Նեփի 13.33]։ Նա չէր խոսում միայն տղամարդկանց մի խմբի հետ, այլ խառը բազմության հետ։[24]

Յուրաքանչյուր կին, որ մկրտվել է Եկեղեցում, երեցների ձեռքերը դրվել են նրա գլխին Սուրբ Հոգու պարգևի համար, որպեսզի նա կարողանա ունենալ այդ Հոգու առաջնորդությունը ողջ ճշմարտության մեջ։ Տիրոջ կամքն է, որ ոչ մեկը առանց աստվածային առաջնորդության չմնա, որը նրանց կբացահայտի ճշմարտությունը և հնարավորություն կտա զանազանելու լույսը խավարից և այսպիսով, կամրացվի և կզորացվի դիմադրելու բոլոր կեղծ վարդապետություններին, տեսություններին և հասկացություններին, որոնք այնքան գերակշռում են այսօր աշխարհում։[25]

Մեր քույրերը ճիշտ նույնքան Սուրբ Հոգու ոգեշնչման իրավունքն ունեն իրենց կարիքների համար, որքան որ տղամարդիկ ամեն ինչում։ Նրանք մարգարեության պարգևի իրավունքն ունեն այն հարցերի վերաբերյալ, որոնք նրանց համար կարևոր է իմանալ. . . Երբ նրանք աղոթում են, նրանք պետք է լրջորեն աղոթեն, սպասելով իրենց աղոթքների պատասխանին։ Տերը

կլսի նրանց, եթե նրանք անկեղծ են, ճշմարիտ, ճիշտ նույն ձևով ինչպես Նա կլսի եղբայրներին:[26]

Տերը խոստացել է բոլորին՝ թե՛ արական և թե՛ իգական սեռի ներկայացուցիչներին նույն ձևով՝ Սուրբ Հոգու պարգևը՝ հավատարմության, համեստության և իսկական ապաշխարության պայմանով: Նրանցից պահանջվում է ուսումնասիրել և իմանալ ավետարանի ճշմարտությունները և նախապատրաստվել ուսումնասիրությամբ, հավատքով և հնազանդությամբ բոլոր պատվիրաններին, փնտրել լույս և ճշմարտություն, որպեսզի նրանք սելեստիալ փառքի իրավունքն ունենան:[27]

5

Քահանայության միջոցով Աստված առաջարկում է Իր դուստրերին ամեն հոգևոր պարգև և օրհնություն, որոնք կարող են ձեռք բերվել Իր որդիների կողմից:

Կարծում եմ, բոլորս գիտենք, որ քահանայության օրհնությունները չեն սահմանափակվում միայն տղամարդկանցով: Այս օրհնությունները նաև թափվում են. . . Եկեղեցու բոլոր հավատարիմ կանանց վրա: Այս հիանալի քույրերը կարող են նախապատրաստվել՝ պահելով պատվիրանները և ծառայելով Եկեղեցում, Տիրոջ տան օրհնությունների համար: Տերն առաջարկում է Իր դուստրերին ամեն հոգևոր պարգև և օրհնություն, որոնք կարող են ձեռք բերվել Իր որդիների կողմից, քանի որ ոչ տղամարդն է առանց կնոջ, ոչ էլ կինն է առանց տղամարդու Տերումը [տես Ա Կորնթացիս ԺԱ.11]:[28]

Բոլորս տեղյակ ենք, որ Տերն ասաց Աբրահամին, որ նա լինելու էր հայր բազմաթիվ ազգերի և նրա սերունդը թվով նման կլինի երկնքի աստղերին և ինչպես ավազը ծովափին, բայց մենք պետք է աչքից բաց չթողնենք այն, որ նույն խոստումը տրվեց Սարրային:

«Եւ Աստուած ասեց Աբրահամին. Քո կնոջ Սարայի անունը Սարա չասես, այլ Սարրայ է նորա անունը: Եւ նորան կօրհնեմ, նաեւ նորանից մի որդի կտամ քեզ. Եւ կօրհնեմ նորան, և նա ազգեր կլինի. ժողովուրդների թագավորներ կլինին նորանից» [Ծննդոց ԺԷ.15–16]:[29]

Տերը, խոսելով քահանայության և քահանայության զորության մասին և Եկեղեցու արարողությունների մասին, որոնք

«Տերը պահանջում է կանանցից. . . Եկեղեցում, որ նրանք իմանան Իր աստվածային կամքը և ունենան մնայուն վկայություն իրենց սրտերում:

մենք ստանում ենք քահանայության միջոցով, ասել է հետևյալը. «Եվ այս մեծագույն քահանայությունը սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ Աստծո գիտության բանալիները»:

. . . Թույլ տվեք կրկին կարդալ այն. «Եվ այս մեծագույն քահանայությունը սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ Աստծո գիտության բանալիները: Հետևաբար, նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը: Եվ առանց նրա արարողությունների և քահանայության իշխանության, աստվածայնության զորությունը չի բացահայտվում մարդկանց՝ մարմնում, քանզի առանց դրա, ոչ ոք չի կարող տեսնել Աստծո, այսինքն՝ Հոր երեսը, և ապրել» [ՎԿՈՒ 84.19–21]:

Երբ մենք կարդում ենք այս բնույթի բաներ, դա պարտավոր է յուրաքանչյուր մարդու մեջ, ով կրում է քահանայություն, ուրախանալ մտածելով, որ մենք ունենք այդ մեծ իշխանությունը, որի միջոցով կարող ենք ճանաչել Աստծուն: Ոչ միայն քահանայություն կրող տղամարդիկ գիտեն այդ մեծ ճշմարտությունը, այլ այդ քահանայության շնորհիվ և դրա արարողությունների

միջոցով, Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, տղամարդ և կին նույն ձևով, կարող են ճանաչել Աստծուն։[30]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ կարող ենք սովորել «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնում նկարագրվող փորձառությունից։ Ինչպիսի՞ նմանատիպ փորձառություններ եք դուք ունեցել։
- Նախագահ Սմիթը խոսել է տարբեր դարերի կանանց մասին, ովքեր կատարել են կարևոր պարտականություններ Աստծո թագավորությունում (տես բաժին 1)։ Ըստ ձեր նկատառումների՝ կանայք ինչպե՞ս են ներդրում անում իրենց ընտանիքների և Եկեղեցու զորացման գործին։
- Ինչպե՞ս եք նկատել, որ Սփոփող Միության ծառայությունը «կարևոր է Եկեղեցու բարօրության համար» (տես բաժին 2)։ Ի՞նչ ուղիներով են Սփոփող Միության քույրերը և քահանայություն կրողները աշխատում միասին՝ կառուցելու Աստծո թագավորությունը։
- Ի՞նչ ուղիներով է Սփոփող Միությունը հոգ տանում Վերջին Օրերի Սուրբ կանանց հոգևոր բարօրության համար։ Ինչպե՞ս են Սփոփող Միության քույրերը իրենց ազդեցությունը տարածում իրենց կազմակերպությունից այն կողմ։ (Որոշ օրինակների համար, տես բաժին 3։)
- Նախագահ Սմիթը շեշտել է, որ բոլոր կանայք և տղամարդիկ պետք է հասկանան ավետարանի վարդապետությունները, զորացնեն իրենց վկայությունները և ստանան հայտնություն (տես բաժին 4)։ Ինչո՞ւ եք կարծում, որ կարևոր է մեզ բոլորիս համար ձգտել այդ պարգևներին։
- Նախագահ Սմիթն ուսուցանել է, որ քահանայության օրհնությունները «թափվում են. . . Եկեղեցու բոլոր հավատարիմ կանանց վրա» (բաժին 5)։ Ինչո՞ւ կանայք քահանայության օրհնությունների կարիքն ունեն իրենց պարտականությունները կատարելու համար տանը և Եկեղեցում։ Կանանց հոգևոր պարգևներ ստանալու ի՞նչ օրինակներ եք տեսել։

Սոնչվող սուրբ գրություններ

Գործք Ե.12–14, Ալմա 32.22–23, ՎևՈՒ 46.8–9

Օգնություն ուսուցչին

«Հաճախ օգտակար է սկսել մտածել մոտակա դասի մասին նախորդ դասը ուսուցանելուց անմիջապես հետո: Դուք, հավանաբար, ամենալավը կարող եք տեղյակ լինել նրանց կարիքների և հետաքրքրությունների մասին, ում ուսուցանում եք, անմիջապես նրանց հետ շփվելուց հետո» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 97):

Հղումներ

1. "Purpose of the Relief Society," *Relief Society Magazine,* Jan. 1964, 5.
2. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի մասին ավելի շատ բան իմանալու համար, երբ օգնում էր իր մորը որպես մանկաբարձուհի իր պարտականությունները կատարելիս, տես գլուխ 24 այս գրքում:
3. "Mothers in Israel," *Relief Society Magazine,* Dec. 1970, 883.
4. Amy Brown Lyman, in Joseph Fielding Smith and John J. Stewart, *The Life of Joseph Fielding Smith* (1972), 243.
5. Տես Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God* (1992), 261.
6. Francis M. Gibbons, *Joseph Fielding Smith: Gospel Scholar, Prophet of God,* 281.
7. Belle S. Spafford, *Latter–day Prophet–Presidents I Have Known* (speech given at Brigham Young University, May 29, 1973), 4.
8. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 3: 66.
9. "The Relief Society Organized by Revelation," *Relief Society Magazine,* Jan. 1965, 5.
10. *Answers to Gospel Questions,* 3: 67.
11. "Purpose of the Relief Society," 4.
12. "The Relief Society Organized by Revelation," 6.
13. "Relief Society Responsibilities," *Relief Society Magazine,* Oct. 1954, 644.
14. "Relief Society—An Aid to the Priesthood," *Relief Society Magazine,* Jan. 1959, 4.
15. "Relief Society Responsibilities," *Relief Society Magazine,* Oct. 1954, 646.
16. "Relief Society—An Aid to the Priesthood," 6; punctuation standardized.
17. "Mothers in Israel," 883.
18. "Relief Society—An Aid to the Priesthood," 5.
19. "Teaching the Gospel," *Relief Society Magazine,* Jan. 1966, 5; տես նաև Joseph F. Smith, in Conference Report, Apr. 1906, 3.
20. "Relief Society Responsibilities," *Relief Society Magazine,* Mar. 1954, 151–52.
21. "Purpose of the Relief Society," 5.
22. "Obedience to the Truth," *Relief Society Magazine,* Jan. 1960, 6–7.
23. "Relief Society Responsibilities," *Relief Society Magazine,* Oct. 1954, 644.
24. "Relief Society Responsibilities," *Relief Society Magazine,* Mar. 1954, 152.
25. "Relief Society Responsibilities," *Relief Society Magazine,* Oct. 1954, 644.
26. "Obedience to the Truth," 7.
27. *Answers to Gospel Questions,* 3: 68–69.
28. In Conference Report, Apr. 1970, 59.
29. "Mothers in Israel," 885.
30. "And the Truth Shall Make You Free," *Deseret News,* Mar. 30, 1940, Church section, 4; տես նաև *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 3: 142–43.

Փրկչի ծնունդյան պատմությունը «երբեք չի հնանում, որքան էլ այն հաճախ պատմենք»:

Հիսուս Քրիստոսի ծնունդը. «Մեծ ուրախության բարի ավետիք»

«Ի՞նչ կասեք այս սքանչելի պատմության մասին: Արդյոք թույլ տվե՞լ ենք, որ այն ներթափանցի և ներգործի մեր կյանքի վրա: Արդյոք ընդունե՞լ ենք այն իր լիարժեք իմաստով առանց վերապահումների»:

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

1971թ. Սուրբ Ծննդյան տոների ընթացքում մի լրագրող առիթ էր ունեցել ժամանակ անցկացնել Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի և նրա ընտանիքի անդամների հետ: Լրագրողը կիսվել է մարգարեի կյանքի վերաբերյալ որոշ դիտարկումներով:

«Սուրբ Ծնունդը հատուկ ժամանակ է Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի համար: Այն օր է ընտանիքի համար և օր հիշողությունների համար: Բայց ամենաշատը Նախագահ Սմիթի համար Սուրբ Ծնունդը օր է երեխաների համար:

Կարծում եմ, այն, ինչ ամենաշատն եմ հավանում Սուրբ Ծննդյան տոնի ժամանակ, երեխաներին տեսնելն է», – ասաց Նախագահ Սմիթը, սեղմելով գրկում իր ծոռնուհուն:

Մի մեծ՝ նկարներով Աստվածաշունչը դրած իր գոքին, Նախագահ Սմիթը և նրա երկու ծոռնուհիները՝ Շաննա Մակքոնկիին՝ 4 տարեկան, և Շերին՝ 2 տարեկան, շրջում էին էջերը, որոնք պատմում էին Քրիստոս մանուկի ծնունդը: Նրանք երկար ժամանակ կանգ առան մսուրի տեսարանը պատկերող էջի վրա: Հատուկ ջերմություն կար Նախագահ Սմիթի և աղջիկների միջև . . .

Նախագահ Սմիթը մեծ բավականությամբ շատ այցելուներ է ընդունել Սուրբ Ծննդյան տոների ընթացքում: «Սուրբ Ծնունդը ընտանիքներով միասին լինելու ժամանակ է», – ասել է նա»:[1]

Նախագահ Սմիթի համար Սուրբ Ծննդյան ավանդույթները կենտրոնացած էին Փրկչի ծննդյան, ծառայության և Քավության վրա»: Ի պատասխան Սուրբ Ծննդյան շնորհավորանքների, որոնք նա ստանում էր Եկեղեցու անդամների կողմից, նա ասել է. «Ես գնահատում եմ նրանց խելամտությունը, ովքեր Սուրբ Ծննդյան քարտեր են ուղարկում: Ես դրանք համարում եմ սիրո արտահայտություն և հիշեցում Փրկչի ծննդի մասին, որին մենք պատվում ենք և երկրպագում որպես Եկեղեցու ղեկավարի: Նրա ուղերձը խաղաղության և բարի կամքի ուղերձ էր: Սա է իմ ցանկությունը իմ մեծավորներին ամենուրեք»:[2]

1970թ. դեկտեմբերին Նախագահ Սմիթը հրապարակեց Սուրբ Ծննդյան ուղերձ Եկեղեցու անդամների համար ողջ աշխարհով մեկ: Մասնավորապես, նա ասաց.

«Ես ողջունում եմ ձեզ այս Սուրբ Ծննդյան տոների առթիվ սիրով և ընկերկցությամբ և աղոթքով, որ մեր Երկնային Հայրը վար նայի ձեզ վրա ողորմածությամբ և դուրս թափի Իր լիառատ օրհնությունները ձեր վրա:

Այս ժամանակներում, երբ անօրինությունն առատանում են, երբ մեծ նեղություններ կան երկրի վրա, երբ պատերազմներ և պատերազմների համբավներ կան, մենք բոլորս ինչպես երբեք նախկինում, Տիրոջ պահապան և հոգատար առաջնորդության կարիքն ունենք:

Մենք պետք է իմանանք, որ չնայած բոլոր տառապանքներին և ցավերին, որոնք բաժին են ընկնում մեզ, Տերն է կառավարում երկրի գործերը, և որ եթե մենք պահենք Նրա պատվիրանները և ճշմարիտ ու հավատարիմ լինենք Նրա օրենքներին, Նա կօրհնի մեզ այստեղ և այժմ և կպարգևատրի մեզ հավերժական կյանքով Իր թագավորությունում . . .

. . . Այժմ ես աղոթում եմ, որ այս Սուրբ Ծննդյան տոներին և բոլոր ժամանակներում մենք կարողանանք կենտրոնացնել մեր հավատքը Աստծո Որդու վրա և ձեռք բերենք մեզ համար այն խաղաղությունը, որը վեր է ամեն հասկացողությունից»:[3]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Մեր Քավչի ծննդյան պատմությունը պերճախոս է իր համեստ պարզությամբ:

Չկա պատմություն, որն այնպես գեղեցիկ լինի կամ որն այնպես հուզի խոնարհների հոգին մինչև խորքը, ինչպես կարող է Քավչի ծննդի մասին այս փառահեղ պատմությունը: Մարդու կողմից արտաբերված ոչ մի խոսք չի կարող զարդարել կամ բարելավել կամ պերճախոսություն ավելացնել դրա համեստ պարզությանը: Այն երբեք չի հնանում, որքան էլ այն հաճախ պատմենք և այն պատմելը այնքան էլ շատ հաճախակի չէ մարդկանց տներում: Եկեք փորձենք պարտկերացնել մեզ հովիվների հետ դրսում, ովքեր հսկում էին իրենց հոտերը այդ հիշարժան գիշերը: Սրանք խոնարհ մարդիկ էին, ովքեր չէին կորցրել իրենց հայրերի հավատքը, ում սրտերը չէին կարծրացել, ինչպես հրեաների կառավարիչների սրտերը մեր Տիրոջ ծառայության օրերին, քանզի եթե այդպես լիներ, հրեշտակները չէին հայտնվի նրանց իրենց փառահեղ ուղերձով: Եկեք կրկնենք այս հրաշալի պատմությունը:

«Եւ այն տեղումը հովիւներ կային դաշտումը կացող, որ գիշերն իրանց հօտերը պահում էին:

Եւ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց նորանց առաջին եւ Տիրոջ փառքը նորանց շուրջը ծագեց. Եւ մեծ վախով վախեցան:

Եվ հրեշտակն ասեց նորանց. Մի վախենաք, որովհետեւ, ահա մեծ ուրախութիւն եմ աւետում ձեզ, որ բոլոր ժողովրդին պիտի լինի.

Այսօր ձեզ Փրկիչ ծնուեցավ Դաւիթի քաղաքումը. որ է Քրիստոս Տէրը:

Եւ այս լինի ձեզ նշան. Մի երեխայ կգտնեք խանձարուրներով պատած, եւ մսուրի մէջ դրած:

Եւ յանկարծակի այն հրեշտակի հետ եղաւ երկնաւոր զորքի մի բազմութիւնը, որ Աստուծուն օրհնում էին եւ ասում.

Փառք Աստուծոյ բարձունքումը, եւ երկրի վերայ՝ խաղաղութիւն, եւ մարդկանց մէջ հաճութիւն:

Եվ եղաւ երբ որ հրեշտակները նորանցից վերացան երկինքը, այն հովիւ մարդիկն իրար ասեցին. Եկէք գնանք մինչեւ Բեթլէհէմ, եւ տեսնենք այս եղած բանը, որ Տերը ցույց տուաւ մեզ։

Եւ շտապելով եկան եւ գտան Մարիամին եւ Հովսէփին, եւ երեխային՝ մսուրի մէջ դրած» [Ղուկ. Բ.8–16]։

Կարո՞ղ է որևէ հոգի կարդա այս և չհուզվի խոնարհության հոգով և տպավորվի այդ պատմության պարզ ճշմարտությամբ»։[4]

2

Չնայած Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին էր, Նա այս աշխարհ եկավ որպես մանուկ և առաջադիմեց շնորհից շնորհ մինչև Նա ստացավ լիությունը։

Կարծում եմ, մենք բոլորս կարող ենք հասկանալ այն փաստը, որ Հիսուս Քրիստոսը Եհովան էր, ով առաջնորդեց Իսրայելը Աբրահամի և Մովսեսի օրերում և, փաստորեն, Ադամի օրերից սկսած։ Նաև, որ Եհովան կամ Հիսուս Քրիստոսը, որպես Հոգողեն անձնավորություն հայտնվեց Հարեդի Եղբորը և որպես մանուկ ծնվեց այս աշխարհում և մեծացավ մինչև տղամարդ դարձավ այս աշխարհում։[5]

Մեր Փրկիչը Աստված էր, նախքան նա ծնվեց այս աշխարհում և Նա Իր հետ բերեց այդ նույն կարգավիճակը, երբ Նա եկավ այստեղ։ Նա նույնքանով Աստված էր, երբ ծնվեց աշխարհում, որքան նախկինում։ Բայց ինչ վերաբերում է այս աշխարհին, երևում է, որ Նա ստիպված էր սկսել ճիշտ ինչպես մյուս բոլոր երեխաներն են անում և ձեռք բերեր Իր գիտելիքը տող առ տող։ Ղուկասն ասում է Նա «զարգանում էր իմաստութիւնով եւ հասակով, եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդկանց մօտ» [Ղուկաս Բ.52]։ Հովհաննեսը գրում է, որ «Նա լիությունը չստացավ սկզբում, այլ շարունակեց՝ շնորհից շնորհ, մինչև որ ստացավ լիությունը» [ՎԵՈՒ 93.13]։ . . .

Ակնհայտորեն, նախքան 12 տարեկան դառնալը, քանի որ այդ ժամանակ Նա ապշեցրեց գիտուններին և իմաստուն մարդկանց տաճարում, Նա սովորեց շատ բաներ Իր Հոր գործի վերաբերյալ [տես Ղուկաս Բ.46–49]։ Այդ գիտելիքը Նա կարող էր ստացած լինել հայտնությամբ, հրեշտակների այցելությամբ, կամ որևէ այլ ձևով։ Բայց նրա գիտելիքը ինչ վերաբերում էր

Իր պատանեկության տարիներին Հիսուսը գիտելիք ձեռք բերեց «տող առ տող և ցուցում առ ցուցում»:

այս կյանքին, պետք է զար տող առ տող և ցուցում առ ցուցում: Անկասկած Նա հաղորդակցության մեջ էր, ժամանակ առ ժամանակ, Իր Երկնային Հոր հետ:

. . . « Հիսուսը մեծանում էր իր եղբայրների հետ, և ամրանում, և սպասում էր Տիրոջ կողմից իր ծառայության ժամանակի գալուն: Եվ Նա գործում էր Իր հոր ղեկավարությամբ և չէր խոսում ուրիշ մարդկանց պես, ոչ էլ նրան հնարավոր էր ուսուցանել. քանզի Նա կարիք չուներ որ որևէ մարդ ուսուցաներ իրեն: Եվ շատ տարիներ անց, նրա ծառայության ժամը մոտեցավ» [Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս Գ.24–26]:

Տիրոջ հայտարարությունը, որ Նա չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, պարզապես նշանակում է, որ Նրան հայտնի էր դարձվել ինչ Իր Հայրն էր արել [տես Հովհաննես Ե.19–20]: Անկասկած, Հիսուսը եկավ աշխարհ՝ ենթակա լինելով նույն պայմաններին, ինչ պահանջվում է մեզանից յուրաքանչյուրիցս՝ Նա մոռացավ ամեն ինչ, և Նա պետք է զարգանար շնորհից շնորհ: Նախկինում գիտելիք ունենալը Նրա մոռանալը կամ իրենից վերցվելը, պահանջվեց ճիշտ ինչպես մեզանից յուրաքանչյուրի դեպքում է՝ ներկա ֆիզիկական գոյությունը իրականացնելու համար:

Փրկիչը սկզբում չուներ լիությունը, բայց Իր մարմինը ստանալուց և հարություն առնելուց հետո, ողջ զորությունը տրվեց Նրան ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա: Չնայած Նա Աստված էր, այսինքն՝ Աստծո Որդին, այս և ուրիշ աշխարհներ ստեղծելու զորությամբ և իշխանությամբ, այնուամենայնիվ, կային որոշ բաներ, որոնք պակասում էին, որոնք Նա չստացավ, մինչև հարություն առավ, հետո: Այլ խոսքով, Նա չստացավ լիությունը մինչև չստացավ հարություն առած մարմին:[6]

3

Հիսուս Քրիստոսն այս աշխարհ եկավ փրկագնելու մեզ ֆիզիկական և հոգևոր մահից:

Հիսուսն այստեղ եկավ կատարելու որոշակի առաքելություն, որը Նրան էր հանձնարարվել, նախքան այս երկրի հիմքերը դնելը: Նրա մասին սուրբ գրություններն ասում են. «Գառ որ աշխարհքի սկզբիցը հետէ մորթուած է» [Հայտնություն ԺԳ.8]: Նա կամավոր եկավ Ժամանակի Գագաթնակետին մարդկանց անկումից փրկագնելու համար, որը գալու էր նրանց վրա Ադամի օրինազանցության միջոցով:

. . . Հիսուսը միակ անձնավորությունն է այս աշխարհում ծնված, ով չուներ երկրային հայր: Նրա մարմնի Հայրը նաև Նրա Հոգու Հայրն էր, և բոլոր մարդկանց Հոգիների Հայրը: Իր Հորից Նա ձեռք բերեց հավերժական կյանք, իր մորից նա ձեռք բերեց մահանալու զորություն, քանի որ Նրա մայրը մահկանացու կին էր: Նրանից Նա ստացավ Իր արյունը և Իր Հորից նա ստացավ Իր անմահությունը: Այսպիսով զորություն ունենալով վար դնել Իր կյանքը և կրկին այն վերցնել նա կարողացավ վճարել Ադամի օրինազանցության գինը, և փրկագնել զերեզմանից բոլոր արարածներին:[7]

Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու իսկական պատճառը. . . առաջինը *բոլոր* մարդկանց փրկագնելն էր ֆիզիկական կամ մահկանացու մահից, որն Ադամը բերեց աշխարհ և երկրորդը՝ փրկագնել բոլոր մարդկանց հոգևոր մահից կամ Տիրոջ ներկայությունից վտարվելուց՝ իրենց ապաշխարության և մեղքերի թողության և մահկանացու կյանքի ստուգարքին մինչև վերջ համբերելու պայմանով:[8]

Մենք ուրախանում ենք մարդկանց մեջ Աստծո Որդու ծննդով:

Մենք երախտապարտ ենք քավող զոհաբերության համար, որ Նա իրականացրեց Իր սեփական արյունը հեղելով:

Մենք շնորհակալ ենք, որ Նա փրկագնեց մեզ մահից և դուռ բացեց, որպեսզի մենք կարողանանք ձեռք բերել հավերժական կյանք:

Մենք աղոթում ենք երկրի վրա խաղաղության համար, ավետարանի տարածման համար և ճշմարտության վերջնական հաղթանակի համար:

Մենք աղերսում ենք մեր Հոր զավակների համար՝ ամենուրեք միանալ մեզ, անելու այն բաները, որոնք մեզ բոլորիս խաղաղություն կտան այս աշխարհում և հավերժական փառք գալիք աշխարհում [տես ՎԿՈՒ 59.23]:[9]

4

Մենք պետք է թույլ տանք, որ Փրկչի ծննդյան պատմությունը ներթափանցի և ներգործի մեր կյանքում:

Երբ գալիս է [Սուրբ Ծննդյան առավոտը] ոմանք կիջեցնեն իրենց գլուխները խոնարհ աղոթքով Լույսերի Հորը Նրա սիրելի Որդու տառապանքների համար, որոնց միջոցով նրանք ստացել են օրհնությունները և երախտապարտ գովաբանությամբ կկարդան հրաշալի պատմությունը: Մյուսները, ովքեր դժբախտաբար քիչ բան գիտեն, եթե ընդհանրապես որևէ բան գիտեն, այն պարտքի մասին, որ նրանք ունեն Աստծո Որդուն, կտոնեն, ոչ թե գովաբանելով և խոնարհ աղոթքով, այլ տոնակատարությունը դարձնելով անարգանք հարբեցողությամբ, առանց նվազագույնս իսկ մտածելու Գալիլեացի Մարդու ծննդյան կարևորության մասին: . . .

Ինչպե՞ս կարող է որևէ մեկը կարդալ Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին այս հուզիչ պատմությունը առանց ցանկանալու թողնել իր մեղքերը: Տարվա այս ժամանակաշրջանում լավ է մեկի և բոլորի համար՝ թագավորը իր պալատում, եթե այժմ կան թագավորներ պալատներում, գյուղացին իր համեստ խրճիթում, հարուստները և աղքատները նմանապես, ծունկ ծալեն և պատիվ տան Նրան, ով առանց մեղքի էր, ում կյանքն անցավ

զոհաբերությամբ և տանջանքներով՝ հանուն Իր մերձավորների, ում արյունը հեղվեց որպես զոհաբերություն մեղքի համար։ . . .

. . . Ի՞նչ կասեք այս սքանչելի պատմության մասին։ Արդյոք թույլ տվե՞լ ենք, որ այն ներթափանցի և ներգործի մեր կյանքում։ Արդյոք ընդունե՞լ ենք այն իր լիարժեք իմաստով առանց վերապահումների։ Դուք հավատո՞ւմ եք, որ այս մանուկը իրականում Աստծո հենց Միածին Որդին է մարմնում։ Արդյոք ունե՞նք մնայուն հավատք Նրա առաքելության հանդեպ, պատրաստ ենք հնազանդորեն հետևելու Նրան։ Եթե աշխարհը այնպես հավատար և անկեղծորեն ականջ դներ Նրա ուսմունքներին, ապա այն չէր երկփեղկվի պայքարից և ամբարշտությունից ողջ այս դարերի ընթացքում. . . Եղել է չափազանց շատ շրթունքներով ծառայություն Աստծո Որդու հետևորդներ ձևացողների կողմից և խիստ քիչ իսկական երկրպագություն՝ հիմնված Նրա ուսմունքներին հավատարմության վրա։

Հրեշտակը հայտարարեց հովիվներին այդ փառահեղ գիշերը, որ նա բերել էր ուրախության ավետիք, որը բոլոր մարդկանց համար էր [տես Ղուկաս Բ։ 8–10], բայց ընդհանուր առմամբ մարդիկ ամենուրեք երկրի երեսին, մերժել են ստանալ այդ ավետիքի օրհնությունները։ Նրանք չեն կամեցել թողնել իրենց մեղքերը, խոնարհեցնել իրենց և դնել իրենց կյանքը Վարդապետի ուսմունքների հետ ներդաշնակության մեջ։ . . .

Մեկ անգամ ևս ես աղերսում եմ բոլոր մարդկանց ամենուրեք. Դարձեք ձեր չար ուղիներից դեպի Աստծո Որդու երկրպագությունը, որպեսզի ձեր հոգիները կարողանան փրկվել Նրա արքայությունում։[10]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ եք անում դուք Փրկչին հիշելու ձեր տանը Սուրբ Ծննդյան ժամանակ։ Ի՞նչ կարող ենք սովորել Նախագահ Սմիթի Սուրբ Ծննդյան ավանդույթներից (տես «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքը» բաժինը)։
- Ինչո՞ւ եք կարծում, որ Հիսուս Քրիստոսի ծննդյան պատմությունը «երբեք չի հնանում» (տես բաժին 1)։

- Վերանայեք Նախագահ Սմիթի խոսքերը Հիսուս Քրիստոսի որպես մանուկ աշխարհ գալու և մահկանացու կյանքի դժվարություններին դիմանալու մասին (տես բաժին 2)։ Որո՞նք են ձեր մտքերը և զգացումները, երբ մտածում եք այդ անելիս Փրկչի պատրաստակամության մասին։
- Մտածեք Փրկչի ծննդի և Փրկչի Քավության կապի մասին (տես բաժին 3)։ Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին ձեռք բերել այս ըմբռնումը։ Ինչպե՞ս կարող է այս ըմբռնումն ազդել Սուրբ Ծննդյան մեր ավանդույթների վրա։
- Ի՞նչ կարող ենք անել թույլ տալու, որ Փրկչի ծննդյան պատմությունը «ներթափանցի և ներգործի մեր կյանքում» (տես բաժին 4)։

Առնչվող սուրբ գրություններ

Եսայիա ԾԳ, Ղուկաս Ա.26–35, 2; 1 Նեփի 11.8–23

Օգնություն ուսուցչին

Քննարկումները փոքրիկ խմբերում «մեծ թվով մարդկանց հնարավորություն են տալիս մասնակցել դասին։ Այն Անձանավորությունները, ովքեր սովորաբար ամաչում են մասնակցել, կարող են կիսվել մտքերով փորքրիկ խմբերում, որոնք նրանք չէին արտահայտի ողջ խմբի առջև» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 161)։

Հղումներ

1. "A Big Christmas Hug from Pres. Smith," *Church News,* Dec. 25, 1971, 3.
2. "A Big Christmas Hug from Pres. Smith," 3.
3. "Christmas Greetings from President Joseph Fielding Smith to the Members of the Church throughout the World," *Church News,* Dec. 19, 1970, 3.
4. *The Restoration of All Things* (1945), 279–80.
5. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1: 11.
6. Personal correspondence, quoted in *Doctrines of Salvation,* 1: 32–33.
7. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 2: 134, 136.
8. "The Resurrection," *Improvement Era,* Dec. 1942, 780–81; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 259.
9. "Christmas Greetings," 3.
10. *The Restoration of All Things,* 278–79, 281–82, 286; punctuation standardized.



«Մենք անհամբեր սպասում ենք այն օրվանը,
երբ Խաղաղության Իշխանը կգա»։

Նախապատրաստվել մեր Տիրոջ Գալստին

«Պատրաստ արեք Տիրոջ ճանապարհը և ուղիղ արեք նրա շավիղները. Քանզի նրա գալստի ժամը մոտ է» (ՎԱՈՒ 133.17):

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը մի անգամ ասաց Վերջին Օրերի Սրբերին, որ նա «աղոթում էր, որ աշխարհի վերջը գա»: Նա ասել է. «Եթե այն գար վաղը, ես ուրախ կլինեի»: Ի պատասխան այդ հայտարարության՝ մի կին խոսեց բավականին բարձր ձայնով մյուսների համար, որ լսեին: «Օ՜հ, հուսով եմ ոչ», ասաց նա:

Որոշ ժամանակ անց, կիսվելով այս փորձառությամբ Նախագահ Սմիթն ուսուցանեց.

«Դուք չե՞ք ուզում, որ աշխարհի վերջը գա:

Մարդկանց մեծամասնությունը սխալ գաղափար ունեն, թե ինչ է նշանակում աշխարհի վերջը: . . .

. . . Երբ Քրիստոսը գա, կլինի աշխարհի վերջը. . . Չի լինի որևէ պատերազմ, որևէ խառնակություն, նախանձ, ստախոսություն, չի լինի ամբարշտություն: Այն ժամանակ մարդիկ կսովորեն սիրել Տիրոջը և պահել Նրա պատվիրանները, և եթե նրանք չանեն, նրանք չեն մնա այստեղ: Սա է աշխարհի վերջը, սա այն է, ինչի համար Փրկիչն աղոթեց, երբ Նրա աշակերտները եկան Նրա մոտ և ասացին. «Սովորեցրու մեզ աղոթք անելը»: Ի՞նչ արեց Նա: Նա սովորեցրեց նրանց. «Մեր Հայր, որ երկնքումն ես, քո անունը սուրբ լինի. Քո արքայութիւնը գայ: Քո կամքը լինի՝ ինչպէս երկնքումն այնպէս էլ երկրիս վերայ» [տես Ղուկաս ԺԱ.1–5]:

Սա այն է, ինչի համար ես աղոթում եմ: Տերն աղոթում էր աշխարհի վերջի համար, և ես էլ անում եմ նույնը»:[1]

Քարոզներում և գրվածքներում Նախագահ Սմիթը հաճախ էր մեջբերում սուրբ գրային մարգարեություններ վերջին օրերի մասին, Ջոզեֆ Սմիթի դերի մասին Տիրոջ ճանապարհը պատրաստելիս և Փրկչի փառահեղ գալուստը երկիր: Նա արտահայտել է այս խորը զգացումները այս մարգարեությունների մասին Յուտայի Օգդենի Տաճարի նվիրագործման աղոթքում.

«Ինչպես Դու գիտես, Ո՜վ մեր Աստված, մենք ապրում ենք վերջին օրերում, երբ ժամանակների նշանները ցույց են տրվում, երբ Դու արագացնում ես Քո աշխատանքը իր ժամանակի մեջ և երբ մենք արդեն լսել ենք ձայնը մեկի, որն աղաղակում էր անապատում. «Պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը, ուղիղ արէք նորա շաւիղները» [տես Մատթեոս Գ.3]. . . .

Ո՜վ, մեր Հայր, մենք անհամբեր սպասում ենք այն օրվանը, երբ Խաղաղության Իշխանը կգա, երբ երկիրը կհանգստանա և նորից արդարակեցություն կգտնվի նրա երեսին, և մեր աղոթքն է, որն ասվում է խոնարհ և ապաշխարող սրտերով, որ մենք դիմանանք այդ օրվան և արժանի համարվենք ապրելու Նրա հետ, ում Դու նշանակել ես՝ կանգնելու որպես Թագավոր թագավորների և Տեր տերերի, որին լինի փառքն ու պատիվը և զորությունն ու կարողությունը այժմ և հավիտյանս»:[2]

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի ուսմունքները

1

Տիրոջ գալուստը մոտ է:

Մենք սրընթաց մոտենում ենք Տիրոջ այն մեծ օրվանը, «վերականգման» այն ժամանակին, երբ Նա կգա երկնքի ամպերում վրեժխնդրություն գործելու անաստվածների հանդեպ և պատրաստելու երկիրը խաղաղության թագավորման՝ բոլոր նրանց համար, ովքեր հոժարակամ են՝ մնալու Նրա օրենքում [տես Գործք Գ.19–20]:[3]

Շատ բաներ տեղի են ունեցել. . . տպավորելու Եկեղեցու հավատարիմ անդամներին այն փաստով որ, Տիրոջ գալուստը մոտ է: Ավետարանը վերականգվել է: Եկեղեցին լիովին կազմակերպվել է: Քահանայությունը շնորհվել է մարդուն: Սկզբից սկսած տարբեր տնտեսություններ հայտնի են դարձվել և նրանց բանալիները և իշխանությունները տրվել են Եկեղեցուն: Իսրայելը

հավաքվել է և դեռ հավաքվում է Սիոնի հողում։ Հրեաները վերադառնում են Երուսաղեմ։ Ավետարանը քարոզվում է ողջ աշխարհում և որպես վկայություն յուրաքանչյուր ազգին։ Տաճարներ են կառուցվում և այնտեղ կատարվում են ծիսական աշխատանքներ մահացածների, ինչպես նաև ողջերի համար։ Զավակների սրտերը դարձվել են դեպի իրենց հայրերը և զավակները որոնում են իրենց մահացածներին։ Ուխտերը, որոնք Տերը խոստացել է անել Իսրայելի հետ վերջին օրերում հայտնի են դարձվել, և հավաքված Իսրայելի հազարավորներ մտել են ուխտի մեջ։ Այսպիսով, Տիրոջ աշխատանքը առաջ է գնում և բոլոր այս բաները մեր Տիրոջ մոտակա մոտենալու նշաններն են։ . . .

Մարգարեների խոսքերը սրընթացորեն կատարվում են, բայց դրանք կատարվում են այնպիսի բնական սկզբունքներով, որ մեզանից մեծ մասը ձախողվում է տեսնել այդ։

Յովելը խոստացել է, որ Տերը դուրս կթափի Իր Հոգին ամեն մարմնի վրա և պիտի մարգարեանան ձեր տղերքն ու ձեր աղջկերքը, ձեր ծերերը երազներ պիտի երազեն. ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն [տես Յովել Բ.28–29]։ . . .

Վերջին Օրերի նշանների թվում է գիտության մեծացումը։ Դանիելին պատվիրվեց «. . . փակել խոսքերը և կնքել գիրքը [իր մարգարեության], նույնիսկ մինչև ժամանակի վերջը. [և այն օրը] շատերը պիտի այս ու այն կողմ վազեն», ասել է նա, «և գիտությունը պիտի շատանա» (Դանիել ԺԲ.4)։ Միթե՞ մարդիկ «այս ու այն կողմ չեն վազում» այսօր ինչպես երբեք չի եղել աշխարհի պատմության մեջ։ . . .

. . . Միթե՞ գիտությունը չի շատացել։ Միթե՞ եղել է աշխարհի պատմության մեջ երբևէ մի ժամանակաշրջան, երբ այսքան շատ գիտելիք թափվեր մարդկանց վրա։ Բայց տխուր է ասել, որ Պողոսի խոսքերը ճշմարիտ են՝ մարդիկ «ամեն ժամանակ սովորում են, և երբէք դէպի ճշմարտութեան գիտութիւնը չեն կարողանում գալ» (Բ Տիմ. Գ.7)։ . . .

Միթե՞ չենք ունեցել բազմաթիվ պատերազմների համբավներ [տես ՎԿՈՒ 45.26]։ Միթե՞ չենք տեսել պատերազմներ ինչպիսիք աշխարհը երբևէ չէր տեսել։ Միթե՞ այսօր ազգերը խառնաշփոթության մեջ չեն և միթե՞ նրանց կառավարողները դժվարության մեջ չեն։ Միթե՞ թագավորությունները չեն խորտակվել և

մեծ փոփոխություններ առաջացրել ազգերի մեջ: Ողջ երկիրը խառնաշփոթի մեջ է: Ամեն օր հաղորդվում են տարբեր տեղերում երկրաշարժերի մասին [տես ՎևՈՒ 45.33]: . . .

Սակայն հին աշխարհը շարունակում է իր գործը շատ քիչ ուշադրություն դարձնելով այն ամենին, ինչ Տերն է ասել և բոլոր նշաններին և ցուցումներին, որոնք տրվել են: Մարդիկ խստացնում են իրենց սրտերը և ասում «. . . որ Քրիստոսն իր գալն ուշացնում է մինչև երկրի վախճանը» (ՎևՈ 45.26):[4]

Ինձ հարցրեցին ոչ շատ առաջ, թե կարո՞ղ էի ասել, թե երբ էր գալու Տերը: Ես պատասխանեցի «Այո» և այժմ էլ պատասխանում եմ «Այո»: Ես գիտեմ, թե Նա երբ է գալու: Նա կգա վաղը: Մենք ունենք Նրա խոսքը դրա համար: Թույլ տվեք կարդալ այն.

Ահա, ներկան կոչվում է այսօր, մինչև Մարդու Որդու գալուստը, և ճշմարիտ որ, սա զոհաբերության օր է, և իմ ժողովրդի տասանորդը տալու օր. Քանզի նա ով տասանորդ է տալիս, չի այրվի նրա գալստի ժամանակ:

Այժմ կա հատված, որը բավականաչափ խոսում է տասանորդի մասին:

«Քանզի այսօրվանից հետո գալիս է այրումը, սա խոսելով Տիրոջ ձևով, քանզի ճշմարիտ ես ասում եմ, որ վաղը բոլոր հպարտները և բոլոր նրանք, ովքեր ամբարշտորեն են գործում, հարդի պես կլինեն. և ես կայրեմ նրանց, քանզի ես Զորաց Տերն եմ. և ես չեմ խնայի ոչ ոքի, ով մնում է Բաբելոնում» [ՎևՈ 64.23–24]:

Այսպիսով Տերը գալիս է, ես ասում եմ, վաղը: Ուրեմն, եկեք պատրաստվենք:[5]

2

Երբ Քրիստոսը գա, կլինի դատաստան:

Առակը, որ Տերն ուսուցանեց ցորենի և որոմների առակում, վերաբերում էր վերջին օրերին: Համաձայն պատմության՝ սերմնացանը լավ սերմ ցանեց իր դաշտում, բայց երբ նա քնած էր, թշնամին եկավ և ցանեց որոմներ դաշտում: Երբ ծիլերը սկսեցին երևալ, ծառաները ցանկանում էին գնալ և արմատախիլ անել որոմները, բայց Տերը պատվիրեց նրանց թողնել ինչպես ցորենը, այնպես էլ որոմները, որ միասին աճեին մինչև բերքը հասներ, որպեսզի նրանք արմատախիլ չանեին նորածիլ ցորենը՝ որոմները

«Մենք արքնթաց մոտենում ենք Տիրոջ այն մեծ օրվանը, «վերականգնման» այն ժամանակին, երբ Նա կգա երկնքի ամպերում»:

ոչնչացնելիս: Ապա բերքահավաքի վերջում նրանք պետք է գնային և հավաքեին ցորենը և կապեին որոմները՝ այրելու համար: Այս առակի բացատրության մեջ Տերն ասաց Իր աշակերտներին, որ «բերքահավաքը աշխարհի վերջն է, իսկ հնձողները հրեշտակները» [տես Մատթեոս ԺԳ.24–30, 36–43, ՎԼՈՒ 86]:[6]

Որոմներն ու ցորենը աճում են միասին և աճել են նույն դաշտում բոլոր այս տարիներին, բայց օրը մոտ է՝ առ ձեռն, երբ ցորենը կհավաքվի և որոմները նույնպես կհավաքվեն՝ այրելու համար և կլինի բաժանում՝ արդարները ամբարիշտներից և մեզանից յուրաքանչյուրին խորհուրդ է տրվում պահել Տիրոջ պատվիրանները, ապաշխարել մեր մեղքերից, դառնալ դեպի արդարակեցություն, եթե ապաշխարելու կարիք կա մեր սրտերում:[7]

Կառուցեք և զորացրեք Եկեղեցու անդամներին հավատքում առ Աստված, աստված գիտի մենք ունենք դրա կարիքը: Կան այնքան շատ ազդեցություններ, որոնք գործում են մեզ բաժանելու համար, հենց Եկեղեցու անդամների մեջ, և կլինի այնպես, որ մոտ ապագայում՝ գալիք օրերից մեկում, մի առանձնացում կլինի ցորենը որոմներից, և մենք կամ կլինենք ցորեն կամ որոմ: Մենք կլինենք կա՛մ այս կողմում, կա՛մ այն կողմում:[8]

Կգա օրը, երբ մենք չենք ունենա *այս* աշխարհը: Այն կփոխվի: Մենք կստանանք ավելի լավ աշխարհ: Մենք կստանանք այնպիսին, որն արդար կլինի, որովհետև երբ Քրիստոսը գա, Նա կմաքրագործի աշխարհը:

Կարդացեք այն, ինչ գրված է մեր սուրբ գրություններում: Կարդացեք այն, ինչ ինքն է ասել: Երբ Նա գա, Նա կմաքրագործի այս երկիրը բոլոր իր ամբարշտությունից, և խոսելով Եկեղեցու մասին, Նա ասել է, որ Նա ուղարկելու էր Իր հրեշտակներին և նրանք հավաքելու էին Իր թագավորությունից, որը Եկեղեցին է, բոլոր անօրենություն գործողներին [տես Մատթեոս ԺԳ.41]:[9]

Մեծ և ահեղ օրը չի կարող լինել որևէ այլ ժամանակ, բացի Հիսուս Քրիստոսի գալստից՝ հաստատելու Իր թագավորությունը զորությամբ արդարների մեջ երկրի վրա և մաքրելու երկիրը ամեն անօրենությունից: Այն չի լինի վախի օր և առաջացնի սոսկում արդարների սրտերում, բայց այն կլինի վախի և սարսափի օր անաստվածների համար [տես Մատթեոս ԻԴ, Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1]:[10]

Կլինի դատաստան, երբ Քրիստոսը գա: Մեզ հաղորդվել է, որ գրքերը կբացվեն, մահացածները կդատվեն այն բաներից, որոնք գրված են գրքերում և գրքերի շարքում կլինի կյանքի գիրքը [տես Հայտնություն Ի.12]: Մենք կտեսնենք դրա էջերը: Մենք կտեսնենք մեզ, ինչպես որ կանք և մենք պետք է հասկանանք, որ դատաստանները, որոնք մեզ համար չափված են, արդար և ճիշտ չափ են, արդյոք մենք կգանք Աստծո Արքայություն. . . ստանալու այն փառավոր օրհնությունները, թե վտարվենք:[11]

Ես աղերսում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը ամուր և հավատարիմ կանգնեն յուրաքանչյուր պարտականություն կատարելիս, պահելով Տիրոջ պատվիրանները, պատվելով քահանայությունը, որ մենք կարողանանք դիմանալ, երբ Տերը գա՝ լինենք ողջ, թե մեռած, նշանակություն չունի՝ լինելով այս փառքի ճաշակողներ:[12]

3

Տիրոջ գալստին պատրաստվելու համար, մենք պետք է արթուն լինենք ու աղոթենք և մեր տները կարգի դնենք:

Այսօր աշխարհում առկա են շատ իրադարձություններ, որոնք ցույց են տալիս, որ Տիրոջ մեծ օրը մոտենում է, երբ Քավիչը կրկին կհայտնվի՝ հաստատելու Իր թագավորությունը արդարակեցությամբ, նախապատրաստելով հազարամյա թագավորումը: Այդ ընթացքում Եկեղեցու անդամների պարտականությունն է որոնել գիտելիք և նախապատրաստվել՝ ուսումնասիրելով և հավատքով այդ մեծ և փառահեղ օրվա մուտքին:[13]

Մենք չպետք է անհանգստանանք ժամանակների և ժամանակաշրջանների համար, թե երբ է Քրիստոսը գալու, բայց մենք իսկապես պետք է արթուն լինենք և աղոթենք ու պատրաստ լինենք:[14]

Ես երբեմն մտահոգվում եմ մեր երեցներից, երբ նրանք խոսում են՝ ասելով Տերը կգա, երբ մենք բոլորս բավականաչափ արդար կդառնանք ընդունելու Նրան: Տերը չի պատրաստվում սպասել մեզ արդար դառնալ: Երբ Նա պատրաստ լինի գալու, Նա կգա՝ երբ անօրինության բաժակը լցվի, և եթե մենք այդ ժամանակ արդար չլինենք, դա մեզ համար խիստ վատ կլինի, քան որ մենք կդասվենք անաստվածների շարքում, և մենք կլինենք հարդի պես՝ քշվելու երկրի երեսից, քանզի Տերն ասում է՝ ամբարշտությունը չպիտի դիմանա:[15]

Միթե՞ պիտի ննջենք լիակատար տգիտության մեջ կամ անտարբերությամբ այն ամենի հանդեպ, ինչ Տերն է տվել մեզ որպես նախազգուշացում: Ես ասում եմ ձեզ. «Արդ՝ արթուն կացէք. որ չգիտէք թէ ո՞ր ժամում ձեր Տէրը կգայ:

Բայց այս իմացէք, որ եթէ տան տէրը գիտենար թէ որ պահում կգայ գողը, արթուն կկենար եւ թող չէր տալ որ իր տունը ծակեն:

Սորա համար դուք էլ պատրաստ կացէք որ այն ժամին, որ դուք չէք կարծում, մարդի Որդին կգայ» (Մատթ. ԻԴ.42–44):

Կարո՞ղ ենք ականջ դնել Տիրոջ կողմից տրված այս նախազգուշացմանը և կարգի դնենք մեր տները և պատրաստվենք Տիրոջ գալստին:[16]

4

Վերջին Օրերի Սրբերը կարող են գործիք լինել Աստծո ձեռքում՝ նախապատրաստելու մարդկանց Տիրոջ գալստին:

Միթե՞ արտասովոր տարօրինակ բան չէր լինի, եթե Տերը գար և սկսեր խաղաղության իր թագավորությունը, վրեժ լուծեր ամբարիշտներից, մաքրագործելով երկիրը մեղքից, բայց չուղարկեր սուրհանդակներ նախապատրաստելու ճանապարհն Իր առջև: Միթե՞ ակնկալում ենք, որ Տերը կգա դատելու աշխարհը՝ առանց առաջինը նախազգուշացում տալու և փախուստի միջոցներ նախապատրաստելու բոլոր նրանց համար, ովքեր կապաշխարեն:

Նոյն ուղարկվեց աշխարհ՝ նախազգուշացնելու նրանց ջրհեղեղից: Եթե մարդիկ լսեին, նրանք կխուսափեին: Մովսեսն ուղարկվեց առաջնորդելու Իսրայելը դեպի խոստացված երկիր, կատարելու խոստումները, որոնք արվել էին Աբրահամին: Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց պատրաստելու ճանապարհը Քրիստոսի գալստի համար: Յուրաքանչյուր դեպքում կոչը եկավ երկինքները բացելու միջոցով: Եսայիան, Երեմիան և մյուս մարգարեները ուղարկվեցին նախազգուշացնելու Իսրայելի և Հուդայի թագավորություններին նախքան ցրումը և գերությունը եկավ նրանց վրա: Եթե նրանք ուշադրություն դաձրած լինեին, պատմության այլ էջ կգրվեր: Նրանք հնարավորություն ունեցան լսելու, նրանք նախազգուշացվեցին և ունեին խուսափելու միջոցներ, որոնք նրանք մերժեցին:

Երբ Մորոնի հրեշտակը այցելեց երիտասարդ জոզեֆ Սմիթին, նա մարգարեացավ Փոկչի Երկրորդ գալստի մասին (տես জոզեֆ Սմիթ—Պատմություն 1.36–41):

Տերը խոստացավ ունենալ նույն հետաքրքրությունը մարդկության հանդեպ Իր երկրորդ գալստին նախորդող ժամանակաշրջանում:[17]

জոզեֆ Սմիթն ուղարկվեց պատրաստելու ուղին այս երկրորդ գալստին՝ հայտարարելով Ավետարանի լրիվությունը և շնորհելով մարդկանց անօրինությունից և օրինազանցությունից փախչելու բոլոր միջոցները:[18]

Հովհաննեսը Պատմոսում տեսավ տեսիլքում վերջին օրերին մի «հրեշտակ թռչելիս երկնքի մէջ, որ յաւիտենական աւետիք ուներ, որ աւետարանէր երկրի վերայ բնակողներին. և ամեն ազգի եւ ցեղի եւ լեզուի եւ ժողովրդի» [Հայտնություն ԺԴ.6]։

Ի կատարումն այս խոստման՝ Ջոզեֆ Սմիթը հայտարարեց, որ Մորոնին՝ մի հնադարյան մարգարե այս մայրցամաքում, և այժմ հարություն առած, ուսուցանեց նրան ավետարանը, նրան հրահանգավորելով բոլոր բաների մասին Քրիստոսի գալստին նախորդող ժամանակշրջանի վերաբերյալ։ Եվ Տերն ասաց. «Քանզի ահա, Տեր Աստված առաջ է ուղարկել հրեշտակին, որը երկնքի միջից աղաղակում է՝ ասելով. Պատրաստ արեք Տիրոջ ճանապարհը և ուղիղ արեք նրա շավիղները. Քանզի նրա գալստի ժամը մոտ է» [ՎԵՈՒ 33.17]։

Ընդունելով սա որպես ճշմարտություն՝ Վերջին օրերի Սրբերը հավատում են, որ երկնքի հետ հաղորդակցությունը հաստատվել է ներկա ժամանակներում, և այժմ «Թագավորության Ավետարանը» դուրս է ուղարկվում որպես վկա աշխարհին՝ Քրիստոսի գալուց առաջ [տես Մատթեոս ԻԴ.14]։[19]

Վերջին Օրերի Սրբերը կարող է համարվեն յուրօրինակ և առանձնահատուկ՝ հավատալով, որ նրանք կանչված են իրագործելու այս սուրբ գրությունը [Մատթեոս ԻԴ.14], բայց Տերը լիակատար վստահությամբ է խոսել, որ նրանք ջանասիրաբար միսիոներներ կուղարկեն երկրագնդի բոլոր մասերը։ Բացի այդ, երբ բոլոր ազգերը լսած կլինեն այս ուղերձը՝ ինչպես որ այն հայտնի է դարձվել այս վերջին օրերում, այդ ժամանակ մենք կարող ենք սպասել մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի գալստին, քանզի այդ օրը բոլոր ազգերը զգուշացված կլինեն սուրհանդակների կողմից, ովքեր ուղարկվեցին նրանց մոտ՝ համաձայն Տիրոջ խորհուրդի։[20]

Ավետարանը բոլոր մարդկանց համար է և Եկեղեցին կհաստատվի ամենուրեք բոլոր ազգերում, նույնիսկ մինչև երկրի ծայրերը, մինչև Մարդու Որդու երկրորդ գալուստը։ . . .

. . . Նա մեկնել է Իր ձեռքը երկրորդ անգամ՝ հավաքելու Իսրայելը Եկեղեցում, և այս անգամ Նա կբարձրացնի սրբերի բազմություններ բոլոր ազգերից։[21]

Յուսալի Օգդենի Տաճարի նվիրագործման աղոթքից.

Ո՜վ Հայր, արագացրու օրը, երբ արդարակեցությունը կգերիշխի, երբ ազգերի կառավարիչները կբացեն իրենց սահմանները ավետարանի քարոզման համար, երբ փրկության դուռը լայն կբացվի ազնիվների և ուղղամիտների և բարիների համար ամեն ժողովրդից:

Մենք աղոթում ենք ճշմարտության տարածման համար, մենք աղոթում ենք միսիոներական գործի համար, մենք որոնում ենք ուժ և թվաքանակ և միջոցներ հռչակելու Քո հավիտենական ճշմարտությունները Քո զավակներից ավելի շատերին ամեն ազգում, ամեն ցեղում և ամեն խոսվող լեզվում: . . .

. . .Մեր ցանկությունն է լինել գործիքներ Քո ձեռքում պատրաստելու մարդկանց Քո Որդու գալստին:[22]

5

Հազարամյակը կլինի մի ժամանակ խաղաղության և Տիրոջ գործում աշխատանքի ժամանակ:

Արդարները կուրախանան, երբ Նա գա, որովհետև խաղաղություն կգա երկիր, արդարակեցություն՝ մարդկանց և այն նույն խաղաղության և ուրախության ու երջանկության ոգին, որը տիրել էր այս մայրցամաքում երկու հարյուր տարի [տես 4 Նեփի 1.1–22], կրկին կհաստատվի ժողովրդի մեջ և, ի վերջո, կդառնա համաշխարհային, և Քրիստոսը պիտի թագավորի որպես տերերի Տեր և թագավորների Թագավոր հազար տարի: Մենք անհամբեր սպասում ենք այդ ժամանակին:[23]

Հազար տարի այս երջանիկ ժամանակը կտիրի և ուրույն ժամանակին երկրի բոլոր բնակիչները կբերվեն Եկեղեցու հոտը:[24]

Ավետարանը կուսուցանվի շատ ավելի ուժգնորեն և ավելի մեծ ուժով հազարամյակի ժամանակ, մինչև երկրի բոլոր բնակիչները կընդունեն այն:[25]

Հանգստի ժամանակ լինելու փոխարեն, Հազարամյակը պետք է լինի բոլորի համար աշխատանքի ժամանակ: Անգործություն չի լինի, ավելի լավ մեթոդներ կգործադրվեն, այդքան շատ ժամանակ չի ծախսվի ամենօրյա գործերի վրա և ավելի շատ ժամանակ կհատկացվի Արքայության բաներին: Սրբերը

աշխատանքի մեջ կլինեն տաճարներում, որոնք կկառուցվեն երկրի բոլոր մասերում: Փաստորեն, նրանք այնքան աշխատանքով ծանրաբեռնված կլինեն, որ տաճարները ժամանակի մեծ մասը զբաղված կլինեն:[26]

Կլինի մահկանացու կյանք երկրի երեսին հազար տարիների ընթացքում այն մեծ աշխատանքի պատճառով, որը պետք է իրականացվի մահացածների փրկության համար: Այդ հազար տարիների ընթացքում Տիրոջ մեծ աշխատանքը կլինի տաճարներում, և դեպի այդ տաճարները մարդիկ կգնան՝ աշխատելու նրանց համար, ովքեր հեռացել են կյանքից, և ովքեր սպասում են այս արարողություններին, որոնք կապված են նրանց փրկության հետ՝ կատարվելով նրանց կողմից, ովքեր դեռ բնակվում են մահկանացու մարմնում երկրի վրա:[27]

Մեր պարտականությունն է՝ փրկել մահացածներին, և այդ աշխատանքը կշարունակվի Հազարամյակի ընթացքում, մինչև բոլորը օժտվեն և կնքվեն, ովքեր լիազորված են այս օրհնությանը:[28]

Բոլոր նրանք, ովքեր մահացել են Քրիստոսում, դուրս կգան մեռելներից Նրա գալստյան ժամանակ և կբնակվեն երկրի վրա հազարամյակի ընթացքում: Նրանք այստեղ չեն մնա ամբողջ ժամանակ հազար տարիների ընթացքում, բայց նրանք կշփվեն նրանց հետ, ովքեր դեռ մահկանացու կյանքում են: Այս հարություն առած Սրբերը և Փրկիչն Ինքը կգան տալու հրահանգավորում և առաջնորդություն, հայտնելու մեզ այն բաները, որոնք մենք պարտավոր ենք իմանալ, տալու մեզ տեղեկություն Տիրոջ տաճարներում աշխատանքի վերաբերյալ, որպեսզի մենք կարողանանք կատարել աշխատանքը, որը կարևոր է՝ արժանի մարդկանց փրկության համար:[29]

Տերն ասել է Իր ծառաների միջոցով, որ Հազարամյակի ժամանակ, նրանք ովքեր հեռացել են կյանքից և ձեռք են բերել հարություն, անձնապես կհայտնեն նրանց, ովքեր դեռ մահկանացու կյանքում են ողջ տեղեկությունները, որոնք պահանջվում են՝ կատարելու աշխատանքը նրանց համար, ովքեր այս կյանքից հեռացել են: Ապա մահացածները կունենան արտոնություն հայտնի դարձնելու այն բաները, որոնք նրանք կամենում են և լիազորված են՝ ստանալու համար: Այս ձևով ոչ մի հոգի չի անտեսվի և Տիրոջ աշխատանքը կկատարելագործվի:[30]

Ես իմ կյանքի ամեն օրը աղոթում եմ, որ Տերը արագացնի Իր աշխատանքը. . . Ես աղոթում եմ աշխարհի վերջի համար, որովհետև ես ցանկանում եմ ավելի լավ աշխարհ։ Ես փափագում եմ Քրիստոսի գալուստը։ Ես փափագում եմ, որ խաղաղությունը թագավորի։ Ես փափագում եմ, որ գա ժամանակ, երբ յուրաքանչյուր մարդ կկարողանա ապրել խաղաղության մեջ և հավատքի ոգով, խոնարհությամբ ու աղոթքով։[31]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ինչպե՞ս է «Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կյանքից» բաժնի պատմությունն ազդում աշխարհի վերջի հետ կապված ձեր զգացումների վրա։
- Ինչպե՞ս կարող են 1-ին բաժնում նշված մարգարեությունները օգնել մեզ պատրաստվել Տիրոջ գալստին։
- Բաժին 2-ում, վերանայեք Նախագահ Սմիթի ուսմունքները ցորենի և որոմների առակի վերաբերյալ։ Ի՞նչ կարող ենք անել, որ լինենք «ցորենի» կարգավիճակում։ Ի՞նչ կարող ենք անել՝ օգնելու մեր ընտանիքներին և ուրիշներին։
- Երբ պատրաստվում ենք Տիրոջ գալստին, ինչ է դա նշանակում «արթուն լինել և աղոթել»։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «կարգի դնել մեր տները» (տես բաժին 3)։
- Նախագահ Սմիթն աղոթեց. «Մեր ցանկությունն է գործիքներ լինել Քո ձեռքում նախապատարստելու մարդկանց Քո Որդու գալստին» (բաժին 4)։ Ի՞նչ ուղիներով կարող ենք օգնել մյուսներին պատրաստվել Տիրոջ գալստի համար։
- Վերանայեք բաժին 5-ը։ Ի՞նչ ուղիներով կարող ենք մենք օգուտ քաղել այժմ՝ իմանալով այն մասին, թե ինչ կպատահի Հազարամյակի ժամանակ։

Առնչվող սուրբ գրություններ

Սաղմոս ճԲ.16, Եսայիա Խ.3–5, Հակոբոս Ե.7–8, ՎևՈՒ 1.12, 39.20–21, 45.39, 56–59

Օգնություն ուսուցչին

«Ավետարանի ուսուցման վերջնական, համոզիչ, դարձի բերող զորությունը դրսևորվում է, երբ ոգեշնչված ուսուցիչն ասում է. «Ես գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ, Սուրբ Հոգու հայտնություններով իմ հոգուն, որ վարդապետությունները, որոնք ես ուսուցանեցի, ճշմարիտ են» (Bruce R. McConkie, *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* 43)։

Հղումներ

1. *The Signs of the Times* (1943), 103–5.
2. "Ogden Temple Dedicatory Prayer," *Ensign,* Mar. 1972, 10–11.
3. *The Restoration of All Things* (1945), 302.
4. In Conference Report, Apr. 1966, 12–14.
5. In Conference Report, Apr. 1935, 98; տես նաև *Doctrines of Salvation,* ed. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 3: 1.
6. "Watch Therefore," *Deseret News,* Aug. 2, 1941, Church section, 2; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 15.
7. In Conference Report, Apr. 1918, 156–57; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 15–16.
8. "How to Teach the Gospel at Home," *Relief Society Magazine,* Dec. 1931, 688; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 16.
9. In Conference Report, Apr. 1952, 28; italics in original.
10. "The Coming of Elijah," *Ensign,* Jan. 1972, 5.
11. "The Reign of Righteousness," *Deseret News,* Jan. 7, 1933, 7; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 60.
12. In Conference Report, Apr. 1935, 99; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 38.
13. *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. (1957–66), 5: xii.
14. "A Warning Cry for Repentance," *Deseret News,* May 4, 1935, Church section, 6.
15. "A Warning Cry for Repentance," 8.
16. In Conference Report, Apr. 1966, 15.
17. "A Peculiar People: Modern Revelation—The Coming of Moroni," *Deseret News,* June 6, 1931, Church section, 8; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 3–4.
18. "A Peculiar People: Prophecy Being Fulfilled," *Deseret News,* Sept. 19, 1931, Church section, 6.
19. "A Peculiar People: Modern Revelation—The Coming of Moroni," 8; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 4–5.
20. "A Peculiar People: Prophecy Being Fulfilled," *Deseret News,* Nov. 7, 1931, Church section, 6; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 6.
21. In Conference Report, British Area General Conference 1971, 176.
22. "Ogden Temple Dedicatory Prayer," 9, 11.
23. "The Right to Rule," *Deseret News,* Feb. 6, 1932, Church section, 8.
24. "Priesthood—Dispensation of the Fulness of Times," *Deseret News,* Aug. 19, 1933, 4; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 66.
25. "Churches on Earth During the Millennium," *Improvement Era,* Mar. 1955, 176; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 64.
26. *The Way to Perfection* (1931), 323–24.
27. "The Reign of Righteousness," 7; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 58.
28. In "Question Answered," *Deseret News,* Jan. 13, 1934, Church section, 8; տես նաև *Doctrines of Salvation,* 2: 166.
29. "The Reign of Righteousness," 7; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 59.
30. "Faith Leads to a Fulness of Truth and Righteousness," *Utah Genealogical and Historical Magazine,* Oct. 1930, 154; italics removed; տես նաև *Doctrines of Salvation,* 3: 65.
31. *The Signs of the Times,* 149.

Տեսանյութերի ցանկ

Կազմ. Ետին պլան © Artbeats

Էջ 5. *Պատանի Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսումնասիրում է Մորմոնի Գիրքը,* Մայքլ Թ. Մալմ: © Michael T. Malm.

Էջ 40. Հատված *Ես տեսա լույս,* նկարից, Ջոն Մակնոթըն: © Jon McNaughton.

Էջ 47. Հատված *Տերը ցույց տվեց նրան ողջ երկիրը,* Վոլթեր Ռեյն: © Intellectual Reserve, Inc.

Էջ 54. *(Քրիստոս) Տիրոջ Գառան փրկությունը,* Մինեվրա Թեյչերթ:

Էջ 59. *Վերջին Ընթրիքը,* Սայմոն Դյու: © Simon Dewey.

Էջ 66. Հատված լուսանկարից © Corbis: Չբազմացնել, չներբեռնել, չտարածել:

Էջ 69. Հատված *Եղեմի Պարտեզից հեռանալը* նկարից, Ջոզեֆ Բրիքլի: © 1998 Joseph Brickey:

Էջ 75. Հատված *Քրիստոսը Գեթսեմանիում* նկարից, Հեյնրիխ Հոֆման: Տրամադրված է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից:

Էջ 108. Հատված *Հիսուսը հիմնում է Հաղորդությունը* նկարից, Գարի Ի. Սմիթ: © 1982 Gary E. Smith

Էջ 120. *Ջոզեֆ Սմիթը և Հայրում Սմիթը գետի կողքին,* Թեոդոր Ս. Գորկա: © 1996 Intellectual Reserve, Inc.

Էջ 124. Հատված *Առաջին Տեսիլք* նկարից, Դել Փարսոն: © 1987 Intellectual Reserve, Inc.

Էջ 128. *Ջոզեֆի և Հարումի սպանությունը,* Գարի Ի. Սմիթ: © 1984 Intellectual Reserve, Inc.

Էջ 146. *Հրեշտակը ցույց է տալիս Ուկե Թիթեղները Ջոզեֆ Սմիթին, Օլիվեր Քաուդերիին և Դեյվիդ Ուիթմերին,* Վիլիամ Լ. Մոգան: © 1988 William L. Maughan

Էջ 150. *Ութ Վկաները նայում են Մորմոնի Գրքի Թիթեղները,* Հարոլդ Թ. (Դեյլ) Քիլբուրն: © Dale Kilbourn.

Էջ 162. Հատված *Հիսուսն ուսուցանում է ժողովրդին ափի մոտ* նկարից, Ջեյմս Տիսո:

Էջ 172. *Մելքիսեդեկյան Քահանայության Վերականգնումը,* Միներվա Թեյչերթ: Տրամադրված է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 177. *Եղիան հայտնվում է Քիրթլենդի տաճարում,* Դենիել Ա. Լյուիս: © 2007 Daniel A. Lewis.

Էջ 196. Հատված *Իմ մկրտությունը Կիևում* նկարից, Միկոլա Կրիսաչենկո: Տրամադրված է Եկեղեցու Պատմության Թանգարանի կողմից:

Էջ 208. Հատված *Պողոսը շնորհում է Սուրբ Հոգին* նկարից, Մայքլ Թ. Մալմ: © 2006 Michael T. Malm.

Էջ 262. Հատված *Տերունական աղոթքը* նկարից, Ջեյմս Տիսո:

Էջ 281. Հատված *Իմաստության Խոսքը հայտնությամբ տրվեց* նկարից, Քենեթ Ա. Քորբեթ: © Kenneth A. Corbett.

Էջ 290. *Ինչպես տվել եմ քեզ,* Վոլթեր Ռեյն: © Intellectual Reserve, Inc.

Էջ 302. Լուսանկարը տրամադրված է Եկեղեցու Պատմության Գրադարանի և Արխիվների կողմից:

Էջ 322. Հատված *Արման և Ամուղեկը քանտում* նկարից, Գարի Լ. Քափ: © Gary L. Kapp.

Էջ 354. Հատված *Միա, Աստծո Գառը* նկարից, Վոլթեր Ռեյն: © Intellectual Reserve, Inc.

Էջ 359. *Քրիստոսը Տաճարում,* Հեյնրիխ Հոֆման: Տրամադրված է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից:

Էջ 364. Հատված, *Քրիստոսի պատկերը,* Հեյնրիխ Հոֆման: Տրամադրված է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից:

Էջ 369. *Երկրորդ Գալուստը,* Հարի Անդերսոն: © Intellectual Reserve, Inc.

Էջ 373. *Մորոնի Հրեշտակը հայտնվում է Ջոզեֆ Սմիթին,* Թոմ Լովել: © 2003 Intellectual Reserve, Inc.

Ցուցիչ

Ա

Ադամի և Եվայի Անկում
  էական է փրկության ծրագրում, 69
  հաղթում է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, 50, 70-73
  համեմատվում է խորը հորը ընկնող մարդու հետ, 73

Աղոթք
  Ջոզեֆ Սմիթի օրինակը, 317, 318, 324-25
  աղերսել արդար ցանկությունների համար, 324-25
  ապրել ներդաշնակության մեջ, 323-24
  արտահայտել շնորհակալություն, 324
  ժամանակ, միշտ, 321-23
  հասկանալ ավետարանի վարդապետությունները, 169
  մոտեցնում է անձանց դեպի Աստված, 319-20

Ամուսնություն
  ավելի է ջերմանում, երբ ամուսինները միասին ապրում են ավետարանով, 227-29
  դիմանում է մինչև վերջ ավետարանի ծրագրում, 222-24
  հավատարմություն, բերում է երջանկություն և հավերժական օրհնություններ, 224-25
  պատարստում է երեխաներին և երիտասարդներին, 226-28
  սելեստիալ, ավետարանի մեծագույն արարողությունն է, 221
  սելեստիալ, մատչելի կլինի բոլոր հավատարիմներին, 225-26
  սրբազան էությունը, 221-22
  Տես նաև Ընտանիք; Ծնողներ; Կնքող զորությունը

Այլ հավատքներ, հարգանք, 313-14

Անարգանք, 282

Անձնական պատասխանատվություն, 329-37

Աշխատանք
  արժեքը, 329-332
  փրկության համար, 334-336

Աշխարհիկություն
  թողնել, 278-85
  պատասխանել մտահոգություններին՝ աշխարհիկ մարդկանց ակնհայտ հաջողությունների մասին, 283-84

Ապաշխարություն
  Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի միսիան մարդկանց կանչել առ, 96-97
  ավետարանի երկրորդ սկզբունքն է, 100
  ժամանակ, այժմ է, 102-103
  հայտնում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ողորմածությունը, 100-102
  հավատքի հետ միասին տանում է դեպի ներում, 96
  ներառում է անկեղծ զղջանքը մեղքի համար և մեղքից հրաժարվելը, 102

պատասխանատվություն օգնելու մյուսներին ապաշխարել, 103-105
և փրկության ծրագիրը, 74, 100

Առաջին Նախագահություն, խորհուրդ, 180

Առաջին Տեսիլք
բերեց դեպի Ջոզեֆ Սմիթը, որը ղեկավարեց վերջին տնտեսությունը, 123-25
վերականգնեց Աստծո մասին ճշմարիտ գիտելիքը, 41-42
Տես նաև Սմիթ, Ջոզեֆ

Ավետարան
աշխարհի միակ հույսն է, 67, 313-14
բոլոր մարդկանց համար է, 143, 305
լրիվությունը, միայն վերականգնված Եկեղեցում է, 305-306
կենտրոնացած է ընտանիքի շուրջ, 84
պետք է քարոզվի պարզությամբ, 312
վերականգվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով, 126-27, 305

Արտադրություն. *Տես* Աշխատանք

Բ

Բենսոն, Էզրա Թավտ, 33

Գ

Գիտելիք. *Տես* Սովորել

Գրանտ, Հեբեր Ջ., 159, 171

Դ

Դժվարություն, բերում է օգուտներ, 284

Դիմանալ մինչև վերջ, 1, 74, 78, 319

Ե

Եկեղեցու Նախագահ
կրում է ամբողջ Եկեղեցու համար քահանայության բանալիները, 178
չի տանի Եկեղեցին սխալ ուղղությամբ, 180

Եղիա
Հոգի, 250, 251
վերականգնեց կնքման զորությունը, 250-53
Տես նաև Ընտանեկան պատմություն; Կնքման զորություն; Տաճարային աշխատանք

Երկնային Հայր
աշխատանք, բերում է անմահություն և հավերժական կյանք, 48
բոլոր մարդկանց հոգիների Հայրն է, 46, 292-93
գիտելիք մասին, պակասում է աշխարհում, 39, 45
գործադրել հավատք հանդեպ, 42-43, 97-98
ընտանիք, բոլոր մարդկանց անդամությունը, 46, 68, 292-93
ծրագիր, 50-51, 58, 67-78
հատկությունները, 42-50
հրավիրում է բոլոր մարդկանց գալ դեպի Իր Միրեցյալ Որդին, 51
ուղարկեց Իր Միածին Որդուն, 50, 360
սեր, մեր հանդեպ, 46-50
վշտանում է Իր անհնազանդ զավակների համար, 48-50
ցանկանում է, որ մենք վերադառնանք Իր մոտ, 50-51

Երկրպագություն
Աստծո, բերում է խաղաղություն, 104

Աստծո, պահանջում է Նրա հատկությունների մասին գիտելիք, 42-43
Հանգստության օրը, 279-80
զերագույն արարք, պահում է պատվիրանները, 266, 271
հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին, 61
հոգի, հաղորդության ժամանակ, 111, 117

Ը

Ընտանեկան երեկո, 241
Տես նաև Ընտանիք; Ծնողներ
Ընտանեկան պատմություն
շրջում է սրտերը դեպի նախնիները, 248-49, 250-51
սիրո աշխատանք է, 256-57
օգնում է լրացնել ընտանեկան կառուցվածքը սերնդե սերունդ, 257-59
Տես նաև Եղիա; Կնքման զորություն
Ընտանիք
առավել կարևոր կազմակերպությունը ժամանակի և հավերժության մեջ, 34, 83-86
ինչպես ամրացնել, 83-84, 90-91
հիմնվել է Տիրոջ կողմից՝ հավերժ լինելու նպատակով, 88-90
և վեհացում, 77-78
Տես նաև Ամուսնություն; Ընտանեկան երեկո; Ընտանեկան պատմություն; Ծնողներ; Կնքման զորություն
Ընտրություն, 334-35

Թ

Թոմսոն, Մերսի, 121

Ի

Իմաստության Խոսք, 265, 280-82

Լ

Լեզու, պատկառանք, 246
Լի, Հարոլդ Բ., 61
Լինել աշխարհում, բայց ոչ աշխարհից, 284
Տես նաև Աշխարհիկություն

Ծ

Ծառայություն, 295-96
Ծնողներ
անց են կացնում ընտանեկան երեկոներ, 241
արդար օրինակ, 239
ծանոթացնում են երեխաներին սուրբ գրությունների հետ, 240-41
ուսուցանել երեխաներին լինել մաքրաբարո և առաքինի, 241-42
ուսուցանել երեխաներին վաղ տարիքից, 240
պատասխանատվություն, ուսուցանել ճշմարտությունը իրենց երեխաներին, 273-75
պատրաստել երեխաներին ծնողներ լինելուն, 242-43
պատրաստել երեխաներին ճշմարտության մասին վկայելուն և միսիա ծառայելուն, 242
սովորեցնել երեխաներին աղոթել, 240
ստանալ օգնություն Եկեղեցուց պարտականությունների կատարման համար, 237-38
օգնում են երեխաներին դիմակայել դժվարություններին, 235-36
Տես նաև Ամուսնություն; Ընտանեկան երեկո; Ընտանիք

Կ

Կանայք
ակնկալվում են փնտրել լույս և ճշմարտություն, 348-49
ծառայության օրինակներ, սուրբ գրություններում, 343-45
կարևոր աշխատանքը, Տիրոջ արքայությունում, 343-45
քահանայության օրհնությունները մատչելի են, 349-51
Տես նաև Սփոփող Միություն

Կյանք, նպատակ, 75-76

Կնքող զորություն
պատրաստում է Սրբերին փրկության՝ իր լրության մեջ, 253-55
վերականգնվել է Եղիայի միջոցով, 250-53
փրկում է երկիրը կործանումից, 253
և մահացածների փրկություն, 254-56
Տես նաև Եղիա; Ընտանեկան պատմություն; Տաճարային աշխատանք

Հ

Հազարամյակ, 375-76

Հաղորդության ժողով, 109

Հաղորդություն
Հիսուս Քրիստոսի կողմից ներկայացված, 109-10
ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության, 111-14
ուխտեր՝ ընդունելու միջոցով, 114-16
պատվիրան ընդունել, 110-11
սրբազան արարողություն է, 110
վերաբերմունք, երբ ընդունվում է, 114-16

Համեստություն, 241-42, 282-83

Հայր Աստված. *Տես* Երկնային Հայր

Հանգստության օր, 279-80

Հավատք
Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, 42-43, 101-102
ապաշխարության հետ միասին տանում է դեպի ներում, 100
ավետարանի առաջին սկզբունքն է, 97-98
նշանակում է գործել, 98-99
պահանջում է Աստծո բնութագրի գիտելիք, 42-43
քայլելով, 99-100
և փրկության ծրագիրը, 82

Հարություն, 76-77

Հինքլի, Գորդոն Բ., 1

Հիսուս Քրիստոս
Աստծո Միածին Որդին է, 56-57
Երկրորդ Գալուստը, 365, 368-71, 375-77
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի սերը, 55-56
Վերջին Օրերի Սրբերի հավատքը, 59-61
Քավություն, 50, 58, 71-77, 112-14, 122, 360-61
այս տնտեսությունում, 59-60
առաջանալ շնորհից շնորհ մինչև լրիվություն ստանալը, 358-60
բերում է փրկություն Անկումից, 71-74
բերում է փրկություն մեղքից, 71-74
բոլոր բաները կենտրոնացած են Նրա վրա և Նրա շուրջը, 57
գործադրում է հավատք, 97-98
դառնալ որդիները և դուստրերը, 58-59
դերը, փրկության ծրագրում, 50-51, 58, 71-77, 122

ծնունդը, 58, 356-62
հավատարիմ մնալ վկայությանը, 59-61
հետևում է օրինակին, 61-62, 196, 273
հիշել, Սուրբ Ծննդյան ժամանակ, 355-56, 361-62
հիշել, հաղորդության միջոցով, 111-17
ղեկավարում է Եկեղեցին, 136-37
մանկություն և պատանեկություն, 358-60
ներկայացնում է հաղորդությունը, 109-10
ստանում է վկայություն, 60
տառապանքները, Գեթսեմանիում և խաչի վրա, 71-73, 111-14
քահանայության ծառայության մեծ նախատիպն է, 196
և Ջոզեֆ Սմիթ, 122-23
Տես նաև Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը; Հիսուս Քրիստոսի Քավությունը

Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստ
աշխարհը կմաքրվի այդ ժամանակ, 284, 370-71
դատաստան այդ ժամանակ, 370, 372
համար նախապատրաստվել, 372-75
մոտ է, 368-69

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի
Աստծո արքայությունն է երկրի վրա, 137-38
անդամության արտոնություն, 137
ծառայություն, արտահայտում են երախտագիտություն մեզ Տիրոջ ծառայության համար, 139-40
կազմակերպված են՝ օգնելու անհատներին և ընտանիքներին ուրախություն և հավերժական կյանք գտնել, 138
կտարածվեն աշխարհով, 141-42
ղեկավարվում են Հիսուս Քրիստոսի կողմից, 137-39
սեր ներսում, օրինակ են ծառայում աշխարհի համար, 293-95
վերականգնում, ուրացության դարերից հետո, 136-37
օգնում են ծնողներին ուսուցանել երեխաներին, 237-38
օժանդակ կազմակերպություններ, 138

Հիսուս Քրիստոսի Քավությունը
Գեթսեմանիում և խաչի վրա, 71-73, 111-114
երախտագիտություն համար, 73
համեմատվում է մարդուն խորը հորից փրկելու հոտ, 73
հարություն միջոցով, 76-77, 122
հիշել, Սուրբ Ծննդի ժամանակ, 355-56, 361-62
հիշվում է հաղորդության միջոցով, 111-114
փրկություն միջոցով, 71-74, 360-61
Տես նաև Հիսուս Քրիստոս

Հնազանդություն. *Տես* Պատվիրաններ

Մ

Մահ, ֆիզիկական և հոգևոր, 70

Մաքրաբարոյություն, օրենք, 242, 282-83

Միսիոներական աշխատանք
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը՝ որպես լիաժամկետ միսիոներ, 9-15, 303-305

ավելի շատ միսիոներների Եկեղեցու կարիքը, 309-10
բերում է հույս և խաղաղություն աշխարհ, 312-14
մասնակցելու Վերջին Օրերի Սրբերի պարտականությունը, 306-309
պետք է արվի պարզությամբ և Հոգով, 312
և ավետարանի օրհնությունների լրիվությամբ կիսվելը, 305-306

Մկրտություն
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի, 197
անհրաժեշտ չէ ութ տարեկանից ցածր երեխաների համար, 199-202
երկակի էություն, 205
ընկղմամբ, խորհրդանիշ, 198, 200-202
հավատարմություն ստանալուց հետո, 204-205
որպես հարություն մեղսավոր կյանքից դեպի հոգևոր կյանք, 202
ուխտ, 202-204
և փրկության ծրագիրը, 74

Մոնսոն, Թոմաս Ս., 1

Մորմոնի Գիրք
Երեք Վկաներ և Ութ Վկաներ, 145-154
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը կարդում է, պատանի հասակում, 4-5, 159
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի անձնական վկայությունը մասին, 145, 147, 155
անհատական ուսումնասիրություն, 153-155
պարունակում է ավետարանը, 147-149
ստանալ վկայություն մասին, 153-55
վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, 147-148

Ն

Նախազգուշացում
ձայնը բարձրացնելու Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի առաքելությունը, 21, 96-97, 261
ձայնը բարձրացնելու Վերջին Օրերի Սրբերի պատասխանատվությունը, 103-104

Ռ

Ուրացություն, 135-36

Պ

Պատվիրաններ
շրջվել, տանում է դեպի օրհնությունների կորուստ, 267-68
պահելը, արտահայտում է սերը Տիրոջ հանդեպ, 266-67
պահելը, բերում է մեծ օրհնություններ, 74-76, 78, 270-73

Պարտականություն, անձնական պատասխանատվություն համար, 333

Ջ

Ջոզեֆ Սմիթ. *Տես* Սմիթ, Ջոզեֆ

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ. *Տես* Սմիթ, Ջոզեֆ Ֆիլդինգ

Ս

Սեր
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը սովորում է, Ջունի իր ձիուց, 296-97
Վերջին Օրերի Սրբերի մեջ, 293-95
Տիրոջ և մյուսների համար, տանում է դեպի ներդաշնակություն սրբազան օրենքի հետ, 297-98
արտահայտվում է ծառայության միջոցով, 295-96

մեծանում է այն գիտելիքի շնորհիվ, որ բոլոր մարդիկ Աստծո զավակներն են, 292-94
ներառում է ներող լինելը և մյուսների մեջ բարին տեսնելը, 294
և մարդկանց գնահատելը, 293-94

Սմիթ, Էթել Ռեյնոլդս (երկրորդ կին), 17-18, 20-22, 81-82, 218, 220, 340, 343

Սմիթ, Լուի Շարթլիֆ (առաջին կին), 7-17, 218

Սմիթ, Հարում (պապ)
ամբողջականություն, 127
ծառայություն, 1, 3, 121
նահատակությունը, 3, 129-30
նվիրվածություն, Ջոզեֆ Սմիթին և Եկեղեցուն, 121, 127-29

Սմիթ, Ջեսի Էվանս (երրորդ կին), 26-28, 35-36, 220, 343

Սմիթ, Ջոզեֆ
Առաջին Տեսիլք, 41-42, 123-24
այդ մասին Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի անձնական վկայությունը, 121
կանչված է կանգնելու որպես վերջին տնտեսության ղեկավար, 123-24
միավորվել է իր եղբայր Հայրումի հետ, 127-29
միջոցով ավետարանը վերականգնվել է, 123-24
նահատակությունը, 3, 129-30
որպես Քրիստոսի գիտելիքի հայտնող, 123
վկայություն ստանալ առաքելության մասին, 121
քահանայության բանալիները վերականգնվել են նրա միջոցով, 172, 175-78
և Հիսուս Քրիստոս, 122-23

Սմիթ, Ջոզեֆ Ֆ. (հայր), 1, 3, 121, 159, 190, 233, 347

Սմիթ, Ջոզեֆ Ֆիլդինգ
Եկեղեցու աճը նախագահության ժամանակ, 34
աղոթում է աշխարհի վերջի համար, 363, 365
աղոթում է առաջին կնոջ՝ Լուիի մահից հետո ուժ ունենալու համար, 317
աղոթում է բոլոր մարդկանց համար, 324-25
աղոթում է հրապարակայնորեն քարոզների ժամանակ, 318
աղոթում է մինչև վերջ հավատարիմ մնալու համար, 1, 318
աղոթում է փոթորկի խաղաղման համար, 317, 318
ամուսնություն Էթել Ռեյնոլդսի հետ, 17-18, 218, 220
ամուսնություն Լուի Շարթլիֆի հետ, 6-7, 17, 218
ամուսնություն Ջեսի Էվանսի հետ, 26-28, 220
անձնական վկայություն, 122
ասում է նվիրագործման աղոթք իր հոր բնակավայրում, 16-17
արտահայտում է սերը Հիսուս Քրիստոսի հանդեպ, 55-56
արտահայտում է սերը Ջոզեֆ Սմիթի հանդեպ, 121
բացատրում է Եկեղեցու ծառայության անձնական պատճառները, 135
գովում է բանակում արդարակյաց Վերջին Օրերի Սրբերի օրինակները, 277-78
գովք է մատուցում, 31-32, 35, 36-37
գտնում է խաղաղություն մահվան պահին, 17, 26, 31, 35-36, 67, 218, 220-21, 278

երգում է հանրության առաջ կնոջ՝ Ջեսիի հետ, 343
ժառանգություն, 1, 3, 121, 129-30
խոսում է մի մարդու հետ, որն առաջին անգամ լսեց Իմաստության Խոսքի քարոզը, 265
խոսում է տոհմաբանի հետ, որը չի կարող բացատրել ընտանիքի պատմությամբ իր հետաքրքրությունը, 248, 250
ծառայություն, առանձնացել է խստությամբ և ներողամտությամբ, 21-22
ծառայում է Եկեղեցում մեծ կանանց հետ միասին, 340, 343
ծառայում է Եկեղեցու տարբեր կոչումներում, 16, 134-35, 182, 188
ծառայում է Եվրոպայում, երբ սկսվում է Երկրորդ Համաշխարհային Պատերազմը, 28-30
ծառայում է լիաժամկետ միսիա Անգլիայում, 8-15, 303-304
ծնունդ, 1
կանչվել է ծառայելու Տասներկուսի Քվորումում, 18-21, 134
կարդում է Դեյվիդ Ուիթմերի և Օլիվեր Քաուդերիի ձեռագիր վկայությունները, 145
կիսվում է Սուրբ Ծննդյան ժամանակով ընտանիքի հետ, 355
կիսվում է խորհրդով Դ. Արթուր Հեյքոքի հետ, 329
հիմնում է տուն և ընտանիք կնոջ՝ Լուիի հետ, 16-17
հրավիրում է երիտասարդ տղամարդուն նստել իր կողքին գերագույն համաժողովի ժամանակ, 291
հրատարակում է Սուրբ Ծննդյան ուղերձ, 357
մահ, 34
մանկությունը, 3-5
միսիա, կանչել մարդկանց ի ապաշխարություն և բարձրացնել նախազգուշացման ձայնը, 21, 96-97, 263
մկրտություն, 198
մոտ է, Աստծուն, 39
ներկա է Սենթ Ջորջ Յուտա Տաճարի նվիրագործմանը երեխա հասակում, 134
ներկա է Սոլթ Լեյք Տաճարի նվիրագործմանը պատանի հասակում, 6
շեշտում է ընտանիքի կարևորությունը, 34, 83-84
ոգեշնչված է օգնելու որդուն պահել Իմաստության Խոսքը, 207, 209
ողբում է առաջին կնոջ՝ Լուիի մահը, 17, 217, 317
ողբում է երկրորդ կնոջ՝ Էթելի մահը, 26, 220
ողբում է երրորդ կնոջ՝ Ջեսիի մահը, 35-36, 220
ողորմած էությունը, 21-22, 97
որպես Եկեղեցու Նախագահ, 32-35
որպես Եկեղեցու Պատմաբան, 20, 145
որպես Տասներկուսի Քվորումի անդամ, 16-22, 28-32, 134-35
որպես ամուսին, հայր և պապ, 20-21, 81-84, 218, 220-22, 235
ուշադրություն է դարձնում հավաքավծների մեջ գտնվող փոքր աղջկան, 292
ուսումնասիրում է սուրբ գրությունները երիտասարդ տարիքում, 4-5, 159
ուսուցանում է ավետարանն իր երեխաներին, 235
պատվում է քահանայության բանալիները, 172, 173

ջանասիրություն, ավետարանի ուսումնասիրություն, 4-5, 159, 161
սեր դեպի, մարդկանց հանդեպ, ում ուսուցանում էր, 96-97
սովորեւում է ավետարանը իր ծնողներից, 233, 235
սովորում է աշխատել երիտասարդ տարիքում, 3-4, 329-30
սովորում է սիրո և ընդունված լինելու մասին՝ Ջունի ձիուց, 296-97
վերադառնում է Անգլիա որպես Եկեղեցու Նախագահ, 304-305
վերարկու է տալիս կարիքի մեջ գտնվող միսիոներին, 291
ցույց է տալիս ողորմածություն մի մարդու, որի պատճառով միսիոներները ավտովթարի են ենթարկվել, 21-22
քայլելով գնում է ժողովի, չնայած ոտքը կոտրված է, 135
օգնում է իր հորը վարչարարական գործերով, 16
օգնում է իր մորը տնային տնտեսուհու գործերով, 297, 340

Սմիթ, Ջուլինա Լամբսոն (մայր), 1, 3, 233, 235, 297, 340

Սովորել
Առաջնորդություն ստանալը Սուրբ Հոգուց, 146-67
Եկեղեցու ղեկավարների կողմից, 163-64
առավել կարևոր է, ավետարանի ուսումնասիրություն, 161-63
մեծանում է արդար ապրելու արդյունքում, 167-70
ուսման, հավատքի և հնազանդության միջոցով, 146-67
սուրբ գրություններից, 153-55, 162-63, 169
փնտրել, տարբեր ոլորտներում, 161-62
և տարբերել ճշմարտությունը կեղծիքից, 161-62

Սուրբ Ծնունդ, 355-56, 361-62
Տես նաև Հիսուս Քրիստոս

Սուրբ Հոգի
Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ուղղություն է ստանում, իր ընտանիքում, 207, 209
առաքելություն, 209-10
զորություն, անձերի հոգիներին խոսելիս, 209-10
հայտնում է ճշմարտությունը բոլոր մարդկանց, 164-66, 210
չի բնակվի անսուրբ տաղավարներում, 215

Սուրբ Հոգի, պարգև
թույլ է տալիս ունենալ Սուրբ Հոգին որպես մշտական ուղեկից, 185-88
ձեռքերը դնելով, 212
պատրաստում է ստանալ օրհնությունները, 216-18
տանում է դեպի հայտնություններ, որոնք առաջնորդում են անձնական կյանքում, 215-16
և փրկության ծրագիրը, 82

Սուրբ Հոգու պարգևը. *Տես* Սուրբ Հոգու, պարգև

Սփոփող Միություն
էական է Եկեղեցու աշխատանքի համար, 344-46
հիմնումը, 344
նյութական և հոգևոր նպատակները, 346-48
Տես նաև Կանայք

Վ

Վկայության օրենքը, 148-51

Տ

Տաճարային աշխատանք
շրջում է սրտերը դեպի նախնիները, 248, 250, 251, 254
սիրո աշխատանք է, 256-57
օգնում է կազմել ընտանիքի կառուցվածը սերնդե սերունդ, 257-58
Տես նաև Եղիա; Ընտանիքի պատմություն; Կնքող զորություն

Տաճարի նվիրագործում, անձնական նվիրվածության արտահայտում, 250

Տասներկու Առաքյալների Քվորում, խորհուրդ, 180

Տարբերելը ճշմարտությունը կեղծիքից, 161-62, 166-68

Տուն. *Տես* Ամուսնություն; Ընտանեկան երեկո; Ընտանիք; Ծնողներ

Փ

Փաքեր, Բոյդ Ք., 21-22, 33

Փորձություններ, բերում է օգուտներ, 284

Փրկության ծրագիր
ընդունվել է ուրախությամբ նախաերկրային հոգևոր աշխարհում, 68
կենտրոնացած է ընտանիքի շուրջ, 77-78
հիմնվել է Երկնային Հոր կողմից Արարումից առաջ, 68
ներառում է Անկումը, 69
և Հիսուս Քրիստոսի Քավությունը, 50, 68, 71-77, 122

Փրկություն
փնտրել անձնական, 337
օգնել մյուսներին փնտրել, 337
Տես նաև Փրկության ծրագիր

Ք

Քահանայության բանալիները. *Տես* Քահանայության բանալիները

Քահանայության բանալիները
ամբողջ Եկեղեցում, կրում է Եկեղեցու Նախագահը, 158
պատվել նրանց, ովքեր կրում են, 171, 173, 178-181
սահմանում, 173-74
վերականգնվել է երկնային սուրհանդակների կողմից Ջոզեֆ Սմիթի միջոցով, 175-78

Քահանայություն
Հիսուս Քրիստոսը մեծ նախատիպ է, 192
երդումը և ուխտը, 189-90
խոստումներ արժանի կրողներին, 192
մեծարել կոչումը, 189-91, 193
օրհնություններ, առաջարկված բոլորին, 184-85, 196, 348-50

Օ

Օրենք
հնազանդություն, անհրաժեշտ է փրկության համար, 74
ղեկավարում է տիեզերքը և Աստծո արքայությունը, 265-66

Օրինակ, 239, 277-78, 285

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02369 07201 6
36907 201